

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

ВАЗГЕН Г. АМБАРЦУМЯН

ОЧЕРКИ ПО ИСТОРИИ
АРМЯНСКОГО
ЛИТЕРАТУРНОГО ЯЗЫКА

Ереван

Издательство «Гитутюн» НАН РА
2026

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN


VAZGEN G. HAMBARDZUMYAN

ESSAY ON THE HISTORY OF
ARMENIAN LITERARY LANGUAGE

Yerevan

“Gitutyun” Publishing House of the NAS RA
2026

*Գիրքը հրատարակվում է
Հայագիտական ուսումնասիրությունները
ֆինանսավորող համահայկական հիմնադրամի
հովանավորությամբ*



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՏԴ 811.19Օ
ԳՄԴ 81.51-03
Հ 205

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Տպագրվում է
ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՂՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ Բ.Գ.Թ. Տ.Ղ. Սիրունյան
Գրախոսներ՝ Բ.Գ.Թ. Վ.Ա. Ներսիսյան
Բ.Գ.Թ. Ն.Բ. Պողոսյան

Համբարձումյան Վ.Գ.

Հ 205 Ակնարկներ գրական հայերենի պատմության. Պատ. խմբ.՝ Տ.Ղ. Սիրունյան.- Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2026, 486 էջ:

ԱԿՆԱՐԿՆԵՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Գիրքն ընդգրկում է գրական հայերենի պատմության հարցեր, ընդ որում հին, միջին և նոր շրջանների մեջ: Ուսումնասիրությունը հիմնականում կատարվում է բառապաշարի մակարդակում, երբեմն քննության են առնվում նաև հնչյունաբանության և քերականական կառուցվածքի իրողություններ:

Ուսումնասիրության նյութը նոր է, քաղված մատենագրական տպագիր և ձեռագիր հուշարձաններից, որոնք գրեթե ամբողջովին դուրս են մնացել հայոց լեզվի պատմությանը վերաբերող աշխատություններից:

Աշխատանքը նախատեսվում է հայերենի գրավոր ժամանակաշրջանի ընդհանուր պատմության հարցերով հետաքրքրվողների, ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 811.19Օ
ԳՄԴ 81.51-03

ISBN 978-5-8080-1597-5
© Համբարձումյան Վազգեն, 2026

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2026

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սկզբից և եթե նշենք, որ նկատի ունենք առաջին հերթին հայ եկեղեցական գրականության մաս կազմող որոշակի երկերի լեզվի, մասնավորաբար նրանց բառապաշարի, այնուհետև այս կամ այն չափով մյուս (օր.՝ հնչյունական, քերականական, ոճական և այլն) իրողությունները: Քննության առարկա են նաև այլ բնույթի գրական հուշարձանները: Թեև դրանց նվիրվել են բավարարից ավելի ուսումնասիրություններ, սակայն կա ոչ միայն ուշադրությունից դուրս մնացած հարուստ նյութ, այլև եղած ուսումնասիրությունները հարցերի լուծման առումով չի կարելի համարել սպառիչ և վերջնական: Միայն չի լինի ասել, որ հին գրավոր ժառանգությունը գրեթե ամբողջովին եկեղեցական-քրիստոնեական մշակույթի արտահայտություն է, որ ենթադրում է ուսումնասիրության յուրօրինակ սկզբունքների վրա հիմնված մոտեցումների դրսևորում:

Դրանք հիմնականում դուրս են մնացել գրաբարի բառապաշարի ընդգրկուն կամ ծավալուն բառարաններից, երբեմն տեղ են գտել ժամանակի առումով ոչ առաջին հերթին, այլ հետագա հեղինակի կամ հեղինակներից առնված վկայությունների կողքին, նույնիսկ ավելի ուշ երևան եկածների: Այնուհետև, բառապաշարի քննության առումով կարևոր ենք համարում հայ առաջին թարգմանական երկի, այլև քրիստոնեական վարդապետության բուն հասկացությունների անվանումներին և ձևակերպումներին, բանավոր-վիպական հատվածների բառային-ձևաբանական տարբերություններին անդրադառնալը, որն այս կամ այն չափով հիմնված է լինելու բառագիտական վերլուծության նոր տվյալների վրա, օրինակ՝ հայ. *մարգարիտ* բառի քննության դեպքում (տե՛ս *Աճառեան*, 1977, 277. Boisacq, 1923, 610. *Համբարձումյան*, 2019, 106-113):

Այս և սրանց հարակից շատ հարցերի է վերաբերում մեր այս աշխատանքում առանձին հեղինակների լեզվի քննությունը: Ընդ որում վերջինս հաճախ ուղեկցվում է բանասիրական-բնագրագիտական նոր հարցադրումներով և վերլուծություններով, որոնցով, կարծում ենք, ինչ-որ չափով բավարար է դառնում տվյալ հարցի լուծումը:

Հայոց լեզվի պատմությունը ընդունված է բաժանել երկու ժամանակաշրջանի՝ նախագրային և գրավոր, որի հիմքը V դ. սկզբներին (405 թ.) մեսրոպյան գրերի ստեղծմամբ գրավոր նոր մշակույթի առաջացումն է:

Գրավոր ժամանակաշրջանը ժառանգորդական առնչություն ունի հնագույն (սախապատմական) ժամանակների նյութական մշակույթի տարբեր դրսևորումների՝ հողաթմբային թաղումների և քարակուփ կառուցումների, նախնական շենքային ճարտարապետության, մետաղի ճուլման, կավագործական արհեստագործության, զինագործության և տնտեսության պիտույքների ստեղծման, այլ նաև վիմական պատկերագրության և գծագրական նկարչության հետ: Դա հաստատվում է հատկապես վերջին տասնամյակների հնագիտական և պատմամշակութային՝ ազգագրական, աղբյուրագիտական և հարակից այլ բնագավառների ուսումնասիրությունների տվյալներով (*Խանգաղյան*, 1967): Հնագույն մշակույթի ուսումնասիրությունը լեզվաբանական հայեցակետից, կարծում ենք, չի կարելի համարել բավարար, թեև կա ահռելի նյութ ոչ միայն հայոց լեզվի ներքին ռեսուրսներում, այլև հայերենի (resp. «նախահայերենի»)՝ այլ լեզուների հետ ունեցած տևական կամ հպանցիկ շփումների քննության առումով: «Հայկական լեռնաշխարհը եղել է մարդու բնակության հիմնական օրրաններից: Հաստատնում *Արունի* (Արտին) լեռան լանջերին, Հրազդան գետի կիրճում և այլուր հայտնաբերվել են պալեոլիթյան խոշոր կայաններ և բազմաթիվ գործիքներ» (*ՀՄՀ*, 1983, 83. *Մարդարյան*, 1967):

Համեմատաբար ավելի ուշ՝ հետագա (վաղ բրոնզի) ժամանակաշրջանում նույնպես հնագիտական և այլ կարգի քննությամբ հաստատված են գրավոր (ժայռապատկերային, վիմագիր, մեհենական և այլն) վկայություններ, որոնք այսպես թե այնպես կապ ունեն հայկական տարածքի մշակութային ժառանգության հետ (*Մարտիրոսյան, Իսրայելյան, 1971. Badalyan, Avetisyan, 2007*): «Կապարճներն ու աղեղները հայտնաբերվել են մ.թ.ա. XVIII-XVII դդ. պատկանող իրերի հետ և ժամանակագրվում են նույն դարերով: Ջարմանալի նմանություն ենք տեսնում Մովսես Խորենացու նկարագրած Հայկյան հսկա աղեղի և Լճաշենի աղեղների միջև: Լճաշենի աղեղները և կապարճներն առավել զարգացած ռազմական արվեստի կատարելության հասած նմուշներ են, որոնց նմանակը վերջերս հայտնաբերվեց Եղեգնաձորի քարանձավներից մեկում» (*Ավետյան, 2011, էջ 175*):

Վերջին տարիներին համեմատաբար մեծ ուշադրություն է դարձվել հայոց հին՝ նախագրային ժամանակաշրջանի կրոնին և պաշտամունքային երևույթներին, ընդ որում ոչ միայն հնագիտական, այլև լեզվական փաստերի նկատառումով. հատկապես լեզվական փաստերը կարող են մեծ նշանակություն ունենալ այդ ժամանակաշրջանի պատմության հարցերի լուսաբանման մեջ, որոնք առայժմ այնքան էլ կոնկրետ ուշադրության առարկա չեն հանդիսանում (*Հարությունյան, 2001. Ջահուկյան, 1992*):

Իբրև հնդեվրոպական լեզու, հայերենն առանձնանում է ցեղակից մյուս լեզուներից մ.թ.ա. V-IV հազարամյակների ընթացքում և III հազարամյակում արդեն առանձին լեզու («բարբառ») է, որ հետագայում տարբեր բնույթի տևական առնչություններ է ունենում այլ՝ ցեղակից և ոչ ցեղակից կամ այլ ցեղակցության լեզուների հետ: Այս ամբողջ ընթացքը կազմում է մի առանձին պատմաշրջան (էպոխա), որ գիտական լայն ուսումնասիրության համար ամենից առաջ ենթադրում է հիմնավոր շրջանաբաժանում: Կան նորագույն աշխատություններ Հայկական լեռնաշխարհի պետական կազմա-

վորումների, քաղաքական անցուդարձի, նյութական մշակույթի (լուսեղենի և այլն) հայտնաբերումների և ուսումնասիրման հարցերում, ընդ որում ոչ միայն հազարամյակների, այլև հարյուրամյակների ընդգրկումներով (տե՛ս օրինակ, *Ինսկիկյան, 2007, 37-54*, նույնի, *2009. Քոսյան, 2000, 161-174. Մովսիսյան, 2003*, նույնի՝ *2005* և այլն):

Այս աշխատանքում փորձել ենք ուրվագծել այդ շրջանաբաժանումը (մ.թ.ա. III հազարամյակի սկզբներից մինչև մ.թ. V դ. սկիզբը)¹:

Գ. Ջահուկյանը հայերենի գրավոր շրջանի փուլերի վերաբերյալ ունի հատուկ աշխատություններ (*Ջահուկյան, 1956, 1964* և այլն. *Աղայան, 1974, 58-81*): Իսկ նախագրային ժամանակաշրջանի պատմության փուլերը («վաղնջական» և «հնագույն») նշվում են սխեմատիկ ձևով արտալեզվական չափանիշների նկատառումով, այնինչ շրջանների առանձնացման համար ամենից առաջ կարևոր է լեզվականը (*Иванов, 1984, 61-86. Ջահուկյան, 1987, 20-26*):

Շրջանաբաժանումն ինքնին պայմանական է, սակայն լիովին հիմնված է լինում լեզվի պատմության արտաքին հանգամանքների և ներքին միջոցների վրա՝ դրանց փոխադարձ կապի մեջ: Շրջանների առանձնացումը կատարվում է խնդրի լուծման հարցում ճիշտ ուղիներով ընթանալու նպատակով: Նախագրային հայերենի պատմության համար այն առավել նպատակային է. ներքին միջոցների դեպքում ամենից առաջ հաշվի առնել մակարդակային միավորների ընդհանրությունները:

ա) Հնչյունական մակարդակի ընդհանրություններ, որոնք վերաբերում են ձայնավորական և բաղաձայնական համակարգերին՝ ներառյալ հարակից (շեշտի, վանկի, հերթագայությունների և այլն) իրողությունները:

Հնդեվրոպական լեզուների հնչյունական համակարգի վերականգնումներում տարբեր ուսումնասիրողներ հանդես են բերում

¹ Այդ շրջանաբաժանումը համեմատաբար լայն շարադրանքով ներկայացնում ենք մեր մյուս աշխատանքներում:

ելակետային տարբեր մոտեցումներ. մի մասը գտնում է ընդհանուր հնդեվրոպականի և նախահնդեվրոպականի համար հնարավոր հիմք-լեզվի համակարգերի գոյություն, մյուս մասն ավելի իրական է համարում բնական լեզվին մոտ մի վիճակի ձևակերպում, քան, այսպես կոչված, գերվերացարկումային առանձնացումը (հմմտ. ավանդական և նորագույն վերականգնումները):

Դա առավել նկատելի է հնդեվրոպական բաղաձայնական համակարգի տարբեր հարաբերակցությամբ վերականգնումների օրինակով: Ավելի ընդունելի պետք է համարել նման ելակետների միջին հարաբերակցությունը, որ հիմնվում է ոչ այնքան վարկածների վրա, որքան փորձում է հետամուտ լինել փաստերին, ըստ հնարավորին իրական վերականգնումներին:

Հայ. *բ, գ, դ* ձանեղների (*V դ.* ունեցած) արտասանական «որակի» մասին մինչև Հ. Պեդերսենը եղել է այլ՝ «հետաքրքրական» մոտեցում (ուրեմն այս հարցը վաղուց է եղել) (*Pedersen, 1904, 306-33, նույնի, 1921, 1, էջ 45 և հջ.*): Այսպես, Ստ. Մալխասյանցը, Էդիսոնի սարքի առիթով, իր հոդվածներից մեկում գրում է. «Եթե, օրինակի համար, ձայնագիրը Ե դարում յայտնի լինէր, այլևս վճի տեղիք չէր մնար այսօր, թե՛ Ս. Մեսրոպ մեր միջակ տառերը՝ *բ, գ, դ* եւ այլն, ի՞նչ տեսակ կը հնչէր. բառական էր միայն գլանը դարձնել ... մէկ խօսքով, սա լուսանկարին հետ՝ մարդի մարմնաորոթիւնը կանմահացնէ» (*Մայխասանց, 1878, 148*):

Ուշագրավ է նաև այն, որ Է. Բենվենիստը և Հ. Ֆոգտը միմյանցից անկախ հանգում են գրեթե նույնպիսի եզրակացության հին հայերենում շնչեղ ձայնեղների հնարավոր գոյության մասին՝ համապատասխան հնդեվրոպականին (հմմտ. այս եզրակացության կոահումը Պեդերսենի վաղ աշխատանքներում և այլն) (*Benveniste, 1959, 46-68. Бенвенист, 1961, 37-38. Vogt, 1958, 143-161. Фогт, 1961, 40-43. Vogt, 1938, 321-334. Г.-Ив., 1984, 42 և այլն*): Հարցը գոյություն է ունեցել ավելի վաղ, քան հիշյալ ուսումնասիրողների կարծիքների երևան գալը, իսկ դա առանձին քննության թեմա է.

հմմտ. հայ. *կին / ծին, արսւտ-/արած, քաւ- / չոր-ք, հարկ- / հերձ-* և այլն:

Հայ. «աղ» իմաստի համար ունենք *աղտ* և *աղծ*. *աղծ*-ը հանդիպում է միայն Եւս, քր. Ա. 130-ում (*Աճառեան, 1971, 132*), իսկ *աղտ*-ը՝ շատ տեղերում: Հին գրականի և բարբառի փոխհարաբերության տեսանկյունից *ծ/տ* տարբերակումը (լծորդությունը) կարևոր փաստ է. օր.՝ հայ. **ար-տ-* // *ար-աւտ-*, *ար-ած-* «ջուր». «ջրարբի (վայր)». հայ. *աւ-ու*. «ջրի հուն» (*Արատուտա* «հնագույն տեղանուն» «Aratta գետի երկիր» (խեթ.^{nar} A-rat-ta-a «Արատա գետ». հմմտ. հայ. *Արած(անի)* «հնագույն գետանուն» (<* ar-t^[h]- «ջրեր. գետ»)) (հմմտ. *Г.-Ив., 1984, 1325*)¹. հե. *t > հայ. ծ արտացոլման մասին հիշենք նաև հայ. *Մահրի* «ջրերի երկիր» անվանումը և այլն (*Ն. տ.*):

բ) Ձևային (կախյալ՝ արմատ, անկախ բառ) մակարդակի ընդհանրություններ: Կան տարբեր մոտեցումներ արմատի կամ հիմքի կազմության, վերջավորությունների՝ բայական սեռի հետ կապված տարբերությունների, բաշխման ժամանակային և այլն հարցերի առնչությամբ, որոնցում գիտական ընտրությունն ու վերանայումը պարտադիր են:

Այսպես, ի տարբերություն շատ հնդեվրոպաբան լեզվաբանների՝ Գ. Ղափանցյանն, օրինակ, գտնում էր, որ հայ. *յ-ն*, իբրև բայի ներկա ժամանակի եզ. 3-րդ դ.մասնիկ, ծագում է ոչ թե հե. *-ti մասնիկից, այլ խեթ. -i մասնիկից (- zi), հմմտ. հե. *bhereti > խեթ. kuenzi, հայ. *բերէ* (< **բերէյ*) «բերում եմ», որն, ինչ խոսք, ժամանակին արժանացել է առարկության, այսինքն՝ չի համարվել հիմնավոր (*Ն. տ.*) (*Капанцян, 1946, 24. Ղարագոյյան, 1960, 222*):

Նկատենք, որ հայերեն և խեթերեն ձևերն առաջացել են նախալեզվի նույն ձևից, իբրև ինքնուրույն գոյացություն, թեև շեշտված չէ այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացառվում է փոխառություն լինելը, մանավանդ ձևային մակարդակում: Ավելի

¹ Հե. *t > հայ. ծ արտացոլման մասին տե՛ս Հենկ, 1983, 39:

իրական է այն, որ գործ ունենք ոչ թե փոխառության՝ զուգակից ժառանգորդական մեկ լեզվից մյուսին, այլ ինքնուրույն զարգացման հետ:

գ) Շարահյուսական մակարդակի ընդհանրություններն առնչվում են հայերենի և ցեղակից մյուս լեզուների նախադասության կառուցատիպերին՝ ենթակա-ստորոգյալ-խնդիր հարաբերակցության մեջ, որ հայերենին առավել բնորոշ է, քան մյուս կառուցատիպերը, ներգործական (ակտիվ) / ոչ ներգործական (կրավորական՝ պասիվ) հարաբերակցության մեջ:

դ) Բնագրի (տեքստի) մակարդակի իրակությունները հիմնականում վիպական հատվածների քննության հիման վրա առանձնացվող տիպերն են, որոնց քննությունը կատարվում է համեմատաբանության զարգացման վերջին տարիներին, ընդ որում հնարավորին չափով ներառելով նաև հայերենի նյութը (տե՛ս *Иванов*, 1984, 61-86. *Якобсон*, 1984, 118-122. *Г.-Ив.*, 1984, 537-538):

Այսպես, կարելի է տարբերել երեք շրջան, որոնք հաջորդում են ընդհանուր հնդեվրոպական (կամ համահնդեվրոպական) ժամանակաշրջանին (մ.թ.ա. IX-III հզր.), որի ընթացքում հայերենն առանձնանում է իբրև բարբառային խմբերից մեկի միավոր.

1. Հայ-շումերա-ակկադա-ասորեստանյան առնչությունների շրջան (մ.թ.ա. III հզր. վերջ – մ.թ.ա. II հզր. կեսեր):

2. Հայ-խեթալուվա-(արիա-հունա)-խոտաուրարտական առնչությունների շրջան (մ.թ.ա. II հզր. կեսեր – մ.թ.ա. I հզր. վերջ):

3. Հայ-իրանա-ասորա-հունական առնչությունների շրջան (մ.թ.ա. I հզր. կեսեր – մ.թ. IV դ.):

Նման բաժանման դեպքում հնագիտական-պատմական, աղբյուրագիտական (մարդաբանության) համեմատաբար նոր տվյալներից բացի առավելապես նկատի են առնվում լեզվական-լեզվաբանական մատչելի փաստերի ընձեռած հնարավորություններ, որոնց դեպքում ըստ անհրաժեշտության կատարվում են լրացումներ և ճշգրտումներ. ավանդականի և նորի համադրություն,

անշուշտ, ապահովում է արդյունավետություն: Այդ շրջանների հավանական առանձնացումը հիմնվում է ոչ միայն հնագիտական-պատմական, այլև ըստ հնարավորին լեզուների տվյալների վրա: Առաջ են քաշվում խնդիրներ, որոնց անդրադառնալը, առավել ևս դրանց հնարավոր լուծումները վերաբերում են նաև արդի հայերենագիտությանը (տե՛ս *Ադոնց*, 1971, 1-24. *Իսախանյան*, 1982, 57-58):

Իսկ գրավոր ժամանակաշրջանը, ինչպես ընդունված է արդի հայագիտության մեջ, ընդգրկում է V դ. սկիզբներից մինչև մեր օրերը, որն, անկախ որոշ դեպքերում ճշգրտման անհրաժեշտությունից, բաժանվում է մի քանի շրջանի (տե՛ս *Ջահուկյան*, 1964):

Հայերենի գրավոր շրջանի *հին*, *միջին* և *նոր* անվանումն ըստ ժամանակի հատկանիշի է, իսկ *գրաբար*, *կիրիլյան հայերեն*. *աշխարհաբար* անվանումները՝ ըստ լեզվի որակի («նյութի»). երկու դեպքում էլ անվանումը պայմանական է, անհրաժեշտ՝ հստակության նպատակով: Գրավոր շրջանների ներսում ենթաշրջանների առանձնացումները, որ հայտնի են ըստ Գ. Ջահուկյանի շրջանաբաժանման, միշտ չէ որ համարվում են անատարկելի և ամբողջովին ընդունելի (տե՛ս *Աճեմյան*, 1971. *Աղայան*, 1974, 58-81. *Հովսեփյան*, 1984, 379-384. *Գարեբյան*, 1948, 41-64):

Սույն աշխատանքը վերնագրված է ակնարկներ, այն ներկայացնում է հայերենի բառապաշարի, մասամբ քերականական իրողությունների պատմության ամբողջական (սիստեմատիկ) շարադրանք ամենից առաջ բոլորովին նոր նյութի ընտրությամբ: Ձեռագիր և տպագիր (հին) ընտրված բնագրերի փաստական նյութը նախկինում գրեթե ամբողջովին չի եղել ուշադրության առարկա:

Այդ նյութի նույն մոտեցումներով և սկզբունքների կիրառումով քննությունը նորություն է ընդգրկման և մանրամասն լինելու տեսանկյունից, լրացնում է հայոց լեզվի ընդհանուր պատմության մասին գիտական պատկերացումները:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇՐՋԱՆ

Հին գրական հայերենը ազգային-եկեղեցական մշակույթի դրսևորում

Ընդունված է Մեսրոպյան գրերի ստեղծումից հետո երևան եկած գրավոր մշակույթի պատմությունը, ինչպես արվում է գիտության մեջ առհասարակ, առանձնացնել ժամանակի երեք պահերի մեջ՝ հին, միջին և նոր. միջինը մյուս երկուսի համեմատությամբ ունի բավականին յուրօրինակ ինքնության սահմանագիծ:

Ամեն մի գրական լեզվի իդեալը կանոնարկման բարձր աստիճան ունենալն է՝ ժամանակի ընդգրկումով և գործառույթն հագեցած: Հին գրական հայերենը լիովին բավարարել է այդ երկու առանցքային պահանջները: Այն այսօր մեր ձեռքին է ավելի ուշ ժամանակի (սկզբնականից բավականին հետագայի՝ IX դ. ոչ վաղ) «գրչությամբ», սակայն ենթադրվում է, որ այն շտամպի մեջ է եղել ժամանակի եկեղեցու լեզվական կանոնավորման անխափան հիմունքով. այսպես, V դ. Սուրբ գրքի հայերեն բնագրի խմբագրությունը կանոնացվել է և չի ենթադրում հետագա այլ կարգի միջամտություն. այդպես նաև, թերևս, մյուսների դեպքում:

Ըստ ժամանակի սահմանման, իր հերթին, դիտարկելի է նաև նյութական կողմը՝ գրավոր մշակույթի բովանդակությունը (ժանրային բաժանումը և այլն): Այս դեպքում արդեն բուն խնդիրը վերաբերում է մշակույթի տիրոջ՝ տվյալ հանրության իմացական պատկերացումներին, որոնք ունեն, այսպես կոչված, արտալեզվական հիմքեր:

Մշակույթը, պատկերավոր ասած, շտեմարան է, որում ամբողջանում են հանրության (իրականության) հանդիպական (իմա՛ տնտեսական, քաղաքական, գիտական և այլն) ձեռքբերումները. բանավոր (արտաքին) ձեռքբերումը վերաճում է գրավոր (ներքին) ունեցվածքի: Գրավոր մշակույթը հանրության մտավոր ամբարումն է՝ ժամանակային ձևակերպման մեջ, նույնպիսի սահմանազատմամբ:

Սուրբ Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց գրավոր մշակույթի մի միջոց (հայոց գրերը), որով հնարավոր եղավ այդ ձեռքբերումներն ամբարել, ընդ որում ոչ միայն իր ժամանակին իմանալու (ուսուցման), այլև հետագային տալու (ինքնության) նպատակով: Մարդկային մտքի հանճարի օրինակ է ստեղծել կամ արարել տվյալ ներկայի համար, սակայն հետապնդել ապագայի հեռանկար. սա իրական (օբյեկտիվ) գիտության տարերք է: Գրի ստեղծումը նոր ժամանակաշրջանի սկիզբ է ամեն մի ժողովրդի համար, հայոց գրերի ստեղծումը՝ սկիզբ հայ իրականության կյանքում, որ բացում է բոլորովին նոր հորիզոններ, մի նոր պատմաշրջան նախորդ ժամանակների համեմատությամբ, ընդամին վաղ անցյալի ձեռքբերումների բանավոր ժառանգման հիմքի վրա:

Նախ՝ հայոց լեզուն հայ մշակույթի շտեմարանն է, որ պարունակում է հայերեն գրավոր խոսքի ամեն կարգի տվյալներ՝ արտասանվածք (հնչյունաբանություն), բառ (բառապաշար), խոսք (քերականություն): Այնուհետև՝ այդ մշակույթը ներառում է գրավոր խոսքի ամեն մի յուրահատկություն՝ երևան եկած ինքնուրույն ձևով, կամ թարգմանության մեջ:

V դ. սկզբից մինչև օրս մեզանում ստեղծվել է ինքնուրույն և թարգմանական մի այնպիսի գրականություն (գրավոր մշակույթ), որ անկախ ժամանակի ընթացքում բնական տարերքի ազդեցությունից (կյուրթի մաշվածք և այլն), օտար և անհաճո միջամտությունից (տարբեր բնույթի գրկանք և այլն), կարելի է ասել, հսկայական ժառանգություն է անցյալի մասին որոշակի պատկերացումներ

ունենալու համար, ընդ որում ոչ միայն մեր, այլ նաև ուրիշ ժողովուրդների մշակույթների վերաբերյալ:

Լեզուն ևս իրականության հարատև ընթացքում կրում է փոփոխություններ: Հայերենը, այդպիսով, անցել է գրավոր մշակույթի երեք շրջան, որ ժամանակի հատկանիշով կոչվում է հին, միջին և նոր, իսկ ըստ լեզվի արտահայտության (ձևի) և բովանդակության (իմաստի), ինչպես նաև գործառության (ֆունկցիայի) հատկանիշի (ավանդական անվանումով)՝ գրաբար, կիլիկյան (միջին) և աշխարհաբար: Նման առանձնացումը, հայտնի է, հիմնականում կատարվում է հայերենի գրական նորմայի նկատառումով, այսինքն՝ ըստ այնմ, որ գրականը կա՛մ նույնն է, ինչ գրավորը, կա՛մ վերջինս ներկայանում է լայն խոսակցական (եթե ոչ նաև բարբառային) հիմքին բնորոշ երևույթների ընդգրկումով (*Гарубян*, 1948, 41-64. *Ջահուկյան*, 1954, 1964 և այլն. *Աղայան*, 1974, 58-81):

Հին գրական հայերենը, եթե այն համեմատում ենք նախորդ (նախագրային) ժամանակաշրջանի վիճակի հետ, իրոք, նոր մշակույթի դրսևորում է, որն ավելի շոշափելի է և տեղեկացման (ուսումնասիրման) առումով ավելի մատչելի: Գրավոր մշակույթի տարբեր բնույթի դրսևորումներն այդ հնարավորությունը տալիս են: Հայերենի պատմության գիտական ուսումնասիրությունը ներկայումս կատարվում է ըստ առանձին գիտակարգերի (դիսցիպլինների)՝ ամենից առաջ լեզվի պատմություն, համեմատական և պատմական քերականություն և բարբառագիտություն:

Նկատենք, որ, ցավոք, լեզվաբանական քննության առումով կա ոչ բավարար հետաքրքրություն գրական հուշարձանների (ձեռագրեր, քննական բնագրեր և այլն) աղբյուրագիտական կողմի նկատմամբ: Այնինչ, նոր բնագրերի նման ուսումնասիրությունը, համոզված ենք, կարող է ոչ միայն լրացնել, այլև ճշգրտել շատ հարցեր, որոնք մինչև այժմ, կարելի է ասել, ակնարկային, ոչ ամբողջական ձևով են քննության առնված:

Այնուհետև, լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում ներկայիս գիտությունն ունի ավելի մեծ ձեռքբերումների: Համեմատական և տիպաբանական լեզվաբանության մեջ վերջին տասնամյակներին հանգում են ավելի վստահելի և հիմնավոր եզրակացությունների՝ առանձնապես հենվելով ոչ միայն այլ լեզուների, այլև հին հայերենի տվյալների վրա: Հայերենը, թեև համեմատաբար ուշ է դարձել գրավոր լեզու, քան իրեն ցեղակից շատ լեզուներ (խեթալուսական, հունական, իրանական և այլն), սակայն, ինչպես ցույց են տալիս վերջին տարիներին կատարված աշխատանքների արդյունքները, պարունակում է բավականին հնավանդ (արխաիկ) գծեր, մանավանդ հնչյունական համակարգի, եթե ոչ նաև բառի արմատի տեսության մեջ:

Միսալ չէր լինի, եթե «Նոր հայկազյան բառարանի» (ՆՀԲ) տվյալների հիման վրա գրեինք մի աշխատանք բարբառային կամ խոսակցական բառապաշարի վերաբերյալ. օրինակ՝ ՆՀԲ-ն ունի *դժար* «դժվար. դժվարություն»՝ նշելով իբրև ռամկական բառ (հմմտ. *Աճառեան*, 1971, 783): Ունի նաև *փայքար*, *փայքարիմ* (էջ 931)՝ գործածված առաջինը Օրբելյանի (XIII-XIV դդ.) Պատմության («Դատ կամ *փայքար* մի իշխեսցե՛ հանել») և Եղիշեի (V դ.) երկի մեջ («Եթե՛ *փայքարիմք* (կամ *փայկարիմք*) ընդ նմա, նա տեղեկագոյն է քան զամենայն վարդապետս աշխարհիս») (իմա՛ եթե վստահելի է ձեռագրերի «գրչությունը»), որ հղվում են՝ «տե՛ս *պայքար*», «տե՛ս *պայքարիմ*», այսինքն՝ բառեր, որոնք օրինակ են պայթական խուլի շնչեղ խլացման (*պ> փ*), որ բնորոշ է համարվում հայերենի որոշ բարբառներին: Ըստ այդմ, դրանք ունեցել են իրենց հիմքերը նախկինում (հմմտ. փոխառություն՝ իրան. *paykar < պրսկ. paikar //

¹ Հ. Աճառյանի ցանկում («Լիակատար քերականություն հայոց լեզվի», հ. VI, Ե., 1971, էջ 783), ի դեպ, *դժար*-ը չի բերվում: Ք. Պատկանյանն իր աշխատություններից մեկում նշում է, որ ՆՀԲ-ն ունի ռամկական 700 բառ, Ռիզսի բառարանն այդ թիվը հասցնում է 6000-ի (տե՛ս *Патканов*, 1864, XVI):

paigār, պագենդ. պիլ. patkār «կոիվ, մարտ. վեճ. հակառակություն»)։

Հայ մատենագրության մեջ, այսպիսով, ոչ սակավ չափով սփռված տարբերությունները յուրովի օրինակ են լեզվի գրավոր խոսքի մեջ բանավորի ներթափանցումների, որոնց առանձին և մանրամասն քննությունը ապագայի խնդիր է (հմմտ. *Овсепян, 1973, 197-198*)։

Բերենք նաև հետևյալ օրինակը՝ «Մատենագիրք հայոց» մատենաշարի Գ հատորից։ ՆՀԲ-ն ունի *oguntj* (սբ.) և *ogunnu* (գոյ.), որ հղում է *ođuntj* «սարտուցանել, ճեղքել, հոշոտել և այլն», *ođ-unnuu* «քայքայում, հոշոտում և այլն» ձևերին, որոնցից երկրորդի դեպքում *đ*-ով տարբերակն (*ođunnu*) ունի միայն Ոսկերեքանը, իսկ Փարպեցին և Հովհան Օձնեցին՝ *g*-ով տարբերակ (*ogunnu*), և սա արդյո՞ք չի տալիս հնարավորություն ասելու, որ վերջիններիս լեզվում առկա է պայթական ձայնեղի շնչեղ խլացում (*đ > g*), որ կարող է ունեցած լինել խոսակցական (եթե ոչ բարբառային) հիմք։ Եվ եթե այդ այդպես է, ապա բայի կրկնակ ձևերի բազմաթիվ օրինակները (ինքնուրույն կամ թարգմանական), որ բերվում են ՆՀԲ-ում, կարելի է դաստասել ըստ խոսակցական հիմքերի այն տարբերության, որ, ենթադրաբար, պիտի ունեցած լինեն օրինակներ պարունակող երկերի հեղինակները կամ թարգմանիչները։

Այնուհետև, բավականին հետաքրքիր պիտի լիներ հայ հին մատենագրական երկերում տեղ գտած հատկանունների (տեղանուններ, անձնանուններ, ցեղանուններ և այլն) գուգաձևությունների (տարբեր «գրչությունների») ուսումնասիրությունը, որը բավականին առատ փաստերի հիման վրա կարելի կլիներ իրականացնել տարբեր դարերի, այլև նույն դարի առանձին հատվածների (հիսնամյակ, տասնամյակ և այլն) մեջ նկատելի երևույթների, մանավանդ հնչյունական («գրչության») տարբեր դրսևորումների համակողմանի վերլուծությամբ։ Նկատենք, որ հայոց լեզվի պատմությանը վերաբերող աշխատանքներում նախկինում այս կարևոր

հարցը չի եղել հատուկ ուշադրության առարկա, սակայն լուծելի է ներկայիս պայմաններում¹։

Այսպես, միայն «Մատենագիրք հայոց»-ի (հհ. Ա-ԻԱ, Անթիլիաս-Լիբանան, 2003-2018, առայժմ) համահավաք հատորների վերջում բերվող համապատասխան ցանկերը լիովին բավարար են հիշյալ հարցին անդրադառնալու համար, որն, անշուշտ, արդիական է, այլ դեպքում՝ ապագային վերաբերող։

Այս դեպքում էլ բերենք միայն մեկ օրինակ։ Հիշյալ համահավաքի Գ հատորի վերջում (ն. տ., 2004, էջ 555) բերվող ցանկերում գտնում ենք *Ներշապուհ* անձնանվան չորս ձևով գրություն՝ *Ներշապո* (էջ 421, 423), *Նորշապու* (էջ 421, 423), *Ներշապուհ* (էջ 363, 411, 421, 423), *Մերշապուհ* (էջ 117, 122, 363-364, 415, 418, 420), որոնց դեպքում հատորի կազմողները, իրավացիորեն հիմնական (անփոփոխակային՝ ինվարիանտ), ուստի ընդունելի գրական են համարել *Ներշապուհ* ձևը, իսկ մյուսները՝ ոչ գրական (փոփոխակային՝ վարիանտ) ձևեր (հարց է՝ դրանք ժամանակի խոսակցական, բարբառային, թե՛ հեղինակային ձևեր են)։ օրինակներում նկատելի է *ե // ո, ու // ո, այլև ն // մ* տարբերակվածություն. ամեն մի լեզվի պատմության, առավել ևս հայոց լեզվի դեպքում, միանգամայն անհրաժեշտ պիտի լինի գրավոր աղբյուրների նման տվյալների գիտական լայն ուսումնասիրությունը։

Այնուհետև, հայերեն գրավոր հուշարձանների քննական բնագրերում նույնպես (կազմված թե՛ նախկինում և թե՛ վերջին տասնամյակներին) կան քերականական կառուցվածքին վերաբերող գուգաձևություններ (ձևակազմական և շարահյուսական տարբերակներ), որոնք նույնիսկ տեղ են գտնում նորմատիվ ձեռնարկներում և բացատրվում են իբրև ընդհանուր (ընդունելի) ոչ կանոնական օրինակներ («շեղումներ», «այլաձև» հոլովում, խոնարհում

¹ Նման առաջարկ կամ նկատառում հանդիպում ենք, օրինակ, Ֆ. Ֆեյդիի բավականին ուշագրավ հոդվածներից մեկում (*Փեյծու, 1961, 46-49*)։

և այլն) (հմմտ. *աստղ – աստեղ, աստեղց / աստեղաց, աստեղքք / աստեղաւք* և այլն):

Ավելին, հին գրականում ունենք, այսպես կոչված, խառն հոլովում, որ դասագրքի կանոնով այնքան էլ խառն չէ, որովհետև սահմանվում է ըստ օրինի: Մակայն եզակիում մեկ, հոգնակիում մեկ այլ հոլովմամբ թեքումը մի՞թե այլաձև կամ տարբերակային չէ (օր.՝ *աշակերտ, աշակերտի, աշակերտու, աշակերտաց* և այլն). ունենք նաև թեք հոլովներում կրկնակ ձևեր (օր.՝ *այս – այսր / այստրիկ. այսու/այսուիկ* և այլն):

Իսառն հոլովման «համակարգի» մեջ ներառվող բառերի ծագումնային, հիմքակազմական, ինչպես նաև եզակի և հոգնակի թվի ձևերի բնագրային գործածության տարբեր հաճախականությունը ինչոր չափով թույլ են տալիս գտնելու որոշ բացատրություններ դրանց խառն կամ այլաձև լինելու վերաբերյալ: Իսկ ցուցական դերանունների որոշ թեք հոլովներում կրկնակ ձևերի գոյությունը, իրոք, ժամանակի խոսակցական լեզվի ազդեցության մի դրսևորում է:

Նման տարբերակային ձևերը լեզվի ընդհանուր պատմության համար ունեն միայն մեկ բացատրություն՝ բազմաձևություն լեզուն կրող հանրության հաղորդակցական տարբերության արդյունքում, ձևերի տարբերությունը՝ գրականի և ոչ գրականի (խոսակցականի կամ բարբառայինի) հակադրությամբ, ձևերի գոյակցում թե՛ համաժամանակյա և թե՛ տարաժամանակյա դիտվածքի մեջ:

Այնուհետև, ընդունված է հին հայերենի բառապաշարի քննության դեպքում ելակետ ընդունել «Նոր հայկազյան բառարանը» (հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837), սակայն ինչպես ցույց են տալիս հետագա բառագիտական ուսումնասիրությունները, հայերեն գրական հուշարձանները պարունակում են այնպիսի բառային միավորներ, որոնք այս կամ այն պատճառով դուրս են մնացել այդ բառարանից: Նման օրինակ է, ասենք, Ջևանշիր արքայի ողբերգական մահվան գրական պատումը Դավթակ Քերթոզի հեղինակությամբ. այստեղ գտնում ենք բառեր, որոնք չկան ՆՀԲ-ում՝ *ան-*

լոյս, առակ (ունի *առակ լինել*), *անսխարատ* (ունի *անսխարատելի*), *ծովասարսա, ձագամեռ, սգայի* (ձայն), *վեհազն* (բերվում է ուշ վկայություններով), *սնտուրփին, տարմ* («տարմի ջայլեմանց». ունի հետագա վկայություններով), *ուրկածին. քոյայնօքս* (< *քոյայինք*) և այլն: Նման դեպքերը վկայում են հայերենի բառապաշարի ամբողջացման նպատակով, բնականաբար, պատմական բառարանի ստեղծման անհրաժեշտությունը¹:

Հայոց լեզվի պատմության գիտական ուսումնասիրությունը, իրոք, ենթադրում է ըստ ամենայնի՝ ժամանակային, տարածքային և հասարական-հաղորդակցական (ֆունկցիոնալ) հայեցակետերով պայմանավորված քննություն, որ նշանակում է ուշադրության առարկա դարձնել լեզվի բոլոր բաղադրիչները՝ մեզ հասած գրավոր աղբյուրների ամբողջական և մանրամասն վերլուծությամբ²:

Մեր այս աշխատանքում քննության առարկա գրական հուշարձանների մեջ նման օրինակների ուսումնասիրությունը որոշակի տեղ է զբաղեցնում, որոնց էլ իրենց հերթին հնարավորին չափով անդրադառնում ենք:

«Վիպասանական հայերեն»-ի լեզվական առանձնահատկությունները

Ներածություն

Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի և Գրիգոր Մագիստրոսի երկերում տեղ են գտել հայ ժողովրդական բանահյուսության

¹ Նոր շրջանի գրաբարի բառապաշարում գտնում ենք նման միավորների հարյուրներից անցնող մի ամբողջություն (ունենք քարտարան՝ ձեռագիր), որի միայն նվազագույն մասն է ներառված մեր այդ թեմայով աշխատանքներում (հմմտ. *Համբարձումյան*, 1990 և այլն):

² Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի, արտերկրի տարբեր գիտամշակութային հաստատությունների պահոցներում առկա գրական հուշարձանների լեզվի պատմաքննական ուսումնասիրությունը արդի հայերենագիտության առանցքային գործ է, որի իրականացումը, այնուամենայնիվ, անհնարին չէ, ժամանակի խնդիր է հետագայի մեջ:

որոշ հատվածներ (թվով՝ 17. Խորենացուց՝ 15, Ագաթանգեղոսից և Մագիստրոսից՝ 1-ական), որոնց լեզվի, առանձնապես բառապաշարի վերաբերյալ մինչև օրս չկա համեմատաբար սպառիչ վերլուծություն (*Համբարձունյան*, 1995, 227-236): Այդ հատվածները ոչ գրական («բանավոր») խոսքի նմուշ են՝ «վիպասանական հայերեն» հորջորջմամբ¹:

1. Բնագրային հատվածների պարզաբանություն

Խորենացու 15 հատվածից (52 տող) 10-ը (38 տող) առնչվում է Արտաշես Ա-ին (գահ. մ. թ. ա. 189-160 թթ.). «Բեզ ասեմ...» (Խոր., էջ 178, վ. 5-11), «Եւ ուստի՛ տացէ...» (Խոր., էջ 178, վ. 18-20), «Հեծաւ արի արքայն...» (Խոր., էջ 179, վ. 2-6), «Տեղ ոսկի տեղայր...» (Խոր., էջ 179, վ. 10-11), «Տենչայ Սաթնիկ տիկին...» (Խոր., էջ 84, վ. 12-13), «Վիշապագունք գողացան...» (Խոր., էջ 192, վ. 16-17), «Ճաշ, ասեն, գործեալ Արգաանայ...» (Խոր., էջ 84, վ. 7-8), «Արտաազդայ ոչ գտեալ...» (Խոր., էջ 84, վ. 9-10), «Մինչ դու գնացեր...» (Խոր., էջ 191, վ. 19, էջ 192, վ. 1) և «Եթէ դու հեծցիս...» (Խոր., էջ 192, վ. 2-4), իսկ մյուս հինգը՝ «Երկնէր երկին...» (Խոր., էջ 85, վ. 17 - էջ 86, վ. 1-4), «Թէ քո Շարայի որկորն է...» (Խոր., էջ 40, վ. 5), «Ուլունք Շամիրամայ...» (Խոր., էջ 56, վ. 20-21), «Եւ Շամիրամ քար...» (Խոր., էջ 56, վ. 22) և «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն» (Խոր., էջ 199, վ. 13-15), վերաբերում են այլ թեմատիկայի²:

Ագաթանգեղոսի հատվածն է՝ «Իբրեւ զսէզն Տրդատ...» (Ագաթ., էջ 71), իսկ Մագիստրոսինը՝ «Ո՛ր տայր ինձ...» (Մագ., էջ 87):

Ավելացնենք, որ Ստ. Մալխասյանը ժամանակին նկատել է, որ «Աւա՛ղ փառացս անցաւորի» արտահայտությունը, իր խոսքով ասած՝ «ըստ Գր. Մագիստրոսի արտասանել է մեռնելիս Արտաշես Ա թագավորը», որ նշանակում է աշխարհի ունայնությունը՝ «փուչ

աշխարհ», ինչպես որ Ս. Գրքում (Սողոմոնի ասածը)՝ «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է» (Ժող. Ա, 2) (ՄՀԲԲ, 1945, 637): Եվ ի դեպ՝ Մալխասյանցի նկատածը գտնում ենք ոչ թե Գր. Մագիստրոսի, այլ Խորենացու մոտ, այն հատվածում, որում խոսվում է Արտաշեսի վարած կռիվներից մեկի մասին, ի համեմատություն այլազգի տիրակալների՝ իրենց կռիվներում ունեցած հաջողությունների, որ հայոց արքայի դեպքում չի ստացվել. «վասն զի և զթոռոցն եցոյց տկար լինել՝ բազմութեամբ զօրացն, մինչ զի չափոյ պէտք եղեն առաւել քան զհամարոյ: Նա ընդ այս ոչ հպարտացաւ, այլ արտասուեաց ասելով. «Աւա՛ղ փառացս անցաւորի» (Խոր., էջ 125):

Այս հատվածը ևս բանավոր խոսքի նմուշ է, որ ինչպես տեսնում ենք, շրջանցել են Հ. Աճառյանը և հետագա ուսումնասիրողները, այնինչ այն նույնպես պետք է ընդգրկել իբրև նախագրային ժամանակահատվածի լեզվի մի սեղմ արտահատություն («պատանիկ»): Եվ ըստ այդմ ստացվում է, որ Խորենացու երկի շնորհիվ մեզ է հասել ևս մեկ հատված («Աւա՛ղ փառացս...»)¹:

Դրանք, ինչպես ընդունված է դասական հայագիտության մեջ, երկու կարգի են: Մ. Աբեղյանը «Երկնէր երկին...»-ն իր աշխատության «Հմայքներ, առասպելներ» բաժնի մեջ է դնում, իսկ մյուսները՝ «Վիպասանքի», ինչպես որ Հ. Աճառյանի հոդվածում է (*Աբեղյան*, 1985, 66-372):

2. Բառապաշարի վերաբերյալ նախկինում կատարվածի մասին

Դրանց բառապաշարի վերաբերյալ եղել են տարբեր կարծիքներ, այս կամ այն բառի մեկնաբանման, ստուգաբանման հա-

¹ Այդ հատվածներն ընդունված է կոչել «վիպասանք» (տե՛ս Խոր., 1943, այլև 1991):

² Դրանցից «Տենչայ Սաթնիկ տիկին...» հատվածի լեզվին անդրադարձել ենք առանձին (*Համբարձունյան*, 1991, 25-27, այլև 1995, 227-236):

¹ Խորենացու երկում «վիպասանական հայերենի» նմուշներից մեկն էլ, կարծում ենք, «...և Շամիրամ քար» կարճառոտ հատվածն է (Խոր., էջ 56), որը, թերևս, բացի Մ. Աբեղյանի մի ակնարկային նշումից, տեղ չի գտել, նախկինում երևան եկած աշխատանքներում, այստեղ դրան չենք անդրադարձնում բառերի սովորական լինելու նկատառումով:

վաստի կամ հավանական փորձեր, որ ի մի է բերված Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ում: Հետագայում ևս արվել են մեկնաբանման մասնակի փորձեր, մանավանդ ստուգաբանական ճշգրտումների և լրացումների տեսքով, ընդ որում հնդեվրոպական բանաստեղծական խոսքի համատեքստում, որն առավել հատկանշական է:

Մ. Աբեղյանը հետևում է XIX դ. 1-ին կեսին եվրոպական բանասիրության, հին՝ հնդեվրոպական դիցաբանության վերաբերյալ տեսության ավանդույթին՝ այսպես կոչված, «ամպրոպային» հերոսների մակաբերմամբ (Գրիմ եղբայրներ և ուրիշներ), և պատահական չէ, որ Վահագնի կերպարը նրա աշխատություններում քննվում է իբրև ամպրոպածին հերոսի:

«Վիպասանական հայերենին» անդրադարձել է Հ. Աճառյանը, հետագայում՝ Գ. Ջահուկյանը, գրեթե նույն (նախորդից ոչ այնքան տարբերվող) վերլուծությամբ (*Աճառյան*, 1946, 163-173, այլև 1951. *Ջահուկյան*, 1987, 364-370, 382-383):

Իսկ վերջին ժամանակների ուսումնասիրությունների տվյալները ցույց են տալիս, որ «Երկներ երկին...» (այլ կերպ՝ «Վահագնի հիմնը») հատվածն, օրինակ, նմուշ է նախագրաբարյան կամ հնագույն հայերենի տարբեր փուլերով անցած լեզվական վիճակի, ավելի հին, քան որ կարելի է առնչել հայ տոհմային ժառանգության պատմությանը, հնագույն համահնդեվրոպական շրջանին (*Иванов*, 1984, 61-86. *Топоров*, 1977, 88-106. *Якобсон*, 1984, 118-122):

Ստորև անդրադառնում ենք այդ հատվածների լեզվի համեմատական քննությանը՝ ամենից առաջ նկատի ունենալով վերջին տարիներին կատարված տեսական քննությունների արդյունքը, առաջարկված նոր ստուգաբանությունները, բառերի մեկնությունները՝ հատկապես իրենց լրացումներով և ճշգրտումներով:

Խորենացու լեզվի և ոճի, հատկապես բառապաշարի քննության դեպքում «Վիպասանք»-ից՝ իբրև հեղինակային, ոչ թե բանավոր լեզվից վկայված, բերվում են մի դեպքում՝ *աշիկ*, *եղեգնիկ*,

կարմրիկ, *շիկափոկ*, *ոսկեօղ*, մյուս դեպքում՝ *խարդասանակ*, *տեղեկիկ* օրինակները (*Առաքելյան*, 1981, 178-182. *Խաչատրյան*, 2011):

Այդ հատվածների լեզվին Գ. Ջահուկյանն անդրադառնում է Աճառյանի արածի հիման վրա՝ ըստ այդմ ամպայման ավելացնելով իր նկատառումները՝ գրելով հետևյալը. «Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» II մասում փորձել է հատուկ քննության ենթարկել Խորենացու ավանդած վիպասանական տասներկու և Ագաթանգեղոսի ու ավելի ուշ հեղինակ Մագիստրոսի (XI դ.) ավանդած մեկական հատվածների լեզվական առանձնահատկությունները» (*Ջահուկյան*, 1987, 365):

Այնուհետև, այդ հատվածները բովանդակության առումով բաժանվում են երեքի, առաջինը վերաբերում է Վահագնին, որին, ոչ անկախ Վյաչ. Իվանովից, վերագրվում է «ավելի հին ակունքներ», քան «իրանական ծագում ունենալը», իսկ «մյուս հատվածներն արտացոլում են Երվանդունիներից մեկի, Արտաշիսյան հարստության նշանավոր թագավորների և Արշակունյաց թագավորական հարստության հիմնադիր Տրդատ I-ի կյանքի դեպքերը» (*ն. տ.*):

Այսուհանդերձ, Ջահուկյանի դիտարկումներում կարևոր է այն, որ, օրինակ, անցյալ դերբայի *-եսլ* մասնիկի (< հե. *-lo-), բառակազմական *-իկ*, *-ուկ* ածանցների (< հե. *-i-kon / *-u-kon) դեպքում, տրվում է դրանց ծագումը, բերվում են որոշ բառերի և ձևերի գործածության քանակային հաշվարկի (հաճախականության) խմբեր: Այնուհետև, անդրադարձ է կատարվում Խորենացու հատվածների բառապաշարին, քերականական յուրօրինակ իրողություններին:

Գ. Ջահուկյանը կարծում է, որ «...հնագույն հայերենի վիճակի մասին էական գաղափար է տալիս վիպասանական հատվածների բառապաշարի քննությունը» (*ն. տ.*): Այստեղ, թերևս, կարող է առարկելի լինել ժամանակի նկատառումը՝ քննությունը «հնագույն հայերենի շրջանում, հատկապես նրա ուշ փուլում», որովհետև՝

1) «Երկնէր երկին...»-ը, օրինակ, ավելի վաղ ժամանակների, այն է՝ ընդհանուր հնդեվրոպականից եկող և հետագա հայերենի և ցեղակցորեն ավելի մոտ լեզուների փոխազդեցությունների փուլերով անցած լեզվական իրողություններ է պարունակում, 2) ոչ միայն այդ, այլև մյուս հատվածներն (ըստ այդմ) պիտի լինեին հատուկ ուշադրության առարկա:

Եվ կարևոր է այն, որ հեղինակը «հարկ է համարել կատարել որոշ ճշգրտումներ ու դիտողություններ», հատկապես Աճառյանի կողմից վիպասանական հատվածների անծանոթ ծագման համարվող բառերի վերաբերյալ՝ *անցանեմ, առաւօտ (*առաւաւտ), հանեմ (-ու), հիմն, յորձանք, տեղ (-ամ), ցաւ, փափուկ*, ինչպես նաև *գաւառ, գնամ, երկիր, թեւ, լինիմ, կամ, քէն, շատ, ազն, բանակ, խարդասանակ, ծուխ* և այլն:

Հատկապես վերջին տարիներին լույս տեսած աշխատանքները, իրենց վարկածային բնույթով հանդերձ, հուշում են որոշ հարցերի անդրադառնալ՝ նոր մոտեցումներով՝ կապված բառերի ստուգաբանության, բանաստեղծական խոսքի հին (կամ վաղնջական) ծածկակրկնական («անագրամային»), այլաբանական կառուցման, դիցական (սմանությամբ՝ արքայական) հերոսների (պերսոնաժների) շերտագրական դրսևորման հետ և այլն (հմմտ. «Երկնէր երկին...», «Տենչայ Սաթինիկ տիկին...», «Ո՛ր տայր ինձ գծուխ ծխանի...», «Աւ՛ղ փառացու...»):

3. Բառապաշարի շերտերը և կազմությունները

Քննության առարկա հատվածների բառապաշարը հիմնականում լայն գործածության բառեր են: Սակայն բառարանային գրանցման առումով ուշագրավ է այն, որ որոշ բառեր բացառիկ գործածություններ են, այսինքն՝ չեն հանդիպում այլ աղբյուրներում (ՆՀԲ-ն, օրինակ, ունի միայն այդ հատվածների վկայակոչմամբ), կան նաև, որ հանդիպում են այլ վկայությունների հետ միաժամանակ՝ երբեմն առանց տվյալ բնագրի համար ժամանակի գործոնի հաշվառման: Ըստ այդմ կարելի է առանձնացնել մի քանի խումբ:

1) Ըստ գործածության ժամանակի և հեղինակային պատկանելության:

Լեզվի պատմության համար կարևոր է նաև պարզել բառի գործածության ժամանակը, այլև հեղինակային պատկանելությունը, որպիսով բառն ունենում է ժամանակային հավաստիություն, որ ամեն մի լեզվի բառապաշարի հարստության հաստատագրման հինքն է:

ա) Բառեր, որոնք չկան ՆՀԲ-ում. դրանք, կազմված լինելով փաղաքշական-փոքրացուցիչ *-իկ* մասնիկով, առհասարակ բնորոշ են հայերենի բանավոր-խոսակցական տարբերակին, որ, ինչպես երևում է, իր հիմքերն ունի նախագրային շրջանում (հմմտ. *աղջիկ < *աղ-իջ-իկն < հե. *al- և այլն*).

եղեգնիկ. եղեգն բաղադրող հիմքով և *-իկ* մասնիկով. «Երկն ի ծովուն ունէր և գկարմրիկն *եղեգնիկ*» (Խոր., էջ 85-86)¹.

կարմրիկ. կարմիր բաղադրող հիմքով և *-իկ* մասնիկով. «Երկն ի ծովուն ունէր և *գկարմրիկն* եղեգնիկ» (էջ 86).

տեղեկիկ. կրկնակի ածանցմամբ. բաղադրող **տեղեկ (< *տեղեակ, տեղի-ակ)* հիմքին *-իկ* մասնիկի հավելմամբ. «Արտաւազայ ոչ գտեալ ... *տեղեկիկ* ապարանից ի հիմնանալն Արտաշատու» (էջ 85-86):

բ) ՆՀԲ-ն ունի միայն Խորենացու (*ծխասն* բառի դեպքում՝ միայն Մագիստրոսի) վկայությամբ: Լեզվի պատմության համար նման վկայությամբ բառերի որակումը պայմանականորեն պիտի վերագրվի կամ հատկացվի տվյալ հեղինակին:

Ըստ այսմ՝ ստորև բերվող բառերը հայերենում այլ բան չեն, քան Խորենացու կամ Գրիգոր Մագիստրոսի լեզվի (հեղինակային) բառեր.

¹ Այս և հետագա օրինակների փակագծում նշում ենք Խորենացու բնագրի միայն էջը՝ կա՛մ բնագրային հատվածին կից, կա՛մ բառերի ստուգաբանական-համեմատական վերլուծությունից հետո (վերջակետ, գծիկ նշումով), իսկ Ազաթանգեղոսի և Մագիստրոսի դեպքում նաև Ազաթ., Մագ. համառոտագրումով:

աչազեղ. ըստ ՆՀԲ-ի՝ «աչօք գեղեցիկ. աղուորաչուի». «Հա-
անեա՛ց բանից *աչազեղոյ* դստերս Ալանաց» (էջ 47),

աշիկ. ՆՀԲ-ն ունի՝ «աչկունք. տե՛ս աչք». «*Աչկունքն* էին արե-
գակունք» (էջ 30).

խարդաւանակ. ՆՀԲ-ն ունի՝ «որպէս խարդաւանութիւն ինչ»,
ընդ որում կրկնակի գործածությամբ. «Երկիւղ կասկածանաց *խար-
դաւանակ* լինելոյ իւրոյ թագաւորութեանն». «*Խարդաւանակ* լեալ
նմին ի տաճարին վիշապաց» (էջ 12, 29).

ծխան. ՆՀԲ-ն ունի՝ «Ծխան, ի, ագ. Տ[ե՛ս]. Ծխահանք», գոր-
ծածված միայն Մագիստրոսի հիշյալ հատվածում. «Ո՛ տայր ինձ
ասել զծովս *ծխանի*, և զառաւօտն նաւասարդի» (Մագ., էջ 87).

շիկափոկ. ՆՀԲ-ն ունի՝ «Որոյ փոկն է շէկ. ի շէկ փոկոյ կազ-
մեալ». «Հանեալ զոսկէօղ *շիկափոկ* պարանն ... ձգեալ զոսկէօղ *շի-
կափոկ* պարանն» (էջ 47)¹.

ոսկէօղ. ՆՀԲ-ն ունի՝ «ունող ոսկի օղ». «Հանեալ *զոսկէօղ* շի-
կափոկ պարանն ... և ձգեալ *զոսկէօղ* շիկափոկ պարանն» (ս. տ.).

պատանեկիկ. ՆՀԲ-ն ունի՝ «փոքրիկ պատանեակ. մանկիկ». *պատանեակ*
բաղադրող հիմքով և *-իկ* մասնիկով. «Ընդ եղեգան փող՝ բոց
ելանէր, և ի բոցոյն *պատանեկիկ* վազէր» (էջ 30).

վիշապազն. ՆՀԲ-ն ունի, իբրև գլխաբառ, տալիս է *վիշապա-
զունք* ձևով, ընդ որում քննվող հատվածն ավելի ընդարձակ մեջբե-
րումով. «*Վիշապազունք* գողացան զմանուկն Արտաւազդ» (էջ 29,
46, 58):

գ) ՆՀԲ-ն ունի ի թիվս այլոց նաև Խորենացու վկայությամբ:
Նման դեպքերում հարցի լուծումը պահանջում է ուշադրություն
դարձնել բառի գործածության ժամանակին (ժամանակագրությա-
նը)՝ որ հեղինակն է ժամանակով նախորդում մյուսին, որպիսով

¹ Ի դեպ, ըստ ՆՀԲ-ի՝ *լայքա* // *լայքայ*, «որ և դաքա» նշանակում է «ներկ հո-
դային՝ բացագոյն կարմիր, որով ի գոյն պայծառ ներկին մորթք ևն. Քանզի պա-
տուեալ է առ պանս մորթ կարմիր, լայքա շատ և ոսկի բազում տուեալ ի վար-
ձանս, առնու գոիկին օրիորդն Սաթինիկ. Այս է (երգս) ոսկէօղ շիկափոկ պարանն.
Խոր. բ. 47»:

կարելի է դարձյալ պայմանականորեն որոշել բառի հեղինակային
պատկանելությունը: Այդպիսին են հետևյալ բառերը.

արտախոր. «արտախոր... նոյն ընդ արտախորակ». «Տենչայ
ասեն Սաթենիկ տիկին տենչանս *զարտախոր* խաւարտ» (էջ 29).

խաւարտ. «Զարտախոր *խաւարտ*» (տե՛ս նախորդ օրինա-
կը)¹.

հարսնութիւն. «հարսն գոլն, կնութիւն, հարսնանալն, և հար-
սանիք». «Տեղայր մարգարիտ *ի հարսնութեան* Սաթինկան». «Այ-
տքիկ յաուրս *հարսնութեան* վայելեն» (էջ 47).

սրաթել. «սուր թևօք, երագաթև, սրաթոխչ, նրբաթև». «Ան-
ցեալ որպէս զարծուի *սրաթել* ընդ գետն» (էջ 5, 47).

փեսայութիւն. «փեսայանալն, փեսայ գոլն. «Տեղ ոսկի տե-
ղայր ի փեսայութեանն Արտաշիսի» (էջ 47):

դ) Միայն մեկ դեպքում՝ *քաջազգի* («որ է յընտիր և ի լաւ ազ-
գէ՛ցեղէ՛ տեսակէ») բառի համար ՆՀԲ-ն բերում է նախ հետին
վկայություն, այնուհետև՝ Խորենացուն, որ բնագրի ժամանակի ա-
ռումով ուղղելի է, իսկ իմաստի առումով՝ ընդունելի. «Ընդ *քա-
ջազգոյ* (կամ քաջագոյ) կոյս օրիորդիս պանսաց» (էջ 50):

ե) Մեկ դեպքում էլ՝ *փափուկ* բառը ՆՀԲ-ն բերում է ոչ բուն
(«ոչ կոշտ»), այլ (փխբ.) «գիրգ. քնքուշ. վայելչագեղ. փափկասուն»
իմաստով՝ «*փափուկ* օրիորդ» (էջ 47):

2) Ըստ ծագման բնիկ (կամ հիմնաշերտային) բառեր

Դասական համեմատաբանությունն այս մարզում, հատկա-
պես անցյալ դարի 50-ական թթ. սկսած, հասել է որոշակի ձեռքբե-
րումների, որոնք այս կամ այն չափով հիմք են հանդիսացել հետա-

¹ Այսպես, ՆՀԲ-ն բացատրության մեջ ունի այլ լեզվով «պխանայ» (< հուն.
λάχανο), որ հայերենի բարբառներում, հայտնի է, նշանակում է *կաղամբ*, կամ
նկատի ունեն *կաղամբ*-ը, և ավելացնում, թե բառը նշանակում է «բանջար ուտելի
մարդկան», այլև «հազար» բույսը, որ ունի Վրբ. հց. ձ. [= Վարք հարանց, ձեռա-
գիր]՝ «Խաւարտ, որ կոչի հազար»: Գիտենք, որ թե՛ կաղամբը և թե՛ հազարը թեր-
թափող՝ իրար վրա դարսված դալար բույս են, որ այստեղ ասվում է նաև *խաւարտ*.
Սաթենիկը («առասպելաբար») այդ բույսին է ձգում «տենչայ ... տենչանս»:

գա ուսումնասիրությունների համար: Ստորև բերվող ծագումնային համեմատությունները մեծ մասամբ կատարվում են ըստ դասական (ավանդական) վերականգնումների: Հիշյալ հատվածների բնագրային վերլուծության կարևոր մասն է բառային միավորների ըստ ծագման քննությունը, որին էլ անդրադառնում ենք ստորև:

Բնիկ կամ հնդեվրոպական բառեր են հետևյալները.

ամենայն (ամէն «բոլոր» < հե. *sm̥no-). Ջահ., 1987, էջ 147, 216, նաև 2010, էջ 45. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 154, Hübsch., 1897, էջ 416: էջ 191-192¹.

այլ (< հե. *alios). Ջահ., 1987, էջ 111, 93, 222, նաև 2010, էջ 48. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 168, Hübsch., 1897, էջ 417: - էջ 178.

այր (< հե. *aǵ(r)ǵo-). Ջահ., 1987, էջ 140, 207, նաև 2010, էջ 49. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 173, Hübsch., 1897, էջ 417-418: - էջ 178, 179.

անդ (-ն- < հե. *no-). Ջահ., 1987, էջ 71, 122, նաև 2010, էջ 53. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 185-186, Hübsch., 1897, էջ 419: - էջ 192.

անցանկ (անց «անցում, ուղի» < հե. *ant-s). Ջահ., 1987, էջ 147, 214, նաև 2010, էջ 63: - 84, 179: Ըստ Ջահուկյանի՝ *անցանկ* (*անց* < հե. *sntset < *sent «ուղ-դություն վերցնել, գնալ» հմմտ. հիոլ. Sēt «ուղի, ճանապարհ») (Ջահ., 1987, էջ 383):

աչ(ազեղ) [*աչ(ք)*] (< *ակն*) < հե. *ok^hi-]. Ջահ., 1987, էջ 141, նաև 2010, էջ 30-31. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 107-108, Hübsch., 1895, էջ 413-414: - էջ 178. այդպես նաև՝ *աչ(կունք)* [*աչ(ք)*] (< *ակն*) < հե. *ok^hi-]: - էջ 86.

առաւաւտ (< հե. *aus-). Ջահ., 1987, էջ 114, 217, նաև 2010, էջ 73: - «Եւ *զառաւաւտն* նաւասարդի» (Մագ., էջ 87). Աճառյանը դիտում է իբրև անհայտ ծագման, իսկ ըստ Ջահուկյանի՝ *առաւաւտ* (**առաւաւտ*) բառի արմատն է *աւ*, որը բնիկ է (< հե. *aues- «արշա-

լույս»). Ջահ., 1987, էջ 383 (հմմտ. *Համբարձումյան*, 2012, 16, 163-164):

ասել [*աս* < հե. *ag^h-(t-)]. Ջահ., 1987, էջ 121, 202, 220, նաև 2010, էջ 76. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 265-267, Hübsch., 1895, էջ 421: - էջ 178.

արեգակունք (*արեգակն*. *արեգ* «արև» < հե. *reu-/*rey-). հմմտ. Hübsch., 1897, էջ 424. ՀԱԲ, 1, էջ 310-312, Դ.-ՄԵ., 1984, էջ 684, Ջահ., 1987, էջ 207, նաև 2010, էջ 88-89): - էջ 86.

արծուի (<հե. *rg^hriǵo-). հմմտ. հնդկ. rjīryá- «արագ թռչող՝ սրաթև», հուն. ἄρξιφος «արծիվ», ավեստ. ərəzifya- «արծիվ» (Hübsch., 1897, էջ 424 – 425. ՀԱԲ, 1, էջ 319-320, Դ.-ՄԵ., 1984, 106₂, 539, Ջահ., 1987, էջ 145, 208, նաև, 2010, էջ 91). ըստ այսմ՝ բառի նախահունչ *ա*-ն հետագայի է, ենթադրելի է նախնական *-rǵiǵ [< *-rciǵ] արմատ, որի *ա*-ն վերածվել է *ւ*-ի (< *-rciǵ), այնինչ ուրարտերենում, օրինակ, տեղի ունեցած պիտի լինի խուլի ձայնեղացում (*-rcib. հմմտ. Arşibini «(Մենուայի ձիու անուն) արծիվ»: - էջ 179¹.

(*զարտահյուր* (*արտահյուր*) [*արտ(ա)*] «դուրս, դրսի կողմը» < հե. *ag^h-ro- (*g^h > *տ*) + *հյուր* (*հոյր*) «թագ, փաթթոց». հմմտ. < ավ. xaoða «սաղավարտ», հայր. xauda «գլխարկ») (Hübsch., 1897, էջ 160. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 338, Ջահ., 1987, էջ 367, նաև 2010, էջ 96): - էջ 84.

բան (< հե. *bhā-ni-s). Hübsch., 1897, էջ 428. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 403-405, Դ.-ՄԵ., 1984, էջ 380, Ջահ., 1987, էջ 115, 219, 22: - էջ 178.

բառնալ (< *բարձնալ* < հե. *bhrg^h-nā-). Hübsch., 1897, էջ 428. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 413-415, Ջահ., 1987, էջ 116, 214, նաև 2010, էջ 118: - էջ 178.

բլուր (< հե. *bhōl-). ՀԱԲ, 1, էջ 455-456. հմմտ. Ջահ., 1987, էջ 115, 207, նաև 2010, էջ 130: - էջ 199.

¹ Քննական բնագրում շաղկապը տրված է միագիր *ւ*, որը փոխարինում ենք երկագիր *և*-ով՝ բառի ծագման հնչյունական անցումը նշանակելու նպատակով:

¹ Կարելի է վերանայել ստուգաբանությունը՝ ելնելով ավելի հավանական տվյալներից (հմմտ. Դ.-ՄԵ., 1984, 106₂, 230, 539):

png «(բոնկված) կրակ» (< հե. *bhok-so). ՀԱԲ, 1, էջ 478. հմմտ. Ջահ., 1987, էջ 117, 207, նաև 2010, էջ 137: - էջ 86.

qawian (< հե. *ghəu-) (?). ՀԱԲ, 1, էջ 527-528. հմմտ. Ջահ., 1987, էջ 128, 221, նաև 2010, էջ 153: - էջ 199. Ըստ Ջահուկյանի՝ *qawian* (< հե. *ghəu-). գտնում է, որ «տեղ՝ առատ անձրև» և *qawian* բառերի հնդեվրոպական ծագումը ավելի հավանական է». *qawian*-ը համեմատվում է գոթ. *gawi* «երկիր, գավառ» ձևի հետ, իսկ *intē*-ի դեպքում նշվում է, որ Աճառյանը «աղբյուրը համարում է ասորերենը (*tilā* «ցող»), որ քիչ հավանական է» (տե՛ս Ջահ., 1987, էջ 383-384, նաև 128): Հմմտ. հայ. (բրբռ.) *կավառ* «(ցորենի, գարու և այլն) արտամիջյան առվի սկիզբ» (Մուշ, Ալշ.): Աճառյանը հոդվածում *intē*-ը դիտում է «խալդի-վրացական» փոխառություն, ինչպես որ *qawian*, *ծուխ*, *ծիրան* բառերը.

qatēkghly (*qatē*- < հե. *uel-). ՀԱԲ, 1, էջ 533. հմմտ. Ջահ., 1987, էջ 155, 219, նաև 2010, էջ 155: - էջ 179. Այսպես նաև՝ (*աշա*)*qatē*.

qatun (< հե. *ued-). Hübsch., 1897, էջ 434. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 537-538, Ջահ., 1987, էջ 114, 207, նաև 2010, էջ 15: - էջ 71, 179, 199.

qūayl (< հե. *ghē-nā-mi-). Ջահ., 2010, էջ 164: - էջ 84, 191-192, 199.

qanqānūayl (*qanq* < հե. *uol-). ՀԱԲ, 1, էջ 573. հմմտ. Ջահ., 1987, էջ 215, նաև 2010, էջ 166: - էջ 192.

qanrōtēl (*qanrō* < հե. *uorg'o). Hübsch., 1897, էջ 436. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 584, Դ.-ՄԵ., 1984, էջ 376, Ջահ., 1987, էջ 156, 213, նաև 2010, 169: - էջ 84.

qanūnēl (*qān* < հե. *ūi-n-d-). Hübsch., 1897, էջ 437. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 564, Ջահ., 1987, էջ 155, 198, նաև 2010, էջ 163: - էջ 84.

qahūgāqū (*qahp* < հե. *dhēses). ՀԱԲ, 1, էջ 672. հմմտ. Դ.-ՄԵ., 1984, էջ 475, Ջահ., 1987, էջ 120, 222, նաև 2010, էջ 200: - էջ 84.

qānēl (**qh-ū-tē* < հե. * dhē-ne-). Hübsch., 1897, էջ 439. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 675-676, Ջահ., 1987, էջ 119, 215, նաև 2010, էջ 201: - էջ 192.

qnu (<հե. *tu), *pn* (< հե. *tue- / *tuo-). Hübsch., 1897, էջ 440. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 681, Ջահ., 1987, էջ 154, 174, 197, 202, 222, նաև 2010, էջ 202-203: - էջ 178, 191, 192.

qunūn [< հե. *d^[h]ur-(no)]. Hübsch., 1897, էջ 440. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 685, Դ.-ՄԵ., 1984, էջ 43, 134, 181, 743, Ջահ., 1987, էջ 120, 211, նաև 2010, էջ 204: - էջ 199.

qunūn (< հե. *d^[h]ug^[h]ter). Hübsch., 1897, էջ 440. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 686, Դ.-ՄԵ., 1984, էջ 114, 1501, 380, 423, 691, 765, 766, Ջահ., 1987, էջ 120, 207, 208, նաև 2010, 204: - էջ 178.

kəpēt [*k-əpēt* < հե. *e-+ *pēt* (**pēt*) < հե. *te]. ՀԱԲ, 2, էջ 180. հմմտ. Ջահ., 1987, էջ 120, այլև 2010, էջ 265-266: - էջ 40, 192.

kəūnēl (*kē*- < հե. * el-). ՀԱԲ, 2, էջ 8-9. հմմտ. Ջահ., 1987, էջ 121, 164, 165, 214, նաև 2010, էջ 210: - էջ 86.

kē-ի (*qayl* < հե. *e-g^hem-i «գնալ, գալ»). ՀԱԲ, 2, էջ 12. հմմտ. Դ.-ՄԵ., 1984, էջ 86, Ջահ., 1987, էջ 128, 214, նաև 2010, էջ 21: - էջ 199.

kēkqūhly [*kē-kqū* < հե. *el-(?)]. հմմտ. *kē-kāhū*. Ջահ., 2010, էջ 214, նաև 2010, 214: - էջ 85-86).

kēhū (< հե. *el-no-). Hübsch., 1897, էջ 442. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 21-22, Ջահ., 2010, 215: - Մագ., էջ 87.

kēhēnū [*kēhēn* (**kēhēn*) < հե. *k'er- (?)]. Ջահ., 2010, էջ 216: - Մագ., էջ 87.

ku [< հե. eg'- (> *es-)]. Hübsch., 1897, էջ 442. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 32, Ջահ., 1987, էջ 121, 222, նաև 2010, 218: - էջ 40. 192. Մագ., էջ 87.

kūhū (?) [*k-ūhū* < հե. *dĒi-n- (?)]. Hübsch., 1897, էջ 445. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 62-64, Ջահ., 1987, էջ 117, 206, նաև 2010, էջ 227: - էջ 85:

kūhēn [*k-ūhēn* < հե. *er-ū - (< er-) (?)]. ՀԱԲ, 2, էջ 63-64, IEW, 1, էջ 332. հմմտ. Ջահ., 1987, էջ 123, 206, 383, նաև 2010, էջ 227: - էջ 192:

Այնինչ *երկիր* բառը *երկ-* (*ե-րկ-* < *կր-կին*), *երկ-ու*, *երկ-նչ-իմ* և այլ բաղադրություններում, սկսած Մեյեից, կապում են *երկու* (< *ե-րկ-ու*) «երկու» թվականի հետ, թեև ոմանք այն անհավանական են համարում, ուստի կարծում ենք, որ ավելի հավանական է այն առնչել «մյուս» ցուցական (դեյկտիկ) իմաստին՝ ի հակադրություն *մի* «այս, սա» ցուցական իմաստի: Նման հակադրությունը բացատրելի է երկյակ բաշխվածությամբ՝ «մի ≠ երկու» (հին՝ «սա ≠ ոչ-սա՝ մյուս»), իբրև «գույգ», երկուսը միասին «հաշվարկ»՝ նախնական պատկերացումներում (տե՛ս *Համբարձումյան*, 2023, 40-155)...

երկն [*ե-րկ-ն* «երկունք» < հե. *edyon (< ed-) (?)]. ՀԱԲ, 1, էջ 64-65. հմմտ. Ջահ., 1987, էջ 121, 163, նաև 2010, էջ 227. – էջ 85-86: Այսպես նաև՝ *երկնել* [*ե-րկ-ն-ել*, կոնկրետ իմաստով՝ «երկունքի ցավեր ունենալ», ընդհանուր իմաստով՝ «ազատվել, առանձնանալ» < հե. * edyon (< ed-) (?)]: -էջ 85: Այս կապակցությամբ Ջահուկյանն ունի հետևյալ առարկությունը. «Կասկածելի պետք է համարել Ֆրիսկի կողմից *երկն-ի* և *երկ-ի* միացումը իրար հետ, եթե ճիշտ է Աճառյանի կարծիքը *երկ-ի* (առանձին արմատ՝ «գործ, աշխատանք» իմաստով – Վ.Հ.) իրանական ծագման մասին» (Ջահ., 1987, էջ 163): Հմմտ. *երկին*, *երկիր*, *երկն*, *երկոքին* և այլն (տե՛ս նախորդ հղումը):

երկոքին [*ե-րկ-ոք-ին* (*-եան*) < հե. *dyo- (?)]. ՀԱԲ, 2 էջ 66-67. հմմտ. Ջահ., 2010, էջ 227-228: - էջ 178.

եռ «և, ու» (< հե. *epi). Hübsch., 1897, էջ 445. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 70, Ջահ., 1987, էջ 122, 222, նաև 2010, էջ 229: - էջ 84. 85, 86, 178, 179. - Մազ., էջ 87.

գարմ [(*q*)ար-մ < հե. * or-mo-]. ՀԱԲ, 1, էջ 327. հմմտ. Ջահ., 1987, էջ 123, նաև 210, էջ 93:- էջ 178.

զի [(*q*)ի < հե. *kui-]. Hübsch., 1897, էջ 450. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 94-95, Ջահ., 1987, 134, 222, նաև 2010, էջ 238: - էջ 178: *Ջի* բառին հատկացվում է երկակի ծագում (հմմտ. Ջահ., 1987, էջ, նաև 2010, էջ 238).

է, էին (*եւ* < հե. *es-mi). Hübsch., 1897, էջ 442. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 25-26, Ջահ., 1987, էջ 123, 214, նաև 2010, էջ 216: - էջ 86, 178.

ընդ (< հե. *anti). Hübsch., 1897, էջ 447. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 122-124, Ջահ., 1987, էջ 112, 140, 158, նաև 2010, էջ 248: - էջ 86, 178, 179.

ընկենույ «գգել, նետել» (< հե. *sengu- «ընկնել, խորասուզվել»). հմմտ. *անկ-* (*ականիլ*, *անկումն* // *անգանիլ*, *ընկանիլ* < հե. *sngu- «անկում, ընկնելը»). ՀԱԲ, 1, էջ 197-199, նաև 2, էջ 128. հմմտ. Ջահ., 1987, էջ 147, 214, նաև 2010, էջ 58, 249: - էջ 179.

թեւ (*սրս*)*թեւ* < հե. *pteyo-]. Ջահ., 1987, էջ 144, 209, նաև 2010: - էջ 179. նաև՝ *թեւ* [< հե. *pteu- (< *pet-)] «թռչել». հմմտ. *հայ. թիռ-, թռչիմ* (Ջահ., 1987, էջ 383): - 179.

թէ (*թե < հե. *te) (*ե-թէ* < հե. *ete). ՀԱԲ, 2, 180. հմմտ. Ջահ., 2010, 265-266: - էջ 40.

թումբ [< հե. *tu-m-bh- (?)]. ՀԱԲ, 2, էջ 206. հմմտ. Ջահ., 1987, էջ 154, 207, նաև 2010, էջ 275: - Ազաթ., էջ 71.

ի (վեր, մէջ և այլն) [բառակապակց. < հե. *en (upero-, *me(i)dho-). (հմմտ. *ի դուրս* < *դունն*, *դուրք*)]. ՀԱԲ, 2, էջ 235-236. հմմտ. Դ.-ՊԵ., 1984, 743, Ջահ., 1987, էջ 122, 222, նաև 2010, էջ 283: - էջ 56, 84, 178, 179.

իսկ [< հե. *istyo- (?)]. ՀԱԲ, 2, էջ 249. հմմտ. Ջահ., 1987, էջ 123, 214, նաև 2010, էջ 287: - Ազաթ., էջ 71.

իւր (< հե. *seyero-). Hübsch., 1897, էջ 451. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 254, Ջահ., 1987, էջ 146, 222, նաև 288: - էջ 179. Ազաթ., էջ 71.

լինիլ [< հե. *k'lei-n- (?)]. ՀԱԲ, 2, էջ 284-285. հմմտ. Ջահ., 1987, էջ 133, 214: - էջ 84). նաև՝ *լ ինիմ* (< հե. *el- «շարժ(վ)ել»). հմմտ. *հայ. եղանիմ, ելանեւ* և այլն (Ջահ., 1987, էջ 383).

լոյս (< հե. *leuk'o-). Hübsch., 1895, էջ 453. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 294-296, Դ.-ՊԵ., 1984, էջ 114, Ջահ., 1987, էջ 136, 178, 207, նաև 2010, էջ 300-301: - էջ 192.

խաւարծի [*խաւ-արծ-ի* (< *խաւ-արտ*) < հե. *khəu- [**(s)keu-*] (?) + *ag'ro- (*g' > ծ)]. ՀԱԲ, 2, էջ 351-352. հմմտ. Ջահ., 2010, էջ 323: - էջ 84:

խաւարտ [*խաւ-արտ* < հե. *khəu- [**(s)keu-*] (?) + *ag'ro- (*g' > տ)]. ՀԱԲ, 2, էջ 351-352. հմմտ. Ջահ., 2010, էջ 323-324: - էջ 84.

ծառայեցուցանել [*ծառայ* < հե. *g'rsāti- (?)]. Ջահ., 1987, էջ 126, 221, նաև 2010, էջ 360: - էջ 178.

ծիրանի [*ծիրան* < հե. *g'er- (?)]. Ջահ., 2010, էջ 363-364, նաև 2010, էջ 363-364: էջ 85:

ծով [< հե. *g'ob- (?)]. Ջահ., 2010, էջ 366-367: - էջ 56, 85, 86. Ագաթ., էջ 71.

կալ [*կայցես* «լինել, կենալ» < հե. *g^ha- (նաև *g^hem-) (?)]. նաև՝ *կամ* < հե. *g^ha- «գնալ, գալ». հմմտ. հուն. ε-βην «բայլեցի, վեր կացա», հինդկ. a-gām «գնացի». Ջահ., 1987, էջ 383, նաև 2010, էջ 372: - էջ 192.

կալույ [*կայցին* «բռնել» < հե. *guol- (*geu-). ՀԱԲ, 2, էջ 484. հմմտ. Ջահ., 2010, էջ 373: - էջ 192.

կենդանութիւն [**կեան(դ)-ան(-ի)*] < հե. *g^hiǰ-nā-. Hübsch., 1897, էջ 459. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 564-566, Ջահ., 1987, էջ 128, 208, նաև 2010, էջ 399. նոր վերականգնմամբ՝ *կեամ* < հե. *k^oeiH- արմատից (Դ.-ՄԵ., 1984, էջ 60, 235, 235): - էջ 178.

հանում (-եմ) (?) [< հե. *sm̥ -nu-mi- (?)«հանել, թափել» // *հանեմ* (-ում) [< հե. *sm̥ -nu-mi (?)]. հմմտ. լատ. sentinō «ջուրը հանել», հիբլ. sem- «թափել, դատարկել», լիտվ. senti «հանել». չի բացատրվում նաև խեթ. ḫan- («դատարկել, պարպել, ջուրը հանել»՝ «բառի բխեցումը հայերենից». Ջահ., 1987, էջ 146, 213, 318, 320, 363, 364, 383, նաև 2010, էջ 446-447: - էջ 179.

հասուցանել [*հաս-* < հե. *ǰ(n)k'-]. Hübsch., 1897, էջ 464. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 46-47, Ջահ., 1987, էջ 122, 214, նաև 2010, էջ 448: - էջ 179.

հաստատել (*հաստ-ատ* < հե. *pasti-). ՀԱԲ, 3, էջ 50. հմմտ. Ջահ., 1987, էջ 142, 218, նաև 2010, էջ 449: - էջ 178. եթե բառը կապ ունենա *հաստել*-ի հետ, ինչպես նշում է Ջահուկյանը, ապա բոլորովին այլ մեկնաբանության հարկ կլինի (ն.տ.):

հար- (*հարույ* < հե. *pər) // *հարկ-* (*հարկանել* < հե. *pṛ -g-). ՀԱԲ, 3, էջ 53-54. հմմտ. Ջահ., 1987, էջ 144, 213, նաև 2010, էջ 450: - Մագ., էջ 87.

հարանութիւն (*հարան* < հե. *pṛk'-). Hübsch., 1897, էջ 464. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 62, Ջահ., 1987, էջ 144, 186, նաև 2010, էջ 45: - էջ 179.

հաւանիլ (*հաւան-* < հե. *Hauñ-). Ջահ., 1987, էջ 113, 218: - էջ 178.

հեծանել (*հեծ-նույ* < հե. *sed-s-). ՀԱԲ, 3, էջ 75. հմմտ. Ջահ., 1987, էջ 146, 214, նաև 2010, էջ 456: - էջ 179, 192.

հիմնանալ (*հիմն* < հե. *sem̥- < *séi- «զգել, ցանել». հմմտ. խեթ. šamana- «հիմք, հիմնաքար») (Ջահ., 1987, էջ 146, 383), մեկ այլ դեպքում՝ հե. *semen- (*semu-) «հիմք» (Ջահ., 2010, էջ 460): - էջ 84.

հուր (< հե. *pur-). Hübsch., 1897, էջ 469. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 125, Դ.-ՄԵ., 1984, էջ 210, 274, 699, Ջահ., 1987, էջ 144, 201, նաև 2010 էջ 468: - էջ 86.

ձգել [*ձիգ* < հե. *g^he-ǰ- (?)], այլև *g^hhe-gh- // *g^hi-u (*g^hei-) «քշել, արագ շարժել, նետել, շարժել». Ջահ., 1987, էջ 127, 213. նաև 2010, 475: - էջ 179.

մանուկ (< հե. *m̥nu). Hübsch., 1897, էջ 272. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 255, Ջահ., 1987, էջ 138, 181, նաև 2010, 509: - էջ 192. 199.

մեք (< հե. *mes). Hübsch., 1897, էջ 474. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 309-310, Դ.-ՄԵ., 1984, 292, Ջահ., 1987, էջ 137, 202, նաև 2010, էջ 524: - Մագ., էջ 87.

մէջ [< հե. *me(i)dhio-]. Hübsch., 1897, էջ 474. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 313, Ջահ., 1987, էջ 137, 209, նաև 2010, էջ 525: - էջ 84, 178, 179.

մի' (< հե. *mē-). Hübsch., 1897, էջ 474. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 316, Գ.-ԻՅ., 1984, 910, 911, Ջահ., 1987, էջ 137, 222, նաև 2010, էջ 526: - էջ 192.

միսնչ (< հե. *smē ?). ՀԱԲ, 3, էջ 323. հմմտ. Ջահ., 1987, էջ 149, 222, նաև 2010, էջ 527: - էջ 191-192.

մօրուք [մաւրու(ք) < հե. *smok-ru-]. Hübsch., 1897, էջ 365. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 375, Գ.-ԻՅ., 1984, էջ 112, Ջահ., 1987, էջ 149, 209, նաև 2010, էջ 519: - էջ 86.

յորձանք [յորձ // յորդ < հե. *ordhjo- (*er-/*or-) «շարժման մեջ դնել, բարձրացնել. հուզել»]. հմմտ. հուն. ἐρέθω, ἐρεθίζω «գրգռել, հուզել, շարժման մեջ դնել»]. Ջահ., 1987, էջ 207, 383, նաև 2010, էջ 555-556: - Ագաթ., էջ 71.

նս [< հե. *nā (?)]. Hübsch., 1897, էջ 478. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 416-417, Ջահ., 1987, էջ 122, 222, նաև 2010, էջ 559: - էջ 84, 86.

նոյն (< հե. *no-). ՀԱԲ, 3, էջ 465. հմմտ. Ջահ., 1987, էջ 121, 222, նաև 2010, էջ 572: - էջ 84.

նսնիլ [< հե. * ni-zdi-(e-?)]. Hübsch., 1897, էջ 178. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 453-454, Գ.-ԻՅ., 1984, էջ 116, 118, 155, Ջահ., 1987, էջ 146, 189-190, 215, նաև 2010, էջ 568-569: - էջ 199.

n (նլ) (< հե. *k^ho-). Hübsch., 1897, էջ 481. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 548, Ջահ., 1987, էջ 134, 222, նաև 2010, էջ 599: - էջ 192.

նչ (< հե. *o-k^hi-?). ՀԱԲ, 3, էջ 561-562. հմմտ. Ջահ., 1987, էջ 134, 177, 217, նաև 2010, էջ 602-603: - էջ 84, 178.

որ (< հե. *k^ho-ro-). Hübsch., 1897, էջ 481. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 548, Ջահ., 1987, էջ 134, 222, նաև 2010, էջ 599, 606: - էջ 178. Ագաթ., էջ 71.

որդի (< հե. *portijos). Hübsch., 1897, էջ 482. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 576, Ջահ., 1987, էջ 143, 207, 208, նաև 2010, էջ 60: - էջ 84.

որկոր [*որգ-որ < հե. *orγ- (?)]. Ջահ., 1987, էջ 141, 184, 209, նաև 2010, էջ 607: - էջ 40. Աճառյանը թեականով բխեցնում է հե.

*gwer- *gwor ձայնդարձով ձևից՝ առնչակից կեր, կոկորդ բառերին (ՀԱԲ, 3, էջ 582): - էջ 40.

որպէս (*որ-պէս* < հե. * k^ho-ro- + *պէս*). Ջահ., 1987, էջ 134, 222, 351, նաև 2010, էջ 599: - էջ 179.

որս (< հե. *pork'o-). ՀԱԲ, 3, էջ 588. հմմտ. Ջահ., 1987, էջ 144, 208, նաև 2010, էջ 609: - էջ 192.

ուն «պարանոց» [< *նյունք* (հմմտ. *նդն*) < հե. *ōlen-]. ՀԱԲ, 3, էջ 592, հմմտ. Ջահ., 1987, էջ 122, 209, նաև 2010, էջ 554: - էջ 56.

ունիլ (< հե. *ōp-n-). ՀԱԲ, 3, էջ 601-602. հմմտ. Ջահ., 1987, էջ 112, 215, 218- 220: - էջ 85-86.

ուստի (*ուստ-* < հե. *k^hu-). Ջահ., 1987, էջ 134, 222: - էջ 178.

չնն [< (*ն*)չ- *նն* < հե. * o-k^hi-(?) + es-mi]. ՀԱԲ, 3, էջ 561-562. հմմտ. Ջահ., 1987, էջ 123, 134, 202, 214: - էջ 40.

սես. (< հե. *k^hē-). հմմտ. հինդկ. śyāvā «մուգ դարչնագույն», «մուր. մթնագույն», ավեստ. syāva- «սև», պրթ. sy'w (syāv), մալր. siyāv-, նալր. siyāh, լիտվ. šėmas «կապույտ», ռուս. сивый, синий «կապույտ», ըստ «մուգ մոխրագույն» հատկանիշի: Նույն արմատից են՝ հինդկ. śyenā «արծիվ», «բազե», ավեստ. saēna- «խոշոր գիշատիչ թռչուն», «արծիվ»(?). Գ.-ԻՅ., 1984, էջ 230, 539: - էջ 179:

Նախկինում հայ. բառը ավանդաբար դիտվել է փոխառություն իրանական լեզուներից. *սես* «սև. թանաք» (?) [< իրան. s(i)yāv. հմմտ. ավեստ. syāva-, պրթ. sy'w (syāv), մալր. siyāv-, պր. siyāh]. Hübsch., 1897, էջ 489, ՀԱԲ, 4, էջ 195-196, Ջահ., 1987, էջ 543, 557, նաև 2010, էջ 674: Ըստ այսմ լիովին համեմատելի է մյուս՝ «Եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն» (տե՛ս ստորև) մասը, կապված *սես* և *արծուի* հնարավոր փոխանունության (մետոնիմիայի) հետ՝ առարկայի և հատկանիշի հիմունքով.

սէգ (< հե. *k'eigh-). ՀԱԲ, 4, էջ 207. հմմտ. Ջահ., 1987, էջ 131, 219, նաև 2010, էջ 677: - Ագաթ., էջ 71). Այսպես նաև՝ *սիգալ* (*սէգ* < հե. *k'eigh-ā-) (ն. ս.).

սուր [< *սր(սրթել)* < հե. *k'o-ro-]. ՀԱԲ, 4, էջ 254. հմմտ. Ջահ., 1987, էջ 131, 218, 221, նաև 2010, էջ 690: - էջ 179.

ստրուկ [< հե.* stro- (?)]. Ջահ., 1987, էջ 152, 195, 221, նաև 2010, էջ 697: - էջ 178.

վեր (< հե.*upero-). ՀԱԲ, 4, էջ 231. հմմտ. Ջահ., 1987, էջ 154, 216, 222, նաև 2010, էջ 709: - էջ 192.

սուլ [< հե. *də-mi (?). այլև *t'o-]. Hübsch., 1897, էջ 496. հմմտ. ՀԱԲ, 4, էջ 357, Դ.-Մե., 1984, էջ 41, 50, 753, Ջահ., 1987, էջ 119, 215, նաև 2010, էջ 717: - էջ 87, 178. Մագ., էջ 87.

տեղ «տեղում, անձրև» (< հե. *del- «կաթել». հմմտ. հիոլ. *delt* «ցող, շաղ».) հմմտ. ՀԱԲ, 4, էջ 726, IEW, 2, էջ 456, Ջահ., 1987, էջ 161, 207, նաև 2010, էջ 726: - էջ 179. Այսպես նաև՝ *տեղայ* «անձրևել» [*տեղ* «(հորդ) անձրև» (< հե.*del- «կաթել») (ն. տ.)].

տեղեկիկ [*տեղ-ի, տեղեկ* (< *տեղի-ակ*) - *իկ*], բառացի՝ «փոքր տեղ», փխբ.՝ «հաճելի, նպաստավոր տեղ» [< հե. *sed-lo (> *sedelo-)]. Hübsch., 1897, էջ 497. հմմտ. ՀԱԲ, 4, էջ 393-394, IEW, 2, էջ 485, Ջահ., 1987, էջ 146, 215: - էջ 84.

տեսանել [տե'ս < հե. *derk (?)]. Hübsch., 1897, էջ 497. հմմտ. ՀԱԲ, 4, էջ 396-397, Ջահ., 1987, էջ 161, 202, նաև 2010, էջ 727: - էջ 192.

տիկին [*տի* «մեծ» (?)- *կին* < հե. *di- (*dei-) + *g^henā-]. ՀԱԲ, 4, էջ 401. հմմտ. Ջահ., 1987, էջ 117, 216, 221, նաև 2010, էջ 728: - էջ 84.

տիք [*տի-ք* < հե.*dī-to]. ՀԱԲ, 4, էջ 403, IEW, 1, էջ 763-767. Ջահ., 1987, էջ 117, 217, նաև 2010, էջ 728 և այլն: - էջ 84.

ցամաքեցուցանել [*ցամաք* < հե. *k'sāmo-(?)]. ՀԱԲ, 4, էջ 448, IEW, 1, էջ 624. հմմտ. Ջահ., 1987, էջ 133, 176, 207, 218, նաև 2010, էջ 741: - Ագաթ., էջ 71.

ցաեցուցանել [*ցաե-*, *ցաիլ* < հե.*k'sāpo- [*k'sā] «այրել» (?). հմմտ. հինդկ. *kṣāpāyati* «այրել[ետալիս»]. Ջահ., 1987, էջ 133, 219, 383, նաև 2010, էջ 742: - էջ 179.

փափուկ [*փափ-ուկ* (բրբռ. *փա(ւ)փ-իկ* (?)] < հե. *pha(m)ph- «ուռչել». հմմտ. լիտվ. «ուռչել», հայ. *փամփ(ք)ուռչտ*, (բրբռ.) *փափ-իկ*. Ջահ., 1987, էջ 114, 218, 269, 383: - էջ 179.

փեսայութիւն [*փեսայ* < հե. *p^her̥k^h-«(աղջիկ) ուզել, հարսնախոսել»]. հմմտ. լիտվ. *peršp* «(հարս) ուզել», հրգերմ. *fergōn* «խնդրել», ումբր. *persnims* (նույնը). Դ.-Մե., 1984, էջ 237: Նախնականը, թերևս, «կիսել, առանձնացնել, պատռել» իմաստով. հմմտ. հայ. *հերկ-* «հերկ, վարելահող» (*հերկել*, *հերկումն* և այլն), *հերծ-* «ճեղք, ծերպ, պատռվածք» (*հերծնուլ*, *հերծումն* և այլն): - էջ 179 (տե՛ս Համբարձումյան, 2022, 110-126):

քէն [(բրբռ. *խէն*) < հե. *k^hoi-nā]. ՀԱԲ, 4, էջ 575-576. հմմտ. Ջահ., 1987, էջ 134, 219, 271, 450, նաև 2010, էջ 782: - էջ 178): Հ. Աճառյանը *քէն* բառը դնում է իրանական փոխառությունների մեջ, բայց «Հայերեն արմատական բառարան»-ում [էջ 575-576] ընդունում է Ա. Մելեի կարծիքը բառի բնիկ լինելու վերաբերյալ: Ի դեպ, Գ. Ջահուկյանը նաև գրում է. «Եթե հայերեն բառերը (իմա՝ «քէն և խէն» - Վ.Հ.) փոխառություն չեն իրան. աղբյուրից», այլև՝ «քէն (*հե. *k^hoinā) - ավ. *kuēna*- «պատիժ, հատուցում, վրեժ», մ. պ. *kēn* «քեն, վրեժ» և այլն» (Ջահ., 2010, էջ 782): Ջահուկյանը, ոչ անկախ Վ.Մ. Իլիչ-Սվիտիչից, բերում է նաև՝ «քէն (հ.-ե. *k^hoi-n) - արամ.՝ մանդ. *qina* «խանդ» (սեմ. *q^h «քանդել»)՝ տողատակին նշելով, որ «Վ.Մ. Սվիտիչը չի տալիս հ.-ե. այս գուգահեռը» (Ջահ., 1987, էջ 450).

ող (*ոսկեղ* < հե. *aulos). ՀԱԲ, 4, էջ 612-613. հմմտ. Ջահ., 1987, էջ 114, 216: - էջ 179).

օրհորդ [*աւր-* < հե. *pōu-(?)]. Ջահ., 1987, էջ 366, 367, նաև 2010, էջ 104: - էջ 178, 179:

3) Եկամուտ (կամ փոխառյալ) բառեր

Ստորև բերում ենք այդ բառերը՝ իրենց բնագրային գործածությամբ. սրանք նախորդի համեմատությամբ շատ չեն, այլև երկրորդաբար վկայություն են այն բանի, որ նախագրային հայերենում

համեմատաբար սակավ են շփումներն այլ լեզուների հետ, կամ մեծ չէ հայերենի՝ այլ լեզուներից ունեցած ազդեցությունը. այս դեպքում ևս կից փակագծում տալիս ենք բառի ելակետային կամ ուղիղ ձևը:

Սրանք հիմնականում գալիս են իրանական, մասամբ՝ այլ լեզուներից: Իրանց ծագման վերաբերյալ կան դիտարկումներ, որոնք դասական հնդեվրոպաբանության մեջ կասկած չեն հարուցում, սակայն հանդիպում են նաև այնպիսիները, որոնց վերաբերյալ կարելի է նոր քննությունների ձեռնամուխ լինել: Այդուհանդերձ, ստորև բերում ենք դրանք ըստ ընդունվածի, բնագրային օրինակներով հանդերձ¹.

ազգ (< մպրս. azg «ճյուղ»)։ ՀԱԲ, 1, էջ 84-85, IEW, 1, էջ 185. հմմտ. Ջահ., 1987, էջ 221, 272, 512: - էջ 178.

ազն [*դիցազն դիցազունք*], *վիշապազունք*]. հմմտ. ավեստ. ā-sna «բնածին, ազնվական, ազնիվ» (< *zan «ծնել»), պրս. (թուրք.) շո, գրադ. āznavāz «ազնվական», իրան. zan «ծնել»]. հմմտ. հայ. *ծին* (< հե. g'en- «ծնել»)։ ՀԱԲ, 1, էջ 86-87. հմմտ. Ջահ., 1987, էջ 383, 512-513: - էջ 192.

ամբար [< մպրսկ. (h)ambār / (h)anbār]. Hübsch., 1897, էջ 95, 178. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 148-149, Ջահ., 1987, էջ 513, այլև 2010, էջ 43: - էջ 40.

ապարանք [*ապարան* < իրան. apadān(a). հմմտ. մպրս. apadāna «ապարանք, սյունազարդ դահլիճ», պրթ. 'pdn «պալատ»]. Hübsch., 1897, էջ 104. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 230, Ջահ., 1987, էջ 515. նաև 2010, էջ 67-68: - էջ 84.

արագ [նաև *երագ*, *rag (< հե. leg^h-), ավ. rayu, իգ. u. ravī, պրթ. rg]. Hübsch., 1897, էջ 422. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 291-292, Ջահ., 1987, էջ 517, նաև 2010, էջ 83: - էջ 179.

արքայ (< հուն. ἄρχων, ἄχιος «առաջնորդ, կառավարիչ, իշխող») (?). ՀԱԲ, 1, էջ 345-34. հմմտ. Ջահ., 1987, էջ 439 (ըստ Schmitt, 1980, 1, էջ 14), նաև 2010, էջ 97: - էջ 179, 199.

աերակ (իրան. *avērak), *աեր(ել)* (< իրան. avēr). Hübsch., 1895, էջ 112. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 359, Ջահ., 1987, էջ 518: - էջ 192. Ագաթ., էջ 71.

բանակ [< իրան. bānak (?)]. Ջահ., 1987, էջ 273, 383, 556, այլև 2010, էջ 116-117: - էջ 179. Գ. Ջահուկյանը մեջբերում է Մ.Կ. Անդրոնիկաշվիլու՝ «պարթևական համարված հայերեն փոխառությունների ցանկը», որում *բանակ*-ը առնչվում է bānak՝ bān «տանիք» ձևին (Ջահ., 1987, էջ 556):

բարձ(ք) «բարձ, բազմոց», «գահ, (պատվի) աստիճան», «ազդր» [< իրան. *barj (< barz)]. ՀԱԲ, 1, էջ 426. հմմտ. Ջահ., 1987, էջ 519, նաև 2010, էջ 121: - էջ 84.

բիր [*բեր* < իրան. bēvar (*baivar)]. Hübsch., 1897, էջ 12. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 453, Ջահ., 1987, էջ 519, նաև 2010, էջ 130: - էջ 178.

-գէս (*Վարդ-գէս* < իրան. gēs, մպրս., նաև պրս. gēs). Hübsch., 1897, էջ 127. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 551, Ջահ., 1987, էջ 520, նաև 2010, էջ 160: - էջ 199.

դե (< իրան. dēv. հմմտ. ավ. daēva, մպրս., նաև պրս. dēv). Hübsch., 1897, էջ 140. հմմտ. ՀԱԲ, 1, էջ 658, Ջահ., 1987, էջ 523, նաև 2010, էջ 195: - էջ 192.

թագաւորել [*թագ* < իրան. tāg, հմմտ. մպրս. tāg, նաև արամ. (< իրան.) tāg, արաբ. (իրան.) tā, նաև *-ւոր* < իրան. vār]. Hübsch., 1897, էջ 153. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 135, Ջահ., 1987, էջ 525, նաև 2010, էջ 253: - էջ 192.

թմբուկ (իրան. *tumbūk, հմմտ. պրսկ. tunbak, tanbūk). Hübsch., 1897, էջ 154. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 189, Ջահ., 1987, էջ 526, նաև 2010, էջ 268: - Մագ., էջ 71.

¹ Այստեղ ևս համեմատությունից հետո նշվում է միայն բնագրի էջը (կամ ն. ս.)

թշնամուրթին (*թշնամ-ի* < իրան. dušman, հմմտ. ավեստ. duš-mainyu, պրթ. dwšmyn (dušmēn), մպրս., պրս. dušman). Hübsch., 1897, էջ 154. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 191, Ջահ., 1987, էջ 526, նաև 2010, էջ 269: - էջ 178.

ծուխ [խեթ. tuhhu(ua) (?)]. Ջահ., 1987, էջ 202, 314, նաև 2010, էջ 367: - էջ 86. Մագ., էջ 71.

ծխան [*ծուխ* (?)] < խեթ. tuhhu(ua)i (?)]. ՀԱԲ, 2, էջ 470-471: Մագ., էջ 71 (*Խաչիկյան*, 1946, 405-424, նաև 2012, 147-164, *Абегян*, 1975, 44)¹.

կամ [< իրան. kām(a), հմմտ. ավեստ., հպրս. kāma-, պրթ. k'm (kām), մպրս. kām]. Hübsch., 1897, էջ 163. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 497-498, Ջահ., 1987, էջ 528, նաև 2010, էջ 378: - էջ 178,

կարմրիկ [*կարմիր* < իրան. karmīr. հմմտ. սողդ. krm'yr, մպրս. karmir (?)]. Hübsch., 1897, էջ 167. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 528, Ջահ., 1987, էջ 528, նաև 2010, էջ 394: - էջ 85-86.

- *կերտ* (*Մարակերտ* < իրան. kart, հմմտ. ավ. kərətā-, հպրս. karta, մպրս. kart «կերտված, ստեղծված»). Hübsch., 1897, էջ 168-169. հմմտ. ՀԱԲ, 2, էջ 579, Ջահ., 1987, էջ 529, նաև 2010, էջ 402: - էջ 84.

կոյս [< խեթ. kūša «հարսնացու» (?)]. Ջահ., 1987, էջ 137, նաև 2010, էջ 418: - էջ 178.

հազար [< իրան. hazār, հմմտ. ավեստ. hazanra-, մպրս., պրս. hazār, պրթ. hz'r (hazār)]. Hübsch., 1897, էջ 174. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 6, Ջահ., 1987, էջ 529, նաև 2010, էջ 437: - էջ 178.

¹ Տե՛ս *М. Х. Абегян, История древнеармянской литературы, Ереван, 1975, էջ 44: Ծխան* և *Նախաարդ* բառերի համար տողատակին կա հետևյալ ծանոթագրությունը. «Հին հայկական օրացույցում *ծխան* ամիսն ուներ նաև այլ անվանում՝ *սհնկի*, սա ձմռան ամիսներից մեկն էր: *Նախաարդ* տարվա առաջին ամիսն է, որ հնում սկսվում էր մարտին, զարնանային գիշերահավասարի օրը, հետագայում անցել է ամռան վերջին և համապատասխանել է օգոստոսի 2-րդ - 3-րդ տասնօրյակներին և սեպտեմբերի 1-ին տասնօրյակին (Իմբր.), էջ 44): Իմբրագրությունը, փաստորեն, ընդունում է Խաչիկյանի ասածն առանց նրան հղում տալու:

հառնուած (*հաւն-* < խեթ. hattāi- «հատել, կտրել, ծակել, պատնել»). Ջահ., 1987, էջ 314, նաև 2010, էջ 450: - էջ 199.

ճաշ (< իրան. čāš, հմմտ. մպրս., պրս. čāš «նախաճաշ», աֆղ. caš «ճաշել»). Hübsch., 1897, էջ 187. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 185, Ջահ., 1987, էջ 532, նաև 2010, էջ 489: - էջ 84.

մարգարիտ [< լատ. margarita (< հուն. μαργαρίτης (?)], Hübsch., 1897, էջ 363-364. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 277, Ջահ., 1987, էջ 384, նաև 2010, էջ 515: - էջ 179¹:

յաւիտենական (*յաւէտ-* < իրան. yavēt, ավ. yavaētāt, մպրս. yāvēt). Hübsch., 1897, էջ 198. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 392, Ջահ., 1987, էջ 535, նաև 2010, էջ 515: - էջ 178.

Նասասարդ [< իրան. *nvasard (a)- (*nva- + *sarda-). հմմտ. սողդ. nwsrδ (nausard), խոտ.-սակ. nauhasalye, ասոր. (< իրան.) nousardil]. Hübsch., 1897, էջ 202. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 435, Ջահ., 1987, էջ 524, 536, նաև 2010, էջ 563: Հմմտ. *Աղայան*, 1986, էջ 58: - Մագ., էջ 87.

շատ [< իրան. šāt, հմմտ. սողդ. š't, պրս. šad (šādād) «շատ, առատ»]. Hübsch., 1897, էջ 212. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 498, Ջահ., 1987, էջ 383, 538, նաև 2010, էջ 582: - էջ 179.

շինել (*շէն* < իրան. šēn. հմմտ. սողդ. šēn). Hübsch., 1897, էջ 213. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 513, Ջահ., 1987, էջ 265, 538, 573, նաև 2010, էջ 586: - էջ 84.

նսկի [(նսկէ)-օղ] < ուրարտ. (?), հմմտ. Սժկիանի (լեռնանուն) (?)]. Ջահ., 1987, էջ 265, 426, 436, 445, նաև 2010, էջ 603-604. հմմտ. ՀԱԲ, 3, էջ 565-566: Գ. Ջահուկյանը *նսկի*-ն առնչում է խոտ. սժիս- «արծաթ» ձևին (Ջահ., 1987, էջ 426): Կա բառի նոր ստուգաբանություն, ըստ որի՝ *նսկի*- շումեր. guškin «ոսկի» (տե՛ս *Иванов*, 1976, 85, տող. ծանոթ. նաև 1977, 26: հմմտ. Барроу, 1976), ընդ որում ոչ թե անմիջական հայկական, այլ հնդեվրոպական փոխա-

¹ Բառի ծագումը, իբրև փոխառություն, առարկելի է (*Համբարձումյան*, 2019, 106-113):

ռությունն ակկադականից, որ արտացոլված է նաև հայերենում, և ըստ այսմ կարելի է մտածել, որ բառը հայերենից է անցել ուրարտերենին:

պահեղ [*պահ-* // *պարհ-* < իրան. *pahr (*pāθra-), հմմտ. պրթ. p'hr (pāhr), մալբ. pās], Hübsch., 1897, էջ 217. հմմտ. ՀԱԲ, 4, էջ 9, Ջահ., 1987, էջ 539, 573, նաև 2010, էջ 617: - էջ 178.

պատիլ [< իրան. *pativ. հմմտ. սողդ. p̄tβy, թոխ. Բ (< իրան.) peti]. ՀԱԲ, 4, էջ 43. հմմտ. Ջահ., 1987, էջ 540, 556, նաև 2010, էջ 626: - էջ 84.

- *պէս* [(որ)-*պէս*] < իրան. pēs. հմմտ. հինդկ. pēša «ձև, գույն, կերպ»]. Hübsch., 1897, էջ 230. հմմտ. ՀԱԲ, 4, էջ 79, Ջահ., 1987, էջ 351, 542, նաև 2010, էջ 636: - էջ 179.

վազել (*վազ* < իրան. vaz-. հմմտ. ավեստ. vaz-, պրթ. vZ- (vaz-)). Hübsch., 1897, էջ 242. հմմտ. ՀԱԲ, 4, էջ 293, Ջահ., 1987, էջ 545, 573, նաև 2010, էջ 701: - էջ 86.

վասն (< իրան. *vasn. հմմտ. ավեստ. vasnā-, հայր. vašna-, սողդ. wsn, պրթ. vsn'd (vasnād)). ՀԱԲ, 4, էջ 309. հմմտ. Ջահ., 1987, էջ 545, նաև 2010, էջ 705: - էջ 178.

վարգիլ [վարգ- < իրան. (?)]. ՀԱԲ, Ջահ., 2010, էջ 706: - Մագ., էջ 87.

վարդ (*Վարդ-գէս* < իրան. *vard. հմմտ. պրթ. v'r, պր. gul). Hübsch., 1897, էջ 244. հմմտ. ՀԱԲ, 4, էջ 317, Ջահ., 1987, էջ 545, նաև 2010, 706: - էջ 199.

վիշապ, *վիշապագն* (< իրան. *vēšap. հմմտ. ավեստ. višāpa). Hübsch., 1897, էջ 247. հմմտ. ՀԱԲ, 4, էջ 341, Ջահ., 1987, էջ 546: - էջ 84, 192.

տաճար (< իրան. tačar(a)-. հմմտ. հայր. tačara-. պր. tačar). Hübsch., 1897, էջ 251. հմմտ. ՀԱԲ, 4, էջ 365, Ջահ., 1987, էջ 547, նաև 2010, էջ 719: - էջ 84.

փառք (< իրան. հմմտ. մալբ. farr). Hübsch., 1897, էջ 254. հմմտ. ՀԱԲ, 4, էջ 482, Ջահ., 1987, էջ 549, նաև 2010, էջ 774: - էջ 125.

փոխանակ [*փոխ-* < ակկադ. puḫḫu(m), pūḫu(m), խուռ. puḫ- (?)]. ՀԱԲ, 4, էջ 510-511. հմմտ. Ջահ., 1987, էջ 424, 470, 471: - էջ 192. կա անորոշություն. Ջահուկյանը գրում է. «Փոխ-ը կարող է ծագած լինել ինչպես խուռական, այնպես էլ ակկադական աղբյուրից» (Ջահ., 1987, էջ 424).

քաղաք (< իրան. *kalāk (*kalāka-). հմմտ. մալբ. kl'k (kalāk), (թուրք.) qdğ, պր. kada). Hübsch., 1897, էջ 318. հմմտ. ՀԱԲ, 4, էջ 542, Ջահ., 1987, էջ 382, 413, 465, նաև 2010, էջ 774: - էջ 199.

օրէն [*արէն* < իրան. aβδēn. հմմտ. մալբ. aβven(ak), հմմտ. *արիսակ* < aβδēnak]. Hübsch., 1895, էջ 510-511. հմմտ. ՀԱԲ, 4, էջ 617-618, Ջահ., 1987, էջ 273, 468, 470, 518 567, նաև 2010, էջ 104: - էջ 178:

Բերված ցանկի վերաբերյալ հարկ կա նշելու հետևյալը.

1) դրանք փոխառյալ են դիտվում ըստ դասական համեմատաբանության ստուգաբանությունների տվյալների (Հյուբշման, Աճառյան, Ջահուկյան և ուրիշներ),

2) ցանկում հիմնականում այդպիսին են նույնիսկ այն դեպքում, երբ կարելի է նոր տվյալների հիման վրա կատարել ինչ-ինչ լրացումներ կամ ճշգրտումներ:

Այսպես, օրինակ, Աճառյանը *մարգարիտ* բառի դեպքում գտնում է, որ այն ավելի ուշ ժամանակի փոխառություն է՝ գրելով հետևյալը. «Ջարմանալի է, որ այդ հնագույն ժամանակից ունենք նաև մի հունական փոխառյալ բառ (մարգարիտ), որ լեզվի պատմության հետ համաձայնեցնելու համար պետք է համարել ավելի հռոմեական փոխառություն, քանի որ լատինական margarita, margaritum ձևերը դեռ Կիկերոնի և Տակիտոսի ժամանակից գործածական են» (Աճառյան, 1946, 163. *նույնի*՝ 1977, 277-278): Այլ կերպ ասած՝ բառը դիտվում է հետագա ներմուծում: Այնինչ, կարե-

լի է նոր մոտեցմամբ ենթադրել, որ այն գոյություն ունեցած պիտի լիներ նախագրային հայերենի այն շրջանում, որ ըստ նորագույն համեմատաբանության տվյալների (թեև ամբողջովին նախնական՝ սխեմատիկ ձևով) առաջարկվում է առանձնացնել իբրև հայ-հնդիրանա-հունական առնչությունների շրջան: Նման առանձնացումն, անշուշտ, հեռանկարային է հայոց լեզվի նախագրային ժամանակաշրջանի պատմության համար (տե՛ս նաև *Համբարձումյան*, 2022, 70-78):

Այդպես կարելի է նորովի քննել հայ. *ծուխ*, *սեաւ* և այլն բառերի ծագումը:

3) Ենթադրական կամ անհայտ ծագման («ծագումն անհայտ») բառեր

Կան բառեր, որոնց ծագման վերաբերյալ ստուգաբանական բառարանները չունեն ոչինչ, ուստի դրանք առայժմ բերում ենք իբրև ենթադրական («ծագումն անհայտ») բառեր. որոշ դեպքերում միայն հայտնում ենք մեր նկատառումները.

աւաղ «վայ, ափսոս. ափսոսանք և այլն», ՀԱԲ, 1, էջ 352-353. հմմտ. Ջահ., 2010, էջ 98-99: - էջ 125: Ենթադրում ենք բառի *աւ* բաղադրիչի, իբրև արմատի, առանձնացման հնարավորություն՝ «դիմել. աղերսել՝ վերին ոլորտին» իմաստով, որպիսով այն կարող է բնիկ լինել (հմմտ. *աւ-ետել* և այլն). «Աւա՛ղ փառացս անցաւորի»: էջ 125.

իբրել (< **իբր-ել* «պես, նման»). ՀԱԲ, 2, էջ 237. հմմտ. Ջահ., 1987, էջ 242, 351, նաև 2010, էջ 283. «*Իբրել* գտե՛գն Տրդատ, որ սիգալովն աւերեաց գթումբս գետոց»: - Ագաթ., էջ 71.

խարդաւանակ [< *խարդաւ-անակ* «դավաճանություն» (?)]. ՀԱԲ, 2, էջ 344. հմմտ. ըստ Ջահուկյանի՝ «հավանական է» բառի իրանական ծագման լինելը. Ջահ., 1987, էջ 383, 569, հմմտ. նաև 2010, 320: Ենթադրվում է կապ հայ. *խարդախ* բառի հետ (հմմտ. – *անակ* // *-ակ* < *-anak*). «Եւ *խարդաւանակ* լեալ նմին ի տաճարին վիշապաց»: - էջ 84.

խարտեաշ [**խարտի-աշ* «շեկ, դեղնակարմիր» < ուրարտ. (?)]. ՀԱԲ, 2, էջ 349. հմմտ. Ջահ., 1987, էջ 436, այլև 2010, էջ 323. «Ի բոցոյն վազէր *խարտեաշ* պատանեկիկ»: - էջ 86.

կարգ [< **գարկ* «շարք, դասավորություն. հրեշտակախումբ» (?)]. ՀԱԲ, 2, էջ 548. հմմտ. Ջահ., 2010, էջ 391. «Ի ստրկաց *կարգի* պահել»: - էջ 178.

կոփել [*կոփ-* «տաշելով շինելը, ուժգին հարված» < ուրարտ. (?)]. ՀԱԲ, 2, էջ 667-668. հմմտ. Ջահ., 1987, էջ 437. «Կոել *կոփել* գդոուն»: - էջ 199.

կոել [*կոու-* < ուրարտ. kur «հաստացնել, հաստանալ» (?)]. ՀԱԲ, 2, էջ 662. հմմտ. Ջահ., 1987, էջ 437, 500, 595, նաև 2010, էջ 428. «*Կոել* կոփել գդոուն»: - էջ 199. *կոու* արմատի ավելի նախնական իմաստն է «խփել, հարվածել» (հմմտ. *կուսն* «հարվածող գործիք»):

հեր (?) «մազ. վարս». հմմտ. ՀԱԲ, 3, էջ 84-85. «Նա հուր *հեր* ուներ»: - էջ 86.

յարթել [*յարթ-* < հե.*(?)]. Ջահ., 2010, էջ 546. «Որ *յարթեցեր* քաջ ազգին Ալանաց»: - էջ 178.

շէկ «շեկ, դեղնակարմիր». տե՛ս *խարտեաշ* [հմմտ. *ասորաշէկ* (*ասոր-* «կրակ» + *շէկ*) (?)] (< իրան. (?)]. ՀԱԲ, 1, էջ 289, 513. հմմտ. Ջահ., 2010, էջ 83, 586. «Եւ հանեալ գոսկէօղ *շիկափոկ* պարանն»: - էջ 179.

պատանեկիկ [*պատանի* < իրան. (?)]. ՀԱԲ, 4, էջ 35, Ջահ., 1987, էջ 439, 510, նաև 2010, 624. «Եւ ի բոցոյն վազէր *խարտեաշ պատանեկիկ*». - էջ 86. Այսպես նաև՝ *պատանի*. «Տալ *զպատանիդ*»: - էջ 178.

պարան [*պար-* < իրան. (?)]. ՀԱԲ, 4, էջ 56. «Եւ հանեալ գոսկէօղ *շիկափոկ պարանն*», - էջ 179. «Եւ ճգեալ գոսկէօղ *շիկափոկ պարանն*»: - էջ 178.

տանիկ [*< (?)*]. ՀԱԲ, 4, էջ 368. հմմտ. Ջահ., 2010, էջ 720, նաև 2010, էջ 720. «Եւ գերկիրս ամենայն ընդ քեզ *տարար*».- էջ 191-192. «*Տարցին* յԱզատն ի վեր ի Մասիս: - էջ 192.

տենչ- [*տենչ-այ, -անք(?)*]. ՀԱԲ, 4, էջ 395. հմմտ. Ջահ., 1987, էջ 271, 369: «*Տենչայ* Սաթինիկ տիկին».- էջ 84). Այսպես նաև՝ «*Տենչայ ... տենչանս*» (ս. տ.):

- *փոկ* [*շիկափոկ < (?)*]. ՀԱԲ, 4, էջ 512. հմմտ. Ջահ., 2010, էջ 766. «Եւ հանեալ ոսկեօղ *շիկափոկ* պարանն».- էջ 179). այդպես նաև՝ «Եւ ձգեալ ոսկեօղ *շիկափոկ* պարանն» (ս. տ.):

փոդ «խողովակ. անցք», այլև «շեփոք» [*< ուրարտ. (?)*]. ՀԱԲ, 4, էջ 512-513. հմմտ. Ջահ., 1987, էջ 440, նաև 2010, էջ 766. «Ընդ եղեգան *փոդ* ծուխ ելանէր».- էջ 86). այդպես նաև՝ «Ընդ եղեգան *փոդ* բոց ելանէր» (ս. տ.). «Մեք *փոդ* հարուաք եւ թմբկի հարկանէաք».- Մագ., էջ 87.

քաջ(ք) [*< (?)*]. Հմմտ. ՀԱԲ, 4, էջ 554-555. հմմտ. Ջահ., 1987, էջ 440, նաև 2010, էջ 766: «Արտաւազդայ ոչ գտեալ, *քաջի* որդոյն Արտաշիսի, տեղեկիկ ապարանից».- էջ 84). այդպես նաև՝ «Քեզ ասեմ այր *քաջ* Արտաշէս» (ս. տ., էջ 178): «Որ յաղթեցեր *քաջ* ազգին Ալանաց» (ս. տ.), «Եւ թշնամութիւն յախտենական ի մէջ երկոցունց ազգաց *քաջաց* հաստատել» (ս. տ.). «Ջքեզ կայցին *քաջք*» (ս. տ., էջ 192). «Եւ ուստի՞ տացէ *քաջն* Արտաշէս հազարս ի հազարաց» (ս.տ.). նաև՝ քաջ ազգի (քաջ). «Եւ ուստի՞ տացէ ... բիրս ի բիրուց ընդ *քաջազգոյ* կոյս օրիորդիս Ալանաց» (ս. տ.):

4) Հատուկ անունները և նրանց հավանական ծագումը

Ընդունված է այդպիսին համարել տեղանուն, անձնանուն կամ դիցանուն նշանակող բառերը: Սա այն երևույթն է, որ սովորական անվանում հանդիսացող բառը վերստին ենթարկվում է վերացարկման՝ նշանակելու նման առարկաների նույնպիսի անուններից մի առանձին հատկանիշով անվանելու: Դա սովորաբար լինում է տեղանքի, մարդկանց և նրանց միջև տարբեր կարգի (պաշտոնական, մասնագիտական, առօրյա և այլն) նշանակումներ ունե-

նալու պայմանով: Հատկանվանումը ևս նշանակիչի և նշանակյալի (անվանման և այն կրողի՝ դէնտատի) միջև ավելի քան պայմանական է, և նշանակումից հետո է, որ այն դառնում է պարտադիր (կամ պատճառաբանված):

Ազատ (*< յԱզատն*) (*< իրան. ազատ < āzāt*). Hübsch., 1897, էջ 91-92. ՀԱԲ, 1, էջ 83. հմմտ. Ջահ., 1987, էջ 583, նաև 2010, էջ 22, Խաչ., 2015, էջ 5-6: - էջ 192.

Արանք (*< Արանաց*) . ծագումն անհայտ. Hübsch., էջ, Ջահ., 1987, էջ. - էջ 178, 179.

Արգաւան (*< իրան. arg- + -urvān // -arvān «հոգի» (?)*). ըստ Աճառյանի՝ ունի առնչություն *Արգամ* ձևի հետ. ծագումը՝ *Արջեւան* ձևի համեմատ. գնդ. Arəjavan «արժանավոր» (?), ՀԱՆԸԲ, 1, էջ 301. հմմտ. Ջահ., 1987, էջ 581, 582: - էջ 84).

Արտաշատ (*< Artasēs*). Hübsch., 1897, էջ 28, 211. Ջահ., 1987, էջ 367: - էջ 84:

Արտաշէս (իրան. arta- «օրէնք, արդարություն». Artasir // Ardasir. հմմտ. հուն. Ἀρταξάρης). Hübsch., 1897, էջ 28-29, այլև Հյուբշ., 2004, էջ 342-343, 402 և այլն. Ջահ., 1987, էջ 581): - էջ 178, 179.

Արտաւազդ (*< իրան. Artavaz < Artavazdah*. հմմտ. հուն. Ἀρταουάσθεος). ՀԱՆԸԲ, 1, էջ 310, Ջահ., 1987, էջ 554, 580, 581, Hübsch., 1897, էջ 29-30: - էջ 84, 192.

Արտիմէդ (*< ավեստ. Anāhita, հայրկ. Anahata, պիլ. Anāhit*) [հուն. *Արտեմիդա*. հայ. *Ասահիւն* (?)]. Hübsch., 1897, էջ 18: Ջահ., 1987, էջ 366, 369: - էջ 199:

Երուանդ (*< իրան. arvand- «արագաշարժ. քաջ»*). հմմտ. *Հրանտ* (*< Հրանդ*). ՀԱՆԸԲ, 2, էջ 145, Hübsch., 1897, էջ 39-40, Ջահ., 1987, էջ 582: - էջ 199.

Մասիս (*< Մաս-իք. մասն «կտոր, մաս»*) (?). Ջահ., 1987, էջ 367, 369, Խաչ., 2015, էջ 127: - էջ 192.

Մարակերտ (< *մար* + *կերտ*. *-կերտ* < ավեստ. *kərənta-*, հայրսկ. *krta-*, պիլ. *kert*. հմմտ. հինդկ. *krta-* «արված, կերտված»): Hübisch., 1897, էջ 168, 170. Ջահ., 1987, էջ 367. - էջ 84:

Մարթ (< հայրսկ. *Māda-* «մարական, Մեդիա, մեդացիներ» [հմմտ. հուն. *Μήδος*, ասոր. *Beθ Mādāyē*], պիլ. *Mādikān*, մարսկ. *Māh*). Hübisch., 1897, էջ 52: - էջ 84:

Շամիրամ (< ասոր. *Šamirām*). ՀԱՆԹ, 4, էջ 138, Hübisch., 1897, էջ 296, այլև Հյուբշ. 2004, էջ 389. - էջ 56:

Շարայ. ծագումն անհայտ (եղածն՝ անհավանական): - էջ 40. Ծագումը կապում են իրանականի հետ. Աճառյանը գրում է. «Գավառը իր անունով կոչվեց Շիրակ: Իր վրա է շինված հայկական ամենահին առածը՝ «Թե քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարք չեն»: Խոր. Ա, Ժբ», ՀԱՆԹ, 4, էջ 150:

Շիրակ [< ասոր. *šarak* (?)]. Ջահ., 1987, էջ 495, Խաչ., 2015, էջ 139-140. - էջ 40): Ենթադրելի է, որ *Շիրակ*-ը կապ չունի իրանականի հետ, այլ թերևս առնչվում է *էրիսիսի* ձևին, քանի որ կարելի է նշել հնչյունական հնարավոր անցումներ.

Շրէշ (< *շրէշ* «մի տեսակ ուտելի բույս՝ շրէշ») (?). Ջահ., 1987, էջ 366, 369, Խաչ., 2015, էջ 140-141: - էջ 199.

Սարթնիկ (< ավան. *Saten/ Satan* «վիպական հերոսուհի»): Աճառյանը կապ է տեսնում հայ. *սարթ*- արմատի հետ՝ առանձնացնելով *-ենիկ* ածանցը (հմմտ. *Արիենիկ*, *Վարսենիկ*, *Նազենիկ* և այլն), ՀԱՆԹ, 4, էջ 342, Ջահ., 1987, էջ 367, 369: «Տենչայ *Սարթնիկ* տիկին տենչանս» (Խոր., էջ 84): - էջ 179.

Վարդգէս (< հայ. *վարդ* + *գէս*) «վարդագույն մազեր ունեցող, ոսկեներ». Չամչ., 1, էջ 101. ՀԱՆԹ, 5, էջ 109, Ջահ., 1987, էջ 367, 369: - էջ 199.

Տուհաց (գաւառ) (*Տուք*). հմմտ. Ջահ., 1987, էջ 366. տե՛ս նաև *Մուրադյան*, 1979, 245-250: - էջ 199.

Տրդատ [< իրան. *Tir* (դիցանուն) *-dāt(a)* // *-dāt(a)* «տո՛ւր, տրված», «-ստեղծ»] «Տիր աստծու տվածը». հմմտ. հուն. *Τιριδάτης*.

Hübisch., 1897, էջ 89. հմմտ. ՀԱՆԹ, 5, էջ 174, Ջահ., 1987, էջ 367, 369, 581, 582: - Ագաթ., էջ 71.

Քասաղ. ծագումն անհայտ. հմմտ. Ջահ., 1987, էջ 366, 369, Խաչ., 2015, էջ 175-176. «Գնացեալ ... Տուհաց գաւառէն, *զՔասաղ* գետով». էջ 199. այլև՝ «Եկեալ նստաւ ... զԱրտիմէդ քաղաքաւ, *զՔասաղ* գետով» (Ա. տ.):

5) Փոքրացուցիչ («նվազական-փաղաքական») մասնիկով բառեր

Նման մասնիկներն այստեղ ընդամենը երեքն են՝ *-ակ* [**ակ(ւ)* < հե. **kon*], *-իկ* [**իկ(ւ)* < հե. **kon*] և *-ուկ* [**ուկ(ւ)* < հե. **kon*]: Բառակազմական այս եղանակը վիպական հատվածների ժողովրդական մտածողությանը հատուկ գծերից է, խոսքին հաղորդում է, այսպես կոչված, նրբություն, հարազատություն («գորով») և այլն: Ա.Ա. Աբրահամյանը գրում է. «Բառերի նվազական-փաղաքական ձևով գործածելը հայ հին բանասիրության լեզվի բնորոշ հատկանիշներից մեկն է» (*Աբրահամյան*, 1976, 435. հմմտ. *Համբարձումյան*, 2018. *Ջահուկյան*, 1987, 368): Առանձնանում են շուրջ մեկ տասնյակ նման կազմություններ.

աշիկունք [< *աշ-իկ* (*-ունք*)]. Մալխասյանցը թարգմանել է *աչքեր* (փխ. *աշիկներ*): - էջ 54.

արեգակունք [< *արեգ-ակ* (*-ունք*)] (Ա. տ.).

եղեգնիկ (< *եղեգն-իկ*). Նույն ձևով գտնում ենք Մալխասյանցի թարգմանության մեջ (Ա. տ.).

կարմրիկ (< *կարմիր-իկ*). նույն ձևով՝ Մալխասյանցի թարգմանության մեջ (Ա. տ.).

մանուկ [< *ման-ուկ*. հմմտ. (բրբռ.) *ման-չ* «փոքրիկ»]. *կ* // *չ* տարբերակում (?).

տեղեկիկ [< *տեղի-ակ* (>*տեղեակ*)-իկ].

պատասնեկիկ [< *պատասնի-ակ* (>*պատասնեակ*)-իկ]. նույնը՝ Մալխասյանցի թարգմանության մեջ.

Մարենիկ [*< սար(են)-իկ*. հմմտ. (ալան.) Saten/ Satan «վիպական հերոսուհի»].

փափուկ (*< փափ-ուկ*). հմմտ. *փափ-լ-իկ*:

6) Պարզ բառերի բնույթը և ծագումնային առնչությունը

Դրանք, իրենց հերթին, երկու տեսակ են, ըստ այնմ, թե լեզվի հնագույն շրջանում են դիտվում այդպիսին, թե՛ գալիս են հնդեվրոպական ընդհանրության շրջանից:

ա) Բառեր, որոնք լեզվի հնագույն շրջանում են դիտվում իբրև պարզ բառեր: Հին հայերենի (գրաբար) վիճակում նման բառերը կազմությամբ, իրոք, այդպիսին են, սակայն նախագրաբարյան, առավել ևս հնագույն հայերենի փոփոխում հազիվ թե այդպիսին եղած լինեն: Դա հնարավոր է պարզել միայն ստուգաբանական վերլուծության դեպքում, այսինքն՝ դրանց համար վերականգնվող հնդեվրոպական նախաձևերն ինչպիսին են՝ պա՛րզ, թե՛ այս կամ այն ձևով բաղադրված:

Այսպես, *ընդ* (*< հե. *anti*) կազմությունը պարզ (արմատական) է, քանի որ այն լիովին արտացոլում է նախալեզվի արմատական ձևը, այսինքն՝ հե. *anti-ն նույնն է, ինչ հայ. *ընդ-ը*, անկախ հե. *-i-տարրի անկումից, որ բացատրվում է հայերենում շեշտի վերջընթեր դիրքում կայունանալու հանգամանքով:

Մյուս կողմից, հայ. *քան* (*< հե. *bhā-ni-s*) բառը նախագրային հայերենում ուներ ածանցական կազմություն (**քու-ն*), քանի որ ծագում է *bhā-ni-s ձևից, որտեղ *ni-ն ածանց (բառակազմական բաղադրիչ) է, իսկ *s-ն՝ վերջավորություն (քերականական բաղադրիչ):

Ստորև բերվող ցանկում հայերենին կից նշվող նախալեզվյան ձևերի կազմությունը (հնարավոր բաղադրիչների առանձնացումը) պարզորոշ ձևով ցույց է տալիս, թե հնագույն շրջանից հին հայերենին (գրաբարին) անցման ժամանակում բերված բառերի կազմում ինչպիսի փոփոխություն է տեղի ունեցել, մանավանդ բաղադրյալ կազմությունից պարզին անցնելու առումով. *այլ* (*< հե.*

*alios) (էջ 178)¹, *այր*, նաև՝ *արի* [*այր < հե. *ə(ri)rio-*] (էջ 178, 179), *անդ* (*ն- < հե. *no-*) (էջ 192), *արծուի* (*< հե. *rg'iprijo-*) (էջ 179), *քան* (*< հե. *bhā-ni-s*) (էջ 178), *բոց* «(բռնկված) կրակ» (*< հե. *bhok-so-*) (էջ 86), *եւ* «և» (*< հե. *ep-i*) (էջ 84, 85, 86, 178, 179), (Մագ., էջ 87). *է, էին* (եւ *< հե. *es-mi*) (էջ 40, 86, 178), *ընդ* (*< հե. *anti*) (էջ 86, 178, 179), *թեւ* [(*արա*)*թեւ* *< հե. *pteu-o-*] (էջ 179), *ի* (*վեր, մէջ* և այլն) [բռկպ. *< հե. *en* (upero-, *me(i)dhio-). (հմմտ. *ի դուրս < դուն, դուրք*)] (էջ 84, 178, 179), *իսկ* [*< հե. *istu-* (?) (Ագաթ., էջ 71), *իւր* (*< հե. *seuro-*) (էջ 179, Ագաթ., էջ 71), *լոյս* (*< հե. *leuk'o-*) (էջ 192), *մէջ* [*< հե. *me(i)dhio-*] (էջ 84, 178, 179), *ն* (*ով*) (*< հե. *kĒo-*) (էջ 192), *ոչ* [*< հե. *o-kĒi-* (?) (էջ 84, 178), *որ* (*< հե. *kuro-ro-*) (էջ 178, Ագաթ., էջ 71), *որդի* (*< հե. *portijos*) (էջ 84), *որս* (*< հե. *pork'o-*) (էջ 192), *ուչն* «պարանոց» [*< ուլունք* (հմմտ. *ոռն*) *< հե. *ōlen-*] (էջ 56), *վեր* (*< հե. *upero-*) (էջ 192):

բ) Բառեր, որոնք, որպես այդպիսին, իրենց հիմքերն ունեն հնդեվրոպական ընդհանրության շրջանում: Դրանք բառա-/բայա-հիմքեր են, այլև առանձին բառեր, որոնք նախագրային շրջանում մասնակիորեն կարող են դիտվել բառակազմորեն կամ ձևակազմորեն բաղադրելի [(հմմտ. *թումք* [*< հե. *tu-m-bh-* (?) և այլն). *զեւ* (*< հե. *ued-*) (էջ 179, 199. Ագաթ., էջ 71), *դու* (*< հե. tu*) (Խոր., էջ 40, 178, 191, 192). *եւ* [*ինձ < հե. eg'- (*es-)*] (էջ 40, 192, Մագ., էջ 87). *զի* (*< հե. *kui-*) (էջ 178). *թումք* [*< հե. *tu-m-bh-* (?) (Ագաթ., էջ 71), *ծով* [*< հե. *g'ob-* (?) (էջ 56. 85, 86, Ագաթ., էջ 71), *հուր* (*< հե. *pur-*) (էջ 86), *մեք* (*< հե. *mes*) (Մագ., էջ 87), *մի՛* (*< հե. *mē*) (էջ 192), *նս* [*< հե. *nā* (?) (էջ 84, 86), *տեղ* «տեղում, անձրև» (*< հե. *del-* «կաթել») (էջ 179), *ոլ* [*սուկտոլ (աւղ)* *< հե. *aulos*] (էջ 179):

7) Ածանցավոր բառեր. Ինչպես առհասարակ, սրանք միատարր չեն, ունեն ներքին զատվածության հնարավորություն (իներգիա) ըստ ածանցի բնույթի, այսինքն՝ դրանցով խոսքիմասային ինչ

¹ Խորենացու դեպքում կից նշում ենք միայն էջը:

միավոր է բառակազմորեն առաջ գալիս: Ըստ այդմ այստեղ առանձնանում են հետևյալ տեսակներով կազմությունները:

ա) Բայական *-(ն, ս, ի, ու)լ* (< *lo) ածանցով կազմություններ, որ տալիս ենք առանց այդ ածանցների. *անցանել* (*անց-ան-ել* «անցում, ուղի» < հե. *ant-s) (էջ 84, 179)¹, *սսել* [*սս-ել* < հե. * օց'(t-)] (էջ 178), *բսնսլ* (< *բարձ-նսլ* < հե. *bhr̥g'h-nā-) (էջ 178), *զ(ը)-ն-սլ* (< հե. *ghē-nā-mi-) (էջ 84, 191-192, 199), *զողանսլ* (*զող-ան-սլ* < հե. *լոl-) (էջ 192), *զողձել* (*զողձ-ել* < հե. *լոց'ո) (էջ 84), *զտանել* (*զտս* < հե. *լի-n-d-) (էջ 84), *դնել* (**դի-ն-ել* < հե. * dhē-ne-) (էջ 192), *ելանել* (*ել-* < հե. * el-) (էջ 86), *ել-ի* (*գալ* < հե. *e-guem-i «գնալ, գալ») (էջ 178, 199), *ընկե-նուլ* (*ընկ-ենուլ* < հե. *sengu-) (էջ 179), *լին-իլ* [*լ-* < հե. *k'lei-n- (?) (էջ 84), *ծասույեցուցանել* (*ծասույ* < հե. *g'rsāti-) (էջ 178)², *երկնել* [*ե-րկ-ն-ել*, «երկունքի ցավեր ունենալ», «ազատվել, առանձնանալ», «երկուսնալ» և այլն < հե. * eduon (< ed-) (?) (էջ 85), *կայցես* [*կալ* «լինել, կենալ» < հե. *gūā- (նաև *guem-) (?) (էջ 192), *կայրուլ* (*կայցին* «բռնել» < հե. *goul-) (էջ 192), *հանել* (*-ուլ, -իլ*) (?) [*լ-* < հե. *sem- «հանել, թափել» (?) (էջ 179). հասուցանել [*հաս-* < հե. *օ(n)k'-] (էջ 179), *հաստատել* (*հաստ-ատ* < հե. *pasti-) (էջ 178), *հարկանել* (*հարկ-* < հե. *pr̥-g-) (Մագ., էջ 87), *հարուլ* (*հար-* < հե. * բբ) (ն. տ.), *հասանիլ* (*հասան-* < հե. *Haṣā-) (էջ 178), *հեծանել* (*հեծ-ն-ուլ* < հե. *sed-s-) (էջ 179, 192), *հիմնասուլ* (*հիմն* < հե. *semṅ -) (էջ 84), *ձգել* [*ձիգ* < հե. *g'hē-լ- (?) (էջ 179), *նստիլ* [*լ-* < հե. * ni-zdi-(-e-?) (էջ 199), *ունիլ* (< հե. *ōp-n-) (էջ 85-86), *չեն* [*լ-* < (n)չ- են < հե. * o-kui- (?) + es-mi] (էջ 40), *սիգալ* (*սէգ* < հե. *k'eigh-ā-) (Ազաթ., էջ 71), *տալ* [*լ-* < հե. *dā-mi (?) (էջ 178), (Մագ., էջ 87), *տեսանել* [*տես* < հե. *derk (?) (էջ 192), *ցամաքեցուցանել* (*ցամաք-* < հե. *k'sāmo-?) (Ազաթ., էջ 71), *ցանեցուցանել* [*ցալ-*, *ցալիլ* < հե. *k'sā-po- (*k'sā) «այրել» (?) (էջ 179):

¹ Տե՛ս նախորդ ծանոթ.:

² Ըստ «Հայերեն արմատական բառարան»-ի՝ «անստույգ բառ» (ՀԱԲ, 2, էջ 447-448):

բ) Այլ կարգի ածանց ունեցողներ, ընդ որում եթե նկատի ենք ունենում ածանցման երևույթն առհասարակ, այսինքն՝ հայերենի նախագրային և գրավոր ժամանակաշրջանի կազմությունների մեջ. *ամենայն* (*ամէ-նայն*) «բոլոր» < հե. *smo-) (էջ 191-192)¹, *աչկունք* [*աչ-իկ(ունք)* (< *ակն*) < հե. *okui-] (էջ 178), *առասուտ* (< հե. *aus-) (Մագ., էջ 87), *արտախոր* [*արտ (ա)-խոր*, *արտ-* «դուրսը» < հե. *agro- (*g > in) + *խոր* (*խոր*) «թագ, փաթոց» < պլետո. xaoða, հայր. xauda] (էջ 84), *բլոր* (*բլ-որ* < հե. *bhōl-) (էջ 199), *գաւստ* (*գաւ-տ* < հե. *ghəu-) (?) (էջ 199), *զեղեցիկ* (*զեղ-եց-իկ* < հե. *uel-), նաև՝ (*աչս)զեղ* (էջ 178, 179), *դունն* [*լ-* < հե. *d^[h]ur-(no)] (էջ 199), *դուստր* (< հե. *d^[h]ug^[h]ter) (էջ 178), *երթ* [*ե-թ* < հե. *e-+ թէ (*թե) < հե. *te], նաև՝ *թէ* (< հե. *te-) (էջ 40, 192), *եղեգն* [*եղ-էգն* < հե. *el- (?)]. հմմտ. *եղ-եհին* (էջ 86), *եղէգնիկ* [*եղ-էգ-ն-իկ* < հե. *el- (?)]. հմմտ. *եղ-եհին* (էջ 86), *եղն* (< հե. *el-no- (Մագ., էջ 87), *եղջերու* [*եղ-ջ-իւր* (*եղ-ջ-եր) < հե. *k'er- (?) (ն. տ.), *երկին* (?) [*ե-րկ-ին* < հե. *dūi-n- (?) (էջ 85), *երկիր* [*ե-րկ-իր* < հե. *er-լ- (< er-) (?) (էջ 85, 192), *երկն* [*ե-րկ-ն* «երկունք» < հե. *eduon (< ed-) (?) (էջ 85), *երկոքին* [*ե-րկ - ոք-ին* (-եսն) < հե. *dūo- (?) (էջ 178), *գարւլ* [(*գար-ւլ* < հե. * or-mo-] (էջ 178), *ծիրանի* [*ծիր-ան-ի* < հե. *g'er- (?) (էջ 85), *կենդանութիւն* [*կեսան(դ)-ան-(ի)-ութիւն* < հե. * g^uṣā-nā-, նոր՝ հե. *k'o^oEH-] (Դ. -ԱԵ, 1984, էջ 235, 235), *հարսնութիւն* (*հարս-ն-ութիւն* < հե. *pr̥k'-) (էջ 179), *մանուկ* (< հե. *mānu) (էջ 192, 199), *մինչ* (< հե. *smē?) (էջ 191-192), *մորոք* [*մարուք*] < հե. *smok-ru-] (էջ 86), *յորձանք* [*յորձ/յորդ.* < հե. *ordh-լո-] (Ազաթ., էջ 71), *նոյն* [*ն-յն* < հե. *no- (?) (էջ 84), *որ-կոր* [**որգ-որ* < հե. *or-լ- (?) (էջ 40). *որպէս* (*որ-պէս* < հե. *kūo-ro- + պէս), (էջ 179), *ուստի* (*ուստ* < հե. *kūu-) (էջ 178). *սէգ* (< հե. *k'eigh-) (Ազաթ., էջ 71), *սուր* [*սրաթե* < հե. *k'o-ro-] (էջ 179), *ստրուկ* [*լ-* < հե. *stro- (?) (էջ 178), *տեղեկիկ* (*տեղ-ի, տեղ-եկ-իկ*) «տող. տեղ» [*լ-* < հե.

¹ Խորենացու դեպքում կից նշում ենք միայն էջը:

*sed-lo (> *sedelo-) (էջ 84), *տիկին* (*տի* «մեծ» կին < հե. *di- + *güenā-) (էջ 84), *տիք* (*տի-ք* < հե. *di-to) (էջ 84), *փափուկ* [*փափ-ուկ* (բրբռ. *փա(ս)փ-իկ* (?)) < հե. *pha(m)ph-) (էջ 179), *փեսայութիւն* [*փեսայ* < հե. p^[h]erK^[h]- «(աղջիկ) ուզել, հարսնախոսել»] (էջ 179), *քէն* [(բրբռ. *խէն*) < հե. *kūoi-nā] (էջ 178), *օրհորդ* [*աւր-* < հե. *pōu-(?)] (էջ 178, 179):

8) Բարդ և բարդածանցավորբառեր. Սրանք քանակապես զիջում են. *աչ(ազեղ)* [*աչ(ք)* (<*ակն*) < հե. *okūi-] (էջ 86)¹, *արեզակն* (*արեզ* «արև» < հե. *reu- / *rey-) (էջ 86), *դիցազն* (*դիք* < հե. *dhēses) (էջ 178), *խաւարծի* [*խաւ-արծ-ի* (< *խաւ-արտ*) < հե. *khəu- [**(s)keu-*] (?) + *agro- (*g > ծ)] (էջ 84), *խաւարտ* [*խաւ-արտ* < հե. *khəu- [**(s)keu-*](?) + *agro- (*g > տ)] (էջ 84), *արարեա* [< *ար-ա-թեա*] < հե. *k'o-ro- + *pteuo-] (էջ 179):

9) Բայակազմություն: Այստեղ նկատի ունենք հարադրական կազմությամբ բայերի գործածությունը, ընդ որում կա՛մ սովորական, կա՛մ դարձվածային նշանակությամբ: Վերջին դեպքում երևույթն առնչվում է նախագրային հայերենի բանավոր-խոսակցական ակունքներին, այն բազմիցս նկատված է անցյալի և ժամանակակից բանասիրության, նաև բնագրի (տեքստի) լեզվաբանության մեջ, ընդ որում ոչ միայն առանձին, այլև հնդեվրոպական բանաստեղծական խոսքի համատեքստում.

բանալ զկենդանութիւն («կենդանությունը վերացնել. սպանել»), փխ. *սպանանել* (?) (հմմտ. ԱԱբր., էջ 397): ՆՀԲ-ն օրինակ է բերում Ղևոնդ պատմիչից՝ «Բանային զկենդանութիւնս նոցա», այսինքն՝ «կյանքից գրկել. սպանել».

ե՛կ հաւանեսաց («ե՛կ համաձայնիր, լսի՛ր՝ ինչ եմ ասում». ասածս ընդունի՛ր). Ըստ Աբրահամյանի՝ *եկ*-ը ավելադրություն է (ԱԱբր., էջ 397): ՆՀԲ-ն չունի, սակայն *գալ*-ի համար նշում է նաև «իբր թարմատար և ի գարդ (որ գտանի և ի ոմկ [= ոամկօրէն]. Կա-

ցի մնացի, եկն եբեր փուշ և տատասկ. Ոսկ. ես. [= Ոսկերեբան, Մեկնութիւն Եսայեայ]».

ի ստրկաց կարգի պահել («ստրկացնել, ստրուկ՝ ծառա դարձնել»), փխ. *ծառայեցուցանել* (?) (հմմտ. ԱԱբր., էջ 397): ՆՀԲ-ն ունի՝ «Ծառայեցուցանելով՝ ի ստրկաց պահել ի կարգի. Խոր. բ. 47».

կռել կոփել (զդուռն). բուն իմաստով՝ «(դուռը) ծեծել՝ թակել», փոխաբերաբար՝ «խնամախոս լինել, աղջիկ ուզել» (հմմտ. ԱԱբր., էջ 397): ՆՀԲ-ն ունի միայն բուն՝ «կռանով՝ մուրճով խփել» իմաստով. «Քաջալերեսցէ զդարբին՝ կռել կոփել, ուռն հարկանել».

անց գնաց (անցանել գնալ) «հեռանալ՝ թողնել գնալ». Այսպես կոչված՝ զուգադիր հարադրություն, որ ավելի բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվին՝ գործողությանը սաստկություն հաղորդելու նպատակով. հմմտ. (բրբռ.) *բեր արի՛ վերցրու բե՛ր*» (Մուշ, Ալշ.):

10) Իմաստաբանություն: Այս դեպքում էլ նկատի ենք ունենում բնագրային հատվածներում բառերի իմաստային այն գործածությունները, որոնք այսպես թե այնպես տարբերություններ, նրբերանգներ են իրենց իսկ ընդհանուր իմաստների համեմատությամբ, այսինքն՝ առկա է բուն իմաստի (բովանդակության պլանի)՝ իբրև անփոփոխակի (ինվարիանտի), և փոփոխակների (վարիանտների) առնչություն.

երկն [< հե. *edyon (< ed-) (?)]. բուն իմաստով՝ «երկուանալը» և բնագրային իմաստով՝ «ծննդյան ցավով բռնվելը»: *Երկն (երկն-ն)* «երկունք». նշվում է նաև «ծննդաբերական ցավ» իմաստը՝ իբրև կոնկրետ իմաստ (հմմտ. ՎԱռաք., էջ 5), այսպես նաև՝ *երկնել [երկն-ել]*, կոնկրետ իմաստով՝ «երկունքի ցավեր ունենալ», «ծնել. ծննդի ցավերով բռնվել» (հմմտ. ՎԱռաք., 1946 էջ 5. ԱԱբր., էջ 396), իսկ ընդհանուր իմաստով՝ «ազատվել, առանձնանալ». «*Երկնէր* երկին, *երկնէր* երկիր, *երկնէր* և ծովն ծիրանի»: - էջ 85.

¹ Տե՛ս նախորդ ծանոթ.:

ծիրանի. բազմիմաստ բառ՝ իմաստային նրբերանգով՝ «ծիրանագույն», «կարմրագույն», «մանուշակագույն», «կապույտ» (հմմտ. ՎԱռաք., էջ 5).- էջ 85.

կռել-կռիել, բուն իմաստով՝ «թակել, ուժգին խփել. կռանով՝ մուրճով ծեծել» փոխաբերական իմաստով՝ «աղջիկ ուզել. խնամահանալ» (ՎԱռաք., էջ 8). - էջ 199.

հաւանիմ (հաւան) < հե. *g^[h]ab^[h]- (*Համբարձումյան*, 2022, 166-169). «Ե՛կ հաւանեաց բանից աչագեղոյ դստերս Ալանաց» (ՎԱռաք., էջ 6): - 178.

հատուած. բուն իմաստով՝ «կիսել՝ կիսված», այլ իմաստով՝ «զաղթ» (ՎԱռաք., էջ 8): - էջ 199.

ունիմ. բուն իմաստով՝ «բռնել, պատել», հմմտ. *կախույ*. «Որտորդ կալաւ կաքաւ մի եւ կամէր գենույ» (Ս. Գիրք). փոխաբերական իմաստով՝ «ունենալ». «հավանել» (հմմտ. ՎԱռաք., էջ 5, ԱԱբր., էջ 396).

շատ «չափից ավելի». ճիշտ է նկատված, որ դասական գրաբարում ավելի ընդունված էր *բազում*, *սոռաւել*, *յոյժ*, *կարի* հոմանիշների գործածությունը, իսկ «ժողովրդական լեզվին է հատուկ *շատ* բառը, որը գտնում ենք նաև Բուզանդի և հետագա գրողների մոտ» (հմմտ. ՎԱռաք., էջ 7. ԱԱբր., էջ 398).

սիգալ սեգ «վեհ, պանծալի». բուն իմաստով՝ «վեհորեն երևալ. գնալ», այլ իմաստով՝ «սլանալ, սլացքով գնալ». (ՎԱռաք., 71):

քանդել (*քանդել* զթումբս). բուն իմաստով՝ «ավերել. փլուզել», այլ իմաստով՝ «հանդգնել. արշավել» (ն.տ.).

քաջք («քաջքեր») «(չար) ոգիներ, դևեր». բուն իմաստով՝ «քաջեր», այլ իմաստով՝ «չարքեր»: Հմմտ. «Մութ անձավներից, հազար ձևերով, /*Քաջքերն* անհանգիստ՝ հըրտալիտ ձայներով. / Դևի հառաչքին արձագանք տալի...» (Թում., 1989, էջ 17): Հմմտ. ԱԱբր., էջ 398:

11) Քերականական ձևեր: Բնագրային հատվածներում բարդ և ածանցավոր բառերը քննության ենք առնում հին գրական

հայերենի մակարդակում, որն այս դեպքում, ենթադրաբար, գրեթե կարող է նույնը լինել նախագրային վիճակի հետ. դրանք բառակազմական (բայակազմական), իմաստաբանական, ձևակազմական և շարահյուսական իրողություններ են:

ա) Ձևակազմական իրողությունները հատվածներում խոսակցական լեզվին առավել բնորոշ բառաձևեր են. այդպիսին են համարվում այն նկատառումով, որ տարբեր են ժամանակի, այսպես կոչված, ստանդարտ լեզվից.

հեծաւ ... ի սեան «նստեց սևին (սևի վրա)», այսինքն՝ *հեծաւ սև (ձին)*. ածականը գործածված է փոխանվանաբար՝ *սև ձին > սևը*: *Հեծաւ*-ը զուգադիր *հեծանիմ // հեծնում* անցյալի հիմքից կազմված ձև է, ընդ որում *-ան-* սուկածանցով ձևը, թերևս, գրական է, իսկ *-ն-*ով ձևը՝ խոսակցական, ըստ այդմ ենթադրելի է *հեծաւ*-ի կազմությունը *հեծնում*-ից՝ իբրև ժամանակի խոսակցականի մի դրսևորում (հմմտ. ԱԱբր., էջ 397)¹.

ընկէց (< *ընկենում*) «զցել, նետել» բայի անցյալ կատարյալի եգ. 3-րդ դեմքի *ընկեաց* ձևի փոխարեն գործածվել է *ես > է* տարբերակմամբ («կարճ») ձևը, որը բնորոշ է խոսակցական լեզվին (օր.՝ *երկոքին // երկոքեան* և այլն) (հմմտ. ՎԱռաք., էջ 7, ԱԱբր., 398).

էին (աչկունքն *էին* արեգակունք)՝ «պատմական անցյալ անկատար ժամանակ», որ ունի հիմք, այսպես կոչված, «վաղնջահայերենում»՝ իբրև հնդեվրոպական ժառանգություն (հմմտ. ՎԱռաք., էջ 5).

աչկունք (*աչիկ-ունք*). *-ունք* հոգնակերտ-հավաքական վերջավորությամբ, այլև *-իկ* փաղաքական ածանցով կազմություն՝ «աչիկներ» (հմմտ. ՎԱռաք., էջ 5, ԱԱբր., էջ 396).

¹ *Սեաւ* (բառ)արմատը, որը նորագույն ստուգաբանական տվյալների համաձայն ունի հնդեվրոպական ծագում, ենթադրում է իմաստային-առասպելական բոլորովին նոր խնդիր:

ի մէջ երկոցունց «երկուսում էլ, երկուսի մեջ էլ». թվականի ուղղականն ունի կրկնակ ձևեր՝ *երկոքին* // *երկոքեան* (վանկակազմիչ *ի* // *ես*), թերևս խոսակցական / գրական տարբերակմամբ, որ մատենագրությամբ գրեթե չի գանազանվում. *ի մէջք*. ընդունված է ասել, թե պիտի լինի *ի մէջս* (ՎԱճաք., էջ 7, ԱԱբբ., էջ 398 և այլն). նկատված է՝ «Ինչպես որ եզակիում հայց. և ուղղ. նման են, այնպես էլ վաղուց հոգնակի ուղղ. և հայց. սկսել են նմանվել՝ հատկապես խոսակցական լեզվում: Սրա հետևանքով մի շարք բառերի հոգնակի հայցականը գործածվում է որպես ուղղական, կամ ընդհակառակը» (ՎԱճաք., էջ 7).

զմէջք (փխ. *զմէջս*). նույնն է, ինչ *ի մէջք* ձևի գործածությունը (տե՛ս վերը):

մօրոս [փխ. *զմօրոս* (*մօրոս* անեզական ձևի հայցական)] (հմմտ. ՎԱճաք., էջ 5, ԱԱբբ., էջ 396).

ո՛ տայր «ո՛վ կտար. երանի թե տար»: Սահմանական եղանակի անցյալ անկատարը գործածվել է ստորադասական անցյալի ապառնի ժամանակի փոխարեն, քանի որ գրաբարը չուներ նման կազմություն (հմմտ. լատիներեն). նկատված է, որ՝ « չունի ստորադասական անցյալ (1-ին ապառնու անցյալ), փոխարեն գործ է ավում սահմ. եղն. անց. անկտ.» (ՎԱճաք., էջ 7), այլն՝ «Տվյալ դեպքում գործածված է որպես բացականչական արտահայտություն՝ ախ ո՛ր է թե լիներ, ո՛ր է թե տար» (ԱԱբբ., էջ 438).

եղանց «(եզ) եղջերուների» գործածությունը, թերևս, փոխաբերական իմաստով է, որ նշանակում է «(իզական սեռի) զվարճացող անձերի»՝ ի հակադրություն *եղջերուաց* «(արու) եղջերուների» կամ (փխբ.) «(արական սեռի) զվարճացող անձերի». սա ժողովրդական մտածողությանը հատուկ փոխաբերացման օրինակ է: Հմմտ. նաև *զվազել(ն)* «(արագ) գնալ, *սլանալ*» և *զվարզել(ն)* «(քառատրոփ) գնալ, սլանալ» հակադրությունը (գործառական տարբերակներ, թերևս փոխառություն իրանականից), հոլովառության հակադրությամբ՝ *հարուստ* «խփում (բուն իմաստով՝ «փչում) էինք», և

հարկանէաք «խփում էինք» [*հար-* «խփելը, զարկելը» < հե. * per- «խփել, զարկել» և *հարկ-* (նույնը) <*per-g- (նույնը)]. հմմտ. ՀԱԲ., 4, էջ 293, Ջահ., 2010, էջ 450-451, 701,706, ՎԱճաք., էջ 8: Ընդունված է հետևյալ թարգմանությունը՝ «Մենք փող էինք նվագում և թմբուկ էինք խփում», որն իմաստի նկատառումով է ներկայացվում (ԱԱբբ., էջ 398):

բ) Ուշադրության առարկա հատվածները պարունակում են շարահյուսական մակարդակի այնպիսի երևույթներ, որոնք ավելի բնորոշ են լեզվի առհասարակ խոսակցական, քան գրական տարբերակին, նկատելի են ոչ միայն հոդերի, շաղկապների և նախդիրների գործածության մեջ, այլև բառակապակցական միավորների շարադասության, խնդրառության, պարագայական տարբեր իմաստների դրսևորման դեպքում և այլն. այս առումով այդ հատվածներն, իրոք, բանավոր խոսքի նմուշներ են:

Ն հոդի տեղափոխություն՝ *զկարմրիկն եղեգնիկ*. լրացումն իր վրա է վերցրել լրացյալի հոդը, փխ. *զկարմրիկ եղեգնիկն*: Հմմտ. «Սովորաբար որոշիչ հոդը գոյականն է վերցնում, բայց երբեմն նախադաս ածականի վրա է դրվում հոդը, կատարվում է հոդի տեղափոխություն: Փոխանակ՝ *զկարմրիկ եղեգնիկն*» (ՎԱճաք., էջ 5). «Այստեղ կատարված է *ն* հոդի տեղափոխություն: Նման դեպքերում սովորաբար հոդ է կրում լրացյալը՝ «զկարմրիկ եղեգնիկն»: Հոդի այսպիսի տեղափոխությունը գրաբարում բացառված չէ» (ԱԱբբ., էջ 396).

ն հոդի բազմապիսի գործածություն. սա, թերևս, մի նշան է լեզվի խոսակցական տարբերակի՝ ասելիքն ավելի դիպուկ և կըտրուկ դարձնելու իմաստով. մեր հաշվումներով այն գործածվել է 34 անգամ, հետևյալ հատվածներում. «Թե՛ քո Շարայի որկորն է...» (2 անգամ), «Ճաշ գործեալ...» (1), «Արտաուզդայ ոչ գտեալ...» (2), «Տենչայ Սաթինիկ տիկին...» (1), «Երկնէր երկին...» (4), «Քեզ ասեմ...» (1), «Եւ ուստի՛ տացէ...» (1), «Հեծաւ արի արքայն Արտաշէս...» (8), «Տեղ ոսկի տեղայր...» (2), «Եթէ դու յորս հեծցիս...» (2),

«Վիշապագունք գողացան...» (1), «Հատուած գնացեալ...» (3), «Իբրև գտեալ Տրդատ...» (3), «Ո՛ր տայր ինձ...» (3)։

Ա հոդը սեռական հոլովի հետ՝ *օրհորդին*։ «գրաբարում սեռական հոլովը հոդը ընդունում է» (ԱԱբր., էջ 398)։ «Ընկէց ի մէջք *օրհորդին* Ալանաց, և շատ ցաւեցոյց զմէջք փափով *օրհորդին*» (Խոր., էջ 179)։ ևոր ժամանակում երևոյթը հատուկ է արևմտահայ աշխարհաբարին (հմմտ. *թաղականին կնիկը* և այլն)։

ընդ նախդիրը հայցական հոլովի հետ՝ բացառականի իմաստով՝ *ընդ եղեգան փող*։ «*Ընդ եղեգան* փող ծուխ ելանէր, *ընդ եղեգան* փող բոց ելանէր» (Խոր., էջ 86)։ Աշխարհաբար թարգմանվում է «եղեգանի փողովը» (ՍՄալխ., 54), «եղեգայա փողից» (ՎԱռաք., էջ 5, նաև 7), փիւ. «եղեգանի փողով» (ԱԱբր., էջ 396), «փողի միջից կամ միջով», «փողով» (ՊԲեդ., էջ 14)։

որ, թէ շաղկապների գործածությունը գրաբարին ոչ բնորոշ (խոսակցական) իմաստով։ «*Որ* յաղթեցեր քաջ ազգին Ալանաց» (Խոր., էջ 178)։ «*Թէ* քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարքն չեն» (Խոր., էջ 40)։

ս հոդի բազմապիսի գործածություն, որ նույնպես, ինչպես *զ* հոդի դեպքում է թերևս, մի նշան է լեզվի խոսակցական տարբերակի՝ ասելիքն ավելի դիպուկ և կտրուկ դարձնելու իմաստով։ այն գործածվել է 4 անգամ, հետևյալ հատվածներում։ «Բեզ ասեմ...» (1), «Եւ ուստի՛ տացէ...» (1), «Մինչ դու գնացեր» (2)։ Այլ գործածություն ցուցական (ոչ ստացական) իմաստով։ «Աւաղ *փառացս* անցաւորի» (Խոր., էջ 125)։

դ հոդի գործածություն ոչ թե ստացականի, այլ ցուցականի իմաստով՝ *տալ զպատանիդ* «այդ քո (մոտի) պատանին»։ «Ե՛կ հաւանեաց բանից աչազեղոյ դստերս Ալանաց՝ տալ *զպատանիդ*» (հմմտ. ՎԱռաք., էջ 6, ԱԱբր., էջ 397)։

բոց ունէր մօրուս (փիւ. *ունէր բոց մօրուս*) (?). շարադասության «հազվադեպ» գործածություն, թերևս *բոց*-ի նախադաս շեշտման

նպատակով, բանավոր խոսքին յուրահատուկ (հմմտ. ԱԱբր., էջ 396)։

յաղթեցեր (քաջ) ազգին։ տրականով ուղիղ խնդիր՝ պայմանավորված բայի սեռով, որոշյալ առումով՝ «այն ազգին», և որ հատկապես բնորոշ է աշխարհաբարին (ՎԱռաք., էջ 6, ԱԱբր. էջ 397)։

աչազեղոյ դստերս Ալանաց, *ս*-ն 1-ին դեմքի որոշիչ հոդ է՝ «այս (ես, ինքս)»։ «Ալանների այս գեղաշյա աղջկան» (հմմտ. ՎԱռաք., էջ 6, ԱԱբր., էջ 397)։

ե՛կ հաւանեաց ... տալ զպատանիդ։ անորոշ դերբայը տրականի փոխարեն՝ «տալու»։ խոսակցականին առավել բնորոշ կառույց է (հմմտ. ԱԱբր., էջ 397)։

զայլոց դիցազանց զարմից բառնալ զկենդանութիւն (փիւ. զկենդանութիւն այլոց դիցազանց զարմից)։ հայցականի *զ* նախդրի կրկնական գործածություն՝ հատկացուցիչ-հատկացյալի հեռահար (ընդմիջված) դրսևորման բերումով (հմմտ. ՎԱռաք., էջ 6, ԱԱբր., էջ 397)։

(եթէ դու) յորս հեծցիս։ բայի միջոցի պարագան նպատակի իմաստով (Որսի (գնալու նպատակով) (ձի) հեծնես (սասես)»։ «Եթէ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս», այն է՝ «(Եթէ դու) որսի գնաս, գնալու լինես» (հմմտ. ԱԱբր., էջ 397)։

Նախդիրներից բացի նախադրությունների փոխարինաբար գործածություն։ «*Զի վասն* միոյ քինու ոչ է օրէն դիցազանց» (Խոր., էջ 178) (հմմտ. Ջահ., 1987, էջ 351)։

12) Խոսքային-ոճական իրողություններ։ Այս հատվածների մեջ հանդիպում են այնպիսի իրողություններ, որոնք նորմատիվ աշխատանքներում ուշադրության են առնվում իբրև ոճական իրողություններ (պեսպիսություն, հավելադրություն և այլն)։ Տեսական առումով դրանք բանաստեղծական խոսքի բնութագրիչ իրողություններ են, որոնք ավելի շուտ սպասելի էին բնագրի առասպելաբանական քննության դեպքում։ Դրանք խոսքային-բանավոր պատ-

րաստի միավորի արժեք ստացած կազմություններ են. օր.՝ *Շարայ* հատուկ անվան ծագումը Հ. Աճառյանը կապում է նման մտածողության հետ. «Գավառը իր անունով կոչվեց Շիրակ: Իր վրա է շինված հայկական ամենահին առածը՝ «Թե քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարք չեն»: Խոր. Ա, Ժբ» (տե՛ս ՀԱՆԺԲ, 4, էջ 150):

Այդուհանդերձ, հետևելով ավանդույթին, դրանք բերում ենք իբրև պեսպիսություն, հավելադրություն և այլն.

այր (քաջ) Արտաշէս. ոճական պեսպիսություն, որ բնորոշ է նաև հին լեզվի խոսակցական տարբերակին. երևույթ, որ նկատելի է ներկայիս բարբառներում (խոսակցական). «Բեզ ասեմ, այր քաջ Արտաշէս, որ յաղթեցեր...» (Խոր., էջ 178). օր. աշխարհաբար՝ *Գրիգոր տղա, աղջիկ երեխա, կին արմատ* և այլն (հմմտ. ԱԱբր., էջ 397).

ե՛կ հասանեաց բանից. ոճական ավելադրություն՝ «արի (կլի-նի) համաձայնի՛ր, հավանությունն տուր (խոսքերին): Սա նույնպես բնորոշ է աշխարհաբարին (հմմտ. ՎԱռաք., էջ 6, ԱԱբր., էջ 397, ՊՇար., էջ 102).

ոչ է օրէն դիցազանց ... բառնայ. (հուն. ոճ), որ ընդհանուր հնդեվրոպական ձեռքբերում է, ոչ թե գրաբարի մեջ պատճենում հունարենից («օրենք չէ, որ դյուցազունները վերացնեն...»). այդպես նաև՝ «ոչ է օրէն դիցազանցի ստրկաց կարգի պահել» («օրենք չէ, որ դյուցազունները ... ստրուկների կարգում պահեն»). այդպես նաև՝ «Ոչ է օրէն դիցազանց ... թշնամութիւն ... հաստատել» («օրենք չէ, որդ յուցազունները ... թշնամություն... հաստատեն»).

որպէս օրէն էր թագաւորաց. (հուն. ոճ). «ինչպես թագավոր-ներին էր վայել»(հմմտ. ԱԱբր., էջ 398).

զայլոց դիւցազանց զարմից բառնայ զկենդանութիւն. *զ* նախդրի կրկնակի գործածություն լրացման և լրացյալի վրա՝ այսպես կոչված շարահյուսական «ձգողության» պահպանման նպատակով, կապակցությունը դրված է ընդհանրական հոգնակիով՝

մեկի վերաբերյալ. «այլ դյուցազունների ցեղի կենդանի (մեկին) սպանել» (հմմտ. ԱԱբր., էջ 397).

ճաշ գործեալ Արգասանայ. (հուն. ոճ). «Արգավանը ճաշի հրավիրեց՝ հյուր կանչեց», սա ևս, հավանաբար, ընդհանուր հնդեվրոպական ձեռքբերում է, որ սովորաբար ընդունված է կոչել հունարանություն.

խարդաւանակ լեալ (Արգասանայ). (հուն. ոճ). «(Արգավանը) դավ՝ խարդավանք լարեց» (հմմտ. ԱԱբր., էջ 398): Հմմտ. նախորդի հետ:

Արտաւագոյս ոչ գտեալ. (հուն. ոճ). «Արտավագդը չգտավ», թեև չի բացառվում «չգտնելով» տարբերակը. ըստ այսմ հատվածի առաջին մասը՝ «*Արտաւագոյս ոչ գտեալ*, քաջի որդւոյն Արտաշիսի, տեղեկիկ ապարանից՝ ի հիմնանալն Արտաշատու» կարելի է հասկանալ «Արտավագդը՝ Արտաշեսի որդին, Արտաշատի հիմնվելու ժամանակ մի փոքր տեղ (անգամ) չգտնելով» ձևով (հմմտ. ԱԱբր., էջ 398). հմմտ. նախորդի հետ.

տենչայ տենչանս. ՆՀԲ-ն այս կապակցությունն ունի՝ վկայություն միայն Խորենացի, *տենչանք* բառի տակ. ընդունված է համարել ասորաբան ոճի նմուշ (Խոր. էջ 29).

տեղ (ոսկի) տեղայր. ինչպես որ վերևինը, ասորաբան ոճի օրինակ է, եթե ոչ հնդեվրոպական-սեմական ընդհանրության (Խոր. էջ 29).

երկնէր երկին, երկնէր երկիր. արմատի կրկնություն՝ հնդեվրոպականում, թերևս ավելի վաղ նախահնդեվրոպական-սեմական առնչություններ, որ քննության առանձին ոլորտ է:

Եզրակացություններ

1. «Վիպասանական» հատվածների լեզվի մանրամասն քննությունն ավելի ամբողջական պատկերացում է ստեղծում նախագրային հայերենի բառապաշարի մասին:

2. Որքան էլ հատկապես Խորենացու Պատմության մեջ այդ հատվածները ներկայացված լինեն V դ. լեզվի միջոցով, այնուամենայնիվ նրանցում նկատելի են հնագույն ժամանակաշրջանի մտածողության, վերերկրային պատկերացումների երանգներ և շերտեր:

3. Հատվածների բառապաշարը բավարար չափով ներկայացնում է հայերենի ներքին շերտավորումը՝ բնիկ և եկամուտ (փոխառյալ) բառերի քանակային բաշխման մեջ:

4. Բառային միավորների ստուգաբանական-բառաքննական վերլուծությունը, որ կատարվում է արմատի՝ հիմնականում ավանդական վերականգնումների հիման վրա (մասամբ ճշգրտումներով կամ լրացումներով), ստեղծում է ավելի իրական պատկերացում նախագրային շրջանի լեզվամշակույթի վերաբերյալ:

«Աստվածաշունչ» գրքի հայերեն թարգմանության բառապաշարը

Ներածություն

«Աստվածաշունչ» գրքի հին գրական հայերեն («գրաբար») թարգմանության բնագիրը, վերջինիս «աշխարհաբար» տարբեր թարգմանությունները մշտապես եղել են թե՛ դասական և թե՛ արդի հայագիտության ուշադրության առարկան:

Թարգմանության լեզվի հարցը, կարելի է ասել, ունի առանցքային նշանակություն, որն առանձին ուսումնասիրության թեմա է: Այստեղ քննության ենք առնում այդ թեմայի մեջ բնագրի բառապաշարին, ինչպես նաև համաբարբառներին վերաբերող առանձին հարցեր:

1. «Աշխարհաբար» թարգմանությունները և նոր թարգմանության հարցը

Հայոց լեզվի պատմության գրավոր ժամանակաշրջանը (սկիզբը V դ., 10-ական թթ.) նշանավորվում է ամենից առաջ թագմանական գրականությամբ, որում առաջինը «Աստվածաշունչ» թարգմանությունն է: Որքան էլ այն ունենում է ամեն կարգի (թարգմանելի բնագրի ընդօրինակումների, ժամանակի հայերեն բանավոր խոսքի ներառումների, թարգմանված բնագրի խմբագրումների և այլն) տարբերություններ, այնուամենայնիվ լեզվի առումով հանդիսանում է որոշակի օրինակ հետագա հայերեն գրավոր խոսքի համար: «Աստվածաշունչ» հայերեն թարգմանությունը եղել է բնագրագիտական, պատմական-բանասիրական, լեզվաբանական տարբեր ընդգրկումների քննության առարկա, որն այլ բան չէ, քան հայ գրավոր մշակույթի ձեռքբերում (հմմտ. *Առաքելյան*, 1983. *Համբարձումյան*, 2005, 518-523):

ա) Հայոց լեզվի գրավոր շրջանի պատմության ուսումնասիրությունը հիմնվում է մեզ հասած գրավոր աղբյուրների տվյալների վրա: Հայտնի է, որ դրանք ժամանակի ընթացքում կրել են բնագրի արտագրման («գրչագրության») հետ կապված տարբեր կարգի փոփոխություններ, տեղիք են տվել ժամանակի մտածողության և արտագրողների («գրիչների») խոսքային հակումներով պայմանավորված լեզվական տարբերությունների:

Որքան էլ այդ աղբյուրները անհրաժեշտության դեպքում մշակվել են իբրև նմուշ գրական ստանդարտ լեզվի, այնուամենայնիվ ոչ միշտ է դա եղել միօրինակ և ամբողջական: Նման տարբերություններ նկատում ենք նաև «Աստվածաշունչ» գրքի հայերեն բնագրում: Այդ տարբերությունների լեզվական քննությունն ունի բացառիկ նշանակություն ոչ միայն հին գրական հայերենի պատմության ուսումնասիրության տեսակետից, այլև հայերենի և բնօրինակ լեզվի (հունարենի), մյուս լեզուների համեմատության առումով:

Աստվածաշունչի հայերեն ձեռագրերի հիման վրա քննական բնագրի կազմումն այսօր արդիական է, որը և իրականացվում է ներկայումս: Վերջինիս համար մտահոգվել են տարբեր ժամանակ-

ներում: Այսպես, Ա. Մեյեն դեռևս XX դ. սկզբին հետևյալ կերպ է արտահայտում իր մտահոգությունը. «Գոյություն չունի հայերեն Աստվածաշնչի իսկական քննական հրատարակություն. XIX դ. միմյանց հաջորդած բոլոր հրատարակությունները վերարտադրում են (երբեմն փոփոխություններով) Ջոհրաբի (իմա՝ Հովհ. Ջոհրապյանի - Վ.Հ.) մեծ հրատարակությունը (Վենետիկ, 1805 թ.), որը թեև իր նախորդների համեմատությամբ հսկայական առավելություններ ունի, բայց իր արժանիքներով հանդերձ չի բավարարում խստապահանջ բանասիրությանը: Այդուհանդերձ ոչ մի նոր հրատարակություն չի պատրաստվում, և դրանից ավելի վնասակար բան չկա հայ բանասիրության առաջադիմության համար: Որովհետև գիտենք, որ ամբողջ հայ հին գրականության համար առաջին նմուշը եղել է Աստվածաշնչի թարգմանության լեզուն» (Meillet, 1903, 487, նաև 1904, 193. Մեյե, 1978, 452-453):

Այս խնդիրը վերջնական լուծված չէ նաև ներկայումս, երբ կան Աստվածաշնչի արդի հայերեն զգալի թվով թարգմանություններ՝ կատարված թե՛ մոտ անցյալում, թե՛ երկու-երեք տասնամյակ առաջ, հրատարակված կա՛մ առանձին գրքերով, կա՛մ հատվածաբար՝ օգտագործված գիտական տարբեր բնույթի աշխատություններում:

Այնուհետև, Աստվածաշնչի գրաբար բնագիրը մեծապես կարևոր է հին հայերենի բառապաշարի, ինչպես նաև քերականական կառուցվածքի պատմության համար: Գրաբարի ամենածավալուն բառարանները լիովին ներառել են թարգմանական գրականության այս գլուխգործոց առաջնեկի բառապաշարը, և քանի որ այն եղել ոչ թե քննական բնագիր, այլ լավագույն համարվող տպագիրների նյութի հիման վրա, ուստի նրա բառապաշարի քննությունը (հենց այդ հիմունքով էլ) չի կարելի լիակատար համարել: Գրաբար քննական բնագրի կազմումը հնարավորություն կտար նաև ըստ ամենայնի ուսումնասիրելու հին գրական հայերենի շարահյուսական կառուցվածքը, տեքստի լեզվական կողմն առհասարակ, մի

խնդիր, որ հայերենագիտության մեջ, ի տարբերություն բառապաշարի, ձևաբանական և հնչյունական համակարգերի, ավելի քիչ է ուսումնասիրված:

Լեզվի պատմության փաստերը ցույց են տալիս, որ թե՛ հին գրական հայերենը, թե՛ հետագա փուլերում գործածած գրական լեզուները մշակվել են Աստվածաշնչի լեզվական չափանիշներով: Այն ունի հարուստ բառապաշար, ընդ որում ժամանակի լեզվական մտածողությունն արտացոլող բառային հարադրություններ, ոճեր ու արտահայտություններ, դարձվածային միավորներ, որոնք հիմնականում օգտագործվում են հետագա գրավոր աղբյուրներում, դառնում նոր գրական լեզվի կայուն միջոցներ: Նոր գրական հայերենը և՛ արևմտահայ, և՛ արևելահայ տարբերակներով անընդհատ սնվել է հին հայերենի (գրաբարի) ակունքներից, ընդ որում նաև Սուրբ Գրքի լեզվական հնարավորություններից:

բ) Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը մեզ է ավանդվել ձեռագիր և տպագիր վիճակով: Գրեթե յուրաքանչյուր ձեռագիր կամ տպագիր պարունակում է լեզվական ամեն կարգի տարբերություններ, առարկայական (օբյեկտիվ) և ոչ-առարկայական (սուբյեկտիվ) պատճառներով բացատրվող փոփոխություններ:

Ճիշտ է, Աստվածաշնչի, հատկապես Ավետարանների հայերեն թարգմանությունը մեզ է հասել ամենահին ձեռագրերով (887 թ., 851-922 թթ., նույնիսկ VII դ. ձեռագրեր), դրանց լեզվական անխաթարության պահպանման գործում մեծ դեր են ունեցել արտաքին կանոնականությունը և լեզվական նորման (ստանդարտ լեզու). միջնադարյան գրիչները պարտավորված են եղել ամենայն զգուշությամբ ու մանրակրկիտ մոտեցումով ընդօրինակելու բնագիրը, սակայն քննական բնագրի կազմումը կարող է լիովին հիմք հանդիսանալ հայոց լեզվի պատմության ուսումնասիրության համար:

Եվ քանի որ Աստվածաշունչը ներկայացնում է V դ. հայերենի ենթադրելի անաղարտ վիճակը, ուստի այն ելակետային նշանակություն կարող է ունենալ ոչ միայն այդ ժամանակի, այլև հետագա

ժամանակների հայերենի բառապաշարի և քերականական կառուցվածքի լիակատար ուսումնասիրման գործում:

Այսօր Աստվածաշնչի քննական բնագրի ամբողջական կազմումը կարող է նպաստել նաև պատմամշակութային շատ հարցերի լուծմանը՝ կապված տվյալ դեպքում մեզ հետաքրքրող հարցի՝ հին հայերենի գրական նորմայի և բարբառների գոյության և առնչության հետ:

գ) Թեև մինչև այժմ չունենք գրաբար Աստվածաշնչի ամբողջական քննական բնագիր, սակայն այդ ուղղությամբ վերջին տարիներին կատարվում է մեծ աշխատանք, որն արժանի է ամենայն ուշադրության: Արդեն լույս են տեսել կամ կազմված են Հին Կտակարանի Ծննդոց, Ելից, Ղևտացվոց, Թվոց, Երկրորդումն օրինաց, այլև Հռութի, Մակաբայեցվոց, Տասներկու մարգարեների, Սաղմոսաց, Եսայու և Դանիելի գրքերի, ինչպես նաև Ավետարանների քննական բնագրերը, որոնք մեկընդմիջտ վստահելի նյութ են մատուցում հայոց լեզվի պատմության ուսումնասիրության համար: Այն, ինչ արվում է այս ուղղությամբ, միանգամայն գոհացուցիչ է, քանի որ հրապարակ է հանվում մի քննական բնագիր, որը կազմվում է հայտնի բոլոր ձեռագրերի և տպագիր հրատարակությունների հիման վրա: Այն, անշուշտ, ավելի մոտ պիտի լինի նախօրինակին՝ V դ. թարգմանությանը: Այսպես, օրինակ, Ծննդոց գրքի քննական բնագիրը կազմված է 106 ձեռագրի տվյալների նկատառումով՝ դրանցից իբրև համեմատելի միավոր օգտագործելով 43-ը, այլև պատառիկները, տպագիրները և այլն («Գիրք ծննդոց»):

Հայ բանասիրությունը, մանավանդ հայերենագիտությունը մինչև հիմա բավարարվում էր Հովհ. Զոհրապյանի (Վենետիկ, 1805 թ.), Արս. Բագրատունու (Վենետիկ, 1860) կամ Կ. Պոլսի (1895 թ.) հրատարակած գրաբար Աստվածաշնչի լեզվական տվյալներով: Մինչդեռ արդեն կազմված գրքերի բնագրերն ընձեռում են

նոր փաստեր, տեղիք՝ «չափազանց հանդուգն» ուսումնասիրության համար:

դ) Աստվածաշնչի գրաբար բնագիրը հիմք է հանդիսացել հետագայում կատարված աշխարհաբար թարգմանությունների: Ավելին, այս վերջին կարգի թարգմանությունների դեպքում օգտագործվել են ուրիշ լեզուներով գոյություն ունեցած նոր թարգմանությունները, և դա միանգամայն հեշտ է ապացուցել:

Աշխարհաբար կամ նոր գրական հայերեն թարգմանությունները եղել են տարբեր հանգամանքներում, որոնցից են հատկապես թարգմանիչների լեզվական իմացությունը, եկեղեցական-դավանաբանական կողմնորոշումը, կրթական այս կամ այն օջախին կամ հաստատությանը պատկանելը և այլն: Դրանք կատարվել են տարբեր ժամանակներում, և այդ իսկ պատճառով հրապարակ են եկել իբրև նոր գրական հայերենի որևէ տարբերակով գրքեր: Ուստի դրանք պարունակում են բառապաշարի, քերականական կառուցվածքի զգալի տարբերություններ: Օրինակ՝ XIX դ. տպագրված աշխարհաբար թարգմանություն. «Իրասցնէ Տէրը յարութիւն ստաւ ու Միմոնիս երեսացաւ» (Ղուկ. ԻԴ, 34): Սա խորթին թարգմանություն է, և այդպես էլ տեղ է գտել վերջերս հրատարակված գրքում (1991 թ.): Այս նախադասությունը մեկ այլ թարգմանության մեջ (1896 թ.) հետևյալ կերպ է. «Արդարեւ Տէրը յարութիւն է առել, եւ երեսացել Միմոնիս»: Նախորդից ավելի հասկանալի է լեզվի կանոնիկության տեսանկյունից. կա սրա նոր հրատարակությունը (1989 թ.):

Իսկ Աթիլիասում տպագրված Նոր կտակարանում, որը «նոր աշխարհաբար (իմա՛ արևմտահայ – Վ.Հ.) թարգմանություն» է, բերված նախադասությունը «Իրասցէս որ Տէրը յարութիւն ստաւ եւ երեսաց Միմոնիս» ձևով է: Ինչպես դժվար չէ նկատել, այստեղ էլ լեզվի կանոնիկությունը գրական արևմտահայերենի կողմն է, այսինքն՝ տարբեր է գրական արևելահայերենից: Էջմիածնում (1969 թ. և 1994 թ.) լույս տեսած Նոր կտակարանում «Իսկասցէս յարեաւ Տէրը եւ երեսաց Միմոնիս»:

Նկատենք, որ խնդիրը աշխարհաբար (սոր գրական հայերեն) թարգմանության լեզվական կանոնարկումն է՝ լեզվի բոլոր բաղադրիչների նկատառումով:

Այդ խնդիրը կարելի է մանրամասնել հետևյալ կետերում:

1) Գրաբար Աստվածաշունչը պարունակում է առանձնահատուկ տերմիններ և տերմինային անվանումներ, որոնք պետք է կա՛մ ճիշտ թարգմանել, կա՛մ դրանք պահպանել նույնությամբ: Օրինակ՝ Ս. Գրքում գործածվել է *կայթ* «կողով՝ որոշակի չափի» բառը՝ մեկ անգամ. «Եւ աճապարեաց Արիգեա, եւ առ երկերիւր նկանակ, եւ երկուս ամանս գինոյ եւ հինգ ոչխար հասուցեալ, եւ հինգ արդու փոխնդոյ, եւ *կայթ* մի չամիչ, եւ պաղատիտս երկերիւր, եւ եղ ի վերայ իշոյ» (Ա Թագ. ԻԵ, 18) = Καὶ ἔσπέυσεν Αβιγαία καὶ ἔλαβεν διὰ κοσίους ἄρτους καὶ δύο ἄγγεῖα οἴνου καὶ πέντε πρόβατα πεπονημένα καὶ πέντε οἶφι ἀλφίτου καὶ γομὸρ ἕν σταφίδος καὶ διακοσίας παλάθας καὶ ἔθετο ἐπι τοὺς ὄνους (Bas. A, 25, 18):

Այս տերմինը (յոմոր «կայթ») երկու դեպքում դարձել է *հարիր որկոյզ (չամիչ)*, իսկ մեկ այլ դեպքում՝ *մէկ զամբիղ (չամիչ)*: Աճառյանը նշում է, որ *կայթ*-ը կարող է պարունակել 60 լիտր, որը ոչ *հարիր որկոյզ* է, ոչ էլ *մէկ զամբիղ*: Նախընտրելի կլիներ, եթե պահպանվեր այս *կայթ* եզակի վկայությամբ բառը, ինչպես վարվել են նոր թարգմանիչները *նկանակ*-ի դեպքում. բառը, որ Աճառյանը համարում է «անստույգ», հավանաբար բնիկ է, ունի հնդեվրոպական ծագում (տե՛ս ՀԱԲ, 2, էջ 505):

Այս առումով հարկ ենք համարում նշելու հետևյալը:

Հայ. *կայթ մի չամիչ* արտահայտությունը, որ առկա է Ս. Գրքի Զոհրապյան բնագրում, տողատակում ունի նշում. «Երբ. հարեր որկոյզ չամչոյ», այսինքն՝ եբրայական տարբերակում այլ ձևով է թարգմանված». ըստ այսմ էլ աշխարհաբար տարբեր թարգմանություններում հանդիպում են կա՛մ *հարիր որկոյզ (չամիչ)*, կա՛մ *մէկ զամբիղ (չամիչ)* կապակցությունները (տե՛ս Ս. Գիրք, 1896 թ. տպ. պատճենահանում, էջ 361, Բեյրութ, 1981, էջ 377, այլև Մոսկ-

վա, 1994, էջ 377, Էջմիածին, 1994, այլև 1999, էջ 351 և այլն), և միայն Էջմիածնի տպագրության մեջ *կայթ* բառը գործածված է «զամբիղ» իմաստով, որ բավականին մոտ է «կողով, աման» իմաստին (հմմտ. գրականում՝ *կթոց*, բրբռ.՝ *քթոց* և այլն):

Այնուհետև, հին հայերեն թարգմանության մեջ *աման*, *արդու*, *կայթ* և *պաղատիտ* բառերը դրված են հուն. ἄγγεῖα, οἶφι, γόμορ, σταφίδος ձևերի դիմաց, որոնցից միայն վերջինն է փոխառյալ, իսկ մյուսները թարգմանություն են: Ըստ այդմ հուն. γομὸρ ἕν σταφίδος կապակցությունը թարգմանված է գրաբար՝ *կայթ մի չամիչ*, աշխարհաբար՝ *հարիր որկոյզ չամիչ*, ինչպես նաև *մէկ զամբիղ չամիչ* կապակցություններով: Դժվար չէ նկատել, որ հին հայ. *կայթ* բառը չի անցել աշխարհաբարին: Ուստի այդ բառի գործածությունը սահմանափակվում է հին հայերենի իմաստաբանությամբ, իսկ նրա ակունքները պետք է որոնել նախագրային հայերենի մեջ:

Մենք հակված ենք մտածելու, որ հայ. *կայթ* «կողով, աման» բառն ունի հե. ծագում, որի համար հիմք են հանդիսանում ոչ միայն հիեր.- լուվ. gati- արմատը, այլև վերջինիս առնչվող հունարեն (եթե ոչ նախահունարեն կամ «պելասգերեն») ձևերը: Միաժամանակ նշենք, որ բառի խեթ.-լուվ. (անատոլ.) և հայ. հնչյունական համապատասխանությունից բացի խեթ.-լուվ. լեզուներից է բառը փոխառյալ դիտվում հունարենում, այն էլ իբրև հնագույն ժամանակների վերաբերող: Եվ ենթադրվում է, որ փոխառությունը կատարված է (նախա)հունարենի («պելասգերենի») միջնորդությամբ, ենթադրվում է նաև, որ (նախա)հուն. ἄγγεῖα «աման, զամբիղ», ինչպես նաև γομὸρ նույնպես թարգմանություն են, ընդ որում նույնական գծային Բ և Ա, այլ կերպ ասած՝ նախահունական կամ կրետամիսյական ka-ti ձևի հետ (Chadwick, Baumbach, 1963, 209. Гундуш, 1967, 16-17):

Վաղ շրջանի անատոլ. (խեթ.-լուվ.) լեզուներից հատկապես հիեր.-լուվ. gati- ձևից են փոխառյալ դիտվում (նախա)հուն. κηθις, γομορ և ἄγγεῖα ձևերը: Ավելին, որ (նախա)հուն. այդ ձևերն, իբրև

արմատի՝ հունարենի ներսում առաջացած տարբերակներ, փոխառություն են, հիմնավորվում է նրանով, որ «(նախա)հուն. բառում շնչեղ խուլ բաղաձայնը, ի հակադրություն խեթ.-լուվ. պարզ խուլի, ենթադրում է բաղաձայնների տեղաշարժի ենթարկված լեզվի միջնորդավորում:

Նկատենք, որ հետագայում Գ. Ջահուկյանը նույնպես, թերևս ոչ անկախ Լ. Գինդինի հայտնած տեսակետից, գտնում է, որ պելասգերենի «բաղաձայնական համակարգը, հայերենի նման, ենթարկվում է տեղաշարժի՝ հ.-ե. *bh, *dh, *gh > պելասգ. b, d, g, հ.-ե. *b, *d, *g > պելասգ. p, t, k, հ.-ե.*p, *t, *k > պելասգ. ph, th, kh (հազվադեպ բառերում շնչեղացում չի նկատվում, որ բացատրվում է փոխառության տարբեր շրջանների առկայությամբ)», որ ժամանակին ապացուցել էր Վ.Գեորգիևը (*Ջահուկյան*, 1970, 58-99):

Եվ տվյալ դեպքում ենթադրվում է, որ փոխատու - միջնորդ լեզու կարող է լինել ոչ այլ մեկը, քան «պելասգերենը». հմմտ. (նախա)հուն.- անատոլ. *gati- > (նախա)հուն. («պելասգ.») *kathi- կամ *khathi- > հուն. γομορ, ընդ որում (նախա)հուն. («պելասգ.») ձևերի համար ընդհանուր (անփոփոխակ) է դիտվում *k(h)athi- ձևը:

Եվ ըստ այդմ կարելի է սահմանել, որ առկա է անատ. (խեթ.-լուվ.) g > «պելասգ.» k, այլն անատ. t > պելասգ.» th և այլն համապատասխանություն:

Եթե քննարկելու լինենք հայ. կայթ և հիեր. լուվ. gati-, ինչպես նաև (նախա)հուն. *k(h)athi- (տարբերակներ՝ *kathi և *khathi-), կրետամին. ka-ti, հուն. κτήμα, κτιμένα ձևերը ամենանախնական իմաստներով, այսինքն՝ այն իմաստով, որ այդ բառերի համար ընդհանուր է եղել («առանձնացնել, բաժին հանել, ձեռք բերել, կուտակել և այլն»), ապա կարելի է դրանց առնչել նաև հուն. κτάομαι «ձեռք եմ բերում», κτήμα «ձեռքբերում, բաժին հանելը, հատկացում», միկ. ki-ti-me-na ko-to-na = κτιμένα κτοίνα «հող հատկացնելը, հողահատկացում», ինչպես նաև հնդկ. kṣātrnm, այլև kṣatriya

«(նախնական իմաստով) բաժին, հողաբաժին» բառերը (տե՛ս Դ.-Իվ., 1984. 788):

Այսպիսով, Աստվածաշնչի վկայությունն ունի կարևոր նշանակություն՝ կապված հատկապես նախագրային հայերենի պատմության ուսումնասիրության խնդրի հետ:

2) Գրաբար Աստվածաշնչի մեջ վեց անգամ գործածված է *փոխինդ* «բոված ցորենի՝ աղանձի այլուր» բառը, որն արդի հայերենում, հասկանալի պատճառներով, ունի բնատնտեսության ոլորտի նեղ գործածություն. «Առ...գարդու *փոխինդոյ* այս» (Ա Թագ. ԺԷ, 17), «Հինգ արդու *փոխինդոյ*» (Ա Թագ., ԻԵ, 18), «Ալիւր եւ *փոխինդ*» (Բ Թագ., ԺԷ, 28), «խառնեաց նմա Բոոս *փոխինդ*» (Հոթ. Բ, 14), «Արկջիք ... ի *փոխինդոյն* խառնեալս» (Հոթ. Բ, 16), «Ելից գնա *փոխինդոյ* եւ պաղատաւ» (Յուդ. Ժ, 5):

Աշխարհաբար կամ նոր գրական հայերեն թարգմանության մեջ (1896 թ., 1989 թ.) այդ բառը շատ է փոփոխված. «Առ այս մէկ արդու *հեղին*» (Ա Թագ. ԺԷ, 17), «հինգ գրիւ *հեղի* ցորեն» (Ա Թագ., ԻԵ, 18), «ալիւր եւ *հեղի*» (Բ Թագ., ԺԷ, 28), «Բոոսը ... նորան *հեղի* տուաւ» (Հոթ. Բ, 14), «Եւ *խուրձերից* էլ նորա համար գետինը ձգեցէք» (Հոթ. Բ, 16), «Ելից գնա *փոխինդոյ* եւ պաղատաւ» (Յուդ. Ժ, 5): Այստեղ *փոխինդ* բառը թարգմանված է կա՛մ *հեղի*, կա՛մ *խուրձ*, որն ամեննին ճիշտ չէ:

Իսկ արևելահայերեն նոր թարգմանության մեջ այն ունի հետևյալ պատկերը. «Այս մէկ արդուի *խարկած ցորենը* ... առ» (Ա Թագ. ԺԷ, 17), «Հինգ արդու *բոված ցորեն*» (Ա Թագ., ԻԵ, 18), «ալիւր, *փոխինդ*» (Բ Թագ., ԺԷ, 28), «Բոոսը նրա համար *փոխինձ* պատրաստեց» (Հոթ. Բ, 14), «Կուտակուած *խուրձերից* էլ նրա առաջը գցէք» (Հոթ. Բ, 16) և այլն:

Ինչպես նկատում ենք, այստեղ *փոխինդ* բառն անտեղի թարգմանված է երկու դեպքում *խարկած ցորեն* և *բոված ցորեն*, երկու դեպքում *փոխինձ* (կանոնական է՝ դ-ով. իմա՝ դ/ձ տարբերակում). էլ չենք խոսում այն մասին, որ սխալ *փոխինձ պատրաստել*,

փիս: *փոխինձ շաղել* (ինչպես որ ճիշտ չէ՝ *ճաշ պատրաստել* և այլն), այլ և կանոնական չեն՝ *խորձերից* (փիս: *խրձերից*), *փոխինձով* (փիս: *փոխինձով*) և այլն: Նման անճշտությունը հավանաբար նախկինում եղած թարգմանությունների ընդօրինակման հետևանք է:

3) Աստվածաշնչի աշխարհաբար կամ նոր գրական թարգմանություններում նկատում ենք շարահյուսական կառուցվածքի տարբերություններ, որոնք կարելի է բնորոշել իբրև ոչ կանոնական՝ պայմանավորված ոչ միայն նախորդ այս կամ այն թարգմանության մեջ եղած տվյալների սոսկական օգտագործման, այլև տարբեր թարգմանիչների արածը ընդհանուր խմբագրման հանգամանքով:

Անդրադառնանք սրանցից մի քանիսին:

Հայտնի է, որ գրաբարի բայի ժամանակներն ունեն իմաստային տարբերություն, այսինքն՝ իմաստով կարող են հանդես գալ ոչ միայն նույնությամբ, այլև փոխաբերաբար: Ս.Գրքի նորագույն թարգմանության մեջ ըստ պատշաճի պահպանվում է այս նրբագեղությունը, սակայն քիչ չեն նաև խախտումները: Օր.՝ «Եւ տիրեաց ի վերայ քաղաքաց նորա: Եւ չոգաւ մինչեւ յԵկբատանս, եւ կալաւ զաշտարակս նորա. եւ քանդէր եւ աւար հարկանէր զհրապարակս նորա. եւ զգարդ նորա դնէր ի նախատինս նորուն» (Յուդ. Ա, 14):

Նոր թարգմանության մեջ բոլոր ստորոգյալները, որոնք գրաբարում անցյալ կատարյալով և անկատարով են, դրված են նույն ժամանակով (անցյալ կատարյալով), որն այնքան էլ ճիշտ չէ, որովհետև անտեսված է ոճական այն հնարը, որը սովորաբար կոչվում է *ժամանակային պեսպիություն*. «Տիրեց նրանց քաղաքներին, հասաւ մինչեւ Եկբատան, գրաւեց նրա աշտարակները, քանդեց ու աւերեց նրա հրապարակները եւ նրա գեղեցկութիւնը նախատինք դարձրեց նրա համար» (Ա. տ.):

Թարգմանիչը հաշվի չի առել այն հանգամանքը, որ միջակետին հաջորդող նախադասություններն ինքնուրույն միավորներ են, որոնք ցույց են տալիս ոչ թե անցյալ կատարյալ, այլ առհասարակ անցյալ անկատար (սկարագրելի) գործողություն: Գրաբար բնագ-

րի ժամանակների տարբերակմամբ արտահայտված ոճական այդ նրբությունը նոր թարգմանության մեջ անտեսված է:

Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ անտեղի գործածվում են դերանվամբ արտահայտված ենթականեր: Օր.՝ «Ջի յամենայն օր խօսէին ընդ նմա, եւ նա ոչ լսէր նոցա. եւ ամբաստան եղեն զՄուրթքէ և առաջի Համանայ, եւ Մուրթքէ ոչ հնազանդեցաւ հրամանացն արքայի, քանզի հրեայ էր: Եւ յորժամ գիտաց Համան՝ եթէ ոչ պագանէ նմա երկիր, բարկացաւ յոյժ եւ խորհուրդ արար, զի կորուսցէ զհրեայսն որ ընդ թագաւորութեամբն Արտաշեսի արքայի իցեն» (Եսթ. Գ, 4-6):

Գրաբար բնագրում առկա է ընդամենը մեկ ենթակա՝ արտահայտված դերանվամբ, այնինչ նոր թարգմանության մեջ դրանք մի քանիսն են. «Թէեւ նրանք ամէն օր այդ մասին խօսում էին նրա հետ, բայց նա չէր լսում նրանց. նրանք Համանի առջեւ ամբաստանեցին Մուրթքէին, թէ Մուրթքէն չի հնազանդում արքայի հրամանին, որովհետեւ հրեայ է: Երբ Համանն իմացաւ, որ նա չի երկրպագում իրեն, շատ զայրացաւ. նա մտածեց, թէ ինչպէս կորստեան մատնի Արտաշէս արքայի թագաւորութեան տակ եղած հրեաներին» (Ա. տ.):

Թարգմանությունները երբեմն ծանրաբեռնված են ավելորդ, այսպէս կոչված, նախադասությունը պարզեցնող բառերով և բառակապակցություններով: Դրանք չկան գրաբար բնագրի մեջ, սակայն թարգմանիչներն ավելացնում են, որպէսզի, ինչպէս իրենք են հավանաբար մտածել, իրենց կազմած նախադասությունն ավելի հստակ ու որոշակի դառնա:

Կարծում ենք, որ շատ ավելի նախընտրելի կլինէր բնագրին հարազատ թարգմանությունը, բառի կամ կապակցության ճիշտ վերարտադրությունը նույնարժէք բառով կամ կապակցությամբ, քան թե վերջիններիս կցել այլ կարգի բառեր և կապակցություններ: Օր.՝ «Եւ ոչ օգուտ են արքայի եթէ թողուս դու զնոսա» (Եսթ. Գ, 8): Սովորական ստորադասական նախադասությունը թարգմանված է

ենթաստորադաս նախադասությամբ.«Արքայի համար օգուտ չէ, եթե դու թողնես, որ նրանք մնան» (Ա. տ.): Պատճառն այն է, որ գրաբար բնագրի թողուլ բայը թարգմանության մեջ մնացել է թողնել, իսկ եթե թարգմանվելը զիջել, թեկուզ թույլ տալ կամ սրանց մոտ մեկ այլ բայով, ապա հարկ չէր լինի ստորոգյալի լրացումն առանձին նախադասությամբ արտահայտելու:

2. Հայերեն թարգմանության նոր համաբարբառը

Իրականության մեջ խոսքը ներկայանում է երկու կերպ՝ բավոր և գրավոր, առաջինը վաղնջական, նույնիսկ անհիշելի ժամանակներից եկող իրողություն է, իսկ երկրորդը՝ համեմատաբար ուշ է առաջ գալիս, այլ կերպ ասած՝ մշակութային երևույթ է, մարդկային աննախադեպ ձեռքբերում (*Համբարձումյան, 2015*):

Բանագիտության (խոսքի մասին գիտության) մեջ գրավոր խոսքը կամ բնագիրը (տեքստը) մշտապես ուսումնասիրվել է տարբեր նպատակներով: Հին աշխարհում, օրինակ, գրավոր խոսքն առաջին հերթին հետապնդում էր պատարագի, ընծայաբերական (լիտուրգական) նպատակ, ավելի նոր ժամանակներում այն ստացավ ընդհանրական բնույթ:

Ժամանակակից գիտության մեջ խոսքի բնագրային քննությունը տեղի է ունենում երկու ճանապարհով՝ ավանդական, և այսպես կոչված՝ տեխնիկական կամ մեքենական (համակարգչային): Արդյունքը լինում է այն, որ բնագրագիտության մեջ առանձնացվում են (չակերտավոր ասած) «բնական» (մարդկային՝ չհաշված մյուս կենդանիների «լեզուները») և «ոչ բնական» (մեքենական կամ արհեստական) լեզուներ:

Ըստ այսմ համակարգչային բնագրի քննությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ «բնական» լեզվի արհեստականացում (արտաբնականացում). այն իրական լեզուն դարձնում է մեքենական՝ վերջինիս պարտադրելով իր «քմահաճությունները» և պահանջելով տեղեկացման անխափան դրսևորում:

Այսպես, հայտնի է, որ բնական լեզուների ուսումնասիրությունը ևս եղել է վերջին ժամանակների լեզվաբանության (եթե ոչ նաև այլ գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, կիրքեռնետիկայի և այլն) անմիջական ուշադրության առարկան՝ ամենևին ի գորու չլինելով դույզն-ինչ չափով խճողելու կամ խափանելու բնական լեզուների ավանդական ուսումնասիրության ոլորտը, նրանում շարունակվող աշխատանքը:

Այդ ուշադրությունը առավել մեծացավ, օրինակ, անցյալ դարի կեսերին (1950-ական թթ.), երբ մեծ զարկ ստացավ, այսպես կոչված, մեքենական թարգմանության խնդիրը: Վերջինիս լուծման առումով հումանիտար, սկզբնական շրջանում առավելապես տեխնիկական գիտությունների մեջ եղան թե՛ մերժողական և թե՛ հեռանկար կանխատեսող առաջարկություններ: Դրանք մեծ մասամբ ունեին լավատեսական բնույթ, որ ելք էր որոնում տեսական հիմնավորումների մեջ: Այսպես, Ամերիկյան լեզվաբանական դպրոցի նկարագրական մոտեցման մեջ հսկայական քայլերով առաջ գնացող տեքստի կառուցվածքով զբաղվող գիտությունը վերջին հաշվով անցում կատարեց այդ նկարագրականից դեպի փոխակերպականը, այնուհետև ձգտում ունեցավ ձևային-փոխակերպականը որևէ վկայակոչմամբ հիմնավորել մտային (բովանդակային) վերլուծությամբ, դրա լավագույն օրինակը, ինչպես գիտենք, Ն. Խոմսկու լեզվաբանական աշխատանքն է (*Chomsky, 1957*, նույնը՝ *Хомский, 1972*, նաև *Хомский, 1972*):

Այդպես նաև ժամանակին Հայաստանում գիտական լայն աշխատանք ծավալվեց հաշվողական տեխնիկայի բնագավառում, որտեղ հնարավորություն բացվեց թարգմանական գործի համար՝ հաշվիչ մեքենաների ձևով: Այսուհանդերձ, լավատեսականից, հեռանկարի կանխատեսումից բացի եղան նաև սթափության մեջ պահող կարծիքներ:

«Ոչ բնական» լեզուների մի տարբերակին («հաշվողական մեքենային») ավելանում են այլ (էլեկտրոնային, մասնավորապես

համակարգչային կամ համացանցային) տարբերակներ, որոնք (թերևս և կողմ ունենալով հանդերձ) տեղիք են տալիս նոր քննարկումների: Իսկ այդ ամենը, վերջիվերջո, բախվում է բնական լեզվով զբաղվող գիտությանը՝ դասական լեզվաբանությանը, նոր տերմինով ասած՝ բնագրի վերլուծության բնագավառին, որն ունի ոչ միայն իր բուն առարկան՝ լեզուն (իբրև բնագիր՝ «տեքստ»), այլև վերջինիս հիմունքով (հիման վրա) երևան եկած մյուս «լեզուները» (հաշվողական, համակարգչային, համացանցային և այլն): Թե՛ մեկի և թե՛ մյուսի դրսևորումն իր վերջակետի մեջ բնագիր («տեքստ») է, որ, այլ բան չէ, քան գերհյուսվածք՝ հնչյունական, բառային, ձևայնության և շարության կառուցումների համեմատությամբ և համարումով:

Ոչ բնական տեքստը, ըստ այդմ, ոչ միայն ինքնին լեզու է, այլև լեզվի տեխնիկական դրսևորում: Այն սերվում է իր բնական վիճակից՝ բնական լեզվից՝ իբրև «անբնական» տեքստի: Ճանաչողության առումով բնագիրը (տեքստը) բնորոշվում է իմանենտ (ներքին՝ ծանրաբեռնում) և ռեպրեզենտատիվ (արտաքին՝ վերադասավորում) կողմերով: Այս առումով այն ենթադրում է մի կողմից՝ հոգեկան-լեզվական, մյուս կողմից՝ էլեկտրոնային-լեզվական հաղորդակցում:

Ժամանակին հայերենը գրի է առնվում ոչ միայն Աստվածաշնչի և հարակից գրականության թարգմանության ընթացքում, այլև ինքնուրույն գրականության ստեղծումով: Մեզ հասած գրավոր աղբյուրների տվյալները հնարավորություն են ընձեռում պատկերացում ունենալու հայերենի մոտիկ անցյալի պատմության վերաբերյալ: Գրական հուշարձանները ժամանակի ընթացքում, բնականաբար, կրել են լեզվական տարբեր բնույթի փոփոխություններ՝ կապված գլխավորապես արտաքին մի շարք հանգամանքների հետ, ընդ որում, այսպես կոչված, ծագումնային (գենետիկական) «բառարանի» հետ:

Հայոց գրավոր լեզվի պատմությունը հիմնվում է մեզ հասած գրական հուշարձանների տվյալների վրա, որոնք ժամանակի ընթացքում կրել են արտաքին և ներքին հանգամանքներով պայմանավորված փոփոխություններ: Այդ հանգամանքներից են, օրինակ, ժամանակի մտայնությունը, գրչության կենտրոնների լեզվական և իմացական հնարավորությունները, ձեռագիրն արտագողների («գրիչների») խոսքային կարողությունը, գրչության կենտրոնին բնորոշ ավանդույթը և այլն: Ըստ այդմ՝ տեղիք է տրվել լեզվական ակնհայտ շեղումների և այլաձևումների:

Նման փոփոխությունները պարզելու և տեղ գտած տարբերությունները նկարագրելու գործում ամենից առաջ մեծ կարևորություն ունի Աստվածաշնչի հայերեն թարգմանության բնագիրը: Վերջինիս նշանակությունը բացառիկ է ոչ միայն հին գրական հայերենի ուսումնասիրության տեսանկյունից, այլև վերջինիս՝ հունարենի և մյուս լեզուների հետ բնագրային համեմատության համար: Աստվածաշնչի հայերեն ձեռագրերի հիման վրա քննական բնագրի կազմումն այսօր ևս մնում է խիստ անհրաժեշտ, տեխնիկական միջոցներով: Նկատենք, որ այդ խնդիրը մտահոգել է բնագրի լեզվական, առհասարակ բանասիրական քննությամբ զբաղված շատ ուսումնասիրողների՝ գրեթե բոլոր ժամանակներում: Այս խնդիրը, ինչպես վերը նշել ենք, լուծված չէ նաև նոր ժամանակներում, երբ կան Աստվածաշնչի արդի հայերեն զգալի թվով թարգմանություններ, որոնք կատարվել են վերջին ժամանակներս՝ մի քանի տասնամյակ առաջ, հրատարակվել են առանձին գրքերով կամ հատվածաբար, օգտագործվել գիտական տարբեր բնույթի աշխատանքներում:

Աստվածաշնչի գրաբար բնագիրը մեծ կարևորություն ունի հին հայերենի բառապաշարի, ինչպես նաև քերականական կառուցվածքի պատմության համար: Մինչ այդ կազմված համաբարբառը, լինելով ոչ համակարգչային («թղթային») աշխատանքի արդյունք, գերծ չէ վրիպումներից, բացթողումներից, մեջբերումներից:

րի անճշտություններից և այլն: Այդպիսին է, օրինակ, Թադ. վրդ. Աստվածատուրյանի կազմած «Համաբարբառը» (Երուսաղեմ, 1895):

Վերջերս լույս տեսած «Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի» գիրքը քարտային-հավաքչական, նյութի դասակարգման և հարակից աշխատանքներն իրականացրել է համակարգչային («ոչ-թղթային») ձևով, ուստի թերացումները և սխալները հասցված են նվազագույնի:

Ըստ այսմ՝ նկատենք, որ եթե Թադ. վրդ. Աստվածատուրյանի կազմած Համաբարբառի, ինչպես նաև «Նոր հայկազյան բառարան»-ի հիման վրա նախկինում կատարված լեզվական ամեն մի քննություն, ինչ խոսք, չէր կարելի համարել գրական հայերենի բառապաշարի վերաբերյալ սպառնիչ աշխատանք, ապա այս նոր Համաբարբառը գրեթե լիովին տալիս է հնարավորություն ավելի հիմնավոր ուսումնասիրության՝ ոչ միայն ճշգրտության, այլև վիճակագրության առումով:

Այդուհանդերձ, գրաբար քննական բնագրի կազմումը մնում է օրակարգում. այն հնարավորություն կտար նաև ըստ ամենայնի քննելու հին գրական հայերենի շարահյուսական կառուցվածքը, մի էական խնդիր, որ հայերենագիտության մեջ, ի տարբերություն բառապաշարի, ձևաբանական և հնչյունական իրողությունների, մնում է ոչ ըստ ամենայնի ուսումնասիրված (թեև կան առանձին աշխատանքներ):

Աստվածաշնչի ամբողջական քննական բնագրի կազմման ուղղությամբ, այնուամենայնիվ, վերջին տարիներին կատարվել է որոշակի աշխատանք, որը, ինչ խոսք, բանասիրական-բնագրագիտական անդերգանահատելի ձեռքբերում է: Այսպես, օրինակ, «Հայ հնագույն թարգմանությունների մատենաշար» ընդհանուր խորագրով լույս են տեսել Հին կտակարանի առանձին գրքերի քննական բնագրերը, որոնք վստահելի նյութ են տրամադրում հայոց լեզվի

պատմությանը վերաբերող զանազան հարցերի քննարկման համար:

Հայ մատենագիրների երկերի թվայնացումը, որն իրականացվում է վերջին ժամանակներս, առանձին մատենաշարով դրանց լույս ընծայումը, կարելի է ասել, լայն հնարավորություն են ստեղծում հայոց լեզվի պատմության վերաբերյալ նոր աշխատանքների ձեռնամուխ լինելու համար: Նման մի հնարավորություն է նաև Աստվածաշնչի նոր Համաբարբառը, որի ավելի վստահելի տվյալների նկատառումով էլ փորձ ենք անում քննելու նրա բառապաշարի վերաբերյալ առանձին հարցեր, ինչպես նաև անդրադառնալու նրանում առկա բառային տարբերակների («երկագրությունների») դրսևորումներին:

Լեզվի պատմության փաստերը ցույց են տալիս, որ հին և հետագա դարերի գրական լեզուները հիմնականում մշակվել են Աստվածաշնչի լեզվական չափանիշներով, ստեղծվում է մի ստանդարտ լեզու՝ «դասական» անվանումով:

Ավելին, երբ խնդիր է առաջ եկել գրաբարի կամ աշխարհաբարի՝ իբրև նոր գրական լեզվի, ընտրության հարցում («գրապաշար»), հարկ է եղել գրաբարի լավագույն տվյալները ներառել աշխարհաբարի՝ Ս. Գրքի լեզվի օրինակով: Եվ հատկանշական է նաև այն, որ գրաբարը, որպես ոչ կենդանի գրական լեզու, շարունակում է գործածվել միջին հայերենին, այլև վաղ և երկնյուղ աշխարհաբարին զուգահեռ (մինչև XX դ. 10-ական թթ.) և նման պայմաններում իր լավագույն իրակություններն է հաղորդում նոր գրական հայերենին: Վերջինիս արևելահայ և արևմտահայ տարբերակները զարգացման ընթացքում ևս շարունակում են անըդիստ սնվել հին գրականի ակունքներից, առավել չափով՝ Աստվածաշնչի լեզվական հնարավորություններից:

Հին գրական հայերենի առավել մանրամասն ուսումնասիրման լավագույն տեղեկատու է վերջերս լույս տեսած գրաբար Աստ-

վածաշնչի Նոր համաբարառը («Համաբարառ գրաբար Աստվածաշնչի», Ս. Էջմիածին, 2012, 1908 էջ):

Մինչ այս Համաբարառի կազմության բնագրային-տեխնիկական կողմին անդրադառնալը մի քանի խոսք այն մասին, թե մեզանում առհասարակ ինչպիսին է եղել համաբարառային, ընդ որում աստվածաշնչյան համաբարառային գրականության ստեղծումը՝ երևան եկած ձեռագիր կամ տպագիր տեսքով:

Գրաբար մատենագրության համաբարառները նույնպես ունեն իրենց ստեղծման պատմությունը, որը մի տեսակ սերտ առնչություն ունի առհասարակ հայ գրավոր մշակույթի պատմության հետ: Ձեռագիր մատյանների ստեղծումը մեզանում եղել է և շարունակում է մնալ բնագրային աշխատանքի ազնվագույն բնագավառ՝ իրեն բնորոշ նվիրումով, անխափան աշխատանքի հոգածությամբ:

Առաձնապես պետք է նշել, որ այս նոր Համաբարառը, իրոք, հայ նոր բառարանագրական մի կարևոր ձեռքբերում է, երախտագետ հոգածությամբ ի լույս հանված գիրք, որ ըստ ամենայնի հարկավոր է ոչ միայն (ինչպես ասվում է) «ի պետս հոգեւորականաց և բանասիրաց Սուրբ Գրոց վասն պարապմանց», այլև առհասարակ նույնի ընթերցմանն օժանդակ: Մեր լեզվի ամենահին վիճակի արձանագիր Սուրբ Գրքի բառապաշարի քննությամբ զբաղվողի համար, կարելի է ասել, բացառիկ հնարավորություն է այս Համաբարառը:

Ամեն մի բառարան տվյալ լեզվի բառապաշարի շտեմարան է, որ ունի լայն տեղեկատվական հնարավորություն: Բառարանի մի տեսակն է համաբարառը, որ լինում է առանձին կամ ընդհանրական: Ունենք հոգևոր գրականության բազմապիսի համաբարառներ: Դրանք բնորոշվում են մի շարք հատկանիշներով՝ ըստ ժամանակի, գրական երկի բառապաշարի ընդգրկման, տպագրության որակի, ծավալի, ինքնուրույն կամ թարգմանական գրականությանը վերաբերող և այլն:

Ըստ բառային միավորի, իբրև գլխաբառի, ներկայացման հատկանիշի՝ համաբարառները լինում են երկու տեսակ՝ բառային-քերականական և բնագրային. Վերջինս բառարանի կատարյալ տեսակն է, որը պահանջում է լայն ծավալի, նույնիսկ տքնջան աշխատանք. նույնպիսի աշխատանքի արդյունք է նաև հիշյալ նոր Համաբարառը:

Նկատենք, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության բնագրի համաբարառի ստեղծումը մեզանում եղել է համեմատաբար ուշ: Նախապես կազմվել են Ավետարանների սեղմ, ձեռագիր «համաբարառներ», որոնք երբեմն թողնում են բառացանկերի տպավորություն:

Համաբարառներ երևան են գալիս ոչ միայն համեմատաբար վաղ անցյալում (օրինակ՝ Ղազար Բաբերդացու, Ոսկան Երևանցու գրչագիր Ավետարանների վերջում դրված ցանկեր, որոնք ունեն համաբարառի արժեք, գրված 1610-1620-ական թթ.), այլև հետագայում (հմմտ. «Ցանկ սրբոց չորից ատերանչաց», Շամսի, 1709 թ., ձեռագիր, կազմող՝ Անանիա Էրզրումեցի Ալավերդյան, «Ցանկ Գիրք Նոր Կտակարանին», Կ. Պոլիս, 1753, տպագիր, կազմող՝ Բաղդասար Դպիր և այլն):

Բուն իմաստով համաբարառներ ստեղծվում են 1650-ական թթ. հետո, երբ հայ տպագրիչ Ոսկան Երևանցին հրատարակում է հայերեն Աստվածաշունչը՝ վերջում դնելով Նոր կտակարանի համաբարառը:

Հետագայում ևս կազմվում են գրաբար համաբարառներ, ընդ որում ավելի ծավալուն, Սուրբ Գրքի բոլոր մասերի ընդգրկմամբ: Համաբարառների ստեղծումն ավելի մեծ նշանակություն է ունենում հաջորդ տասնամյակներին: XVIII դ. կեսերից ունենք համաբարառներ, որոնք ինքնուրույն են թե՛ ընդգրկման և թե՛ կազմման սկզբունքների տեսանկյունից:

Հայերեն սուրբգրային համաբարառի ստեղծման բնագավառում աննախադեպ երևույթ է եղել Թադևոս վրդ. Աստվածա-

տուրյանի կազմած «Համաբարբառ Ատուածաշունչ Գրոց Հին եւ Նորկտարակարանաց» (Երուսաղէմ, 1895 թ.) գիրքը, որը տասնամյակներ շարունակ ծառայում էր բանասիրությանը՝ իբրև գրեթէ ամենօրյա գործածության գիրք (ավելի մանրամասն տե՛ս *Թոմունյան*, 2016):

Հետագայում նույնպես կազմվել են համաբարբառներ, մանավանդ V դ. մատենագիրների, XIII դ. փիլիսոփա Գրիգոր Տաթևացու, հայ նոր գրականությունից Ավ. Իսահակյանի և ուրիշների երկերի և այլն:

Այժմ ուսումնասիրողի սեղանին է դրվում նշածս Համաբարբառը, որն ունի զգալի տարբերություններ՝ կապված նախկինում լույս տեսածի ինչ-ինչ բացթողումների լրացման, թերացումների հաղթահարման, որոշակի ճշգրտումների անցկացման, բնագրային վկայությունների հստակեցման հետ:

Գրքի «Առաջաբան»-ում (ընդամենը՝ 2 էջ) կան հստակ և սեղմ ցուցումներ: Համաբարբառն ընդգրկում է Աստվածաշնչի ամբողջ բառապաշարի մեծ մասը, իսկ վերջինիս մի մասի վերաբերյալ արվում է որոշակի վերապահություն. «բառացանկից դուրս են թողնվել միայն տեղանունները, անձնանունները, որևէ տարածքային պատկանելություն ցույց տվող, ինչպես նաև ազգերի, ժողովուրդների, ցեղերի, տոհմերի ներկայացուցիչ նշանակող բառերը»՝ նպատակ ունենալով դրանք ամփոփել առանձին հատորի մեջ (էջ 9):

Այս Համաբարբառի մի մեծ արժանիք է այն, որ յուրաքանչյուր գլխաբառին կից նշվում է նրա՝ բնագրում ունեցած գործածության քանակը. սա շատ կարևոր է հայերենի ընդհանուր բառապաշարի վիճակագրական վերլուծության տեսանկյունից:

Ճիշտ են վարվել կազմողները, որ «համաբարբառում առանց սուրբգրային մեջբերումների են ներկայացվել շաղկապները, նախադրությունները և նախդիրները, դերանունները, քերականական տարբեր մասնիկներ», այլև որոշ մակբայներ: Այդուհանդերձ, վիճելի կամ տարակուսելի է նախդիրների և նախադրությունների գոր-

ծածությանը վերաբերող մեջբերումների բացառումը, որովհետև դրանցում կան դեպքեր, որ հետաքրքիր են իմաստային, ինչպես նաև ոճական տարբերությունների տեսանկյունից:

Աստվածաշնչի նոր Համաբարբառում բառահոդվածի գլխաբառին կից տրվում է նրա գործածության հաճախականության ցուցիչ: Ըստ այդմ, պարզվում է, որ (և դա բնական է) ամենամեծ հաճախականությունն ունի *տէր* բառը՝ գործածված ուղիղ և թեք ձևերով (8907 անգամ), այնուհետև՝ *առ* (սխդր. 4208), *սսել* (8650), *ամենայն* (7391), *Աստուած* (4737), *առնել* (4438), *այն* (2895), այս «սա» (2673), *այր* «մարդ» (2454), *այլ* (2308), *ժողովուրդ* (2242), *անույ* (2058) և այլն՝ չհաշված բովանդակային առումով վերբնագրային միավորները՝ *դու* (10179), *եւ* (75039), *զի* (8001), *ընդ* (6465), *ի* (31916), *իր*(8244), *նսս*(25293), *ոչ* (8867), *որ* (12788):

Ըստ այսմ ներկայացնում ենք հետևյալ հաշվարկը՝ նվազական բաշխումով:

ա) 1000-ից ավելի անգամ գործածված է 60 բառ (բերում ենք ամբողջությամբ). *ազգ, անդ, անձն, անուն, առ (նխդ.)*, *առաջի, արքայ, բազում, բան //Բանն, գալ, գիտել, գնալ, դնել, եթէ, ելանել, եղբայր, երեսք, երթալ, երկիր, եւ, զի, ընդ, ըստ, թագաւոր, ժողովուրդ, ի, իբրեւ, ինչ, իսկ, իւր, լինել, լսել, խօսիլ, ծառայ, կալ «լինել, կանգնել, մնալ», կին, հայր // Հայր, ձեռն, ձեք, մարդ, մեր, մեք, մէջ, մի «մեկ», մի՛ «արգելական մասնիկ, ոչ», մտանել, նսս, ոմն, ոչ, որ, որդի//Որդի, ունել, սիրտ, վասն, տալ, տեսանել, տէր, տուն, քաղաք, օր:*

բ) 500-ից ավելի անգամ գործածված է 78 բառ (բերում ենք լրիվ). *ակն «աչք», ամ, այդ, անկանել, ապա, առաքել, արկանել, բարի, բերան, բնակել, գլուխ, գործ, գործել, գտանել, գրել, դասնալ, դուռն, ես //ինքս, երեք/երրորդ, երկինք, երկու/երկրորդ, եւս, զօր, զօրութիւն, թշնամի, թողույ, ժամանակ, ժողովել, ինքն, իշխան, լեսուն, ինդրել, ծնանել, կամել, կարել «կարողանալ», կողմն, կոչել, հանել, հասանել, հարիւր //հարել/ հարիւրորդ, հարկանել, հուր,*

ձայն, ճանասպարհ, մահ, մատուցանել, մարգարէ, մարմին, մեծ, մեղք, մեռանել, յառնել, յաիտեան, յորժամ, նոյն, նստել, շինել, ո, որպէս, ուտել, չար, պահել, պատասխանի, պատերազմ, պատմել ջուր, սա, սեղան, սուրբ, սպանանել, սրբութիւն, տեղի, փառք, քահանայ, քանզի, օրէն(ք), օրհնել, օրհնութիւն:

գ) 100-ից ավելի անգամ գործածված է 467 բառ (բերում ենք մասամբ). *ագարակ, աթոռ, ածել, սկանջ, ահ, ահա, ահաւասիկ, աղախին, աղաղակել, աղաչել, աղքատ, աղօթք, ամաչել, ամբարնայ, ամբարիշտ // անպարիշտ, ամենակալ // Ամենակալ, ամենեքին // ամենեքեան, ամիս, ամուր, ամուս, ամօթ, այգի, այժմ, այլազգի, այտուհեռուն, այսօր, այրել, անասպատ, անասուն, անարատ, անարգել «անպատվել», անգամ, անդէն, անդր, անդրանիկ, անդրէն, անիծանել, անիրաւութիւն, անուանել, անտառ, անտի, անցանել, անօթ, անօրէն, անօրէնութիւն, աշակերտ, աշխարհ, սպականել, սպականութիւն, սպաքէն, սպրել, սպրեցուցանել, սջ, առակ, առանց, առաջ, առաջին // առաջներորդ, առաջնորդ, առաւել, առաւօտ, ատել, արգելուլ // արգելանել, արդար, արդարութիւն, արեւելք և այլն:*

դ) 50-ից ավելի անգամ գործածված բառ (բերում ենք մասամբ). *ազդ (առնել լինել), սկն «քար», ահաւադիկ, ահեակ, աղաղակ, աղեղն, աղջիկ, ամբարշտութիւն // անպարշտութիւն, ամբարտաւան, ամբարտաւանութիւն, ամբոխ, ամենեին, ամէն «ճշմարիտ», այծ, այր «անձավ», այց, անարգանք, անդամ, անզգամ, անէծք, անիրաւ, անկիւն, անկողին, անհնարին, անձրեւ, անմիտ, անոյշ, անսալ, անցուցանել, անցք, անօրինել, աշտարակ, սպարանք, առանձին // առանձինն, առաջնորդել, առաքեալ, սասող, ատեան, ատելի, արած, արածել, արարած, արքենայ, արքուցանել, արդարանայ, արդարեւ, արդիւնք, արեւ և այլն:*

ե) Եզակի (մեկ անգամ) գործածված է 2332 բառ (բերում ենք մասամբ). *ա, ազահագոյն, ազանովթ, ազուռ, ազատօրէն, ազգակից, ազդարարել, ազդիսանայ, աթոռակցութիւն, պէտր, փոքրժելի, ածուխ, սկանայանայ, սկանի, սկանողիք, սկնագործ, սկնակա-*

պիճք, սկնառու, սկնունել, սկումք, աղագ, աղախնութիւն, աղածրի, աղարտ, աղանեակ, աղբեղէն, աղեկեր, աղեղնատրութիւն, աղի, աղիւսադուն, աղիսաթիւ, աղիսարակութիւն, աղիւսեայ, աղիսաղիւել, աղիսամաղիսեայ, աղճատել, աղճկորդի, աղմկել, աղմկութիւն, աղումամագ, աղտաղտին, աղտիւր, աղօտ, աճեցուն, ամանայ, ամաչեցուցանել, ամասարակովթ, ամատտարա, ամարանոց, ամարաստուն, ամբար, ամբարիաւաճել, ամբարիաւաճութիւն, ամբարտաւանատեաց, ամեթովս, ամեհի, ամենաբեր, ամենագէտ, ամենակերակրիչ, ամենահայեաց, ամենաշիջոյց, ամէնն, անկագոյն, անկարշտագոյն, անկրուպ, ամաստր, ամրախիտ, ամրածածուկ, ամրասպահ, ամօթածու, ամօթանք, ամօթոյք, այբ, այգաւէտ, այրրէնածին, այլագոյն, այլակերպութիւն, այլամիտ, այլայլախառն, այլայլել, այլեայլ, այլուտ, այծեայ, այծենի, այծքաղ, այլանութիւն, այսաբեկ, այսքանի, այտնուլ, այտումն, այրասէր, անագեայ, անալուրթ, անամօթ, անամօթել, անայր, անասպականացու, անամնասնոյց, անաստուած, անարգաստոր, անարգու, անարդար, անարծաթասէր, անարմատ, անբարբառ, անբաց, անբժշկութիւն, անբնական, անբուն, անգան, անգիր, անդանդաղ, անդարձ, անդորրութիւն, անդրանկացուցանել, աներկաթ, աներկեան, անզգամեցուցանել, անզգայել, անզգայութիւն, անզոհ, անընդել, անթանցիկ, անժպիտ, անլոյծ, անխաբ, անխայութիւն, անխառն, անխարդախ, անինամ, անիւտ, անծամ, անկասպուտ, անկար, անկարծ, անկանորդք, անկեաց, անկեղծատր, անկերպարան, անկողնակից, անկոտոր, անկուշել, անկրիւ, անհաղորդական և այլն:

«Աստվածաշնչի» համաբարբառի օգնությամբ հնարավոր է ավելի ստույգ քննություն անցկացնել V դ. հնարավոր բարբառային երևույթների վերաբերյալ: Նման քննության մի օրինակ է Գ. Ջահուկյանի այն աշխատությունը, որում բավականին սեղմ վերլուծությամբ ներկայացվում են V-XV և XVII դդ. համանապատասխան բնագրերի մեջ տեղ գտած բարբառային և խոսակցական ձևերը (Ջահուկյան, 1997): Հայտնի է, որ «Աստվածաշնչում», ինչպես նաև

գրական այլ հուշարձաններում հանդիպող այդ կարգի միավորները հայերենագիտության մեջ ընդունված են իբրև գրչագրական տարբերություններ, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ բառագործածության տարբերակներ՝ զուգահեռ ձևեր, գրչագրական վրիպումներ, որոնք ամրագրվել են, և դրանք հետագայում հաճախ բերվում են այս կամ այն կարգի խմբավորմամբ, այլ նաև ցանկերի ձևով¹:

Կարելի է մտածել, որ դրանց քննությունը ներկայումս հնարավորություն կտա դատելու ոչ միայն ժամանակի բարբառների, այլև թարգմանիչների և խմբագրող անձերի խոսակցական (եթե ոչ՝ նաև բարբառային) պատկանելության մասին. նման հարցադրումը, թերևս, նոր է:

Կան առարկելի տեղիներ. թերևս ճիշտ չէ բնագրում գործածված *անունձիոյ* տեռական հոլովի ձևից կազմել *անունձի* գլխաբառը և տալ իբրև առանձին բառահոդված, այն էլ միակ օրինակով (Գ Մակ., 3, 9), այն պիտի լիներ *այրունձի* գլխաբառի տակ (բնագրում հանդիպում է 6 անգամ՝ ուղղական հոլովով): Մենք ձեռնպահ ենք մնում բառարանի բերվող նախադասությունների մեջ գլխաբառն այլ տառատեսակով դնելուն, քանի որ նախընտրելին պիտի լիներ այն *շղայով* տալը:

«Աստվածաշնչի» նոր համաբարբառը, այնուամենայնիվ, զերծ չէ թերացումներից, կան տպագրական-շարվածքի վրիպումներ, որոնք չեն ստվերում նրա հիմնականն ու կարևորը: Մի նկատառում ևս, դա այն է, որ հայ մատենագրության այդ սկզբնական թարգմանական աղբյուրի քննական ամբողջական բնագրի բացակայության պայմաններում, կարծում ենք, դեռևս վաղ է վերջնական և ավարտուն պատկերացում ունենալ պատմական շրջանի լեզվի

բառապաշարի, ինչպես նաև մյուս իրակությունների ստուգության և անխափան ժառանգված լինելու վերաբերյալ: Այս դեպքում որոշակի դեր ունեն լեզվի տարածամանակյա քննության սկզբունքների գործադրումը, ինչպես նաև հավանական վերականգնումների ողջ զինանոցը: Իսկ դա հնարավոր է, քանի որ «Աստվածաշունչ» մատյանի թարգմանության քննական բնագիրը յուրովի պարունակում է նախապատմական շրջանի հայերենը, որ գրի է առնվում պատմական ժամանակի մտածողության պայմաններում: Այդ բնագիրը, պատկերավոր ասած, կամուրջ է հայերենի հին ու իր համեմատությամբ նոր լեզվավճակների միջև:

Հարկ է նշել, որ այս Համաբարբառը, իրոք, հայ նոր բառարանագրական մի մեծ ձեռքբերում է, երախտագետ հոգածությամբ լույս տեսած գիրք, որ ըստ ամենայնի հարկավոր է առհասարակ Ս. Գրքի ընթերցմանն օգնող, իսկ հայ գրավոր լեզվի հին վիճակի բառապաշարի քննությամբ զբաղվողի համար այն լավ հնարավորություն է:

Կազմողների արածն արժանի է դրվատանքի նաև լեզվական այլ հանգամանքների առումով: Ճիշտ են վարվել, երբ առանձին բառահոդված չեն հատկացրել հարադիր բայերին, դարձվածային միավորներին, որովհետև դրանք մշտապես նկատելի են բաղադրության հիմնական բաղադրիչի բերումով, հակառակ դեպքում՝ տեղիք էր տրվելու կրկնությունների, հիմնականի և հարակիցի առանձնացման անհստակության և այլն:

Սույն համաբարբառը գտնելու է ավելի լայն ընդունելություն, ծառայելու է իր բուն նպատակին՝ ընձեռնել ճանաչողական, մասնավորաբար բանասիրական աշխատանքի լայն հնարավորություն:

Եզրակացություններ

1. «Աստվածաշունչ» գրքի քննական բնագրի կազմումը մեծ կարևորություն ունի արդի հայագիտության, ընդ որում հին հայերե-

¹ Նման մի ցանկ («Հայերեն բառերի տարբեր գրչություններ») կազմել է Ա. Մ. Սուքիասյանը՝ «պրպտելով ամբողջ Արմատական բառարանի 6 հատորները, քաղել է բոլոր հայերեն բառերի գրչության տարբերությունները՝ այբուբենական կարգով» (տե՛ս *Անարյան*, 1971, 773-824):

նին առնչվող շատ հարցերի առավել ճշգրիտ ձևով անդրադառնալու գործում:

2. Հայերեն թարգմանության նախօրինակ բնագրի լեզվի քննությունը, որ եղել է ուսումնասիրությունների առանձին բնագավառ, ենթադրում է շարունակություն նոր պայմաններում:

3. Մինչև այժմ եղած և նոր համաբարբառների գոյությունը նպաստում են նախօրինակ բնագրի լեզվի, հատկապես բառապաշարի քննությանն ըստ ամենայնի ձեռնամուխ լինելուն:

4. Ս. Գրքի բնագրի բառերի և քերականական ձևերի շատ իրողություններ, որքան էլ սկզբնապես ձգտել են դարձնել միօրինակ, այնուամենայնիվ դրանք հաճախ ներկայանում են տարբերակներով:

5. Բառերի և քերականական ձևերի «երկագրությունները» փաստեր են հին լեզվի («գրաբարի») գրական նորմայի (ինվարիանտ ձևերի) և նորմայից կատարված շեղումների (վարիանտների) վերաբերյալ:

Երկագրությունը «Աստվածաշունչ» գրքի թարգմանության բնագրում

Ներածություն

Երկագրություն ընդհանուր անվանումով նշանակում ենք հնչյունական, բառային (բառակազմական), ձևային (ձևակազմական) այն տարբերակների գոյությունը, որը տեղ է գտել Ս. Գրքի հայերեն թարգմանության բնագրում: Նման նյութի քննությունը կարող է տարօրինակ թվալ, որովհետև այդ բնագրի լեզուն, ինչպես հայտնի է, դասական բանասիրությունը համարում է օրինակելի, ընդունված է ասել «դասական հայերենի» նմուշ: Մենք այս ձևակերպման վերաբերյալ առարկություն չունենք, մանավանդ եթե հաշվի առնենք, որ ձևակերպումը վերաբերում է բնագրի համար-

ժեքությանը՝ ամեն դեպքում բովանդակության, քերականական կառույցների, ոճերի և արտահայտությունների ճշգրտությանը:

1. Ձայնավորական երկագրություններ

Ընդունված է ասել, թե խոսքի լիահնչության պայմանը ձայնավորի դրսևորումն է: Ձայնավոր հնչյունների արտաբերությունը հիմնված է ոչ միայն մեկ, այլև մի քանի տիրույթի (դիապազոնի) վրա: Հնդեվրոպական լեզուները, ընդ որում նաև հայերենը լիահունչ արտասանություն ունեցող հաղորդակցական միջոցներ են: Հայերենը, իր հերթին, արտասանական հատույթավորումը առաջ է բերում ձայնավոր հնչյունների հիմունքով: Մեզանում գրավոր խոսքի ամենանախնական գրանցումը եղել է Սուրբ Գրքի հայերեն թարգմանության բերումով, ուստի հայերենի հնչյունական համակարգի քննության առաջին աղբյուրը այդ երկի լեզուն է: Հանդիպում են ձայնավորների երկագրության տարբեր դեպքեր:

ա) Միայն ձայնավորների միջև (մասամբ՝ գրո ձայնավորմամբ. էջերը չենք նշում). *օ (գրո) / ի. բառավերջում՝ այգեստան // այգեստանի, աստ // աստի, դրանդ // դրանդի. լորամարգ // լորամարգի, կաղամախ // կաղամախի, հիսիս // հիսիսի, միաշաքար // միաշաքարի. բառամիջում. հնգեստան // հինգեստան. ի // օ (գրո). չիղջ // չղջիկան. ե // է (կամ է // ե). բարենշան // բարենշան. հրէարէն // հրէարէն. ու // վ. բուրուսո // բուրվառ. ս // ե. գինարբուք // գիներբուք (գիներբուք, տե՛ս գինարբուք). ս // օ (գրո). դիաթաւալ // դիթաւալ (դիթաւալ, տե՛ս դիաթաւալ). ջրակիր // ջրկիր, ջրբեր // ջրաբեր. շատախօսութիւն // շատխօսութիւն. ու // օ (գրո). երեսուն // երեսներորդ. ը // օ (գրո) (բառասկզբում). ըստգտանել, տե՛ս ստգտանել. ը // օ (գրո) (բառամիջում). իննըսնամեայ //իննսնամեան. ո // օ (< սւ). թշնամանող // թշնամանող (< սւ), մորող // մորող (< սւ), մորուք (< սւ) // մորուք. քող // քող (<քաղ). ի // ս. խառնաղանձ // խառնաղանջ // խառնիճաղանձ (խառնիճաղանձ, տե՛ս խառնաղանջ). ու // օ (< սւ). ծողակ //ծողակ (<ծաղակ). օ (գրո // ս. ձեռնհաս // ձեռնահաս. ու // օ (գրո). միեղջերու //միեղջիրու // միեղջիր.*

և (եւ) // ու. ութնտասն // ութուտասն // ութնտասներորդ // ութուտասներորդ. ե // թ (զրո). պասեք // պասքա (պասքա, տե՛ս պասեք), սերովբէ // սրովբէ. ա // ու. սպուռ, տե՛ս սպառուսպուռ // սպառ սպուռ. թ (զրո) // ը. սոգտանել // ըսոգտանել. եվ // եւ. օթեվան // օթեան. է // ի. օրէնսդիր // օրինսդիր:

բ) Միայն երկբարբառների միջև. իւ // եւ. ալիւր // ալեւր, աղբիւր // աղբեւր, առեւծ, տե՛ս առիւծ (առիւծ // առեւծ), բեւր, տե՛ս բիւր (բիւր // բեւր), եղջիւր // եղջեւր, երկեւղ, տե՛ս երկիւղ (երկիւղ // երկեւղ), թիւր // թեւր, հարիւր // հարեւր // հարիւրորդ, հարիւրամեայ // հարիւրեմեան (երեքհարիւր // երեքհարեւր, չորեքհարիւր // չորեքհարեւր // չարեքհարիւրերորդ, վեցհարեւր // վեցհարիւր), աւ // ուվ. յաւանակ // յովանակ:

գ) Չայնավորների և երկբարբառների միջև. սա ունի երկու տեսակ՝ ըստ այնմ, թե որն է առաջին դիրքում, այսինքն՝ ո՛րը կարող է լինել հիմնական, ո՛րը նրանից շեղում կամ հեռացում. զուգադիպություն պայմանականորեն ստանդարտ ձևի և նրա համեմատությամբ այլ ձևի միջև. -այ- // -ա-. ամարայնի // ամարաւնի, ի // եւ. ամենեքին // ամենեքեան, երեքեան // երեքին, երկոքեան // երկոքին, եւթանեքին // եւթանեքեան // եւթենեքեան. հնգեքին // հնգեքեան, ի // եայ. եղեւնի // եղեւնեայ, չորեքեան // չորեքին, ե // եւ. եղջերաւոր // եղջերաւոր, եւ // ու. եւթնուտասն // եւթնուտասն // եւթնուտասներորդ, եւ // ա. իջեան, տե՛ս իջավան (իջավան // իջեան), ե // իւ, ու. միեղջերու // միեղջիրու // միեղջիր, եայ // է. միջօրեայ // միջօրէ, եւ // ե. յիսնամեան // յիսնամենի, ա // ուս. շինած, տե՛ս շինուած (շինուած // շինած), իւ // ի. սփիւռ // սփիւռ, օ // աւ. սօս // սասս // սօսի, թ (զրո // ուվթ. քովթար // քովթարովթ):

2. Բաղաձայնական երկագրություններ

Ի տարբերություն ձայնավորների, որոնց արտաբերության ժամանակ, ընդունված է ասել, չկա որևէ խանգարող ինչ, որևէ արգելք, բաղաձայնները, այսպես կոչված, արգելքային են, հանդես

են գալիս արտաբերման ժամանակ այս կամ այն «խոչընդոտը» հաղթահարելով: Իսկ հայերենի դեպքում դրանք յուրօրինակ են, հայկական բաղաձայնական համակարգի իրողություններ:

1) Պայթական և կիսաշփական բաղաձայնների միջև:

ա) շրթնային. ք // պ. ամբարիշտ // ամկարիշտ (ամբարշտել // ամկարշտել. ամբարշտութիւն // ամկարշտութիւն), պ // փ. սպշել // սփշել (սպշեցուցանել // սփշեցուցանել. սփշել, տե՛ս սպշել, սփշեցուցիչ, տե՛ս սպշեցուցիչ, սփշութիւն, տե՛ս սպշութիւն, պրծանել // փրծանել, փփ // փ. փփոխսովթ // փփուսովթ,

բ) Առաջնալեզվային. ջ // չ. անշշունջ // անշշունչ, հաջել // հաջել, չ // կ. աջք, տե՛ս ակն, դ // տ. ընդարոյս // ընտարոյս (ընտարոյս, տե՛ս ընդարոյս), ընդոծին // ընտոծին (ընտոծին, տե՛ս ընդոծին), թշ // չ. թշուառական // չուառական (թշուառանալ // չուառանալ, թշուառացուցանել // չուառացուցանել, թշուառութիւն // չուառութիւն, չուառական, տե՛ս թշուառական, չուառանալ, տե՛ս թշուառանալ, չուառացուցանել, տե՛ս թշուառացուցանել, չուառութիւն, տե՛ս թշուառութիւն), դ // տ. ժանդ, տե՛ս ժանտ (ժանտ // ժանդ), կնդութիւն // կնտութիւն (կնտութիւն, տե՛ս կնդութիւն). ճ // ջ. խառնաղանձ // խառնաղանջ // խառնիճաղանձ (խառնիճաղանձ, տե՛ս խառնաղանջ), թ // տ. կաթսայ // կատսայ, վ // փ. կողով // կողովի, ձ // ծ. հնձան // հնծան (հնձանահար // հնծանահար):

գ) Հետնալեզվային. գ // կ (կ // գ). անգղ // անկղ (անկղ, տե՛ս անգղ). գաղթագղել // գայթակղել (գաղթագղեցուցանել // գայթակղեցուցանել, գաղթագղութիւն // գայթակղութիւն), խորամանկ // խորամանգ (խորամանկել // խորամանգել, խորամանկութիւն // խորամանգութիւն). ծունկ(ք) // ծունգ(ք). ձգտել // ձկտել (ձգտեցուցանել // ձկտեցուցանել. ձկտել, տե՛ս ձգտել. ձկտեցուցանել // ձգտեցուցանել). մանգաղ // մանկաղ (մանկաղ, տե՛ս մանգաղ), թ (զրո // ք. դէմ // դէմք, գ // ք. թագուցանել, տե՛ս թաքուցանել (թաքուցանել // թագուցանել. փափագել // փափաքել թ (զրո) // ք . հեռ // հեռք:

2) Միայն շփական բաղաձայնների միջև. շ // ս. աշտիճան, տե՛ս աստիճան (աստիճան // աշտիճան), զ // ս. սապարէզ // սապարէս, լ // ղ. բալիստր // բաղիստր (բաղիստր, տե՛ս բալիստր), ջիղ // ջիլ, ու // վ. բուրուստ // բուրվատ, թ (զրո) // դ. ծինի, տե՛ս ծղինի (ծղինի // ծինի), սանդուխ // սանդուղի, ժ // շ. նժդեհութիւն // նժդեհութիւն (նժդեհութիւն // նժդեհութիւն):

3) Չայտորդային և հագագային հնչյունների միջև, և այլ կարգի. ն // մ. անբիծ // ամբիծ (անբծութիւն // ամբծութիւն), թ (զրո) // յ կամ յ // թ (զրո). երագել // յերագանալ // յերագել, երեկորեայ // յերեկորեայ, յ // թ (զրո). յսկայ, տե՛ս սկայ. մաննայ // մաննա, մոմո // մո. կինամոմոն // կինամոն, թ (զրո) // ն. կրուկ // կրուկն, հ // թ (զրո) կամ թ (զրո) // հ. հսկել // սկել, թ (զրո) // հ. սկայ // հսկայ. սկել, տե՛ս հսկել, թ (զրո) // ն. շիզդ // շինզդ (շինզդ, տե՛ս շիզդ), -ամն // եամ. ջայլամն // ջայլեամ, յ // հ. սպայ // սպահ, ուռն // դրամդ. վերնադոռն // վերնադրամդ, հա // թ (զրո). փողահար // փողար (փողար, տե՛ս փողահար), ադր // դադր. քաղադր, տե՛ս քարադար (քարադար // քաղադար):

3. Այլ երկագրություններ (հիմքակազմական, ձևակազմական և այլն)

Բայի լծորդության փոփոխություն, հիմքի տարբերություն (էջերը չենք նշում). ադտեղանալ // ադտեղել, առաւելել // առաւելուլ, արգելուլ // արգելանել, արծարծել // արծարծանել, գերծանել // գերծուլ, դիզանել // դիզել // դիզանալ, երագել // յերագանալ // յերագել, զբաղել // զբաղնուլ, զեղուլ // զեղանել, թոչել // թոչանել, կակղանալ // կակղել, կասել // կասուլ, կարօտեայ // կարօտացեայ, հեծանել // հեծնուլ, հերձանել // հերձուլ, մերձենալ // մերձել, յամել // յամենալ, նանրանալ // նանրել, ողողել // ողողանալ, պակնուլ // պակչել, պանդիստել // պանդիստանալ, պարծել // պարծենալ, ջեռնուլ // ջեռանել, ստեղծանել // ստեղծուլ, տաղտկանալ // տաղտկալ, տարածել // տարածանել, տնանկանալ // տնանկել, ցանկալ // ցանկանալ, փութալ // փութանալ, քաղցնուլ // քաղցենալ, օծել // օծանել, կից կամ

անջատ գրություն. առժամայն // առ ժամայն, զառիվայր // զառ ի վայր, զառիվեր // զառ ի վեր, հանսապագոր // հանսապագ օր, դրափոխություն. արմուկն // արմունկ. նաշիհ // նաշիհի. փի // փ. ափիտութիւն // ափտութիւն, թ (զրո) // -օն. բարեպաշտ // բարեպաշտօն, թ (զրո) // -կոյս. տեսանակողմն // տեսանակողմնկոյս, թ (զրո) // ովթ. քովթար // քովթարովթ, ել // եւ. օթելան // օթեան, է // ի . օրէնսդիր // օրինսդիր:

Նախկինում դրանց չեն դարձրել պատշաճ ուշադրություն՝ համարելով կամ գրչագրական տարբերություններ («վրիպումներ». սխալներ և այլն), կամ գրական նորմայից ոչ այնքան էական շեղումներ (Աճառեան, 1971, 773-824): Սակայն կարելի է նաև մտածել ժամանակի բարբառների ինչ-ինչ արտահայտվածության («սպորումների»), նույնիսկ «գրչագրական» այս կամ այն կարգի հակվածության (արտագրողի կամ թարգմանողի մայրենի բարբառի), օտարլեզվյան ձևի նկատմամբ այլ վերաբերմունքի մասին: Իսկ այս վերջին նկատառումը ենթադրում է ժամանակի բնագրերի, նաև «Աստվածաշունչ» գրքի լեզվի ավելի մանրամասն քննություն:

Եզրակացություններ

1. Երկագրությունները հիմնականում երկու տեսակ են՝ ձայնավորական և բաղաձայնական, կան նաև այլ կարգի երկագրություններ: Հիմնված գոյություն ունեցող համաբարբառների, մասամբ նաև բնագրի օրինակների վրա՝ առանձնացվող երկագրությունները լեզվի բազմազանության ապացույց են:

2. Չայնավորական երկագրությունները կազմում են առանձին խմբեր՝ ըստ պարզ ձայնավորների և երկբարբառների (ձայնավոր-ձայնորդ միացության), որոնք քանակապես գրեթե նույնն են, ինչ բաղաձայնականի դեպքում է:

3. Բաղաձայնական երկագրությունները առանձնանում են ըստ ներքին խմբավորման (պայթական, շփական, առաջնալեզվային, հետնալեզվային և այլն):

4. Այլ կարգի երկագրություններ են բայական ձևերի հիմքակազմության և ձևակազմության դեպքում առաջ եկած տարբերությունները:

Հունարանություններ «Յաճախապատում ճառք»-ում

Ներածություն

Հին հայերեն այս բնագրի վերաբերյալ մինչև օրս կան կնճռոտ հարցեր, որոնց մասնակի լուծմանը կարող է իր նպաստն ունենալ նրա լեզվի մանրամասն, ըստ ամենայնի քննությունը: Նրանում տեղ գտած հունարան կազմությամբ բազմաթիվ ձևերի առանձնացումն ու վերլուծությունը ինչ-որ չափով նպաստում են այդ հարցերի պազաբանմանը: Բազմաթիվ ձևերից միայն մեկի (հունարան կապակցության) ամբողջական (գրեթե բոլոր օրինակների առանձնացումով) ուսումնասիրումը դառնում է փաստ ամենից առաջ բնագրի ինքնուրույն թե թարգմանական միավոր լինելու հարցի շուրջ:

1. Գիտարկումներ բնագրի վերաբերյալ

Հայ հին և միջնադարյան մշակույթի լավագույն վկայություն են գրավոր հուշարձանները, որոնք գրեթե բոլոր ժամանակներում, ինչպես նաև մեր օրերում եղել են և հանդիսանում են իմացության անփոխարինելի աղբյուր, միաժամանակ ամրակոտ միջոց՝ պատվար, մտավոր նոր առաջընթացի: Այդպիսի մի հուշարձան է Ս. Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում ճառք» երկը:

Մինչև XVIII դ. 30-ական թթ. «Յաճախապատում ճառք»-ը եղել է ձեռագիր, առաջին անգամ տպագրվում է Կ.Պոլսում (1737 թ., 2-րդ տպ. 1824 թ.): Իսկ Վենետիկի Մխիթարյանները բանասիրական աշխատասիրությամբ այդ երկը հրատարակում են իրենց տպարանում (Վենետիկ, 1838 թ., վերահրատ.՝ 1954 թ.): Դրանք

ժամանակին ձեռքի տակ եղած ձեռագրերի հիման վրայ կազմված (ոչ քննական) հրապարակումներ են:

Հետագայում Ա. Տեր-Միքելյանի աշխատասիրությամբ կազմվում է երկի քննական բնագիրը (Վաղարշապատ, 1894): Ձեռագրերի և տպագիրների համեմատությամբ նշվում են տարբերություններ, տրվում ծանոթագրություններ: Վերջինս զգալիորեն տարբերվում է մինչև այդ եղած տպագիր բնագրերից, մանավանդ սկզբի մի քանի ճառերի դեպքում, ինչպես նաև մյուս ճառերի այլևայլ մասերում ու հատվածներում, օրինակ՝ նկատվում են Սուրբ Գրքից կատարվող քաղվածքների անճշտություններ և այլն: Ավելին, Էջմիածնում լույս տեսած բնագիրը (հատկապես ճառերից առաջին երկու-երեքը) ավելի մանրամասն է, քան մյուս տպագրությունների դեպքում, և դա տարակուսանք է հարուցում:

Ամբողջ հարցն այն է, որ «Յաճախապատում ճառք»-ի գրչագրերը մեզ են հասել զգալի տարբերություններով, իսկ Վենետիկի և Էջմիածնի տպագիրների դեպքում հիմք են ընդունվել միմյանցից տարբեր գրչագրեր: Ուստի մեր օրերի բանասիրության, մասնավորապես բնագրագիտության կարևոր խնդիրներից մեկը մնում է «Յաճախապատում ճառք»-ի քննական նոր բնագրի կազմումը:

Մինչև վերջերս չունեինք «Յաճախապատում ճառք»-ի նոր գրական հայերեն որևէ թարգմանություն, որ իրականացվել է վերջին տարիներին՝ մանրամասն ծանոթագրություններով և գիտական սեղմ մեկնաբանություններով (Ս. Գրիգոր Լուսավորչի, 2003):

Այս երկի հեղինակային պատկանելության հարցը առայսօր մնում է հայ բանասիրության կնճռոտ հարցերից մեկը: Բնագրի թե՛ մանրամասն քննությունը, թե՛ թարգմանության ինչ-ինչ հանգամանքների նկատառումը թողնում է այն տպավորությունը, որ նախ՝ հեղինակը Ս. Գրիգոր Լուսավորչին է, իսկ երկը գրված է եղել հունարենով, որ թարգմանվել է հայ թարգմանական աշխատանքի սկզբնական շրջանում: Միանգամայն ճիշտ է նկատված, որ «Հայոց

դարձը դեպի քրիստոնեություն մի ճակատագրական իրադարձություն էր, որ պիտի փոխեր մեր պատմության ընթացքը, մեր հոգեբանությունը, նոր կրոնն իր հաստատուն կնիքն էր դնելու հայոց մտաշխարհի, աշխարհայացքի, աշխարհայեցողության, լեզվի ու մտածողության, ողջ մշակույթի և կենցաղի վրա» (*Դերիկյան*, 2012, 32-35):

Հունարան հայերենի ուսումնասիրող Գ. Ս. Մուրադյանն իր հայտնի աշխատության մեջ որևէ խոսք չի ասում Ս. Գրիգոր Լուսավորչի «Յաճախապոտում ճառք»-ի լեզվի, մասնավորապես նրանում տեղ գտած տարբեր կարգի հունարանությունների, այլև ինքնուրույն թե թարգմանական լինելու, վերջին դեպքում՝ թարգմանական ո՛ր ժամանակի կամ ի՛նչ խմբի գործ լինելու, և որ ամենակարևորն է, երկի՝ հեղինակի ով լինելու վերաբերյալ (*Մուրադյան*, 2010, հմմտ. Аревшатын, 2011)¹:

«Յաճախապոտում ճառք»-ի լեզվի, ավելի լայն իմաստով՝ բնագրի ճիշտ ընկալման հարցը խիստ վճռական է մյուս հարցերի կամ խնդիրների լուծման գործում: Այդ երկի լեզուն կարող է դառնալ առանձին ուշադրության առարկա՝ իբրև նմուշ դասական գրաբարի, մեր հին ոսկեդենիկ լեզվի:

2. Անդրադարձ երկի լեզվական կողմին

Ստորև սեղմ անդրադառնում ենք «Ճառք»-ի լեզվին, մասնավորապես գրաբարի ծավալուն բառարանում (ՆՀԲ) տեղ չգտած, այսպես կոչված, նորահայտ բառերին, որոշ բառերի նոր իմաստային գործածություններին, ինչպես նաև այլ լեզուների, մասնավանդ

հունարենի օրինակով կազմված կապակցությունների մի տեսակին:

ա) Նոր (կամ «նորահայտ») բառերի մասին: Հարցն այս դեպքում բավականին վիճահարույց է, եթե համեմատության եզր ենք դիտում առաջին հերթին (եթե ոչ բոլոր դեպքերում) «Նոր հայկազյան բառարանի» (ՆՀԲ) տվյալները, որովհետև նման բառեր գտնում ենք հիմնականում էջմիածնական բնագրի էջերում, որ չկան վենետիկյանում, երկրորդ՝ ՆՀԲ-ն լույս է տեսել ավելի վաղ (1836-1837 թթ.), քան «Ճառք»-ը (1838 թ.): Այնուհետև՝ այդ կարգի բառերը էջմիածնի բնագրի հիմք հանդիսացող ձեռագրերում անպայման պիտի եղած լինեին, որ տեղ գտնեին քննական բնագրի մեջ (բացի համեմատաբար ուշ ժամանակների ձեռագրերում եղածից, որն այլ քննարկման հարց է): Այսուհանդերձ, էջմիածնական բնագրի մեջ տեղ գտած լինելու հանգամանքը էական է եղել մեզ համար «Ճառք»-ի ոչ միայն նոր գրական հայերեն թարգմանության ժամանակ, այլև այժմ, ուստի այդ «նորահայտ» բառերն այս դեպքում չենք կարող բացառել. դրանք բերում ենք ըստ ՆՀԲ-ի¹:

Դրանք քանակապես այնքան էլ շատ չեն, հանդիպում են առաջին մի քանի ճառերում (որոնք չկան, օրինակ, ՆՀԲ-ում). *անստտին* «այս ու այն կողմ», *աշխատելի* «աշխատող, աշխատունակ», *աւետարանելի* «ավետարանական ձևով, ավետելի», *անօզ* «օգնութիւն չունեցող, անօգնական», *բազմախնամ* «շատ՝ բազում անգամ խնամված», *բարեխոնարհութիւն* «բարեսիրություն», *բիրականրայարանեայ* «բազմիցս կերպ՝ կերպարանք ստացած», *դարմանասէր* «դարմանում՝ բուժում սիրող, բժշկող», *ընդերկայնանություն* «լայնախոհութիւն, մեծ խոհեմութիւն», *հնարարուեստ* «ճարտար, ճարտարագետ», *հրաիրանք* «առաջադրանք, ընտրություն»:

¹ Նկատենք, որ Ս. Հովհաննես Օձնեցու երկերի նոր գրական հայերեն թարգմանության ծանոթագրություններում նշել ենք, որ հայերենը և հունարենը, լինելով հնդեվրոպական հիմք-լեզվի ժառանգորդ լեզուներ, շարահյուսական կառուցվածքի առումով ևս ունեն ընդհանուր գծեր, որոնք բաղարկվում (կոնսամինացվում) են ավելի ուշ՝ հունարենից կատարվող թարգմանություններում երևան եկած նորի հետ, և ստացվում է այնպես, որ հայերենում կան և՛ ժառանգորդական (բնիկ՝ հիմք-լեզվից եկող), և՛ փոխառյալ («հունարան») նման կառույցների օրինակներ, որոնք էլ կարող են հատուկ ուսումնասիրության առարկա լինել:

¹ «Ճառքի» բառապաշարին, հատկապես նոր բառերին Հ. Աճառյանն անդրադառնում է այնքանով, որքանով դրանք կան ՆՀԲ-ում, իսկ հետագա նոր բառարանների հեղինակների ուշադրությունից առհասարակ դուրս են մնացել:

բ) ՆՀԲ-ում միայն «Յաճախապատում»-ի վկայությամբ բերվող բառեր. *սկնստութիւն* «կողմնապահություն», *այլատրեմ* «հիմարացնել, խելքը փոխել. այլ մտքի դարձնել», *աստանդեցուցանեմ* «այս ու այն կողմ տանել», *բազմարմատ* «շատ արմատ ունեցող. խիստ արմատացած», *զուարթանոտութիւն* «բարեսեր հոժարություն», *ռոշնութիւն* «պարզամտություն, պայծառություն», *անոյ տէր* «զավակի տեր՝ ծնող», *վատթարատես* «վատ տեսնող՝ տեսողությամբ», *վշտառի* «վշտակիր, վշտառու», *քաջաւէտ* «արի, քաջությամբ երևելի, հաղթական»:

գ) ՆՀԲ-ում նախ «Ճառք»-ի վկայությամբ բառեր. *աղբիւրաբար* «աղբյուրի պես՝ նման», *անսպաշխարք* «չապաշխարող, անզուցում», *աննախանձութիւն* «նախանձ չունենալը», *սպաժոյժ* «անտանելի, որ արնաշաղախ լինելուց է», *արդարակշիռ* «արդարությամբ կշռված բան. արդարությամբ կշռող անձ», *արդարասէր* «արդարությունը սիրող. առաքինասեր», *դաստիարակութիւն* «կրթութիւն, հրահանգում, ուսում», *եռանդնասէր* «եռանդուն. եռանդագին», *նորամուտ(ք)* «նորընծա(ներ)», *պատուասիրութիւն* «փառասիրություն»:

դ) ՆՀԲ-ում հետագա, ոչ «Ճառք»-ի վկայությամբ բառեր. *գանձեմ* «ամբարել, մթերել, ժողովել», *բացայայտութիւն* «բացատրություն, բացահայտում. մեկնաբանում», *գիտելութիւն* «իմացական տեղեկություն», *հակառակամարտ* «ընդդիմաամարտ, հակառակություն»:

ե) Ըստ ՆՀԲ-ի հետ համեմատության նոր իմաստային գործածություն համարելի բառ *ամենարուեստ* «առաքինի» (Յճխ., գ, 13):

3. Շարահյուսական կառուցվածքի երևույթներ

Նման երևույթներն առավելապես առնչվում են լեզվական տարաբնույթ պատճենումներին, մասնավորապես արդյունք են հունաբան ոճին, հանդես են գալիս որպես հունաբանություն (էլի-նիզմ): Սրանք տվյալ դեպքում երկու կարգի են՝ բառակապակցության և նախադասության մակարդակում հանդես եկող: Առաջինի օրինակներն անհամեմատ շատ են:

Նախ՝ բառակապակցական բաղադրությունների մասին: Դրանք խմբավորվում են ըստ այս կամ այն ընդհանուր բաղադրիչի: Կադապարային միավորի շարահյուսական գործառույթն, ի տարբերություն հայերենի, որին բնորոշ է ածական-գոյական որոշչային հարաբակցությունը (հմմտ. *հաւատ ճշմարիտ* «ճմարիտ հավատ»), հունարենի օրինակով (պատճենումով) ունենում ենք սեռական հոլովով դրված վերացական գոյական - թանձրացական գոյական հատկացուցչային հարաբերակցություն (հմմտ. *հաւատ ճշմարտութեան* «ճմարիտ հավատ») (հուն. abstractum pro concreto):

Նման կազմությամբ կապակցությունները «Ճառք»-ում անհամեմատ մեծ թիվ են կազմում. մեկական կիրառությամբ հանդես եկող (մի քանի տասնյակից ավելի) միավորներից բացի ունենք այնպիսիները, որոնց բաղադրիչներից մեկի կամ մյուսի հիման վրա կարելի է ներկայացնել առանձին խմբեր (երկու և ավելի օրինակներով): Իսկ թարգմանության առնչությամբ նշենք, որ դրանք երբեմն պահպանվում են, այսինքն՝ թարգմանվում են իբրև հատկացուցչային կապակցություն:

ա) Վերացականը թանձրացականի փոխարեն

Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկ»-ում նորմատիվ ձևակերպման մակարդակով ներկայացվում է լեզվաոճական այս երևույթը՝ երկու հիմունքով. «Գրաբարում շատ հաճախ հանդիպող ոճական հնարներից մեկն է վերացականը թանձրացականի իմաստով գործածելը: Առանձնապես տարածված է ածականը *-ութիւն* գոյականակերտ վերջածանցի միջոցով գոյականի վերածելը, սակայն ածականի իմաստով գործածելը: Ածականը, ստանալով *-ութիւն* ածանցը, վերածվում է գոյական անվան, սակայն կիրառվում է ածականի իմաստով և մեծ մասամբ հանդես է գալիս սեռական հոլովի ձևով՝ անկախ նախդասության մեջ ունեցած պաշտոնից:

Աշխարհաբար թարգմանելիս նման բառերը պետք է դիտել իբրև ածական, օրինակ՝ «Ապաքէն գայդ կամիս՝ զի ծածկեսցի *խորհուրդ սմբարշտութեանդ...*» (Եղիշէ, I): Երբեմն էլ լրացյալն է ար-

տահայտվում սեռական հոլովով, իսկ *-ութիւն* ածանց ստացած ածականը հոլովվում է ըստ կիրառության, օր.՝ «Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց եթէ յայտնեցաւ *խորամանկութիւն խորհրդոյն*..» (Եղիշէ, II): Այլ կերպ ասած՝ այս վերջին դեպքում *-ութիւն* վերջածանց ստացած ածականը դառնում է հատկացյալ, իսկ դրան վերաբերող բառը՝ հատկացուցիչ, սակայն դրանք արտահայտում են որոշիչ – որոշյալ կապակցության իմաստ»:

Ստորև, գրեթէ ամբողջությամբ, բերում ենք նման կապակցության օրինակներ՝ քաղված «Յաճախապատում ճառք»-ից (կից փակագծում՝ «Ճառք»- ի թվահամարը): Դրանք հանդես են գալիս գործածության տարբեր հաճախականությամբ՝ մեկ կամ երկու և ավելի անգամ:

1) Միայն մեկ անգամ գործածված կազմություններ
ազատութիւն. կտակ ազատութեան (Ճառ Ի),
աղտեղութիւն. մեղք աղտեղութեան (Ճառ Ե),
անսպասկանութիւն. վարք անսպասկանութեան (Ճառ Ի),
անարատութիւն. իրաւունք անարատութեան (Ճառ ԻԳ),
անդորրութիւն. ժամանակ անդորրութեան (Ճառ Է),
անեղութիւն. փառք անեղութեան (Ճառ Բ),
անիրաւութիւն. վնաս անիրաւութեան (Ճառ Ի),
անհաստատութիւն. անհաստատութիւն մտաց (Ճառ Ը),
անհասանութիւն. որդի անհասանութեան (Ճառ Ի),
անձնասիրութիւն. պարտիք անձնասիրութեան (Ճառ Ը),
աջողութիւն. շահ աջողութեան (Ճառ Է),
առաքելութիւն. շնորհ առաքելութեան (Ճառ Գ),
աստուածգիտութիւն. վկայք աստուածգիտութեան (Ճառ ԻԲ),
արքանեկութիւն. հնազանդութիւն արքանեկութեան (Ճառ Ժ),
արթնութիւն. հաստ արթնութեան (Ճառ ԺԱ),
Աւետարան. ճշմարտութիւն Աւետարանի (Ճառ Բ, Ժ),
բազմաձեռնութիւն. աղօթք բազմաձեռնութեան (Ճառ ԺԲ),
բարկութիւն. հատուցումն բարկութեան (Ճառ Ա),

գթութիւն. ինսամբ գթութեան (Ճառ Զ),
գիշութիւն. ցանկութիւն գիշութեան (Ճառ ԺԸ),
գովութիւն. պարծանք գովութեան (Ճառ ԺԴ),
դաժանութիւն. վնաս դաժանութեան (Ճառ ԺԴ),
դժնդակութիւն. մեղք դժնդակութեան (Ճառ Ե),
դպրութիւն. գիր դպրութեան (Ճառ Է),
եղբայրութիւն. անուն եղբայրութեան (Ճառ Է),
զգաստութիւն. զգուշութիւն զգաստութեան (Ճառ ԺԶ),
թշուառութիւն. պատահար թշուառութեան (Ճառ ԺԹ),
ինքնագորշութիւն. շօշափելիք ինքնագորշութեան (Ճառ ԺԹ),
լրութիւն. նուէր լրութեան (Ճառ ԺԲ),
խարդախութիւն. վնաս խարդախութեան (Ճառ ԺԱ), 52
կանխագիտութիւն. լաւութիւն կանխագիտութեան (Ճառ ԻԱ),
հանդարտութիւն. կեանք հանդարտութեան (Ճառ Ժ),
հնազանդութիւն. քաղցրութիւն հնազանդութեան (Ճառ ԺԱ),
հնարագիտութիւն. արուեստ հնարագիտութեան (Ճառ Ե),
ձանձրութիւն. տաղտուկ ձանձրութեան (Ճառ ԺԱ),
մարգարէութիւն. շնորհ մարգարէութեան (Ճառ Դ, Թ),
միամտութիւն. (ոչ) բարոք միամտութեամբ (Ճառ Է),
նահատակութիւն. հանդէս նահատակութեան (Ճառ ԺԶ),
ողջախոհութիւն. ճաշակ ողջախոհութեան (Ճառ ԺԱ),
ողորմութիւն. ողորմութեան շնորհք (Ճառ Զ),
շռայլութիւն. կամք շռայլութեան (Ճառ Թ),
պակասութիւն. օրինակ պակասութեան (Ճառ ԺԳ),
պիտանութիւն. գործ պիտանութեան (Ճառ Ե),
պնդութիւն. պահք պնդութեան (Ճառ Ը, ԺԱ),
սաստկութիւն. խրատ սաստկութեան (Ճառ. Ա),
ստուգութիւն. վարք ստուգութեան (Ճառ ԺԳ),
վայելչութիւն. զարդ վայելչութեան (Ճառ Ի),
վստահութիւն. յոյս վստահութեան (Ճառ ԺԸ),
վրէժխնդրութիւն. օրէնք վրէժխնդրութեան (Ճառ ԺԳ),

ցանկություն. ցանկություն բուսոյ (Ճառ Ը),
փասկություն. դրաստ փասկություն (Ճառ Թ),
քահանայություն. շնորհ քահանայության (Ճառ Դ),
քարոզություն. լոյս քարոզության (Ճառ ԺԱ),

2) Երկու և ավելի գործածությամբ կազմություններ

ազատություն. կուսկ ազատության (Ճառ Ի), շնորհք ազատության (Ճառ ԺԱ),

ամբարշտություն. միտք ամբարշտության (Ճառ Զ), գործ ամբարշտության (Ճառ ԺԵ).

անեղծություն. կեանք անեղծության (Ճառ Է), պասկ անեղծության (Ճառ ԺԸ).

անմահություն. կեանք անմահության (Ճառ ԺԲ), ճաշակ անմահության (Ճառ ԺԱ), պարգև(ք) անմահության (Ճառ Է).

անօրէնություն. գործք անօրէնության (Ճառ ԹԹ), վարք անօրէնության (Ճառ Ի), տիղմ անօրէնության («Աղօթք»), մշակ անօրէնության («Աղօթք»).

անսրբություն. վարք անսրբության (Ճառ ԺԱ), պատուհաս անսրբության (Ճառ ԺԹ).

սպաշխարություն. դարձ սպաշխարության (Ճառ Զ), դէմք սպաշխարության (Ճառ ԺԹ), խոստովանություն սպաշխարության (Ճառ ԺԱ), հանգամանք սպաշխարության (Ճառ ԺԹ).

սոսքինություն. աճումն սոսքինության (Ճառ ԺԱ), արուեստ (լատության և քաջության և) սոսքինության (Ճառ ԺԱ. երկիցս), բոյս սոսքինության (Ճառ ԺԹ), գանձ սոսքինության (Ճառ ԺԱ, ԺԹ), գործասիրություն սոսքինության (Ճառ ԺԱ), լատության սոսքինության (Ճառ Դ), ծնունդ սոսքինության (Ճառ ԺԴ), հանդէս սոսքինության («առաքինի հանդէս». Ճառ Գ, Է, ԺԵ, ԺԷ), մարտ սոսքինության (Ճառ Զ), յորդորումն սոսքինության (Ճառ ԺԹ), պատերազմ սոսքինության (Ճառ Ժ), պատիւ սոսքինության (Ճառ ԻԳ), պասկ սոսքինության («առաքինի պասկ». Ճառ Ա), վաստակ սոսքինության (Ճառ ԺԱ, ԺԹ, ԻԳ), վարք սոսքինության

նություն [Ճառ Դ, Է, ԺԱ (երկիցս), ԺԲ], տունկ(ք) սոսքինության (Ճառ Թ), ցոյցք սոսքինության (Ճառ ԻԳ), օգնական սոսքինության (Ճառ ԺԱ).

սոսքություն. իրատունք սոսքություն (Ճառ ԻԳ), հանգիստ սոսքություն (Ճառ ԺԱ), լոյս սոսքություն (Ճառ Թ), օրէնք սոսքություն (Ճառ ԺԹ).

սատուածություն. բնություն սատուածության (Ճառ ԺԳ), լոյս սատուածության (Ճառ ԺԱ), պատիւ սատուածության (Ճառ Ի), սէր սատուածության (Ճառ ԻԳ), օթևան սատուածության (Ճառ Թ).

արարչություն. արարչություն տէրության (Ճառ Բ), անուն արարչության (Ճառ ԻԲ).

արդարություն (կամ հակառակը. երբեմն նման մեկ այլ բաղադրիչի հետ). արդարության փառք («արդար փառք». Ճառ Բ), արեգակն արդարության («արեգակ արդար». Ճառ Բ, Զ, ԺԳ), գնացք արդարության (Ճառ ԻԳ), գործ արդարության (Ճառ Ժ), թշնամի արդարության (Ճառ ԺԸ, Ի), իրատունք արդարության // իրատունք արդարության (սոսքություն և անարատության) (Ճառ Է, ԺԱ, ԺԳ, ԻԳ), լոյս արդարության (Ճառ ԺԹ), կայան արդարության (Ճառ ԺԹ), կարգ արդարության (Ճառ Զ), կշիռք արդարության («արդար կշռում՝ դատելը». Ճառ), հասակ արդարության (էջ, Ճառ ԺԱ), ճանապարհ արդարության (Ճառ ԺԱ, ԺԸ, ԺԹ. Ի, ԻԳ), պարգև(ք) արդարության (Ճառ ԺԳ), պտուղ արդարության (Ճառ ԺԸ, ԺԹ), վաստակ արդարության (Ճառ Բ, ԺԵ), տունկ(ք) արդարության // տունկ արդարության (և սոսքինության) (Ճառ ԺԱ), օրէնք արդարության (Ճառ Ե, Զ, ԺԲ, ԺԹ, ԻԳ).

բարեխօսություն. համարձակություն բարեխօսության (Ճառ ԺԶ), յիշատակ բարեխօսության (Ճառ ԺԳ).

բարեպաշտություն. ճիգ բարեպաշտության (Ճառ ԺԹ), ջանք բարեպաշտության («բարի՛ բարեպաշտ ջանք՝ ներդրում», Ճառ Զ, Ժ, ԺԶ, ԺԷ, ԻԳ), վարք բարեպաշտության (Ճառ ԺԱ, ԺԵ).

բարերարություն. ամենատառ բարերարության (Ճառ Ի), երախտիք բարերարության (Ճառ Ժ), ինասիք բարերարության («բարերար՝ նպաստաբեր ինասիք». Ճառ Զ, Թ, ԻԱ), կեանք բարերարության (Ճառ ԺԳ), շնորհ բարերարության (Ճառ ԺԱ), սէր բարերարության (Ճառ ԺԱ, Ի).

բարություն. աղբիւր բարության (Ճառ ԺԱ), բարք բարությանց («բարի՝ լավ բարքեր՝ սովորություններ», ն. տ.), գործ(ք) բարության(ց) («բարի գործ(եր)». Ճառ Բ, ԺԶ, ԺԷ, ԺԹ).

դառնություն. թոյն դառնության («դառը՝ մահաբեր թոյն». Ճառ ԺԸ), մաղձ դառնության (Ճառ՝ ԺԹ).

ժուժկայություն. շնորհ ժուժկայության (Ճառ Թ), պահք ժուժկայության (Ճառ ԺԱ).

իմաստություն. գործ իմաստության (Ճառ Դ), միտք իմաստության (Ճառ ԻԱ), շահք իմաստության (Ճառ Ի), շնորհ իմաստության (Ճառ ԺԱ), տուրք իմաստության (Ճառ ԻԱ).

լաւություն. արուեստ լաւության (և քաջության և առաքինության) (Ճառ ԺԱ), կարգ լաւության («լավ կարգ». Ճառ Է, Ը), հանդէս լաւության {«լավ հանդէս». Ճառ Բ, Է, Ժ (երկիցս), ԺԿ (երկիցս)}, յիշատակ լաւության (Ճառ ԺԳ), վկայություն լաւության (Ճառ Ը).

լուսատրություն. աւագան լուսատրության (Ճառ ԺԳ), հանդէս(ք) լուսատրության («լուսավոր հանդէս(ներ)» (Ճառ Բ).

խաղաղություն. ժամանակ խաղաղության (և անդորրության) («խաղաղ և անդորր ժամանակ», Ճառ Է), նաւահանգիստ խաղաղության («խաղաղ նավահանգիստ», Ճառ Բ, Ժ).

խոնարհություն. մարմին խոնարհության (Ճառ ԺԴ), պատկառանք խոնարհության (Ճառ ԺԸ), քաղցրություն խոնարհության (Ճառ ԺԱ)

համբերություն. ճգնություն համբերության (Ճառ ԺԴ), յոյս համբերության (Ճառ ԺԶ).

հաւատ. ճշմարտություն հաւատոյ (Ճառ Բ, Գ), սրբություն հաւատոյ (Ճառ Բ).

ճշմարտություն. այգի ճշմարտության (Ճառ Բ, ԺԹ), սրբանեակ ճշմարտության (Ճառ ԻԱ), աւանդ(ք) ճշմարտության (Ճառ Է, Ը, ԺԷ, ԺԹ, ԻԳ), բան(ք) ճշմարտության (Ճառ Է, Ը, ԺԶ, ԺԷ), գիտություն ճշմարտության (Ճառ Ե, Թ, ԺԱ, ԺԹ), զէնք ճշմարտության (Ճառ ԺԶ, ԺԷ), ինաստ ճշմարտության (Ճառ Ի), կեանք ճշմարտության (Ճառ ԺԱ), հաւատ(ք) ճշմարտության // ճշմարտության հաւատք («ճշմարիտ հավատ». Ճառ Բ, Գ, Դ, ԺԱ), հնազանդություն ճշմարտության (Ճառ ԻԳ), հոգի ճշմարտության (Ճառ ԺԱ), մշակք ճշմարտության (Ճառ Բ, ԺԲ), վարդապետ(ք) ճշմարտության («ճշմարիտ վարդապետներ». Ճառ Բ), վերակացու ճշմարտության (Ճառ Ի), վկայք ճշմարտության («ճշմարիտ վկաներ». Ճառ Ե, ԺԷ, ԺԸ), ուսումն ճշմարտության (Ճառ ԺԶ, ԺԷ), քարոզ ճշմարտության (Ճառ), օրինակ ճշմարտության (Ճառ ԺԷ).

մարդասիրություն. գութ մարդասիրության («մարդասեր՝ անձնվեր գութ՝ վերաբերություն». Ճառ ԺԱ), երախտիք մարդասիրության (Ճառ ԺԳ), ինասիք մարդասիրության (Ճառ Զ).

մեծություն. աւետիք մեծության (Ճառ ԺԵ), փառք մեծության (Ճառ Գ), պարգև(ք) մեծության (Ճառ ԺԱ).

մտերմություն. լաւություն մտերմության (Ճառ Ե), ծարս մտերմության (Ճառ ԺԹ), հանդէս մտերմության (Ճառ Զ, ԺԲ).

նրախություն. աւետիք նրախության (Ճառ ԺԱ), օթևան նրախության (Ճառ Ի).

չարություն. այս չարության (Ճառ ԺԱ), բոյս չարության (Ճառ ԺԸ), գունդ չարության («չար՝ պատակտիչ գունդ. Ճառ Ի), թոյն չարության (Ճառ ԺԴ), որումն չարության (Ճառ ԺԸ).

սրբություն. առողջություն սրբության («սուրբ՝ մաքուր առողջություն», Ճառ ԺԱ), գնացք սրբության (Ճառ ԺԱ, ԻԳ), կամար

արքութեան (Ճառ ԺԱ), ճաշակ արքութեան (Ճառ Ը), միամտութիւն արքութեան (Ճառ Ե), յիշատակ արքութեան (Ճառ ԺԱ), պահք արքութեան (Ճառ Թ), պատմունք արքութեան (Ճառ ԺԹ), սէր արքութեան [Ճառ ԺԱ (երկիցս)], վարք արքութեան (Ճառ Ժ, ԺԷ), վերարկու արքութեան (Ճառ ԺԱ), օրէնք արքութեան փառացն (Ճառ ԺԹ).

վարդապետութիւն. շնորհ վարդապետութեան (Ճառ Դ), ուսումն վարդապետութեան (Ճառ Ը).

տեսչութիւն. ինսպք տեսչութեան սիրոյ (Ճառ Թ, ԺԴ), դարմանք տեսչութեան (Ճառ ԺԴ).

տէրութիւն. ամենակալ տէրութեան (Ճառ Ի), ինքնութիւն տէրութեան («Տէր Աստված». Ճառ Ա), ինսպք տէրութեան (Ճառ Է), կամք տէրութեան (Ճառ Ի), հաճոյք տէրութեան (Ճառ ԺԳ), մեծութիւն տէրութեան (Ճառ Ը), սէր տէրութեան (Ճառ Ը), վայելչութիւն տէրութեան արարչութեան («Արարիչ Տիրոջ վայելչություն՝ փառք» (Ճառ Բ), փառաբանութիւն տէրութեան (Ճառ ԻԲ).

քաղցրութիւն. ինսպք քաղցրութեան (Ճառ Զ), ճաշակ քաղցրութեան (և ողջախոհութեան. Ճառ ԺԱ).

քաջութիւն. անուն քաջութեան (Ճառ Զ, ԺԴ), արուեստ քաջութեան (Ճառ ԺԱ).

քաւութիւն. յոյս քաւութեան (Ճառ ԺԳ), պատարագ քաւութեան (Ճառ ԺԹ).

Օրինակների նման առատությունը վկայում է, որ երևույթը ոչ այլ ինչ է, քան թարգմանական ազդեցություն: Իսկ սա ապացույց է այն իրողության, որ Ս. Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում Ճառք» երկասիրությունը թարգմանական գրականության նմուշ է, թարգմանությունը կատարված է հունարենից:

բ) Այլ կարգի օտարաբանություններ (տրականը անորոշի հետ՝ *dativus cum infinitivo* և այլն)

Վերը անդրադարձանք «Ճառք»-ում տեղ գտած հունարանություններից միայն մեկի համեմատաբար մանրամասն քննությա-

նը: Կան նաև այլ կարգի իրողություններ, որոնց մանրամասն անդրադառնալը մեր հետագա աշխատանքին է վերաբերում:

Այդպիսին է այսպես կոչված տրականը անորոշի հետ կապակցությունը, երբ մտածական (զգացական, ասացական և այլ) բայերի հետ օգտագործվում է տրական հոլովով դրված ենթակա և անորոշ դերբայով՝ ստորոգյալ. հմմտ. *պարտ է մեզ լինել* «մենք պիտի լինենք» և այլն:

Այնուհետև, առանձին գործածվում է վերացական գոյականը կոնկրետի (թանձրացականի) փոխարեն, այսինքն՝ վերացական գոյականը փոխարինում է թանձրացականին, ընդ որում՝ վերացական բառ-միավորը նույնն է, ինչ բառակապակցությունը. օր.՝ *տէրութիւն «Տէր»* [հմմտ. *ամենակալ տէրութիւն «Տէր ամենակալ»* (Ճառ Թ. 9) և այլն¹:

Եզրակացություններ

1. «Յաճախապատում ճառք»-ի լեզվի մեջ հունարան հատկություն համարվող ձևերից մեկ-երկուսի ըստ անմենայնի մանրամասն քննությունը հիմք է հանդիսանում ոչ միայն հեղինակի հարցում, այլև ինքնուրույն երկ լինելու վերաբերյալ:

2. Այդ երկը թարգմանական գրականության նմուշ է, նախահունարան դպրոցի արտադրանք, հեղինակը Ս. Գրիգոր Լուսավորիչն է:

3. Այս պնդումը հիմնված է ոչ միայն բառագործածության, այլև շարահյուսական մակարդակի երկու հունատիպ բազմաթիվ և բազմազան օրինակների գոյության վրա:

4. Այդ օրինակներն արտացոլում են հին հայերենի թարգմանական մատենագրական ձեռնարկումների սկզբնական փուլը:

¹ Ի դեպ՝ հանդիպում են նաև ասորաբանություններ. *խնամոցն խնամք «հոգացողներին (հոգածությունն)», մեռանել զմահ «մահանալ», պեոք պիտոյից «պիտանիություն»* և այլն:

Բուզանդի «Այծից հայոց արքայ» արտահայտությունը

Ներածություն

Փավստոս Բուզանդի «Պատմության» լեզուն, ինչպես ցույց են տալիս նաև բանասիրական-լեզվաբանական ուսումնասիրությունները, պարունակում է ժամանակի լեզվամտածողության տարրեր, ընդ որում թե՛ բառի և թե՛ այլ կարգի միավորների՝ դարձվածքների, ոճերի և արտահայտությունների գործածություն: Դրանք գրավորի մեջ խոսակցական, թերևս նաև բարբառային ներթափանցումներ են:

Ստորև անդրադառնում ենք նման մի արտահայտության, որն ունեցել է տարբեր մեկնաբանություններ՝ հեղինակի բնագրի քննության, ինչպես նաև աշխարհաբար թարգմանության բերումով:

1. Հատվածի բնագրային-բանասիրական կողմի մասին

Որքան մեզ հայտնի է, մինչև օրս չունենք Բուզանդի «Այծից Հայոց արքայ» հատվածի լեզվաբանական-առասպելաբանական որևէ քննություն: Բուզանդի Պատմությունը ավելի շատ, քան հայ հին գրականության որևէ նմուշ, աչքի է ընկնում ժամանակի ժողովրդական մտածողության, էպիկական պատկերացումների հոգեբանական խտացման լայն ընդգրկումով: Նման բնութագրման հիմքը ամենից առաջ այդ սքանչելի երկի լեզուն է, երկրորդաբար՝ վերջինիս միջոցով արտահայտված պատումի յուրօրինակ բովանդակությունը:

Մեր այս աշխատանքում անդրադառնում ենք այդ պատումի մեջ տեղ գտած միայն «Այծից Հայոց արքայ» արտահայտությանը՝ իմաստաբանական և տիպաբանական փոքրիշատե հնարավոր համեմատության մեջ (Բուզ., 1883, վերահրատ.՝ 1987, 196. թարգմ.՝ 1987, 197):

Հիշենք այն համատեքստը (կոնտեքստը), որում գործածվում է այդ արտահայտությունը. Շապուհի պահանջով հայոց արքա Ար-

շակը, լինելով Պարսկաստանում, մի անգամ սպարապետ Վասակի հետ շրջելիս է լինում Շապուհի պատերազմական ուժ կազմող ձիերի ասպաստանում [«ձիանոցում»]. ասպ. < պրս. (պիլ.) asp «ձի»]. «Ապա եղև դէպ օր մի յաուրց եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել զասպաստանաւ միով զարքային Պարսից. իսկ ախտոպետն արքային Պարսից նստէր ի ներքս ի տան ասպաստանին: Իբրև տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեաց զնա, և ոչ ինչ շուքս դնէր նմա: Այլ և անարգանս ևս դնէր թշնամանաց, ասելով ի պարսկերէն լեզու՝ թէ այծից Հայոց արքայ, ե՛կ նի՛ստ ի խրճան խոտոյ ի վերայ» (Բուզ., էջ 106): Նման պատումը լիովին վիպական է (հմմտ. նաև *ոչ ինչ առ լուս կալնուլ, ոչ ինչ շուքս դնէր, անարգանս դնէր*, որոնք, իբրև կապակցություններ, հազեցած են ժամանակի ժողովրդական մտածողությամբ):

2. Արտահայտության առասպելականի նոր մեկնաբանություն

Հարկ կա հատուկ նշելու, որ այծի պաշտամունքը գիտության այսօրվա տվյալներով հասցվում է մինչև մ. թ. ա VII, նույնիսկ VIII հազարամյակ, ընդ որում հին աշխարհում այն բնորոշվում է իբրև լեռնային գոտու կարևոր և հարմար կենդանի, որպես կաթնատու, որի մորթին մշակվում է *տիկ* «հեղուկ լցնելու աման» պատրաստելու համար, իսկ միսը նախընտրելի է, քան մյուս կենդանիներինը, որովհետև դյուրամարս է, և այս ամենով հանդերձ՝ այն գոհաբերման կենդանի է եղել (հմմտ. «Словарь античности», 1989, 275)¹:

Սույն հատվածի վիպական-առասպելական կողմի մեկնաբանության հարցում, ի թիվս այլ կարգի աշխատանքների, այստեղ ուշագրավ է Բ. Ն. Առաքելյանի մի ուսումնասիրությունը, որը նվիրված է հայոց Վահագնի առասպելին՝ կապված նրա *միշտապաքաղ*

¹ Չոհաբերման հատկանիշն անցել է քրիստոնեական հատուկ ծիսակարգին՝ Սուրբ խաչին (բրբռ.՝ *արքիսէ*), որի դեպքում մինչև վերջին ժամանակներս հայկական գյուղերում հանգուցյալի հիշատակին զոհաբերման էին տարվում սպիտակ այծեր (հատկապես մատղաշ տարիքի՝ ուլեր):

մակդիր-անվանման հետ (այս բառի երկրորդ բաղադրիչն է *քաղ* «արու այծ») (*Առաքելյան*, 1951, 75-81): Նա իրավամբ նշում է, որ «վիշապաքաղը հարաբարդված է վիշապ և քաղ բառերից: *Քաղ* նշանակում էր արու այծ, նոխազ կամ քոչ», որպիսով բացատվում է *քաղ* արմատի մեջ «քաղել, պոկել, առանձնացնել» իմաստ տեսնելը, որ նկատվում է նախորդ ուսումնասիրողների մոտ» (և. տ., 75): Ըստ այդմ՝ նա գտնում է, որ «Մատենագրական և հնագիտական տվյալները թույլ են տալիս ոչ միայն կասկածանքի ենթարկելու այդ բացատրությունը, այլև առաջարկելու բոլորովին նոր մեկնաբանություն» (և. տ.):

Այնուհետև, Բ. Ն. Առաքելյանը գտնում է, որ հին աշխարհում քիչ չեն այն իրերը, որոնցով ներկայացվում են առասպելական արարածներ «իբրև երկու տարբեր կանդանիների խառնուրդ, օրինակ՝ վիշապառյուծ, եղջերվաքաղ: Վերջինս համարվում էր կես եղջերու, կես այծ ու նույնիսկ բառակազմությամբ էլ հար և նման է վիշապաքաղին», և դա հաստատվում է, ըստ Բ. Ն. Առաքելյանի, հնագիտական տվյալներով (հմմտ. Էրմիտաժում պահվող արծաթե մի անոթը՝ թևավոր վիշապաքաղի պատկերով. «վիշապ՝ այծի գլխով, առջևի երկու ոտքերով և թռչնի թևերով» (և. տ., 75-76)¹:

Անվանի հնագետի կարծիքն այն է, որ «վիշապաքաղը կամ վիշապայծը Վահագն աստծու կերպարն է՝ առաջացած նրա պաշտամունքի ավելի վաղ փուլում, երբ ամպրոպի, փոթորկի և ամպի աստվածությունը մի էր և երևան էր գալիս արու այծի ու թևավոր վիշապի միասնական պատկերով» (և. տ.)²: Մեր այս թեմային վերաբերող, ի վերջո, ուշագրավ է այն, որ Վահագնի աստվածային լինելը՝ վիշապաքաղ մակդիրով, և ըստ այդմ՝ «Վահագնի հետ կապված առասպելները երկար ուղի են անցել և մի ընդարձակ

ցիկլ են կազմել, որը աստիճանաբար հարաբարդվել է» (և. տ., էջ 78):

Նկատենք նաև, որ այս հարցում Մ. Աբեղյանի նման մեծության տեսությունը մերժելը, նույնիսկ գիտության ներկայիս տվյալների օգտագործմամբ, բավականին դժվար պիտի լիներ, սակայն այդ ուղին, ինչպես տեսնում ենք, մատնանշում է մեկ այլ մեծություն՝ Բ. Առաքելյանը, գրելով. «Աբեղյանը այդ առասպելների միայն վերջին փուլն է քննության առարկա դարձրել, այն էլ նկատելիորեն ստատիկ վիճակում, ուստի և չի բացահայտել այդ առասպելների տեղական բովանդակությունն ու կոլորիտը և հին արևելյան առասպելների հետ նրանց կապերը բացատրելու փոխարեն Վահագնին իր առասպելով փոխառված է համարում Իրանից» (և. տ.):

3. Արտահայտության լեզվական մեկնաբանության փորձ

Ինչպես Բուզանդի լեզուն առհասարակ, այնպես էլ սույն հատվածը, տվյալ դեպքում հիշյալ արտահայտությունը, կրկնում ենք, օրինակ է ժամանակի բանավոր մտածողության: Նկատված է, որ այս և նման շատ արտահայտություններ և ոճեր հեղինակի լեզվում ունեն ժողովրդական-բարբառային հիմքեր (*Առաքելյան*, 1948, 311-339): Այս հատվածի հետ կապված՝ Վ. Առաքելյանը էական ճշգրտում է մտցնում ոչ միայն Մալխասյանցի թարգմանության, այլև Աճառյանի՝ լուս ձևը լուս «դարձնելու» մեջ. «սա մի շատ սովորական գրաբարյան նախադասություն է, որ նշանակում է՝ «լվի տեղ էլ չդրեց կամ՝ լվի տեղ դնելով՝ չմեծարեց»: Թյուրիմացության պատճառը «լու» բառի հոգնակի ձևն է, բայց այդ գրաբարյան դարձվածքի «ունել» բայի «առ» նախդիրով խնդիրը միշտ էլ հոգնակի է դրվում, երբ «ունել» նշանակում է «համարել» (և. տ., էջ 320-321):

Այնուհետև տեղեկանում ենք Վասակի հանդուգն բնավորության տեր լինելուն. «մեծաւ բարկութեամբ և բազում սրտմտութեամբ բարկանայր, ի վեր առեալ գտուսերն, զոր ընդ մէջս ունէր, հարեալ անդրէն ի տեղուջն զախոռապետն արքային Պարսից

¹ Նշվում է նաև նման մեկ այլ «արծաթե անոթ (քիտոն)» հին Նիսայում (հղում *Массон*, 1950, 3):

² Ըստ այսմ՝ փաստորեն մերժվում է Մ. Աբեղյանի տեսակետը՝ Վահագնի ամպրոպածին աստված լինելու վերաբերյալ, և դա հեռանկարային է:

գլխատերի ի ներքս յասպաստանի անդ» [հմմտ. այստեղ ևս *բարկու-թեամբ բարկանալ* (սա ասորաբանություն է), *զոր ընդ մէջս ունէր, հարկանել անդրէն ի տեղոջն* արտահայտությունները՝ բանավոր խոսքին առավել բնորոշ:

Ստ. Մալխասյանցի աշխարհաբար թարգմանության մեջ «Այ-ծից Հայոց արքայ» արտահայտությունը բացատրվում է մի ձևով, որ մասամբ է արտացոլում իրողությունը. «Հայտնի է, որ հին ժամանակ սովորություն կար, որ գավառները մեկը մյուսին ծաղրական կամ արհամարհական մակդիրներ էին դնում, ինչպես ագուլեցոց՝ զոկ, հին նախիջևանցոց՝ խաչագող, նոր նախիջևանցոց՝ հածե, ախալցխեցոց՝ կոռ, երևանցոց՝ շան ճրագ, պոլսեցոց՝ հոսոս և այլն: Թվում է՝ այսպիսի մի մակդիր է եղել Պարսկաստանում հայերի համար՝ այս բառը, նկատի ունենալով, որ Հայաստանը լեռնոտ երկիր էր, և ժողովուրդը մագլցում էր լեռների վրա՝ ինչպես այծերը: Ախոռապետը ոչ թե անարգելու նպատակով (հիշենք, որ Բուզանդն ասում է՝ «անարգանս ևս դնէր թշնամանաց» - Վ.Հ.), այլ հանաք անելով, այս մակդիրն է տալիս Արշակին՝ հրավիրելով խոտի խուրձի վրա նստել: Նա ընկերական հանաք է արել, մոռանալով, որ խոսում է թագավորի հետ» (ս. տ., էջ 433-434):

Այդ արտահայտությունը Մալխասյանցի կողմից թարգմանված է «այծ-հայերի արքա» ձևով, որը ճիշտ թարգմանություն է, միայն եթե բացառենք «այծ-հայեր» կապակցությունը գծիկով գրված լինելը, որը նույնականություն է նշանակում, այնինչ բնագրում, կարծում ենք, գործ ունենք որոշիչ-որոշյալ կապակցության հետ՝ «այծ հայերի արքա»:

Մալխասյանցի այս ծանոթագրության մեջ կան անճիշտ կետեր. նկատի ունենք՝ «ոչ թե անարգելու նպատակով», «հանաք անելով», «նա ընկերական հանաք է արել» ձևակերպումները: Ասվածից թերևս միայն տեղին է՝ «մոռանալով, որ խոսում է թագավորի հետ» ձևակերպումը, իսկ առհասարակ այստեղ ուշագրավ է այն, որ *այծ* բառի գործածությունը կապվում է «Հայաստանի՝ լեռ-

նոտ երկիր» լինելու հետ, թեև այս դեպքում էլ տեղին չէ ասել, թե «ժողովուրդը մագլցում է լեռները»:

Ա. Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկ»-ում (Ե., 1976, էջ 235) վերը նշված հատվածի որոշ բառաձևերի գործածության վերաբերյալ կա ոչ պակաս, քան ութ ծանոթագրություն (ս. տ., էջ 403. ծանոթ. 53-60), որոնցից, տվյալ դեպքում, առավել ուշագրավ են հետևյալները. «օր մի յաուրց», որ նշանակում է «օրերից մի օր», «եկն եմուտ շրջել», որ թարգմանվում է նախ՝ «եկավ մտավ», այլև «շրջելու, շրջելու համար», որոնք բանավոր խոսքի նմուշ են և այլն:

Այստեղ ունենք մի առարկություն՝ Աբրահամյանը գտնում է, որ «ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեաց զնա» արտահայտությունը, ինչպես որ Վ. Առաքելյանն է «ճիշտ բացատրությունը տվել», թարգմանվում է «լու համարելով, լվի տեղ դնելով՝ չմեծարեց նրան», որ, ըստ իս, կարելի է նաև այլ կերպ թարգմանել՝ «լվի տեղ անգամ չդնելով՝ չմեծարեց նրան»:

Հայերենում ոչ միայն *այծ* «էգ այծ», այլև վերջինիս իմաստով, եթե ոչ իբրև հոմանիշ, ունենք նաև *նոխսագ* «արու այծ», *քաղ* (նույնը), *քոշ* (< *քաւշ*) (նույնը) բառերը, որոնցից, ըստ Աճառյանի, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից, մանավանդ Հյուբշմանից, միայն *այծ* բառն է, որ բնիկ է, ծագում է հե. *aig- (ավելի նոր՝ *aik') արմատից, որ ժամանակին ստուգաբանել է Վինդիշմանը (հմմտ. հուն. αἴξ «այծ», սեռ. հոլ. αἴγος «այծի», αἰγειος «այծյա, այծենի») (*Աճառյան*, 1971, 169), հմմտ. նաև միկ. հուն. aizā «այծի» (Γ.-ՄԵ., 1984, 586)¹: Մյուս բառերից երկուսը փոխառություն են. *քոշ* (< *քաւշ*) «արու այծ» < ասոր. kawša «խոյ. ոչխար», արաբ. kabš «մատաղ խոյ» (*Աճառյան*, 1979, 604-605), *նոխսագ* «արու այծ» < պիլ. (պրսկ.) ոսհāz «արու այծ (որ գնում է հոտի առջևից)» (*Աճառյան*, 1977, 463): Վերջին *քաղ* «արու այծ» բառը, ըստ Աճառյանի բառարանի տվյալների, չունի որևէ ստուգաբանություն, այսինքն՝ ան-

¹ Հեղինակներն ունեն հղում ուրիշ հեղինակի (*Risch* 1976, 313):

հայտ ծագման է, թեև այդ բառի վերաբերյալ մենք ունենք մեր ենթադրությունը, որին այստեղ չենք անդրադառնում:

Ի դեպ՝ նկատենք, որ *այծ* բառի բնիկ կամ հնդեվրոպական լինելը համեմատական լեզվաբանության մեջ հիմնավորվում է միայն հունարենի տվյալների գուգահեռությամբ, որ նշանակում է, թե գործ ունենք, այսպես կոչված, բացառյալ (էքսկլյուզիվ) գուգահեռության (իզոգլոսի) հետ, իսկ վիպական առումով, ենթադրում ենք, համեմատելի է հոմերոսյան «քավության նոխազ» (ռուս. козел отпущения «նույնը») արտահայտության հետ: Այնուհետև, հայ. *նոխազ* բառին և նրանից կազմվածներին համարժեք է հուն. τράγος «նոխազ» (հմմտ. լատ. hircus), τράγωδος «նոխազերգու», τράγῳδία «նոխազերգություն» (հմմտ. հայ. փոխառյալ *տրագեդիա* «ողբերգություն»)։ հայերեն *նոխազ*, *նոխազերգու*, *նոխազերգության* և նման մյուս կազմությունները գտնում ենք Եփրեմ Ասորու Ճառերում, Մագիստրոսի Թղթերում, Երզնկացու քերականության մեջ և այլն:

Բուզանդի Պատմության «Այծից Հայոց արքայ» արտահայտությանն անդրադառնում ենք հենց այն մտածումով, որ նախ՝ *այծ* բառը, լինելով բնիկ, գուգահեռ է միայն հուն. αἶξ «այծ» ձևին, այնուհետև՝ նրա *քաղ* հոմանիշ-տարբերակը ոչ այլ ինչ է, քան *վիշապաքաղ* բարդ բառի երկրորդ բաղադրիչ, երրորդ՝ այծի տոտեմ-պաշտամունքային երևույթը հիմնովին տարածված է եղել Հայկական լեռնաշխարհի հանրության առաապելական պատկերացումներում, և ըստ այդմ՝ անցած նաև հարևան ժողովուրդներին, տվյալ դեպքում իրանականին, - և այս ամենը հիմք է հանդիսանում երևույթը բխեցնելու նախահնդեվրոպական ակունքներից՝ ժառանգորդաբար անցած և պահպանված լեռնաշխարհի հնագույն բնիկների լեզվական և առաապելական ձևակերպումների մեջ:

Պարսից ախոռապետը դիմել է հայոց արքա Արշակին վաղուց ի վեր գոյություն ունեցող, հնավանդ, ուստի առաապելաբար հայտնի մի երևույթի պարսկերեն ձևակերպված արտահայտությամբ,

որ թարգմանաբար բերում է Բուզանդը, և այդ հատվածը բերվում է Վասակի քաջությունը ցույց տալու նպատակով:

Եզրակացություններ

1. Նոր ուսումնասիրության տվյալները, կապված ժամանակի առաապելական պատկերացումների հետ, ցույց են տալիս, որ գործ ունենք լեզվական մտածողության այլ դրսևորման հետ:

2. Այդ արտահայտությունը բանավոր պատկերացումների մի օրինակ է, խորթ չի եղել հարևան ժողովուրդներին:

3. Արտահայտությունը հիմնված է փոխաբերացված մտածելակերպի վրա, որ առավել ևս բնորոշ է բանավոր խոսքին:

4. Բուզանդի երկում տեղ գտած նման միավորների քննությունը կարևոր է ժամանակի լեզվի ամբողջական պատմության համար:

Արրահամ Աղբաթանեցու «Թղթեր»-ի լեզուն

Ներածություն

Հայոց եկեղեցու երևելի գործիչները հոգևոր սպասավորությունից բացի հայտնի են նաև իրենց գրական-ստեղծագործական ժառանգությամբ: Ժամանակի խնդիրների լուծման նպատակով գրվում են ճառեր, ուղերձներ, մեկնություններ, որոնք գրավոր խոսքի արտահայտություն են:

Արրահամ Աղբաթանեցու «Թղթերի» լեզուն ասվածի վառ օրինակ է, որի բառապաշարի քննությունը երևան է բերում մի շարք յուրահատկություններ: Բառապաշարի մանրամասն վերլուծությունը երևան է հանում նոր բառի, ինչպես նաև բառի նոր իմաստով գործածության ակնառու փաստեր՝ ի լրումն հին հայերենի ընդհանուր բառապաշարի:

Մինչև օրս այս թեման չի եղել առանձին քննության առարկա:

1. Արրահամ Աղբաթանեցու «Թղթեր»-ի մասին

Աբրահամ Աղբաթանեցին VI դ. և VII դ. սկզբի հայ եկեղեցու, ավելին՝ հայ իրականության երևելի դեմքերից է: Հայոց հայրապետական աթոռին է եղել 607-615 թթ., որի ընթացքում հսկայական ջանքեր է գործադրել մի կողմից՝ նվիրապետության ամբողջական միասնության համար, այլև պայքարել քաղկեդոնական և նեստորական չարափառ աղանդների դեմ, մյուս կողմից՝ Հայոց, Վրաց, Աղվանից (վերջին երկուսի՝ առաջինը լինելու վեճի հանգամանքով) եկեղեցիների միակամության մեջ մնալու համար:

Այս խնդիրներին են վերաբերում հեղինակի «Թղթերը», որոնց լեզվի, մասնավորաբար բառապաշարի քննությանն է նվիրվում մեր այս աշխատանքը՝ լեզվի, այսպես կոչված, հետդասական գրաբարի բառապաշարի յուրահատկությունների առնչությամբ: Ծավալուն չեն այդ երկերը, ամբողջը միասին թերևս մեկուկես տասնյակ էջի սահմանում՝ տպագրական միջին էջադրամբ¹:

Այդ «Թղթեր»-ի բանասիրական-աղբյուրագիտական, ինչպես նաև մեկ-երկու բնագրի հեղինակային արժանահավատության վերաբերյալ, մանավանդ դավանաբանական վեճերի և հարակից խնդիրների առնչությամբ, գրվել են ուշադրության արժանի ուսումնասիրություններ (*Ասասյան*, 1959, 76-81. *Мырадян*, 1968, 41-64.

¹ Այդ նյութերն են՝ «Պատասխանի թղթոյն Մովսիսի» // «Մատենագիրք հայոց», հ. Դ (Է դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 5 (հմմտ. «Գիրք թղթոց», Երուսաղեմ, 1994, էջ 314-315). «Թուղթ առաջին տեառն Աբրահամու հայոց կաթողիկոսի, առ Կիւրիոն վրաց կաթողիկոս» // «Մատենագիրք հայոց», էջ 6-7 (հմմտ. «Գիրք թղթոց», էջ 316-318). «Թուղթ երկրորդ տեառն Աբրահամու հայոց կաթողիկոսի, առ Կիւրիոն վրաց կաթողիկոս» // «Մատենագիրք քհայոց», էջ 8-9 (հմմտ. «Գիրք թղթոց», էջ 333-335). «Թուղթ երրորդ տեառն Աբրահամու հայոց կաթողիկոսի, առ Կիւրիոն վրաց կաթողիկոս» // «Մատենագիրք հայոց», էջ 10-14 (հմմտ. «Գիրք թղթոց», էջ 339-345). «Թուղթ շրջագայական տեառն Աբրահամու հայոց կաթողիկոսի» // «Մատենագիրք հայոց», էջ 15-20 (հմմտ. «Գիրք թղթոց», էջ 356-364). «Պատասխանի ի հայոց թղթոյն Միսիթարայ Ամարասա եպիսկոպոսի» // «Մատենագիրք հայոց», էջ 21-37 (բնագրում փխ. *Ամարասայ*) (հմմտ. «Պատասխանի ի հայոց թղթոյն Աղուանից (Վրթանիսի Քերթողի)» // «Գիրք թղթոց», էջ 365-396). «Յաղագս դատաստանաց ամուսնութեան եւ քանիոնութեան ազգականաց» // «Մատենագիրք հայոց», էջ 38-41. «Տեառն Աբրահամու հայոց կաթողիկոսի Խոստովանութիւն» // «Մատենագիրք հայոց», էջ 42:

Մուրադյան, Հակոբյան, 2005, էջ 3-4): Սակայն չունենք դրանց լեզվին, առանձնապես հին գրական հայերենի բառապաշարի տեսանկյունից որևէ անդրադարձ, առավել ևս՝ լեզվի ընդհանուր պատմությանը վերաբերող աշխատություններում (*Ղազարյան*, 1954, 2-րդ հրատ.՝ 1981. *Ղազարյան*, 1960): Մեր այս աշխատանքը գալիս է ինչ-որ չափով լրացնելու այդ պակասը:

2. Բառային միավորների բառարանագրային քննություն

Առաջին իսկ տպավորությունն այն է, որ այդ երկերը պարունակում են բառապաշարի յուրօրինակ շերտ, հանդես են բերում քերականական կառուցվածքի այնպիսի գծեր, որոնք զգալիորեն բնորոշ են բանավոր-խոսակցական, քան գրավոր-գրական լեզվին. այդ երկերը կարևոր օրինակ են հետդասական գրաբարի:

Ի համեմատություն ՆՀԲ-ի տվյալների՝ Աղբաթանեցու «Թղթեր»-ում գտնում ենք ավելի քան չորս տասնյակ բառեր, որոնք հիմնականում երկու կարգի են՝ հիշյալ բառարանում չբառարանագրված. օրինակ՝ *վեր տանումն* (< տանեմ) «տանելը» (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 16-17), ՆՀԲ-ն չունի. «եւ զմեզ ի վեր տանումն ի բարձրութիւն երկնից երկնի ուրանան»:

Այլ բնույթի ենք համարում այն բառերը, որոնք ՆՀԲ-ում վկայված են այս կամ այն կերպ՝ ըստ Աղբաթանեցուն ժամանակակից, նաև հետագա և այլն հեղինակների երկերի, բայց ոչ այս հեղինակի «Թղթեր»-ի: Օր.՝ *աղծասպիղծ*. «Կամէաք... ծանուցանել ձեզ զվնասամտութիւն ժողովոյն Քաղկեդոնի եւ գտումարին Լեոնի, եւ *զաղծասպիղծ* կրանս եւ զանսորբ վարս» (Աղբաթ. թուղթ առաջին, էջ 7). ՆՀԲ-ն վկայակոչում է նախ՝ Հովհան Օձնեցուն, նաև՝ Կանոն (= «Գիրք կանոնաց»): Այնինչ, չենք բացառում, որ կարող էր բառն այլ կերպ վկայակոչված լինել, ասենք՝ նրանց հետ միասին: Վերջին դեպքում նկատի ունենք այլ հեղինակների վկայմամբ բերվող բառերը: Հաշվի ենք առնում նաև այնպիսիները, որոնք տարբերվում են գրությամբ («գրչությամբ»), քերականական այլ ձևեր են և այլն: Այստեղ առանձին անդրադառնում ենք նաև

հայերենի տարբեր մակարդակներին (հնչյունական, քերականական, ռճական և այլն) վերաբերող իրողություններին:

1. Բառեր, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում. ըստ այս կամ այն խոսքի մասին պատկանելու հատկանիշի՝ նման բառերը նույնպես կազմում են առանձին խմբեր: Դրանց բառարանագիտական առանձնացումն, ինչ խոսք, ունի կարևոր նշանակություն առաջին հերթին լեզվի բառապաշարի պատմության առումով, այնուհետև՝ նյութ է տրամադրվում հայերենի պատմական բառարանի հետագա ստեղծման համար, որ, կարելի է ասել, հայ բառարանագրության խնդիրներից է:

ա) Գոյական. սրանք համեմատաբար քիչ են՝ մեկ-երկու օրինակ. *մեռելամոտություն*. «կամ իջանել յանդունդս իմաստից Գրոց՝ ըստ մերում *մեռելամոտութեան* զանծախապէս աղքատացեալն» (Աղբաթ. պատասխ., էջ 22), *ուրուսխասս(ք)* «եւ նմա լինել Աստուծոյ պետ եւ իշխան՝ անդր է քան *զուրուսխասսիցն* բարբաջանս» (ն. տ., էջ 25),

բ) Ածական. սրանք նման կազմությունների գերակշիռ մասն են. *աղայթայիր*. «ըղձամբք *աղայթայիր* եւ ուժգին խնդրուածաք սրտի զտէրունեան հոգեխառն ողջո՛յն համարձակապէս մեզ առ ձեզ ասել» (Աղբաթ. պատասխ., էջ 21), *անաշխատարար*. «ի վերջ հրամայեցաք հարկանել եւ ի բաւական լինել *անաշխատարար* յառաջատիլ զՀոգւոյն Սրբոյ զվաղապետութիւնն» (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 16), *առաւելախաղաց* (< *առաւելախաղացի*). «եւ մտաւք միայն որոշել որ ոչն որոշի՝ միատրեալ աստուածութեամբ, *առաւելախաղացի* հաւասարմանն, եւ է՛ ինչ, զոր եւ դուք վկայեցէք» (Աղբաթ. պատասխ., էջ 25), *դիրալպիրծ*. «եւ սա չէ *դիրալպիրծ*, կամ վրիպեցուցանող շաւիղ ի Սուրբ Երրորդութենէն» (ն. տ., էջ 36):

Այդպիսին են նաև հետևյալ օրինակները. *երկակաց* (Աղբաթ. թուղթ երրորդ., էջ 12), *երկայնուղեայ* (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 16), *զգաստայի* (ն. տ., էջ 15), *ընկախակոտ* (ն. տ., էջ 15), *ծուլական* (ն. տ., էջ 16), *կատարնագոյն* (Աղբաթ. պատմ., էջ 5), *մուսցածնոյց*

(Աղբաթ. պատասխ., էջ 29)¹, *չիշատակելի* (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 18), *պակասաորեայ* (Աղբաթ. պատասխ., էջ 24), *սղալսահեղց* (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 15) և այլն:

գ) Բայ. ի համեմատություն նորակազմ գոյականների՝ սրանք ավելին են. *աղանդարանել*. «ապա եւ այս չարչարելիք յանչարչարելումն չարչարին, եւ անհուն աստուածք այլ եւ այլք *աղանդարանին* մեզ պաշտել» (Աղբաթ. պատասխ., էջ 29), *դժոխաժառանգեցուցանել* (< *դժոխաժառանգել*). «Արդ՝ ըստ առաքելոցն եւ ըստ երանելի մեր վարդապետացն հրամանի՝ փախիցուք ի նզովեցելոցն, եւ ի նոցունց *դժոխաժառանգեցուցանող* փոխմանցն, զանբիծն հաւատսն զառեալ ի մեզ պահելով» (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 19):

Այսպիսին են նաև հետևյալները. *բռնածգել* (Աղբաթ. պատասխ., էջ 32, 36)², *դիրաբերելի* (ն. տ., էջ 36), *կուպսիսալած առնել* (ն. տ., էջ 28)³ և այլն:

դ) Մակբայ. հանդիպում է միայն հետևյալ բառը. *ցուցակարէն* «մանրամասնորեն». «Այս է խոստումն նախասացեալ *ցուցակարէն* երանութեանցն պայծառութիւն, որ առ Թովմաս ճայնեն» (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 17):

2. Բառեր, որոնք ՆՀԲ-ում վկայված են տարբեր ժամանակների գրական երկերից քաղված օրինակներով

Աղբաթանեցու «Թղթեր»-ում հանդիպող միավորները մեկամեկ համեմատելի են մյուսների հետ՝ հարաբերականորեն պարզելու բառի կազմության կամ գործածության ժամանակը, առավել ևս հեղինակային գործածությունը, որ մեծապես կարևոր է հայերենի ընդհանուր բառապաշարի պատմության տեսանկյունից: Ստորև բերում ենք մի խումբ բառեր, որոնց ստեղծման պատմությունը պարզելիս հենվում ենք առաջին հերթին ՆՀԲ-ի տվյալների

¹ ՆՀԲ-ն ունի առանց *ս* հոդակապի՝ *մուսցծնոյց*, տե՛ս *մուսցածին*:

² ՆՀԲ-ն չունի, թեև ունի *բռնածգոյթիւն*:

³ ՆՀԲ-ն չունի, ոչ էլ *կուպսիսալած*:

վրա՝ նկատի ունենալով, որ դրանք պահանջում են ավելի մանրամասն քննություն:

Առանձնացնում ենք մի քանի խումբ:

ա) Բառեր, որոնք ՆՀԲ-ում բերվում են հետագա հեղինակների անունով, որ լեզվի ընդհանուր պատմության ժամանակի առումով, բնականաբար, վերանայելի է օր.՝ *ազգահամարություն* «ազգահամար. ազգի ծննդաբանություն». «Քանզի ոչ միայն զխառնակություն *ազգահամարությանն* գործեն այնպիսիքն, այլ եւ զազահություն» (Աղբաթ. դատ., էջ 38)¹.

անբասականություն «ոչ բավարար լինելը». «Նաեւ արժանատր ասել՝ *զանբասականությունս* իմ, որ եւ յանձնեցաք իսկ պարգեւաբաշխին...» (Աղբաթ. պատմ., էջ 5)².

անյատելուած «կատարյալ. ամենալի». «զի զՍրբոյ Երրորդութեանն խորհուրդ *անյատելուած* եւ առանց թերանալոյ երգեն...» (Աղբաթ. պատասխ., էջ 22)³.

առաջնատրություն «առաջինը». «որք ասացին երկու բնությունս, եւ երկու *առաջնատրությունս* եւ երկու դէմս» (Աղբաթ. խոստ., էջ 42)⁴.

բռնաձգություն «բռնի ուժ գործադրելը». «Բայց յետ *բռնաձգութեանս* դիմադարձեալ՝ գուցէ ի փոխաւոյն զսիրտս իշխանացն հաշուէ» (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 15)⁵.

խորթակից «անհարազատ». «Զխորթս միմեանց – *զխորթակիցսն* ասէ մինչեւ ցերրորդն» (Աղբաթ. դատ., էջ 40)¹.

¹ ՆՀԲ-ն ունի՝ հետագա հեղինակներ (Մխիթար Գոշի «Դատաստանագիրք», Հովհաննէս Գառնեցի):

² ՆՀԲ-ն ունի՝ ՃՃ [= «Ճառընտիրք» (տարբեր ժամանակների)], Երզն. քեր. [= Երզնկացու «Մեկնություն քերականի»]:

³ ՆՀԲ-ն ունի՝ Խոսրովիկ [= Խոսրովիկ թարգմանիչ], Նար. [= Գրիգոր Նարեկացի]:

⁴ ՆՀԲ-ն ունի՝ Նիւս. կազմ. [= Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ», թարգմ. Միւնեցոյ (Ը դար):

⁵ ՆՀԲ-ն ունի՝ Սրկ. (ցանկում՝ Սարկ. հանգ.) [= Սարկաւագ վարդապետի «Բացատրություն հաւատամքի»]:

մեկնողորէն «մեկնողաբար». «զոր եւ ես կարճառատագոյնս եւ *մեկնողաւորէն* յիշատակեցից» (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 17)².

փոխադասել «տեղաշարժել». «Քանզի ի Պատոսէ ուսայ այսպէս *փոխադասել*, նոյնպէս անհարկելիք յերկինս դասակից» (Աղբաթ. պատասխ., էջ 22)³:

բ) Բառ, որ ՆՀԲ-ն ունի միայն այս հեղինակի երկի մի հատվածի օրինակով. ըստ այդմ այն պիտի դիտվի հեղինակային. *չուղղափառ* «մոլորյալ». «չգրեաց այնպէս, թէ դուք չէք ուղղափառք, այլ թէ ընդ *չուղղափառսն* ընդէ՞ր հաղորդեցայք» (Աղբաթ. թուղթ երրորդ., էջ 14)):

գ) Բառ, որ ՆՀԲ-ն չունի, այլ ունի նույնին մոտ մեկ այլ կազմություն.

անզատանել «անբաժան լինելը». «Եթե որդիք այնց հարցն եմք, որք *անզատանեն* յառաքելոցն, զհաւատս պինդ կալցուք» (Աղբաթ. պատասխ., էջ 37)⁴:

դ) Բառեր, որոնք ՆՀԲ-ն նշում է Աղբաթանեցուն ժամանակակից մեկ այլ հեղինակի, որպիսով առաջնությունը մնում է անկիսելի.

կամահաճոյ «կամարար. կամակատար». «զնոյն փառաբանելով ի միութիւն, եւ են *կամահաճոյ* ամենեցուն Արարչին» (Աղբաթ. պատասխ., էջ 22)⁵:

համախոհակ «համամիտ». «եւ ժողովեալքն զլխաորք *համախոհակք* նմին, արձան կացուցեալ իրեանց չարափառութեան զթուղթն» (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 18)⁶:

¹ ՆՀԲ-ն ունի՝ Մխ. դոս. [= Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»]. թվում է մեջբերում վերջինից;

² ՆՀԲ-ն ունի՝ Երզն. մտթ. [= Երզնկացու (Շործորեցու) «Մեկնություն Մատթեոսի»]:

³ ՆՀԲ-ն ունի՝ Ժդ. հռոմկլ. [= «Գործք... Ժողովոյն, Հռոմկլայու»]:

⁴ ՆՀԲ-ն ունի *անզատելի* «անբաժանելի», նախորդող վկայություններով:

⁵ ՆՀԲ-ն ունի՝ Մաշտ. [= Մաշտոց գիրք՝ ծիսական]:

⁶ ՆՀԲ-ն ունի՝ միայն Յհ. իմ. պաւղ. [= Յովհան Օձնեցի. «Ընդդէմ պաւղիկեանց»]:

ե) Բառ, որ ՆՀԲ-ն բերում է մեկ այլ իմաստով. *չրջագայական* «չրջաբերական. հրահանգման». «Թուղթ *չրջագայական* Տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի» (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 15):

զ) Բառ, որ ՆՀԲ-ում բերվում է տարբեր նյութեր պարունակող ժողովածուից (օր.՝ «Եօթնագրեանք»-ից). *ասղմանալ* «սաղմնավորվել». «*ասղմանացեալ* էր Բանն Աստուած ի Հոգւոյն Սրբոյ» (Աղբաթ. պատասխ., էջ 31) և այլն:

3. Քերականական, ոճական (խոսակցական) ձևերի տարբերություններ

Դրանք այս հեղինակի լեզվում զգալի թիվ են կազմում: Շատ դեպքերում գործածվում են բառեր, որոնք հնչյունապես այլ են, քան հին գրական նորմայով սահմանելի համարվողները:

Նշենք նման օրինակներից մի քանիսը:

Ըղձական ապանին սահմանական ներկայի իմաստով. «*Մի՛ դանդաղիցիս* ի սուրբ Զատիկն գալ այսր, զի բազմաց լինի խնդութին» (Աղբաթ. պատասխ., էջ 5):

Ազատորեար «ազատանի» բառը, ըստ ՆՀԲ-ի, անեզական է (հավաքական-անեզական), որ հանդիպում է Փարպեցու և Արծրունու երկերում, երկու դեպքում էլ գործածված միասին գրությամբ, թեև ՆՀԲ-ն բառի բացատրության մեջ նշում է նաև առանձին՝ *ազատ որեար* (եթե վրիպակ չէ). Աղբաթանեցին գործածում է առանձին՝ *ազատ որերոյ*, որ, թերևս, օրինակ է բանավոր մտածողության. «Եկն մոլորութիւնս այս... առ Բաբգենաւ հայոց կաթողիկոսի և առ Գաբրիէլի վրաց կաթողիկոսի, և միաբանութեամբ եպիսկոպոսաց և *ազատ որերոյ*, նզովեցին և ի բաց հեռացան» (Աղբաթ. թուղթ երկրորդ, էջ 9):

Սակավ, բայց կա, այսպես կոչված, բայական լծորդության փոփոխություն (*ու > ա*. նաև սուկածանցի՝ *ն > ան*). *քաղցնալ* (փխ. *քաղցնուլ*). «Որք ի սուրբ վարդապետացն երկաբնակք անուանե-

ցան և հայհոյողք, քանզի և որոշեն իսկ զկիրսն միոյ բնութեան՝ *զքաղցնալն*, զծարաւելն, զվաստակելն յուղեգնացութենէն, զլալն ի գթոյն» (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 18):

Ոճական յուրահատկություն է (թերևս՝ խոսակցական հիմքով պայմանավորված) բառակապակցության նույնարմատ գոյական և բայ բաղադրությունը, որ նկատված է նաև դասական մատենագրության մեջ. *ախտանալ զախտ*. օր.՝ «Արդ՝ աղաչեմք և մեք զձեր սրբութիւնդ, մի՛ *ախտանալ զախտ* ուրացողացն» (Աղբաթ. թուղթ երկրորդ, էջ 9):¹

Գործողության կրկնակի ժխտում (խոսակցականին բնորոշ). օր.՝ «Որ ոչ երբէք սթափին ի ննջելոյ. և ոչ զմի ինչ չփորձեմք զայն զոր գրեալն է» (Աղբաթ. թուղթ երրորդ, էջ 10)²: Թերևս նաև՝ «մի՛ լիցի. չքարոզեն այսպէս» (Ա. տ., էջ 11):

Տարածված է *ոչ* բառ-մասնիկի գործածությանը, կարելի է ասել, զերակշռող չ ժխտականի գրությունը բայի հետ՝ իբրև ժխտական. այսպես, *կարեմ* «կարող լինել» բայի անցյալի ձևի ժխտականը *ոչ* բառ-մասնիկի փոխարեն դրված է ձույլ գրվող չ մասնիկով. «որպէս արժան էր, *չկարացին* թարգմանել» (Աղբաթ. թուղթ երրորդ., էջ 13): Հմմտ. *չգիտէր, չգիտէաք* և այլն (Ա. տ., էջ 14): Այսպես նաև չ-ի գործածություն անվանակազմական հատկանիշով. *չուղղափառ* (Աղբաթ. թուղթ երրորդ, էջ 14)³, *չիշատակելի* (Աղբաթ. թուղթ շրջ., էջ 18) և այլն. «*չգրեաց* այնպէս, թէ դուք չէք ուղղափառք, այլ թէ ընդ *չուղղափառսն* ընդէ՛ր հաղորդեցայք» (Աղբաթ. թուղթ երրորդ, էջ 14) և այլն:

¹ Նման կազմությունները, հայտնի է, ունեն դասական գրաբարից եկող հիմքեր՝ իբրև ասորաբանություն (հմմտ. *Վարդանեան*, 1923, 36-46, 144-154, 421-434, այլև 1924, 350-359):

² ՆՀԲ-ն նշում է, որ *կրբէք* բառն ունի նաև *ե*-ով գրություն. սույն բնագրում *ե*-ով է, իսկ բառարանի բերած օրինակներից ոչ մեկը այդպիսին չէ:

³ ՆՀԲ-ն ունի՝ հենց այս հեղինակի նույն այս հատվածը:

¹ ՆՀԲ-ն ունի այլ՝ «պարբերական. մանեկաձև, բոլորչի» իմաստներով:

Պիտի-ն գործածվել է իբրև եղանակիչ՝ անորոշի հետ (եթե ոչ բաղադրյալ ստորոգյալի մաս, փխ.՝ *պիտոյ է ստանալ*). «Եւ գլուխ կացելոյ զբաւականութիւն գիտութեան ի հարկէ *պիտի ստանալ* եւ ուսանել» (Աղբաթ. թուղթ երրորդ., էջ 10):

Շարահյուսական յուրօրինակ (խոսակցականին մոտ երանգով) կառույց. «թուի ինձ թէ տեղեակ է ձեր սրբութիւնդ այնմ» (Աղբաթ. թուղթ երրորդ, էջ 11):

Հոլովական երկակիություն, ըստ ՆՀԲ-ի՝ *ի // ի-ս* հոլովում, թեև բերված օրինակները պարզ *ի*-ով են. նման դեպքերում է, որ հնարավոր է պնդել, թե տարբերակում կա գրականի և խոսակցականի միջև. ժամանակի հատկանիշը չի գործում, քանի որ, ասենք, Հովհան Օձնեցին, որ ժամանակով բավականին մոտ է, ունի *ի*-ով. «նոքաւք հանդերձ միաբանէին յամենայն բարիսն, եւ *զուգաց* հեռանային յամենայն չարէ» (Աղբաթ. թուղթ երրորդ, էջ 11):

Խոսակցական ոճի օրինակ. «Թո՛ղ ժամադրես ինձ եւ քեզ ի տեղի մի գալ, որով լինի խաղաղութիւն, *թէ աստուած կամի*» (Աղբաթ. թուղթ երրորդ, էջ 14):

Աբր. Աղբաթանեցու երկերի լեզվի քննությունը այս չափով, առավել ևս ավելի լայն ընդգրկումով որոշակի պատկերացում է ստեղծում հայոց լեզվի ընդհանուր բառապաշարի պատմության համար:

Եզրակացություններ

1. Աղբաթանեցին ունի որոշակի բառապաշար, նրա երկերի լեզուն օրինակ է հին հայերենի հետդասական ենթաշրջանի գրական նորմայի դրսևորման:

2. Բառապաշարի բառարանային քննությունը ցույց է տալիս, որ տվյալ բառի նախնական կիրառողը Աղբաթանեցին է, նկատելի է նաև զուգահեռություն:

3. «Թղթերը» գրված են հրապարակախոսական ոճի չափանիշներով, գրական (ստանդարտ) բառամիավորներից բացի տեղ

են գտել նաև խոսակցական լեզվի տարրեր՝ արտահայտություններ, դարձվածքներ:

4. «Թղթերի» լեզուն համալրում է հին հայերենի ընդհանուր բառապաշարը:

Թեոդորոս Քոթենավորի երկերի բառապաշարը

Ներածություն

Ավանդական բանասիրության, հատկապես լեզվաբանության մեջ եղել են մոտեցումներ (կարծիք, տպավորություն), թե Թեոդորոս Քոթենավորի երկերը գրված են «ճոռոմ», «փքուն» լեզվով (սույնիսկ ասվում էր՝ «Քոթենավորի լեզու»), որ ամենևին տեղին չէ, և դրա պատճառը, կարծում ենք, այդ հեղինակի լեզվին մակերեսորեն, ոչ ըստ էության տեղյակ լինելն է:

Այնինչ Քոթենավորի լեզուն եկեղեցական-դավանանքային խոհական-իմաստասիրական ոճի նմուշ է: Բառապաշարի հարստությունը նորակազմ բառերի, բառերի նոր իմաստային կիրառությունների հաշվին է, ինչպես նաև խոսքի քննական-դատողական կշռույթի մեջ:

1. Հեղինակի և նրա երկերի մասին

Մեր այս աշխատանքում սեղմ վերլուծությամբ անդրադառնում ենք հայոց եկեղեցու նվիրյալ գործչի՝ Թեոդորոս Քոթենավորի երեք ճառերի բառապաշարի, ավելի կոնկրետ՝ նորակերտ բառերի քննությանը: Նորակերտ ենք համարում առաջին հերթին այն բառերը, որոնք, օրինակ, տեղ չեն գտել «Նոր հայկազյան բառարանում» (ՆՀԲ-ում), ինչպես նաև, որոշակի վերապահությամբ, այն

բառերը, որոնք ՆՀԲ-ում բերվում են միայն այս հեղինակի որևէ երկից առնված վկայությամբ¹:

Հեղինակի մասին կան միայն բավականին սուղ տեղեկություններ, այն, որ պիտի ծնված լինի VII դ. սկզբներին, եղբորորդին է Կոմիտաս կաթողիկոսի (615-628 թթ.), քրոջորդին՝ Եզր կաթողիկոսի (630-641թթ.): Ժամանակին պատշաճ կրթություն աստանալուց հետո եղել է Արագածոտնի Ս. Աստվածածին վանքի վանահայր, իր հերթին՝ կրթել ապագա կաթողիկոսներ Սահակ Չորոփոքեցուն (677-703 թթ.) Հովհաննես Օձնեցուն (717-728 թթ.):

Այդ երկերն են՝ «Ճառ ընդդեմ Մայրագումացոյն» (= Թեոդ. ընդ.), «Ներբողեան ի Սուրբ Իսաչն Աստուածընկալ» (= Թեոդ. խաչ.) և «Գովեստ ի սուրբ Աստուածածինն» (= Թեոդ. գով.), որոնք տպագրված են «Յովհաննու իմաստասիրի Աձնեցոյ Մատենագրութիւնք» (Վենետիկ, 1833, 2-րդ տպ. 1953, ալիգատ՝ էջ 145-182 կամ 169-210) գրքում, իսկ վերջին ժամանակներս՝ «Մատենագիրք հայոց» (Ե հատոր, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1239-1269) ժողովածուի մեջ²:

Մի կարևոր դիտարկում է այն, որ Քոթենավորը լավագույնս ծանոթ է Ագաթանգեղոսի Պատմությանը: Դա երևում է ՆՀԲ-ում բերվող բառերի հեղինակային վկայությունից. հանդիպում են բառահոդվածներ, որոնց համար վկայակոչվում են միայն նախ՝ Ագաթանգեղոսը, այնուհետև Թեոդորոս Քոթենավորը. հմմտ. *աստուածակայ* (ած.) «որ ինչ իցէ իբրև կայք կամ բնակարան աստուծոյ» (Թեոդ. խչ., էջ 1257). այս օրինակում առաջին դեպքում այն գործածվում է իբրև որոշիչ լրացում *կայան* բառի (իմա՝ *աստուածակայ* կայանս), իսկ Քոթենավորի մոտ՝ *կեանք* բառի (իմա՝ *աստուածակայ կեանք*). *մեքակերպ* (ըստ ՆՀԲ-ի՝ *մեքակերպ* «որ է ըստ կեր-

¹ Դասական բանասիրության մեջ հարցի նման լուծումը հարաբերական ժամանակագրության առումով արդեն ունի ավանդույթի ուժ, ուստի այն մնում է միակ ընդունելին:

² Առաջին ճառը «Մատենագիրք հայոց»-ում ունի «Երանելոյն Թեոդորոսի Ընդդեմ Մայրագումացոյն» վերնագիրը:

պի մերում» (Թեոդ. գով., էջ 1267), *պարկեշտասէր* «պարկեշտություն սիրող. համեստ, առաքինի» (ս. տ., էջ 1267, 1268), և այլն: Այնուհետև, ՆՀԲ-ն ունի միայն *Ագաթ*-ի անունով վկայաբերված, սակայն բառը գտնում ենք նաև Քոթենավորի մոտ (որ ՆՀԲ-ն չի բերում). օր.՝ *պատկերասէր* «սիրող զպատկերս դից. այսինքն՝ զկուռս» (իմա՝ «կռապաշտ») և այլն:

Բառագիտական նման դիտարկումը արգասավոր է մեր լեզվի ընդհանուր բառապաշարի պատմության տեսանկյունից:

Այնուհետև, հազիվ թե կարելի լինի համաձայնել ՆՀԲ-ի այն դիտարկմանը, թե Քոթենավորի երկերին (լեզվի բառապաշարի առումով) միջամտություն են ունեցել այլ հեղինակներ, ինչպես նշվում է, օրինակ, *հրայրուսանճանհաղեղնութիւն* բառի դեպքում մեկ այլ անձի՝ Թադէոս վարդապետի անուն («Եթէ չիցէ յաւելուած իմաստակի ումեմն Թադէոս վարդապետի, որոյ է և ճառ համբարձման՝ խոկեալ այսպիսի բառիք, գորովք զանց առնեմք ի կարգի բառարանիս». տե՛ս ՆՀԲ, հ. 2, էջ 130, սյուն. 2). հմմտ. *աւետարանականասանդ* «ըստ Ավետարանի» (Թեոդ. ընդ., էջ 1243), *երկնահողովակառու* (տարերք) «երկնային ոլորտով ներփակ» (Թեոդ. գով., էջ 1261), *վերագագաթնակատարահերձ* (կոհակ) «ամենավերին մասով կիսված» (ս. տ.) և այլն:

2. Բառապաշարի հեղինակային-բառարանային քննություն

Քոթենավորի բառապաշարը գրեթե անասելի ձևով հարուստ է, նաև հոգևոր և իմացական ոլորտում յուրօրինակ է պատկերացումների վերաբերյալ անսպասելի անվանում-բառերի ստեղծմամբ¹: Նրա լեզվի ամենացայտուն յուրահատկությունը, թերևս,

¹ ՆՀԲ-ի հեղինակները գտնում են, որ, ինչպես վերը ակնարկեցինք, Քոթենավորի երկերի նկատմամբ եղել է հետագա «անգրագետ» միջամտություն, որպիսով դրանց «հելլենաբան վտեմ» ոճը դարձել է «առավել խրթին», «ոչ ազատ գրիչների սխալներից»: Նման նկատառումներ ունեն նրանք նաև առանձին բառահոդվածներին կից բացատրություններում:

բառապաշարի այն շերտն է, որ նոր է, ունի հեղինակային ոճի զգալի առանձնակիություն, նոր բառերի նկատմամբ ակնհայտ հակվածություն. «Որք *կարթարոսք* արտաքուստ երեւին *դուարենին* զգեստաւք, եւ խաչակիր *մարմնակրութեանք*, եւ *ներկերպին գազանադէմք*, *խրթնագգեստք*, *խունայողք*, *տգիտախողխողք*, *քծնաբանք*, *գաղտապատիրք*, *գողտրաբարբառք*, *ապաժուժախոք*, *դժապանք»* (Թէոդ. ընդ., էջ 1243). ընդգծվածներից մի քանիսը ՆՀԲ-ն չունի՝ *գաղտապատիր* «ծածուկ՝ գաղտի նյութված», *դժապան* «վատաբանող», *ներկերպել* «նյութել. դավել», մի քանիսն էլ բերվում է միայն նույն այս նախադասություն-օրինակի վկայակոչմամբ՝ *գազանադէմ* «գազանի կերպարանք ունեցող», *ապաժուժախո* «արյունի ծարավ մտածողություն ունեցող», *գողտրաբարբառ* «քաղցրախոս», *խրթնագգեստ* «խոշորագգեստ, նան սևագգեստ», *մարմնակրութին* «ճգնավորություն», *տգիտախողխող* «միամիտների մոլորեցնող», *քծնաբան* «շողոքորթ. խոսքով քծնող», իսկ *կարթարոս(ք)* և *դուարենի* բառերից առաջինը, որ փոխառություն է (հուն. καθάρως, լատ.catharus «մաքուր, հստակ», «սուրբ») հին է, և բառարանն ունի վկայություն նաև այս հատվածը, երկրորդի «արջառենի, ոչխարենի» իմաստի նշումը բառարանում հուշում է, որ բառի ճիշտ ձևը պիտի լինի *տուարենի* (< *տուար* «արջառ, խաչն»), որ հանդիպում է նախ այս հատվածում, այնուհետև Արծրունու երկում (իմա՛ *դ / տ* տարբերակում, թերևս՝ բարբառային, խուլ հնչյունի ձայնեղացում). վերջապես՝ *զգեստ* բառը գործածված է *ի-ս* խառը հոլովմամբ (փխ.՝ *ու*, նաև *ի* կամ *ո*):

Քոթենավորի բառապաշարում կան բառեր, որոնք հասկանալի կամ բացատրելի կարող են լինել միայն բարբառային կամ խոսակցական հնարավոր տարբերակների օգնությամբ: Այսպես, հանդիպում է *անխանսար* բառը, որը չի բերվում ՆՀԲ-ում. «Ո՛վ ճշմարիտ աստուածային տունկ, գերադրական եւ իմանալի տնկագործութեանն խորհրդոյն ապաստվթ, խորութիւն եւ *անխանսար* քառաթեւ սուրբ նշան» (Թէոդ. խաչ., էջ 1252): Մենք ենթադրաբար

առանձնացնում ենք *ան-ը*՝ իբրև ժխտական մասնիկ, և *խանսար*-ը դիտում բարբառներում գոյություն ունեցող *խանսար*-ի տարբերակ (իմա՛ *աւ // ա*), որ պիտի նշանակի «երկմասն՝ երկյակ». բառը հայերենում ստուգաբանված չէ, ըստ ՆՀԲ-ի՝ նշանակում է «հետք. ճանապարհ ցամաքի. փոյթ», որ, կարելի է իմաստաբանորեն առնչել «մաս, ճյուղ. կողմ» ընդհանուր իմաստին. բերված բնագրում խոսքը վերաբերում է «աներկճյուղ, միագիծ քառամասն» դավանությանը: Նման մանրամասները վկայում են, որ հեղինակի լեզուն, իրոք, «վսեմ և հելլենաբան», «վսեմական» է, որ ենթադրում է լայն իմաստաբանությամբ և բառագործածությամբ քննություն:

Այդուհանդերձ, լեզվական իրողությունը, եթե նույնիսկ որակենք իբրև բառի դիպվածային գործածություն (դիպվածաբանություն. օկազիոնալիզմ), մնում է քննության ոլորտում (ուժի մեջ)՝ իբրև լեզվի բառապաշարի պատմության փաստ: Բառապաշարի նման բառերը քաղում ենք հեղինակի հիշյալ երկերի՝ «Մատենագիրք հայոց»-ի հրատարակությունից:

1. Բառեր, որոնք չկան ՆՀԲ-ում: Նման բառերն այստեղ բերում ենք ըստ իրենց այս կամ այն խոսքի մասին պատկանելու հատկանիշի:

ա) Գոյականներ. դրանք քանակապես ավելին չեն, քան, ասենք, ածականները, հանդիսանում են երկբաղադրիչ, մասամբ եռաբաղադրիչ կազմություններ. «Այսաւր նորափետուր հրաշիւք գեղեցկագարդեալք ի *հնարագործութենէն* գալստեամբ որդոյն Աստուծոյ» (Թէոդ. գով., էջ 1260). «եւ ոահ գործեալ ի նմա ի ձեռն լուսածին գերապանձ *նիշիսայտ*» (Թէոդ. խաչ., էջ 1251) և այլն:

Այդպես նաև հետևյալները. *սուսջարգմանութիւն* «նախկինում թարգմանվածը» (Թէոդ. ընդ., էջ 1243), *արուեստահնարագործութիւն* «արհեստավարժ ձևով գործելը» (Թէոդ. գով., էջ 1258), *գեղեղեշարմատն* «գեղեցկորեն բարձրացող արմատ՝ հիմք» (իմա՛ *գեղողեշ*. և. տ., էջ 1267), *համբարական* «գավակատուն» (Թէոդ. ընդ., էջ 1244), *շարայարեղութիւն* «շարադրելը» (Թէոդ. խաչ., էջ

1251), *վայրաբերականություն* «ցած՝ ներքև թափվելը» (ն. տ., էջ 1254), *վրդովին* «վորդովվելը» (ն. տ., էջ 1253), *տարապականություն* «ըստ ամենանի ապականվելը» (ն. տ., էջ 1256), *տարապատկանություն* «ամեն կողմի վերաբերելը» (ն. տ., էջ 1251) և այլն:

բ) Ածականներ. սրանք նախորդի համեմատությամբ բավականին շատ են, և դա բնական է. *անսկզբնագոյ* «անսկիզբ» (Թէոդ. ընդ., էջ 1244), *սոսանսկայ* «սանձյալ» (Թէոդ. խաչ., էջ 1252), *սուկացոյց* «բացահայտ» (ն. տ., էջ 1250), *բարեդրուատելի* «գովելի» (Թէոդ. ընդ., էջ 1247), *բեւեկնակայծակ* «մի տեսակ բռնկման նման» (Թէոդ. խաչ., էջ 1253), *գաղտնապատիր* «ծածուկ ասված» (Թէոդ. ընդ., էջ 1243), *գայիսոնական* «գայիսոն հիշեցնող, վերին կարգի» (Թէոդ. խաչ., էջ 1255), *դիրապետական* «հեշտ տիրապետելի» (ն. տ., էջ 1250), *երկնագուշակ* «վերին գուշակելի» (Թէոդ. ընդ., էջ 1248), *զանազանաիրօր* «տարբեր ձևով բացված» (Թէոդ. գով., էջ 1265), իմաստաբեր «խելացի» (ն. տ., էջ 1268), *խաբողորսակ* «սուտը բռնող» (Թէոդ. ընդ., էջ 1247), *կերպատեսակ* «տարատեսակ» (Թէոդ. խաչ., էջ 1251), *հիսիրաշափառագոյն* «ավելի քան հրաշափառ» (ն. տ., էջ 1255), *հոգեորարբույիս* «հոգուց բխող» (Թէոդ. գով., էջ 1268), *հոգէնկար* «հոգով պատկերված» (ն. տ., էջ 1266), *հոգիաներկ* «հոգին պատկերող» (Թէոդ. խաչ., էջ 1250, նաև 1255), *հովտածիծաղասաղարթ* «հովտի գվարթությամբ ծավալված» (Թէոդ. գով., էջ 1268), *ճահողասաց* «երկնասացական» (ն. տ., էջ 1250), *ճանապարհընթաց* «մեկնողական» (ն. տ., էջ 1254), *մահադարձ* «հոգեդարձ» (Թէոդ. ընդ., էջ 1244), *մերատոհմ* «տոհմակից» (Թէոդ. Իսչ., էջ 1252)¹, *միշտխողովման* «միշտ վնասող» (Թէոդ. գով., էջ 1260), *յաւէժառատ* «մշտաբուխ» (ն. տ., էջ 1253), *յաւէտապարզեւ* «մշտապարզ» (Թէոդ. խաչ., էջ 1254), *յոքնաբուսական* «բազմաբուսած» (Թէոդ. ընդ., էջ 1244), *ուղէշարձակ* «ճյուղատարած» (Թէոդ. գով., էջ 1267), *վայելչափառ* «պատշաճող փառքով»

(ն. տ., էջ 1265), *տիպատեսակ* «տպավորիչ» (Թէոդ. խաչ., էջ 1250), *փայլածին* «փայլուն» (Թէոդ. գով., էջ 1261), *քառանայի* «չորսի վերածվող» (Թէոդ. խչ., էջ 1254),

գ) Բայեր. *անիրակել* (< անիրակեալ) «չիրականանալ» (Թէոդ. խաչ., էջ 1250), *անձեռնել* (< անձեռեալ) «անհուպ լինել» (Թէոդ. ընդ., էջ 1244), *սորնանալ* «հիմնվել» (ն. տ., էջ 1244, նաև 1247), *արտաշարեալ* «դուրս բերել» (Թէոդ. խաչ., էջ 1252), *գերարկեալ* «վերբերել» (ն. տ., էջ 1254), *եռարերկրել* «շատ ուրախանալ» (Թէոդ. գով., էջ 1261), *իրակեալ* «իրականացած» (Թէոդ. խաչ., էջ 1250), *հումանանեալ* «նույնպիսին եղած, համանման» (Թէոդ. գով., էջ 1259), *մերտնուլ* (< *մերտեցեալ* «մեր մեղքերն իր վրա առած») (Թէոդ. ընդ., էջ 1246, նաև 1249), *յուսանկեալ* «հույսով լցված» (ն. տ., էջ 1244), *շառաւեղագործեմ* (< *շառաւեղագործեալ*) «շառավիղանալ» (Թէոդ. գով., էջ 1267), *պատուհասակրել* «վնաս կրել» (Թէոդ. ընդ., էջ 1243), *պատուհասառնում* (< *պատուհասառող*) «պատուհասի հանդիպել» (ն. տ., էջ 1244), *ստուերամածեալ* «ստվերախտանալ» (Թէոդ. խաչ., էջ 1251), *վայրանցեալ* «շրջանցել» (ն. տ., էջ 1252), *վարայայտնեալ* «ներքև հայտնել» (Թէոդ. գով., էջ 1261), *վարդագեղեալ* «վարդի պես գեղեցիկ լինել» (ն. տ., էջ 1268), *վերագեղեալ* «վերստին գեղեցկացած» (ն. տ., էջ 1261), *վերատառել* (< *վերատառեալ*) «նորոգել, վերծանել» (Թէոդ. ընդ., էջ 1247), *տրամոռոզանեմ* «լայնորեն ոռոգել» (Թէոդ. գով., էջ 1260):

դ) Մակբայներ. *սոգիտաբար* «չիմացած ձևով» (Թէոդ. խաչ., էջ 1251), *տղաբար* «մանկորեն՝ երեխայի նման» (ն. տ., էջ 1251):

2. Բառեր, որոնք ՆՀԲ-ում նշվում են միայն Քոթենավորի անունով: Դրանք արտացոլում են ոչ միայն տվյալ ժամանակի, այլև, բնականաբար, հեղինակի լեզվական մտածողությունը ընդհանուր եկեղեցական-դավանական հարցերի շուրջ:

Բերենք ըստ իրենց խոսքիմասային պատկանելության: Նկատենք, որ որոշ ածականներ մտածվում են նաև իբրև մակբայ՝ պայմանավորված բնագրի տվյալ հատվածում ունեցած գործածությամբ:

¹ ՆՀԲ-ն թեև ունի *մերատոհմակ* «մերասեռ, մերասերական»՝ միայն Քոթենավորի անունով:

յամբ. հմմտ. *անյեղարէն* («անհեղ, անհեղի»)։ «Քանզի *անյեղարէն* եւ անքատակ է աստուածահրաշ ներանձանաւոր» (Թէոդ. խաչ., էջ 1251), *տարածասփիռ* («լայնածավալ»)։ «Եւ ի հեթանոսս շառաւեղագործեալ համաբոլոր *տարածասփիռ* ներծաւալեցաւ» (Թէոդ. գով., էջ 1267) և այլն։

ա) Գոյականներ. *աղասմանություն* «Աղամից ծնվածները» (Թէոդ. գով., էջ 1260), *սծանցականություն* «առաջ բերելը. առաջացում» (Թէոդ. խաչ., էջ 1254), *սհաքրոնություն* «վախից՝ սարսափից քրտնելը» (Թէոդ. ընդ., էջ 1248), *աղայթակայություն* «աղոթքի կանգնելը. աղոթք անելը» (Ա. տ., էջ 1243), *սպասույթ* «ապացույց. օրինակ» (Թէոդ. խաչ., էջ 1252, նաև 1257), *սոսասուցաւորք* «սոսատ հոսելը» (Թէոդ. գով., էջ 1265), *սոքերություն* «բարձրացած լինելը» (Թէոդ. խաչ., էջ 1250), *սատուածաքարոզ* (Թէոդ. ընդ., էջ 1244). *արձանասպաշտություն* «կոռասպաշտություն» (Թէոդ. գով., էջ 1262), *բաժամտություն* «վարանում. երկմտություն» (Թէոդ. խաչ., էջ 1251), *բուժկություն* «բժշկություն. ազատություն» (Ա. տ., էջ 1251), *գանգուր(ք)* (< գանգրեօք) «(ոլորված) գանգուր(ները)» (ածականի վերածում գոյականի) (Թէոդ. գով., էջ 1261)¹, *գոյեղություն* «եղելություն. ծնունդ» (Թէոդ. ընդ., էջ 1246), *եռաթուեան* «եռաթիվ. երեքանձնյա» (Թէոդ. խաչ., էջ 1257), *երգասողություն* «երգով օրհնելը՝ օրհնաբանություն» (Թէոդ. ընդ., էջ 1249), *թմբկահարություն* «թմբուկ խփելը» (Թէոդ. գով., էջ 1269), *ինքնատիրություն* «ինքնուրույն լինելը» (Թէոդ. ընդ., էջ 1245), *խկասպատում* «ճշմարտապատում» (Ա. տ., էջ 1248), *կիսամասնություն* «կիսակատար լինելը, թերություն» (Ա. տ., էջ 1248), *կիսափրկումն* «կիսատ փրկելը. անկատար լինելը» (Ա. տ., էջ 1243), *կոչատություն* «կոչումն. ձայն» (Ա. տ., էջ 1245), *համբարան* «զավակատուն» (Թէոդ. խաչ., էջ 1254), *հարցագիտություն* «հարցում իմանալու համար» (Թէոդ. ընդ., էջ 1245), *հնասպատում* «հին բաներ պատմելը. հին պատմություն» (Ա.

տ., էջ 1247), *հողաստեղծեալ* «հողածին (մարդը՝ Ադամ)» (Թէոդ. գով., էջ 1260), *հրալուսածանանչադեղնություն* «լուսապայծառություն» (Ա. տ., էջ 1259)¹, *հրճուստություն* «խայտալը. հրճվանք» (Ա. տ., էջ 1259), *ճասագրություն* «ճառ» (Թէոդ. ընդ., էջ 1245), *մահաժառանգություն* «մահ ժառանգելը» (Ա. տ., էջ 1245), *մահածություն* «մահաբերություն» (Թէոդ. գով., էջ 1245), *մասնատություն* «մի մասն առնելը» (Թէոդ. ընդ., էջ 1243), *մարմնակրություն* «ճգնավորություն» (Ա. տ., էջ 1243), *պարսինդություն* «ցնծալից պարի ուրախություն» (Թէոդ. գով., էջ 1260), *պիտատություն* «հարկավորի կարիք ունենալը» (Թէոդ. ընդ., էջ 1245), *ջահագործություն* «պայծառություն» (Թէոդ. գով., էջ 1260), *սկզբնեղություն* «գոյացում. ծնունդ» (Թէոդ. ընդ., էջ 1247), *ստուերաբանություն* «փսփսոց. կեղծավորություն» (Ա. տ., էջ 1247), *վայելչակազմություն* «վայելուչ՝ վայելչակազմ լինելը» (Թէոդ. գով., էջ 1258), *վարսագեղություն* «գեղեցիկ մագեր ունենալը» (Ա. տ., էջ 1267), *վերնաքաղաքամայր* «վերին մայրաքաղաք. Երուսաղեմ» (Թէոդ. խաչ., էջ 1257), *վսեմաբանություն* «զովեստ. պերճախոսություն» (Թէոդ. ընդ., էջ 1248), *վսամարիի* (փխ. *վսեմ*) «զերարփի» (Թէոդ. խաչ., էջ 1253), *տարատողումն* «կարգից հեռացում. օտարանալը» (Ա. տ., էջ 1251), *տնօրինակություն* «տնօրինման հանձնառություն» (Թէոդ. ընդ., էջ 1243), *փաղփ(ք)* (< *փաղփեք*) «փայլփլուն լինելը» (Թէոդ. գով., էջ 1267), *փորձագործություն* «փորձ. Տիրոջ փորձյալ իմացություն» (Թէոդ. ընդ., էջ 1245), *փորձարկություն* «փորձություն» (Ա. տ., էջ 1245)։

բ) Ածականներ. *սկումբահոյլ* «համագումար» (Թէոդ. խաչ., էջ 1255)², *աղանդաբեր* «աղանդակից. աղանդ տարածող» (Թէոդ. ընդ., էջ 1243), *աղիսափակեալ* «ամուր փակված» (Թէոդ. խաչ., էջ 1252), *ամենակարատ* «խիստ կարիքավոր» (Ա. տ., էջ 1256), *անսարատուի* «անբիծ, կուսական» (Թէոդ. գով., էջ 1265), *աներկիդա-*

¹ Ըստ ՆՀԲ-ի՝ «սսի և նմանութեամբ». բերում է *զանգրեօք* ձևով, որպիսով ունենք բառի այլ՝ «(գետի) հորձանուտ՝ պլեպտույտ» իմաստով գործածություն։

¹ Ըստ ՆՀԲ-ի՝ «Բառ անպետ բառաբարդ. որպես *լուսապայծառություն*»։

² ՆՀԲ-ն ունի *սկումբահոյլ* ձևով, նշելով «զրեալ էր ակումբահոյլ», և հղում այդ ձևին։

կան «աներկյուղ. անահ» (Թեոդ. խաչ., էջ 1250)¹, *անգրադասէր* «կուսություն սիրող» (Թեոդ. գով., էջ 1267), *անզինահար* «առանց զենքի հարվածի եղած» (Թեոդ. ընդ., էջ 1247), *անձնահանճար* «ինքնամտած. մտացածին» (Ա. տ., էջ 1243, նան 1246), *անշիջատոռչոր* «անշեջ տոչորված» (Ա. տ., էջ 1248), *անպարագրական* «անպարագիր՝ անսահման» (Ա. տ., էջ 1244), *անպարատեղի* «անվայրափակ. տարածված» (Ա. տ., էջ 1244), *անասկի* «անսահման. անօրինակ» (Թեոդ. խաչ., էջ 1250), *անսարասիելի* «աներկյուղ» (Թեոդ. ընդ., էջ 1243), *անտաշագործ* «անտաշ. անմշակ» (Թեոդ. գով., էջ 1268), *անտարաղ* «անպարույր» (Թեոդ. ընդ., էջ 1249)², *ապաժուժստի* «չարամտած. արյան ծարավի» (Ա. տ., էջ 1243), *առաջատարի* «ցանկացող (Եվա)» (Ա. տ., էջ 1244), *առաքելագունդ* «առաքյալների խումբ» (Թեոդ. գով., էջ 1266), *աստուածահանճար* «աստվածային. խելամիտ» (Ա. տ., էջ 1268), *աստուածաքարոզ* «աստծուն՝ աստվածայինը քարոզող» (Թեոդ. ընդ., էջ 1244), *արդարագիտող* «ուղղամիտ» (Ա. տ., էջ 1244), *արդարածեր* «արդար ծերունի՝ ծերացյալ» (Ա. տ., էջ 1248), *արդարահրահանգ* «արդարությանը հրահանգված» (Ա. տ., էջ 1243), *արդարընկալ* «արդարությանը ընդունելի» (Ա. տ., էջ 1245), *արեալիստ* «արևավառ» (Թեոդ. խաչ., էջ 1253), *արեւելաբոյս* «(դրախտի) արևելյան մասում բուսած» (Ա. տ., էջ 1251), *արեւելածագ* «արևելյան» (Թեոդ. գով., էջ 1268), *արեւելանշան* «արևելքից երևացող» (Թեոդ. խաչ., էջ 1256), *արտասահմանահայած* «վտարանդի» (Թեոդ. գով., էջ 1262), *արփիակիզն* «արևակեզ. լուսացայտ» (Թեոդ. խաչ., էջ 1253), *արփիահրատ* «արևավառ» (Ա. տ., էջ 1250), *աւետարանատունկ* «ավետարանով հաստատված» (Թեոդ. գով., էջ 1260), *բազմադասեալք* «հերթակարգված» (Թեոդ. խաչ., էջ 1250), *բազմերանաւետ* «երանավետ. երջանկավետ» (Թեոդ. գով., էջ 1266), *բանայեղց* «խոսքառատ. ներբողով լեցուն» (Ա. տ., էջ 1264), *բարեգոյակ* «ի բնե բարի

եղած» (Թեոդ. ընդ., էջ 1245), *բարեգուարճ* «զվարճալի. բերկրական» (Թեոդ. գով., էջ 1267), *բարձրատեսակ* «բարձր ճնով. պանծալի» (Ա. տ., էջ 1264, 1265), *բեղմնաբեր* «արգասաբեր. պտղաբեր» (Թեոդ. ընդ., էջ 1243), *բողոքահովիտ* «համատարած հովիտ հիշեցնող » (Թեոդ. գով., էջ 1266), *բողոքամիտ* «ողջամիտ» (Ա. տ., էջ 1268), *բուսածին* «բուսաբեր» (Թեոդ. խաչ., էջ 1254), *գազանադէմ* «զանգանակերպ» (Թեոդ. ընդ., էջ 1243), *գեղադէշտիտակ* (փխ. ուղէջ) «դիտարժան. գեղատեսիլ» (Ա. տ., էջ 1244), *գողորաբարբառ* «քաղցրալեզու» (Ա. տ., էջ 1243), *գունարտական* «համախումբ» (Թեոդ. խաչ., էջ 1255), *գունազանազեղ* «գունազեղ. երփներանգ» (Թեոդ. գով., էջ 1268), *գրկընկալ* «գրկի՝ գրկանոց (երեխա)» (Թեոդ. ընդ., էջ 1247), *դառնապարհակ* «խիստ տաժանելի. դժվարին» (Թեոդ. գով., էջ 1262), *դառնութիւնաբեր* «դառնություն բերող՝ պատճառող» (Թեոդ. խաչ., էջ 1251), *դասսիտումբ* «դասդասված» (Ա. տ., էջ 1255), *դարասպետական* «դոնապանական» (Ա. տ., էջ 1251), *դժապան* «դժնյա» (Թեոդ. ընդ., էջ 1243)¹, *դժնյակարբառ* «չարալեզու. հայեղիչ» (Ա. տ., էջ 1245), *եզամիտ* «համամիտ. միամիտ» (Թեոդ. գով., էջ 1268), *երկալտակ* «կրկնավտակ» (Թեոդ. խաչ., էջ 1254), *երկնալոյս* «երկնային լույսով ողողված» (Ա. տ., էջ 1257), *երկնասպարծ* «հույժ պանծալի» (Թեոդ. գով., էջ 1268), *երկրաբարճ* «երկրից էլ վեր. օդային» (Ա. տ., էջ 1268), *երկրաբերճ* «երկրից բարձրացած» (Ա. տ., էջ 1259), *երկնազանազեղ* «երկնազեղ. զանազանազույն» (Ա. տ., էջ 1260), *զանազանահաւարք* «այս ու այն տեղից հավաքված՝ հավաքող» (Ա. տ., էջ 1266), *զուգասողակից* «զուգաձայն. հարակից ասող» (Թեոդ. ընդ., էջ 1248), *ինքնահողարբուսակ* «ինքնին՝ առանձնակի բուսող» (Թեոդ. գով., էջ 1258), *լուսաջահայեղց* «լուսավառ. լուսացնցող» (Ա. տ., էջ 1267), *խազմական* «պատերազմական. խոռվահույզ» (Թեոդ. խաչ., էջ 1253), *խաղաղաշարժ* «խաղաղ շարժմամբ» (Թեոդ. գով., էջ 1261),

¹ ՆՀԲ-ն նշում է՝ Թեոդոր. մայրագոմ, որ իր տեղում չկա:

² ՆՀԲ-ն՝ ող-ով:

¹ ՆՀԲ-ն բերում է *բ-ով՝ դժարան* «դժնյա»:

խաւարարորբոք «աղոտ. մթամած» (Թ-էոդ. խաչ., էջ 1255), խաւարամութ «մութութու. աղջամղջին» (Ա. տ., էջ 1251), խոյրապասկազարդ «պասկի խոյրով զարդարված» (Թ-էոդ. գով., էջ 1267), խորհրդայեղ «խորհրդով լեցուն» (Ա. տ., էջ 1259), խուժախումբ «վայրիվերո ազգերով խմբված» (Թ-էոդ. խաչ., էջ 1255), խրթնագզեստ «տարօրինակ հագնված» (Թ-էոդ. ընդ., էջ 1243), ծիրանաթոյր «ծիրանագուն» (Թ-էոդ. գով., էջ 1268), կանառանճեմ «հանդիսաքայլ» (Թ-էոդ. խաչ., էջ 1250)¹, կայծակնաբորբոք «հրաբորբոք. հրացայտ» (Ա. տ., էջ 1254), կենդանասաղարթ «սաղարթով փարթամ և հարուստ» (Ա. տ., էջ 1252), կիսադասան «դավանանքով թերի՝ պակաս» (Թ-էոդ. ընդ., էջ 1246), կողամարդ «կողածին (Եվա)» (Ա. տ., էջ 1244), հաղորդընծայ «հաղորդվելիս ընծայված. միաբան և գոհացական» (Թ-էոդ. խաչ., էջ 1256), հնծանաշէն «իբրև հնճան շինված» (Թ-էոդ. գով., էջ 1266)², հոգեխաղաց «հոգեբուխ» (Ա. տ., էջ 1260), հոգեծաւալ «հոգով ասված. հոգի տարածող» (Ա. տ., էջ 1266), հոսանսահոյովաշարժ «հորդահոս» (Ա. տ., էջ 1267), հոսանսպտոյտ «հորձանքով առաջացող» (Ա. տ., էջ 1263), հրածնունդ «հրածին» (Թ-էոդ. խաչ., էջ 1253), հրակայծակ «բոցակեզ. հրափայլ» (Ա. տ., էջ 1255), հրաշ առ հրաշ «առավել հրաշալի» (Ա. տ., էջ 1257), հրաշաշաւիղ «զեղեցկաշաւիղ» (Ա. տ., էջ 1253), հրասրեալ «իբրև հուր՝ հրով սրված» (Ա. տ., էջ 1252, նաև 1253), հրատարբորբոք «հրաբորբոք» (Ա. տ., էջ 1254), հրատալից «հրալից. հրով լեցուն» (Ա. տ., էջ 1253), հրէականճատ «հրեա խմբի հատուկ» (Թ-էոդ. գով., էջ 1265), հրճուողալից «հրճվալից» (Ա. տ., էջ 1264), ճառագայթատես «ճառագայթածև» (Ա. տ., էջ 1263), ճշմարտահոս «ճշմարտութիտն առաջ բերող» (Ա. տ., էջ 1264), ճշմարտոող «ճշմարտով ոողգվող՝ ոողգված» (Թ-էոդ. ընդ., էջ 1243), մահահրաման «մահվան սպանալիքով հրամայված» (Ա. տ., էջ 1244), մատախղամուտ

¹ ՆՀԲ-ն գլխաբառը դնում է պարզա-ով, վկայության մեջ՝ այ երկբարբառով կայճառանճեմ:

² ՆՀԲ-ն ձ-ով:

«մատախուղի մթութուն» (Թ-էոդ. խաչ., էջ 1254)¹, մարգարէափորձ «մարգարեներից քարոզված» (Թ-էոդ. գով., էջ 1267), մաքրագունել «մաքրագարդել» (Թ-էոդ. գով., էջ 1259, 1262), մերագոյակ «մեր գոյին բնորոշ» (Թ-էոդ. ընդ., էջ 1249), մերահասակ «մեր հասակին՝ տարիքին հատուկ» (Ա. տ., էջ 1249), մերանիւթ «հողածին. մարդկային» (Ա. տ., էջ 1249), մերաստեղծակ «մերանյութ. մարդկային» (Ա. տ., էջ 1244), մերաստոհմակ «մարդկային սեռին բնորոշ» (Ա. տ., էջ 1249), միգավառ «միգախառն վառված» (Թ-էոդ. խաչ., էջ 1254), մութրագիտ «մութելով գտած. մութածո» (Թ-էոդ. ընդ., էջ 1243), մութացաթեւ «մտապագ. գորեղամիտ» (Ա. տ., էջ 1248), յաւակնագեղ «հանդուգն, հանդգնաբար» (Ա. տ., էջ 1244), յոգներջանիկ «ըստ ամենայնի երջանիկ» (Ա. տ., էջ 1247), յորդորահնար «հորդորի ձև գտած» (Թ-էոդ. գով., էջ 1267), յորդորասպահանջ «թախանձագին» (Ա. տ. էջ 1267), յորձանստոյզ «հորձանքի մեջ առած՝ սուգած» (Ա. տ., էջ 1261), նախադրուատ «երիցս գովելի՝ դրվատելի» (Թ-էոդ. ընդ., էջ 1247), նեղավտակ «սակավաջուր» (Թ-էոդ. գով., էջ 1268), ներանճնեսան «անճնավոր, հոգևոր» (Ա. տ., էջ 1258), ներբողածանաւթ «ներբողական» (Ա. տ., էջ 1259), ներբողանուն «բարեհամբավ» (Թ-էոդ. ընդ., էջ 1248), նոյնագոյակ «համագո ձևով» (Թ-էոդ. խչ., էջ 1254), նորահրատ «նորովի վառված» (Թ-էոդ. ընդ., էջ 1243), նորոգայարդար «նոր. նորոգված» (Թ-էոդ. խաչ., էջ 1256), նուաստաջան «խոնարհ ջանադիր» (Թ-էոդ. գով., էջ 1267), նպաստատու «նպաստամատուց» (Թ-էոդ. ընդ., էջ 1244), որթողորասկան «ուղղափառ. ուղղադավան» (Թ-էոդ. ընդ., էջ 1247)², ուրթի «ուղիղ» (Թ-էոդ. խաչ., էջ 1250)³, որոզեալ «ներս ընկած. ծածկված» (Թ-էոդ. խչ., էջ 1254), չորեքտատեսան «չորեքմատյան, քառամատյան» (Թ-էոդ. ընդ., էջ

¹ ՆՀԲ-ն յ-ով:

² Ունի նաև Օձնեցին՝ որթողորասկան (փխ. ք-ով) «ուղղափառ» (Յհ. իմ. նախ., էջ 156), որ ՆՀԲ-ն չի նշում:

³ Եթե ճիշտ է կամ ընդունելի ՆՀԲ-ի բացատրությունը՝ «իբրև հողովական բառիս օրթի, այսինքն ուղիղը», ապա այն պետք է դիտել փոխառյալ հուն. ὀρθοί բառից (հմմտ. օրթի, օրթիս «ուղիղը» և այլն):

1243), *պասքաճարաւ* «պահքի մեջ ծարաված» (Թէոդ. գով., էջ 1268), *պասքաճարաւի* «պահք բռնած և ծարաված» (Ա. տ., էջ 1267), *պարկեշտուհի* «կույս՝ կին պարկեշտ» (Ա. տ., էջ 1267), *ռեմակալ* «ռխակալ, ռխերիմ. անիրավ» (Թէոդ. խաչ., էջ 1250), *սահմանագոչ* «եզրափակող» (Թէոդ. գով., էջ 1261), սաղարթածաղիկ «ծաղկափթիթ. սաղարթածաղկյալ» (Թէոդ. խաչ. էջ 1251), *սաղարթանեմափթիթ* «դալարազվարճ» (Թէոդ. գով., էջ 1260), *սղական* «սուղ. պակաս» (Թէոդ. խաչ., էջ 1250), *ստեղծաստեսակ* «մի տեսակ ստեղծված» (Ա. տ., էջ 1253), *վերջաբուսակ* «վերջում՝ հետո եղած» (Թէոդ. ընդ., էջ 1246), *վերջապարուկ* «վերջամուտ. վերջում հայտնված» (Ա. տ., էջ 1245), *վիժածական* «վիժանուտ, հոսանուտ» (Թէոդ. խաչ., էջ 1254), *տառագծական* «գրավոր. գրով դրոշմված» (Ա. տ., էջ 1257), *տարածաստիտ* «ընդարձակածավալ» (Թէոդ. գով., էջ 1267), տգիտախոյստոլ «միամիտներին մոլորեցնող» (Թէոդ. ընդ., էջ 1243), *տիգարուխ* «տեգի խոցումից բխող» (Թէոդ. խաչ., էջ 1250), *տիգահարեալ* «տեգից խոցված» (Ա. տ., էջ 1252), *տիեզերաբաղձ* «ամենքին ցանկալի» (Թէոդ. գով., էջ 1268), *տիրակարծ* «իրեն տեր կարծող. սուտ իշխան» (Թէոդ. ընդ., էջ 1244), *տիրափառական* «վայելչական. տիրոջ փառքով վայելչացած» (Ա. տ., էջ 1245), *ցցունազարդ* «ցցուն զարդարված» (Թէոդ. գով., էջ 1265), *փառապարզև* «իր փառքը տարածող» (Ա. տ., էջ 1259, 1268), *փառատորոդական* «փառաբանական» (Ա. տ., էջ 1258), *փշադաժան* «խիստ փշոտ. փշալից» (Թէոդ. խաչ., էջ 1254), *քաղցրաբեղուն* «քաղցրաբեր. քաղցր պտղակալած» (Թէոդ. գով., էջ 1267), *քծնաբան* «շողոքորթ՝ քծնախոս» (Թէոդ. ընդ., էջ 1243), *քրտնաբեր* «քրտնող» (Թէոդ. խաչ., էջ 1256):

գ) Բայեր. *ահաքրտնիլ* «վախից՝ սարսափից քրտնել» (Թէոդ. ընդ., էջ 1247), *առատաբերիմ* «բխել. առատորեն հոսել» (Թէոդ. գով., էջ 1260), *արտագանգեմ* «պատվիրանագանց լինել» (Թէոդ. ընդ., էջ 1245), *արտամերկանալ* «բաց հայտնվել» (Ա. տ., էջ 1244, նաև՝ խաչ., 1250), *բարեձևազարդեալ* «բարեձև օրինակով զարդար-

ված» (Թէոդ. գով., էջ 1266), *բարեաստեղծողն (Աստուած)* «բարու արարիչ աստված» (Թէոդ. ընդ., էջ 1244, նաև 1246), *բացաջնջիլ* «վերացնել» (Թէոդ. գով., էջ 1262), *բուրաստանեալ* «բուրաստանի պես ծաղկած» (Ա. տ., էջ 1260, 1267), *գեղածիեալ* «գեղեցկորեն ծածանվել» (Ա. տ., էջ 1261), *գեղանեմեմ* «գեղեցկորեն քայլել» (Ա. տ., էջ 1261), *գեղեցկազարդել* «գեղեցիկ զարդարել» (Թէոդ. գով., էջ 1260), *գլխափառիմ* «պսակ կրել ըստ պատվի» (Թէոդ. ընդ., էջ 1248), *դիսանունդ լինել* «ծծկեր լինել» (Ա. տ., էջ 1245), *ընտրաբանել* (< *ընտրաբանեալ*) «դրվատել. գովաբանել» (Թէոդ. գով., էջ 1267), *թիկնադրեմ* «արհամարհել» (Թէոդ. ընդ., էջ 1244), *խաղաղագործեմ* «խաղաղ դարձնել. հաշտություն հաստատել» (Թէոդ. խաչ., էջ 1252), *խոխումել* (< *խոխումեալ*) «ոռոգել» (Թէոդ. գով., էջ 1267)¹, *կատարաշինեմ* «ավարտել կառուցելը» (Ա. տ., էջ 1259), *կարատաբերիմ* «կարոտ զգալ» (Ա. տ., էջ 1268), *ճառագայթանալ* «լուսավորվել» (Ա. տ., էջ 1260), *մակազարթուցանել* «արթնացնել. վեր հանել» (Ա. տ., էջ 1264), *մակաշառափղել* «վերընձյուղել» (Ա. տ., էջ 1265), *մաքրագտել* «մաքրագարդել» (Ա. տ., էջ 1259, 1262), *յարաբղիխեմ* (< *յարաբղիխեցեր*) «միշտ բխել՝ հոսել» (Ա. տ., էջ 1266), *ներբաժանել* «իր մեջ զանագանել» (Ա. տ., էջ 1265), *ներծածկիլ* «ներառնել» (Թէոդ. խաչ., էջ 1251), *ներծաւալել* «ծավալել» (Թէոդ. գով., էջ 1267), *ներմիանալ* «միանալ» (Թէոդ. խաչ., էջ 1251), *ներտաղաւարիմ* «բնակվել. պատսպարվել» (Թէոդ. ընդ., էջ 1244, նաև խաչ., էջ 1254), *նուագատրել* (< *նուագատրեալ*) «բաժակով՝ նվագով մատուցել» (Թէոդ. գով., էջ 1266), *պայծառաբերիլ* «առատ պտղաբեր լինել» (Ա. տ., էջ 1266), *պարունակատեղիմ* «պարփակվել» (Թէոդ. ընդ., էջ 1244), *ստորացաւողել* «վար հոսեցնել. թափել» (Թէոդ. գով., էջ 1260), *ստորափայլեմ* «ներքևից վեր փայլել» (Ա. տ., էջ 1261), *վերաբունեալ* «վերևում բուն լինել» (Ա. տ., էջ 1262), *վերանայթել* «վերստին ճայթել՝ ցայտել» (Ա. տ., էջ 1261), *վիժաքրտնիմ*

¹ ՆՀԲ-նունի խոխումեմ:

«քրտնելով հոսել՝ քրտնահաոսել» (Թ-էոդ. ընդ., էջ 1247), *վտակա- նայ* «վտակի վերածվել» (Ա. տ., էջ 1245), *տենչաստիրել* «տենչա- փափագել» (Թ-էոդ. գով., էջ 1268), *փայլածագեմ* «լուսափայլել» (Ա. տ., էջ 1264):

դ) Մակբայներ. *անկեղարէն* «անհեղ, անհեղի» (Թ-էոդ. խաչ., էջ 1251), *անտղաբար* «անբաժանաբար» (Ա. տ., էջ 1252), *բագձաձաբար* «առհասարակ» (Ա. տ., էջ 1251), *յոքնուստ* «վաղուց և եթ, վաղուց» (Ա. տ. էջ 1255)¹, *շահատակարար* «շահատակորեն» (Թ-էոդ. գով., էջ 1264), *շահեկանարար* «շահեկանորեն» (Ա. տ., էջ 1261):

3. ՆՃԲ-ն ունի՝ նախ Քոթենավորի, այնուհետև ուշ հեղի- նակ(ներ)ի վկայումով. Սա, ինչ խոսք, բառի գոյության (երևան գալու) պատմության առումով ճիշտ սկզբունք է, որին հետևում են բառարանի հեղինակները. *աղեղնաբանել* «աղեղ գործածել. խոսքը առաջ տանել» (Թ-էոդ. ընդ., էջ 1244), *անթանալի* «անհոսելի. անջրդի» (Թ-էոդ. գով., էջ 1267), *անտղելի* «անկիսելի. անփոփոխ» (Թ-էոդ. խաչ., էջ 1250, 1251), *անփապ լինիմ* «բաց՝ անկիսելի լինել» (Թ-էոդ. ընդ., էջ 1248), *աստուածաներկ* «աստուծով նշված՝ զծված» (Թ-էոդ. խաչ., էջ 1253), *բաժամիտ* «երկմիտ» (Ա. տ., էջ 1254), *բա- դարկեմ* «բաժանել» (Ա. տ., էջ 1250), բարիատեաց «չար» (Ա. տ., էջ 1250), *գիներուդիս* «գինեվետ» (Թ-էոդ. գով., էջ 1265), *դուարենի* «արջառի՝ տավարի» (Թ-էոդ. ընդ., էջ 1243), երկնակառոյց «վերին. վերը հաստատված» (Ա. տ., էջ 1243), *իղեփեցական* «յուղով եփ- ված» (Թ-էոդ. գով., էջ 1268), *լուսայեղց* «լույսով լեցուն» (Ա. տ., էջ 1267)², *ծարասկան* «ծարավ. ծարաված» (Թ-էոդ. ընդ., էջ 1245), *ծովաքաստակ* «ծովի նման» (Թ-էոդ. գով., էջ 1262), *հայրատունկ* «բնիկ» (Ա. տ., էջ 1265), *հեզահարցումն* «մեղմ հարցուփորձ. քաղցր ատյան» (Թ-էոդ. ընդ., էջ 1244), *հրաշագանասպէս* «հրշալի» (Թ-էոդ.

գով., էջ 1267), *մերունական* «բնիկ» (Թ-էոդ. ընդ., էջ 1249), *յարա- հիսեալ* «մշտատնել. շողկապել, գողել» (Թ-էոդ. խաչ. էջ 1252, 1255), *յաէտուղէշ* «մշտադալար» (Թ-էոդ. ընդ., էջ 1244), *յորդահո- սակ* «հորդաբուխ» (Ա. տ., էջ 1248), *ներպարունակել* «ներառել» (Թ-էոդ. խաչ., էջ 1253), *շուշանաբեր* «ծաղկալի» (Թ-էոդ. գով., էջ 1265), *ուրախաբեր* «ուրախ» (Ա. տ., էջ 1258), *պատուիրանադրեմ* «պատվիրել» (Թ-էոդ. ընդ., էջ 1244), *սաղարթասպատ* «փարթամ» (Ա. տ., էջ 1244), *վերահայեաց* «վերձիգ» (Թ-էոդ. գով., էջ 1260), *վտա- կահոս* «պակաս՝ նվազ հոսող» (Թ-էոդ. խաչ., էջ 1253), *տիրասպատ- ճառեալ* (< *տիրասպատճառել*) «տիրոջ առաջ պատճառ բռնել» (Թ-էոդ. ընդ., էջ 1244, նաև Գնձ.), *տղայերամ* «երեխաներով խմբված» (Թ-էոդ. խաչ., էջ 1256), քատակութիւն «նմանություն» (Ա. տ., էջ 1252):

4. ՆՃԲ-ն ունի՝ նախ ուշ կամ ժամանակակից հեղի- նակ(ներ)ի, հետո Քոթենավորի անունով: Այս դեպքը մասամբ նախորդի հակառակն է, այսինքն՝ մի տեսակ խախտվում է բառի, այսպես կոչված, «պատմությունը». *արտասիչեմ* «փչել» (Թ-էոդ. ընդ., էջ 1246), *բագմայորդոր* «թախանձագին» (Թ-էոդ. գով., էջ 1268), *բարեգորովեալ* «շատ սիրելի» (Թ-էոդ. ընդ., էջ 1244), *գեղա- զարդեմ* (> *գեղազարդեալ*) «գեղեցկացնել» (Թ-էոդ. գով., էջ 1268), *դատասպարտական* «դատասպարտված» (Թ-էոդ. ընդ., էջ 1246), *երախտագործել* «երախտիքով լցվել» (Ա. տ., էջ 1245), *երկնակա- ռոյց* «վերացական» (Թ-էոդ. խաչ., էջ 1252), *լուսաթոյիչ* «լուսեղ» (Ա. տ., էջ 1251), *խնդանուաբար* «ծիծաղելի» (Թ-էոդ. գով., էջ 1264, 1265, 1268), *հնասպատմութիւն* «հնություն» (Թ-էոդ. ընդ., էջ 1247), *հոգիանիւթ* «հոգևին» (Թ-էոդ. գով., էջ 1266), *մարմնածածուկ* «(հանգուցյալի) մարմինը ծածկող՝ գերեզմանող» (Թ-էոդ. խաչ., էջ 1251), *մերարէն* «մեր նման՝ պես» (Թ-էոդ. գով., էջ 1267), *նկարա- կերպութիւն* «պատկերավոր» (Ա. տ., էջ 1266), *շարասանդ* «միշտ» (Ա. տ., էջ 1265), *շնորհագարդեմ* (< *շնորհագարդեալ*) «շնորհով լվել» (Ա. տ., էջ 1266), *վերակենցարդիլ* «վերապրել» (Թ-էոդ. ընդ., էջ

¹ ՆՃԲ-ն՝ գ-ով:

² ՆՃԲ-ն բերում է *լուսսհեղձ*, թեև ունի «լաւ ևս՝ *լուսսհեղց*» նկատառումը:

1246, Թէոդ. խաչ., 1251), *վերայայտել* «վերբերել» (Ա. տ., էջ 1244), *վիմակասոյց* «քարաշեն» (Թէոդ. գով., էջ 1268), *տարացուցարանություն* «տարածություն» (Թէոդ. ընդ., էջ 1247), *փոխագործութիւն* «նմանակություն» (Ա. տ., էջ 1246),

5. ՆՇԲ-ն ունի այլ, նաև ուշ հեղինակ(ներ)ի, ոչ այս հեղինակի վկայությամբ: Դրանք շատ չեն, մեկ տասնյակից փոքր-քիչ ավելի. այս դեպքում ևս, կարելի է ասել, թե խախտվում է բառի «պատմությունը». *անիծադրութիւն* «անիծելը» (Թէոդ. ընդ., էջ 1244, նաև 1256), *անքատակ* «աննման. անհարազատ» (Թէոդ. խաչ., էջ 1251), *արփիհահրաշ* «արևավատ» (Ա. տ., էջ 1251), *բազմահոլով* «շատ» (Թէոդ. գով., էջ 1261), *գեղագանակ* «գեղեցիկ» (Ա. տ., էջ 1260), *դիագունդ* «դղների խումբ» (Ա. տ., էջ 1268), *թփատեսակ* «թփի նման. թուփ» (Թէոդ. խաչ., էջ 1254), *հարկապահանջութիւն* «հարկահանություն» (Թէոդ. գով., էջ 1267), *հրաշատեսիլ* «հրաշալի» (Թէոդ. խաչ., էջ 1253), *ներքնագոյն* «ավելի ներս» (Ա. տ., էջ 1251), *ջահափայլեալ* «վառ լուսավորված» (Ա. տ., էջ 1253), վերտանեմ (< վերտարեալ) «վերև տանել» (Ա. տ., էջ 1250)¹, *քանակաոր* «քանակով. չափելի» (Ա. տ., էջ 1254):

Եզրակացություններ

1. Գրաբարի ամենածավալուն բառարանի՝ ՆՇԲ-ի հետ համեմատությունը ցույց է տալիս Քոթենավորի բառագործածության մի շարք այլ դրսևորումներ՝ բառի հեղինակային առաջնության, գուգահեռության և այլ կարգի:

2. Նման գործածությունները օրինակ են ՆՇԲ-ում բառի ժամանակի, հեղինակային պատկանելության և այլ հարցերի պարզաբանման, նույնիսկ այն դեպքում, որ, ինչպես գիտենք, հիշյալ բառարանն ունեցել է ընտրանքային մոտեցման, իմաստի առաջնային լինելու վերաբերյալ իր սկզբունքները:

3. Քոթենավորի երկերի լեզվի բառապաշարը թաթախված է կրոնական-իմաստաբանական մտածողությամբ՝ ի նպաստ հայ եկեղեցու ինքնության, որ ժամանակի պահանջներից էր:

4. Բառային նորակազմությունները մեծ մասամբ իրադրային են, սակայն յուրովի հարստացնում են հայոց լեզվի ընդհանուր բառապաշարը:

5. Այդ երկերի լեզվի ուսումնասիրությունը նման ծավալով նորություն է, նաև հիմք՝ ավելի լայն քննության առնելու համար:

Սահակ Ձորոփորեցու երկերի բառապաշարը

Ներածություն

Հայոց եկեղեցու նվիրյալ հեղինակի՝ Սահակ Ձորոփորեցի կաթողիկոսի երկերը քանակով շատ չեն, սակայն աչքի են ընկնում լեզվի, մասնավորապես բառապաշարի յուրահատկություններով, որ հին հայերենի հարստություն է: Այս իրողությունը լիովին հաստատվում է այդ երկերի մանրամասն, առանձին քննության արդյունքում:

1. Հեղինակի և նրա երկերի մասին

Սահակ կաթողիկոս Ձորոփորեցին VII դ. երրորդ քառորդի և VIII դ. սկզբի Հայ եկեղեցու գահակալած հայրապետն է, որ իր ողջ կյանքը նվիրաբերել է հայ եկեղեցու ինքնության պահպանմանը և հավատքի մշտամնայությանը, ուստի հայ ազգի գոյատևման անխափանության նվիրական գործին (ծն. թ. անհյտ. - վախճ. 703 թ., ծննդավայրը՝ Գուգարքի Ձորոփոր գավառի Արքունաշեն գյուղ):

Ժամանակի գիտելիքներին, նաև լեզուներին (օրինակ՝ արաբերենին. հայտնի է նրա մի թուղթը՝ ուղղված արաբ ոստիկանապետին կամ ամիրապետին) հասու մեծություն է հայոց հայրապետը՝ իր ազգի հոգսերով ապրած: Այդ նվիրումն ենք տեսնում, օրի-

¹ ՆՇԲ-ն ունի դերբայի ձևով *վերտանող*, վկայությամբ Նարեկացու:

նակ, հետևեալ ձևակերպման մէջ. «Սահակ կաթողիկոս, երկար պաշտօնավարութենէ յոգնած, բազմապիսի փորձանքներէ անցած, ներքին եւ արտաքին վիշտերով տագնապած, արքայներով եւ բանտարկութիւններով տկարացած, իրեններուն աղէտներովը տոգորուած, ծերացեալ հասակի հասած, եւ հիւանդագին մարմնով տառապած, ճամբայ կ' ելլէ Դամասկոսէ, եւ հակառակ իր տկարութեան կը փութայ, կը շտապէ, կ' անապարէ օր առաջ Հայաստան հասնիլ, քանի որ դեռ Ոկրայ վրիժառու բանակը ոտք չէր կոխած այն երկիրը, զոր աւերելու հրաման ստացած էր իր ամիրապետէն» (*Օրմանեան*, 2001, 911):

Մեծ չէ այս իմաստուն մարդու գրական ժառանգությունը, ընդամենը, ինչպես նշում են աղբյուրագետ բանասերները, մեկուկես տասնյակ Կանոններ, Շարականներ, ինչպես նաև մեկ Թուղթ և մեկ Ճառ, որոնք լույս են տեսել տարբեր կարգի ժողովածուներում և այլ գրքերում¹: Դրանք գրված են ժամանակի հայերենի գրական նորմայի շրջանակում բավականին կանոնավոր, այլև, կարելի է ասել, պատկերավոր և տպավորիչ («գեղեցիկ») լեզվով²:

Ըստ ՆՀԲ-ի հեղինակների՝ արմավենիներին կամ ծաղկազարդին նվիրված «Ճառ»-ը գրված է «բառազարդ եւ վեհ ոճով», «իսկ ճառն եկեղեցւոյ յարմարեալ է ի բանից Սահակայ Պարթևի՝ որ ի Կանոնգիրս»³: Լեզվական ոճի տեսանկյունից առավել գրավիչ են «Արմավենեացն օր» ճառի առաջին էջերը, որոնցում հեղի-

¹ Տե՛ս «Սահակայ հայոց կաթողիկոսի ասացեալ յԱրմաւենեացն աւր, որ է Ղոզոմեան» // «Մատենագիրք հայոց», հ. Ե (Է դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1286-4292 (հմմտ. «Յովհաննու իմաստասիրի Աւճնեցւոյ Մատենագրութիւնը», Վենետիկ, 1833, էջ 185-193, ալիգատ՝ Վենետիկ, 1953, էջ 213-222), «Կանոնք վերջնոյ Սահակայ կաթողիկոսի. Գլուխ ԺԵ» // «Մատենագիրք հայոց», հ. Ե (Է դար), էջ 1293-1300 (հմմտ. «Կանոնագիրք հայոց», հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ե., 1964, էջ 506-513): «Պատասխանի թղթոյն Հոնաց» (տե՛ս «Անանուի պատմութիւն», մաս ԽԵ) // «Մատենագիրք հայոց», հ. Ե (Է դար), էջ 893-895):

² Այստեղ հեղինակի շարականների լեզվին չենք անդրադառնում:

³ ՆՀԲ, հ. 1, 1836, էջ 18:

նակը լեզվի ոլորտում դիմում է տպավորիչ համեմատությունների և փոխաբերությունների, ինչպես նաև գործածում է դասական շրջանից եկող շարահյուսական հայտնի կառույցներ: Այդ ճառի լեզուն, մեր կարծիքով, դիպուկ օրինակ է հետագա դարերում հին գրական լեզվի, այսպես կոչված, ընդօրինակումային գործածության:

2. Բառապաշարի բառարանային քննություն

Ըստ այն հատկանիշի, թե դրանք ՆՀԲ-ում կա՞ն, թե՞ բացակայում են, այլև եղածները վկայում են առանձի՞ն, թե՞ այլ հեղինակների հետ միասին՝ անկախ ժամանակային հետևառաջությունից: Ունենք նման կարգի երեք տասնյակից ավելի միավորներ, որոնք բաժանվում են հետևեալ կերպ:

1) Բառեր, որոնք ՆՀԲ-ն չունի: Այդպիսն են հետևյալները.

սայուղայ «(կաշվե) անոթ. տիկ». «Թէ անխիղճ պա՛րտ է համարել զձէթդ, որ բերեն յԱսորոց *սայուղայիւք* մեռելուովք եւ անսուրբ անասնոց, թէ ոչ» (Սիկ. կթ. կան., էջ 1299)¹.

առընթերադեալ (< առընթերադրեալ) «կից՝ առընթեր դնել». «Հարցմունք կանոնականք Յովհաննայ Սիւնականի քաղաքաց եւ *առընթերադրեալ* պատասխանիք նմին» (ն. տ., էջ 1294)².

բժշկասպետաբար «ամենաբժշկի բուժմամբ». «Ինքնին ժամանել բուժումն ի յանցմանն *բժշկասպետաբար*» (Սիկ. կթ. արմաւ., էջ 1291),

երագաձեւ «արագորեն. փութով». «Եւ բազմանուագք ճայնիւք զգանազանութիւն *երագաձեւ* տեսակաց» (ն. տ., էջ 1286).

երամակուղղի (< *երամակուղղի*) «խմբին առաջնորդող». «Եւ ծովածին կենասերք *երամակուղղի* լսելով երամապետիցն, ի ճմեռնային եւ ի միջնաշխարհ կայարանացն երամախմբեալք՝ ի մերոյին

¹ Քննական բնագրում բերվում են մեկ տասնյակից ավելի գրչագրական տարբերակներ: ՆՀԲ-ն չունի, որովհետև դնում է սխալագրությամբ՝ *սայուղայ* «կապիկի մորթով տիկ», ըստ Աճառյանի՝ *սայուղայ*, փոխառություն ասոր. *apāulā* «անոթ» բառի (ՀԱԲ, 1971, 237-238):

² ՆՀԲ-ն ունի *առընթերադիր*, *առընթերադրութիւն*. բնագրի հիմք եղած որոշ ձեռագրեր ունեն *առընթերադրեալ*:

ժամանելով գետին, լրացուցանեն գերկիր և զջուրս» (Ա. տ., էջ 1287).

Նախագուշակել «նախապես իմանալ. մարգարեանալ». «Եւ մարգարէ յաղագս մարգարէաբար եւ աստուածապէս զհանդերձեալսն *նախագուշակել*» (Ա. տ. 1292)¹.

2) Բառեր, որոնց դեպքում ՆՀԲ-ն վկայակոչում է միայն Ձորովորեցուն: Սրանք ևս քիչ չեն, ուստի բերում ենք ըստ առանձին խոսքի մասերի՝ իբրև գոյական, ածական և այլն:

ա) Գոյական. *բարեբանակցութիւն* «բարի խոսքով ձայնակցելը». «Եւ մերոյ փառաբանութեանս *բարեբանակցութեամբ* համագոյապէս ... զաւուրս յառաջ ածցուք զսաղմոսն» (Սիկ. կթ. արմաւ., էջ 1287).

բչումն «բառաչումն». «զգոչումն եւ. *զբչումն* արտաբերելով՝ զբանականաց հրաշացուցանեն զլսողութիւն» (Ա. տ., էջ 1287)².

դեղարան «բուժում». «Եւ զանբուժականն մարմնեղէն ախտին ի մարդկեղէն ախտին *դեղարանացն*» (Ա. տ., էջ 1289)³.

համահինդութիւն «համախումբ՝ ընդհանուր ուրախությունն». «Եւ հասարակաց *համահինդութեամբ* լծորդելով առաքելական գրոց ի տիեզերատանակ աւուրս համաշխարհական խմբեալ բարեբանումն» (Ա. տ., էջ 1288).

ճշմարտափառութիւն «ճշմարիտ փառք. բարեբանություն. ուղղափառություն». «Եւ զիր ճշմարիտ արարչական անուն հրամայեաց աստուածախոստ բարեբանել *ճշմարտափառութեամբ*» (Ա. տ., էջ 1291).

Նատուղակ «նավավար». «Եւ *Նատուղակին* զնաւ ծովուն ընծայեցուցանելով ... ի բաղձալին ժամանէ երկիր» (Ա. տ., էջ 1287).

սրամահութիւն «սրով սպանվելը». «Եւ զանազան սատակմունք, քարկոծմունք, *սրամահութիւնք* եւ հրկիզութիւնք» (Ա. տ., էջ 1288).

սքեմատորութիւն «կրոնավորի զգեստ կրելը». «Եթէ պա՛րտ է եպիսկոպոսի *կրանատրեղ* սքեմատորութեամբ» (Ա. տ., էջ 1295):

բ) Ածական. *առագաստափար* «նավի առագաստին մոտ (իմա՛ փարվել)». «աջողակ *առագաստափար* աւդով սլացեալ ի բաղձալին» (Ա. տ., էջ 1287).

բարեբանակից «բարեբանելուն ձայնակցող». «Սերովբէիցն *բարեբանակից* զսերկեան նախագոչելով մարգարէական հոգւովն» (Ա. տ., էջ 1288).

բարեխառնական «բարեխառն». «Աւղք *զբարեխառնական* եւ զպտղածնաւ բուրեցին շունչք» (Ա. տ., էջ 1287).

բերկրաբերձ «վսեմ բերկրանք առաջ բերող». «*Բերկրաբերձ* եւ սոսկալի բոլոր բանակաց երկնաբիրաց փառաբանողաց պանծացուցանելի» (Ա. տ.).

գերափառագոյն «ամենափառապանծ». «Աւետաբեր եւ տիեզերական տան, եւ տէրունեան տանից *գերափառագոյն*, բերկրաբերձ եւ սոսկալի» (Ա. տ.).

լծորդածին «ծննդակից՝ զուգակից. քույրեր, եղբայրներ». «Եւ զանշնչանալն եւ զննջելոյն յաջորդեալ տեղի, եւ զառաքումն *լծորդածին* կանանցն» (Ա. տ., էջ 1289).

խցարգել «ճգնավոր. խցում փակված. միայնակյաց». «Քահանայ որ սինական է կամ *խցարգել* եւ գտորք խորհուրդն խնդրէ առ ի հաղորդել, արժա՛ն է իւրովի կատարել զհաղորդութիւնն» (Սիկ. կթ. կան., էջ 1298).

հասարակահողով «հասարակածիր». «Եւ արեգակն ի *հասարակահողովն* ժամանեալ ժամանակ, զմէջս երկնի եւ երկրի հոլաթեւէ» (Ա. տ.).

հողագործական «հողամշակմանը վերաբերող». «Եւ տնական կենդանիք արտաքոյ իւրաքանչիւրոց ելանեն. ոմանք *զհողա-*

¹ ՆՀԲ-ն ունի միայն *նախագուշակ*, *նախագուշակական*, *նախագուշակություն*:

² ՆՀԲ-ն այս ձևի համար ունի միայն այս հեղինակից վկայություն:

³ ՆՀԲ-ն ունի *զանբժչականն*, փխ. *զանբուժականն*:

գործակալն տաժանմունս ի նուս բերելով, իսկ այլք հոլեայք լրացուցանեն զհովիտս եւ զկոհակս զանազան» (Սհկ. կթ. արմաւ., էջ 1287).

յաւէտաձեւ «միշտ համաձն՝ նույն ձևով»։ «Յաւէտաձեւ իրաքանչիւրովք ձայնիք փողին զաուրս վայելչութիւն» (ն. տ., էջ 1287).

ոլորտաձաւայ «ամբողջ ոլորտը բռնած»։ «Ծովն ի բարձրակոհակ վրդովմանց եւ *յոլորտաձաւայ* շարժմանց լռեալ կայ» (բ. տ., էջ 1287).

տիեզերատանակ «տիեզերքով մեկ տոնախմբված»։ «Եւ հասարակաց համախնդութեամբ լծորդելով առաքելական գրոց ի *տիեզերատանակ* աուրս համաշխարհային խմբեալ բարեբանումն» (ն. տ., էջ 1288).

քառահետեւ «չորքոտանի, չորեքթաթ (գնացող)»։ «Եւ գազանացն եւ էրէոցն *քառահետեւ* շարմունք, հոլեայք եւ երամացեայք ... ճոխացուցանեն» (ն. տ., էջ 1287):

գ) Բայ. *երամսխմբեալ* «երամով խումբ կազմած»։ «Ի ձմեռնային եւ ի միջնաշխարհ կայարանացն *երամսխմբեալք*՝ ի մերոյին ժամանելով գետին, լրացուցանեն զերկիր և զջուրս» (ն. տ., էջ 1287)¹.

համատնաւորինել «ըստ ամենայնի տեր լինել՝ տնօրինել»։ «Կապեսցէ ընդ որթոյ զգրաստ իւր, զմարմնանալն եւ *համատնաւորինելն* ընդ հողեղէն բնութեամբ» (ն. տ., էջ 1290).

նմանաբերել «նմանեցնել. օրինակել»։ «Եւ երկուս առաքեալս յաշակերտացն, զտիեզերաց *նմանաբերէ* զկոչումն, երկու հոգեխառն կոչմամբք» (ն. տ., էջ 1289).

պտղաձնաւ «պտղաբերող»։ «Աղք զբարեխառնական եւ *զպտղաձնաւ* բուրեցին շունչ» (ն. տ., էջ 1287).

տնկածաւ (<*տնկածեալ*) «տնկել. (ծառ)տունկ անել»։ «Եւ երկրագործ ի բնակաց ... ելանէ ի գործ իւր եւ ի վաստակս ձեռաց

իւրոց, զսերմանական եւ *զտնկածաւ* երկիր գործելով, զըշտեմարանացն ճոխացուցանելով զլիութիւն» (ն. տ., էջ 1287)¹:

դ) Մակբայ. *գործակցաբար* «իբրև գործակից. գործակից ձևով»։ «համախոհ լծորդութեամբ ընդ նոսա զաստուածեղէն մտիցն սպասաւորեսցուք գործակցաբար, ընդ տղայսն բարեբանեսցուք» (ն. տ., էջ 1292).

որդէգրաբար «իբրև որդեգիր»։ «զնորածնելոցն յաւազանէ *որդէգրաբար* ընդ Սրբոյ Երրորդութեանն կապեալ սիրով» (ն. տ., էջ 1290):

3) Բառեր, որոնց համար ՆՀԲ-ն վկայակոչում է նախ Զորփորեցուն, այլև հետագա հեղինակ(ներ)ի: Դրանք շատ չեն (գոյական, ածական, բայ, մակբայ).

գերեզմանականանք «գերեզմանականներ»։ «Անշնչանայր Ղազարոս, եւ *զգերեզմանականանցն* ըմբոշխնելով կերպ, փոխեալ լինէր ի կենդանութենէն» (Սհկ. կթ. արմաւ., էջ 1289).

երուսաղէմանայ «լինել իբրև Երուսաղեմ. խաղաղվել»։ «Ի հասարակաց արարչին ծնելութեան՝ մաքրի եւ *երուսաղէմանայ* բուր տիեզերք» (ն. տ., էջ 1291).

հրահանգապետ «հրահանգ տվող. վարդապետ»։ «Եւ նախ քան զգրաւորական դպրութիւն, զարինականացն դաստիարակէ *զհրահանգապետս*» (ն. տ., էջ 1292)².

մարգարէաբար «իբրև մարգարե. մարգարետությամբ»։ «Եւ մարգարէ յաղագս մարգարէաբար եւ աստուածապէս զհանդերձեալսն նախագուշակել» (ն. տ., էջ 1292)³.

¹ ՆՀԲ-ն *սերմանական*-ի համար բերած այս նույն օրինակում՝ դնում է *տնկածնոյ* ձևով:

² ՆՀԲ-ն երկրորդ վկայություն բերում է Սիւն. տաղ. խչ. [= Ստեփանոս Սիւնեցի հեղինակի գործ, որ բառարանի համառոտագրությունների ցանկում չի նշվում (?)]:

³ ՆՀԲ-ն ունի՝ Սհկ. կթ. արմաւ., հետո՝ Վրդն. սղ. [= Վարդան վարդապետ, «Մեկնութիւն սաղմոսի». ԺԳ դ.]:

¹ ՆՀԲ-ն հենց այդ ձևն է դնում իբրև գլխաբառ:

տիեզերագույլ «աշխարհով մեկ գովաբանված՝ հռչակված» «Եւ մեք որ այսպիսի *տիեզերագույլ* եւ բարեբանաւոյ հանդիսացաք աւուրս» (Ա. տ., էջ 1292)¹:

4) Բառեր, որոնց դեպքում ՆՀԲ-ն այլ հեղինակների հետ միասին վկայակոչում է նաև Ձորոփորեցուն: Այս դեպքում, անշուշտ, պետք է հետևել հեղինակների ապրած ժամանակի հաջորդությանը, որն անհրաժեշտ է լեզվի բառապաշարի պատմության համար. այստեղ նման բառերին անդրադառնում ենք Ձորոփորեցու երկի հիմքով: Դրանց մի մասը վկայակոչվում է ըստ Ձորոփորեցու և հետագա հեղինակների (հմմտ. *մեծափառություն* «մեծ փառք. պատիվ պանծալի»): Իսկ եթե որոշեինք նման բառերի, պայմանականորեն, հեղինակային նորակազմություն լինելը, ապա պիտի բացառեինք Ձորոփորեցուն նախորդող ժամանակի աղբիւրների հետ բերվող օրինակները (հմմտ. *նորահաստ* «նոր սուրբ հավատքի եկած. նորատունկ»): Սակայն չենք բացառում՝ հաշվի առնելով այն, որ, իբրև հին գրական հայերենի բառապաշարի միավոր, եղել է լեզվում առհասարակ, ընդ սմին պատկերացում տալով գործածության ինտենսիվության վերաբերյալ: Բերում ենք նման բառերը՝ ըստ առանձին խոսքի մասերի:

ա) Գոյական. *կրանատրանց* «կրոնավորների բնակատեղի». «Աքեմաուր որ արկանայ կամ բորոտի ի նմին *կրանատրանցի* կա՛լ» (Սհկ. կթ. կան., էջ 1293).

մարմնատրություն «մարմնանալը. մարդեղություն». «որ է հաւատարիմ եւ ճշմարիտ վկայ նորա *մարմնատրութանն*» (Սհկ. կթ. արմա., էջ 1292).

մեծափառություն «մեծ փառք. պատիվ պանծալի». «Զժամանակիս զգալով *մեծափառություն*» (Ա. տ., էջ 1287). «*Զմեծափառութանն* փողեաց մեզ բան» (Ա. տ.).

սգատրություն «սգալը. տխրություն». «Երկիր զճմեռնային *սգատրություն* ի գարնանային յեղանակեալ վերանորոգումն» (Ա. տ., էջ 1287).

սրակնություն «աչքի սրություն. սրատեսություն». «Եւ Հոգոյն Սրբոյ *սրակնութամբ* զբազմաժամանակեալ եւ զհանդերձեալ դիտաւորեցին խորհուրդ» (Ա. տ., էջ 1288).

տիեզերապետություն «տիեզերակալություն. աշխարհի տեր լինելը». «նշանակէ զաստուածացելոյ. հակառակամարտին ճոխութիւն *ի տիեզերապետութենէ* լուծանել ընդ ոտիք մեռուցէ» (Ա. տ., էջ 1289)¹:

բ) Ածական. *երամասպետ* «դասապետ. պարագլուխ». «Եւ ծովածին կենասէրք երամակուղղի լսելով *երամասպետիցն*, ի ճմեռնային եւ ի միջնաշխարհ կայարանացն երամախմբեալք՝ ի մերոյին ժամանելով գետին, լրացուցանեն զերկիր և զջուրս» (Ա. տ., էջ 1287),

մարբախայլ «մաքրությամբ փայլող». «Աստեղք *մարբախայլք* եւ ականակիտք, նկարակերտելով զիրքանչիւրոց դիրս» (Ա. տ., էջ 1287).

մերունակ «մեր նման՝ ձևով. մերային». «Եւ կապել զանգրաւ եւ անլուծանելի սրով ընդ *մերունակ* բնութանս» (Ա. տ., էջ 1290),

մշտայաղթ «միշտ հաղթող՝ հաղթանակով դուրս եկող». «հաւատարիմ մարագարէ, եւ բարբարոսական ազգին տանջաւոյ, *մշտայաղթ* ի պատերազմունս» (Ա. տ., էջ 1287).

սերմանական «ցանովի. սերմանելի». «Եւ ի վաստակս ձեռաց իւրոց, *զսերմանական* և գտնկածաւոյ երկիր գործելով, զըշտեմարանացն ճոխացուցանելով զլիութիւն (Ա. տ., էջ 1287):

գ) Բայ. *հոլաթել* «մերկ՝ հոլանի գնալ». «Եւ արեգակն ի հասարակահոլովն ժամանեալ ժամանակ, զմէջս երկնի եւ երկրի *հոլաթելէ*» (Սհկ. կթ. արմա., էջ 1287).

¹ ՆՀԲ-ն ունի՝ Սհկ. կթ. արմա., այնուհետեւ՝ Աթ. իս. [= Աթանաս Աղեքսանդրացի, Դ դ.]:

¹ ՆՀԲ-ն ունի նախ՝ Խոր. Հոփսիս. [= Խորենացի, Ներքողեան ի սուրբ կոյսն Հոփսիսիմէ], հետո՝ Սհկ. կթ. արմա.:

նախաճառել (<նախաճառեալ) «նախաճայնել. կանխավ ասել»։ «Համագոյ արիւնին հոգեկիրքս զհանդերձեալ աստուածորդւոյն զսքանչելագործութիւնս նախաճառեալ աստուածաբանեցիկն» (Սիկ. կթ. արմաւ., էջ 1290)։

Նկարակերտել «հորինել իբրև նկար»։ «Աստեղք մաքրափայլք եւ ականակիտք, նկարակերտելով զիրքանչիրոց դիրս» (Ա. տ., էջ 1287)¹։

սաստնազարդեալ «գեղեցկատարագ. շրջագարդ»։ «Եւ բուրաստանք ի ստածող աւոցոց սաստնազարդեալք» (Ա. տ., էջ 1287)²։

ստածել (<ստածող) «(խնամք) տածել. խնամել»։ Եւ բուրաստանք ի ստածող աւոցոց սաստնազարդեալք» (Ա. տ., էջ 1287)։

տաճարանալ «տաճար և բնակարան լինել»։ «Ո՛րպէս հողանիւթեայ մարմնովք տաճարացան Սրբոյ Հոգւոյն, եւ շնորհաբարձ բախտին վերամբարձան» (Ա. տ., էջ 1288)³։

դ)Մակբայ. ստուածաբանաբար «իբրև աստվածախոս. Աստված փառաբանելով՝ կանչելով»։ «զբոլորից Հար եւ զմիածին Որդւոյն մարդասիրութիւնն փողեալ գոչեցուք սաստուածաբանաբար» (Ա. տ., էջ 1288),

համագոյապէս «համագո ձևով. միասնաբար»։ «Եւ մերոյ փառաբանութեանս բարեբանակցութեամբ համագոյապէս... զաւուրս յառաջ ածցուք զսաղմոսն» (Ա. տ., էջ 1287)։

5) Բառ, որի դեպքում ՆՀԲ-ն տալիս է նախ հետագա հեղինակի, այնուհետև Ձորոփորեցու օրինակը: Այդպիսին է բարձրակոհակ «բարձր ալիքներ տվող՝ տարածող» բառը, նախ՝ Արիստ. Լաստիվերցու, այնուհետև Ձորոփորեցու գործածությամբ, այն նկատառումով, որ երկրորդում բառն ունի փոխաբերացում.

¹ ՆՀԲ-ն հիշյալ իմաստով միայն այս օրինակն է բերում:

² ՆՀԲ-ն այս ձևն ունի սաստնազարդ-ի հետ միասին իբրև առանձին գլխաբառ:

³ ՆՀԲ-ն ունի բառահողոված նաև տաճարացուցանել, որ կա նաև այս բնագրում. «գոր տաճարացուցեալ ինքեան՝ նստի եւ հանգչի ի սուրբ եկեղեցւոջ» (Սիկ. կթ. արմաւ., էջ 1290)։

«Ծով ի բարձրակոհակ վրդովմանց եւ յոլորտածաւալ շարժմանց լռեալ կայ» (Սիկ. կթ. արմաւ., էջ 1287)¹։

6) Այլ կարգի՝ հետագա հեղինակների վկայակոչմամբ բերված բառեր. սա բերում ենք ժամանակային ճշգրտման պայմանով.

արկ (ուրկ)-անամ «բորոտ, բորոտանալ»։ «Ուրկի և բորոտի հաղորդել, թէ ի մեղս չեն»։ «Սքեմաւոր որ արկանայ կամ բորոտի ի նմին կրանաւորանոցի կա՛լ» (Սիկ. կթ. կան., էջ 1293)²։

գործակցաբար «գործակից ձևով. լծորդումով»։ «ընդ նոսա զաստուածեղէն մոիցն սպասաւորեցուք գործակցաբար» (Սիկ. կթ. արմաւ., էջ 1292)³։

մերոյին «մեր. մերային», «Ի ձմեռնային եւ ի միջնաշխարհ կայարանացն երամախմբեալք՝ ի մերոյին ժամանելով գետին, լրացուցանեն զերկիր և զջուրս» (Ա. տ., էջ 1287)։

7) Բառեր, որոնք գործածվում են այլ իմաստով. դա երբեմն նշվում է նաև ՆՀԲ-ում: Օրինակ՝ համագոյապէս. ըստ ՆՀԲ-ի՝ մակբայ, սովորաբար՝ «որպէս համագո»։ իսկ այստեղ՝ «արարածք ամենայն բնութենակից մեզ գոլով սեռօրէն, կամ երկինք և երկիր լրիւ իրեանց»։ «Եւ բովանդակ երկին եւ երկիր եւ ծով, եւ ամենայն կենդանատեսակք զաւուրս մեծացուցանելով զփառաւորութիւն բերկրին եւ խնդան, եւ մերոյ փառաբանութեանս բարեբանակցութեամբ համագոյապէս, գոր բաւական համարելով, զաւուրս յառաջ ածցուք զսաղմոսն» (Սիկ. կթ. արմաւ., էջ 1287)։

¹ ՆՀԲ-ում՝ «Ծովն ի բարձրակոհակ վրդովմանց լռեալ կայ»։

² ՆՀԲ-ն ունի ու-ով, ոչ աւ-ով (հնչունական երևույթ)։ Ի դեպ՝ քննության առարկա բնագրերում հանդիպում են հնչունական այլ իրողություններ և ս, որոնց այստեղ չենք անդրադառնում. օր.՝ վաղճանեղն (փխ. խ-ով) (Սիկ. կթ. արմաւ., էջ 1289) և այլն։

³ ՆՀԲ-ն ունի՝ Սիկ. գալստ. [= ?] համառոտեյալ հղումով, որ բառարանի ցանկում չի տրվում:

Այսպէս նաև՝ *մաքրահայլ* «մաքրությամբ փայլող»։ «Աստեղը *մաքրահայլք* եւ ականակիտք, նկարակերտելով զիրքանչիրոց դիրս» (Ա. տ., էջ 1287)¹։

8. Վերլուծական բառակրկնություն՝ բաղադրիչներից երկրորդի այս կամ այն կարգի թեքմամբ. նման կառուցվածքի կապակցությունը, ընդունված է ասել, թե օտարաբան («ասորաբան») է հայերենում, որի պարզաբանումն այլ խնդիր է. հմմտ. *ի զարու զարավար, ի հաստի հաստապետ, ի նաւի նաւապետ*. «Նման եւ ճշմարիտ է բանս, զի յամենայնում պէտք եւ առաջինք զաւետաբեր խնդան լուր. *ի զարու զարավարք, ի հաստի հաստապետք, ի նաւի նաւապետ*» (Սիկ. կթ. արմա., էջ 1288)։

Այդպէս նաև՝ *վիրոյ ընդ վիրաց, անդամ ընդ անդամոց*. «Յանցաւորացն հրամայէր տանջմունս գնացից՝ եւ տանջանաց զանազանելոց, *վիրոյ ընդ վիրաց* եւ *անդամս ընդ անդամոց* կրճատել» (Ա. տ.). *ամենայն յամենայնում, հողեղէնան հողեղէն* «եւ եղել ինքն Բանն *ամենայն ամենայնում*։ Ընդ *հողեղէնս հողեղէն*. արիւնին ճոխացուցանող» (Ա. տ.). *բնութեամբ բնութիւն*. «Այլ Որդոյ զմեր կերպարանեալ *զբնութիւնս, եւ բնութեամբ* քաւարան գոլով բնութեանս, ի տանջանաց զբնութիւնս ազատելով» (Ա. տ.)։

Եզրակացություններ

1. Հին գրական հայերենի բառապաշարի մակարդակում կատարված նման ամեն մի քննություն կարևոր է լեզվի եկեղեցական-մշակութային կողմի լիարժեք պարզաբանման համար։

2. Հեղինակի գրաբարը զգալիորեն տարբերվում է դասական շրջանի լեզվի՝ հատկապես ժողովրդական տարրերի ներառման տեսանկյունից։

3. Հեղինակի բառապաշարը, անշուշտ, հին գրական հայերենի ընդհանուր բառապաշարի հարստացման մի օրինակ է։

¹ ՆՀԲ-ն հիշեալ իմաստով միայն այս օրինակն է բերում։

Հովհան Ծննդոց երկերի լեզվի մասին

Ներածություն

Հին գրական հայերենի ընդհանուր պատմության հանգուցային հարցերից է մեզ հասած գրավոր աղբյուրների մանրամասն քննությունը, որում Հովհան իմաստասեր Ծննդոց երկերը նույնպես ունեն կարևոր նշանակություն։

Հովհ. Ծննդցին (վախճ, 728 թ., հովվ.՝ 717-728 թթ.) հեղինակ է իմաստասիրական-աստվածաբանական և դավանաբանական երկերի, եկեղեցու կարգաբանությանը վերաբերող կանոնների, որոնք լավագույնս արտացոլում են ժամանակի գրական լեզուն։

Այստեղ մեր ուշադրության առարկան նրա երկերի բառապաշարի նորաբանություններն են՝ իբրև ինքնատիպ մտածողության լեզվական ուրույն հորինվածք։ Ծննդոց հայացքների շատ գծեր և նրբություններ ծրարված են նրա լեզվական անհատական ոճի մեջ։ Ապրելով և գործելով VII դ. 2-րդ և VIII դ. 1-ին կեսերին, նրա երկերը օրինակ են ժամանակի գրական հայերենի։

«Նոր հայկազյան բառարանի» (ՆՀԲ) հեղինակները նրան բնորոշում են իբրև «վսեմ և գերապանծ հայկաբանությամբ» գրող հեղինակ, որի լեզվին խիստ հատկանշական է եղել նաև իր ժանանակի «հելլենական բանահյուսությունը» (իմա՝ հունաբան ոճով բառի և խոսքի կազմումը - Վ.Հ.), որի ճառերը փայլում են «հզոր և ազդու ոճով» (հ. 1, էջ 16)։

Դրանք մեզ են հասել ձեռագիր, հետագայում տպագրվել են կա՛մ ընդհանուր խորագրով, կա՛մ առանձին¹. «Ընդդէմ երևութականաց»-ը, օրինակ, լույս է տեսել առանձին, բնագրի ընդարձակ քննությամբ, երկրորդ անգամ նաև լատիներեն թարգմանությանը

¹ Նկատի ունենք՝ «Մատենագրությունք» (Վենետիկ, 1833, այլև՝ 1953) գիրքը, ինչպես նաև «Սակս ժողովոց որ եղեն ի Հայք» (տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 220-233, 2-րդ հրատ., Երուսաղեմ, 1994, էջ 473-493), «Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնալոյ բանին» (տե՛ս «Արարատ», 1896, էջ 192-199)։

գուգադիր (Վենետիկ, 1807): Օձնեցին կազմել է «Կանոնագիրք Հայոց»-ը (Թիֆլիս, 1914): Վերջապես, այժմ հայտնի են դառնում նաև մինչև այժմ անհայտ մնացած որոշ գործեր (տե՛ս «Մատենագիրք հայոց» ժողովածու)¹:

Այդ երկերը, գրված ժամանակի գրական հայերենով, սերտորեն առնչվում են V դ. 2-րդ կեսին մեզանում երևան եկած հունաբան դպրոցի ներկայացուցիչների գրական արժեքներին, որ նկատելի է բառապաշարի իմաստասիրական ձևակերպումների, մանավանդ տերմինաբանության մեջ: Դրանց լեզվի, հատկապես բառապաշարին նվիրվել են զգալի թվով գիտական հոդվածներ, գրվել է առանձին աշխատություն, սակայն դեռ կա վերստին անդրադառնալու անհրաժեշտություն (տե՛ս Համբարձումյան, 1997, 96-105. նույնի, 1999. Hambardzumyan, 2000, 232-240. Ներսիսյան, 2003, 111-123. նույնի՝ 2012):

1. Հնչյունական տարբերություն ունեցող բառեր: Ամենից առաջ ուշադրության են արժանի հնչյունապես այլ կարգի՝ հնչյունի այս կամ այն տարբերակով ներկայացող բառերը, որոնք կա՛մ ժամանակի խոսակցական լեզվի ազդեցության արդյունք են, կա՛մ հետագա ձեռագրերի (գրչագրական) տարբերություններ («վրիպումներ»․ lapsus calami) են: Օր․՝ *առածանի* (ըստ ՆՀԲ-ի՝ «իբր առածք տե՛ս առականի»․ հղում է միայն Մագ. ոտ., իմա՛ Գր. Մագիստրոս, Ոտանաոր «առակներ. առակների հավաքածու»)․ «Եւ յիրաքանչիրոցն անուն երդմունս կատարել *առածանին*» (էջ 38), *ունգն* «ականջ» (Յհ. իմ. եկեղ., էջ 95), նաև *ունգնադրութիւն* (ՆՀԲ-ն տալիս է՝ *ունկնադրութիւն*) «հնազանդ լինելը. ականջ անելը»․ «և զուշս և զմիտս *ունգնադրութեան* կարկառեալ ի տաճար սրբութեան» (ն. տ., էջ 97), *ընքեան* (իմա՛ *ինքն* > *ընքեան*․ ՆՀԲ-ն չունի, ունի *ինքեամբ՝ ինքեամբ ինքն*, այլ վկայություններով)․ «Յաղագս

¹ Բացի «Ճատ ընդդէմ պառլիկեանց»-ից (թարգմ. Ա. Դազինյանի // «Էջմիածին», 1980, էջ 51-57), չունեինք Օձնեցու երկերի աշխարհաբար (նոր գրական հայերեն) որևէ թարգմանություն (տե՛ս Հովհաննես Օձնեցի, Երկեր, Ե., 1999):

որոյ գնոյն ինքն *ընքեան* զմարդկային կազմածս մեղս ասացեր գոլ» (ն. տ., էջ 71):

Ըստ այդմ նկատելի են հետևյալ կարգի տարբերությունները:

ա) *Չայնամիորների, երկբարբառների տարածություններ*

Նման տարածությունները, թերևս, ունեն ժամանակի խոսակցական (բարբառային) հիմքեր.

ա - ը. օժընդակ (Յհ. իմ. եկեղ., էջ 91).

ա - ե. երագագրատելի (Յհ. իմ. առ., էջ 5).

ա - այ. քայրամանեակ (ն. տ., էջ 1), *ճայշ* (< ճաշ) (?) «զի սովոր են Գիրք ի ճայշի կերակրել» (Յհ. իմ. խօսք., էջ 154).

ա - ուս. ժուայթեմ «(շատ ուտելուց) ժայթթել, զկռտալ» (Յհ. իմ. պաղ, էջ 38).

ա - թ (գրո). պաշտման (Յհ. իմ. եկեղ., էջ 86), *սայ* [իմա՛ ապա. հմմտ. *սայ* եթէ (գրությամբ՝ առանձին). (Յհ. իմ. առ, էջ 33)].

այ > թ (գրո). հերեսիոտայք (հերեսիոտք) (Յհ. իմ. խօսք., էջ 151, երկիցս)¹.

ե - ի. Վաղինսոխանոս (Յհ. իմ. նախ., էջ 157).

ե - ո. ցորեկ «ցերեկ» (< *n*-ով՝ խսկց.) (Յհ. իմ. խօսք., էջ 154, հաճախակի)². *ցորեկապահք* «ցերեկվա (պահ)» (< ցերեկ. *n*-ով՝ խսկց.) (ն. տ)³.

ե-ի պահպանում (ոչ հնչյունափոխում *ի-ի*), այլև վերածում *n*-ի. հակամետել (< փխ. *ի*-ով) (ն. տ., էջ 150).

եա - ե. տեռնագալուստ (Յհ. իմ. առ., էջ 28).

է - ի. հսկամիտ (Յհ. իմ. խոստ., էջ 193).

¹ ՆՀԲ-ն չունի այս, այլ՝ *հերեսիոտայք, հերեսիոտք*. Օձնեցունը՝ ժամանակի խոսակցականի երանգ ունի:

² ՆՀԲ-ն ունի՝ միայն Սերերիանոս, որ դա ևս նշանակում է, որ ժամանակին կատարված թարգմանությունը կրում է խոսակցականի կնիք: Ըստ այսմ՝ կարելի է ուշադրություն դարձնել գրականի մեջ եղած նման ներթափանցումներին՝ թե՛ հնում, թե՛ հետագայում:

³ ՆՀԲ-ն ունի *ցորեկապահ*՝ վկայությամբ հետագայի:

է - ւ. *թեպէտ* (Յհ. իմ. նախ., էջ 156), *եթե* (Ա. տ., էջ 158), կարծիք կա, որ *ե*-ն ավելի հին է, քան *է*-ն. հակառակ անցումն ավելի ուշ է.

ի - *է*. Աբեսողոմ (Ա. տ., էջ 157).

ի - *ը*. *ընթեան* (նաև՝ *ընթեամբ*) (Յհ. իմ. եկեղ., էջ 71).

ի - *ս*. *Եզնակ* (Յհ. իմ. երև., էջ 67).

ո- *ով*, *Դիովնիսեայ* (Յհ. իմ. երկբայ., էջ 128).

օ (զրո) - *ը*. *թըմբրութիւն* (նաև *թմբութիւն*. Յհ. իմ. ատ., էջ 17, Յհ. իմ. գիշ. ժամ., էջ 109), *ուծընդի* (Յհ. իմ. միաշաբ., էջ 101).

հ - *օ* (զրո). *եղղենասցի(ք)* (իմա՝ հելլենացի) (Յհ. իմ. պառ., էջ 37). *նաշի* «մանր՝ փոշի ալյուր» (սովորաբար՝ *հ*-ով, երբեմն նաև խով. Յհ. իմ. գիշ. ժամ., էջ 112).

ւ - *օ* (զրո). *երանելոյ* (Յհ. իմ. եկեղ., էջ 102), *տարոյ* (< տարի. Յհ. իմ. միաշաբ., էջ 102), *տեղոյն* (Յհ. իմ. եկեղ., էջ 100), *ի հոգոյ* (երկինս վերացան) (փխ. ւ-ով) (Յհ. իմ. պատճ., էջ 107), (ընդ ծագել) *հոգոյն* (Ա. տ., էջ 107).

ո - *օ*. օտխին (Յհ. իմ. պառ. էջ 46).

ու - *ը* (*զլուխին* (փխ. առանց ու-ի), (Յհ. իմ. նախ., էջ 156)¹.

յ - *ի*. կրկնական նախդրառություն. *յիսկզբան* (իմա՝ յիսկզբան. Յհ. իմ. ատ., էջ 3), յիստուեր (Յհ. իմ. եկեղ., էջ 85. երկիցս).

յ - *գ*. *գօշել* (իմա՝ յօշել) «պատառոտել» (Յհ. իմ. պառ., էջ 46).

ն - *օ* (զրո). (*գայ*) *կանսցն* (փխ. կանանց) (Յհ. իմ. պատճ., էջ 106):

բ) *Բաղաձայնների տարաձևություններ*

Այս դեպքում ևս օրինակների առատությունը և բազմազանությունը, թերևս, փաստ են ժամանակի խոսակցական (բարբառային) ներթափանցումների: Հայ բարբառների տեսական ուսումնա-

սիրության համար նման իրողություններին անդրադառնալն ունի բացառիկ նշանակություն:

1) Հպական ձայնեղի խլացում՝ *բ, գ, դ, ձ > պ, կ, տ, ծ. ամպարիշտ, ամպարշտութիւն* (Յհ. իմ. պառ., էջ 39), *Բաղտասար* (արքայ) (Ա. տ., էջ 45), *խանտացոյ* (Յհ. իմ. ատ., էջ 11), *խշտանկել* (Ա. տ., էջ 13, 33, նաև Յհ. իմ. յիշատ., էջ 115), *կնկղաոր* «կնգուղ՝ վեղար կրող. վեղարակիր» (Յհ. իմ. նախ., էջ 157) և այլն¹:

2) Հպական խուլի ձայնեղացում (նախորդի հակառակ երևույթը՝ *կ, տ, ծ, ձ > գ, դ, ձ, ք*. օր.՝ *ընդըրումն*, «կարգեցան ի ժամուն յայնմիկ աղօթք ... ի տրոհել օդեացն և այծեացն՝ յընդըրման որոմանն և ցորենոյ» (փխ.՝ *տ*-ով. Յհ. իմ. ատ., էջ 92). *թագնաբար*. «թագնաբար ընդ խաւար շրջի որոգոյթադիրն» (փխ.՝ *ք*-ով. Ա. տ., էջ 113):

Այսպես նաև հետևյալները. *անգաներ* «ընկնել» (Յհ. իմ. եկեղ., էջ 85, երկիցս), *անգեպ* (Յհ. իմ. պառ., էջ 38), *գայթազորութիւն* (Յհ. իմ. ատ., էջ 21, Յհ. իմ. խօսք., էջ 149), *գայթազդեցան* (Յհ. իմ. երև., էջ 79), *մի՛ գայթազդիր* (Յհ. իմ. պառ., 44), *գայթազդիցիս* (Յհ. իմ. երև., էջ 60, 73), *եռանգիւնի* (Յհ. իմ. ատ., էջ 23), *ընգալաւ* (Յհ. իմ. եկեղ., էջ 97), *խունգ* (Ա. տ., էջ 96), *խորամանգութիւն* (Յհ. իմ. նախ., էջ 157, 158), *մանգունք* // *մանգանց* (Յհ. իմ. եկեղ., էջ 87, 90, այլն Յհ. իմ. միաշաբ., էջ 105), *տնանգ* «անտուն, տնանկ» (Յհ. իմ. եկեղ., էջ 95), *տնգեր* «տնկել» (Ա. տ., էջ 98), *ունգն* (Ա. տ., էջ 95), *ունգնադրութիւն* «հնազանդություն. ականջ անելը» (Ա. տ., էջ 95, 97. նաև *ունկնադրութիւն*. Յհ իմ. միաշաբ., էջ 105), *բանդ* (< *ի բանդէ*. Յհ. իմ. եկեղ., էջ 99), *Մաշոց* (Յհ. իմ. երև., էջ 66), *պանձալի* (Յհ. իմ. միաշաբ., էջ 104), *օձաջամբ* «օձի միջոցով ուղարկված» (Յհ իմ. եկեղ., էջ 96) և այլն:

3) Հպական կամ հպաշփական ձայնեղի շնչեղ խլացում՝ *բ, գ, ձ > փ, ք, ց. յոքնագան* (Յհ. իմ. պառ., էջ 38), *յոքունք* (Ա. տ., էջ 45),

¹ Եթե բնագրի համակարգչային շարվածքի վրիպակ չէ:

¹ ՆՀԲ-ն ունի միայն՝ Մամիկ. [= Մամիկոնյան]:

փափաքանք (Ա. տ., էջ 40), *օցտել* (Յհ. իմ. խոստ., էջ 192), *խափեցան* (Յհ. իմ. պատճ., էջ 106):

4) Շնչեղ խուլերի ձայնեղացում՝ *փ, բ, թ > բ, գ, դ*. օր.՝ *եղագ*. «Մանաւանդ թէ և *եղագ* ներքսակողմեան նմա» (Յհ. իմ. ատ., էջ 11):

Այսպես նաև հետևյալները. *թագնաբար* (Յհ. իմ. գիշ. ժամ., էջ 113), *խառնաբնդոր* (Յհ. իմ. ատ., էջ 8), *որթողոգասկան* (Յհ. իմ. նախ., էջ 156), *պատրիարզ* (Ա. տ., էջ 157):

5) Փափուկ չի կոշտացում՝ *ղ*, որ ունի լայն գործածություն. *Բաբեղոն* (Յհ. իմ. պառ., էջ 45), *բաբեղոնական* (Յհ. իմ. ատ., էջ 18), *բաբեղացի* // *բաբեղոնացի* (Յհ. իմ. պառ., էջ 35, 37), *Բէղ* (իմա՝ *Բէլ*) (Ա. տ., էջ 37), *եղեկնացի(ք)* (իմա՝ հելլենացի) (Ա. տ., էջ 37), *թղփատել* (նաև՝ *թղփատութիւն*, Յհ. իմ. ատ., էջ 5), *թոյղ տալ* (փխ. լով, էջ 11), *թուղացոյց* («թուլացրեց», Յհ. իմ. երև., էջ 73), *խրայեղեան* (Յհ. իմ. պառ., էջ 45), *Իսրայելի* (Յհ. իմ. ատ., էջ 12), *ծուղութիւն* «ծուլլ լինելը» (Ա. տ., էջ 19, 23), *կրոկողիղոս* (Յհ. իմ. պառ., էջ 35), *ղեղի* (իմա՝ *լեղի*. Յհ. իմ. երև., էջ 79, Յհ. իմ. եկեղ., էջ 95), *Յուդիանոս* (Յհ. իմ. երև., էջ 56, 59), *նշուղից* (իմա՝ նշուլլ, Յհ. իմ. ատ., էջ 2), *վաղենտիստայք* (Յհ. իմ. երև., էջ 65), *Փիղիպպոս* (Ա. տ., էջ 62),

6) *ղ > գ*. *լոգանալ* «լողանալ» (ոչ՝ «լոգանք ընդունել») (Յհ. իմ. ատ., էջ 18).

7) *թ* (զրո) > *բ՝ թըմբրութիւն* // *թմբրութիւն* (փխ. թմբութիւն, Յհ. իմ. ատ., էջ 17, Յհ. իմ. երև., էջ 69).

8) *թ* (զրո) > *դ*. *ծմբրիլ* «խիստ ծմբել՝ ճմբել. ծմբկտալ» (փխ. առանց դ-ի) (Յհ. իմ. պառ., էջ 41).

9) *խ > դ*. *ջաղջախ* (Յհ. իմ. երև., էջ 60).

10) Շփական ձայնեղի խլացում՝ *ղ > խ*. *դրէմխոս* «հոտած, գարշելի հոտ ունեցող» (Յհ. իմ. խոստ., էջ 193).

11) *ր > ռ*. *փատաւոնի* (Յհ. իմ. Գայ., էջ 145).

12) կրկնագրություն. *Կղեմմէս* (Յհ. իմ. նախ., էջ 156),

13) *եա – ե*. *երեսնեկ* (Ա. տ., էջ 165):

Նկատենք, որ ունի նաև զուտ բարբառային կամ խոսակցական բառեր. հմմտ. *յընդրման* «ընտրել» (Յհ. իմ. եկեղ., էջ 92). հմմտ. *հընդրել – հընդրուշկն* (ընգնել) և այլն (Մուշ, Ալշ.):

Դատելով ՆՀԲ-ի հետ համեմատության տվյալներով՝ նոր բառերը երկու կարգի են՝ ա) ՆՀԲ-ում չվկայաբերվող, և բ) վկայված միայն Օձնեցու կամ Օձնեցու և նրան ժամանակակից, այլև հետագա հեղինակների նշումով և այլն:

3. Ընդհանուր գործածության բառեր

Այսպիսին են այն բառերը, որոնք ՆՀԲ-ում առանձնացվում են ոչ միայն ավելի վաղ հեղինակների, այլև Օձնեցու երկի տվյալների հիման վրա: Դրանք նկատի ենք ունենում ոչ ըստ այնմ, որ նոր (կամ նորահայտ) են, այլ դրանք մեր այս հեղինակի անունով նույնպես հաշվի են առնված ՆՀԲ-ում: Օձնեցու երկերում կիրառվում են իմաստային այս կամ այն դրսևորմամբ, ընդ որում ոչ միայն իբրև սովորական, այլև տերմինային արժեքով: Իսկ սա նշանակում է, թե նրա երկերի բառապաշարն իր հարստությամբ և իմաստաբանությամբ ըստ էության կարևոր է հայոց լեզվի ողջ բառապաշարն ամբողջության մեջ տեսնելու առումով:

Նշենք դրանցից մեկ-երկուսը:

Խորհուրդ բառը ՆՀԲ-ում նշվում է մի քանի՝ 1) «խորհելը, մտածություն. տրամախոհություն», 2) «խորհրդակցություն, խորհրդակցելը (մեկի հետ). խրատ», 3) «միտք. դիտավորություն. իմաստ», 4) «խոհեմություն, իմաստություն. հանճար», 5) «զաղտնի՝ սրբազան, աստվածային (մի բան)», 6) «նմուշ, տիպ. օրինակ» իմաստներով: ՆՀԲ-ն ունի նաև այս գոյականի եզակի գործիական հոլովի *խորհրդով* ձևը, իբրև մակբայ՝ «խորհրդաբար, գաղտնի ձևով»: Այն Օձնեցու երկերի 1833 թ. հրատարակության մեջ (բացի եկեղեցական կարգերին վերաբերողներից, այլև «Երկբայականք» դիտվածներից) գործածվել է 88 անգամ. բերվում է վկայություն հիշյալ իմաստներից 3-րդի համար, նոր գրական հայերեն նշանակում է «ձգտում», որպիսին իրենից առաջ կիրառված է եղել միայն

Փիլ. Երբայեցու «Ծննդոց գրքի» մեկնության մեջ, իսկ իրենից հետո՝ Ներս. Լամբրոնացու «Ատենաբանություն» երկում, այլև Կոստ. Երզնկացու քերականության մեջ. «Որ յոյժ պինդոդ ունիս զմիդ ասել բնություն. և ասելոյդ քո *խորհուրդ* ի վաղենտինեայցն և ի մանիքեոնցն հայի աղճատանս» (էջ 65):

Բազմամարդություն «մարդկանց բազմություն. ամբոխ». «Եւ որ ի ժողովի՝ *բազմամարդութեամբ* զուրախականսն ոչ փափագէ գտանել, տրտմականացն՝ ծածկաբար ընդ էսն անցանելով՝ անբաղայապէս հանդիպեսցի» (Յհ. իմ. ատ., էջ 11) և այլն:

Նման բառերը բերում ենք ըստ դրանց ներսում բառային-բանականական բաղադրիչների հանդիպադրման բնույթի՝ բարդ, ածանցավոր, բարդ ածանցավոր և այլն:

Այսպես նաև հետևյալ բառերը՝ ըստ առանձին խոսքի մասերի:

ա) Գոյականներ. *ամանակ* «ժամանակ» (Յհ. իմ. ատ., էջ 21), *աստուածայայտնություն* «աստուծու երևալը՝ մարդեղությամբ բանի. հայտնություն» (Ա. տ., էջ 12), *երեկորի* «երեկո» (Յհ. իմ. ատ., էջ 16), *զանազանություն* «տարբերություն. պեսպիսություն» (Ա. տ., էջ 10), *զառամանամ* «ծերանալ. զառամյալ դառնալ» (Ա. տ., էջ 3), *զուգաւորություն* «լծակցություն. ամուսնություն» (Ա. տ., էջ 11, 27), *թըմբրություն* «թմբիր, թմբելը. քնով ընկնելը» (Ա. տ., էջ 17), *ինքնակամություն* «ազատ կամք» (Յհ. իմ. երև., էջ 70), *խորհրդարան* «մարդու մտածելու միջոց. միտք. սիրտ» (Յհ. իմ. պաղ., էջ 46), *շար* (ի շար արկեալ, ի շարի հարեալ) «խոսքի հերթականություն՝ դասավորություն. հաջորդում. համար» (Յհ. իմ. երև., էջ 55, 75), *ուրթերեակ* «ուրթ, ուրթերորդ. ուրթյակ» (Ա. տ., էջ 84, 85), *ուրթորեայ* «ուրթ օրական. ուրթ օրվա ընթացք. ուրթերորդ օր» (Յհ. իմ. ատ., էջ 5, 6, 12, 32, Յհ. իմ. եկեղ., էջ 84), *վերելակ* «վրան նստողը՝ եղողը. ձիավոր, հեծյալ» (Յհ. իմ. ատ., էջ 3), *օրհներգություն* «օրհնության երգ. օրհնություն երգով. օրհնելը» (Ա. տ., էջ 19, այլև Յհ. իմ. եկեղ., էջ 90) և այլն:

բ) Ածականներ. *բարեվայելույ* «բարեհարմար. բարեձև» (Յհ. իմ. ատ., էջ 23), *գեղեցկակերպ* «գեղեցկատես» (Յհ. իմ. պաղ., էջ 41), *գերակայ* «աստիճանով բարձր» (Յհ. իմ. ատ., էջ 14, Յհ. իմ. եկեղ., էջ 84, 89), *երեկորին* «երեկոյան» (Յհ. իմ. ատ., էջ 5, 15, 21-23, Յհ. իմ. եկեղ., էջ 90, 91), *եօթնեակ* «յոթ (հատ)» (Յհ. իմ. ատ., էջ 9, 18), *թագաւորազն* «թագավորազգի» (Յհ. իմ. եկեղ., էջ 84), *ծաղկահաւաք* (Յհ. իմ. առ այն, էջ 99)¹, *կնաստ* «չնչին. վատթար» (Յհ. իմ. ատ., էջ 12), *հրաժարելի* «անհոժարելի. մերժելի» (Յհ. իմ. պաղ., էջ 41), *մարմնասպան* «անձնասպան. ինքնասպան» (Յհ. իմ. ատ., էջ 15), *որոգայթադիր* «չար բաներ հնարող, որոգայթ՝ ծուղակ լարող» (Ա. տ., էջ 11), *պարզևարաշի* «շնորհաբաշի. շնորհատու» (Յհ. իմ. պաղ., էջ 43), *տարացոյց* «տիպար, նմանություն» (Յհ. իմ. երև., էջ 65) և այլն:

գ) Բայեր. *առանձնաւորիմ* «ենթակայանալ. անձնավորել» (Յհ. իմ. երև., էջ 64), *աւետաւորեմ* «լուր՝ ավետիս տալ. ավետել (մեկին)» (Յհ. իմ. եկեղ., էջ 90, Յհ. իմ. միաշաբ., էջ 105), *բաղդաւտեմ* «համեմատել. կշռադատել» (Յհ. իմ. երև., էջ 60), *բաղկանամ* «բաղադրվել. կայանալ» (Յհ. իմ. եկեղ., էջ 82, 83), *բաղկացուցանեմ* «բաղադրել. զուգահարմարել՝ զուգադրել» (Յհ. իմ. ատ., էջ 23), *գոյացուցանեմ* «գոյավորել. կազմել, բաղադրել» (Ա. տ., էջ 14, Յհ. իմ. եկեղ., էջ 85), *դաստարկացուցանել* «անգործության մատնել» (Յհ. իմ. ատ., էջ 15), *խորհրդաբերեմ* «խորհուրդ՝ խորհրդով մեջտեղ բերել» (Յհ. իմ. եկեղ., էջ 82), *պարունակեմ* «ընդգրկել, ներառել» (Յհ. իմ. ատ., էջ 14, Յհ. իմ. պաղ., էջ 45), *վերաթեմ* «բարձրանալ. համբառնալ» (Յհ. իմ. ատ., էջ 19, Յհ. իմ. երև., էջ 57) և այլն:

դ) Մակբայներ. *այսպիսաբար* «այսպիսին» (Յհ. իմ. ատ., էջ 21), *երբէք* «երբեմն. լինում է որ» (Յհ. իմ. պաղ., էջ 44), *երեկորեայ* «նախորդ օրվա երեկոյան պահից՝ իրիկվանից» (Յհ. իմ. ատ., էջ

¹ ՆՀԲ-ն ունի Խոսար.[= Խոսարովիկ թարգմանիչ], որ է Օձնեցու գործածածը:

16, 17, 102), *պարզաբար* «լոկ. սոսկ» [Յհ. իմ. երև., էջ 77 (երկիցս)] և այլն:

ե) Նախադրություն. *գեղ* (հայց. հոլ. հետ) «ի վեր քան, առավել քան. գերագույն. «Բայց *գեղ* զասացեալսս վատթարագոյն ևս այս է մեղադրանաց փաստատր» (Յհ. իմ. առ., էջ 11): «Բայց ամպարշտագոյն *գեղ* զասացեալսս՝ այս էր հեթանոսականացն» (Յհ. իմ. պառ., էջ 36) և այլն:

4. Նոր (տորահայտ՝ ՆՀԲ-ում չվկայված) բառեր: Սրանք Օձնեցու երկերում գործածված այն բառերն են, որոնք ընդհանուր լինելուց բացի ըստ էության տերմիններ կամ տերմինային անվանումներ են, ժամանակի առումով և ըստ ըմբռնումների՝ նորություն: Եվ դա բնական է, որովհետև ամեն մի իմացություն, հիմնված ստեղծված ավանդույթի վրա, ճանապարհ է բացում դեպի հետագան, չի կարող աչքի չընկնել իր նորությամբ և թարմությամբ: Այս հատկանիշներն են, որ ենթադրում են նորի ձևակերպում համապատասխան լեզվական միջոցներով: Ըստ այդմ էլ Օձնեցու երկերում բազմիցս հանդիպում են նոր բառեր և տերմիններ, որոնք մեկ առ մեկ ներկայացրել ենք ժամանակին սույն երկի թարգմանությանը կցված ծանոթագրություններում, հոդվածներում՝ գտնելով, որ դրանք խիստ արժեքավոր են գիտաճյուղային տերմինաբանության և առհասարակ հայոց լեզվի պատմության առումով (*Օձնեցի*, 1999, 255-310. *Համբարձումյան*, 1997, 96-105)¹:

Ի համեմատություն ՆՀԲ-ի տվյալների՝ առանձնանում են նոր բառերի տարբեր խմբեր. հմնտ. *սոսանձնատրություն* «ինքնություն, իսկություն» (Յհ. իմ. երև., էջ 62)²:

Չունենք այլ միջոց, քան հին գրական հայերենի ամենաընդարձակ բառարանով (ՆՀԲ-ով) այդ բառերի՝ ժամանակի մեջ գործածության հավաստիությունը պարզելու, կամ դրա աստիճանը

որոշելու: Նման կացություն առաջ է գալիս գրական ամեն մի հուշարձանի բառապաշարի պատմության քննության դեպքում, Օձնեցու երկերի դեպքում ևս: Օր.՝ *անձրևահոս* «անձրևաբեր». «և ոչ զաստուածային շնորհացն բազմապատիկ պարգևս և զմեծ և զփրկական զխորհուրդն յինքեանս նախապատուօրէն ըստ զեղմանն *անձրահոս* ցողոյ, որ ռոռգեցան զանպտղութիւն մարդկան ի կռապաշտիցն երաշտութենէ՝ բողբոջեալ բուրեն ընդհանրական եկեղեցոյ» (էջ 192): *Ղօղակատել* «խուսափել, պառակտել». «Եւ զայդ այդպէս *ղաղակատելոյ*՝ Արիոսի եղեալ գտանիս չարապաշտութեանն զուգածայն» (Յհ. իմ. երև., էջ 69):

Ընդ որում ըստ խոսքիմասային բնույթի, բնականաբար, դրանք տարբեր են՝ գոյական, այլ բայ, ածական և մակբայ: Օր.՝ *գերակի* (գահ). «որ ի թագաւորական սենեակսն պռոյգեալ *գերակին* գահսն, բազմականացն բազմութենէն ասեմ» (Յհ. իմ. Հռիփս., էջ 139): *Վարարկեալ* (*վարարկել* «գործի դնել»). «և որ զկնի սաղմոսն պատմէ զանազան փորձութեամբն *վարարկեալ* որպէս վարմի» (Յհ. իմ. առ., էջ 83):

Այդպես նաև հետևյալները՝ ըստ առանձին խոսքի մասերի:

ա) Գոյականներ. *անուղղություն* «անճշտություն» (Յհ. իմ. խօսք., էջ 150), *սպակույանք* «ապակյա զարդեր» (?) (Յհ. իմ. Հռիփս., էջ 137), *աստուածամակոյկ* «վերին փրկություն» (և. տ., էջ 138), *արգանդապտուղ* «սերունդ» (Յհ. իմ. Գայ., էջ 145), *աւետարանություն* «ավետում, ավետելը, ավետարանելը» (Յհ. իմ. խոստ., էջ 198, Յհ. իմ. նախ., էջ 164)¹, *բացակէտ(ք)* «անտեսելը» (Յհ. իմ. Հռիփս., էջ 140), *բոլորասիրություն* «բարություն» (Յհ. իմ. նախ., էջ 165)², *բքսպտոյտ* «բուք» (Յհ. իմ. Հռիփս., էջ 135), *գոհարան*

¹ Օձնեցու երկերի նոր գրական հայերեն թարգմանության ծանոթագրության մեջ այս բառի փոխարեն տալագրական վրիպակով սպրդել է *աւետարանություն* (*ք*-ի փոխարեն *ք*) բառը:

² Գրական այս հուշարձանում եղած նոր բառերից հետագայում կազմված նույնպիսի բառարաններում վերցված են միայն այն բառերը, որոնք «Մատենա-

¹ Ի դեպ՝ այդ ծանոթագրություններում բերվող շատ միավորներ տեղ են գտել վերջին տարիներին կազմված բառարաններում՝ առանց հղումների:

² ՆՀԲ-ն այդ իմաստի համար նշում է հիշյալ հատվածը:

շան«գարդ» (Ա. տ., էջ 138), *դամետարում* (Յհ. իմ. նախ., էջ 156)¹, *դժասխորամանգություն* (փխ. կ-ով) (Ա. տ., էջ 171), *դիրակցություն* (Յհ. իմ. խոստ., էջ 149), *դրասխաստեսիլ* (Յհ. իմ. Հռիփս., էջ 138), *եռահրաման* (Յհ. իմ. նախ., էջ 164), *երագիկ (եղեն)«երագ»* (Ա. տ., էջ 161), *զինչկամություն* «ինչ-որ բանի կամենալը՝ կամեցողություն. բարեհաճություն» (Յհ. իմ. խոստ., էջ 192), *ընթերցարան* «ընթերցվելիք, սովորելու համար նախատեսված շարադրանք՝ գիրք» (Յհ. իմ. ընդդէմ, էջ 119, Յհ. իմ. սակս, էջ 493), *ըստերիտություն* «խեղաթյուրում» (Յհ. իմ. նախ. էջ 156), *թագագարդություն* «թագով զարդարվելը. թագադրում» (Յհ. իմ. երկբայ., էջ 131), *համահովիթ* (< համահովուաց) (Յհ. իմ. խօսք., էջ 151), *հրաթեւակառք* (< հրաթեւակառս). (Յհ. իմ. Գայ., էջ 145), *հրաշագանություն* «հրաշալիություն, սքանչելություն» (Յհ. իմ. երկբայ., էջ 131), *ձերբաձգություն* «ձեռքից ձեռք գցելը՝ անցնելը» (Յհ. իմ. պառլ., էջ 38), *դիրբեղոն* «գրքույկ. հրովարտակ. բողոքագիր» (< լատ. libellus «գրքույկ, տետրակ. նոթատետր. տոմսակ») (Յհ. իմ. նախ., էջ 172)², *յարակայեցումն* (Ա. տ., էջ 169), *յարայարումն* (Յհ. իմ. Հռիփս., էջ 134), *յաւտահրաշություն* (Յհ. իմ. նախ., էջ 165), *յետադարձություն* (Ա. տ., էջ 156), նախահաւաքումն «սկզբնապես իմի բերելը» (Ա. տ., էջ 156), *նարդոսահոտ* (Յհ. իմ. Հռիփս., էջ 139), *նեքրասնկություն* «ներս ընկնելը՝ խցկվելը» (Յհ. իմ. ատ., էջ 11), *շարակացություն* (Յհ. իմ. նախ., էջ 165), *ոտանաւորություն* «ոտքի վրա (կանգնած լինելը)» (Յհ. իմ. ատ., էջ 17), *չարագրություն* (Յհ. իմ. առ այն, էջ 99), *չրաջուր* «չրի հյութ» (Յհ. իմ. խօսք, էջ 154), *չքնադություն* (Յհ. իմ. Հռիփս., էջ 138, Յհ. իմ. նախ., էջ 169), *պեհոխոտմին* «թլփատություն». «զի կտակն Աբրահամու եւ արեւքն եւ մարգարէքն եւ *պեհ-*

գիրք հայոց»-ում տողատակին արդեն բերված են, որպիսով ընտրանքը ամբողջական չէ:

¹ «Մատենագիրք հայոց»-ի էջ 156-ի տողատակի լրացուցիչ բացատրությունը համոզիչ չէ (բառը չունեն ՆՀԲ-ն, Աճառյանի բառարանը):

² Հմմտ. «Մատենագիրք հայոց», հ. Է, էջ 172, տողատակի ծան. 2:

ոխոտմինն Քրիստոսի նոցա վկայէին» (Յհ. իմ. նախ., էջ 162)¹, *պերճահասություն* «շատախոսություն» (Յհ. իմ. պառլ., էջ 37), *սերմնահող* (Յհ. իմ. Գայ., էջ 147), *սկիզբնարարություն* (Յհ. իմ. նախ., էջ 163), *վաշմտություն* «վաշ՝ զղջումի զգացում ունենալը» (Ա. տ., էջ 165), *տարասություն* «կեղծավորություն, երեսպաշտություն» (Յհ. իմ. խոստ., էջ 195), *տրամագաղափարություն* «տարիմաստություն» (Յհ. իմ. նախ., էջ 169), *ունիցն* (Ա. տ., էջ 156)², *օձակարիճ* (Յհ. իմ. Հռիփս., էջ 137) և այլն:

բ) Ածականներ. *պէհորիտոր* (Յհ. իմ. Հռիփս., էջ 138), *սեղակայանք* «ձախ», (փխբ.) «վնասաբեր, մոլորյալ» (Յհ. իմ. երև., էջ 64,79), *աղանդախումբ* (Յհ. իմ. նախ., էջ 156), *անախտակրեղի* (Յհ. իմ. Հռիփս., էջ 134)³, *աներեսական* «չերևացող, ոչ բաց» (Յհ. իմ. առ այն, էջ 133), *աներկաւորեղի* (Յհ. իմ. նախ., էջ 163), *անըմբշամարտիկ* (Յհ. իմ. Հռիփս., էջ 139), *անընդդիմամարտ* «անընդդիմանալի. կովի ելնելու անընդունակ» (Յհ. իմ. պառլ., էջ 37), *անձրևահոտ* «անձրևաբեր» (Յհ. իմ. խոստ., էջ 192), *աշխարհափրկիչ* «աշխարհը փրկող» (Ա. տ., էջ 193), *սպականսարնակ* «ապականված՝ անմաքուր տեղում բնակվող» (Յհ. իմ. սակս, էջ 492), *առաջահատել* «դեմը կտող» (Յհ. իմ. նախ., էջ 165), *առաքելարարքառ* «առաքյալների կողմից ասվող՝ նրանց բերանով ասված» (Յհ. իմ. սակս, էջ 488), *առաքելասահման* (Յհ. իմ. նախ., էջ 164), *առոգածաւալ* «տարածված» (Յհ. իմ. Հռիփս., էջ 141), *աստուածախօսունակ* «ընդունակ՝ ի վիճակի խոսելու Աստծու հետ» (Յհ. իմ. յիշատ., էջ 116), *աստուածամակոյկ* «աստծու փրկության միջոց» (Յհ. իմ. Հռիփս., էջ 138), *արատասխոյզք* «արոտ փնտրող» (Ա. տ., էջ 135), *արգաւէտ* (գաւառ) «ցանկալի» (Ա. տ., էջ 134, Յհ. իմ. Գայ., էջ 143), *արդարա-*

¹ Հմմտ. «Մատենագիրք հայոց», հ. Է, էջ 162, տողատակի ծան. 3:

² Այն է՝ «այն, որ կարող են ունենալ». «որպէս ի վերայ առաքելոցն զանխրլացեալ են ամենեցուն վարդապետք եւ ոչ բաղդատին յոքունց նոյն միոյն ունիցն» (Հմմտ. «Մատենագիրք հայոց», հ. Է, էջ 162, տողատակի ծան. 5), եթե լատ. ստոմ «(միայն) մեկ» բառի մի ձևը չէ:

³ ՆՀԲ-ն ունի *անախտակիր*:

շահ «արդարամիտ» (Յհ. իմ. Գայ., էջ 147), *արտեմննագիր* «արտեմնագիր տանախմբությանը կարգ» (իմա՝ գրված՝ սահմանված) (Յհ. իմ. նախ., էջ 161), *արտեմննադիր* «տոնական կարգ՝ դրվածք» (ն. տ., էջ 161)¹, *արիհազան* (այրք) «արևատես» (Յհ. իմ. Գայ., էջ 145), *աւետազուարճ* «բարի լուրով ուրախացած» (Յհ. իմ. նախ. էջ 165), *աւետահրաշ* «լրավիր» (ն. տ., էջ 166), *բարեդոնական* «բարելոնյան, բարելական» (Յհ. իմ. առ., էջ 18)², *բարեխոնջ* «տեղին հոգնած» (Յհ. իմ. Գայ., էջ 143), *բարեսնդական* «լավ սնված» (ն. տ., էջ 143), *բարեսնդիկ* «լավ սնվող» (ն. տ., էջ 147), *բարձրահնջին* «բարձրածայն» (Յհ. իմ. գիշ. ժամ., էջ 110), *բացակետ(ս)* «հայտնի» (Յհ. իմ. Հոհիս., էջ 140), բիրաբաշխ «շատ մեծ չափով բաշխող» (Յհ. իմ. սակս, էջ 493), *բնադիր* «բնական և դյուրին. ի բնե հեշտ» (ն. տ., էջ 484), *գազանայրջ* (սենեակ) (փխ. առանց յ-ի), (Յհ. իմ. Գայ., էջ 143), *գառանեայ* «հինգ գառով պատարագ» (ն. տ., էջ 147), *գեղեցկական* (Յհ. իմ. Հոհիս., էջ 134), *գերագահ* (Յհ. իմ. Գայ., էջ 143)³, *գիշերամս* «մութ. մթամած գիշերվա պես խավար» (Յհ. իմ. խոստ., էջ 193), *գործայայտնիչ* (Յհ. իմ. Հոհիս., էջ 137), *գոնեկական* «գեղջկական, հասարակ» (Յհ. իմ. սակս, էջ 486), *գրատրական* (տառ) «տպագրական» (Յհ. իմ. նախ., էջ 156), *դաշարաբողբոջ* (Յհ. իմ. Գայ., էջ 144), *դեռահրաշ* (Յհ. իմ. նախ., էջ 166), *դիրակենցադիկ* «չափավոր» (Յհ. իմ. Հոհիս., էջ 135), *դրահտատեսիլ* «դրախտ հիշեցնող» (ն. տ., էջ 14138), *դրեմիսիս* «հոտած, գարշելի հոտ ունեցող» (Յհ. իմ. խոստ., էջ 193)⁴, *եղեմնասարշ*

¹ Այն է՝ «տեռագերծեալ զարտեմննադիր ընթերցուածոց զպատրուակեալ կեղծաւորութիւնս» (իմա՝ դրված՝ սահմանված), եթե բնագրի համակարգչային շարվածքի վրիպակ չէ:

² ՆՀԲ-ն չունի նաև *բարեդոնական* (դ-ի փոխարեն յ) ձև:

³ ՆՀԲ-ն ունի *գերագահություն*:

⁴ Այն է՝ «ի բաց տարեալ տրոհեսցի ի մէնջ այսպիսի դրեմիսիս և ապիրատ խորհրդոց առարկուածք»: Բառը թեև չունի ՆՀԲ-ն, սակայն գտնուում ենք Աճառյանի «Արմատական»-ում՝ վկայությամբ Անանիա Նարեկացու (X դ.) և Օձնեցու հիշյալ երկի (երկունս էլ տպագիր՝ Վաղարշապատ, 1892 և 1896 թթ.), իսկ իմաստի

«եղյամից դալկացած» (Յհ. իմ. Գայ., էջ 144)¹, *եռահրաման* «եռակի հրաման» (Յհ. իմ. նախ., էջ 164), *եռանդագործ* «ջանադիր» (Յհ. իմ. Հոհիս., էջ 138), *երեքգլխի* «երեքգլխանի» (Յհ. իմ. սակս., էջ 491), *երկակաց* «երկակի» (Յհ. իմ. առ այն, էջ 98), *երկնածինք* «երկնային» (Յհ. իմ. նախ., էջ 167), *զուարճագործ* «զվարճալի» (Յհ. իմ. Հոհիս., էջ 141), *թանձրադիտակ* «խստահայաց. մանրամասն դիտված» (Յհ. իմ. խոստ., էջ 192), *ժամանակապատում* (Յհ. իմ. նախ., էջ 156), *ինքնաբարբառ* «ինքնին խոսող, իր խոսքի համածայն» (Յհ. իմ. խոստ., էջ 194), *լայնապարիսպ* «լայն պարսպով պատված, լայն պարիսպ ունեցող» (Յհ. իմ. սակս, էջ 485), *ծառայատեսակ* «ծառայակերպ» (Յհ. իմ. Հոհիս., էջ 135), *կանեփայտ* «կանեփայտյա» (Յհ. իմ. խոսք, էջ 154), *կարկամածու* «սաստող» (Յհ. իմ. Հոհիս., էջ 135), *կարկիչ* «լռեցնող, սաստող» (Յհ. իմ. սակս, էջ 492), *կուսանայադթ* «(պատերազմ) կույսերի հաղթելուն մղված» (Յհ. իմ. Հոհիս., էջ 138), *հակասակ* «հակասող» (Յհ. իմ. խոստ., էջ 197), *համամեծարք* «ամբողջովին մեծարված» (Յհ. իմ. ընթերց., էջ 118), *համաստատական* «ամենուրեք փոփոխված, համատարած» (Յհ. իմ. սակս, էջ 488), *հայրապատրաստ* «հայրախնամ» (Յհ. իմ. ընթերց., էջ 115), *հաստայատակ* «ամուր՝ հաստատուն հատակ ունեցող» (Յհ. իմ. սակս, էջ 485), *հաստապատոճատ* «հաստատուն պատճառ ունեցող» (ն. տ., էջ 485), *հեռահիսակ* «հեռակազմ» (Յհ. իմ. նախ., էջ 166), *հնագիտագիր(ք)* «հնություններ պարունակող» (ն. տ., էջ 156), *հոգեթոնիչ* «հոգեկան, հոգեկից» (Յհ. իմ. Հոհիս., էջ 137), *հոգեպաճոյճ* (զարդ) «հոգեկից» (Յհ. իմ. նախ., էջ 169), *հոգիախառն* «հոգեղեն» (Յհ. իմ. Գայ., էջ 143), *հումնոնիմեայք* «ազգակից եղած» (Յհ. իմ. նախ., էջ 164), *հրաբորք* «հրաբորքը. կրակի պես վառ» (Յհ. իմ. խոստ., էջ 193), *հրաման* (իմա՝ հրանման հաւատ) «կրակի պես՝ վառ» (Յհ. իմ. ընթերց., էջ 113),

առանձնացումն ըստ Երեմիա Մեղրեցու (հմմտ. «Բառգիրք հայոց», Ե., 1975, էջ 83): Բառը կարող է հատուկ քննության (հմմտ. *Զահուկյան*, 2010, 207):

¹ ՆՀԲ-ն ունի առանց շ-ի, վկայ.՝ Ազաթ. [= Ազաթանգեղոս]:

հրաշայրյս «հրաշալի, լուսեղ» (Յհ. իմ. միաշաբ., էջ 101), *հրասյուրողական* «հրապուրիչ, խաբողական» (Յհ. իմ. երև., էջ 65), *հրեշտակաքարոզ* «հրեշտակների կողմից՝ բերանով քարոզվող» (Յհ. իմ. սակս., էջ 488), *ձեղունագարդ* (Յհ. իմ. Հռիփս., էջ 134), *ձեռնակարկամ* «ձեռքերը կարկամած» (Ա. տ., էջ 141), *դամկարունակ* «լամպը՝ ջահը պահող, ջահընկալ» (Յհ. իմ. առ., էջ 13), *մակագոյն* (հանդէս) «ամենավերին» (Յհ. իմ. Հռիփս., էջ 140), *մակադէտ* «վերադիտող» (Յհ. իմ. Գայ., էջ 143, 145), *մահորոճ* «մահ որոճացող՝ մտմտացող, մահաբեր» (Յհ. իմ. խոստ., էջ 193), *մարգարէափակ* «մարգարեններից սահմանված» (Յհ. իմ. սակս., էջ 484), *մարդակուր* «մարդակեր» (Յհ. իմ. Հռիփս., էջ 135), *մարմնագզեստեայ* «մարմին առած՝ մարմնացած» (Յհ. իմ. խոստ., էջ 194), *մեծաբաղիս* «ուժեղ կպչող» (Յհ. իմ. Գայ., էջ 145), *միագեղք* «միանման գեղեցիկ» (Յհ. իմ. ընթերց., էջ 118), *միասպակք* «նույն պսակով պսակված» (Ա. տ., էջ 118), *միատեղայ(ք)* «մեկտեղված(ներ)» (Յհ. իմ. սակս., էջ 478), *մշտայցոյց* «միշտ՝ մշտապես լցնող՝ ավելացնող» (Ա. տ., էջ 493), *մոլեդասան* «մոլեռանդ» (Յհ. իմ. նախ., էջ 156), *յառաձայն* (իմա՝ յառաձայն աւետիքն) «աղերսափայլ» (Յհ. իմ. ընթերց., էջ 114), *յառաջահատուակ* «առաջը կտրելով եկող» (Յհ. իմ. նախ., էջ 165), *յարայուցեայ* «մշտավառ» (Յհ. իմ. սակս., էջ 489), *յարայարմամբ* (< յարայարումն) «մշտավերացմամբ» (Յհ. իմ. Հռիփս., էջ 134), *յաւէտապարզեւ* «միշտ պարզևված» (Ա. տ., էջ 136), *յաւէրժագորով* «միշտ բարեխնամ» (Ա. տ., էջ 134), *յեղյեղուն* «խախտուտ» (Յհ. իմ. ընդդէմ, էջ 470), *յոզնասհոս* «հարահոս, առատ» (Յհ. իմ. խոստ., էջ 192), *յոզնասպանձ* (շնորհաւք) մեծապես պանծալի» (Յհ. իմ. Գայ., էջ 145)¹, *յուդայգումար* «նենգաժողով» (Յհ. իմ. Հռիփս., էջ 138), *նարդոսահոտ* «նապդոսի հոտն ունեցող» (Ա. տ., էջ 139, Յհ. իմ. Գայ., էջ 144), *նորարդար(ք)* «նոր արդարացող(ներ)» (Յհ. իմ. նախ. էջ 167), *նսեմատորոհ* «մթին տրոհվող»

(Յհ. իմ. Հռիփս., էջ 134), *ոսկիաճեմ* «գեղեցկաքայլ» (Ա. տ., էջ 136), *ուղղակարգ* «ուղղափառ, ճշմարիտ հավատքով կարգված» (Յհ. իմ. սակս., էջ 492), *ուղղայարդ* (Յհ. իմ. Հռիփս., էջ 135), *ուղումբրամած* «ուղումբրով մածուցված» (Յհ. իմ. նախ., էջ 156)¹, *չարակնադէտ* «չար աչք առած» (Յհ. իմ. Հռիփս., էջ 1387), *չարակնատես* «չար աչքով նայող» (Ա. տ., էջ 135), *չարահագագ* «չարախոս, չարաձայն» (Յհ. իմ. խոստ., էջ 193), *պալարագոյն* (սպի) «կոշտացած» (Յհ. իմ. Գայ., էջ 144), *պաստառագործ* «սփոռոց՝ ծածկոց գործող» (Յհ. իմ. Հռիփս., էջ 135), *պատկերագարդ* «նկարած» (Ա. տ., էջ 138), *պնդասիրտ* «տոկուն. դիմացկուն» (Յհ. իմ. Գայ., էջ 145), *պողսասայց* «մրգահաս» (Յհ. իմ. Հռիփս., էջ 141), *սահմանակի* «սահմանված» (Յհ. իմ. նախ., էջ 171), *սաղարթացից* «բարձրասաղարթ» (Յհ. իմ. Հռիփս., էջ 141), *սատանայապատիր* «սատանայից գերված» (Յհ. իմ. սակս., էջ 485), *սինհողիկեայ* «ժողովական՝ սինողական» (Յհ. իմ. նախ., էջ 170), *սրովքեազէն* «սերովբեով պաշտպանված» (Յհ. իմ. ընթերց., էջ 114), *վերագին* (հոգի) «մեծ՝ բարձր» (Յհ. իմ. Հռիփս., էջ 140), *վերակացիկ* «վեր ելած» (Յհ. իմ. նախ., էջ 170), *վերասայծառ* «գերապայծառ» (Յհ. իմ. խոստ., էջ 193), *վերջնորդ* «վերջին» (Յհ. իմ. խօսք., էջ 148), *վրիպատեսակ* «վրիպած» (Յհ. իմ. Հռիփս., էջ 139), *տառաթել* (անկուած) «տառահյուս» (Յհ. իմ. Գայ., էջ 146), *տղմաշաղախ* «տիղմով շաղախված» (Յհ. իմ. Հռիփս., էջ 137), *տրունաբեր* «մտահոգիչ, տրամեցնող» (Յհ. իմ. խոստ., էջ 192), *ցորենակերպ* «ցորենանման» (Յհ. իմ. նախ., էջ 156), *քակտուն* «քակտող. տրոհող, բաժանող» (Յհ. իմ. խօսք., էջ 151), *քաղցրագորով* «քաղցրալի» (Յհ. իմ. Գայ., էջ 144), *քաղցրասատում* «քաղցրաբան» (Յհ. իմ. խօսք., էջ 151), *քաջակերանայն* «քաջալերական» (Յհ. իմ. Գայ., էջ 143), *քառանձնեայք* «բազմաձն» (Յհ. իմ. նախ., էջ 171), *քառաշնորհ* «բազմաշնորհ» (Յհ. իմ. Գայ., էջ 145), *քերթողաժաղիկ* «երևելի գիտուն, ծաղիկ՝ քերթողների մեջ»

¹ ՆՀԲ-ն ունի *յոզնասպանձացեայ*, վկայ.՝ Գնձ. [= Գանձակեցի]:

¹ Այն է՝ «եւ եղ դերաքրիստոսն *գուղումբրամած* թագն ի գլուխին իւր եւ գահակալեցաւ»:

(Յհ. իմ. խոստ., էջ 195), *քողախնդիր* «պարզելի, քողագերծ անելի» (Յհ. իմ. նախ., էջ 157), *քրիստոսաբերան* «քրիստոսախոս» (Յհ. իմ. խօսք., էջ 151), *քրիստոսագան* «քրիստոսական» (Յհ. իմ. Գայ., էջ 143), *քրիստոսանիշ* «քրիստոսական» (Յհ. իմ. Հռիփս., էջ 136)¹, *քրիստոսաւետեայ(ք)* (< Քրիստոս ւետեմ) «Տիրոջ ավետող(ներ), գալստյան մասին լուր բերող(ներ)» (Յհ. իմ. սակս., էջ 489), *օձալեզու* (պատանօք) «նենգամիտ» (Յհ. իմ. Գայ., էջ 143), *օձակարիճ* «օձի և կարիճի նման» (Յհ. իմ. Հռիփս., էջ 137), *օրածին* «նոր-նոր ծնված, նորածին» (Յհ. իմ. խոստ., էջ 198) և այլն:

զ) Բայեր. *ախտածեւեմ* «ցավագար լինել. հիվանդանալ, ախտանալ» (Յհ. իմ. խոստ., էջ 193), *ամրապնդեմ* «ամրանալ, հաստատվել» (Յհ. իմ. սակս., էջ 484), *անգել* (Յհ. իմ. Հռիփս., էջ 139), *անդրանիւթեայ* «խեղաթյուրել» (Ա. տ., էջ 138), *անքակել* (< անքակեցալ) «անբաժան պահել» (Յհ. իմ. սակս., էջ 481)², *սպահովացուցանել* «ապահով դարձնել, ապահովել» (Յհ. իմ. պալ., էջ 36), *արտագրոհել* «վրա գնալ» (Յհ. իմ. Գայ., էջ 144), *արտողեցան* (< արտողել) «շեղել, թեքել» (Յհ. իմ. խօսք., էջ 150)³, *գերայարեմ* (-իմ) (< գերայարցե) «վերահարել» (Յհ. իմ. նախ., էջ 158), *երկնաւետեայ* (< երկնաւետել) «ի վերուստ ավետել» (Յհ. իմ. սակս., էջ 489), *եւածնեայ* (< եւածնանիլ) «ծնել» (Յհ. իմ. Հռիփս., էջ 135), *թաղանթեայ* (< թաղանթել) «թաղանթով պատել» (Յհ. իմ. խօսք., էջ 150), *թաղթաղել* «թալթել» (Ա. տ., էջ 152), *իրակերպին* (< իրակերպել) «իրականի տեսք տալ, իբրև իրական ձևակերպել» (Յհ. իմ. ընդդէմ, էջ 470)⁴, *խաչակերպեմ* «խաչաձևել» (Յհ. իմ. նախ., էջ 170)⁵, *ծաղկանեւեմ* «ծաղիկ տալ, ծաղկել» (Յհ. իմ. խոստ., էջ 193), *հազարատրեղ* (< հազարատրեալ) «հազարապատիկ մեծանալ» (Յհ. իմ. սակս., էջ 485, 493), *հրաշագաննել* «հրաշալի, սքանչելի անել» (Յհ. իմ.

նախ. էջ 165), *հրճուագործել* «հրճվալի դարձնել» (Յհ. իմ. Հռիփս., էջ 141), *ձեռնարկու(լ)ինիմ* «ձեռնամուխ լինել. ձեռնարկել» (Յհ. իմ. սակս., էջ 492)¹, *ճառարանեմ* «ճառով՝ մի ձևով խոսել» (Ա. տ., էջ 485), *մարմնագգեստեայ* «մարմին առած, մարմնացած» (Յհ. իմ. խոստ., էջ 194), *յարալուցեայ* (< յարալուցանեմ) «միշտ վառ պահած» (Յհ. իմ. սակս., էջ 489), *նախահաւաքել* «սկզբնապես իմի բերել» (Յհ. իմ. նախ., էջ 165), *ներկայացուցանել* «ներկայացնել» (Յհ. իմ. սակս., էջ 488), *նմանախօսել* (Յհ. իմ. նախ., էջ 157), *նոյնանալ* «նույնը լինել՝ դառնալ» (Յհ. իմ. խոստ., էջ 194), *շարագնդեմ* «համախմբել» (Յհ. իմ. նախ., էջ 168), *շարակել* (< շարակող «շարել, շարակցել») (Ա. տ.), *շարածզգրոնել* «մեկ առ մեկ ուղղել» (Յհ. իմ. նախ., էջ 163), *սնամիտ* (լինել) «դատարկախոս» (Յհ. իմ. խօսք., էջ 148), *ստորաքննեմ* «խորը՝ հիմնովին քննել» (Յհ. իմ. խոստ., էջ 192), *վայրագարկեմ* (ի վայր գարկանեմ) «գետնին խփել՝ զարկել» (Ա. տ., էջ 193), *վերջատանջեմ* «վերջին վնաս պատճառել. վերջնական հարված հասցնել» (Ա. տ., էջ 193)², *տրամագարդեմ* «բարեզարդել» (Յհ. իմ. Գայ., էջ 145)³, *քրտնահարեայ* «քրտնխաշ եղած» (Յհ. իմ. Հռիփս., էջ 141)⁴ և այլն:

դ) Մակբայներ. *աղերսարար* «աղերսի ձևով» (Յհ. իմ. Գայ., էջ 143), *անխոստովանարար* «անզոջում ձևով» (Յհ. իմ. սակս., էջ 486), *անյիշատակարար* «առանց հիշատակի՝ անհիշելի ձևով» (Ա. տ., էջ 485), *անջօրաի* «անիմացաբար» (Յհ. իմ. խոստ., էջ 197), *անցատրարար* «անցողակի» (Յհ. իմ. նախ., էջ 165), *առողղեկանարար* «ժամանակավոր» (Ա. տ., էջ 165)⁵, *առասանակարար* «բարակ լարի՝ պարանի նման» (Ա. տ., էջ 156), *աստուածասիրարար* «աստ-

¹ ՆՀԲ-ն ունի՝ *քրիստոսանչան*:

² ՆՀԲ-ն ունի միայն *անքակտելի*:

³ ՆՀԲ-ն ունի՝ *արտուղի, արտուղութիւն*:

⁴ ՆՀԲ-ն ունի՝ *իրակերպութիւն*:

⁵ ՆՀԲ-ն ունի *խաչակերպ*:

¹ ՆՀԲ-ն չունի նաև առանձին՝ *ձեռնարկու*.

² ՆՀԲ-ն ունի *վերջատանջ*, իբրև քերականական տերմին (ըստ Թրակ. քեր.):

³ ՆՀԲ-ն ունի *տրամագարդութիւն*:

⁴ ՆՀԲ-ն ունի *քրտնահար*:

⁵ ՆՀԲ-ն ունի *առողղեկան* «առժամանակյա»՝ ըստ Նար. յիշ. [= Նարեկացի, Յիշատակարան. որ բառարանը մատենագիտական ցանկում չի նշում]:

ծու՝ Տիրոջ հանդեպ սեր ունենալու ձևով» (Յհ. իմ. խոստ., էջ 192), *բարժանաբար* (փխ. առանց *բ*-ի) (Յհ. իմ. սակս, էջ 482)¹, *ենթաառարար* (փխ. *դ*-ով), (Յհ. իմ. նախ., էջ 156), *երախայայալէս* «երեխայի նման», «չմկրտված ձևով» (Յհ. իմ. սակս, էջ 486), *միսալէս* «իրար նման, միօրինակ» (ու. տ., էջ 485), *յարակացարէն* «միշտ» (Յհ. իմ. նախ., էջ 165), *յարսձգարար* «մշտապես առաջ տանելու նման» (Յհ. իմ. սակս, էջ 489), *յարեյարար* «հարակցելով, հարելով» (Յհ. իմ. խոստ., էջ 193), *նեստորարար* «Նեստորի նման. Նեստորի աղանդի հետևությամբ» (ու. տ., էջ 195), *ներհունապէս* (Յհ. իմ. նախ., էջ 156), *ոյքնապէս* (<ոյք> «որ են» («հետագաւտել ներհունապէս ... ոյքնապէս գեպիփան...») (ու. տ., էջ 156), *չարափառապէս* «չարափառ՝ սնափառ ձևով» (Յհ. իմ. խոստ., էջ 195), *վերջնումն* «վերջում» (Յհ. իմ. առ., էջ 21), *վկայարար* (Յհ. իմ. նախ., էջ 165) և այլն:

5. ՆՀԲ-ում միայն Օձնեցուց բերված բառեր: Սրանք յուրովի նոր են, քանի որ բառարանագրված են, սակայն միայն մեր այս հեղինակի երկերի բառապաշարի տվյալների հիման վրա:

Եթե մի պահ, անցանկալիորեն, բացառելու լինենք այդ երկերն՝ առհասարակ, կամ նրանց բառապաշարն՝ առանձնապես, հարկադրված ենք լինելու ասելու, թե հայերենում նման բառեր գոյություն չունեն կամ բառարանագրորեն չկան: Այնինչ, դրանք, փաստորեն, կան, համալրում են հայերենի ընդհանուր բառապաշարը:

Ուստի այս նկատառումով և ավելի մեծ վերապահությամբ նման բառերը պիտի առայժմ համարենք նոր կամ նորակերտ, մինչև որ հայերենի ողջ բառապաշարը հնարավոր կլինի մանրամասն, բառագիտորեն-պատմականորեն քննության առնել. դա հեռանկարային է: Օր.՝ *աղօտանձանչ* «թույլ վառվող, մլմլացող (շողք՝ լույս)». «Զի որպէս ի խաւարի և *աղօտանձանչն* է պատուելալ լոյս» (Յհ. իմ. առ., էջ 6): *Բերանալուծութիւն* «պասը լուծելը,

¹ ՆՀԲ-ն ունի *բաժանաբար*, որ հին է, և ի թիվս այլոց նաև վկայ. Յհ. իմ. առ.:

կտրելը». «Որպէս թէ ընդ անգործութիւն և ընդ *բերանալուծութիւն* խառնել և զքնոյն խորութիւն և զգինեճանութեանն որովայնամոլութիւն» (ու. տ., էջ 15): *Հօտալատնիչ* «հոտը պակասեցնող՝ վատնող, փչացնող». «Զի՞նչ զոտսա անուանեցից. հովի՞ւս *հօտալատնիչս*, եթէ գազանս կեղեքիչս խաշանց» (ու. տ., էջ 11) և այլն:

Այսպես նաև հետևյալները՝ ըստ առանձին խոսքի մասերի:

1) Գոյականներ. *սիեկակողմն* «ճախ կողմը. մոլորյալ՝ սխալված լինելը» (Յհ. իմ. առ., էջ 15), *աղտախիւնք* «աղտեղություն. արատներ» (Յհ. իմ. պառ., էջ 39), *ամուսնաորութիւն* «ամուսնություն» (Յհ. իմ. առ., էջ 27), *աստուածաբոյլ(ք)* «աստծով ի մի եկած. սրբագումար» (Յհ. իմ. սակս, էջ 489)¹. *աստուածաժողիկ(ք)* «աստծով ծաղկած՝ ստեղծված» (ու.տ.)², *արուեստարան* «արհեստանոց, վարժարան, արհեստի և ուսման վայր» (Յհ. իմ. երեւ., էջ 64), *բագմերախտութիւն* «բագմերախտ լինելը. մեծ երախտիք» (Յհ. իմ. առ., էջ 11), *բողոքագիշեր* «ամբողջ գիշեր» (ու. տ., էջ 16)³, *գինեճանութիւն* «գինովություն. հարբեցողություն» (ու. տ., էջ 15), *գիշերապաշտութիւն* «գիշերվա ժամի աղոթք՝ պաշտոն» (Յհ. իմ. միաշաբ., էջ 103, Յհ. իմ. ընթերց., էջ 115)⁴, *դժոխականութիւն* «դժկամություն. ստահակ լինելը» (Յհ. իմ. առ., էջ 3), *երագաշարժութիւն* «արագաշարժ լինելը» (Յհ. իմ. պառ., էջ 36), *երախայութիւն* (< երախայ) «հրահանգ՝ մկրտության (համար)» (հուն. *κατήχησις, κατήχησις, լատ. catechesis, institutio*) (Յհ. իմ. առ., էջ 8, 9, Յհ. իմ. սակս, , էջ 489, 490)⁵, *երկրորդանք* «երկրորդ անգամ ամուսնացած(ներ). երկ-

¹ ՆՀԲ-ն ունի. միայն Ոսկեփորիկ. այս օրինակը, որ վերցված է Օձնեցու հենց այս նախադասությամբ՝ «Ոչ ևս կոչին երեխայք, այլ հոյքք աստուախաբոյլք, և տունկք աստուածաժողիկք», և դա ապացույց է, որ հեղինակի «Սակս»-ը մտել է նաև Ոսկեփորիկ ժողովածուի մեջ:

² Նույնը, ինչ նախորդ ծանոթ.:

³ Իսկ մյուս՝ «Կարգք եկեղեցւոյ» երկում՝ *բողոք գիշեր* (բառակապակցություն (հմմտ. ՆՀԲ, 1, էջ 501):

⁴ ՆՀԲ-ն բերում է միայն Օձնեցու մյուս (Յհ. իմ. եկեղ.) երկը:

⁵ Ըստ ՆՀԲ-ի՝ «իրահանգութիւն ի պէտս մկրտութեան. որ ասի ի մեզ և Կոչումն ընծայութեան. որպէս է տեսանել ի գիրս Կիւրդի Երուսաղէմացւոյ» (հ. 1,

բորդ պսակ (Յհ. իմ. ատ., էջ 11), *խաչամարտություն* «Քրիստոսի խաչի դեմ մարտնչելը» (Յհ. իմ. պաղ., էջ 34), *խեղերանք* «խշրանք. փշրանք» (Ա. տ., էջ 39), *ծննդակերություն* «իր ծնունդը՝ պտուղն ուտելը» (Ա. տ., էջ 38), *կատուապաշտություն* «կատու պաշտելը» (Ա. տ., էջ 36), *կերակրատիրություն* «փոխել կերակուրը դեպի լավը, կերակրի բարելավում» (Յհ. իմ. ատ., էջ 16), *կիրքնդունակություն* «Աստծու խոսքին ենթակայություն» (Յհ. իմ. եկեղ., էջ 91, Յհ. իմ. առ այն., էջ 97)¹, *կռուարարություն* «կռիվ առաջ բերելը. կովարար լինելը» (Յհ. իմ. պաղ., էջ 37), *համախոհակ* «համախոհ. նույն կերպ մտածող» (Ա. տ., էջ 46), *ճոճանակ* «գավազան. (ճկուն) ոստ(եր)՝ քոց» (Յհ. իմ. ատ., էջ 32), *մայրապականություն* «մորը պղծելը (նկատի ունի Միհրին)» (Յհ. իմ. պաղ., էջ 38), *մարմնամոլություն* «որովայնամոլ լինելը» (Յհ. իմ. ատ., էջ 10), *միանձնակալություն* «միասնական հոգի՝ միահոգիություն» (Յհ. իմ. երև., էջ 52), *մկնորասկ* «մկներ որսացող. կատու» (Յհ. իմ. պաղ., էջ 37), *մկրտատուն* «մկրտության տեղ» (Յհ. իմ. երև., էջ 26), *ներխնելություն* «լինելություն՝ լինելը. ծնունդ» (Ա. տ., էջ 67, 76), *ներխորհուրդ* (> ներխորհրդում) «ներքին՝ բուն խորհուրդ. գաղտնի խորհուրդ անող» (Յհ. իմ. երև., էջ 61), *նշանապաշտություն* «սուրբ նշանի պաշտելը. խաչապաշտություն» (Յհ. իմ. պաղ., էջ 35), *նսիր* «(ծանր) գործ, (գործի) ծանրությունը» (Յհ. իմ. ատ., էջ 15)², *շարաբարձում* «բացառում» (Յհ. իմ. երև., էջ 56), *ուղղասացություն* «ողջամիտ վարդապետություն» (Ա. տ., էջ 66), *ունգնադրություն* (փխ. կով) «հնազանդ լինելը. ականջ անելը» (Յհ. իմ. եկեղ., էջ 97), *չարապաշտություն* «չար մոլորություն, չարիք, չարին ծառայելը»

էջ 667): Բնագրի էջ 9-ում կա նաև *երեխայություն* (տե՛ս ստորև): ՆԲԳ-ն (= «Նորահայտ բառեր գրաբարում») բերում է իբրև նոր բառ՝ վկայակոչելով «Գիրք թղթոց»-ին (Յհ. իմ. սակ., 489), որ վերանայելի է:

¹ ՆՀԲ-ում բառը հոմանիշ է *կիրառություն* (վկայ.՝ Թեոդոր. Մայրագում.) և *կիրքնկալություն* (վկայ.՝ հետին) բառերի, բերվում է ըստ *Յհ. իմ երև.* բնագրի:

² ՆՀԲ-ն ենթադրում է իրան. փոխառություն:

(Յհ. իմ. պաղ., էջ 36, 46, Յհ. իմ. երև., էջ 69)¹, *չարարարություն* «չարագործություն» (Ա. տ., էջ 41), *չափաորագոյն* «խիստ չափավոր. նվազ» (Յհ. իմ. ատ., էջ 14), *պայդակենություն* «վատթարություն» (Յհ. իմ. պաղ., էջ 39), *պատրողաբանություն* «ստահող՝ խաբեական խոսք» (Ա. տ., էջ 38), *սահանսագլուխ* (Յհ. իմ. սակ., էջ 476)². *վայասացություն* «ողբ անելը. վայ ասելը» (Յհ. իմ. երև., էջ 66), *վնասահարություն* «վնաս տալը. չարը գործելը» (Յհ. իմ. պաղ., էջ 41), *տարրատուրություն* «տարրապաշտություն» (Ա. տ., էջ 41), *փարում* «գուրգուրանք. գգվելը» (Յհ. իմ. միաշաբ., էջ 105), *քայրամանեակ* «քայռ, վզնոց, կանացի զարդ» (Յհ. իմ. ատ., էջ 1), *քնարահարու* «քնար՝ փանդիռ նվագող (անձ)» (Ա. տ., էջ 20), *օրէնազանցություն* // *օրէնազանցություն* «օրինազանցություն, անօրինապահ լինելը» (Ա. տ., էջ 12)³ և այլն:

2) Ածականներ. *ախտաբոյժ* «ախտը բուժող. ցավն ապաքինող» (Յհ. իմ. պաղ., էջ 36), *աղանդապետական* (< աղանդապետ) «աղանդներին վերաբերող» (Ա. տ., էջ 38), *աղտախինք* «աղտեղություն, աղտ, արատ» (Ա. տ., էջ 39), *աղօտանձանչ* «թույլ վատվող, մլմլացող» (Յհ. իմ. ատ., էջ 6, 22), *անեղագոյն* «անեղ. անծին» (Յհ. իմ. երև., էջ 50, 64), *անըստերիւրող* // *անստերիւրող* «անխոտոր, անվրեպ. անսխալ» (Յհ. իմ. ատ., էջ 15, Յհ. իմ. երև., էջ 56), *անկատարելագործ* «չավարտված. անկատար թողնված» (Յհ. իմ. ատ., էջ 11), *անկարածածկելի* «անթաքչելի. բացահայտ» (Յհ. իմ. պաղ., էջ 38), *անհանճարեղագոյն* (< անհանճարեղ) «առավել անհանճար. ավելի անխելք» (Յհ. իմ. ատ., էջ 3), *աններկանալի* «անձեռնմխելի, անկապտելի» (Ա. տ., էջ 13), *անշարժահիմ* «անհիմնաշարժ, հիմքը դժվար կամ ոչ հեշտ շարժելի, անշարժելի»

¹ Ի դեպ՝ ՆՀԲ-ն նշում է, որ բառը հանդիպում է նաև *չարապաշտություն* ձևով, որ Օձնեցու օրինակների մեջ չի հանդիպում:

² ՆՀԲ-ն ունի՝ միայն Ոսկեփորիկ. բերվում է հենց մեր այս բնագիր օրինակը:

³ ՆՀԲ-ն տալիս է նախ «Կանոնք» (Օձնեցու կազմած), այնուհետև բերված օրինակը:

(Ա. տ., էջ 7), *անչարաբարոյական* «բարեբարո, բարեսեր, ողջամիտ» (Յհ. իմ. երև., էջ 58), *անպատկաստացոյց(ք)* «անամոթ, ազատադէմ» (Յհ. իմ. պաղ., էջ 38, Յհ. իմ. երև., էջ 57)¹, *անսին* «չսնված. անաճ» (Յհ. իմ. առ., էջ 9), *անտարակարծ* «աներկմիտ. հավաստի» (Յհ. իմ. երև., էջ 56), *ապականահալած* «ապականությունը՝ վախճանը հալածող՝ քշող» (Յհ. իմ. առ., էջ 22), *առաւելագանց* «ծայրահեղ. չափից ավելի անցած» (Ա. տ., էջ 15, Յհ. իմ. երև., էջ 76), *առաւելաշնորհ* «շնորհալից. առավել շնորհալի» (Յհ. իմ. երև., էջ 71), *բազմազն* «բազմազգի, բազմացեղ» (Ա. տ., էջ 50), *բազմաշաւիղ* «այլևայլ՝ մի քանի շավիղով գնացող» (Յհ. իմ. առ., էջ 4), *բայեվայեչական* «բարեվայելուչ. բարեձև, բարետես» (Ա. տ., էջ 11), *բարեքան* «բարվոք ձև ունեցող. բարեձև» (Ա. տ., էջ 41), *բացայտակի* «բացահայտ. անթաքույց, առանց որևէ պատրվակի» (Յհ. իմ. պաղ., էջ 37, Յհ. իմ. երև., էջ 68), *բոցային* «հրեղեն, լուսեղեն, բոցեղեն» (Յհ. իմ. առ., էջ 13), *գազանասնոյց* «գազան սնուցող. գազան կտրող» (Յհ. իմ. պաղ., էջ 37), *գեղեցկանուագ* «ախորժաւոր» (Յհ. իմ. առ., էջ 13), *գետնաթաւալ* «գետնին թավալվելով՝ թավալված» (Յհ. իմ. պաղ., էջ 38), *գերակացեալ* (անդամ) «գլուխ. գլխավոր (մաս)» (Ա. տ., էջ 46), *դեռահաւակ* «նոր սկսած» (Յհ. իմ. առ., էջ 6), *դժոխատեղի* «խիստ դժնդակ համարվող. դժոխքից էլ դժնի» (Ա. տ., էջ 12)², *դժոխաշարժելի* «անդյուրաշարժ, դժվար շարժելի» (Ա. տ., էջ 7), *դժուարադիտելի* «դժվար հասկանալի՝ ըմբռնելի» (Ա. տ., էջ 13), *դիապաշտ* «դևին, չաստվածներին ծա-

¹ Բարը հանդիպում է երկու անգամ, մեկն՝ այստեղ, իսկ մյուսը՝ «Ընդդէմ պառլիկեանց»-ում: Մկ. Ավգերյանը հետևյալն է գրում. «Այստեղ գործածում է Իմաստասերը սուրբ հայրերի վերաբերյալ՝ նշանակելու նրանց համարձակ խոստովանությունը, իսկ «Ընդդէմ պառլիկեանց»-ում՝ ցույց տալու հերետիկոսների անամոթությունը» (տե՛ս Վեն., 1807, էջ 27):

² Օձնեցու «Մատենագրութիւնք»-ի 1833 թ. տպագրության մեջ *դժոխատեղի* է («Եւ դժոխադատելի յոյժ է պահանջիլ համարս այնմիկ՝ որում ամենայնքն յայտնիք են և անմոռանալիք»), որը ՆՃԲ-ում վրիպակով տպագրված է *դժոխասակելի* (տ-ի փոխարեն ս) (հ. 1, էջ 615, 2-րդ պոնակ):

ռայող» (Յհ. իմ. պաղ., էջ 37), *եռատեսակ* «երեք տեսակ(ի)» (Յհ. իմ. երև., էջ 70), *երագագրաւելի* «անմիջապես ավարտելի, առժամյա, հարևանցի» (Յհ. իմ. առ., էջ 5), *երագոտնագոյն* «հապճեպ, արագ-արագ» (Ա. տ., էջ 11), *երեկանհրհասէր* «նախքան գիշերը քնել սիրող (անձ)» (Ա. տ., էջ 17, Յհ. իմ. երև., էջ 76), *երեւութական* «այլադավան. առաչոքյանք» (Յհ. իմ. երև., էջ 48, 53, 70), *երկուտեսակ* «երկու տեսակ՝ կերպ» (Յհ. իմ. պաղ., էջ 43), *զուարթաթոյիչ* «թոչելու մեջ աշխույժ» (Յհ. իմ. եկեղ., էջ 92), *զուգարանակ* «քանակով հավասար. նույն չափով» (Յհ. իմ. առ., էջ 20), *թագառու* «թագավորից թագ ստացող. փեսայացող» (Ա. տ., էջ 11), *թարախածուծ* «շարավ՝ ապականված արյուն ծծող. տգրուկ» (Յհ. իմ. պաղ., էջ 36), *ժողովրդաբնակ* «մարդաբնակ» (Ա. տ., էջ 39), *ծոմական* «ծոմին վերաբերող. ծոմի» (Յհ. իմ. առ., էջ 15), *կայծակնահանու* «կրակ ցայթեցնող. կայծակող» (Յհ. իմ. պաղ., էջ 38), *կենսատաք* «կյանքի կոչող, դեպի կյանք առաքող» (Յհ. իմ. առ., էջ 13), *կիսաբաժ* «կիսով չափ, կես չափով, կիսակատար» (Յհ. իմ. երև., էջ 59), *համալծորդ* «լծակից, գործակից» (Յհ. իմ. երկբայ., էջ 124), *համախոհակ* «համակամ, միակամ» (Յհ. իմ. պաղ., էջ 46), *հայրասէր* «իր հորը սիրող՝ հարգող» (Յհ. իմ. առ., էջ 8), *հանապազափակ* «միշտ փակ՝ փակված» (Ա. տ., էջ 10), *հանգիտատիպ* «նմանատիպ. նույնը» (Ա. տ., էջ 4), *հեղեղական* «հեղեղիչ» (Յհ. իմ. պաղ., էջ 39), *մահալոյծ* (նաև՝ մահալուծող, մահալուծիչ) «մահը հեռացնող՝ վերացնող» (Յհ. իմ. առ., էջ 13, նաև 22), *միալուծ* «միասին լծված. միայնակ լուծ քաշող. անընդհատ» (Ա. տ., էջ 21), *յարաբացուն* «միշտ բաց» (Յհ. իմ. յիշատ., էջ 116), *յարատեղողագոյն* «ավելի հարատևող» (Յհ. իմ. երև., էջ 69), *յաւէժակից* «մշտապես կից՝ միասին» (Ա. տ., էջ 65), *յիմարամիտ* «ոչ խելոք մտածող» (Ա. տ., էջ 61), *նախընտիր* «ընտրելագույն, նախընտրելի» (Յհ. իմ. սակս, էջ 474)¹,

¹ ՆՃԲ-ն ունի միայն այս օրինակը («Բաշդ յիմաստակս և նախընտիրդ ի վարդապետս»)՝ նշելով Ոսկեփորիկ:

Նեխաշաղիղ «մեռած մարմնի՝ դիակի նեխածություն ունեցող» (Յհ. իմ. պաղ., էջ 39), *նեքքասծողական* «օտար. մեջբերված» (Յհ. իմ. երեւ., էջ 69), *նորավարժ* «նոր վարժված՝ ընտելացած» (Յհ. իմ. ատ., էջ 3), *նզեհաշմ* «հոգով խեղված» (Յհ. իմ. պաղ., էջ 41), *ողբերգագին* «ողբերգական, լալագին» (Յհ. իմ. եկեղ., էջ 87, 89, Յհ. իմ. միաշաբ., էջ 103), *որումսացանու* «չարի սերմ տարածող անձ» (Յհ. իմ. երև., էջ 66), *ուժընդակի* (փխ. առանց ը-ի) «ուժգին. ուժգնակի» (Յհ. իմ. միաշաբ., էջ 101), *պաշտօնամատոյց* (լինել) «ծառայություն մատուցել» (Յհ. իմ. պաղ., էջ 37), *պատգամատար* «լուր՝ պատգամ տանող. աստծուց նշանակված հրամանատու» (Յհ. իմ. ատ., էջ 2), *պտղաբերիչ* «պտուղ բերող՝ տվող» (Ա. տ. էջ 14), *վաթսնականգնեսն* «վաթսուն կանգունի չափով» (Յհ. իմ. պաղ., էջ 36), *վերերգակ* «բարձրացող՝ վերընթաց ձայնով երգվող» (Յհ. իմ. ատ., էջ 29), *վեցաքանակ* «վեց չափով. քանակը՝ վեց. վեցյակ» (Յհ. իմ. պաղ., էջ 36), *վրիպանուն* «սուտ, ստահող. կեղծ» (Ա. տ., էջ 38), *տարանջատական* «տարանջատ, բաժան՝ բաժանված» (Ա. տ., էջ 47), *տզոր* «անզոր. թույլ, տկար» (Յհ. իմ. ատ., էջ 12), *ցաւահալած* «ցավը վանող՝ փարատող, վանող» (Յհ. իմ. պաղ., էջ 36), *փրիբերախ* «բերանը փրփրած. գայրացկոտ» (Ա. տ., էջ 38), *քաջախօսնակ* «համարձակ խոսող. քաղցրախոս» (Ա. տ., էջ 37), *օգտամատոյց* «խելամիտ, օգտակար» (Յհ. իմ. ատ., էջ 8) և այլն:

3) Բայեր. *առփորձիմ* «փորձել, ձեռնարկել» (Յհ. իմ. երև., էջ 61)¹, *բոնարկեմ* (< բոնարկեալ) «ձեռնարկել, նախատեսել» (Յհ. իմ. միաշաբ., էջ 104), *գեղեցկաձայնել* (< գեղեցկաձայնեալ) «գեղեցկորեն հնչեցնել» (Յհ. իմ. ատ., էջ 20), *գերաստիճանեալ* «ամենաբարձր աստիճանի բարձրացված» (Ա. տ., էջ 20), *երագագրաւելի* «հապճեպ ավարտելի. հարևանցի» (Ա. տ., էջ 5), *զինագարդեալ* (< զինագարդել) «զինված» (Յհ. իմ. պաղ., էջ 46), *ժուայթեմ* «շվայտանալ. բորբոքվել՝ չափից ավելի ուտելուց» (Ա. տ., էջ 38), *խաղա-*

ղասիրել «խաղաղ հակում ունենալ. սիրով վարվել» (Յհ. իմ. ատ., էջ 19), *ծամածոել* «կամակորել, խեղաթյուրել» (Յհ. իմ. պաղ., էջ 45), *ծմրդիլ* «խիստ ծմրել՝ ճմրել. ծմրկտալ» (Ա. տ., էջ 41), *հարագատանամ* «հարագատ՝ բնորոշ լինել» (Յհ. իմ. ատ., էջ 16), *ներկագմել* «կազմել, հորինել» (Ա. տ., էջ 20), *ներհորդիմ* «առաջ խաղալ. հորդանալ» (Ա. տ., էջ 11), *ներքատակեմ* «նմանեցնել» (Յհ. իմ. եկեղ., էջ 67), *ողբաձայնել* «ողբական ձայնով նվագել» (Յհ. իմ. ատ., էջ 20), *պաշտօնամատոյց* (լինել) «ծառայություն մատուցել» (Յհ. իմ. պաղ., էջ 37), *վերտունել* «ոտ-ոտ բարձրանալ՝ վեր ելնել» (Յհ. իմ. ատ., էջ 20), *ցանկասիրել* «ցանկանալ, ցանկություն ունենալ» (Ա. տ., էջ 22), *փոխաբուսանիմ* «այլ տեսք՝ բնույթ ստանալ. փոխվել» (Յհ. իմ. երև., էջ 51), *փրկանատրեմ* «ազատել՝ փրկագին տալով» (Յհ. իմ. ատ., էջ 21), *քնարահարու* (լինել) «քնարահար, քնար՝ փանդիոն նվագող (լինել)» (Ա. տ., էջ 20) և այլն:

4) Մակբայներ. *այլաձևապէս* «այլ կերպ, տարբեր եղանակով» (Յհ. իմ. ատ., էջ 5), *անընդհատաբար* «անընդհատ, մշտապես» (Ա. տ., էջ 17), *արձակապէս* «արձակ. անխափան. պարզապես» (Յհ. իմ. եկեղ., էջ 85), *(ի) բարձուստ* «ի վերուստ. վերևից» (Յհ. իմ. երև., էջ 77), *բացայայտակի* «բացահայտ. ակնհայտ ձևով» (Յհ. իմ. պաղ., էջ 37, Յհ. իմ. եկեղ., էջ 83), *երկպատկաբար* «կրկնապատիկ, կրկնակի, երկու կերպ» (Յհ. իմ. պաղ., էջ 43), *զուգակենակցաբար* «զուգակից կյանքով. զուգակցի հետ կյանք կապելով» (Յհ. իմ. երև., էջ 68), *յետամուտականաբար* «հետամուտ ձևով» (Ա. տ., էջ 68), *նոյնաձևաբար* «նույն ձևով, նույն կերպ» (Յհ. իմ. պաղ., էջ 35), *նոյնաձևապէս* «նույն ձևով, նույնաբար» (Յհ. իմ. երև., էջ 69, 73)¹, *ուժընդի* «ուժգին, ուժգնակի» (Յհ. իմ. միաշաբ., էջ 101) և այլն:

6. ՆՎԲ-ում ժամանակի առումով այլևայլ ձևերով բերված բառեր: Մի կողմ թողնելով այն բառերը, որոնք ՆՎԲ-ում

¹ Հունարան ոճով սաված:

¹ ՆՎԲ-ն վկայակոչում է նաև Խոսարովիկ:

կան նախորդող հեղինակների և Օձնեցու երկերի վկայաբերմամբ (դրանք ևս բառարանում բավականին մեծ թիվ են կազմում, որոնք ենթադրում են առանձին քննություն), մնացածները, իրենց հեթին, բաժանվում են մի քանի խմբի, որ ստորև կարելի է բերել առանձին-առանձին:

ա) *Նախ Օձնեցուց, այնուհետև հետագա հեղինակ(ներ)ից բերված բառեր*: Նման բառերը քիչ չեն, ՆՀԲ-ում զբաղեցնում են զգալի տեղ: Դրանք ևս, բնականաբար, պայմանականորեն պիտի համարվեն այս հեղինակի բառապաշարին յուրահատուկ խումբ՝ այնքան ժամանակ, մինչև որ մատենագրական այլ երկերի բառապաշարի քննությամբ կատարվեն ժամանակային ճշգրտումներ: Իսկ դա վերաբերում է գրական հայերենի պատմության ավելի լայն ուսումնասիրության ապագային, որն անհնարին չէ: Օր.՝ *կեղակարծ* «կասկածելի. երկբայական». «Զարմանամ ընդ այսպիսի *կեղակարծ* և գայթ ի գայթ խոստովանութիւն» (Յհ. իմ. երև., էջ 62): *Նախահաւեմ* «սկսել, սկիզբ առնել». «Այլ գոր ասեմս, այս նախնական սովորութիւն ի վաղընջուց հետէ *նախահաւեայ*, և մինչև առ մեզ հասեալ» (Յհ. իմ. առ., էջ 12): *Փառագարդութիւն* «փառապանծություն. փառավոր գործ». «ի հրաշակերտ *փառագարդութեանցն* աստուծոյ զամենայն գոլ բարեօք տեսանեմք» (Յհ. իմ. եկեղ., էջ 83) և այլն¹:

Այսպես նաև հետևյալները՝ ըստ առանձին խոսքի մասերի:

1) Գոյականներ. *աւարտումն* «ավարտ. վախճան» (Յհ. իմ. երև., էջ 12), *բացափայլութիւն* պայծառություն. հայտնություն» (Յհ. իմ. առ., էջ 11), *դերաքրիստոս* «հակառակ Քրիստոսի. *նեռ* (փխ. *ներ*)» (Յհ. իմ. պաղ., էջ 39)², *զոհագործութիւն* «զոհաբերություն,

զոհ մատուցելը. պատարագ» (Յհ. իմ. առ., էջ 21), *էակցութիւն* «(բնությամբ) կից լինելը. համագոյություն» (Յհ. իմ. առ., էջ 13), *թափառումն* «թափառելը. այս ու այն կողմ գնալը» (Յհ. իմ. եկեղ., էջ 100), *ժամահար* «ժամն ազդարարող սարք՝ գործիք. կոչնակ, զանգ» (Յհ. իմ. եկեղ., էջ 102, Յհ. իմ. գիշ. ժամ., էջ 109), *խաչակցութիւն* «խաչակցելը. խաչակից լինելը» (Յհ. իմ. եկեղ., էջ 122), *ծանրաբեռնութիւն* «մեծ բեռ. ծանրաբեռնելը» (Յհ. իմ. առ., էջ 15), *կցորդ* «երգերի՝ սաղմոսների կցվածք» (Յհ. իմ. առ., էջ 12, 13, 22, 29, 30), *հայրապետանոց* «բնակարան կամ տուն հայրապետի» (Յհ. իմ. յիշատ., էջ 115), *ճոռումաբանութիւն* «շատախոսություն. ճոռոմ խոսելը» (Յհ. իմ. պաղ., էջ 37), *ուղղապաշտութիւն* «բարեպաշտութիւն» (Յհ. իմ. երև., էջ 73), *պատկերամարտութիւն* «մոլորություն. պատկերամարտ» (Յհ. իմ. պաղ., էջ 34), *վերածայնութիւն* «բարձրաձայնլինելը» (Յհ. իմ. առ., էջ 29)¹, *փառագարդութիւն* «փառավորություն. զարդ՝ փառավոր գործ» (Յհ. իմ. եկեղ., էջ 83), *բաշահաճութիւն* «բարեհաճ լինելը. բարեհաճություն» (Յհ. իմ. պաղ., էջ 37), *քրիստոսանցութիւն* «տիրոջն աստղ լինելը» (Յհ. իմ. պաղ., էջ 34) և այլն:

2) Ածականներ. *ակնակառոյց* «ակնդետ. անթարթ աչքով նայող» (Յհ. իմ. եկեղ., էջ 90), *աղանաբեր* «աղավնու բերած (լուր)» (Ա. տ., էջ 100), *աղծապիղծ* «անմաքրասեր. աղտեղի. գարշելի» (Յհ. իմ. պաղ., էջ 37, Յհ. իմ. ընդդէմ, էջ 469), *ամբաստանական* «ղժգոհություն առաջ բերող» (Յհ. իմ. երև., էջ 63), *ամենապտուղ* «պտղառատ, ամեն տեսակի պտուղ տվող» (Ա. տ., էջ 67), *այագոյն* «այսպիսի» (Յհ. իմ. առ., էջ 3), *աներկբայելի* «աներկբա. անկասկած» (Յհ. իմ. պաղ., էջ 42), *աստուածաւանդ* «աստծուց տրված՝ ավանդված» (Յհ. իմ. եկեղ., էջ 121), *աւանդիչ* «ավանդող, ուսուցա-

¹ ՆՀԲ-ում, ի դեպ, բնագրային վկայությունները սովորաբար նշվում են այն հերթականությամբ, ինչ հերթականությամբ տրվում են բառերի բացատրությունները, ուստի Օձնեցու դեպքում ևս նշում ենք այն իմաստ(ներ)ը, որոնք համապատասխանում են վկայաբերման հերթականությանը:

² ՆՀԲ-ն, նկատի ունենալով հին մատենագրական ավանդույթը, բառի «նեռն» իմաստով բացատրությունը կապում է Ներոն հատկանվան հետ, որ ճիշտ

չէ. ավելի հավանական է *ներ* «վեց հարյուրյակ» բառին առնչելը (տե՛ս Համբարձումյան, 2022, 169-171)

¹ ՆՀԲ-ն Օձնեցուց հետո ունի *Վրք. ոսկ.* [= ?], որ համառոտագրությունների ցանկում չի նշվում:

նող» (Յհ. իմ. ատ., էջ 32, Յհ. իմ. երև., էջ 66), *դժուարագիտելի* «դժվար իմանալի. անիմանալի» (Յհ. իմ. պառ., 38), *դարձվական* «նախատելի. հանդիմանական» (Յհ. իմ. ատ., էջ 11), *երկնասպիշ* «երկնքին պլշած նայող» (Յհ. իմ. պառ., էջ 38), *երկրաքարշական* «երկրային՝ աշխարհային. աշխարհիկ» (Յհ. իմ. ատ., էջ 14), *թագրնկէց* «թագից ընկած, պաշտոնագուրկ» (Ա. տ., էջ 11), *խելահեղ* «խելակորոյս» (Յհ. իմ. երև., էջ 50), *կապանակից* «կապակից. կից, զուգակից» (Յհ. իմ. պառ., էջ 42), *կուրաշաիղ* «անլույս՝ անտեսանելի շավիղ» (Յհ. իմ. երև., էջ 53), *հեղեղագնաց* «հեղեղի պես հորդուն» (Յհ. իմ. պառ., էջ 46), *մշտածառայ* «միշտ եղած. համասփյուռ» (Յհ. իմ. երկբայ., էջ 121), *նախապատուելի* (իմա՝ նախապատիւ, նախամեծար) «ավելի պատվով» (Յհ. իմ. ատ., էջ 20, 22), *որումսացանու* «չարի սերմ ցանող (անձ)» (Յհ. իմ. երև., էջ 66), *չարաղանդ* «չար աղանդի հետևող. մծղնեական» (Յհ. իմ. ատ., էջ 33), *օձաջամբ* «օձի միջոցով ուղարկված՝ բանասարկուից հասցված» (Յհ. իմ. եկեղ., 96) և այլն:

3) Բայեր. *այլսանեմ* «հորինել, այլակերպել, այլանդակել» (Յհ. իմ. պառ., էջ 36), *գեղեցկակերտեմ* «գեղեցիկ ձևով շինել՝ կերտել» (Ա. տ., էջ 45, Յհ. իմ. երև., 45, 59), *գթասիրել* «գթալով սիրել, զուրով սեր տածել» (Յհ. իմ. ատ., էջ 21), *դժոխարանել* «դժոխային՝ դժնդակ խոսք ասել. հայհոյել» (Յհ. իմ. երև., էջ 59, 73), *թերաբանել* «կիսատ խոսք ասել, թերի խոսել» (Ա. տ., էջ 50), *խանձարրապատիմ* «խանձարուրով՝ փաթաթվել» (Ա. տ., էջ 54), *կաթնարոյծ* (լինել) «կաթով սնվել՝ բուծվել» (Ա. տ., էջ 54), *հանդիպանալ* (իմա՝ հանդիպիլ) «դեմը ելնել. հանդեպ մեկի լինել» (Յհ. իմ. ատ., էջ 22, Յհ. իմ. երև., էջ 69), *մակաղել* «ի մի բերել. մեկտեղել (հոտը)» (Յհ. իմ. ատ., էջ 4), *մղեղեմ* «մանրել. աճյուն՝ մոխիր դարձնել» (Ա. տ., էջ 18, Յհ. իմ. պառ., էջ 46), *նախահատել* «սկսել. սկիզբ առնել» (Յհ. իմ. ատ., էջ 12), *ներհականայ* (իմա՝ ներհակայի) «ներհակ է,

հակառակ է» (Յհ. իմ. երև., էջ 67)¹, *շարակասպել* «միահյուսել, միացնել» (Յհ. իմ. եկեղ., էջ 90), *վերերթալ* «վերև գնալ, վերանալ» (Յհ. իմ. երև., էջ 58), *քողախնդրեմ* «քողը բանալ. պարզել, հայտնի դարձնել» (Յհ. իմ. պառ., էջ 37) և այլն:

4) Մակբայներ. *անմարմնաբար* «հոգեպես, առանց մարմնի» (Յհ. իմ. երև., էջ 60), *անմոռացաբար* «անմոռաց. առանց մոռանալու» (Յհ. իմ. յիշատ., էջ 116), *անչափաբար* «անչափ. ավելի քան, անսահման» (Յհ. իմ. ատ., էջ 15, նաև 35), *աստուածօրէն* «աստվածակերպ» (Յհ. իմ. պառ., էջ 36), *մարմնաձևապէս* «մարմնի ձև, մարմնի ձևով» (Յհ. իմ. երև., 54), *նոյնաձևաբար* «նույն ձևով, նույն կերպ» (Ա. տ., էջ 35), *նոյնաձևապէս* «նույն ձևով, նույն կերպ» (Յհ. իմ. եկեղ., էջ 89) և այլն:

5) Նախադրություն. *թանց* «առանց, բացի» (Յհ. իմ. ատ., էջ 20, Յհ. իմ. երև., 51) և այլն:

բ) *Նախ հետագա հեղինակ(ներ)ից, այնուհետև Օձնեցուց բերված բառեր*: Այս տեսակն առհասարակ խնդրահարույց է, եթե ոչ մերժելի, սակայն թերևս մեկ բացառությամբ: Դա այն է, որ ՆՀԲ-ն, ինչպես մասամբ նկատելի է բառարանագիտական աշխատանքներում, վկայություն է բերում ժամանակային խախտումով միայն այն դեպքում, երբ բառի տվյալ իմաստն ավելի սովորական է և առաջնային («ինվարիանտ»), քան մյուս, մանավանդ հետագայում երևան եկած իմաստը (կամ իմաստները): Եվ մանավանդ հին (ինքնուրույն կամ թարգմանական) բնագրերի իմաստային (վարիատիվ՝ տարբերակային) վերլուծության ժամանակ այս տարատեսակությունն առհասարակ ունի որոշիչ դեր:

Օձնեցու երկերում նման օրինակները քանակապես այնքան էլ շատ չեն, ուստի բերում ենք միայն այբբենական թվարկմամբ (ոչ ըստ խոսքի մասերի)՝ ամեն անգամ տալով համապատասխան բացատրություններ:

¹ ՆՀԲ-ն իրավամբ բերում է իբրև դիմագուրկ բայ:

Այսպես, *աղօթանուէր* բառը (ածական անուն), որ ՆՀԲ-ում նշվում է մի քանի իմաստով՝ «ուր իցէ նուէր աղօթից», «աղօթք նուիրական», «նուիրող աղօթից» և «նուիրեալ աղօթիք», նախ՝ հանդիպում է Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում ճառք»-ում, այնուհետև՝ հետագա հեղինակների երկերում, սակայն ՆՀԲ-ն այն բերում է Նարեկացու և Շարակնոցի վկայակոչմամբ, որից հետո՝ Լուսավորչի, իսկ վերջում՝ Լամբրոնացու, որ թվում է, թե հիշյալ իմաստներից յուրաքանչյուրի (ինվարիանտի և վարիանտների) հաջորդականությունն է պահպանված:

Այդպիսին են հետևյալները. *ազգակցապէս* «ազգակցաբար» (Յհ. իմ. առ., էջ 3), *արուեստականութիւն* «արվեստ. ճարտարապետություն» (Յհ. իմ. երկբայ., էջ 121), *արտասահմանութիւն* «աքսոր. վտարանդի լինելը» (Յհ. իմ. եկեղ., էջ 1), *եռանձնական* «երեք անձի ընդունումով» (Յհ. իմ. առ., էջ 4), *խորհրդաբերեալ* «խորհրդածել, մտածել, մտաբերել, խորհել» (Յհ. իմ. եկեղ., էջ 82), *հանգստական* «հանգիստ, խաղաղ, անդորր» (Յհ. իմ. առ., 18), *յանձնառական* «ընդունելի, խոստովանելի, հավանելի» (ն. տ., էջ 2), *յարահիսեալ* «բաղիյունել, շաղկապել, գողել» (Յհ. իմ. առ., էջ 3, Յհ. իմ. պառ., էջ 46, Յհ. իմ. երև., էջ 70)², *յղացութիւն* «հղիանալը. հղի լինելը» (Յհ. իմ. երև., էջ 49), *սաղմոսողոց* «սաղմոսասաց դպիր. պապտ» (Յհ. իմ. առ., էջ 22)³, *ուժնակի* (Յհ. իմ. միաշաբ., էջ 101) և այլն:

գ) *Միայն հետագա հեղինակ(ներ)ից բերված բառեր*: Սա այն դեպքն է, երբ բացակայում է (երկրորդ պլան է մղված լինում) Օձնեցու երկերում գործածվածը, թեև ժամանակի առումով հակառակն էր սպասելի: Նման բառերը սակավ են, բայց կան, և Օձնեցու երկերի ավելի մանրամասն քննության դեպքում դրանց թիվն,

անկասկած, կարող է ավելին լինել¹: Օր.՝ *արարածական* «եղած. ստեղծված» բառը բերվում է Գր. Մագիստրոսի, Ներսես Շնորհալու դասակիցներ Սարգիս վարդապետի և Իզնատիոս վարդապետի երկերի օինակով, այնինչ բառը կիրառված ենք գտնում Օձնեցու «Ընդդէմ երևութականաց»-ում, ընդ որում գործածված մի քանի անգամ. «Զի ոչ ասի *յարարածականաց* ոք բնութիւն» (Յհ. իմ. երև., էջ 52). «Այլ ոչ եթէ *յարարածական* բնութենէն ինչ յինքն խառնեաց» (ն. տ., էջ 54). «Ընդ ձեռն որոյ ցուցեալ լինէր Աստուծոյն Բանի բնութիւն անեղանելի, և ի Հօրէ. իսկ մարմնոյ նորին գոյացութիւնն ի կուսէ, և *արարածական*» (ն. տ., էջ 57):

Այսպես նաև հետևյալները. *աթոռընկալ* «աթոռ՝ առաջնորդի կարգ ընդունած» (Յհ. իմ. սակս., էջ 477), *աղախնայեալ* «աղախնու՝ սպասավորի ծառայություն անել, աղախնու պես ծառայել» (Յհ. իմ. առ., էջ 20), *ամենաջողակ* «ամենից հաջողված» (Յհ. իմ. սակս, էջ 478), *անարարածք* «չեղած. անգոյ» (Յհ. իմ. պատմ., էջ 108), *անբարժանաբար* (Յհ. իմ. սակս, էջ 484), *աշխարհասիրութիւն* (Յհ. իմ. խօսք., էջ 154), *աստուածաբոյլ* «սրբագումար» (Յհ. իմ. սակս, էջ 489), *աստուածաձաղիկ* «աստծով ծաղկած», (փխբ.) «տիրոջով փառավորված» (ն. տ., էջ 489), *բացածանուցանեալ* «հայտնի դարձնել. բացահայտել» (Յհ. իմ. երկբայ., էջ 120), *եռահրաշ* (Յհ. իմ. նախ., էջ 167), *երախայացեալ* «պատրաստ մկրտութիւն. դեռ չմկրտված» (Յհ. իմ. սակս, էջ 489, 490), *երեսնեկ* «երեսունեկ» (Յհ. իմ. նախ., էջ 165)², *եթնարթի* (աւանդապահք) (Յհ. իմ. Գայ., էջ 143), *գուգանապարհ* «եղածին կից՝ մեկ այլ ճանապարհ» (Յհ. իմ. խոստ., էջ 194), *յորահիմն* (Յհ. իմ. սակս, էջ 485), *ծաղկահաւաք* «ծաղիկ հավաքելը» (Յհ. իմ. առ այն, էջ 99)³, *ծարաւաբար*

¹ Այս կարգի բառերին անդրադառնում ենք հայերենի պատմական բառարանի հեռանկարի նկատառումով:

² ՆՀԲ-ն ունի՝ *երեսնեակ* ձևով, վկայ՝ միայն Կաղկանտ. [= Կաղանկատվացի]:

³ ՆՀԲ-ն ունի՝ Խոսրովիկ, հենց այս օրինակը. որ, երևի Օձնեցու այն երկից է, որ կա Խոսրովիկ թարգմանչի երկում:

¹ Ըստ ՆՀԲ-ի, նախ՝ Սոկր., ՃՃ:

² Ըստ ՆՀԲ-ի՝ նախ Թեոդ. Քոթենավորի անունով տե՛ս վերը:

³ ՆՀԲ-ն վկայակոչում է նախ՝ «Կանոնք»-ը (Օձնեցու կազմած), այլև Օձնեցու սույն օրինակը:

«ծարաված, ծարավ լինելով» (Յհ. իմ. յիշատ., էջ 116), *կանոնադիր* // *կոնոնադրեալ* (< կանոնադրեմ) (Յհ. իմ. խօսք., էջ 148), *հակամիտ* «հակամետ» (Յհ. իմ. խոստ., էջ 193), *հոգեհնչող* (ձայն). (Յհ. իմ. Գայ., էջ 143), *հրամայողական* «հրամայական» (Յհ. իմ. յիշատ., էջ 116), *միականություն* (Յհ. իմ. նախ., էջ 166), *մեղսամակարդություն* (Յհ. իմ. սակս., էջ 476), *մծղնություն* «խառնակություն (հավատքի մեջ)» (Յհ. իմ. պառլ., էջ 39), *նախընտիր* «նախապես ընտրված՝ առնված» (Յհ. իմ. սակս., էջ 492), *պարակցություն* «պարակից՝ դասակից լինելը» (Յհ. իմ. առ., էջ 20), *տաժանատր* «տառապալի, տաժանելի» (ն. տ., էջ 14), *քանդակիչ* (Յհ. իմ. ընդդէմ, էջ 472)¹, *քաջահնար* (Յհ. իմ. Գայ., էջ 144), *օձնման* (փխ. ա-ով) «օձի պես. օձի բնույթի» (Յհ. իմ. եկեղ., էջ 95), *օտարացեղություն* «այլ ցեղի՝ դավանանքի պատկանելը» (Յհ. իմ. խոստ., էջ 192) և այլն:

7. Նոր կամ մեկ այլ իմաստով գործածված բառեր: Հեղինակային լեզվի առումով բավականին հետաքրքիր է անդրադառնալ նախկինում գործածված բառի նոր իմաստային կիրառությանը: Օձնեցու երկերում ևս կան նման կիրառություններ, ընդ որում ՆՀԲ-ում բերվում են կա՛մ միայն իր, կա՛մ նաև իր և հետագա հեղինակների օրինակով. իմաստային տարբերությունը հաճախ ունի տերմինային ընդգծվածություն: Բառերի տրմինային իմաստով կիրառությունը մեծապես նկատելի է նրա իմաստասիրական ուղղվածության մեջ (տե՛ս *Զարարյան*, 2019):

Բառի, տերմինի նոր իմաստով գործածությունը վկայություն է հեղինակի ընդհանուր լեզվափոփոխության, հայացքների և գաղափարների զարգացման նոր պայմաններում: Օր.՝ *անգոյ* «ունայն, դատարկ. անկերպարանք. փունճ». «Ոչ եթե՛ *անգոյ* և կամ առանց մտաց և անձին, և թանց բնութեան զմերն ընկալաւ» (Յհ. իմ. երև., էջ 51), «Եւ եթե՛ ոչ *անգոյք* են անուանքն, կամ միոյ դիմաց» (ն. տ., էջ 63). *առասպելական* «բանդագուշական՝ աղճատված խոսող».

¹ ՆՀԲ-ն ունի միայն՝ վկայ.՝ Եզն. յս. համառոտումով, որ համառոտագրությունների ցանկում չի բերվում, որ ամեն դեպքում հետագայի է:

«ընդ ձեռն որոյ երթեալ հանդիպիս գոր միշտն խնդրես, Ետիքեայ *առասպելականին*» (Յհ. իմ. երև., էջ 67). *բազմերախտ*. «շատ՝ բազում երախտիքներով». «Զոր մանաւանդ թէ և յառաջագոյն իսկ արժան էր յիշել իբրև զմեծագործ և *գրազմերախտ* ի Քրիստոսէ պարգևեալ մեզ աւանդ» (Յհ. իմ. առ., էջ 7). *խօսնական* «հարսնախոսության միջնորդ. առիթ». «Իսկ զերկեակսն նոյնպէս պարտ է ըստ առաջին կարգին միջնորդօք և *խօսնականօք* հաւանեցուցանել յիրերաց յօժարութիւն» (Յհ. իմ. առ., էջ 27) և այլն:

Այսպես նաև հետևյալները՝ ըստ առանձին խոսքի մասերի:

ա) Գոյականներ. *սպարանություն* «անպատասխան մնալը, պապանձվել» (Յհ. իմ. երեւ., էջ 61), *սպականություն* «անցում եղածից չեղած. ժակառակություն. կոռուպցիա» (ն. տ., էջ 67, 77), *առաջներություն* «աջքատես լինելը» (ն. տ., էջ 49), *բազմահետք* «տարբեր հետքերով գնացող. անհաստատ» (Յհ. իմ. առ., էջ 4), *բազմիշխանություն* «բազմաստվածություն» (Յհ. իմ. պառլ., էջ 42)¹, *դերանունություն* (հուն. *ἀντωνομασία*, լատ. *pronomination*) «հասարակ անունը մեկին հատկացնելը, կամ հակառակը» (ն. տ., էջ 37), *եօթներեակ* (ած., գոյ.) «աշխարհի յոթերորդ օրը՝ շաբաթը, որին հաջորդում է կիրակին» (Յհ. իմ. եկեղ., էջ 84, էջ 92), *ժամահար* «ժամը խփելու գործիք, կոչնակ, զանգակ» (Յհ. իմ. եկեղ., էջ 102), *ժառանգաւորություն* «ժառանգելը, ժառանգի իրավունք ստանալը. հաջորդելը» (Յհ. իմ. առ., էջ 9), *իմաստ* «իմացություն. մտքի հասունություն» (ն. տ., էջ 9), *խոհականություն* «միտք, (խոսքի) իմաստ» (Յհ. իմ. երև., էջ 61), *խոնարհեցուցանող* (< խոնարհեցուցանել) «մեր տեր Հիսուս Քրիստոս» (Յհ. իմ. եկեղ., էջ 61)², *խորհուրդ* «միտք, դիտավորություն, իմաստ» (Յհ. իմ. երև., էջ 57), *ծանօթությունք* «հատկություն. առաձնացում ամեն մի անձի՝ առ Աստված» (ն. տ., էջ 63), *հակաճառություն* «հակաճառելը. (բանա)վեճ» (Յհ. իմ. առ.,

¹ ՆՀԲ-ն չի առանձնացնում այս իմաստը, նշում է նաև Օձնեցու այս օրինակը. բնագրում բառի հակամիջն է *մի իշխանություն* «միաստվածություն»:

² ՆՀԲ-ն չունի բառն այս իմաստով, մանավանդ՝ առանձին:

էջ 23), *հոգեւորութիւն* «բանական հոգի առնելը, հոգիանալը» (Յհ. իմ. երև., էջ 62), *յոբեղինին* (< յոբեղեան) «հիանօրյա ժամանակ՝ զատկից մինչև պենտեկոստե» (Յհ. իմ. սակս, էջ 488, 490, Յհ. իմ. եկեղ., էջ 97)¹ և այլն:

բ) Ածականներ. *սոսանձնատրական* «անձնական, անհատական. սեփական» (Յհ. իմ. երև., էջ 63), *սոսաջնածին* «անդրանիկ զավակ ծնած (մայր)» (Յհ. իմ. պառլ., էջ 38), *սոսասպեղական* «աղճատված, բանդագուշական» (Յհ. իմ. երև., էջ 67), *արձակ* «հասարակ, սովորական. ռամկական խոսք (Յհ. իմ. եկեղ., էջ 91), *բազմահետ(ք)* «որ գնում է տարբեր հետքերով, ուրիշներից առանձին շավղով» (Յհ. իմ. առ., էջ 4), *բազմերսիստ* «մեծ երախտիքով եղած» (Ա. տ., էջ 7, 11), *գեղեցկագործ* «գեղեցիկ արված՝ հորինված» (Յհ. իմ. յիշատ., էջ 115), *գերակատար* «առավել վերին քան» (Յհ. իմ. եկեղ., էջ 122), *երկեսկ* «երկրորդ անգամ ամուսնացած» (Յհ. իմ. առ., էջ 11, Յհ. իմ. երև., էջ 76), *երկաքարշ* «երկրային՝ աշխարհիկ» (Յհ. իմ. եկեղ., էջ 84), *նահասպետական* «հայրապետական, քահանայապետական, սրբազնապետական» (Յհ. իմ. առ., էջ 22), *ջախջախ* «կցկտուր, փուտ, անպիտան» (Յհ. իմ. երև., էջ 50) և այլն:

գ) Բայեր. *աղամողիմ* «խոտորվել, այս ու այն կողմ վազել» (Յհ. իմ. երև., էջ 56), *սոսանձնասնամ* «առանձին՝ հատուկ ենթակայությամբ լինել» (Յհ. իմ. եկեղ., էջ 84), *արտահայած (սոնետ)* «վանել, հեռացնել» (Յհ. իմ. երև., էջ 66), *արտորոշեմ* «զանազանել, որոշել» (Ա. տ., էջ 64), *բացորոշեմ* «զատել. մեկնել, ընտրել» (Յհ. իմ. պառլ., էջ 42), *իրասացուցանեմ* (< իրասացոյց) «ստուգել. իրավացի՝ հավաստի դարձնել» [Յհ. իմ. երև., էջ 73. երկիցս], *փափկացուցանեմ* (< փափկացոյց) «փափուկ՝ փափկությամբ անց կացնել» (Յհ. իմ. առ., էջ 15) և այլն:

դ) Մակբայներ. *անբաղայապէս* «աներկբա, անկասկած, անշուշտ» (Յհ. իմ. առ., էջ 11)¹, *պսակաւոր* «պսակ կրող. հայրապետ» (Յհ. իմ. եկեղ., էջ 92) և այլն:

8. Ձևային-իմաստային տարբեր կազմության բառեր:

Լինելով ժամանակի լեզվամտածողության օրինակ, այնուամենայնիվ Օձնեցու երկերում հանդիպում են հին գրական հայերենի նորմայից շեղումներ, բառի հնչյունական, ձևային-իմաստային տարբերություններ: Օր.՝ *լիեալք* (փխ. լեալք). «Այսորիկ աղագաւ անպատկառացոյցք սուրբ հարքն երկուց բնութեանց Քրիստոսի աստուածայնոյն և մարդկայնոյն *լիեալք*» (Յհ. իմ. երև., էջ 69). *ի մէնջից* «մերիններից» (տերմինի արժեքով). «Եւ կամ գորս *ի մէնջից* աստի հոգին սուրբ զարթոյց՝ լինել զկնի առաջնոյն լուսաորիչք» (Յհ. իմ. երև., էջ 66)², *ներխորհրդում*. «Տո՛ւր զքեզ *ներխորհրդումն* բանի, և մի՛ զխորհուրդ բանին առ քեզ բոնադատեալ թիւրեցես» (Յհ. իմ. երև., 61). *քաղցնելոյ* (< քաղցնել, փխ. քաղցնուլ. ձեռագրերից մեկում՝ քաղցնլոյ), (Յհ. իմ. առ այն., էջ 99):

Այսպես նաև հետևյալները. *սծանին*. «երբեմն առ կեանս, և երբեմն առ մահ պարաբերելով *սծանին*» (Յհ. իմ. երև., էջ 69), *անցնիւրցն* «իր այն անցկացվածները» (տերմինի արժեքով). «այլ ի վայր քարշեալ՝ *անցնիւրցն* մատուցանէ զնա յորոց բաղկացան տարերց» (Ա. տ., էջ 77), *ի բանակայնումն* (փխ. *ի բանակայնի*). «Եթէ ոչ երկիւղին տրամադրութիւն *ի բանակայնումն* նորա բնաւորեալ էր յոգուջ, զիա՛րդ զգուշացուցանէր» (Ա. տ., էջ 68). *գրիցեալ* (փխ. գրեցեալ). «Արդ է՛ ուրեմն յաստուածային *գրիցեալն* բան՝ որ ըստ բնութեանն է ասացեալ և իմանի» (Ա. տ., էջ 62), «որոց և հանդիպել կարացին *գրիցելոց*՝ և բերին» (Ա. տ., էջ 66). *դահեակ (լինել)* «անու-

¹ ՆՀԲ-ն այս իմաստով վկայաբերում է միայն այս օրինակը:

² ՆԲԳ-ն ունի իբրև նորահայտ բառ, ՆՀԲ-ն բերում է (*որ*) *ի մէնջք* ձևով, միայն Օձնեցու հիշյալ օրինակի վկայությամբ. այն *ես* անձն. դերանվան հոգն. բոզ. հոլովի ձևն է՝ իբրև գոյական -ք հոգնակերտով՝ *մէնջք*, որից հոգն. սեռ. *ի մէնջից*:

¹ ՆՀԲ-ն ունի միայն Յհ. Իմ. եկեղ. և Կանոն:

ցիչ. դաստիարակ. հոգաբարձու» (Յհ. իմ. Գայ., էջ 145)¹, *դնանիլ* «դրվել» (Յհ. իմ. ատ., էջ 15), *ընդրումն* (իմա՝ ընտրումն) «ընտրելը՝ ջոկելը, գատելը» (Յհ. իմ. եկեղ., էջ 92), *թողանելոյ* (< փխ. թողլոյ. թողոյ) «թողնել» (Յհ. իմ. խօսք., էջ 151) և այլն:

9. Հունարենի օրինակով կազմված բառեր (բառապատճենումներ), շարահյուսական իրողություններ: Օձնեցու նոր բառերի և տերմինների որոշ մասը կազմված է հունարենի հետևողությամբ: Դրանք գիտական անվանումով պատճենումներ են: «Ընդդէմ երևութականաց»-ում, օրինակ, հաճախակի են նման բառերը, բառակազմորեն առնչվում են հունարենի այս կամ այն բառին (տերմինին): Այսպես, *ներլինելութիւն* բառը, որն ունի նույն իմաստը, ինչ հայերեն *լինելութիւն* «լինելը, ծնունդ», կազմվել է հայ. *ներ-* նախամասնիկի հավելումով, որը, իհարկե, որոշ երանգավորում է հաղորդում տերմինի ընդհանուր իմաստին. ըստ ՆՀԲ-ի՝ այն գործածում է միայն Օձնեցին. «Զանգի ապականութիւն *ներլինելութեանն* ներհականայ. և ներհակքն ոչ կարեն համանգամայն ի միում և ի նոյն ժամանակի բաղկանալ» (Վեն., 1953, էջ 82): Այսպես նաև լեզվական այլ ձևերի դեպքում:

«Ընդդէմ երևութականաց»-ում հանդիպում է, ինչպես վերը նշել ենք, *ես* դերանվան *ի մէնջից* ձևը, որն արտաստվոր է հին գրական հայերենի համար. «Եւ կամ զորս *ի մէնջից*, աստի Հոգին սուրբ զարթոյց՝ լինել զկնի առաջնոյն լուսաւորիչք» (էջ 66) (= թարգմ.՝ «Եվ կամ որը *մեզանից* Սուրբ հոգին արթնացրեց՝ լինելու լուսավորիչ առաջինի հետևից». բուն իմաստն է՝ «մեր միջից (կամ «մեզանից»)՝ իբրև մասնավորեցում, որն առնվում է ընդհանուրից, ամբողջից: ՆՀԲ-ում (հ. 2, էջ 259, 1-ին սյունակ) հատուկ նշում կա դրա մասին՝ իբրև առանձին բառահոգված: Ըստ այդմ՝ զորս *ի մէնջից*-ը նշանակում է «որոնք մեր միջից (են)». ուստի այն կարելի է թարգմանել *մեզանից* բառաձևով. այն կիրառում է միայն Օձնեցին:

¹ ՆՀԲ-ն ունի միայն *դպեակ*, սա թերևս խոսակցական-բարբառային տարբերակ է: :

Ներխորհուրդ բառը, ըստ ՆՀԲ-ի, գործածել է միայն Օձնեցին, և ոչ այլ կերպ, քան հանգման անուղղակի խնդրի իմաստով՝ տրական հոլովով. «Տու՛ր զքեզ *ներխորհրդումն* բանի, և մի խորհուրդ բանին առ քեզ բռնադատեալ թիրեցես» (Յհ. իմ. երեւ., էջ 60):

ա) Առանձին ուշադրություն են գրավում հունաբան նախամասնիկով բառերը, որոնք միաժամանակ տերմիններ են: Դրանք հիմնականում գալիս են հնից, մասամբ հեղինակային են, իսկ ընդհանուր առմամբ վկայություն են հեղինակի լեզվի հունաբանության:

Նշենք նախամասնիկով կազմությունների օրինակներ. *առնալործիմ* (Յհ. իմ. երև., էջ 61), *առկոուարարութիւն* (Յհ. իմ. պաղ., էջ 37), *արտ(ա)-արտահալած* (Յհ. իմ. երև., էջ 66), *սայ(ա)-սայարանութիւն* (ն. տ., էջ 61), *բաց(ա)-բացածանուցանեմ* (Յհ. իմ. երկբայ., էջ 120), *բացայայտակի* (Յհ. իմ. պաղ., էջ 37, Յհ. իմ. երև., էջ 68), *բացորոշեմ* (Յհ. իմ. պաղ., էջ 42), *գեր-գերամբարձեալ* (ն. տ., էջ 36), *գերաշխարհիկ* (Յհ. իմ. երև., էջ 78), *գեր սասցեալ* (գրությամբ՝ առանձին) (Յհ. իմ. ատ., էջ 11), *թեր(ա)-թերաբանել* (Յհ. իմ. երև., էջ 50), *հակ(ա)-հակաճառութիւն* (Յհ. իմ. ատ., էջ 23), *համ(ա)-համարուն* (Յհ. իմ. երև., էջ 57), *համագոյ* (ն. տ., էջ 57), *համագոյական* (ն. տ., էջ 59), *համագոյութիւն* (Յհ. իմ. երև., էջ 52), *համագործութիւն* (Յհ. իմ. պաղ., էջ 37), *համազանց* (Յհ. իմ. երև., էջ 66), *համախոհակ* (Յհ. իմ. պաղ., էջ 46), *համաձայնեմ* (Յհ. իմ. երկբայ., էջ 21), *համանգամայն* (Յհ. իմ. երև., էջ 67), *համանման* (Յհ. իմ. պաղ., էջ 39), *համատեսակ* (Յհ. իմ. երև., էջ 60), *համբարոնամ* (ն. տ., էջ 57), *հում(ա)-հումատեսակ* (Յհ. իմ. պաղ., էջ 43, Յհ. իմ. երև., էջ 50), *մակ-մակագրութիւն* (Յհ. իմ. երև., էջ 61), *մակացական(ք)* (Յհ. իմ. ատ., էջ 3), *մակձայնել* «բարձրաձայն ասել՝ քարոզել» [Յհ. իմ. երև., էջ 58, 77], *յար(ա)-յարահիսեալ* (Յհ. իմ. ատ., էջ 3, Յհ. իմ. պաղ., էջ 6, Յհ. իմ. երև., էջ 70), *յարտոցեալք* (Յհ. իմ. ատ., էջ 20), *ներ-ներածել* (Յհ. իմ. երև., էջ 76), *ներգործել*

(Յհ. իմ.ատ., էջ 3, Յհ. իմ. երև., էջ 69, 73, 74), *Ներլինելություն* [Յհ. իմ. երև., էջ 67, 76], *Ներխորհուրդ* (Ա. տ., էջ 61), *Ներկազմեալ(ք)* (Յհ. իմ. ատ., էջ 20), *Ներհականք* (Ա. տ., էջ 3), *Ներհականամ* (Յհ. իմ. երև., էջ 67), *Ներհորդեմ* (Ա. տ., էջ 11), *Ներշրջանակ(ք)* (Յհ. իմ.ատ., էջ 3), *Ներքատակել* (Յհ. իմ. երև., էջ 67), *շար(ա)-. շարաբարձումն* (Յհ. իմ. եկեղ., էջ 56), *շարադրություն* (Յհ. իմ. երև., էջ 53), *շարալծեալ* (Յհ. իմ. ատ., էջ 13), *շարահասունել* (Ա. տ., էջ 16), *շարակարգել* (Յհ. իմ. երև., էջ 59), *շարամանեալ* (Յհ. իմ. երև., էջ 68, 69, 77, Յհ. իմ. երկբայ., էջ 121), *պար(ա)-. պարաբերել* (Ա. տ., էջ 69), *պարիակեալ* (Յհ. իմ. ատ., էջ 1, Յհ. իմ. եկեղ., էջ 98), *վեր(ա)-. վերաբերեմ* (Յհ. իմ. երև., էջ 58), *վերաթևեալ* (Ա. տ., էջ 57), *վերերթալ* (Ա. տ., էջ 58), *վերակոչումն* (Յհ. իմ. երկբայ., էջ 121), *վերաձայնել* (Յհ. իմ. երև., էջ 67, Յհ. իմ. երկբայ., էջ 121), *վերաստեղծել* (Յհ. իմ. երև., էջ 51), *տար(ա)-. տարագրեմ* (Ա. տ., էջ 10), *տարացոյց* (Յհ. իմ. ատ., էջ 5, Յհ. իմ. երև., էջ 65), *տարբերեալ* (Յհ. իմ. երև., էջ 60), *տրամ. . տրամադրություն* [Յհ. իմ. ատ., էջ 4, Յհ. իմ. երև., էջ 68], *տրամակայեալ* (Յհ. իմ.ատ., էջ 4), *փոխ(ա)-. փոխաբուսեմ* (Յհ. իմ. երև., էջ 51) և այլն:

Ըստ այսմ նկատելի է, որ նախամասնիկավորման մակարդակում նույնպես հեղինակը ինչ-որ չափով հետևում է հունարան հայերենի սկզբունքներին: Այս երևույթը ժամանակին արգասավոր է եղել, ունեցել է հետևորդներ: Եվ այդ ճանապարհով է նաև հարստացել մեր լեզուն, հատկապես նրա բառապաշարը:

բ) Օձնեցու երկերում կա նաև հունարան դպրոցի հետևության մեկ այլ իրողություն, որ հանդես է գալիս խոսքի, նախադասության մակարդակում: Վերջինս կառուցվում է այնպիսի կապակցությամբ, որ ենթական դրվում է թեք (տրական, հայցական և այլն) հոլովներով, իսկ ստորոգյալը՝ անորոշ դերբայով: Ավանդաբար այդ երևույթին այնքան էլ ուշադրություն չի դարձվել, մասամբ դիտվել է օտար ազդեցություն: Մենք հակված ենք կարծելու, որ այդ երևույթը հայերենում գալիս է հնդեվրոպական ընդհանրությամբ:

յունից, իսկ հետագայում երկրորդաբար կրել է գրական հունարենի նման ազդեցությունը (տե՛ս *Օձնեցի*, 1999, 16-18): Ուստի պետք է նախ՝ տարբերել բնիկը՝ ժառանգորդականը, և հետագայում հունարենի միջամտությամբ տեղ գտածը, այնուհետև՝ դրանք գնահատել իբրև ոճական երևույթ՝ բնորոշ առհասարակ V դ. գրաբարին, հատկապես հունարենից կատարված թարգմանություններին: Այն շարունակվում է տեղ գտնել նաև Օձնեցու երկերում՝ իբրև պատճենում կամ նմանակում:

Տրական հոլովը անորոշի հետ (լատ. *dativus cum infinitivo*): Օր.՝ «Ձնոյն և մեզ ի դէպ է *ասել*» (Յհ. իմ. պատղ., էջ 45): «Եւ իրերաց *գոյ* ասեն *զմեզ* մասնակիս և համախոհակս» (Ա. տ., էջ 46): «Յոյժ տենչալի է *ինձ* և փափագելի ոչ այլոց զիս, և ոչ զայլս ինձ *լինել* ի թշնամութեան» (Յհ. իմ. երև., էջ 48): «Ահաւասիկ յայտնի բանի երևեցոյց սուրբ հայրս՝ ոչ մասունս *գոյ մեղաց և սպականութեան*, որ ի մեզ գտանին կիրքս» (Յհ. իմ. եկեղ., էջ 88) և այլն:

Այդպիսին են նաև հետևյալները. «Արժան է զհիւանդացն զձեզ *քահանային օրհնել* ըստ իւրում աղօթիցն» (Յհ. իմ. ատ., էջ 26): «*Զքնութեանցն* արժանաւոր *քարքառել*» (Յհ. իմ. երև., էջ 59): «Կարել *ասել ինձ*» (Յհ. իմ. ատ., էջ 2): «*Հարանցն* անորոշաբար *լիջել*» (Յհ. իմ. երև., էջ 60): «Անհնար է *աստուծոյ* յամենայնս *լինել* ի նմանէ գոյացելոցս տեսակս (Յհ. իմ. պատղ., էջ 44): «*Մեզ* յայլ ինչ մի՛ լիցի *պարծել*» (Յհ. իմ. եկեղ., էջ 113): «Մինչ զի ըղձալի *լինել ինձ* այսօր *մնալ քեզ* անաստուած մինչդեռ» (Յհ. իմ. երև., էջ 63): «Յաստուածազանիցն *ոչ պատկառել քեզ*» (Ա. տ., էջ 63): «Պարտ է և արժան է *հայրապետին օրհնել*» (Յհ. իմ. ատ., էջ 26): «Կարողութիւն է *ումնք* անցանել» (Ա. տ., էջ 6) և այլն:

Հայցական հոլովը անորոշի հետ (լատ. *accusativus cum infinitivo*) կապակցություն: Օր.՝ «Ձոր դու և ոչ զմի գոք յայցանէ կարես առնուլ յանձն. յաղագս որոյ *զնոյն ինքն ընքեան* զմարդկային կազմածս մեղս ասացեր *գոյ*» (Յհ. իմ. եկեղ., էջ 87): «*Զքնական*

լինել ի մարմնի զպատահումն թողացոյց» (Յհ. իմ. եկեղ., 89) և այլն:

Այդպիսին են նաև հետևյալները. «Ընդ ձեռն մին ասելոյ Քրիստոսի բնութիւն (Յհ. իմ. երև., էջ 59): «Էտատովանեա՛ յառաջ ասացելոցն *զբեզ* մի ոք *գոյ* ի չարապաշտից (ն. տ., էջ 60): «*Ջծառս-յեցուցիչն* հրամայեաց *ծառայեցելոյն*» (ն. տ., էջ 75): «Ուսուցանել *զչար-չարանս* փրկչին *լինել* (Յհ. իմ. եկեղ., էջ 95): «Եւ նախքան զմիաշա-բաթին օր *լուծանել զպահան* (Յհ. իմ. առ., էջ 6) և այլն:

Բնագրի շարահյուսական կառուցվածքի տեսակետից ուշագ-րավ է նաև հունարան դպրոցի ավանդույթի հետևությամբ նախա-դասության գոյականական անդամի լրացումը ածականով դրվելու փոխարեն վերացական՝ *-ութիւն* ածանց ունեցող գոյականով դրվե-լը, որ գրաբարում առհասարակ կոչվում է վերացականը թանձրա-ցականի փոխարեն (լատ. abstractum pro concreto): V դ. գրաբարում ևս այն բավականին տարածված երևույթ էր. հմնտ. *բաժակ դառ-նութեան* (Ագաթ., էջ 254), *բազմութիւն* նետից (Եղիշէ, էջ 7) և այլն:

Օձնեցու երկերում նման կառույցների գործածությունը հատ-կանշական է, նման օրինակները շատ են, բերենք մի քանիսը. *աղ-բատութիւն բնութեան* (Յհ. իմ. եկեղ., էջ 95), *զամկարշտութեանն (իրեանն) զմաղձ* (Յհ. իմ. պառ., էջ 39), *անդամ չարապաշտու-թեան*» (ն. տ., էջ 46), *անհնարինութեան խորհուրդ* (ն. տ., էջ 45), *առաւելութիւն փառաց* (Յհ. իմ. երև., էջ 60), *արեզակն արդարու-թեան* (Յհ. իմ. եկեղ., էջ 92), *բան գիտութեան* (Յհ. իմ. միաշաբ. էջ 104), *բարեփառութիւն հաստոյ* (Յհ. իմ. երև., էջ 56), *բարձրութիւն աստուածութեան* (ն. տ., էջ 58), *բռնադատութիւն դժոխականու-թեան* (Յհ. իմ. առ., էջ 3), *գիտութիւն ճշմարտութեան* (Յհ. իմ. եկեղ., էջ 89), *գլուխ չարապաշտութեան* (Յհ. իմ. պառ., էջ 46), *դարձ գերութեան* (Յհ. իմ. եկեղ., էջ 97) և այլն:

Հանդիպում են բառին հաջորդող կամ տողամիջյան բառա-մեկնությունների օրինակներ. *աստուածաշնորհ*. «Քանզի և վար-ժապետ վեհագոյն ունէի յաստուծոյ պարզեալ ինձ, հայր միանգա-

մայն և հրահանգող հոգեկան վարժութեանց՝ զիմն Թեոդորոս, ըստ մերումս՝ *աստուածաշնորհ*, պատշաճեալ լեզուի» (Յհ. իմ. առ., էջ 2). *նաւակատիք*. «*նաւակատիք* ասի, այսինքն՝ նորոգումս» (Յհ. իմ. ընթերց., էջ 111)¹. *շարքաթ*. «Իսկ *շարքաթ* ըստ հանգս-տեան աղօթից խորհրդոյն կարգեալ է. վասն զի *շարքաթ*՝ հանգիստ ըստ երբայեցոց ձայնին է» (Յհ. իմ. եկեղ., էջ 89):

Իբրև հեղինակային խոսքի յուրահատկություն՝ համեմա-տությունների, փոխաբերությունների, թևավոր խոսքերի գործա-ծություն, որ պակաս բնորոշ չէ նաև իմաստասիրական-դավանա-բանական ոճի երկերին: Դրանք նկատելի են հունարան դպրոցի ավանդույթին հետևելու պարագայում, ընդ որում ոչ միայն մի բառի կամ տերմինի, ինչպես վերը նշեցինք, այլև նախադասության մա-կարդակում. «Ըստ նմին և դուք երկուցեալք յերկուցն ասել բնու-թեանց՝ ի Պանդորոսին փախուցեալ անկանիք յիմարութիւն» (Յհ. իմ. երև., էջ 63): «Մի՛ զմին ասելով՝ զբնութեանցն խցանել կամա-կորեսցուք զաղբերս, և մի՛ յասելոյ անտի զերկախումբն՝ պատա-ռել կամելով զմիաւորութեանն պատմունան» (ն. տ., էջ 65): «Եւ զայդ այդպէս ղաւղակատելով՝ Արիոսի եղեալ գտանիս չարա-պաշտութեանն զուգաձայն» (ն. տ., էջ 69): «Արդ զի՛արդ դու մոլո-րեցար՝ կամ ոչ իսկ ասել դէմ և առանձնաւորութիւն երեքանձնա-կան զօրութեանն, և կամ թէ ասել՝ չաչաչար ասել ընդ Լիբէացոյն ելանել սուր. փոխանակ երից դիմաց և առանձնաւորութեան՝ մի ասել դէմ և առանձնաւորութիւն» (ն. տ., էջ 79) և այլն:

Եզրակացություններ

1. Օձնեցու աստվածաբանական-փիլիսոփայական, դավանա-բանական երկերի լեզուն ամենից առաջ աչքի է ընկնում նորա-կազմ բառերի և տերմինների առատությամբ: Թեմատիկայի բազ-մազանությունը, բնականաբար, մեծ ասպարեզ է բառապաշարի հարցում հեղինակային նոր բառեր կազմելու համար:

¹ Սա օրինակ է բնագրային բառամեկնության:

2. Այլ հանգամանքներում մեր կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս մեծ մտածողի բառապաշարի հարստությունը, որը նախամիջին հայերենի անկապտելի մասն է: Ավանդական դասակարգմամբ՝ նախամիջին ենթաշրջանի հայերենի (գրավոր լեզվի՝ գրաբարի) բառապաշարը համալրվում է տերմինային նոր անվանումներով, պատճենումներով:

3. Պարզվում է, որ այդ երկերի լեզուն, այնուամենայնիվ, մնում է ոչ ամբողջովին ուսումնասիրված՝ անկախ այն հանգամանքից, որ հատկապես վերջին ժամանակներս կան այդ ուղղությանը կատարված աշխատանքներ:

4. Գրական հուշարձանների քանակային մեծությունն իսկ տպավորիչ է, դրանց լեզվի ուսումնասիրությունը լուծելի խնդիր է հայոց լեզվի ընդհանուր պատմության համար:

5. Այդ երկերի լեզվի բնագրագիտական քննությունը կարող է հիմք հանդիսանալ հեղինակի անունով հայտնի այլ գործերի իսկության պարզաբանման:

6. Հովհան Օձնեցին իր ժամանակի մշակույթի մեծություն է, հայոց լեզվի բառապաշարի և իմաստաբանության համալրման հեղինակ:

Նոր բառեր Զաքարիա Զազեցու «Ճառք»-ում

Ներածություն

Հայ գրավոր մշակույթը, թեկուզ ժամանակի մեջ ոչ այնքան արտաքին բարենպաստ պայմաններում, ունեցել է հարաճուն առաջընթաց: Այդ մշակույթը, միաժամանակ, ուսումնասիրվել է գիտության տարբեր բնագավառների մեջ: Բանասիրական գիտությանը այն հետաքրքրել է նաև լեզվի տեսանկյունից, հատկապես բառարանագրության ոլորտում:

Հայ հին և միջնադարյան մատենագրության լեզվի բառապաշարը այս կամ այն չափով եղել է տարբեր բնույթի բառարանագրության առարկա: Այսուհանդերձ, այն ոչ ամբողջովին է ներառված ներկայումս հայտնի բառարանների մեջ, որպիսով ավելի ամբողջական կլինեին հայ մշակույթի լեզվական, ինչպես նաև հոգևոր իմացության շատ կողմեր և մանրամասներ: Ուստի արդի հայերենագիտության կարևորագույն խնդիրներից է այդ մշակույթի հարաճուն ընթացքի արտացոլում հանդիսացող բառապաշարի լրիվ, ըստ ամենայնի բառարանագրումը, որն, ինչ խոսք, ունի նաև պատմամշակութային նշանակության: Նման ամբողջացման նյութ են պարունակում Զաքարիա կաթողիկոս Զազեցու ճառերը:

1. Հեղինակի և նրա գրական ժառանգության մասին

Զաքարիա կաթողիկոս Զազեցին VIII դ. 2-րդ կեսի հայ իրականության հեղինակավոր անձերից է: Նա իր հոգևոր ողջ գործունեության ընթացքում անդուլ պայքար է մղել մի կողմից՝ այլախոհության և այլադավանության դեմ՝ ի պաշտպանություն հայոց եկեղեցու անխափան իրավունքի, մյուս կողմից՝ արաբ գերիշխանության հանդեպ համոզական դիրք գրավելու, նաև բյուզանդական եկեղեցու քաղկեդոնական պարտադրանքին ընդդիմանալու առումով:

Ծանր ժամանակների անկոտրում կամքի տեր հայոց հայրապետը հաջորդեց խոհեմագույն կաթողիկոս Հովհաննես Դ Ովայեցուն, ստվերի պես հետևող դավանաբանական վեճերի մեջ եղավ Կ. Պոլսի Փոտ պատրիարքի հետ՝ հիմնականում նամակների ձևով, արդյունքում՝ հայտնի են երկուստեք գրված թղթերը (*Օրմանեսան*, 2001, 1109-1144. *Անանեսան*, 1992): Երանելի հայրապետը հրավիրում է Շիրակավանի հայտնի ժողովը (862 թ.) քանիտրորդ անգամ ապացուցելու հայոց դավանանքի հիմնավոր գիծը՝ իբրև պատասխան համառ և անհիմն «պնդումների»¹:

¹ Զաքարիա Ա Զազեցին և Հովհաննես Դ Ովայեցին Կոտայք գավառից են, որոնք կաթողիկոսական գավազան են ստացել ազգասեր հայորդի Սմբատ 204

Զաքարիա կաթողիկոս Ձագեցին հեղինակ է տարբեր բնույթի երկերի (մեկնություններ, ներբողյաններ և այլն), որոնցից, թերևս, ամենահայտնին քրիստոնեական տոներին և Սուրբ գրքի մեկնություններին վերաբերող Ճառերն են («Ճառք») (*Աճառյան*, 1971, 179-180): Ա. Հարությունյանը իրավամբ նկատում է, որ «Ճառերն աչքի են ընկնում լեզվատճական արժանիքներով, հռետորական գուսպ, ճաշակով ձևերի կիրառմամբ» (*Հարությունյան*, 2008, էջ 87):

«Ճառք»-ն ունի հարուստ բառապաշար՝ բազմաշերտ և բազմիմաստ, որոնք ոչ միայն սովորական և հայտնի, այլև նոր և իմաստով հաճախ տարբեր բառեր են:

ՆՀԲ-ն գրավոր աղբյուրների ցանկում նշում է միայն «Ճառք»-ը՝ Զքր. կթ. (որոշ օրինակներում՝ նաև՝ Զքր. կթ. խչ. // Զքր. կթ. թղմ. // Զքր. կթ. ծն. և այլն) համառոտագրությամբ՝ ընդ որում հատկանշական բնորոշմամբ: Հեղինակներն, ինչպես իրենք են գրում, իրենց ձեռքի տակ չեն ունեցել «Ճառք»-ի «առանձին մատեն», որ պարունակեր «ամենայն երկասիրութիւն մեծանուն անձին», ուստի բավարարվել են, թերևս, այդ երկի ձեռագրերից մեկնումեկով կամ մի քանիսով:

«Ճառք»-ի բառապաշարին Հ. Աճառյանն անդրադառնում է այնքանով, որքանով այն բառարանագրված է ՆՀԲ-ի էջերում, իսկ վերջին տարիներին գրաբարի բառապաշարի նոր բառերին վերաբերող բառարաններն այդ կարևոր երկի նյութին չեն անդրադարձել (*Աճառյան*, 1971, 38):

Վերջին ժամանակներս կազմվեց այդ երկի քննական բնագիրը՝ Վենետիկի, Վիեննայի, Երուսաղեմի և Երևանի մատենադարանների երկու տասնյակից ավելի ձեռագրերի հիման վրա, որպիսով այն այժմ ամբողջական է, ունի լավագույն առաջաբան և ծա-

նոթագրություններ, հիմնավոր նյութ է տալիս բանասիրական և բառագիտական-լեզվաբանական ուսումնասիրության համար (*հ. Պ. Անանյան*, 1955, 544. նույնի, 1955, 544):

«Ճառք»-ի բառապաշարը, ինչպես ամեն մի գրական երկի դեպքում, առանձնանում է մի քանի կողմով՝ ընդհանուր գործածության բառեր, հեղինակային նորակազմություններ, որոնք այդպիսին են համարվում հայերենի ընդհանուր բառապաշարի մեջ՝ որոշակի պայմանականությամբ, այսինքն՝ որքանով որ լեզվի բառապաշարի շտեմարան-բառարաններում բառարանագրված չեն, այլև բառեր, որոնք վկայվում են գուգահեռ այլ հեղինակներին, ունեն գրական նորմայից շեղումներ, ինչպես նաև հանդես են գալիս նոր իմաստով:

Ընդհանուր գործածության բառերից ուշագրավ են նրանք, որոնք, ըստ բառարանների տվյալների, թեև հանդիպում են նախորդ հեղինակների երկերում, սակայն նշվում են և՛ նախկինում, և՛ «Ճառք»-ում գործածված լինելը: Օր.՝ ՆՀԲ-ն ունի *այսօրածին* (< այսարածին) «այսօր ծնված, նորածին» բառը, որ հեղինակները գործածված են գտնում Կյուրեղ Երուսաղեմացու մեկնություններից մեկում, Ագաթանգեղոսի գրքում, այլև «Ճառք»-ում և հետագա հեղինակների կողմից, որ նշանակում է, թե այն, ըստ քրիստոնեական թեմատիկայի, հատկանշական է նաև Զաքարիա կաթողիկոսի այս երկի համար: Նաև՝ ՆՀԲ-ն ունի *արտաշիկանաւ* «հրակարմիր դառնալ՝ լինել», որ բերվում է նախ՝ «Ճառք»-ից երկու օրինակ (նշենք նաև մեկ ուրիշը՝ «Ոսկի և արծաթ ընդ միմեանս խառնեալ եւ ի հուր անկեալ՝ եւ ի հրոյ *արտաշիկանան*», էջ 321), այնուհետև երկու այլ վկայություն՝ Տօնակ. (= «Տոնական մատյան») և Փիլ. (= Փիլոն Եբրայեցի) և այլն:

Ըստ այդմ՝ «Ճառք»-ի բառապաշարի յուրահատուկ բառերը մենք այստեղ ներկայացնում ենք առանձին-առանձին խմբավորմամբ, ընդ որում դրանցից մի քանիսը բերում ենք բառի բացատրությամբ և բնագրային օրինակով, մյուսները թվարկում ենք բառի-

Բագրատունու առաջարկությամբ՝ ի շահ հայոց եկեղեցու ամրության և կայունության, հայոց միասնության, ընդդեմ ժամանակի այլագրիների հարուցած անասելի չարության, նաև քաղկեդոնական գրապարտանքի:

մաստի և քննական բնագրի համապատասխան էջի (կամ էջերի) նշումով:

1. Բառեր, որոնք չկան ՆՀԲ-ում

Մենք առանձնացնում ենք հարյուրից ավելի նման բառեր, որոնք, ինչ խոսք, մեր հին լեզվի բառապաշարի անկապտելի մասն են, համալրում են հայերենի պատմական բառարանը, այսինքն՝ լրացնում գրաբարի ամենաձավալուն բառարանի՝ ՆՀԲ-ի շտեմարանը (իր հեռանկարի մեջ):

Ըստ խոսքիմասային բնույթի առանձնացվող բառերը, իրենց հերթին, բաժանվում են մի քանի ենթախմբի:

ա) Գոյականներ. սրանք, ի համեմատություն ածականների, առավել ևս բայերի, քիչ են: Օր.՝ *զարդափայլություն* «զարդերով՝ զարդարանքով փայլելը». «Եւ գիոյակապ եւ սքանչելի *զարդափայլութիւն* սուրբ և անարատ Կուսին» (ԶԶագ., էջ 429): *Հինատուրցն* (< հին ատուրք) «հին օրերին՝ սկզբնապես». «*Հինատուրցն* մանկանայ, սերովբէիցն թագաւոր աստեղբ գուշակեալ լինի եւ ի մոգուց պատարագեալ երկրպագի» (ԶԶագ., էջ 5)¹: *Տոհմացեղ* «տարբեր տոհմեր՝ ցեղեր». «Եւ բազմանալ յիրաքանչիւր *ի տոհմացեղս* ազգաց իրաքանչիւրոց ի վերայ երկրի» (էջ 144) և այլն:

Այդպիսին են նաև հետևյալ բառերը. *անձնապարծություն* «գոռոզանալը. անձնովի պարծենալը» (էջ 135), *սուստագործություն* «առատ գործելը՝ ստեղծելը» (էջ 147), *բաղբաղողություն* «անկարգ խոսելը՝ բլբլոց» (էջ 205), *ըմպություն* «ըմպելը» (էջ 305), *խմբատրություն* «խմբովին լինելը. խմբվածություն» (էջ 141), *ձեռագծագրություն* «ձեռքով կատարվածը՝ նշված լինելը» (էջ 419), *մանրաստղ* (< մանրաստեղք) «ոչ մեծ աստղ» (էջ 186), *նուագերգակ* «նվագող. նվագածու» (էջ 117), *շարապատմություն* «կից պատմություն. ավետարան» (էջ 384), *շրջասրահ* «ճեմասրահ. շրջելու տեղ» (էջ 248),

սայլաթափ «(աստղաբույլ) լուծք, կշեռք» (էջ 185, 283), *վայրիջումն* «վայր իջնելը. ներքև գալը» (էջ 380), *փրկչապետ* «Փրկիչ. Հիսուս» (էջ 246) և այլն:

բ) Ածականներ. սրանք մեկ-երկու դեպքում համապատասխան ածանցով կազմություններ են, իսկ մեծ մասամբ ներկայանում են իբրև բարդություն, որի երկրորդ բաղադրիչը բայարմատ է. *անձնապարծ* «ինքնագոհ. սնապարծ. «Կամեցան զնա որպէս սնափառ եւ *զանձնապարծ* յանդիմանել առաջի բազմութեան» (էջ 130): «Եւ կշտամբէր ցնոսա *անձնապարծ* եւ անձնահաճոյ զխորամանկութիւնն» (էջ 138): *Գերասպանձնաձեւ* «գերապանձ ձևով». «Բարեբանեալ եւ *գերասպանձնաձեւ* արփիափայլ քառաթեւ աստուածընկալ սուրբ նշան» (էջ 510): *Թզենական* «թզենուն հատուկ. թզենու». «Զոր ի մերկանալ լուսազարդ փառացն զգեցաւ սաղարթապարտ լինելով *թզենական* տերեւովն» (էջ 275): *Հրաշափառակից* «Տիրոջ հրաշալի փառքին կից». «Եւ ի մտաց կատարելով *հրաշափառակից* Սուրբ Հոգույն» (էջ 285): *Տրամահրաշ* «ինքնին հրաշալի». «Եւ գլիշատակս *տրամահրաշ* յարութեան նորա տաւնախմբէ եկեղեցի» (էջ 456) և այլն:

Այդպիսին են նաև հետևյալ բառերը. *ամենայոզնադիմի* «ամենից շատ տարածն՝ այլակերպ» (էջ 432), *ամենասուստանատր* «ամենից տաժանելի. անտանելի» (էջ 454), *անիծադիր* «անեծքի տակ դրված» (էջ 95), *սուաշապատում* «վերը ասված՝ պատմված» (էջ 479), *աստեղակերպ* «աստղաձև» (էջ 358)¹, *աստուածագոչ* «աստծուն կանչող՝ դիմող» (էջ 346), *արփիատես* «արեգակնատես» (էջ 137), *աւագադիր* «ավագով լցված» (էջ 144), *բազմադժուարակոխ* (ճանապարհ) «շատ դժվար անցանելի» (էջ 297), *բարձրալոր* «բարձրաձայն» (էջ 446), *գաւագանսահար* (վէմ) «գավագանով հարված ստացած» (էջ 237), *գետնարնակ* (մարդիկ) «գետնին ապրող.

¹ Քննական բնագրում բերվում է միասին, որպիսին չի տալիս ՆՀԲ-ն, թերևս դիտելով իբրև բառակապակցություն՝ *հին ատուրցն* (= այն հին օրերի): Հետագա օրինակներում կից նշում ենք միայն էջը:

¹ ՆՀԲ-ն ունի *աստղակերպ*, որ հանդիպում է «Ճառընտիր»-ներում, իսկ Ջագեցին, որ ավելի ուշ հեղինակ է, բառն օգտագործում է ավելի հին՝ սեռական հոլովի ձևի հիմքով կազմությունը:

հասարակ» (էջ 344), *դաժանասդեղ* (ըմպութիւն) «ոչ առողջարար՝ մահադեղ» (էջ 305), *երկակենցադիկ* «ցամաքում և ջրում ապրելու ունակ» (էջ 216)¹, *երկրաբնակ* (ազգ մարդկան) «երկրի վրայի» (էջ 455), *զգուշացուցական* (վառուան) «խրատական» (էջ 149), *ծանրաբարբառ* «ծանր՝ անհաճո ձևով խոսող» (էջ 346), *կանաչական* (վալելչութիւն) «կանաչ, փարթամ» (էջ 120), *համալաստակ* «գործակից միասին աշխատած» (էջ 410), *ճառագայթափակ* «ճառագայթաձև փակված» (էջ 456), *յաւերժաճիգ* «հավերժ գնացող՝ ձգվող (չորս գետերի մեջ), *յոզնածան* «բազմակի ճանաչելի» (էջ 118), *նախախողխող* «ամենաառաջինը խողխողված» (էջ 118), *նախիմաստ* «առաջին իմաստն ունեցող» (էջ 453), *նուաստագին* «աննշան գին ունեցող» (էջ 59), *նուաստահեծ* «աննշան հենարան ունեցող» (էջ 346), *պտղագարդոյց* «պտղակալած» (էջ 420), *վաղաքաջն* «վաղուց և եթ քաջ» (էջ 116), *վայելչատես* «գեղեցկատես» (էջ 96), *տրամափայլ* «ինքնին փայլուն» (էջ 358) և այլն:

գ) Բայեր, ընդ որում պարզ կամ հարադրական կազմութեամբ. վերջինները, բնականաբար, քիչ են հանդիպում: Այսպես, *ամօթադրեալ* (< ամաթադնեմ) «ամոթանք տալ. հանդիմանել». «Եւ այնպէս *ամաթադրեալ* պապանձեցոյց զփարիսեցիսն» (էջ 137): *Առաջարկել* «առաջ բերել. մեջ բերել». «Եւ եկեալ յԵրուսաղէմ *առաջարկէ* տիեզերակեցոյց եւ փրկագործ չարչարանացն (էջ 345-346)²: *Հրատանալ* «բոցավառվել». «Ի քուրայ մտանէ *հրատացեալ* ճառագայթիք» (էջ 59): *Պատշաճահորդել* «պատշաճ ձևով առաջանալ». «Եւ *պատշաճահորդի* ճանապարհ մտից անշարժ յուսոյն» (էջ 419) և այլն:

Այդպիսին են նաև հետևյալ բառերը. *աննահագործիլ* «անմահ՝ հավերժական գործ կատարել» (էջ 137), *սուզաստանալ* «ծածկվել, քողարկվել» (էջ 359), *սուզագրեալ* «վերը գրված՝ աս-

ված» (էջ 171), *արտաբաժանեալ* (< արտաբաժանեմ) «զատորոշել» (էջ 142), *արտազերծեմ* «դուրս հանել՝ զատել» (էջ 246), *արտակացեալ* «դուրս մնացած» (էջ 143), *արտանցանեմ* «զատվել, բաժանվել» (էջ 98), *բացատեսանեմ* «տեսանելի լինել» (էջ 141), *բացափարիմ* «ապաքինվել՝ բուժվել» (էջ 419), *գիշերակոխի (լինել)* «տարածամ կոխվ» (էջ 457), *զուգրնթացեալ* (< զուգրնթանամ) «կից՝ զուգահեռ գնալ» (էջ 185)¹, *ընթերադրեմ* «կից դնել. զուգադրել» (էջ 102), *համածնեալ* (< համածնանիմ) «միասին ծնված» (էջ 118), *հրաշափառագործեմ* «հրաշափառ՝ վերմարդկային գործ անել» (էջ 423), *մաքրափայլեալ* (< մաքրափայլեմ) «մաքրությամբ փայլել» (էջ 418), *նուագարանեմ* «նվագարկել. նվագել» (էջ 411), *պայմանադրեալ* (< պայմանադնել) «պայման դնել» (էջ 240), *սահմանադրեմ* «սահման դնել» (էջ 208), *ստորաբղիսեալ* (< ստորաբղիսել) «ներքուստ բխել» (էջ 61), *ստորընկենուլ* «ցած գցել» (էջ 427), *սրբափայլեալ* (< սրբափայլել) «սրբորեն փայլել» (էջ 449), *ստուերամթացուցանեմ* «ստվերի տակ առնելով մթնեցնել» (էջ 346), *վերածնանել* «վերածնել» (էջ 54), *վերապարգեւել* «վերստին պարգևել՝ նվիրաբերել» (էջ 384), *վերընկալեալ* (< վերընկալուլ. ընկալուլ, ավելի հետին՝ ընկալնուլ) «վերստին ընդունել» (էջ 450), *տարահալած (լինել)* «հեռացված լինել» (էջ 57) և այլն;

դ) Մակբայներ. *արժանատրաբար* «արժանիորեն» (478), *բացերեակաբար* «բացահայտ, բացահայտորեն» (էջ 147), *բոլորամասնաբար* «ամբողջովին» (էջ 230) և այլն:

2. Բառեր, որոնք ՆՀԲ-ն ունի միայն Զաքարիա կաթողիկոսի վկայմամբ

Նման վկայությունները ևս, բնականաբար, պայմանականորեն պիտի դիտվեն հեղինակային նորակազմություն, քանի որ բառարանագրման համար հիմք հանդիսացած գրական այլ հուշարձաններում դրանք չեն հանդիպում: Ըստ այդմ՝ բառարանային

¹ ՆՀԲ-ն ունի՝ *երկակենցադ, երկակենցիկ*՝ նախնական վկայություններով:
² ՆՀԲ-ն ունի միայն *առաջարկ, առաջարկեալ, առաջարկույթիւն*, նաև *առաջի առնել*՝ ածել, դնել՝ արկանել և այլն:

¹ ՆՀԲ-ն ունի՝ *զուգրնթաց, զուգրնթացումն*:
210

միավոր է դառնում հեղինակային բնագրի եզակի գործածությունը, և դա լեզվի բառապաշարի հարստացման բացառիկ (էքսկլյուզիվ) իրողություն է:

Այսպես, *անպարփակելի* «չըջափակված» (հմմտ. նաև «անպարփակ թագաոր»)։ «*Անպարփակելի* յանպարփակելոյն» (էջ 2), «*Անպարփակելի* աստուած» (էջ 39)¹: *Համակայ* «որ միասին կա. որպէս մարդկութիւնն Քրիստոսի ընդ աստուածութեան նորա»։ «Անդուստ յորովայնէ միանայ բնութեամբ՝ ըստ *համակային* աճմամբ մարմնոյ, ի զարգացումն տիոց եկեալ (էջ 4): *Մեռելաշունչ* «մահով մարմնից բաժանելի. մահկանացու»։ «Ոչ ի միասին մարմնոյ եւ ոչ ի միասին հոգւոյ, այլ *մեռելաշունչ* մարդոց տիրեալ» (էջ 1-2), «Տիրել ի վերայ *մեռելաշունչ* մարդկան» (էջ 271): *Վաղակարծ* «հանկարծակի. ավելի վաղ, քան սպասելի էր»։ «Եւ *վաղակարծ* հասեալ ժամանէ նոցա չքաւորութիւն, որպէս չարուղեկից կամ արագ սուրհանդակ» (էջ 2) և այլն:

Սրանք ևս ըստ խոսքիմասային բնույթի մի քանի տեսակ են: Հատկանշական է, որ ածականների կազմությունն ավելին է, քան մյուսներինը:

ա) Գոյականներ. *աւանդագիտութիւն* «նախնի ավանդին հետևելը՝ իմանալը» (էջ 18), *զատկաշարքաթ* «Ավագ շարքաթ յոր օրը» (էջ 107), *խանձարրապատութիւն* «խանձարուրով փաթաթված՝ պատված, խանձարուրի մեջ լինելը» (էջ 308), *խաւարակենցաղ* «մեղսալից. խավար կյանք» (էջ 15), *խորհրդառութիւն* «խորհրդածություն» (էջ 140, 148), *սեռութիւն* «ազգ. նույնասեռ լինելը» (էջ 9) և այլն:

բ) Ածականներ. *աղտեղածուի* «կեղտի մեջ ծփացող. աղտեղի բաներով զբաղվող» (էջ 221), *այժմածին* (մանուկ) «նորածին» (էջ 9, 23), *անարուեստաշէն* «ոչ մարդկային արվեստով շինված» (էջ 478), *անդնդաբնակ* «խորքում՝ անդունդում բնակվող» (էջ 6), *անի-*

ծաղրական «անիծված» (էջ 512), *անմահագործ* «անմահացնող» (էջ 497), *անորոճ* «չորոճացող. ոչ որոճող (կենդանի)» (էջ 14), *առակապատում* «առակախոս» (էջ 385), *արարչատիպ* «աստվածակերպ» (էջ 251), *արփաճանանչ* «արևաշող» (էջ 23)¹, *բանաշուրջ* «խոսքից հետ կանգնող» (էջ 64), *բողոքամասն* «ամբողջական» (էջ 7, 22), *դասանանդական* «մահառիթ. պատիր. մատնողական» (էջ 54), *երկիրաբեկ* «ահաբեկ» (էջ 289), *զարդափայլ* «զարդերով փայլող» (էջ 494), *զուարճատեսիլ* «զվարճալի» (էջ 494), *ինոյական* (կերպ) «իմ՝ ինձ նման» (էջ 300), *ինքնախորժ* «ինքնահոժար. հոժարական» (էջ 256), *խորհրդափոխ* «հեղհեղուկ մտովի» (էջ 264), *ծարաւահիւծ* «ծարավից հյուծված» (էջ 99), *կարկնածն* «կարկինով շրջագծված» (էջ 6), *համափոթիթ* «ամբողջովին բացված» (էջ 495), *հարսնախաւս* «հարս ուզող, փեսավեր» (էջ 380), *մարդանախանձ* «մարդուն նախանձող՝ սատանա» (էջ 15), *ողջահաւատ* «ողջամիտ, հավատքի մեջ ամուր» (էջ 168), *պանարական* «անասնակերպ. անասունի նման» (էջ 78, 420), *պատաւորդի* «պատավի որդի. ամլորդի» (էջ 327), *պատշաճողական* «պատշաճ» (էջ 211), *ստուերախայած* «ստվերը վանող՝ փարատող» (էջ 76), *սրափողոտ* «սրով սպանված» (էջ 507), *վիշապապատիր* «վիշապից՝ օձից թունավորված» (էջ 296), *վրանանման* «վրանաձև» (էջ 113), *տիեզերասփիւռ* «տիեզերքով մեկ փոված» (էջ 6), *տկարաձայն* «ցածրաձայն. նվաղ ձայնով» (էջ 502), *քառաստարեան* «չորս տարրերից բաղկացած» էջ 503) և այլն:

գ) Բայեր. *առշեղեալ* (< առշեղել) «մի կողմի վրա թեքել» (էջ 18), *արտաբանալ* «դուրս հանել. պատռել» (էջ 64), *արտագործեմ* «անել. ներգործել» (էջ 97, 428), *արտակարգեմ* «առանձնացնել» (էջ 178), *արտասփռել* «դուրս սփռել, ծավալել» (էջ 27), *արփիափայլել* «պայծառանալ» (էջ 26), *բացալքեալ* (< *բացալքեմ* // *բացալքանեմ*) «անտեսել, թողնել» (էջ 442), *զուգապարիլ* «պարի ընկեր

¹ ՆՀԲ-ն *անպարփակելի* ձևին զուգահեռ տալիս հեղինակի մյուսս՝ *անպարփակ* ձևը:

¹ ՆՀԲ-ն ևս ունի *արփաճանանչ* հղելով տե՛ս *արփիաճանանչ* (Նար. = Նարեկացի):

լինել» (էջ 97), *խմբագործեմ* «համախմբել» (էջ 301), *խորհրդաբանեմ* «խորհուրդ անել» (էջ 204), *ծնատարակ (տոնեմ)* «ծնոտը պատռել՝ ճղատել» (էջ 15), *ծովաբաժին (լինեմ)* «ծովը պատռել՝ բաժանել» (էջ 229), *հարցապատիր (տոնեմ)* «հարցումով կեղծել» (էջ 302), *հերձանահ (տոնեմ)* «ջրախեղդ անել» (էջ 56), *հրամանադրեմ* «հրամայել» (էջ 12), *մակասպիռել* «վրան փռել» (էջ 26), *որդիագործել* «որդեգրել, որդի դառնալ» (էջ 389), *պատմունճանաստիս (տոնեմ)* «զգեստավորել» (էջ 179), *ստորաջնջել* «իսպառ ջնջել» (էջ 419), *վերահահի* «կամովին հանձն առնել» (էջ 22), *վերանկատել* «հայացքը երկինքն ուղղել» (էջ 247, 393, 422), *տանարագործել* «տանար մաքրագործել» (էջ 138, 221), *փայլակերպեմ* «պայծառացնել» (էջ 77), *քաղաքակցիմ* «քաղաքացի լինել՝ գրվել» (էջ 333), *քանակատրիմ* «քանակ կազմել՝ լինել» (էջ 7) և այլն:

3. Բառեր, որոնք ՆՀԲ-ն բերում է նախ Զաքարիա կաթողիկոսի, այնուհետև հետագա հեղինակ(ներ)ի վկայմամբ

Դրանք նույնպես հեղինակի բառապաշարի մի յուրահատուկ մասն են: Այսպես, *աներք* «անժամանակ. հավիտենական». «Քանզի որ էրն ի կերպի Աստուծոյ եւ նկարագիր հար... *աներք աներքէ*» («որդի ի հորէ». էջ 2): *Խանճարրապատ* «խանճարուրով փաթաթված՝ պատված. խանճարուրի մեջ». «*Խանճարրապատ* տղայնայ այսարածին, որ յանմատոյց լուսոյ ծածկեալ ընդ Հար եւ սուրբ Հոգւոյն» (էջ 5): *Քանակատր* «չափավոր, չափելի». «Ժամանակական բերմամբ առլցեալ, *քանակատր* ձեռով ըստ հասարակաց բնութեան մարդկան խառնի անճառաբար յանբաւ էակից Հար Բանն» (էջ 4) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ բառերը, որոնք ևս կարելի է առանձնացնել ըստ խոսքիմասային բնույթի. դրանցում ևս քանակապես շատ են ածականները:

ա) Գոյականներ. *սոսասցութիւն* «խոսք, ճառ. ասված (բան)» (էջ 312), *սոճայնութիւն* «(մարգարենների) խոսք» (էջ 1, 122), *դիմամարտ* «դեմ առ դեմ կռիվ» (էջ 12) և այլն:

բ) Ածականներ. *ամեներջանիկ* «ըստ ամենայնի երջանիկ. բարեբախտ» (էջ 423), *անդրանկածախ* «եզիպտացիների առաջնեկներին կոտորող» (էջ 255), *սոսջնաստեղծ* «նախաստեղծ» (էջ 104, 285), *աստղանման* «աստղի պես. պայծառ» (էջ 19), *աստուածակոխ* «աստծուց ոտնակոխ եղած» (էջ 341), *արփիագեղ* «հրաշագեղ. գեղեցկությամբ փայլող» (էջ 350), *դիւագունդ* «դևակուտակ՝ դևերի նման խմբված» (էջ 56), *եղեմածին* «դրախտածին» (էջ 449), *ծովաչու* (գնացք) «ծովի վրայով գնացող» (էջ 256), *կամարակերպ* «կամարածն» (էջ 113), *ձորճապատ* «ձորձով՝ ցնցոտիով պատված» (էջ 308), *սքաչելափառ* «հրաշափառ (էջ 69), *վայելչագարդ* «վայելույ, գեղեցկացած» (էջ 222), *քառարած* «չորս մասի բաժանված՝ բաշխված» (388), *քառակերպեան* «չորս կերպ՝ կերպարանք ունեցող. քառակերպ» (էջ 448) և այլն:

գ) Բայեր. *անյայտանամ* «անհայտ լինել» (էջ 495), *արտերեւիլ* «տեսանելի լինել» (էջ 143), *թեապարեմ* «թևատարած պարել. վերաթևել» (էջ 480), *մաքրագործեմ* «մաքուր՝ սուրբ անել՝ դարձնել» (էջ 345, 503), *շարապատեմ* «շուրջբոլորով պատել» (էջ 365, 438, 439), *ստորահոսել* «ցած՝ ներքև հոսել» (էջ 420), *վերահանգչիլ* «վերևը նստել՝ բազմել» (էջ 93), *վերադադակել* «դեպի վեր ձայնել. վերագոչել» (էջ 312), *վերամաքրել* «վերստին՝ նորից մաքրել» (էջ 61), *վերապատմել* «վերստին՝ նորից պատմել. քարոզել» (էջ 350), *քառակերպեալ* «քառաթև՝ չորեքկողմյան լինել» (էջ 448) և այլն:

4. Բառեր, որոնք բերվում են հետագա հեղինակ(ներ)ի և Զաքարիա կաթողիկոսի վկայմամբ

Կան նման մի քանի բառեր. օր.՝ *անուր* «անուրեք, անուստեք». «Քանզի որ էրն ի կերպի Աստուծոյ եւ նկարագիր հար... *անուր յանուրէ*» («աստուած յաստուծոյ» (էջ 2)¹: *Հակառակամարտու-*

¹ ՆՀԲ-ն ունի վկայություն նախ՝ Ծնորհալուց, մեկ ուրիշից, այնուհետև «Ճառք»ից, իսկ վերջում՝ «Գանձք կամ քարոզք» վերտառությամբ, եկեղեցական երգերի ժողովածուներից, որոնք հետագայի են:

թին «հակառակություն. կռիվ». «Ամենայն աղմուկ և *հակառակամարտութիւն*» (էջ 126, 453),

Այսպէս նաև՝ *երկրաւորական* «երկրային, երկրավոր՝ հողեղեն» (էջ 312), *կիզանողական* «կիզիչ» (էջ 429), *հերձանեմ* («որ և հերձնում», զուգահեռ՝ հերձեմ) «զատել, հեռացնել, ճեղքել» (էջ 55), *մեղսաճաշակ* «մեղքի օրինակ տվող» (էջ 64), *վերաստեւեմ* «նախօրոք տեսնել, նախատեսել» (էջ 158) և այլն:

5. Բառեր, որոնք ՆՀԲ-ն բերում է այլ, նաև հետագա հեղինակների, ոչ Զաքարիա կաթողիկոսի վկայմամբ

Բանասիրության մեջ, ի դեպ, ընդունված է այն, թե ՆՀԲ-ի հեղինակները վկայությունների մեջ առաջնությունը սովորաբար տվել են բառի բուն իմաստին, որը, կարծում ենք, այնքան էլ հիմնավոր չէ, ուստի նաև ոչ համոզիչ: Եթե նույնիսկ առանձին դեպքերում դա արդարացվում է, այնուամենայնիվ կարևորը բառի գործածության մեջ ժամանակի գործոնն է, մանավանդ բառապաշարի պատմության տեսանկյունից¹: Այսպէս, նկատի ունենալով ասվածը՝ նշենք հետևյալ բառերը՝ ըստ խոսքի մասերի հատկանիշի:

ա) Գոյականներ. *երգաբանութիւն* «հիմներգ» (էջ 390, 411), *նորածնութիւն* «վերածնություն» (էջ 85) և այլն:

բ) Ածականներ. *ազդողական* (ոչ որպէս տերմին) «ազդու» (էջ 39), *աղօտական* (տեսիլ) «աղոտ. ոչ վառ» (էջ 422), *անսահմանելի* «չափից ավելի. անսահման» (էջ 3), *գերաւբարձ* «գերակա, գերագույն. ամենավերին» (էջ 79), *եռաթիւ* «եռյակ թվով. երեկ չէ մյուս օր» (էջ 425), *կենսածիր* «կենսալից. առողջարար» (էջ 115), *տիեզերասպատիր* «ամեն ինչ կեղծող՝ խաբող» (էջ 151, 160) և այլն:

գ) Բայեր. *ներսիսկել* «շրջափակել» (էջ 449), *ջահագարդել* «պայծառանալ, պայծառացնել» (էջ 432), *վերանորոգել* «վերստին նորոգել» (էջ 77) և այլն:

¹ Ստորև բերվող բառերի մի զգալի մասը ՆՀԲ-ն տալիս է ըստ Գրիգոր Նարեկացու:

դ) Մակբայ. *անկիզաբար* «առանց այրվելու, անկեզ» (էջ 425), *բովանդակաբար* «ամբողջապէս, ամբողջովին» (էջ 423):

6. Ժամանակի գրական նորմայից շեղվող ձևեր

«Ճառք»-ի քննական բնագրում, որքան էլ ժամանակի առումով կարող է տարակուսելի լինել, հանդիպում են գրական նորմային չհամապատասխանող ձևերի գործածություններ, որոնք ոչ այլ ինչ են, քան խոսակցական, եթե ոչ բարբառային տարբերակից գրականին անցած իրողություններ: Նման ձևերը, եթե, իրոք, այդպիսին են և ոչ թե որոշ դեպքերում բնագրի տպագրական վրիպակներ (*lapsus calami*), վկայում են ժամանակի լեզվի տարբերակվածության մասին:

Հայերենում նման իրողությունների ըստ ամենայնի ուսումնասիրությունը հետագային է վերաբերում, այստեղ նշենք դրանցից մի քանիսը. *գումբեթաձև* (փխ. գմբեթաձև) «գմբեթի ձև ունեցող». «Եւ կամ որպէս խորան *գումբեթաձեւ* եւ կամարակապ» (էջ 113), նաև՝ *գումբեթացեալ* «գմբեթի վերածված» (էջ 142)¹, *թիատրոն* (փխ. թէատրոն) «թատրոն. հանդիսություն» (էջ 168), *իննուսուն* (փխ. իննսուն). «Ի սովոյ սատակեցան եւ *իննուսուն* հազար վաճառակուր եղեն» (էջ 159), *խեղթենամ* (< խեղթեցար) «խեղդվել» (փխ. դով, այլն՝ *խեղդնում*, հղում՝ Մագիստրոս), «Եւ նեղասրտեալ ի չարին տրտմութենէն չոգար *խեղթեցար*, եւ ուռուցեալ հերձար ընդ մէջդ, եւ հեղաւ յերկիր մթերք որովայնի քո» (էջ 264), *խոզերոյն* «այն խոզերին». «Նոյնպէս եւ գտեարսն *խոզերոյն* գերգեսացոցն, զոր դեւքն ծովահեղձ արարին» (էջ 122)², *խորշոր* («թերևս») խորշելի». «Նոյնպէս եւ սա բնակէր յանապատին *խորշոր* եւ անվայելուչ կենաւքն» (էջ 39. *կայճ* (փխ. կոճ). «կոճ, վեզ». «Իբրև ծիր կաթին, երեւեալ իբրև *զկայճ* շրջաբերի, զոր մանկտիդ ի խաղումս վարեն»

¹ ՆՀԲ-ն ունի *գմբեթ*՝ նշելով «գրի և իբր ռամկորեն գումբեթ», ունի նաև *գմբեթաձև*, որի համար ի թիվս այլ վկայությունների (<Նովիան Օձնեցի, «Ճառքնոր» և այլք), բերում է նաև Զագեցու այս ձևը:

² Տարակուսելի է, որովհետև կարող է նոր տպագրական վրիպակ լինել, իսկ եթե ոչ, ապա օրինակը բացառիկ նմուշ է:

(էջ 186), *կուս(ւ)* (երկնից) «կամար» (?). «Որկան ի մէջ ի ծիր եւ ի *կուսն* երկնից» (էջ 185), «Որ կան ի մէջ ի ծիր եւ ի *կուսն* երկնից, փոքր-ինչ վերամբարձ, քան զսայլաթափոյ» (ս. տ.)¹, *հնձան* (փխ. ձ-ով) «հնձան». «...եւ զեղան *հնձանք* մեր եւ գուրք, եւ ամանք...» (էջ 420), *ճաղխճաղխի(ք)* «խոնավություն. թացություն». «Բազում *ճաղխճաղխիս* եւ հեղումն արեան գործեն առ հակառակամարտս» (էջ 266)², *մխղճել* «(թերևս) մխրճել. խրել». «Եղիցին ամենայն որ ծածկին ի յաւազանն մկրտութեան՝ *մխղճեալ* ի ջուրն» (էջ 57), *ուղաւորել* (փխ. եւ-ով) «առաջնորդել», «Ծովաբաժին լինելով ընդ խորս Կարմիր ծովուն՝ *ուղաւորէր* յերկիրն խոստացեալ» (էջ 229), *շուրջակայք* (փխ. առանց ու-ի) «շուրջը. շուրջբոլորը». «Եւ ծանեան զնոսա ի խաւսիցն *շուրջակայքն* եւ ասեն» (էջ 247), *սունցեալ* (փխ. ձ-ով) «սոսնճել». «Քանզի ոչ կարէին զգմեալ եւ *զսունցեալ* պատանադ մածեալ ընդ մարմինն եղեալ... մաքուր եւ սպիտակ գերծանել» (էջ 368), *սունչանսամ* «ջրի խիստ կարիք զգալ». «Քանզի կարատեալ հազի եւ *սունչացեալ* ջրոյ» (էջ 179)³ :

7. Բառեր, որոնք «Ճառք»-ում կիրառվում են այլ իմաստով

Նման բառերի քննությունը, առհասարակ, պահանջում է ավելի մանրամասն մոտեցում: Այդուհանդերձ, կան նման գործածության որոշ օրինակներ, որոնք պահանջում են ճիշտ բացատրություն:

¹ Հայ. (բրբռ) *կոս* «թասի նման փայտե փոքր շրջանակ, որ կանայք դնում են գլխին և վրայից իջեցնում շղարշը» (Արարատյան, Նոր Ջուղա); Ենթադրելի է, որ «Ճառք»-ում այս բառը, իբրև հեղինակի լեզվի (Արարատյան բարբառի Կոտայքի տարածքի) բառ գործածվեր «երկնքի կամար՝ երկնակամար» իմաստով (արմատի ձայնավորի ոչ միջին, այլ վերին բարձրացման արտասանությամբ՝ *n > m*, *կոս* - *կուս*):

² ՆՀԲ-ն ունի՝ *ճախճախտոս* «շատ խոնավ տեղ՝ ճահճուտ»:

³ Սա գրական *սունգամ* «ծնկի գալով ճիգ անել՝ ջրի ծարավից և այլն» բայն է, որ այս դեպքում գործածված է, թերևս, ժամանակի խոսակցականից եկող ձևով (*զ/չ* տարբերակում): Հմտ. քննական բնագրի «Առաջաբան»-ը՝ էջ ԽԵ:

Աստղագիտութիւն բառը ՆՀԲ-ում բերվում է երկու ձևով՝ բաղադրված կա՛մ սեռականի, կա՛մ ուղղականի (*աստեղ- // աստղ-*) հիմքով, ընդ որում մի դեպքում՝ «աստղագիտություն» («գիտությունն աստղերի մասին», հուն. *άστρονομία*, լատ. *astronomia*), իսկ մյուս դեպքում՝ «աստղաբաշխություն» («գուշակություն աստղերի միջոցով, ախտաբք», հուն. *άστρολογία*, լատ. *astrologia*) իմաստով, որոնք ունեն նախնական գործածություններ, «Ճառք»-ում բերվում է երկրորդ իմաստով, իբրև *աստղ-* բաղադրիչով կազմություն. «Այս աստղագիտութեան եւ *աստղագիտութեան* սպասեալ մնային մոգքն» (էջ 18):

Աստուածաշարչար բառը բերվում է «տիրոջը չարչարող՝ հավատ չընծայող (ինչպես Եվտիքես և Արիոս)» իմաստով. «Ո՛չ եմք աստուածաշարչար որպէս ամբարիշտն Ետիքէս» (էջ 341),

Գործական բառը ՆՀԲ-ում չունի այն իմաստով կիրառություն, որ հանդիպում է «Ճառք»-ում, այն է՝ «գործիք. նվագելու միջոց՝ հարմարանք». «Զգենու զմեր բնութիւնս, որ ի Հարէ անժամանակ Բանն Աստուած, որպէս նուագերգակն *գործականան* վարի յերաժշտականութիւն» (էջ 117):

Թեւարկութիւն բառը ՆՀԲ-ում բերվում է երկու իմաստով՝ «որպէս շարժում թեւոց» և «որպէս հովանաւորութիւն». երկրորդ իմաստի համար նշվում է համեմատաբար ուշ շրջանի վկայություն, իսկ առաջինի համար՝ միայն «Ճառք»-ում գործածվածը. «Եւ կամ երամք կաքաւաց ի շառաչմանէ *թեւարկութեան* արծուոց» (էջ 324):

Ժամագիտ բառը, որն բնագրային կիրառության մեջ ածական է կամ գոյական, ՆՀԲ-ում բերվում է երկու իմաստով՝ «գտող կամ միջոց գտանելոյ զժամն ըստ աստեղագիտաց. դիտեալ վայր աստեղատանց յաւուրս հասարակածի» և «առժամն ըստ բախտի գտեալ. դիպվածական». երկրորդի համար նշվում է ուշ վկայություն, իսկ առաջինի համար՝ միայն «Ճառք»-ում գործածվածը. «Սր-

տանցանէ ի նպատակ *ժամագիտին*, և ընթացեալ ժամանէ ի կէտ երկնամիջակն, և զաշխարհս ջահաւորեալ լուսաւորէ» (էջ 98)¹:

Մաքրական բառը ՆՀԲ-ում բերվում է երկու իմաստով՝ «մաքուր, սուրբ, սրբական, նվիրական» և «մաքրող, մաքրողական»։ այս երկրորդի համար նշվում են նախնական օրինակներ («Յանախապատում ճառք» և այլն), իսկ առաջին իմաստի համար բերվում է հետին վկայություն (Նարեկացու մեկնություններ), քան որ այն գտնում ենք «Ճառք»-ում. «Այսար լուսինն *մաքրական* փայլմամբ լցեալ կարակնաձեւ բոլորակն ծագեալ յարեւելից ի վերայ լեռանց եւ բարձրաբերձ կոհակաց գագաթունս արտափայլեալ ի նուս կշռին կենդանակերպի՝ զմթութիւն գիշերին ջահաւորէ» (էջ 98-99):

Շարաքառնամ բայը ևս ՆՀԲ-ում բերվում է երկու իմաստով՝ «ընդ իւր բառնալ, ի բաց բառնալ» և «բարձեալ բերել, կրել, ունել յինքեան»։ երկրորդ իմաստի դեպքում նշվում է վկայություն «Ճառք»-ից, այլև Մագիստրոսից, օր.՝ «Անպարագրելի բանն ի գիրկս հողեղինաց շարաքառձաւ» (էջ 425):

Վերահնչել բայը ՆՀԲ-ում բերվում է երկու իմաստով՝ իբրև ներգործական սեռի բայ՝ «վերստին գոչել, վերաձայնել», որ ունի նախնական վկայությամբ օրինակներ (Ոսկեբերան և այլն) և իբրև չեզոք սեռի բայ՝ «ծավալվել հնչմամբ. լսելի լինել»։ վերջինիս համար նշվում է վկայություն միայն «Ճառք»-ից. «Ի հասարակել գիշերին *վերահնչեաց* բարբառն. ահա փեսայ եկաւորեալ հայի»։ «Եւ օրինադրին *վերահնչեալ* ասէր. «Զի՞նչ է այդ ի ձեռին քո» (էջ 119)²:

Եզրակացություններ

1. Զաքարիա Զագեցու երկերի լեզուն, որ նախկինում չի եղել հատուկ ուսումնասիրության առարկա, իր տեղն ունի նախամիջին

ենթաշրջանի հայերենի մեջ ամենից առաջ բառապաշարի նկատառումով:

2. Այդ երկերը, գրված լինելով ժամանակի գրաբարով, ոչ միայն ուրույն որակ են, այլև, բնականաբար, վկայություն այդ շրջանի ընդհանուր հայերենի:

3. Հեղինակային բառապաշարի շատ յուրահատկություններ ավելի պարզ են դառնում գրաբարի բառարանների, առանձնապես «Նոր հայկազյան բառարանի» տվյալների հետ համեմատությամբ:

4. «Ճառք»-ի լեզվի բառապաշարի քննությունը ցույց տալիս, որ այն կարևոր աղբյուր է հայերենի ընդհանուր պատմության լուսաբանման համար:

Գրիգոր Նարեկացու բառապաշարի մի քանի բառի մասին

Ներածություն

Ուշ միջնադարի երևելի բանաստեղծ Գրիգոր Նարեկացին թողել է գրական հարուստ ժառանգություն՝ գրված ժամանակի լեզվի գրական նորմայի սահմաններում, թեև նկատելի են ինչ-ինչ շեղումներ այդ նորմայից:

Միջին հայերենին, մասնավորաբար նաև Նարեկացու լեզվին նվիրված ուսումնասիրություններում, ինչպես նկատում ենք, շեշտը դրված է եղել լեզվի գրական նորմայի վրա: Սակայն նկատում ենք նաև տարբերություններ («շեղումներ»), որոնց քննությունն առհասարակ կարևոր է հեղինակային խոսքի, այլև տվյալ շրջանի լեզվի պատմության տեսանկյունից:

Ըստ այդմ՝ հատկանշական է «Տաղ Յարութեան»-ը:

1. Տաղի լեզվական ընդհանուր բնութագիրը

Գրիգոր Նարեկացու երկերը նմուշ են հին գրականից միջին գրականի անցման հայերենի՝ իր ժամանակի լեզվի յուրօրինակ

¹ ՆՀԲ-ն ունի հատվածի զգալի տարբերություններ, քան որ քննական բնագրում է:

² ՆՀԲ-ն բերում է այլ օրինակ՝ «Ի հասարակել գիշերին վերահնչեաց բարբառն, ահա փեսայ եկաւորեալ հայի»:

արտահայտություն, անկախ ներքին (գրական-ոչ գրական՝ խոսակցական և այլն) տարբերակվածությունից: Այստեղ անդրադառնում ենք «Տաղ Յարութեան» երկի լեզվական կողմին՝ քառաքննական և ստուգաբանական մեթոդիկայի կիրառմամբ (*Համբարձումյան*, 2020, 69-78):

Մաշտոցի անվան Մատենադարանի հմուտ աշխատակից Ա. Քյոշկերյանի երկար տարիների անդուլ աշխատանքի շնորհիվ տասնամյակներ առաջ կազմվել է Գրիգոր վարդապետի տաղերի և գանձերի քննական բնագիրը, որը լույս է տեսել աշխատասիրողի ընդարձակ ներածությամբ, բնագրային ծանոթագրություններով, օգտագործված աղբյուրների համադրությամբ ու նկարագրությամբ, ձեռագրերի, տպագիր գրականության և հատուկ անունների ցանկերով (*Մարտկազմ*, 1981): Ժանրային առումով նման ստեղծագործությունները հայ գրականության ամենավաղ արտահայտություններից են (տե՛ս նաև *Ներսես Շնորհալի*, 1987):

Դասական բանասիրության մեջ ընդունված է եղել քննության առարկա դիտել այդ և մյուս երկերը ամենից առաջ իբրև ժամանակի գրական-կանոնական լեզվի՝ ուշ շրջանի հայերենի (գրաբարի) լավագույն նմուշներ, իսկ ոչ գրական (խոսակցական, նույնիսկ բարբառային) բառեր, քերականական ձևեր, ոճեր և այլն գրեթե դուրս են մնացել, կամ ստացել են այլ բնորոշում:

Այնինչ «Տաղեր և գանձեր» ժողովածուի բառապաշարի (ընդհանուր առմամբ՝ լեզվի) ավելի մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ այն ընդգրկում է ոչ միայն գրական-կանոնական, այլև ժամանակի խոսակցական (բարբառային) բառեր, քերականական ձևեր, «ոճեր», որոնք մնում են ոչ լիովին պարզաբանված:

Երկինք ու գետին («երկիր») քննող վարդապետը հայորդի է, նրա մարդկային (իմա՝ «գերմարդկային») քննությունը («խոսքը») իր ժամանակի հայերենով է՝ ըստ ամենայնի, խորությամբ (իմաստով), ձևով (գրական, ժողովրդական-խոսակցական, նույնիսկ՝ բարբառային), ընդգրկումով (աստվածխոսական, փառաբանական՝

փիլիսոփայական), սրբասացությամբ (եկեղեցական): Նրա երկերին ամենից առաջ անդրադարձել են վերը նշված հատկանիշներով (հ. Գ. Ավետիքյան, Մ. արք. Օրմանյան, Մ. Աբեղյան, Մ. Մկրյան և ուրիշներ), դրանք եղել են նաև լեզվական-բառային քննության առարկա՝ ընդհուպ մինչև մեր օրերը (տե՛ս ՆՀԲ, *Առաքելյան*, 1971)¹:

Նարեկացու տաղերի լեզուն, կարծում ենք, պիտի քննվի ոչ միայն հին գրական հայերենի (գրաբարի), այլև ժամանակի խոսակցական (եթե ոչ նաև բարբառային) կտրվածքի մեջ: Նա Վասպուրականի տարածքի ծնունդ է, և չի բացառվում, որ X դ. 2-րդ կեսի և հետագա ժամանակի լեզվի բանավոր (խոսակցական կամ բարբառային) տարբերակի տարրեր թափանցելն նրա «մաքուր» գրաբարի մեջ, մանավանդ բառերի և ձևերի արտասանական-հնչական տարբերությամբ:

Ազգային հանճարի տաղերի մեջ՝ գրավոր խոսքում մենք գտնում ենք նման երանգներ, որ նախորդ ուսումնասիրողները չեն նկատել կամ չեն համարել այդպիսին՝ թերևս գրաբարյանի պարփակումով:

Նարեկացին ապրել է միջին հայերենի շրջանին նախորդող ժամանակում, և այդ շրջանը հետագայում պիտի սահմանվեր որպես գրական լեզվի նոր որակի դրսևորում: Իսկ ինչպիսի՞ հնչյունական, ամենից առաջ բաղաձայնական համակարգ ուներ այդ ժամանակի հայերենը, ինչպիսի՞ն էր վերջինիս բառապաշարը, քերականական կառուցվածքը, որոնցով միջին գրականը տարբեր է լինում հին գրականից: Այս հարցերի նկատառումով, անշուշտ, կարելի է հասկանալ Նարեկացու տաղերում մեզ հետաքրքրող մի քանի բառի նոր մեկնաբանությունը:

Ստորև անդրադառնում են միայն «Տաղ Յարութեան» երկում գործածված նախ՝ ոչ գրական (բանավոր-խոսակցական, բարբառային) բառերին և քերականական ձևերին, գրական նորակազ-

¹ Հետագա ուսումնասիրություններին (հոդվածներ, գեկուցումներ և այլն) այստեղ չենք անդրադառնում:

մութուններին, այնուհետև՝ *գանձ, գիլ, տաղ* բառերի ստուգաբանությանը:

2. Գրական նորմայից շեղվող՝ խոսակցական (բարբառային) բառերի և ձևերի գործածություն

ա) Ձայնավոր հնչյունի սղում (որ հաճախ դիտվում է գրական նորմայի մեջ. *ի լեռնէ(ւ)* (փխ. *ի լեռանէ*. հմմտ. ՆՀԲ, էջ 881). «Մայլն այն իջանէր *ի լեռնէն* Մասեաց» (Նար., էջ 59)¹: Նման երևույթ նկատվում էր դեռևս հին գրականում, որն առանձին քննության առարկա է:

բ) Հպական, հպաշփական ձայնեղ բաղաձայնի դիմաց խուլի գործածություն (*q > Կ, ջ > ճ*). *կորնկան* (փխ. *կորնկան*) «վարդագույն թիթեռնածաղկավոր մշակաբույս». «Եթէ հարիւր բարդ խուրձան, վեց *կորնկան*...» (էջ 61): «Եւ այն վեց բարդ *կորնկանն* // Վեցարեայ գործքն Աստուծոյ» (էջ 64), *ճոճ* (փխ. *ջոջ*) «խոշոր. մեծ, մեծկեկ»: «Այն ճորտն *ճոճ* էր եւ ճապուկ» (էջ 62)²:

Այդպես ունենք նաև *դ > տ* անցման օրինակ՝ **դայլ* «ձայն (թոչնի)» > *տաղ* «երգեցիկ ձայն. մեղեդի» (հմմտ. *դայլայլ*), հետևյալ բացատրությամբ: Նախ՝ հայտնի է, որ միջին հայերենի Կիլիկիայի տարբերակում «*այ* երկբարբառը վերածվում է հիմնականում *ս* ձայնավորի» (*Մուրադյան*, 1975, 227): Հայագիտության մեջ կա կարծիք, որ «կիլիկյան հայերենը նորագույն փոխառությունների ձայնեղները տառադարձում է խուլերով. օր. արաբ. *burj > պուրճ*» (*Մուրադյան*, 1975, 257):

Այդ երևույթը նկատվում է նաև Վասպուրականի տարածքում, որում ևս ձայնեղ բաղաձայններն արտասանվում էին խուլ (*p > պ, դ > տ, q > կ* և այլն) (*Միքայելյան*, 2009): Ըստ այսմ, հայ. *տաղ*

բառը կարող է գուգորդվել *դայլ*- (< *դայլայլ* < **դայլ-դայլ*) առանձին չգործածվող արմատի հետ՝ երկբարբառի պարզեցմամբ (*այ /ս*), որ տարածված է հայերենում՝ առհասարակ, այլև ձայնեղի խլացմամբ (ունենում ենք արմատի տարբերակներ՝ *դայլ*- / *տաղ*, ընդհանուր իմաստով՝ «ձայն. հնչում»). օր.՝ «*Տաղ* Յարութեան, Գրիգորի Նարեկացոյն ասացեալ» (էջ 59)¹:

գ) Եվ *-իկ, -ակ* փոքրացուցիչ-փառաբանական մասնիկներով կազմություններ՝ *սայլիկ, աթոռակ*. «*Ջսայլիկն* ածեալ էն, կացուցեալ. // Ի Մասեաց կողմանէն // *Ջսայլիկն* ածեալ էն, կացուցեալ» (էջ 60-61): «Եւ ահա չչարժէր *սայլիկն* այն» (ս. տ.): «Նա ձայն ածէր եզնամուրին, // Կանչին առնէր *աթոռակին*, // Դարձեալ խաղայր եզնամուրին, // Իտաղայր, ցնծայր *աթոռակին*» (էջ 63).

դ) Խոսակցական տարբերակին բնորոշ բառեր են. *խոլորձան* (*խոլորձն*), *կորնկան* (*կ-ով*), *փնջեալ* (ծաղիկ). *եզնամուր, կանչին* (հմմտ. *կանչ-, գանչին, գոչին*), *խաղալ* (փխ. *երթալ, գնալ* այլն. հմմտ. խոսակցական՝ *աչքը խաղում է*).

ե) Հոգնակիի կազմություն՝ հավաքական մասնիկների, այլև հետագայում լայն տարածում գտած և հին գրականի *ք-ի* հետ *-ոտի* մասնիկի, այլև *ք-ին* փոխարինած *-եր, -ան, -ական* մասնիկների գործածություն. վերջիններս գրաբարի բնագրերում երբեմն հանդես էին գալիս իբրև հավաքական-հոգնակերտ մասնիկներ, որոնցից հատկապես *-եր* (<*-եսր*) մասնիկն ընդհանրացել է գրական աշխարհաբարում. *սամոտիք, փոկեր(ն)*. «Եթէ սամիքն են արծաթի, լուծն է ոսկի, // Եւ *սամոտիքն*՝ ապրիշմի, // *Փոկերն*՝ ի կերպասոյ հիսեալ...» (էջ 62):

ՆՀԲ-ն *խոլորձ* բուսանունը նշում է երկու ձևով՝ առանց *ն-ի* և *ն-ով* (*խոլորձն*), և վերջինի համար, իբրև սեռական հոլովի ձև նշում է *խոլորձան* (որն, ի դեպ, նույնն է *կորնկան* բառի հետ՝ *-ան* մասով). եթե *կորնկան* բառի այդ մասը արմատինն է, ապա *խոլորձան-*

¹ Հետագա օրինակներում կից նշում ենք միայն էջը:

² Ըստ այսմ՝ *ճոճ* բառի «խոշոր. մեծ, մեծկեկ» իմաստով և միջին հայերենի հնչյունական օրինաչափությամբ բացատրությունը հիմք է հանդիսանում նախկինում եղած բոլոր մեկնություն-բացատրությունները համարելու ոչ ճիշտ, ուստի մերժելի:

¹ Ընդունված է նման բառերը (արմատները) համարել բնաձայնություն (հմմտ. նաև *ծղիլալ* կրկնավոր հիմքով կազմությունը):

ի դեպքում այդպես չէ, այն սեռականի ցուցիչ է, մասնավանդ որ բառը, ըստ ՆՀԲ-ի, հայ մատենագրության մեջ բացի Նարեկացուց հանդիպում է միայն Մխիթար Գոշի առակներում, ուղիղ՝ *խորոճ* ձևով, ուստի *-ան* մասնիկն այստեղ ընդամենը հավաքական-հոգնակերտ է՝ դրված *հարհիր* թվականի քանակի նշման պահանջով՝ խոսակցական մտածողությամբ (այն՝ *հարհիր* բարդ *խորոճան* «հարյուր կապ՝ խորձ, խորոմ խոլորձ»)։ հմմտ. հին գրականում՝ *էջ - իշան* (սակ *իշեան*), *ձի - ձիան*, որոնք խոսակցական ձևեր են, միջին գրականում՝ բավականին տարածված։

զ) Ժխտականի ձև *չ-ով*, ոչ թե *ոչ-ով*, *չխաղայր* (փխ. *ոչ խաղայր*), *չարժէր* (փխ. *ոչ շարժէր*)։ «Եւ ահա *չարժէր* սայլիկն այն, // Եւ ահա *չխաղայր* անին այն» (էջ 61, 62. գործածված մի քանի անգամ)։

է) Բառային հոմանշություն՝ պատկերի համընդգրկման նպատակով. *ածել / կացուցանել*. «Ածեա՛լ են, ածեա՛լ, // Ջսայլիկն ածեա՛լ են, կացուցեալ» (էջ 60)¹, *շարժել / խաղալ / ցնծալ*. «Եւ ահա *չարժէր* սայլիկն այն, // Եվ ահա *չխաղայր* անին այն» (էջ 61 և այլն), «Դարձեալ *խաղայր* եզևամոլին, // *Խաղայր, ցնծայր* աթոռակին, // Եւ ահա *շարժէր* սայլիկն այն, // Եւ ահա *խաղա՛յր* անին այն» (էջ 63), *հիսել / փնջել*. «Փոկերն՝ ի կերպասոյ *հիսեալ*, // Եւ խարազանն՝ *փնջեալ* ծաղիկ» (էջ 62), *ձայն ածել / կանչին առնել*. «Նա ձայն ածէր եզևամոլին, // *Կանչին առնէր* աթոռակին» (էջ 63)։

ը) Որոշի առաջադաս գործածություն. *վեցթեւեան սերովբէ*. «Եւ յաջմէ նորա *վեցթեւեան սերովբէքն*» (էջ 60), *բազմաչեայ քերովբէ*. «Յահեկէ նորա՝ *բազմաչեայ քերովբէքն*» (ն. տ.), *աջ կողմն*. «Ի Մասեաց *յաջ կողմանէն*» (էջ 61), *հարհիր բարդ խորոճան*. «Եթէ *հարհիր բարդխորոճան*» (էջ 61, 64), *վեց (բարդ) կորնկան*. «Եթէ *հարհիր բարդ խորոճան, վեց կորնկան*» (էջ 61, 64), *մին մանուշակ, նան՝ միատրեալ Երրորդութին*. «Եւ այն *մին մանուշակ՝ // Միատրեալ Երրորդութին*» (էջ 64), *չորս գունդ*. «Եւ այն *չորս գունդն* սայ-

լին» (ն. տ.), *հոյլ մարգարիտ*. «Եւ մազն ամէն՝ *հոյլ մարգարիտ*» (էջ 62), *անուշահոտ բուրումն*. «Այսօր *անուշահոտ բուրմամբ* ընթանայ» (էջ 63), *երկրորդ օրէնք*. «*Երկրորդ օրէնքն* է Մովսեսի» (ն. տ.), *ամենագոր յարութին*. «Փա՛նրք Քրիստոսի *ամենագաւր յարութեան*» (էջ 60, 65)։

3. Գրական կամ խոսակցական բաղադրական հիմքերով նոր կազմությունների գործածություն

Դրանք մի քանի կարգի են՝ իրարից բավականին տարբեր, ոճի առումով՝ յուրովի հետաքրքիր։

ա) Նախ՝ նկատենք, որ այս տաղում կան բառեր, որոնք չկան ՆՀԲ-ում. *լայնաթիկունք* («թիկունքը լայն. թիկնեղ»)։ «Այն ճորտն ճոճ էր եւ ճապուկ ... // *լայնաթիկունք*, խարտիշագեղ» (էջ 62-63). *խրձադիզեալ* (< *խրձադիզեալ*. «խրձերով՝ խորձ-խորձ դիզել՝ կուտակել»)։ «Եթէ *հարհիր բարդ խորոճան*, վեց կորնկան, // Մին մանուշակ՝ *խրձադիզեալ...*» (էջ 61). *ծաղկախալսուցք* [«գույնզգույն՝ երթներանգ ծաղիկներով ի մի բերված(ներ)՝ կապված(ներ), փնջած(ներ)»]։ «Եթէ *եզինքն են սաթ ու սպիտակ, // Ծաղկախալսուցք*, արագաքայլք, ընթացականք» (ն. տ.)։

բ) Լեզվի գրական նորմայի մեջ մտնող բառ-բաղադրիչներով կազմություններ, որոնք ՆՀԲ-ում բերվում են կա՛ հետագա հայտնի հեղինակների անունով (*արագաքայլ*), կա՛ միայն Նարեկացու այս տաղի վկայակոչումով (*ուռամիջակ*), կա՛մ Ժամանակի առումով ոչ հստակ որոշելի ժողովածուների [Տօնակ. (= «Տօնանամակ», «Տօնապատճառք», հետագայի), Ճ.Ա., Ճ. Դ. (= «Ճառընտիրք ազգի ազգի», թարգմ. Գրիգոր Վակայասերի)] հիման վրա (*եզնամոլ, կանչին*)։

գ) Գրական նորմայից շեղում հանդիսացող (բանավոր-խոսակցական) բառակազմական հիմքով կամ մտածողությամբ կազմություններ.

եզնամոլ (ըստ ՆՀԲ-ի՝ «որպես ամուլք եզանց»։ իմա՛ *ամոլ* «զուգակից, լծորդ») ՆՀԲ-ն վկայակոչում է միայն Տօնակ., Ճ. Ա.

¹ Հմմտ. «Երկներ երկին, երկներ երկիր, // Երկներ եւ ծովն ծիրանի» (Խոր., 1913, էջ 85)։

(տե՛ս վերը), որոնց համապատասխան հատվածները եթե հին չեն, ապա բառը պիտի դիտվի Նարեկացու կողմից կիրառված՝ ժամանակի խոսակցական լեզվի հիմունքով. «Նա ձայն ածեր *եզնաւնլին*» (էջ 63).

խարտիշագեղ (ըստ ՆՀԲ-ի՝ «խարտեաշ գունով գեղատր»․ իմա՛ «շիկավուն գեղեցիկ»)․ թեն տաղերի նախօրինակ ձեռագրերի մի զգալի մասը (թվով՝ 10) բառն ունի *ե*-ով, քննական բնագրի կազմողը դնում է *ի*-ով, ՆՀԲ-ն ունի միայն *ե*-ով, և վկայակոչելով միայն՝ Երզն. քեր. (= Երզնկացու Մեկնութիւն քերականութեան), Աղթարք (= «Անպէտ գրութիւն անպիտան ոճով ի վերայ բախտից...»), ոչ՝ Նարեկացի. «Այն ճորտն ճոճ էր եւ ճապուկ, ... // Լայնաթիկունք, *խարտիշագեղ*, ահեղագոչ» (ն. տ.).

կանչին «կանչ»․ ՆՀԲ-ն տալիս է նախ՝ Ճ.Գ. (= տե՛ս վերը), այնուհետև՝ Նարեկացու Տաղը. «Նա ձայն ածեր եզնամուլին» // *Կանչին* առնէր աթոռակին» (էջ 63).

կորնկան (ըստ ՆՀԲ-ի «խոտ ինչ ցած»․ իմա՛ «վարդագույն թիթեռնածաղկավոր մշակաբույս»), ՆՀԲ-ում գլխաբառը բերվում է *գ*-ով, օրինակները՝ *կ*-ով, տրվում են հնչատարբերակներ՝ *կ*-ով, նշվում, որ բառը *կորնկան* ձևով «ոամկական» է, այլև վկայակոչվում նախ՝ Մխիթար Գոշ առակ. (=Մխիթար Գոշի Առակներ), այնուհետև՝ Նար. (= Նարեկացի)՝ այս տաղը («սայլի»)․ «Եթէ հարիւր բարդ խուրճան, վեց *կորնկան*, // Մին մանուշակ՝ խրճաղիզեալ» (էջ 61).

ուռամիջակ (ըստ ՆՀԲ-ի՝ ած. որ բացատրվում է մի քանի կերպ՝ «որոյ ուռքն նմանականք են միջակ. միջասահման ըստ անդամոց ձեռաց և ոտից. կամ պարարակ միջով», որոնցից «մեջքը ոտի պես բարակ՝ ճկուն» իմաստն է բռնում Տաղի բանաստղին), և վկայաբերվում է միայն Նարեկացու այս տաղը («սայլի»)․ «Այն ճորտն ճոճ էր եւ ճապուկ, // *Ուռամիջակ*, հաստաբազուկ» (էջ 62):

4. Անդրադառնանք նաև *գանձ*, *գիլ*, *տաղ* բառերի ծագմանը (ստուգաբանությանը): Նախ՝ նշենք, որ սրանք բառիմաստային (թեմատիկ) տարբեր խմբի բառեր են, *գանձ* և *տաղ* բառերը պատ-

կանում են մեկ առանձին խմբի («մշակույթ. գիր, գրականություն»), իսկ *գիլ*-ը՝ մեկ այլ («Ֆիզիկական աշխարհ»): Այս բառերի ծագման վերաբերյալ այստեղ նշենք միայն հետևյալը՝ ավելին թողնելով հետագա քննությանը:

ա) *Գանձ*: Այս բառի ծագման և հայերենում նրա բազմաթիվ տարբերակների (իմա՛ *գինձ*, *սինձ*, *գնձիկ* և այլն) ստուգաբանական քննությունը կարող է մեզ շատ հեռուն տանել, սակայն այստեղ դրան անդրադառնում ենք ավելի սեղմ ձևով՝ մանրամասնը թողնելով մեկ այլ առիթի (հմմտ. *Saint-Martin*, 1818, 150):

Ա. Քյոշկերյանի Առաջաբանում ի թիվս այլ ուսումնասիրողների, որ կարծիք են հայտել *գանձ* բառի ծագման վերաբերյալ, բերվում է նաև Պոտուրյանի կարծիքը, այն է՝ փոխառություն, ծագումը կապելով իտալերենի հետ (լատ. *cantica* «երգ, երգասացություն»), և իրավացիորեն մերժվում է այն: Բառը, մեր կարծիքով, բնիկ է (այն ունի գրականում և բարբառներում բազմաթիվ տարբերակներ. տե՛ս մասամբ՝ վերևի բերվածը), որ ելակետային է նրա բնիկ լինելու վերաբերյալ: Իսկ թե հնդեվրոպական ինչ նախաձևից է այն ծագում, մենք այն թողնում ենք հետագային:

բ) *Գիլ*: ՆՀԲ-ն *գիլ* «քար» (օր.՝ *գլաքար*) և *գիլ* «պտույտ» (օր.՝ *գլորեղ*) համանուն բառերը դրել է մեկտեղ. և երկրորդի համար վկայակոչում է Նարեկացու հիշյալ տաղի մեջ գործածությունը. «Ի՛ *գիլ* գայր, ի *գիլ*, սայլիկն ի *գիլ*»՝ նշելով՝ «իմա՛ գլելով գլորելով անուոց՝ որպէս *գեղ գեղ*» (տե՛ս ՆՀԲ, 1836, 551-552): Բառը գտնում ենք նաև Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ում՝ գործածված լատինաբան հայերենի բայի կրավորաձև անցյալ անկատարի ձևով՝ *գիեկին* «ծածկէին, յաղթէին» (տե՛ս ԲՀ, 1975, 67. հմմտ. *Համբարձումյան*, 2014, 16-17): Ընդունված է բառի ծագումը բխեցնել հե. *uelu- արմատի *velu- (երկար ձայնավորով) տարբերակից, ըստ Գ. Ջահուկյանի՝ հե. *uel- (կամ *uelā-) [*uel(ā)-]. հմմտ. սանս. *valāte* «ղառնում է», *valitā* «ղարձած, ծռած», *valayati* «շրջել, գլորել», հուն. *ἐλύω* «ոլորել, գլորել. վաթաթվել», *ἐλύω* «գլորել,

փաթաթել. շրջապատել» և այլն, լատ. *volvo* «ոլորել, գլորել. դարձնել», *volumen* «ոլորք, գալար», գոթ. *walwjan* «ոլորել, գլորել» (*Աճառեսան*, 1971, 530-531. *Джаукян*, 1967, 136. *Ջահուկյան*, 1987, 155. *Միմոնյան*, 2014, 320):

Ընդ որում եթե հնդեվրոպական ձայնդարձի տարբեր աստիճանի ձևերի արտացոլումներ են՝ 1) *գել-* // *գիլ-* // *գ(ը)լ-եմ* «ոլոր (ուն, -ած, -եմ), պիրկ, կլոր» (հմմտ. «գլ-ա-քար») (բուն իմաստով), 2) *գայ(-ար, -ած)* (հմմտ. բրբռ.՝ *գալած* «չորացնելու համար ոլորած՝ հյուսած բանջար՝ ավլուկ և այլն») // *գուլ* (բրբռ.) «պտտ(-ած), բութ, ոչ սուր», այլն «ձվի դեղնուց, խորիզ» // (բրբռ.) *գլուլ, գլգիլ* (նաև *գլուլ-գլուլ* «կաթիլ-կաթիլ»), «(վայրի ոչ մշակովի) ոլոռ» (երկրորդական իմաստով), 3) *գաղ* (*գաղ-գաղ* «անիվ. ժողովելը». տե՛ս վերը՝ ՆՀԲ-ի նշումը) // *գաղ(-ել)* «ծածկել, թաքցնել» // *սայլ*, (բրբռ.) *գ(յ)ալգ(յ)ալ-ի* («երկանիվ) փոխադրամիջոց. սայլ. բրբռ.՝ *գ/ս* հերթագայությամբ (ալտերնացիայով)» (երկրորդական իմաստով), ապա հայերեն հիշյալ տարբերակային ձևերը, իրոք, հանգում են հնդեվրոպական նշված տարբերակային ձևերին՝ ունենալով ընդհանուր **ǵel*-արմատը (նոր վերականգնում՝ **k^{[h]o}el*-): Ուստի, անդրադառնալով *գիլ* (բառ)արմատին, նրան առնչում ենք մի նոր տարբերակ («սայլ. անվավոր փոխադրամիջոց» իմաստով)՝ հայ. (գրական) *սայլ*, և (բրբռ.) *գ(յ)ալգ(յ)ալ-ի* բառերը (երկրորդը՝ կրկնավոր բաղադրությամբ, *-ի* կազմիչով), մանավանդ որ *սայլ*-ը գործածվել է Նարեկացու տաղում (ի դեպ՝ այդ տաղը ձեռագրերում կոչվել է նաև *սայլի* անունով):

գ) *Տաղ*: Եթե նկատի ենք ունենում միջին հայերենի ոչ միայն Կիլիկիայի տարբերակում, այլև առհասարակ «*այ* երկբարբառի վերածումը *ս* պարզ ձայնավորի», որ անհերքելի իրողություն է լեզվի պատմության այդ շրջանի համար, ապա հայ. *տաղ* բառը կարող է առնչվել *դայլ* (< *դայլայլ* < **դայլ-դայլ*- «թռչնի մի տեսակի երգեցիկ ձայն. ճովողյուն, այդ թռչնի նպատակադիր կանչ») առանձին չգործածվող արմատի հետ՝ նույնպիսի *այ /ս* տարբերակմամբ:

Ընդ որում Գ. Ջահուկյանը հայ. *տաղ* «երգ, ոտանավոր» (նաև տող) բառը ծագած է համարում հե. **dal*- արմատից. հմմտ. խեթ. *talija* «ձայն տալ, հայցել (աստվածների)» (*Ջահուկյան*, 1987, 320-321). խեթահայկական իմաստային գուգաբանությունը, ըստ այսմ, ունի «աստվածխոսական, փառաբանական» նշանակություն. հայ միջնադարյան մատենագրության մեջ *տաղ* և *երգ* բառերի իմաստաբանությունը տարբեր է:

Այնուհետև, այս դեպքում *դայլ* // *տաղ* արմատների զուգորդումը, իբրև ձևաիմաստային տարբերակների, ունեն ընդհանուր «ձայն, հնչում» ենթիմաստը՝ բաշխված բնական («ձայն») և մշակութային («մեղեդի, խոսք») նշանակման վրա: Ընդ որում արտահայտության պլանում (բառի նշանակման մեջ) առկա է ոչ միայն *այ > ս*, այլև *դ > տ*, *լ > ղ* հերթագայություն (ալտերնացիա), որ հայերենի հնչյունաբանական օրենքներով լիովին բացատրելի է:

Եզրակացություններ

1. Ընդամենը մեկ երկի լեզվական նյութի նման քննությունը օրինակ է լայն ընդգրկումով աշխատանք ծավալելու, որ գիտական ոլորտի հարց է:

2. Միջին գրական հայերենի բառապաշարի, ինչպես նաև հնչյունական, քերականական իրողությունների ավելի մանրամասն քննությամբ ավելի իրական է դառնում ընդհանուր պատկերացումը:

3. Նարեկացին միջին հայերենի ամեն կարգի իրողությունների գործածող է, որ նկատում ենք նրա տաղերից մեկում. գրականին զուգահեռ ժամանակի խոսակցականի առկայությունը ենթադրում է լեզվի տարբերակների ամբողջական ուսումնասիրություն:

4. Հայերենի ոչ գրական (խոսակցական) շատ իրողություններ, որ կարելի է գտնել լեզվի հին և միջին շրջանի գրական հուշարձաններում, այս դեպքում ևս անհերքելի իրողություն է, ուստի կարևոր իրողություն հայերենի հնչյունական համակարգի և բառապաշարի ավելի մանրամասն ուսումնասիրության համար:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՄԻՋԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇՐՋԱՆ

Միջին գրական հայերենը ու Վիջնադարի մշակույթի դրսևորում

Ներածություն

Միջին գրական հայերեն անվանումը գիտական տերմին է, որ կոչված է արտահայտելու մի որոշակի ժամանակահատվածի քաղաքական-տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքի տարբեր դրսևորումներն իբրև մեկ ամբողջություն: Ժամանակի առումով այն միջնադարի երկույթ է, ավելի կոնկրետ՝ ու Վիջնադարի:

Գրական լեզվի այդ որակը, չհաշված ժամանակի խոսակցական կամ բարբառային տարբերակներինը, մշակութային մեծ ներդրում է, որով ավանդական (տրադիցիոն) հերթագայություն է սահմանվում հին և նոր գրական հայերենի միջև, և դա պատմական սերտ, անտրոհելի ամբողջություն է:

Այդ ժամանակաշրջանն ընդգրկում է XII-XVI դդ., և դա հայոց կյանքի ծանր, հեղաբեկումներով, ճնշվածությամբ տոկացող տարիներն ու տասնամյակներն են: Այդ պայմաններում անգամ հայոց մտավոր կյանքը՝ հոգևոր առաջնորդությամբ, չի ընկրկում դժվարությունների առաջ, ստեղծում է հոգևոր և հոգու մնայուն արժեքներ՝ գիտության, գրականության և իրավունքի ոլորտներում:

Ու Վիջնադարի կյանքի մի դրսևորում են մեզ հասած գրավոր մշակույթի հուշարձանները՝ պատմության, հուշագրության, բանաստեղծության, բժշկության, օրենսդրության և այլն ձևով: Այդ հուշարձանները, բնականաբար, գրված են ժամանակի լեզվով, որ գիտական անվանումով միջին հայերեն է: Գրական-գրավոր մշակ-

վածության հատկանիշով միջին հայերենը ենթադրում է երկու տարբերակ՝ «բնաշխարհիկ» և «կիլիկյան», երկրորդի գրական մշակվածության որոշակի աստիճանի գոյության պայմանով:

1. Միջին գրական հայերենի ուսումնասիրությունը

Հայերենի պատմության գիտական ուսումնասիրության մի բնագավառ է միջին հայերենի հարցի արծարծումը լեզվագիտության մեջ: Գրվել են տարբեր բնույթի և ծավալի աշխատանքներ, հայերենագիտության տարբեր շրջաններում, ընդ որում գիտական հետաքրքրությունների նեղ կամ լայն սահմաններում (սկսած Յ. Յ. Շրյոդերի, Ա. Այտընյանի, Ղ. Հովնանյանի աշխատություններից):

Համեմատաբար նոր ժամանակներում միջին հայերենի բուն խնդիրները՝ ժամանակային դիրքը հին գրական և նոր գրական հայերենի միջև, կիրառական ընդգրկումը (բանավոր հաղորդակցում, գրավորի ծավալը), նորմավորվածության աստիճանը, ինչպես նաև ժամանակի բարբառների հետ ունեցած առնչությունների չափը եղել են տարբեր սկզբունքների կիրառմամբ և մոտեցումների դրսևորմամբ լայն ուշադրության առարկա (ըստ Ա. Մելեի, Հ. Աճառյանի, Ս. Ղազարյանի, Գ. Ջահուկյանի, Է. Աղայանի, Հ. Մուրադյանի, Մ. Մուրադյանի, Լ. Հովսեփյանի և ուրիշների):

Առանձին խնդիր է եղել միջին հայերենի շրջանաբաժանումը, որը կատարվել է հիմնականում երկու՝ հայոց լեզվի հին և նոր շրջանների պատմությանն այս կամ այն չափով առնչվելու տեսանկյունից (Ն. Մառ. Կ. Կուսիկյան, Հ. Աճառյան, Գ. Սևակ, Է. Աղայան և ուրիշներ) և առանձին՝ ողջ գրական լեզվի ընդհանուր և ամբողջական պատմության դիտանկյունից (Գ. Ջահուկյան): Ըստ Ջահուկյանի՝ միջին գրական հայերենը (XII-XVI դդ.), լեզվական որակ է, որ բաժանվում է երկու ենթաշրջանի՝ «կիլիկյան նորմավորման» (XII-XIV դդ.) և «աշխարհաբարացման» (XV-XVI դդ.) (*Ջահուկյան*, 1956, 49-102. նույնի, 1964. նաև, 1969):

2. Միջին հայերենի գրական և բարբառային տարբերակների հարցը

Հայ իրականության կյանքում ևս փոխվում են հանգամանքները, այլ ձևեր են ստանում մշակույթի առաջընթացի պայմանները, և այդ ընթացքում, բնական է, որ փոփոխություններ են տեղի ունենում նաև լեզվի մեջ: Վերջինս որակվում է իբրև միջին գրական հայերեն՝ առավելապես սահմանափակ թվով գրավոր աղբյուրների նկատմամբ: Դուրս են մնում ոչ միայն գրական այլ հուշարձանների, այլև գրական և խոսակցական (բարբառային) տարբերակների, ինչպես նաև լեզվի տարածքային ամբողջական ընդգրկման հարցերը:

Այս տեսանկյունից միջին շրջանի լեզվի ձևակերպումը, իբրև «կիլիկյան հայերեն» առարկելի է և՛ ընդգրկման ծավալի, և՛ տարածվածության հաշվով: Միջին հայերենի գրական նորման անհամեմատ թույլ է, որ առավելապես պայմանավորված է արտալեզվական տարբեր հանգամանքներով, մասամբ նաև կրթական-մշակութային միակողմանիությամբ: «Կիլիկյան հայերենը» ժամանակի հանրության պետական լեզուն է, որ անկախ բովանդակության («ժանրային»- գործառական) լայն ընդգրկումից չի անցնում նորմավորման շեմով, մնում է գրական, ինչպես նաև խոսակցական-բարբառային ակնհայտ տարբերակների մեջ (*Myradjan, 1973, 196-197*):

Բնական է, որ միջին գրական հայերենը պիտի ունենար իր բարբառային հիմքը, սակայն գիտական ուշադիր քննության հարց է, թե այդ հիմքը ինչպիսին էր՝ միօրինակ, թե՛ տարաբնույթ: Այս հարցում ընդհանուր տպավորությունն այն է, որ գրականի ոչ հավասարաչափ դրսևորումը՝ թե՛ ձևի և թե՛ ծավալի (ընդգրկման) առումով փաստ է, որ բարբառային հիմքը եղել է անմիօրինակ, այլ կերպ ասած՝ այդ հիմքը տարաբնույթ է:

3. Միջին գրական հայերենի ուսումնասիրության նոր խնդիրները

Այդ շրջանի հայտնի գրավոր աղբյուրների վերստին անդրադառնալը, ինչպես նաև անհայտ մնացածների մանրագնին քննությունը ցույց են տալիս, որ միջին հայերենը գրավոր հայերենի մեկու-

կեսհազարամյա ժամանակի մեջ ինքնուրույն որակ է, որի առանձնացումը և գիտական հստակ չափանիշներով քննությունը ենթադրում է առարկայական («օբյեկտիվ») մոտեցում, յուրօրինակ սկզբունքների գործադրում: Արտաքին տպավորությամբ, առավել ևս մինչև այժմ հայտնի լեզվական օրինակների հիման վրա եղած ամեն կարգի եզրակացություն մնում է անհավանականի սահմաններում:

Ուստի այդ շրջանի հայերենի ամբողջ նյութի մանրամասն քննությունը մնում է ապագային, իսկ նրա պատմության ընթացքը ցույց է տալիս, որ նրա ներքին փոփոխությունները կարելի է ներկայացնել երեք փուլով. սա նորություն է, որ մեր այս աշխատանքում զբաղեցնում է առանձին բաժին:

Միջին գրական հայերենի բառապաշարի, քերականական կառուցվածքի շատ իրողություններ ամբողջովին նոր են, որակական ժառանգություն են հին վիճակից, հիմք են հանդիսանում լեզվի հետագա վիճակի, մանավանդ բարբառների ընդգծված տարբերակվածության: Դրանց քննությանը նպատակադրված ամեն մի աշխատանք կարող է նպաստ լինել հայերենագիտության զարգացման:

Եթե հին գրական հայերենի, իբրև գրավոր լեզվի, կանոնարկումը մեծապես իրականացվում է ամենից առաջ թարգմանական գրականության, կարելի է ասել, ընդօրինակման (եթե ոչ մեծ մասամբ նմանակման կամ պատճենման) հիմունքով, ապա միջին գրական հայերենը, որ ասքի էր ընկնում թեմատիկ-ժանրային նոր որակներով (բանաստեղծություն, առակ, իրավունք, բժշկություն և այլն), չուներ ընդհանուր արտալեզվական այն հոգածությունը, որ հնարավոր դարձներ նրա միասնականացումն ու կանոնարկումը, մանավանդ որ զգալիորեն մեծ էր բանավոր-խոսակցական (եթե ոչ բարբառային) տարբերակների ընդգրկվածությունը:

Նման պայմաններում լեզվական իրողությունների քննությունը դառնում է ավելի կարևոր հայոց լեզվի ընդհանուր պատմությ-

յան համար. միջին հայերենի պատմության ուսումնասիրությունը մնում է արդի հայերենագիտության գրավիչ բնագավառներից մեկը:

Եզրակացություններ

1. Միջին գրական հայերենի ուսումնասիրությունը պիտի շարունակվի ապագա հայերենագիտության բնագավառում:

2. Գրական ոչ միասնական ձևերի առկայությունը գրեթե ամբողջովին ունեն բարբառային-տարածական հիմքեր:

3. Ի տարբերություն հին հայերենի բարբառների՝ եղել են միջին շրջանի առավել ընդգծված բարբառներ, որոնց հատուկ քննությունը վերաբերում է գալիք ձեռնարկումներին:

«Կիլիկյան հայերենը» միջին գրական նորավորման տարբերակ

Ներածություն

Հայերենի պատմության միջին շրջանը (XII-XVI դդ.) ներկայանում է ոչ միայն գրական և խոսակցական (բարբառային) շերտավորմամբ, այլ նաև տարածքային (արեալային) և գործառական (ֆունկցիոնալ) տարբերակներով: Իսկ այդ տարբերակներից մեկը, այսպես կոչված, «կիլիկյան հայերենը» ձեռք է բերում պետական լեզվի կարգավիճակ: Այդ շրջանում այդ տարբերակներին զուգահեռ գործածվում է գրաբարը՝ արդեն ոչ իբրև կենդանի լեզու:

Հայերենի այդ շրջանի ուսումնասիրությանը, մասնավորապես ենթաշրջանների առանձնացմանն ու բնութագրմանը դասական հայերենագիտությունը մոտեցել է միայն գրական (ժամանակի պետական) լեզվի նկատառումով՝ սկսած XIX դ. կեսերից մինչև մեր օրերը: Այս դեպքում նույնպես կան որոշակի խնդիրներ, որոնք պահանջում են լուծումներ՝ ամենից առաջ գրական հուշարձանների սվյալների ամբողջության մեջ:

1. Միջին հայերենի ավանդական շրջանաբաժանումը

Գիտության մեջ ամեն մի շրջանաբաժանում նպատակային է՝ գտնելու միջոց քննության առարկայի ճանաչման և գնահատման համար: Հայերենի դեպքում ևս այդ միջոցը կիրառելի է եղել և շարունակում է մնալ նպատակին ծառայող:

Հայերենի գրավոր շրջանի պատմությունը ներկայանում է մի քանի փուլով, ժամանակային-գործառական անվանումով՝ հին, միջին և նոր, որոնք, իրենց հերթին, ունեն ենթաշրջաններ՝ պայմանավորված լեզվի կառուցվածքի մեջ բաղադրիչների և նրանց փոխարարբերության տարբերությունների մեծությամբ: Նման բաշխումը գիտական-տեսական ընդհանուր մոտեցման արդյունք է, որ կիրառելի է ամեն մի գիտության դեպքում:

Դասական հայերենագիտության մեջ, բնական է, եղել են շրջանաբաժանման փորձեր՝ ամբողջական կամ որևէ պատմաշրջանի ընդգրկմամբ (*Բագրատունի*, 1852. *Աճառյան*, 1951. *Гарубян*, 1948, 41-64. *Սևակ*, 1948, 9-18, *Աղայան*, 1974, 58-81, *Ջահուկյան*, 1956 և ուրիշներ): Դրանք մեծ մասամբ ընդհանուր բնույթի են՝ ոչ միայն ժամանակային սահմանի որոշման, փաստական նյութի ամբողջական ընդգրկման առումով, այլև հին գրական հայերենի (գրաբարի) հետագա տարբերակի (ոչ կենդանի լեզվի) և միջին շրջանի տարածքային տարբերակների (բարբառների) առնչության տեսանկյունից (*Աղայան*, ն. տ., *Համբարձումյան*, 1990):

Ներկայումս ընդունելի է համարվում Գ. Ջահուկյանի շրջանաբաժանումը, որն անփոփոխ բերվում է հեղինակի տարբեր աշխատություններում, ուղենշային է լեզվի պատմությանը նվիրված ուսումնասիրությունների համար (*Ջահուկյան*, 1956, 49-102, նաև 1964):

Միջին շրջանից ունենք տարբեր բնույթի գրական հուշարձաններ (ինքնուրույն ձեռագրեր, դրանց հիման վրա կազմված քննական բնագրեր, հիշատակարաններ, վիճաբարեր և այլն), որոնք մեծ մասամբ ուսումնասիրված են հայոց լեզվի ընդհանուր և

առանձին աշխատություններում, թեև դեռևս կան ամենևին չուսումնասիրված կամ մասամբ ուսումնասիրվածներ:

Հայոց լեզվի գրավոր շրջանի պատմության վերաբերյալ նոր պատկերացումների պայմաններում, տեսական սահմանման որոշակի չափանիշների (պարամետրերի) նկատառումով, ինչպես նաև հատկապես գրական հուշարձանների լեզվի ավելի մանրամասն և ամբողջական քննության հաշվով Ջահուկյանի կատարած շրջանաբաժանումը, մեր այս թեմայի հետ կապված, ունի վերանայելի կողմեր, այսինքն՝ կարիք կա որոշակի ճշգրտումների և լրացումների, և դա բնական է: Ի դեպ՝ այդ շրջանաբաժանման վերաբերյալ նախկինում ևս եղել են առարկություններ. օրինակ՝ հին գրական հայերենի, այսպես կոչված, ինքնակա («հայկաբան») և օտարաբան (հատկապես՝ «հունաբան») տարբերակների սահմանների հստակեցման, նաև առանձնացման, միջին գրական հայերենի և ժամանակի գրաբարի, նոր գրական հայերենի (վաղ աշխարհաբարի), «երկնյուղ աշխարհաբարի» առանձնացման ժամանակի ճշգրտման հարցերում (*Օվսեյան*, 1976, 369-376. *Հովսեփյան*, 1984, 379-384. *Մյրաճյան*, 1976, 362-368. *Աճեմյան*, 1971): Է. Բ. Աղայանը միջին հայերենի և ժամանակի գրաբարի առնչությամբ գրում է. «Գրաբարն իր հեղինակությամբ, ստեղծված «սրբագան» ավանդույթներով ու իր մշակվածությամբ դեռևս կենսունակ է իբրև գրական լեզու: Նրանից բոլորովին հրաժարվել անհնարին է: Այս էլ, ահա, թելադրում է երկու գրական լեզուների զուգահեռ գործածությունը՝ նրանց գործառության ոլորտների որոշակի բաշխումով ու տարբերակումով» (*Աղայան*, 1974, 78):

Հայոց լեզվի պատմության միջին շրջանը, ըստ ավանդական (տրադիցիոն) շրջանաբաժանման, ընդգրկում է XII-XVI դդ., որի ընթացքում հայերենը շարունակում է հանդես գալ նաև գրավոր լեզվի գործառությամբ, ընդ որում այն ոչ միայն հին շրջանից եկող գրավոր ավանդների շարունակողն է (պատմություն, վարք, փիլիսոփայություն, աստվածաբանություն, բնագիտություն), այլև նոր

ժանրի (սեռի) գրականության սկզբնավորողը (օրենք և իրավունք, բժշկություն, բանաստեղծություն, առակագրություն և այլն):

Մի որոշակի ժամանակում (XI դ. վերջ – XIII դ.) այն հանդես է գալիս պետական լեզվի կարգավիճակով, որ առհասարակ հաղորդակցական առումով ամեն մի լեզվի բարձր մակարդակ է նշանակում: Միջին հայերենը, ի տարբերություն առանձնապես հին գրական լեզվի, ունեցել է այդ բացառիկ (իշխանապետության և թագավորության լեզու լինելու) հնարավորությունը, մի երևույթ, որ հայերենն առհասարակ վերստին պիտի ունենար բավականին ուշ՝ բոլորովին նոր ժամանակներում:

Միջին գրական հայերենի բարբառային հիմքը պատմականորեն առաջ եկած լեզվական վիճակն է՝ իբրև վերբարբառ (կոյնե), որով այն հանրության բնաշխարհիկ և տարաշխարհիկ անջատվածության պայմաններում, հայտնի է, ձևանում է կլիկյան (իշխանապետության) և բնաշխարհիկ (պետականությունից գուրկ) գոյատևության պայմաններում: Եվ ըստ այդմ՝ լեզուն կրող նույն հանրության հասարակական, տնտեսական, մշակույթի ընդհանուր կազմի դեպքում է, որ հնարավոր է լինում խոսելու վերջինիս գրական և ոչ գրական (բարբառ, խոսվածք և այլն) հարաբերության մասին: Ուստի ընդհանուր միջին գրական հայերենը մի կողմից՝ տարաշխարհիկ անջատվածության, իսկ մյուս կողմից՝ բնաշխարհիկ գոյակցության պայմաններում ձևացած վերբարբառի (կոյնեի) հիմքով լեզու է, որ բնութագրվում է «կլիկյան» և (առանձին) «բնաշխարհիկ» (պայմանական) անվանումներով:

Գ. Ջահուկյանի շրջանաբաժանման մեջ առանձնացվում է երկու ենթաշրջան՝ «կլիկյան նորավորման» (XII-XIV դդ.) և «աշխարհաբարացման» (XV-XVI դդ.), որոնք բնորոշվում են ոչ այնքան լայն, քան մասնակի հատկանիշների նշումներով, այսինքն՝ գրավոր աղբյուրների նյութի ոչ բավարար ընդգրկմամբ, ընդ որում ոչ ավելի մեծ ուշադրության արժանացած լեզվի տարբերակմամբ (*Ջահուկյան*, 1954, 79-84):

Ճիշտ է, հեղինակը տալիս է որոշ բացատրություններ՝ «գրական լեզվի հիմքում ընկած» կիլիկյան բարբառային-խոսակցական նորմայի, վերջինիս և ավելի ուշ երևան եկած Կիլիկիայի բարբառի լեզվաքերականական տարբերությունների մասին, այնուհետև՝ նշում է, որ «արևելահայ բարբառները, մասնավորապես Արարատյան բարբառը այս ժամանակ (իմա՝ «կիլիկյան նորմավորման» ենթաշրջանում. – Վ. Հ.) դրսևորում էին առանձնահատուկ գծեր», այդուհանդերձ խնդրի լուծումը, կարելի է ասել, հեռու է սպառիչ լինելուց¹: Այսպիսով, ըստ Գ. Ջահուկյանի տեսության՝ միջին գրական լեզուն «կիլիկյան հայերենն» է՝ իր «նորմավորման և աշխարհաբարացման» միտումներով:

Այնինչ, խնդիրն ավելի իրական լուծում է ենթադրում՝ առավելապես կապված միջին շրջանի գրական լեզվի և նրա բարբառային հիմքի, այլև մյուս բարբառների հետ հնարավոր առնչությունների, գրական տարբերակի գործառական ընդգրկումների, տարածքային բաշխվածության հետ: Գ. Ջահուկյանի այդ կարևոր աշխատությունից հետո հարցի լուծումը, ինչպես գիտենք, մնում է չիրագործված. հետագայում խնդրին (իմա՝ շրջանաբաժանմանը) չեն անդրադառնում՝ չհաշված այն, որ փորձ է արվում լեզվի այդ տարբերակի ինչ-ինչ իրողությունների քննության ընթացքում մասնակի լուծումներ առաջարկել:

2. Միջին հայերենի նյութի հաղորդակցական ընդգրկումը

Լեզվի պատմության շրջանաբաժանումն առհասարակ ինքնանպատակ չէ, այլ հիմնված է լինում արտալեզվական, առավել ևս լեզվական հանգամանքների վրա, կատարվում է այդ պատմությանը վերաբերող երևույթների մասին ավելի իրական պատկերացում ունենալու նպատակով:

Միջին հայերենով մեզ հասած գրավոր աղբյուրները մի մասն են այն ամբողջի, որ ստեղծված է եղել ժամանակի ընթաց-

քում, ոչ միայն, այսպես կոչված, «կիլիկյան հայերենով», այլև այդ շրջանում գործառած մյուս տարբերակներով (գրաբար, այսպես կոչված՝ «գրաբարախառն բարբառ», «բարբառախառն գրաբար» և այլն), ընդ որում ստեղծված մայր հայրենիքում (տարբեր գավառներում), այնպես էլ նրանից դուրս (նաև Կիլիկյան ինքնավարության պայմաններում)՝ վերջիններիս ընդհանուր իմացական, կրթական-հոգևոր միջավայրում, գրված ոչ միայն գրական (գրաբարի բազայի վրա), այլև ժամանակի խոսակցական (բարբառային) հիմքով:

ա) Այդ գրավոր աղբյուրները, իբրև ժամանակի լեզվի քննության առարկա, կարող են հիմք հանդիսանալ միջին շրջանի փուլերի ավելի հստակ առանձնացման համար՝ իրական կապ հին և նոր հայերենի միջև. դա մի օղակ է, որ ինչպես ճանաչողության ամեն մի երևույթի նկատմամբ, այնպես նաև այս դեպքում կարելի է նկատի ունենալ ժամանակի առանցքի վրա, այն էլ ոչ թե երկանդամ, այլ եռանդամ հակադրությամբ, ինչպիսին է հին և նոր շրջանների դեպքում՝ հիմնված ընդհանուր սկզբունքի վրա¹:

Որքան էլ մեզ հասած լեզվական նյութը համարում ենք ժամանակի ընթացքում ստեղծվածի մի մասը, այնուամենայնիվ ունենք պատկառելի քանակով գրական աղբյուրներ, որոնք աչքի են ընկնում իրենց գործառական (ժանրային կամ սեռային) առանձնակիությամբ՝ պետական-իրավական (ասիզք, դատաստանագիրք), բնագիտական (բժշկություն, մաթեմատիկա, աստղագիտություն), գեղարվեստական (բանաստեղծություն), կրոնական-եկեղեցական(ճառեր, ներբողներ, շարականներ), քերականական («մեկնություններ») և այլն, վիմագիր կամ մագաղաթյա, մատչելի՝ նույնությամբ կամ քննական բնագրով²: Դրանք այսօր հայտնի են

¹ Գ. Ջահուկյանի շրջանաբաժանման մեջ, ինչպես վերը նշվեց, ի տարբերություն հին և նոր շրջանների, որոնց դեպքում առանձնացվում է երեքական ենթաշրջան, այս դեպքում դրանք երկուսն են, որ մի տեսական անհամամասնություն է առաջ բերում թեկուզ լոկ տեսական առումով:

² Մինչև այժմ եղած շրջանաբաժանումների, այսպես կոչված, «թույլ տեղը», գրավոր հուշարձանների ոչ ամբողջական և ոչ ըստ ամենայնի քննության

¹ Կույն տեղում. էջ 79, նաև 82:

քննական բնագրերով, մեծ մասամբ եղել են բանասիրական, մասամբ լեզվական ուշադրության առարկա: Այդուհանդերձ, այդ աղբյուրների լեզվի քննությունը չի կարելի համարել ամբողջական (Karst, 1901 (= Կարստ, 2002). *Ղազարյան*, 1960. «Ակնարկներ», հհ. ԱԲ, 1972-1975. *Մուրադյան*, 1982. «Պատմ. քեր.», II, 1975): Նման մի դիտարկում ունի Ա. Մեյեն՝ Կարստի գրքի գրախոսության առիթով. «... դեռևս շատ բան է հարկավոր, որպեսզի հստակ պատկերացում ունենանք հայերենի զարգացման մասին, և ամենաէական հարցերը մնում են լուծման կարոտ» (*Մեյե*, 1978, 581):

բ) Ոչ միայն աշխարհագրական տարանջատվածության, այլև օտար անհարկավորության պատճառած խորթացման հետևանքը լինում է այն, որ հանրության հաղորդակցական միասնությունը դառնում է ջլատված, ընդամին մի կողմից՝ օտարաբան տարրերի, մյուս կողմից՝ տեղական-խոսակցական միջոցների առկայության պայմաններում անհնարին է խոսել միասնական լեզվի մասին:

Միջին շրջանի հայերենը օտարլեզվյան փոխնիփոխ ազդեցության կրող է, ինչպես նաև պատմական հայրենիքի տարբեր գավառներին յուրահատուկ տեղական անմիօրինակ խոսքի արտահայտություն: Օտարամուտ տևական տիրապետության պայմաններում, բնական է, որ տեղ գտնեին «անհարազատ» բառեր, անվանումներ (տերմիններ), խոսքի այլ կառույցներ:

գ) Միջին հայերենի բնույթը բոլորովին այլ է, եթե նկատի ենք ունենում լեզվի տարբերակների առկայությունը՝ միջին շրջանի գրաբար, խոսակցական հիմքի վրա գրականացող լեզու, մայր երկրից հեռացած տարբեր բարբառների կրող հանրության խոսակցական լեզու, որոնք փաստորեն հանդես են գալիս իբրև ընդհանուր որակ, որ ընդունված է անվանել միջին գրական հայերեն:

առնվածի վրա հիմնված լինելն է, որ հակառակ դեպքում կարելի կլիներ սպասել նոր արդյունք՝ ըստ նյութի ընձեռման, լեզվի պատմության տվյալ շրջանի ողջ ընդգրկմամբ:

Միջին գրական հայերենը խոսակցական լեզվի տարրերի գերակշռությամբ երևան եկող հաղորդակցական միջոց է. դա լավագույնս նկատելի է այդ շրջանի բանաստեղծության (Հովհաննես Երզնկացի, Գրիգորիս Աղթամարցի և ուրիշներ), առակագրության (Վարդան Այգեկցի, Ներսես Շնորհալի և ուրիշներ), այլ սեռի (ժանրի) գրավոր հուշարձաններում՝ բժշկություն (Մխիթար Հերացի, Ամիրդովլաթ Ամասիացի և ուրիշներ), իրավագիտություն (Սմբատ Սպարապետ, Մխիթար Գոշ և ուրիշներ), շարականագրություն (Հովհաննես Իմաստասեր, Ներսես Շնորհալի և ուրիշներ) (տե՛ս *Հակոբյան*, 1980, 206-286): Մեծ տեղ ունեն ժամանակի ձեռագիր հիշատակարանները, որոնց լեզուն առաջ է բերում որոշակի պատկերացում միջին շրջանի, իբրև գրավոր, չնչին մասով միասնական, առավելապես տարբերակային լեզու (*Մաթևոսյան*, 1988. *Խաչիկյան*, 1950. նույնի, հհ. Ա-Գ, 1955-1967):

դ) Ինչպես ցույց են տալիս գրավոր աղբյուրները, միջին հայերենը ներկայանում է գրական նորմավորման ավելի ցածր մակարդակով, քան հին գրական հայերենը:

Եթե հին գրականում օտարլեզվյան ներթափանցումը (ասորաբան, հունաբան և այլն) մեծ մասամբ մշակութային էր, քան բանավոր-խոսակցական, ապա միջին շրջանում՝ ընդհակառակը, գերակայում է վերջինը, և դա անվարան բացատրելի է այն հանգամանքով, որ նվաճողների լեզուն (մոնղոլ-թաթարական, թյուրքական և այլն) չունեի այն մշակվածությունը, որ նկատելի էր հին շրջանի հայերենի հետ այլ լեզուներն՝ իրենց առնչության դեպքում:

Թեկուզ միայն այդ փոխառությունների նման տարբերությունը բավական է ասելու, թե միջին գրական հայերենը որակապես այլ է, քան հին գրական հայերենը, որը և ենթադրում է նոր, ուրույն սկզբունքների և մոտեցումների վրա հիմնված ուսումնասիրություն:

3. Միջին հայերենի նյութը գիտական ուսումնասիրություններում

Այս շրջանի գրական հուշարձանները, բնականաբար, քննության առարկա են եղել հայ գրավոր մշակույթի և հայագիտության տարբեր խնդիրների պարզաբանման բերումով: Դրանց անդրադառնալը նախկինում հեռու է բավարար լինելուց, որ կարելի է բացատրել նյութի ծավալի, բովանդակության բազմազանության, լեզվական տարբերակների հասկանալիության աստիճանի տարբերության հանգամանքներով: Կան միջին հայերենին նվիրված տարբեր աշխատություններ, որոնք արժեքավոր են, կարևոր հայոց լեզվի պատմության համար, սակայն ամբողջական չեն (տե՛ս, օրինակ, *Յովսիմանյան*, 1897):

Այսպես, քերականությունների որոշակի մասին, այսպես կոչված, «գրչության արվեստի» հայտնի նմուշներին անդրադարձել են հիմնականում քերականական ըմբռնումների պարզաբանման նպատակով, իսկ դրանց լեզուն, իբրև առանձին նյութ, չի եղել հատուկ ուշադրության առարկա:

Անցյալ դարի 70-ական թթ. նկատվեց որոշակի աշխուժացում այս շրջանի լեզվի պատմության լիաժամպալ նկարագրության նպատակով՝ գրավոր աղբյուրներին լայն ուշադրության դարձնելով: Խոսում են լեզվի, մի տեսակ, բազմաձևության մասին, այն, որ գրավոր հուշարձանները ներառում են խոսակցական, նույնիսկ բարբառային բառեր և քերականական ձևեր, որոնք հեռու են նույն ժամանակի, այսպես կոչված, միջին գրական «ստանդարտից» (*Мурадян*, 1976, 366-367):

Ներկայումս խնդիր է առաջանում կատարելու միջին շրջանում երևան եկած գրավոր աղբյուրների լեզվի լայն քննություն՝ թե՛ քանակապես և թե՛ նյութի լայն ընդգրկմամբ (լեզվի բոլոր բաղադրիչների հաշվով)՝ ավելի իրական պատկերացում ունենալու համար¹: Այսպիսի մտածումով էլ տարիների ընթացքում մեր կատարած աշխատանքը, որքան մեզ այն հաջողվել է, հիմք է հանդիսա-

նում առանձնացնելու միջին հայերենի ոչ թե երկու, այլ երեք ենթաշրջան:

4. Միջին հայերենի պատմության երեք ենթաշրջանի առանձնացումը

Միջին հայերենի պատմությունը, իբրև առանձին շրջան, ժամանակային և գործառական օղակ է հին և նոր հայերենի միջև, մենք բաժանում ենք երեք ենթաշրջանի՝ ա) գրական ոչ ընդհանուր նորմավորման ենթաշրջան (XII-XIV դդ.), բ) գրական նորմայի թուլացման և բարբառային աշխուժացման ենթաշրջան (XV դ.), գ) գրական ընդհանուր նորմայի հաստատման փորձերի ենթաշրջան (XVI դ. - XVII դ. սկիզբ):

Առաջին ենթաշրջանն ունի ժամանակային ավելի մեծ ընդգրկում, քան մյուս երկուսը, որը բացատրվում է ամենից առաջ երևան եկած պետական լեզվի հանգամանքով, մի հանգամանք, որ հաշվի է առնված նախկինում գրված բոլոր աշխատանքներում (*Ջահուկյան*, 1954. նույնի, 1956. *Мурадян*, 1976, 362): Որքան էլ մյուս երկու ենթաշրջանները ժամանակի ընդգրկման առումով, գրավոր աղբյուրների սակավությամբ զիջում են առաջինին, դրանցում նկատելի են որակական ակնհայտ տարբերություններ, թեկուզ եթե հաշվի առնենք միայն ոչ գրական (բարբառային-խոսակցական), ինչպես նաև օտարլեզվյան ձևերի գերակայությունը, որն այս դեպքում առանձնացման էական հատկանիշ է:

Նախ նկատի ունենք արտալեզվական այն հանգամանքը, որ միջին հայերենը, իբրև գրական լեզու, իրականացրել է մի կողմից՝ պետական-պաշտոնական լեզվի գործառույթներ Կիլիկյան հայկական պետության մեջ, մյուս կողմից՝ հանդես է եկել իբրև ընդհանուր լեզու մայր հայրենիքում («բնօրրանում»): Առկա է գործառական (ֆունկցիոնալ) որոշակի տարբերակվածություն, որ էական է լեզվի ընդհանուր բնութագրի համար:

Պետք է նաև ուշադրության առնել հիշյալ տարբերակների բուն պատմական փոփոխությունները, ընդամին ոչ միայն ներքին

¹ Այս շրջանի գրաբարի բնորոշ օրինակ է Հակոբ Ղրիմեցու (XIV-XV դդ.) տոմարագիտական երկերի լեզուն (տե՛ս Հակոբ Ղրիմեցի, 1987, էջ 126-308):

պայմաններում, այլև արտաքին առնչությունների (այլ լեզուների հետ շփումների) հետևանքով: Ըստ այդմ՝ մանավանդ այն, որ «կիլիկյան» տարբերակը շփումներ է ունեցել եվրոպական լեզուների, իսկ բուն հայրենիքում գործառու տարբերակը՝ արևելյան լեզուների հետ:

Այնուհետև, դա մի շրջան է, որ ընդգրկում է լեզվի գործառույթյան ոչ միայն հնից եկող, այլև նոր շերտեր՝ կրոնակեղեցական, փիլիսոփայական, իրավական, քերականական, պատմագիտական, բժշկագիտական, գեղարվեստական (ներբող, բանաստեղծություն, առակագրություն, հանելուկ և այլն):

ա) *Գրական ոչ ընդհանուր նորմավորման ենթաշրջան (XII-XIV դդ.)*: Այս ենթաշրջանը ամենից առաջ բնորոշվում է նվաճողների օտարլեզվյան բանավոր ներթափանցումների սկզբնավորման, ինչպես նաև ժամանակի խոսակցական լեզվի լայն գործածության դրսևորումներով, քանի որ հին հայերենը (գրաբարը) դադարել էր ընդհանուր գրական լեզու լինելուց, հայտնվել էր սահմանափակ (պատմագրություն, կրոնական-եղեկեցական միջավայր և այլն) գործածության ոլորտում:

Բուն Հայաստանի կենտրոնական և հարավային մասերում սկիզբ առած նոր տիպի օտար ազդեցության, հյուսիսային և արևելյան հատվածում՝ հայ իշխանական տների տեղային-խոսակցական լեզվի դրսևորման, կիլիկյան հայության շրջանում բնօրրանից տեղափոխված և եվրոպական լեզվական մշակույթի հետ պաշտոնական առնչությունների առկայության պայմաններում գոյանում է լեզվական մի նոր, ինքնօրինակ «լեզու», որի առաջին հատկանիշը բազմաշերտ (տարբերակված) լինելն է: Նման կացության մեջ ստեղծված գրական հուշարձանները վկայություն են լեզվական նոր որակի, որ է միջին գրական հայերենը՝ գործառական-տեսակային (ժանրային) բազմազանությամբ: Գրական լեզվի այդ որակն իր հիմքում ուներ հին գրականը (գրաբարը), սակայն դառնում է

միասնական (նորմավորված) սկզբնական շրջանի ամբողջության մեջ:

Լեզվական հատկանիշներ են հնչյունական մակարդակում բաղաձայնների տարբերակված լինելը՝ ամենից առաջ պայթականների ճայնեղություն-խլություն հակադրությամբ, ձևաբանական մակարդակում՝ սահմանական եղանակի ձևերի, հոգնակի թվի կազմության տարբերությունը, բառապաշարի մակարդակում՝ նոր բառերի կազմության և գործածության, այլև փոխառությունների բնույթը:

Առանձնապես այս ենթաշրջանում գրական նորմավորումը միակերպ չի եղել՝ հատկապես վերը նշված հանգամանքներով պայմանավորված: Դա, այսպես կոչված, տարանջատ նորմավորում է, որն ավելի նկատելի է դառնում հետագայում: Նորմավորումը տարանջատ է, եթե նկատի ենք ունենում մի կողմից՝ Կիլիկիայում և հարակից շրջաններում, իսկ մյուս կողմից՝ բուն հայրենիքում (բնօրրանում) լեզվական (բարբառային, ընդհանուր խոսակցական, այլև գրաբար) տարբերակների կիրառության չափերը և ոլորտների ընդգրկումը:

բ) *Գրական նորմայի թուլացման և բարբառային աշխուժացման ենթաշրջան (XV դ.)*: Որքան էլ նախորդ ենթաշրջանը ընդգրկում է ժամանակային մեծ հատված, այն չի հասնում լեզվի ընդհանուր նորմավորվածության, ավելին՝ հետագայում տեղի են ունենում որոշակի թուլացում և հաղորդակցական տարանջատում:

Նկատի ունենալով արտալեզվական հանգամանքները, այլև ժամանակի գրավոր խոսքում բարբառային իրողությունների առավել աշխուժացումը (հմմտ. այդ շրջանի բանաստեղծության, բժշկության, տպագիր գրքերի և այլն լեզուն)՝ ավելի իրական է նման ենթաշրջանի առանձնացումը:

Նախորդ ենթաշրջանում այսպես թե այնպես հաստատված միջին գրական նորման խախտվում է, զարգացման ընդհանուր միտումը նկատելի է դեպի լեզվի աշխարհաբարացումը (իմա՝ գրաբարի առավել թուլացում, լատինաբանության ազդեցության մեծա-

ցում և այլն), որ դեռևս հեռու է նոր գրական լեզվի ամբողջացումից և ամրակայումից:

Այս ենթաշրջանի լեզվական տարաբնույթ իրողությունները վերը նշված տիպի գրավոր հուշարձաններից բացի կան նաև ձեռագիր հիշատակարաններում, վիմական արձանագրություններում՝ թե՛ բառային, թե՛ քերականական բնույթի (հմմտ. *Խաչիկյան*, Ա-Գ, 1955-1967. *Մկրտչյան*, 1980, 72-141. *Բախչինյան*, 1980. *Ավագյան*, 1973, նույնի, 1986. *Ջահուկյան*, 1997, 40-43):

Գրական հուշարձանների (ձեռագիր, տպագիր և վիմագիր) լեզվի ըստ ամենայնի ուսումնասիրությունը, կարծում ենք, ավելի կամրապնդի այս ենթաշրջանի առանձնացման իրական լինելը:

գ) *Գրական ընդհանուր նորմայի հաստատման փորձերի ենթաշրջան (XVI դ. - XVII դ. սկիզբ)*: Նախ՝ նկատենք, որ ընդունված է նոր գրական հայերենի սկիզբը դնել XVII դ., իբրև վաղ աշխարհաբարի ենթաշրջանի սկիզբ, թեև այն դիտում են նաև իբրև միջին գրական հայերենի ավարտ (հմմտ. *Աղայան*, 1962. *Ջահուկյան*, 1964. *Մկրտչյան*, 1980, 11-15): Նման երկվությունը հնարավոր է պարզել գրական աղբյուրների լեզվից քաղված ավելի հստակ հատկանիշների հիման վրա: Այս ենթաշրջանի ավարտ են դիտում XVII դ. սկիզբը (10-20-ական թթ.):

Ընդհանուր վիճակի լավագույն օրինակ է Թովմա Մեծոփեցու երկերի լեզուն: Որքան էլ հեղինակը ձգտում է գրաբար շարադրանքի, առավել չափով նորություն են ժամանակի աշխարհիկ մտածողությունը (գրաբարի մեջ), խոսակցական (եթե ոչ նաև բարբառային) ներթափանցումները, օտար բառերի և պատմական անվանումների (տերմինների) գործածությունը:

Այս ենթաշրջանի գեղարվեստական խոսքի նմուշներ են, օրինակ, Գրիգորիս Աղթամարցու տաղերը, Քուչակի հայրենները, որոնք ներկայացնում են լեզվական մի այնպիսի վիճակ, որում կան և՛ գրաբարի և «աշխարհաբարի» (միջին հայերենի), և՛ ժամանակի

խոսակցական-բարբառային տարրեր (հետագա կոնկրետ անվանումով՝ Վանի բարբառին բնորոշ):

Եզրակացություններ

1. Հայերենի գրավոր շրջանի պատմությունը իր հիմնական գծերով բաժանված է տարբեր շրջանների և ենթաշրջանների, որ հիմնված է ըստ հնարավորին մատչելի գրական հուշարձանների տվյալների վրա:

2. Հայերենի պատմության միջին շրջանը բաժանում են երկու ենթաշրջանի, որ ընդունված է հայերենագիտության մեջ, թեև որոշ նկատառումներով կարելի է համարել առարկելի: Այն հայտնի է որոշակի տարբերակներով՝ հին գրական (գրաբար), միջին գրական («կիրիլկյան»), խոսակցական (բարբառային)՝ միջանկյալ առընչություններով հանդերձ:

3. «Կիրիլկյան միջին գրականը» այդ տարբերակներից մեկն է, որ համեմատելի է գրաբարի հետ՝ գրական նորմավորվածության հատկանիշով, այլև համեմատվել նոր գրական հայերենի հետ՝ պետական լեզվի կարգավիճակ ունեցածի հաշվով:

4. Միջին շրջանի հայտնի և նոր, տարբեր ձևի և բնույթի գրավոր հուշարձանների լեզվի ավելի մանրամասն քննությունը հիմք է, առանձնացնելու, ինչպես վերը ներկայացվեց, երեք ենթաշրջան:

Ներսես Շնորհալին և միջին գրական հայերենը

Ներածություն

Հին գրական հայերենի պատմությանը չի նվիրվել այնքան մեծ թվով լեզվագիտական աշխատություն, որքան միջին գրականի դեպքում է, իսկ վերջինս այնպես լավ չի ուսումնասիրված, ինչպես առաջինը: Սա արդի հայերենագիտության խնդիր է, արդիական հիմունքներով լուծում ենթադրող:

Միջին շրջանի հայերենով մեզ հասած ամեն մի գրական հուշարձանի, ընդ նմին՝ հեղինակային որևէ երկասիրության առանձին քննություն, հարկավ, կարող է նպաստ լինել այդ խնդրի լուծման գործին:

Ներսես Շնորհալու (1100-1170 թթ.) երկերը միջին գրական հայերենի ամենավստահելի և ստույգ վկայություններից են՝ բազմաշերտ և տարբերակային, բովանդակության առումով՝ բազմիմաստ և նպատակադիր: Այդ երկերի լեզուն, իբրև նմուշ միջին գրական հայերենի, հասկանալի պատճառներով, մինչև օրս չի եղել գիտական քննության առարկա:

Միջին հայերենի պատմության պարբերացման հարցն ունի ավելի լայն քննության և ըստ այդմ ավելի հավանական լուծման կարիք: Այդ պարբերացման մեջ Շնորհալու գրական ժառանգությունը ենթադրում է լեզվական կողմի մանրամասն և ընդգրկուն ուսումնասիրություն:

1. Միջին հայերենը լեզվի պատմության ուսումնասիրության ներկայիս պայմաններում

Միջին գրական հայերենի բնորոշման մեջ Շնորհալու լեզվի կարևորության մասին հստակ պատկերացում ունենալու համար հարկ կա հայացք նետելու հայերենի այդ որակի պատմությանը, թեկուզ սեղմ ձևով: Միջին գրական հայերենին նախկինում՝ սկսած առանձնապես հ. Ղ. Հովնանյանի և Յ. Կարստի հատուկ աշխատություններից, գրվել են զգալի թվով ուսումնասիրություններ, որոնք աչքի են ընկնում նյութի սահմանափակությամբ, հարցադրումների միօրինակությամբ, ընդ որում ոչ այնքան տեսական քննության, որքան սակավ, գրեթե նույնօրինակ փաստերի նկարագրության ձևով, որոնց այստեղ չենք անդրադառնում (*Յովնանյան, 1897, Karst, 1901*):

Հին գրական հայերենը, որ հայտնի է նաև գրաբար («գրոց լեզու») անվանումով, ընդհանուր հաղորդակցական, ինչպես նաև

գիտական քննության յուրօրինակ երևույթ է հայ բազմադարյան գրավոր մշակույթի պատմության մեջ¹:

Հայերենի այդ տարբերակը օրինակ է ոչ միայն բազմապլան հաղորդակցման կենսունակ («կենդանի») միջոցի, այլ նաև գործառույթյան ինտենսիվության առումով, ոչ միայն այլ տարբերակների հետ գոյակից լինելու, այլև դրանց առաջխաղացմանը զարկ տալու տեսանկյունից (*Համբարձումյան, 1990*):

Հայտնի է, որ գրավոր մշակույթի ժամանակների գրական հուշարձանների լեզուն, որի հիման վրա միայն կարելի է ավելի լայն պատկերացում ունենալ նաև միջին հայերենի գոյության և գործառույթյան վերաբերյալ, մնում է ոչ ամբողջական և ըստ ամենայնի քննության առնված իրողություն²:

Պատմագրության, հիշատակագրության, բանաստեղծության, գիտական (մանավանդ բնագիտական) բնույթի երկասիրությունների լեզվական նյութը դեռևս ոչ ամբողջովին է ճանաչված և քննված: Ժամանակի մեծագույն հեղինակ Շնորհալու գրական ժառանգությունը վառ օրինակ է միջին հայերենի, նրա երկերի թեմատիկան, իմաստուն հոգևորականի յուրօրինակ մտածողությունը իրենց հետ բերում են լեզվի տարբերակային յուրահատկություններ:

Հայտնի է, որ Շնորհալու գրական ժառանգությունը ժանրային առումով ոչ միայն ավանդական է, այլև կարելի է ասել՝ նորարար: Նա ավանդական է, իբրև անմիջական շարունակող տաղասաց և գանձերի հեղինակ Գրիգոր Նարեկացու, նա նորարար է

¹ Հայերենի այդ տարբերակի բնորոշմանը նվիրվել են անհամեմատ մեծ թվով ուսումնասիրություններ՝ թե՛ անցյալում և թե՛ հետագա ժամանակներում. հարցը հետևյալն է՝ այն եղել է արհեստական (այլ լեզուների, հատկապես հունարենի ու ասորերենի, կամ էլ միաժամանակ և՛ հունարենի, և՛ ասորերենի նմանակումով [պատճենումային]), թե՛ ժամանակի ընդհանուր բարբառային վիճակի (կոյնեի) հիմքի վրա բարձրացած ինքնուրույն («հայեցի», «հայկաբան») լեզու. այս հարցը սկզբնական գրավոր շրջանի՝ ներկայումս ցուծված հարցերից է, եթե ոչ ամենահիմնական, առանցքային հարցը:

² Բառապաշարի առումով Նորայր Բյուզանդացու ձեռագիր բառարանից հետո թերևս նոր ձեռքբերում է Ռ. Ս. Ղազարյանի և Հ. Ս. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանը» (հ. 1-2, Ե., 1987-1992), որն այնուամենայնիվ լիակատար չէ:

ատակների և պոեմների հորինման առումով, թեև դրանք ունեին ոչ ցայտուն դրսևորում անցյալում: Ինչպես տեղին գրում է Ս. Ղազարյանը, «Ներսես Շնորհալին լայնորեն օգտագործում է գրական մի այլ տեսակ՝ առակագրությունը, որը մինչ այդ հայ գրականության մեջ շատ թույլ էր երևում» (*Ղազարյան, 1954, 2-րդ հրատ.՝ 1981, 293. նույնի, 1960*):

Գեղարվեստական ժառանգության (պոեմ, ողբ, տաղեր և գանձեր և այլն) լեզուն պարունակում է երեք շերտ՝ գրաբար, բարբառ, (ժողովրդա)խոսակցական տարբերակ («լեզու»)։ Վերջինս՝ (ժողովրդա)խոսակցականը, կարծում ենք, կոյնեի (վերբարբառային լեզվի) վիճակի է՝ ի հակադրություն բարբառների և գրականի (գրաբարի):

Ի դեպ՝ փոքր-ինչ այլ է ժամանակի պատմագրության լեզուն, որում ավելի նկատելի է անցյալի եկեղեցական գրականության նմանակման («ընդօրինակման») միտումը, մի երևույթ, որ ընդհանուր առմամբ չենք գտնում գեղարվեստական երկերում. ժամանակի պատմիչներն ավելի են տեղ տալիս Աստվածաշնչի և հարակից գրքերի լեզվական ոճերին և արտահայտություններին, բանաձևերին, իմաստային համընկումներին: Եվ այդուհանդերձ, նկատելի են ժամանակի խոսակցական լեզվի, ինչպես նաև բարբառների ներթափանցումները: Արիստակես Լաստիվերտցին, մանավանդ Վարդան Արևելցին նման բնութագրի համար տալիս են բավականին սակավ, բայց լիովին անառարկելի տվյալներ: Հետագա պատմիչների երկերում բարբառային և խոսակցական լեզվի տարրերը եթե ոչ քանակապես, ապա ձևով ավելին են (հմմտ. Թովմա Մեծփեցի, Գրիգոր Դարանաղցի և ուրիշներ):

Միջին շրջանում մասնագիտական գրականության մեջ, մանավանդ բժշկագիտական անհրաժեշտ տերմինաբանության ստեղծման առումով մեծ տեղ է տրվում ժամանակի բանավոր խոսքում առկա բուսանունների, տնկիների անունների, ցավերի և պակասությունների («նեղությունների») նշանակումների գործածությա-

նը, ընդ որում ամենից առաջ բժշկական ինքնուրույն երկերում, թարգմանություններում՝ իբրև համապատասխան օտար անվանումների համարժեքներ (հմմտ. Ամիրդովլաթ Ամասիացի, Մխիթար Հերացի, Ասար Սեբաստացի, Իշող, Գրիգորիս և ուրիշներ): Նույնը կարելի է նշել իրավունքի վերաբերյալ երկերի լեզվի դեպքում (հմմտ. Անտիոքի Ասիզք, այլև Սմբատ Սպարապետ, Մխիթար Գոշ և ուրիշներ):

Այս ամենի մեջ, անշուշտ, առանձին է, յուրօրինակ Ներսես Շնորհալու գրական ժառանգությունը, իբրև հայ միջին դարերի մշակույթի սկզբնավորման շրջանի գրավոր խոսքի մեծություն, որ մեզ է ավանդել XII դ. գործառող լեզվի, ինչպես նշվեց, հիշյալ երեք բաղադրիչների՝ գրաբարի, ժամանակի որոշակի բարբառների և (ժողովրդա)խոսակցական լեզվի բացառիկ նմուշ՝ հեղինակային-անհատական ոճի յուրահատկություններով¹:

Ուստի շեշտենք, որ միջին հայերենի ամբողջական պատմության վերաբերյալ լրիվ պատկերացում ունենալու մեջ առանցքային նշանակություն ունի Շնորհալու երկերի լեզվի քննությունը: Ամենից առաջ հարկ կա անդրադառնալու հեղինակի հանելուկների լեզվի այն իրողություններին, որոնք կարելի է որակել իբրև և՛ բարբառային, և՛ (ժողովրդա)խոսակցական, և որոնք որակական տարբերություն են մտցնում միջին հայերենի համակարգում՝ ի համեմատություն հին գրական լեզվի (գրաբարի):

Միջին հայերենի պատմությունը, իբրև առանձին շրջան, որ հանդիսանում է ժամանակային և գործառական օղակ հին և նոր շրջանի հայերենի միջև, ինչպես վերև անդրադարձանք, մենք բաժանում ենք երեք ենթաշրջանի՝ ա) գրական ոչ ընդհանուր նորմավորման ենթաշրջան (XII – XIV դդ.), բ) գրական նորմայի թուլացման և բարբառային աշխուժացման ենթաշրջան (XV դ.), գ) գրա-

¹ Ինչպես այս շրջանի, այնպես էլ Շնորհալու երկերում առհասարակ նկատելի բարբառային իրողությունների առանձին, մանրամասն քննությունը միջին գրական հայերենի պատմության արդիական խնդիրներից է:

կան ընդհանուր նորմայի հաստատման փորձերի ենթաշրջան (XVI դ. - XVII դ. սկիզբ) (*Համբարձումյան*, 2023, էջ 156-174): Շնորհալու գրական ժառանգությունը միջին հայերենի սկզբնավորման ենթաշրջանի իրողություն է՝ հեղինակային խոսքի ամեն կարգի միջոցներով:

2. Շնորհալու գրավոր ժառանգության լեզվի հարցը

Միջին հայերեն որակումը, ինչպես հայտնի է, ավելի լայն է, քան «կլիկկյան հայերենը»: Մեյեն մի առիթով գրում է, որ հայության բնօրրանում անգամ լեզուն միատարր և առանձնակի չի եղել՝ պայմանավորված օտար անհարկի պայմաններով (*Մեյե*, 1978): Սա նկատելի է, սակայն չունի բացարձակ որակում համարելու հիմնավորում, որովհետև ժամանակի ընդհանուր լեզվի ոչ միատարր կիրառությունը մեծապես եղել է հետևանք արտաքին աննպաստ հանգամանքների, իսկ ներքին դրսևորման մեջ, բնականաբար, պիտի լիներ այդպիսին՝ լեզվակիր հանրության իմացության (գրագիտության) մակարդակի տարբերության բերումով:

Հայերենը մշտապես շփումների մեջ է եղել այլ, ընդ որում նույնիսկ ոչ ցեղակից (իմա՝ ոչ հնդեվրոպական) լեզուների հետ: «Կլիկկյան հայերենի» դեպքում ևս այդ շփումներն ունենում են ցայտուն երանգ, որը ոչ այլ ինչ է, քան տարբեր լեզվախմբերի պատկանող լեզուների միջև տարբերություն: Մյուս կողմից՝ երանության ձևով իրականություն դարձած Կլիկկյան պետության մեջ հաղորդակցական միջավայր էր ստեղծվել հատկապես բնօրրանից, այլև հայության տարբեր բնակատեղիներից կամովի կամ հարկադրյալ եկածների համար: Ստեղծվում է, կարելի է ասել, լեզվական մի ընդհանուր ձև (կոյնե), վերբարբառային կամ առանձին տարածքների լեզվի կրողների հաղորդակցական միջոց, որ հայոց լեզվի պատմությանը հայտնի է միջին (գրական) հայերեն կամ «կլիկկյան հայերեն» տերմինով: Վերջինիս վիճակը XII դ. 30-70-ական թթ. կտրվածքում լավագույն պատկերացում է տալիս մեծանուն Շնորհալու (Կլայեցու) գրավոր ժառանգությունը:

Նա գրել է իր ժամանակի լեզվով, և դա բնական է: Սակայն հարց է այն, թե ինչ որակում պիտի տրվի այդ լեզվին՝ գրաբար, խոսակցական («կլիկկյան») հայերեն, ժամանակի բարբառ: Հարց է նաև այդ շրջանի գրաբարի ինչպիսին լինելը. լեզուն իրականության արտացոլում է, որ այս դեպքում ևս նկատելի է: Ուստի նրա երկերի լեզուն արտահայտություն է ժամանակի հայ իրականության վայրիվերումի: Անվանի բանասեր-գրականագետ Պ. Խաչատրյանը գրում է. «Դժվար է Շնորհալուն պատկերացնել ներանձնացյալ կրոնավորի դերում: Նրա պոեզիան, անտերունչ ժողովրդի քաղաքական ճակատագրով համակված նրա հրապարակախոսությունը լավագույնս բնութագրում են ակտիվ ու շրջահայաց գործչին, բարոյական վերադաստիարակման ու հայրենասիրական խրատներ է տալիս և, մանավանդ, միասնության ու համախմբման կոչ է հղում իր ցրված ժողովրդի զավակներին: Նրա լավագույն երկերը քաղաքական ու հայրենասիրական հզոր շեշտ ունեն և այդ իմաստով կարող են դրվել Խորենացու և Եղիշեի էջերի կողքին» (*Մասունագիրք հայոց*. 2018, էջ 142):

Շնորհալու (Կլայեցու) գրավոր ժառանգությունը լեզվի առումով նույնպես բազմաշերտ է: Վերը նշված լեզվական տարբերակների դրսևորումները գտնում ենք նրա երկերում, ընդ որում ոչ թե միախառն, այլ, այսպես կոչված, ըստ ժանրի պատշաճության: Այստեղ կարևոր է նաև լեզվի ռճավորման հանգամանքը. հանրության լայն խավերին ուղղված երկերում (հանելուկներ և այլն) գրված են ժամանակի խոսակցական ոճի տարրերի գործադրմամբ, դավանաբանական-եկեղեցական երկերը (ճառեր, թղթեր, խրատներ, ներբողներ և այլն)՝ ժամանակի գրաբարի գործադրումով (Ս. Գրքի և հարակից գրականության ոճի հետևությամբ), բեմասացական երկերը (շարական, ժամերգական և այլն) ներառում են գեղարվեստի երանգներ՝ թաթախված սուրբգրային ոճի տարրերով, հագեցած նույնպիսի ներշնչումով: Այդ ամենի վրա, ինչպես ասում են, թևածում է գեղարվեստական վսեմ մտածողությունը՝ պատկերավոր ու

աստվածաշնչական. հմմտ. բնաշխարհի անցյալի ու վիճակվածի հակադրությունը՝ «Քանզի և դու երբեմն էիր վայելչական հարսն ի քաղի, / Մերձաւորաց յոյժ ցանկալի, հեռաւորաց փափագելի» («Մատենագիրք հայոց», հ. ԺԲ, էջ 164):

«Թուղթը», իբրև գրական տարատեսակ («Ժանր»), Շնորհալու գրավոր խոսքի ամենածավալուն մասն է՝ գրված ժամանակի գրաբարով, որ վկայություն է ոչ միայն հին կամ դասական մատենագրության ավանդների պահպանման, այլև զարգացման ու հարստացման, իսկ բառամթերքի առումով այդ խոսքը պարունակում է բառային նորակազմություններ, գրական ձևերի մասնակի վերածում խոսակցականի, ունի բառերի իմաստային տարբերություններ, ոճական հանդիսավոր շեշտադրում: Նման իրողությունների առանձին քննությունը հայոց լեզվի պատմության համար ունի մեծ նշանակություն:

Անգերագնահատելի է «Մատենագիրք հայոց» շարքի հատորներից երկուսում (հ. ԻԱ, Ե., 2018, 1362 էջ, հ. ԻԲ, Ե., 2022, 966 էջ) Շնորհալու երկերի համահավաք հրատարակումը: Դրանով լայն շրջանառության մեջ են դրվում ինչպես ծանոթ, այնպես էլ սակավ հայտնի կամ անհայտ գործեր, որոնց քննական բնագրերը, ինչպես ընդունված է ձեռագրերի վերակազմության (ձեռագրագիտության) տրադիցիայի մեջ, ի մի են բերվում հին գրական հայերենի օրինակով, մի մոտեցում, որ ոչ միայն առհասարակ, այլև տվյալ դեպքում հայոց լեզվի պատմության առումով, կարելի է ասել, տարակուսելի է, քանի որ ըստ այդմ՝ բնագրի «ինքնությունը» հայտնվում է կախման մեջ հին լեզվի «օրենքներից»¹:

¹ Որքան էլ նրա երկերի քննական-բնագրային հրատարակություններում, ինչպես այլ դեպքերում, միտումը ձեռագրական («գրչագրական») տարբերություններն ըստ գրաբարի համակարգի միօրինականացումն է, այնուամենայնիվ դրանցում անպայման նկատելի է հիշյալ տարբերակներին վերաբերող լեզվական այս կամ այն որակը: Այլ հարց է, թե որքանով է արդարացվում միջնադարյան, նույնիսկ հետագա ժամանակների հեղինակային բնագրերի լեզվին հատուկ տարբերությունները միօրինականացնելը հին գրական հայերենի հենքի վրա. դրանով բոլոր

ա) Այդ տարբերակներից, բնականաբար, գերակայում է գրաբարը, որը ուշ շրջանի է, այն պայմանականորեն կարելի է որակել իբրև միջին հայերենի շրջանի («միջնադարյան») գրաբար, այսինքն՝ մի լեզու, որ ոչ այնքան հնչյունական համակարգի, որքան բառապաշարի, քերականական կառուցվածքի, իսկ վերջին դեպքում՝ հատկապես հոլովման ու խոնարհման մեջ ունի ձևային, երբեմն իմաստային, ոճական զգալի տարբերություններ հին շրջանի լեզվից, մանավանդ «դասական» գրաբարից¹: Հմմտ. «Բայց դու լսեա, ո՛վ սիրելի, տարագրելոյս աղաղակի, / Լե՛ր մխիթար ցաւակցելի եւ ցո՛յց ինձ դեղ բեկեալ սրտի» («Մատենագիրք հայոց», հ. ԻԱ, էջ 159):

Շնորհալու աստուածաբանական-եկեղեցական գործերը գրված են լեզվական այդ տարբերակով, իր ժամանակին եկեղեցական-սրբախոսական միջավայրում գործածվող գրաբարով, որն արմատապես հին է, իսկ շատ կողմերով՝ նոր և միջին հայերենի մտածողությամբ հագեցած:

բ) Խնդրահարույց է հիշյալ երկու տարբերակների՝ խոսակցական («կիլիկյան») հայերեն, ժամանակի բարբառ, հստակ սահմանազատման հարցը, որը ենթադրում է քննության առավել մանրամասնություն և ճշգրտություն: Այդ տարբերակներին բնորոշ լեզվական իրողություններ գտնում ենք Շնորհալու մյուս կարգի երկերում (պոեմներ, հանելուկներ և այլն): Մասնավորապես հանելուկները գրաբար չեն, այլ ժամանակի խոսակցական լեզուն է՝ գործածված հատուկ նպատակադրմամբ (ընկալելի լինել լայն հանրությանը. ըստ Կիրակոս Գանձակեցու՝ «ի գինարբուս եւ ի հարսա-

դեպքերում խաթարվում է հեղինակային լեզվի ինքնությունը, որը շատ կարևոր է առհասարակ հայերենի տարբեր շրջանների բառապաշարի և մյուս իրողությունների փաստացի (in situ) քննության և գնահատության համար:

¹ Այնքան էլ տեղին չէ այդ շրջանի գրաբարով հայտնի մատենագրությունը շարունակաբար որակել «արձայթե դարի», որ գիտության մեջ մերժվել է վաղուց (տե՛ս «Մատենագիրք հայոց», հ. ԻԱ, էջ 46):

նիս»։ տե՛ս «Մատենագիրք հայոց», հ. ԻԱ, էջ 142. հմմտ. Մասցակայան, Սաֆարյան, 1984, 1, էջ 166-174)։

Այնքան էլ դյուրին չէ «կիլիկյան հայերեն» ըմբռնման հարկավոր տեսական-լեզվագիտական մեկնաբանությունը, մանավանդ այն դեպքում, երբ գրավոր նյութի վերլուծությունն առնչվում է նաև լեզուն կրողների էթնիկական տեղաշարժերին, ընդ որում ոչ միաժամանակյա, այլ անընդհատ («հարահոս») ժամանակի մեջ, ինչպես նաև հարևան և միատեղ գոյակցող տարբեր լեզուների կրողների համատեղության հարկադրյալ պայմաններում։ Այս խնդիրը չափազանց «նուրբ» է, ուստի ենթադրում է լուծման հետևողական, առավել մանրամասն իմացություն, և ըստ այդմ՝ քննություն։

գ) Բարբառային տարրերի հարցը սահմանափակվում է ոչ թե առանձին՝ այս կամ այն երկի լեզու լինելու մեջ, այլ ընդհանրապես ոչ աստվածաբանական-սրբախոսական աշխատությունների մեջ (առակներ, հանելուկներ եւ այլն) նմանօրինակ իրողությունների տեղիք տալու հանգամանքով։

3. Անդրադարձ Շնորհալու լեզվի ոչ գրական իրողություններին

Ոչ գրական իրողություններ ենք համարում լեզվական այն տարրերը (բառեր, բառաձևեր, բառերի կապակցություններ, նույնիսկ շարահյուսական կառույցներ, ոճական միջոցների գործածություն և այլն), որոնք տարբեր են ոչ միայն հին կամ դասական, այլև հետագա շրջանի հիմնական գրական լեզվի («գրաբարի») նորմայի համեմատությամբ։

Դրանք, ինչպես արդեն նշել ենք, հիմնականում երկու կարգի են՝ ընդհանուր (կամ մասնակիորեն ընդհանուր) խոսակցական լեզվից և ժամանակի կիլիկյան միջավայրում, նաև բուն օրրանում գործառող բարբառներից հեղինակային լեզվին անցած իրողություններ։ Պետք է նկատի ունենալ, որ բավականին դժվար է այդ կարգի իրողություններին անդրադառնալը, որ, բնականաբար, դեռ չի

նշանակում հեռու մնալ գիտական ուսումնասիրության որևէ ձեռնարկումից։

Ստորև սեղմ վերլուծությամբ անդրադառնում ենք Շնորհալու լեզվի նման իրողություններին՝ «Հանելուկներ»-ից քաղված օրինակներով՝ փորձելով դրանք բերել խմբավորմամբ։ Այդ տարբերություններն այս դեպքում նույնպես, բնականաբար, բերում ենք հին գրական հայերենի, իբրև ստանդարտ լեզվի, համեմատությամբ։

«Հանելուկներ»-ի քննական բնագիրը ձեռագրերի բաղդատությամբ ժամանակին կազմել է անվանի բանասեր-պատմաբան Ա. Մնացականյանը։ Նա ըստ ավանդական (տրադիցիոն) բնագրագիտական չափանիշների դուրս է բերել տարբեր գրչությունների մեջ ամենից հավանական կամ ամենաիրական համարելին («Մատենագիրք հայոց», հ. ԻԱ, 1217-1323)։ Ա. Մնացականյանը նշում է, որ «... հայ գրականութեան աշխարհականացման ամենացայտուն արտայայտութիւններից մէկը, իրօք, Ներսէս Շնորհալու հանելուկներն են։ Նա գրեց աւելի մեծ թվով հանելուկներ, քան միս (իմա՛ նախորդող – Վ. Հ.) բոլոր հեղինակները միասին վերցրած։ Երևոյթի ուժը, սակայն, սուկ քանակի մէջ չէ, այլ գաղափարական բովանդակութեան, ստեղծագործական հնարանքների, ինչպէս նաեւ ժողովրդական հանելուկների լիարժէք օգտագործման՝ թէ՛ ձեւի, թէ՛ բովանդակութեան առումով» (ս. տ.)¹։

Հիրավի, «Հանելուկներ»-ի լեզուն բավականին խառն է, նրանում հանդիպում են ոչ միայն հնչյունական, այլև բառային և քերականական տարբեր, գրաբարին ոչ բնորոշ միավորներ. օրինակ՝ հետևյալ հանելուկի մեջ միաժամանակ գործածված են քերականական *կու* մասնիկը, աշխարհաբարի բացառականի *-ից* մասնիկը, կրավորականի *վ* ցուցիչը, նաև բառերի բարբառային ձևեր. «Տե՛ս, թէ *յուսկի՛ց* ինք ժողովի, / Ջեղ բամբակ, բուրդ հայնց *կու*

¹ Նույն տեղում, էջ 1219։

դիզվի, / Եւ ինք կու գոռա պէս առիծի, / Եւ ի ժամէցն իւր հուր կու թափի» (Շնորհ., էջ 1255): Մեկ այլ օրինակ՝ «Կու գայ մանուկ գեղեցկագեղ, / Արդարամիտ, թագորացեղ, / Նշան եթող ինք յամէն տեղ / Յամէն գուններն համացեղ» (Ն. տ.):

Ի դեպ՝ նկատենք, որ քննական բնագրի հիման վրա կատարվող լեզվական ամեն մի քննություն ինչ-որ չափով պայմանական է, քանի որ բուն ինքնագիր (իմա՝ հեղինակի) ձեռագիր-բնագիրը չէ, որ ներկայանում է, այլ՝ համեմատականը: Նյութի հավաստիության շեմի առումով, ինչ խոսք, իդեալականը պիտի լիներ ինքնագիր-բնագիրը, իսկ դա ժամանակի մեջ դժվար է պատկերացնել:

Նշենք լեզվի տարբեր մակարդակի իրողությունների մի քանի օրինակներ:

ա) Հնչյունական տարբերություններ. *անդալատ* (փխ. *խ*-ով և *թ*-ով), *պոնդոկ* (փխ. *ա*-ով) («Պոնդոկ մի մեծ կայր յաշխարհի» (Շնորհ., էջ 1255. ունի նաև *պանդոկ* ձեռը (էջ 1256)¹. *գուն* (փխ. *ոյ*-ով. «Յամէն գուններն համացեղ», էջ 1257), *կարսով* «կարասով» (*ա*-ի սղում. «Անթի ունի կարսով գինի», էջ 1258). *շափեղսպէս* (փխ. *խ*-ով. «Շափեղսպէս կայ ու փայլայ», էջ 1259):

բ) Բառապաշարային տարբերություններ. այդպիսին են այն բառերը, որոնք պայմանականորեն կարող են նոր լինել, եթե ընդունենք, որ վկայված չեն գրաբարի ամենամեծ՝ «Նոր հայկազյան բառարան»-ում. *շափեղսպէս* «շափիւղայի նման՝ ձևով» («Շափեղսպէս կայ ու փայլայ», էջ 1259). *թագաորացեղ* «ազնվածին» («Կու գայ մանուկ գեղեցկագեղ, / Արդարամիտ, թագաորացեղ», էջ 1257). *խայտոտուն* «գոյնզգոյն» («Ելնէր երթայր կաղ-կաղ ի տուն, / Ոչխար եւ արջառ իւր՝ խայտոտուն», էջ 1262):

Հանդիպում են նաև փոխառյալ բառեր. *թէզ* «արագ, անմիջապես» («*թէզ* մտանէր տանէ ի տուն», էջ 1257). *սինառ* «սահման.

տարածք» («Թագուոր մի կայր, աչուին էր խաժ, / Ժամ մի՝ ժանի ունէր ու բաշ, / Սինառ ունէր ինչի Մարաշ», էջ 1266):

Բառակազմական *-իկ* փոքրացուցիչ-փաղաքշական մասնիկի գործածություն. «Կայր թագաուր մի *աղբասոիկ* / Եւ էր քահանայ խիստ *սարկիկ*, / Ծնաղք չունէր եւ ոչ մէկ *ոքիկ*, / Ի լեռան կայր մերկ ու բոքիկ» (էջ 1260).

գ) Քերականական տարբերություններ. այդպիսին է բայի խոնարհման, գոյականի հոլովման ձևերի գործածությունը. *պիտէի* «պիտի լինէի» («Գերիս յիւր մէջն *պիտէի*», էջ 1253), *աղջիկներ* («Իւր *աղջիկներն* հարբեցան», էջ 1261). *ջահերն* («*Ջահերն* անձեթ զլոյսն տան», էջ 1254), «*Խմեց*, հատոյց զջուրն ի գետէն, / Ձիուն եւ իշուն արար նա քէն, / *Հնձեց*, վերուց զխոտն ի դաշտէն» (էջ 1258). «Կոյս մի կայր՝ աղուոր *աշեր*, / Ունէր կարմիր բարակ *շրթեր*, / Զողջ *գիշերուն* ածէր գրկէր, / Վաղն բարով *եղներ* ի վեր» (էջ 1267):

դ) Նշենք նաև այն, որ հանելուկներում մեծապես գործածական են, այսպես կոչված, միջինհայերենյան բառեր (բառաձևեր), որոնք նախկինում ուշադրության են առնվել համապատասխան աշխատություններում. *հայնց* «ինչպես» («*Հայնց* գեղ գիւր կայ ի վառման», էջ 1258. «Զլեղին արբին *հայնց*, ինչ շաքար», էջ 1262). *զեղ* «զերդ» («*Ձեղ* զլուսին էր նազելի», էջ 1262. «*Ձեղ* զաւազակ զինք կապեցին», էջ 1269. ունի նաև *զերդ*, էջ 1266), *հայնչաք* «քանի դեռ. մինչդեռ» («*Հանչաք* մանուկ էր ու իշխան», էջ 1266. «*Հանչաք* փոքրիկ զերդ զթզուկ», էջ 1266):

Եզրակացություններ

1. Միջին գրական հայերենի յուրահատկությունները հիմք են հանդիսանում ավելի ստույգ պարբերացման՝ փաստական ամբողջ նյութի վրա հիմնված լայն քննության պայմաններում:

2. Ներսես Շնորհալու գրական ժառանգության լեզուն միատարր չէ, որպիսին չէ առհասարակ այդ շրջանի հայերենը, որ ներկայանում է երեք տարբերակով՝ միջին շրջանի գրաբար, (ժողովրդա)խոսակցական լեզու և բարբառներ:

¹ Այսուհետև նշում ենք միայն էջը:

3. Լեզվական նման տարբերակվածությունը հետևանք է ինչպես արտաքին հանգամանքների, այնպես էլ հանրության հաղորդակցական ներքին հնարավորությունների:

4. Շնորհալու երկերի լեզուն, մասնավորապես բառապաշարը օրինակ է միջին շրջանի հայերենի՝ թե՛ գրական և թե՛ խոսակցական յուրահատկությունների տեսանկյունից:

Անանունի «Պատմութիւն» երկի լեզուն

Ներածություն

Հայերենի միջին շրջանի պատմությունը հայտնի է ոչ միայն հանրածանոթ գրական հուշարձաններով, որոնք հայագիտության մեջ քննության առարկա են եղել միմյանցից ոչ այնքան տարբեր ուղղվածությամբ և կողմերով, այլև կան այնպիսիները, որոնք առհասարակ դուրս են մնացել ուսումնասիրողների ուշադրությունից, և ըստ այդմ չեն եղել որևէ քննության առարկա:

Այդպիսին է նորահայտ Անանունի «Պատմութիւն» երկը, որի լեզվի մասին է ստորև ներկայացվող շարադրանքը:

1. Բնագրային տեղեկություններ

Երկի ամբողջական վերնագիրն է՝ «Պատմութիւն Սրբոց հարցն մերոց որք առ Քրիստոս փոխեցան», որ պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. 7620-ում, գրված 1409 թ., այն «գրչագրական» հազվադեպ շտկումներով վերջերս հրատարակվել է Լ. Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները և հայերը» (հ. Բ, Ե., 2007, էջ 506-526) գրքում:

Բնագրի լեզուն բնորոշվում է մի քանի կողմերով. XVIII դ. ընդօրինակություն է, ունի արժեք՝ իբրև «Կիլիկիայի պատմությանը վերաբերող մի հնաբույր աղբյուր», «առանձնանում է սարսափելի ուղղագրությամբ», «ուղղագրական սխալների մի մասն առաջացել է հետագա ընդօրինակողների մեղքով», այլև «պետք է ենթադրել, որ այդ սխալների մեջ իր բաժինն ունի նաև հեղինակը», և ամենա-

կարևորը՝ «դատելով լեզվական առանձնահատկություններից՝ «Պատմությունն», ըստ երևույթին գրված է մի կիսագրագետ հոգևորականի կողմից» (էջ 496). գրության ժամանակը՝ «1248-1275 թթ. միջև ընկած ժամանակահատվածը» (էջ 505):

Որքան էլ այդ ձեռագիրն ունեցել է հետագա «գրչագրական» միջամտություն, այնուամենայնիվ լեզվի առումով կարևոր աղբյուր է XIII դ. սկզբի միջին հայերենի վերաբերյալ, մասնավորապես ոչ ուսյալ հեղինակի հաշվով:

Բնագրի հրատարակության ծանոթագրություններում կան նաև լեզվին վերաբերող նշումներ: Նկատի ունենալով դրանք, այլև ավելացնելով մեր կողմից այլ նկատումներ՝ այս բնագրի լեզվի քննությունը համարում ենք կարևոր՝ իբրև միջին շրջանի հայերենի օրինակ:

2. Ձայնավորների գրությունը

Նման գրությունը հեղինակի խոսքի դրսևորում է՝ պայմանավորված, թերևս, որևէ բարբառի կրող լինելու հանգամանքով:

Բերենք հետևյալները.

ա) *n*-ի փոխարեն՝ *o*. *գովելի* (էջ 508), *թողեալ* (էջ 508), *ժողովեցան* (էջ 512), *խօսնօվանօղ* (էջ 513), *ի ծովս* (էջ 508), *ի ծովէն* (էջ 507), *Հնունկայ* (էջ 506), *Հնունայեցոցնրս* (էջ 508), *վանօրայսն* (էջ 519).

բ) *u* ձայնավորին հաջորդող *j*-ի գրություն, որ պիտի բարբառային հատկություն համարվի՝ *u*-ի երկար (հազագով լրացված) արտասանության արդյունքում. *ամրայցուց* (էջ 506), *աստուածայցուց* (էջ 506), *գիտնայկան* (էջ 516), *եղանայկաորս* (էջ 516), *թագայորեղ, թագայորեցոց, թագայորեցուց* (էջ 506), *լուսայորիչքն* (էջ 516) *մեծայմեծ* (էջ 507), *Կազբիայկան* (ն. տ.), *ի Միջայգետու* (ն. տ.), *ի յիշայտակ* (էջ 508), *նոքայ* (էջ 518), ուխտեայլ էր (էջ 508), *պատերայզմ* (ն. տ., էջ 508), *ըսպարայտերն* (էջ 512), *ընծայայբեր* (ն. տ.), *փառայորէր* (էջ 507), *փառայսիրեալ* (էջ 506).

գ) ը ճայնավորի ոչ տեղին գրություն՝ հավանաբար արտասանության բերումով. *այնրւմ* (էջ 507), *այսրւմ* (էջ 516), *Դանըրչմանք* (էջ 507), *գտէրըն* Լամբրունի (էջ 518), *ըստեղծականըս* (էջ 508), *քաղաքըն* (էջ 509), *շահընշահ* (էջ 506), *ցրայժըմ* (էջ 507), *ցրայն* (էջ 514).

դ) ի > ե, ի նախդրի պահպանում (ոչ վերածում յ-ի), ե > ա. ի *ամօթ Յունաց* (էջ 522), *ներքենի* (իմա՝ ներքինի. էջ 524), *Դարբանտոյ* (էջ 507).

ե) լ (ու) > վ. *անթվելի* էջ 517), *տռավել* (ն. տ.), *հավան լինէր* (էջ 516), *դավանութեան* Հայոց (էջ 516), *հավատ* (էջ 517), *պատվէր* (էջ 516),

զ) հ հագագի անտեսում, կամ անտեղի գործածություն. *աղթութիւն* (էջ 508). *աշխար Յունաց* (էջ 509), մուտ և զել *աշխարիս* (էջ 507), *խոնարութիւն* (էջ 509), վանք ասորի *հաբեղայի* (ն. տ.), *ետոյ* (էջ 512), *եսու* ընկէց (էջ 506).

է) Բառամիջի *վո* հնչակապակցության դիմաց *n*-ի նման արտասանությամբ պայմանավորված գործածություն, *ու* ճայնավորի *ու* արտասանություն. *մի՛ լսեր աղանդատրացդ* (էջ 513), *կնքարութիւն* (էջ 516), *ուստի* (էջ 507) և այլն:

3. Երկրարբանների գրության տարբերություններ

ա) *աւ*, *իւ* երկրարբանի դիմաց *օ*, *աւ*, *յ*, *իու* գործածություն. *ամբարտաւան* (էջ 508), *ամրոցօք* (էջ 523), *ավար* (էջ 507), *ավուրս* (էջ 508), *թագայոր* (էջ 521), *հավատոյն* (էջ 508), *պարըսպօք* (էջ 506), *պարգեւօք* (էջ 508), *միուս* (իմա՝ *մես* // *միս*. էջ 507):

բ) *ոյ*, *ուի*, *ուե*, *ես* երկհնչունների գործածության խախտումներ. *գավառս* (էջ 509), *ի զգուշ լե՛ր* (էջ 513). *ամ թիվս մեր* (էջ 507), *լվեալ* (էջ 509), *միմիանց* (էջ 507), *յուժ* (իմա՝ *յոյժ*. էջ 519), ոչ էին *տեղակ* (էջ 516), *ուխտեայլ* (էջ 508), *տվեալ ի ձեռն* (էջ 509), *տվեալ* (էջ 509).

գ) *ես* > *իս* գրություն. *միմիանց* (էջ 507, 518):

4. Չայնորդների ոչ տեղին հավելում, նաև բացառում, ռ-ի փոխարեն յ-ի գործածություն. *տրայ* (էջ 506), *նրայ* (էջ 506), *եղանայկաորս* (էջ 516, 520), *զվարճայցան* (էջ 522), *զօրայոր* (էջ 510), *կրծնայորաց* (էջ), *եսոյ* (էջ 512), *գավայկաց* (էջ 513), *ի յիշայտակ* (էջ 508), *կա* (էջ 508), *հիայցումն* (էջ 510), *գողայնալ* (էջ 507), *ի Միշայգեսու Ասորոց* (էջ 507). *քրիստոսայսէր* (էջ 509), *յիմացան* (էջ 507), *ամենայլի* (էջ 515):

5. Հագագային հնչյունի գրության տարածություններ

Այս բնագրում սովորական է *ա*-ից հետո *յ* գրությունը, որ *ա* ճայնավորի երկար արտասանության երևույթ է, թերևս, հեղինակի բարբառում (տե՛ս նաև նախորդ խումբը): Կան *h*-ի գործածության շեղումների բազմաթիվ օրինակներ. *հաբեղայ* (էջ 507), *եսու ընկէց* (էջ 506), *եսոյ* (էջ 512), *խոնարութիւն* (էջ 509), *թագայոր* (էջ 508), *ի ամոթ Յունաց* (էջ 522) և այլն:

6. Բաղաձայնների գրությունը

ա) Պայթական ձայնեղի դիմաց պարզ կամ շնչեղ խուլ. *այտըմ* (իմա՝ այդմ. էջ 509), *բերթ* (էջ 512). *ի գանձունց իրոց* (էջ 516), *հանդերց* (էջ 526), *Դարբանտ* (էջ 507), *Դիեարպէքիր* (էջ 508), *Սալչուչիք* (իմա՝ սելջուկներ. էջ 507), *այտմ* (էջ 509), *պղընծին* (էջ 509), *պնտել* (էջ 523), *նախանձել* (էջ 525), *քաչութիւն* (էջ 524), *Խարբերթ // Խարբերթ* (էջ 514), *կործեալ* (էջ 509). *պահանճէլ* (ն. տ.), *սարկավաքունք* (էջ 522), *ըսկիսպն* (էջ 523):

բ) Պայթական պարզ կամ շնչեղ խուլի դիմաց ձայնեղ. *գայլազգիզքն* (էջ 519), *անխարան* (էջ 520), *բորբոզեցաւ* (էջ 509), *Դիեարպէքիր* (էջ 507), *Դիքրանայկերտ* (ն. տ.), *երդան* (իմա՝ երթան. էջ 512), *երդար զհետ* (էջ 526), *ընգեցին* գնա (իմա՝ ընկենուլ. էջ 524), *Կազբիայկան* (էջ 507), *կանդեղ* (էջ 509), *մորդըն* (իմա՝ մորթն, ն. տ.), *ներզնի* (իմա՝ ներքինի. էջ 524), *ի ներգոյ պղընծին* (էջ 509):

գ) Պայթական խուլի դիմաց շնչեղ խուլ կամ ձայնեղ, այլ շնչեղ խուլի դիմաց ձայնեղ. այս դեպքում զգալի թվով ձևեր՝ բնագ-

րի հրատարակման մեջ բերված գրաբարի նորմայի համաձայն, իրական են ըստ բնագրի հեղինակի խոսակցական (կամ բարբառային) ընդհանուր դրվածքի. *գոչեցավ* (այլև *գոչեն, գոչի*. էջ 507, 509, 513). *կանդեղ* (իմա՛ կանթեղ, էջ 509), *Հանձթայ* (էջ 507), մորդըն (իմա՛ մորթ. էջ 508), *ներգոյ* (էջ 509), ոմն *վարթար* ծառայիցն (էջ 523), *քաքեցին* (իմա՛ քակել «բաժանել»։ էջ 507):

դ) Շփական ճայնեղի խլացում, կամ հակառակը. եդ *շխթայս* (էջ 509), *ըսկիսայն* (էջ 523), *վաղճանի* (էջ 508):

7. Եթե հաշվի չառնենք *Արասիկ* «Արաբիա» (էջ 507), *Ասորիկ* «Ասորիք» (էջ 507), *Պատրոսակ* (անձնանուն. էջ 508) ձևերի առկայությունը, ապա կարելի է ասել, թե բնագրում նոր բառեր չկան, բացառությամբ մեկի՝ *կործել* («զլխիվայր շուռ տալ»։ էջ 509), որն, իրոք, միջին հայերենյան բառ է համարվում¹:

8. Բառի գործածության տարբերություններ (աղճատումներ)

Նկատվում է հնչյունի բացթողում կամ հավելում, հնչյունի միացության բացթողում, բայահիմքի լծորդ ձայնավորի խախտում *ժողեալ* (իմա՛ ժողովեալ. էջ 518), *զհանդեց* (իմա՛ հանդերձ) (էջ 518), *կոծացան* սիրտք (էջ 507), առաքեաց գՅունայն (իմա՛ Յովսան. էջ 519), *Նբերկեռ* (էջ 523) և այլն:

Կան օտար հատկանունների գործածության տարբերություններ, որոնց հնչյունական կազմի քննությունը կարող է որոշակի պատկերացում տալ ժամանակի հայերենի, այլև հեղինակի խոսքի վերաբերյալ: Դրանք այնքան տարածված են, շատ դեպքերում նույնիսկ հնչյունապես անհասկանալի, որ բնագրի հրատարակման ժամանակ տողատակի շատ ծանոթագրություններ վերաբերում են դրանց պարզաբանմանը. *Մանիլ* (իմա՛ Մանուել I Կոմնենոս. բյուզանդական կայսր. էջ 520), *Ճուլսին* (իմա՛ Ժուլին II, Եդեսիայի

կոմս, էջ 518), *Նորըսին // Նորսին* (իմա՛ Նուրեդդին իբն- Ջանգի. Սիրիայի էմիր. էջ 519) և այլն:

9. Նոր իմաստով գործածություն. բառիմաստի տարբերություններ

Բերվող օրինակները բնագրում ոչ բացարձակ, այլ հարաբերական իմաստով են այդպիսին համարվում. այնուամենայնիվ, բերում ենք խիստ պայմանականորեն. *լայնեցին* զկալվածս իրեանց ի մէջ ազգաց երից «լայնացնել, ընդարձակել. բաժանել» (էջ 513), *մեծայսնեժ* «շատ մեծ. մեծաթիվ» (էջ 507), *այլսայսեռք* («այլազգիներ»։ էջ 525), *ըմբոնեցավ* «բռնել, բռնն առնել (ֆիզիկապես)» (էջ 512), ամենայն *լերունս* եկեղեցուցն («եղողները») (էջ 517), *նսուել* (փխր. «զնալ, արշավել» (էջ 514), *ոչ երկմտեցին* («վախենալ»), այլ *պնտեցին* («կովել») արիաբար (էջ 523):

10. Օտար բառերի գործածություն

Նման բառերի գործածությունը բնագրում այնքան էլ մեծ չէ, եթե բացառենք օտար հատուկ անունները. *կոմոս* (էջ 509), *կոմոսունք* (էջ 517), *խալիֆա* (էջ 511), *ֆռանկ* (էջ 512, 516 // *ֆռանգ* (էջ 516), *լիկաթ* (էջ 517), *սուլթան* (էջ 508), *բրինձ* (էջ 524), *ֆրերք* (էջ 524):

11. Գոյականական և բայական ձևերի տարբերություններ

Դրանք հանդիպում են հոլովման և խոնարհման ոչ կանոնական տեսքով, ընդ որում ոչ միայն ձևի, այլև գրության տարբերությամբ. *քվեր որդի // որդի քվերն իրոյ* (էջ 506, 510, 512), *ազգէն սրբուն* (էջ 511), *վասն տեղուն* (էջ 508), *ի դրանքն Դարբանտոյ* (էջ 507), *տանիցեք* (էջ 510), *լցուց* (էջ 506), *ցանկախն տեսանել զնայ* (էջ 520), *գա* (էջ 519), *եղեր* (*լինել* բայի անցյալ կատարյալի ձև. էջ 518), *հանսու ակն նորա* (էջ 509), *տիրացաւ* (էջ 506), *եղե* («դրեց»։ *դնել* բայի անցյալ կատարյալի ձև. էջ 516). *եցուց* (փխ. -ոյց. էջ 509), *ունեին* (էջ 512):

12. Շարահյուսական կառույցների տարբերություններ

¹ Բառն ունի ՆՀԲ-ն, միայն «Գիրք վաստակոց»-ի վկայությամբ, այլև կա ՄՀԲ-ում՝ նաև այլ վկայություններով:

Ի տարբերություն գրական ընդհանուր նորմայի՝ դրանք պայմանավորված են ժամանակի բանավոր խոսքի ազդեցությամբ. *մուտ եւ ել աշխարհիս* (էջ 507), *գողայցան առին* (էջ 507), *խոտ լնու ի մորդըն* (էջ 508), *հանսու ակն նորա* (էջ 509), *դեղոյ մահարարին* (էջ 511), *ճրագն ճշմարտութեան* (աստրաբան կառույցի գործածություն. էջ 511), *եւ հողմուն հարեալ ի Եգիպտոս* (էջ 511) և այլն:

Եզրակացություններ

1. Սույն ձեռագրի լեզուն բավականին հեռու է տրադիցիոն գրաբարի գրական նորմայից, որ մեծապես բացատրվում է հեղինակի բարբառախոս լինելով, քան գրագիտության հանգամանքով:

2. Նման գրական հուշարձանի մանրամասն քննությունը կարող է ավելի լայն պատկերացման հիմք հանդիսանալ:

3. Այն գրավոր խոսքի մի նմուշ է, որ ներկայացնում է միջին շրջանի հայերենի ոչ գրական վիճակը, ուստի այն ժամանակի բարբառների վերաբերյալ նյութի օրինակ է:

4. Նկատելի են հնչյունական մակարդակի անհամեմատ մեծ թվով օրինակներ, որ կարելի է նաև խմբավորել՝ ընդհանուր եզրակացության համար:

Հեթում Նդիրցու «Պատմութիւն» երկի լեզուն

Ներածություն

Հայերենի միջին շրջանում ևս գրվել են տարբեր բնույթի աշխատանքներ: Կիլիկյան միջավայրի գրական հուշարձանները պարունակում են այլևայլ բովանդակության տեղեկություններ ժամանակի իրականության վերաբերյալ: Դրանց լեզվի քննությունը, որքան էլ այդ շրջանի լեզվի պատմության վերաբերյալ զգալի թվով ուսումնասիրություններ կան, ներկայումս չի կարելի համարել վերջնական: Կան դեռևս չուսումնասիրված գրավոր աղբյուրներ, որոնք կարևոր են ոչ միայն ինքնին, այլև իրենց իսկ լեզվի առու-

մով: Նման մի գործ է կիլիկյան շրջանի հեղինակ Հեթում Նդիրցու «Պատմութիւն»-ը:

1. Բնագրային տեղեկություններ

Բնագրի բուն վերնագիրն է «Համառոտ պատմութիւն ժամանակաց», որ հրատարակված Լ. Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները և հայերը» (հ. Բ, Ե., 2007, էջ 527-553) գրքում, «ընդգրկում է 1099-1344 թթ. իրադարձությունների համառոտ նկարագրությունը» (էջ 527): Այդ բնագրի երկրորդ մասը, ինչպես նշվում է շարունակության մեջ, «հուշագրական նոթագրություն է հիշեցնում, կարելի է դասել պատմական հուշարձանների պատմության առատությամբ աչքի չընկնող XIV դարի ամենաարժեքավոր սկզբնաղբյուրների շարքը» (էջ 528):

Այդ բնագիրը, Լ.Տեր-Պետրոսյանի գնահատությամբ, «գրված է բավականին գրագետ միջին հայերենով և համեմատաբար կանոնավոր ուղղագրությամբ, որը ձգտել ենք հարագատորեն վերարտադրել ներկա հրատարակության մեջ՝ անհրաժեշտ նկատված հազվադեպ ուղղումները ծանոթագրելով տողատակին» (էջ 537):

Ստորև անդրադառնում ենք այդ բնագրի լեզվին՝ իբրև ժամանակի միջին հայերենի նմուշի¹: Նրանում նկատում ենք հնչյունական, բառային և քերականական զգալի թվով յուրօրինակություններ, որոնք կարևոր են միջին հայերենի, իբրև լեզվի մի նոր որակի, տեսական լայն գնահատության համար:

2. Հնչյունական-ուղղագրական տարբերություններ

Դրանք առանձնապես վերաբերում են ձայնավորների և երկբարբառների, բաղաձայնների ուղղագրությանը, ուղղագրական խախտումներին, ինչպես նաև բառի և բառիմաստի, քերականական ձևերի «միջինհայերենյան» դրսևորումներին:

¹ Բնագրի ծանոթագրություններում կան լեզվին առնչվող դիտարկումներ, որոնք հաշվի ենք առնում:

ա) Ձայնավորների և երկբարբառների գրության տարբերություններ: Ձայնավորի կրկնաձևություն. *Կոստնդին* (փխ. առվ. էջ 537) // *Կոստրնդին* (էջ 540), *ի Հոնմաց* (էջ 539) // *ի Հոունաց* (էջ 540) // *Հոունաց* (էջ 541).

բացթողում. *զՀարյ* (առանց ա-ի) (էջ 541), (գնացի) *ցամքով* (փխ. ցամաքով. էջ 548). *գաղթկան* (էջ 549). *առջին* (առջևը էջ 551).

լիահնչություն. *Ֆրրորիկ* (էջ 538, *Ըոռքեն* (էջ 538) // *Ըոռքեն* (էջ 543), այլ կարգի հնչում. *Լամբրուն* (էջ 542).

երկբարբառի այլ կարգի հնչում (կամ պարզեցում). *միուս* (ամս) (էջ 540), *հեծեղն* (էջ 547), *ձենէր* (ձայնէր «ձայն էր տալիս». էջ 551):

բ) Բաղաձայնների գրության տարբերություններ: Պայթական խուլ (սան շնչեղ խուլ) բաղաձայնի դիմաց ձայնեղ. *վաղջանեցաւ*. (էջ 537, 538, 542), *Դօնիզ* (իմա՛ Թունիս. (էջ 542), *ընդրեցին* (էջ 543).

ձայնեղի դիմաց խուլ. *խանկրուեցաւ* (էջ 540), *խանկրեաց* (էջ 541), *տուկ* (էջ 539), *տուկատ* (էջ 540), *հինկշափթի* (էջ 538), *թագաժառանկ(ս)* (էջ 542), *հանկաւ* (ի Բրիստոս) (էջ 547).

շնչեղ խուլի ապաշնչեղացում, կամ հակառակը, նաև ձայնեղի շնչեղ խլացում. *Սիծիլիոյ* (կղզի) (էջ 548) // *Սիծիլիո* (թագաւորն) (էջ 548) // *ի Սիկիլիա* (էջ 549), *աւաք* (դուստր) (էջ 549, 552), *ազք* (էջ 549).

շփական ձայնեղ / խուլ հարաբերակցության շփոթ. (ի գետն) *Սելեֆկիո* (էջ 538), *ղան* (էջ 541) և այլն:

գ) Ուղղագրական խափանումներ: Այս դեպքում բազմազանությունը զգալի է. գաղտնավանկ ը-ի լիահնչություն, բառավերջի յ-ի կորուստ, կամ հակառակը. *Ֆրրորիկ* (էջ 538), *ձեռնայրրեցին* (էջ 542), *ի Կիլիկա* (փխ.՝ -իս) (էջ 239), *Մարս* (առանց յ-ի. էջ 547).

բառասեղմում, հնչյունի հավելում. *ձեռնայրրեցին* (էջ 542), *համանք* (< հրամանք. էջ 549), *չվի* (< մինչև. բրբռ,՝ *չուր* ինչ «մինչև

որ». էջ 549), *եփ* (< երբ. էջ 549), *պուն* (< պայման. էջ 549), *նայ* (դերանուն. էջ 550).

հնչյունի ասիմիլյատիվ հավելում՝ *ասթաղն* (գիսաւոր) (էջ 550).

ամսանունների խճողված գրություն՝ *կ > ք, պ > խ, ո > ա*, հնչյունի անկում. (ի) *հոքտեմբռ* (էջ 548, 549), (ի) *սեխտեմբռ* (էջ 548, 549), *նայեմբռ* (էջ 549):

3. Բառագործածության տարբերություններ

ա) Նոր բառեր. սրանց մեծ մասը չունեն ՆՀԲ-ն և ՄՀԲ-ն. *թագաւորորդի* (էջ 542), *թագաւորադրայր* (էջ 542), *ձիաւորօրինէք* (էջ 549), *յորսկայք* (էջ 549), *աղվեստոս* («օգոստոս». էջ 551).

մի որոշ մասը չունի ՆՀԲ-ն, բերվում են ՄՀԲ-ում. *գետքերան* (էջ 549), *թուխակն* (էջ 551), *շնոֆոր* («գովելի, շնորհալի». էջ 549)¹:

բ) Օտար բառեր.սրանք հիմնականում հասարակ բառեր են կամ հատուկ անուններ, որոնց կիրառությունը բնագրում համատարած է. *բրինձ* (հֆրանս. prince.. էջ 551, 552), *ըռէ տ-Ֆրանց* (հֆրանս. roi de France. էջ 538, 542), *Ֆրրորիկ* (էջ 538), *տուկ* (հֆրանս. duc. «դուքս», էջ 539), *տուկատ* (հֆրանս. ducat «ոսկի դրամ». էջ 540), *ղան* (պրսկ. xān. էջ 541), *Կեռան* (< հուն. կիր Աննա «տիկին Աննա. էջ 542), *Լիուն* (իմա՛ Լիոն. էջ 543), *կանդարայ* (արաբ. գաղճարա «կամուրջ». հմմտ. հայ. բրբռ. *ղանթար*. էջ 543), *սիր* (հֆրանս. sire. էջ 543), *ղալէ* (կամ *խալէ*. արաբ. galéa «նավ». էջ 543), *Փեռ* (իմա՛ Պիեր. էջ 544), *տամուժեղ* (իտալ. damigella «օրիորդ». էջ 547). *Ճուան* (< Յովհաննէս. էջ 547), *պուրճ* (արաբ. burj «ամրոց». էջ 550), *ջամբոլա* (հֆրանս. chambrelan «սենեկապետ». էջ 552) և այլն:

գ) Օտար բառահիմքով կազմություն. *սղարեղ* (< արաբ. hsar «պաշարել». էջ 541):

4. Քերականական տարբերություններ

¹ *Մոռեղ* «ապստամբել. ընդվզել» (էջ 550) ունի, ՆՀԲ-ն՝ ԳԷ. Ես [= 1292 թվ. գրչություն), կա նաև ՄՀԲ-ում:

Դրանք առանձնապես վերաբերում են հոլովմանը և խոնարհմանը, գրաբարի նորմայի համեմատությամբ.

ա) հոլովման ձևերի տարբերություններ. *տէր Կօռիկօւն* (յ-ի բացթողում. էջ 542), *վասն պոմնին* (ի հոլովում. էջ 549), *այլ բերդեր այլ խլեցին* (հոգնակի՝ -եր. էջ 550), *գնացի առ իրենք* (փխ. թեք հոլովով. էջ 552).

բ) խոնարհման ձևերի տարբերություններ. սրանք, թերևս, գրաբարի նորմայից դուրս կազմություններ են՝ *վաղջանեցաւ*. (էջ 537, 538), *խեղդեցաւ* (էջ 539), *խանկրուեցաւ* (սան *խանկրեաց*, *խանկրեց* (էջ 540, 541, 545), *կոտրեցան* (էջ 543), *թագուեցաւ* (էջ 543), *երեկ* («եկավ» . էջ 545. 547, 555. հմմտ. *երեստ* «տվեց»), (Մսրա) *հեծելն* (էջ 547, 550), *եղիր* («դրեց». էջ 547, 551), *յղրկեց* (էջ 548), *հաւնեցաւ* (էջ 548), (յանկասկած) *յիշվեց* (էջ 549), (այրեց ու) *փլուց* (էջ 549), *երեստ* (էջ 550), *տվին* (էջ 550), (գնաց) *առջեւ տյնին* (էջ 551), *ձենէր* (էջ 551), (է՛ր) *կու լաս* (էջ 551), *ճեղքեց* (գթարթիչքն («կիսեց». էջ 551), (սոր պտուղ) *շինեց* (էջ 551), *տեսել ին* (< էին. էջ 551), (տեսան եւ գոհութիւն) *տվին* (էջ 551), *յղրկեց* (գխ) (էջ 552).

գ) շարահյուսական տարբերություններ, որ առանձնապես նկատվում են խնդրառության, շարադասության, համաձայնության դեպքեր. *աւաք պարոն* «պայլ, խնամակալ» (էջ 541). *դրաք մատնի աւաք դատերն* (էջ 549), *ի նոյն տարիս առին* (ամի. էջ 549), *գտաւ թիթեւ ի մարդուէ*, ու կովեցաւ (էջ 550), *բնաւ լոյս չէր տեսել աչքն* (էջ 551). *եւ ի նոյն ամիս*, ԻԷ յաղվեստօսն մեռաւ Լեռն թագաւորն (էջ 551), *է՛ր չնկեր առ իս*, որ բժշկէի (էջ 551), *վասն իր թագուիէ բերելուն* (էջ 552), *ու կեցաւ* (մնացի. էջ 552):

Եզրակացություններ

1. Սույն բնագրի լեզուն բնորոշ է միջին գրական հայերենին:
2. Քննություն առնված լեզվական նման իրողությունները նոր փաստեր են միջին շրջանի լեզվի պատմության: Դրանք օրինակներ են, որոնք կարելի է նկատի ունենալ միջին գրական հայերենի հետագա աշխատություններում:

3. Նման քննությունը նշանակում է նաև, թե լեզվի պատմության համար ինչ կարևորություն ունի չուսումնասիրված գրավոր աղբյուրներին անդրադառնալը:

4. Միջին գրական հայերենը հարաբերականորեն ինքնուրույն երևույթ է, որ շաղկապում է իր նախորդող (հին) և հաջորդող (նոր) գրական գրական լեզուները՝ պատմական գործընթացում, հնից նորին՝ միջինով. այս երկի տվյալերը ևս այդ են ցույց տալիս:

«Անանուն ժամանակագրական գրառումներ»-ի լեզվի մասին

Ներածական

Պայմանական անվանումով հիշյալ բնագիր-պատառիկը (մի քանի էջ) գտնում ենք Լ.Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները և հայերենը» (Ե., 2007, էջ 554-558) գրքում: Գրչությունը XIV դ. է. «Հիշատակագրությունների բնույթ կրող այդ գրառումները կատարված [են] տարբեր գրիչների ձեռքով» (ս. տ., էջ 554), պարունակում են միջին շրջանի լեզվի բնորոշ զգալի թվով տարբերություններ, ընդ որում այլևայլ բնույթի և կազմության:

Այս վերջին հանգամանքները նկատի ունենալով՝ հարկ է անդրադառնալ այս համառոտ բնագրի լեզվին: Նրանում որոշ բաներ ունեն ծանոթագրություններ, որոնք, բնականաբար, հաշվի են առնվում՝ որոշ լրացումներով:

1. Հնչյունական տարբերություններ. հիմնականում հետևյալներն են.

ա) բառամիջում և բառասկզբում *ը*-ի գրություն. *Կոստրնդին* // *Կոստնդին* (էջ 555), *ի վրայ Սրսու* (էջ 556), *խալլրսեցաւ* (էջ 558).

բ) պայթական ձայնեղ բաղաձայնի դիմաց խուլ, և խուլի դիմաց՝ շնչեղ խուլ. *ավաք* (էջ 557), *կայլ տարի* (< գալ. «եկող տարի». էջ 555), *ի հոքտեմբերի* (էջ 558), *փեռ* (= Պիեր. անձնանուն. էջ 555),

Շուան (= Հովհաննէս. 556, 558), նայիս (< արաբ. nā'ib «կուսա-կալ». էջ 556), խանկրեցին (խանկրել «խանգարել». էջ 557).

դ) կիսաձայն չի դիմաց շփական *վ*, այլ սեռական հոլովի յի բացթողում. (*ի*) թվին (էջ 555, 556), զհիծելն (էջ 557), Լեվոն թագաւոր (էջ 558), Հեթմոն (սակ՝ Հեթմոն. էջ 555).

դ) ձայնավորի սղում. *ի վրայ Սրսու* (էջ 556), *հեծմնով* (< հեծման «հեծյալ. հեծելագոր». էջ 557), *հետեւով* (էջ 557).

ե) երկբարբառի պարզեցում. *զհիծելն* (< հեծյալը. էջ 557), *ի յիր տեղն* (իւր. էջ 557):

2. Բառի (բառակապակցության) տարբերություններ.

օրինակներից երևում է, որ մեծ մասը խոսակցական (բարբառային) երևույթ է. արտասանության հարմարեցում, սղում և այլն, ինչպես նաև *ու* շաղկապի՝ իբրև այս շրջանին բնորոշ բառի գործածություն. *կայլ տարի* (< գալ «եկող տարի», էջ 555), *թաղթնել* «ավերեց. ավարի մատնեց» (իմա՝ պրսկ. taxtān «արշավել»). «ու էառ ու այրեց ու թաղթնեց», ու կեցաւ Գ(3) օր ու դարձաւ» (էջ 555), *Շուհորէորդի* (էջ 556), *դիհ* «կողմ» (էջ 556), *կերակի* (կիրակի օր. էջ 556), *յԱնցմնցկին* (= Անցմնցուկ՝ տեղանուն, թերևս *անցմնցել* բայից (< *անցմնացել* «անցնել-մնալ», փխբ.՝ «(ձի) խաղացնել՝ վարժեցնել» (?). էջ 556), *հեծմնով* (< հեծման «հեծյալ. հեծելագոր». էջ 557), *հետեւով* (էջ 557), *ի յիր տեղն* (էջ 557) և այլն:

3. Բառիմաստի տարբերություններ.

նկատվող օրինակները խոսակցական լեզվի դրսևորումներ են. *իրք* «ոչ մի բան. ոչինչ», *այնել* «անել». «Ի շաբաթ օր կովեցան յուսին դիհն ու *իրք* մի վզէն չկարացին *այնել*» (էջ 556), *դրին կոի* «սկսեցին կովել». «հեծմնով և հետեւով *դրին* կոի» էջ 557), *տուր տուեց* «տուրք վճարեց». (էջ 557), *մեծ պարոն* («վեզիր», արաբ. wazīr. հմմտ. աւագ պարոն. էջ 558):

4. Օտար բառեր.

սրանք հետագայում տարբեր առնչությունների հետևանքով տեղ գտած լեզվական միավորներ են՝ բնորոշ

տվյալ ժամանակաշրջանին¹, *դալէ* «առագաստավոր թիանավ» (հուն. galeā, թուրք. gali). «Ընե Փենն ելաւ ճ 100 *դալէով* ի Սկանտի», թարգմ.՝ «Պիեր թագավորը 100 առագաստավոր թիանավերով գնաց Ալեքսանդրիայի վրա» (էջ 555). *Կոստրնդին* // *Կոստնդին* (էջ 555, 557), *պարոն* (< հֆրանս. baron «մեծավոր՝ իշխան» էջ 555, 557, 558), *բրննին* (բրնն < ֆրանս. prince «իշխան», էջ 556, 558), *մարաջախտ* (էջ 557), *Տարսոյ* // *ի Տարսու* (էջ 556, 557), *նայիս* (< արաբ. nā'ib, պրսկ. nayeib «փոխարքա. կուսակալ», էջ 556), *վզեն* (< վզեան, հպրսկ. vizyāna, պրսկ. ziyā «վնաս». (էջ 556), *կանդարա* (< արաբ. qanṣara «կամուրջ». էջ 557), *տուր տվեց զպարոն Լիպարիտն ու զքաղաքն Տաճկին* (էջ 557), *սուլտան* (< արաբ. sultan «միապետ. թագավոր». էջ 557), *Գադալանք* (= Կատալոնիա, էջ 558), *Պարխուխ* (անձնանուն. էջ 558), *տուայտար* («քարտուղար», բառացի՝ «թանաքամանի պահապան» < պարսկ. (արաբ.) dawādār. էջ 558):

5. Քերականական տարբերություններ.

սրանք մեծապես միջին շրջանի կազմություններ են՝ ի տարբերություն գրաբարի նորմայի, ավելի հասկանալի խոսակցական (բարբառային) տարբերակում.

ա) հոլովման տիպի, հիմքի կազմության, խոնարհման ձևի տարբերություններ. *ելաւ* (էջ 555), *այրեց* (էջ 555), *կեցաւ* (էջ 555, 557), *ի վրայ Սրսու* (էջ 556), *մարաջախտուն* (էջ 557), *Հեթմոն* // *Հեթմոն* (էջ 555, 557), *ի մայիս ամսու* (էջ 556).

բ) բայի անցյալի հիմքին *եր-* մասնիկի հավելումով կազմություններ. *երեկ* (< *գալ* բայի *եկ* հիմքից՝ *եկավ*). «Ու ի մի *կայլ* տարին, յայն օրն, *երեկ* ելաւ ի Տրապոլիս» (էջ 555), «ի մայիս ամսու Ին (20), *երեկ* Տարսոյ նահիպն» (էջ 556).

¹ Իմաստների նշանակումներն ըստ բնագրի ծանոթագրությունների, այլև «Միջին հայերենի բառարանի» որոշ լրացումներով:

դ) սահմանական ներկան *կու* մասնիկի միջոցով. *կու ասեն* «ասում են». «*Կու ասեն*, թե Կոստընդին թագաւոր՝ պարոն Հեթմու որդին, եբեր զհիծելն» (էջ 557).

գ) հին գրական լեզվի նորմայից այլ կարգի շեղումներ. *կովե-ցան* (էջ 556), *չկարցին* (էջ 556), *ի վաղունէնէ* (էջ 556), *դարձաւ ի յիր տեղն* (էջ 557), *հանկաւ ի Քրիստոս* (էջ 558):

Լեզվի շարահյուսական կառուցվածքի առումով մեկընդմիջտ նկատելի է ոչ գրաբարյան (ժամանակի «աշխարհիկ») մտածողության, ամենից առաջ բաղադրիչ մասերի շարադասության մեջ:

Եզրակացություններ

1. Բավականին կարճ (համառոտ) հատվածից ևս նկատելի է ժամանակի միջին հայերենի ինչպիսին լինելը:

2. Եղած օրինակները՝ հնչյունական (գրության կամ ուղղագրության), բառային (բառիմաստային), օտար (փոխառյալ) բառերի, քերականական ձևերի տարբերությունը մեծապես հեղինակային խոսքի մակարդակում է:

3. Բնագրի տվյալները, անկախ «գրչագրական» հնարավոր միջամտությունից, համարում ենք հեղինակային՝ բնորոշ տվյալ շրջանի լեզվին:

Զիլբերտուս Պոռետացու «Գիրք վեցից սկզբանց»-ի լեզվի մասին

Ներածություն

Հին և միջնադարի ժամանակներում հայոց եկեղեցին տոկուն ջանքեր է ի գործ դրել ազգի պահպանության, նրա մշակույթի անխաթար ինքնության, նրա լեզվի անխափան գոյության համար, և դա, անշուշտ, իրականացել է: Եղել են նաև լեզվի և գրավոր մշակույթի տարբեր ազդեցություններ, որոնք ևս հաղթահարվել են:

XIV դ. 10-ական թթ. մինչև XVIII դ. 80-ական թթ. մեզանում եկեղեցական, ըստ այդմ՝ լեզվի և գրավոր մշակույթի ասպարեզում մասնակի միջամտության փորձեր են եղել *լատինաբանություն* ընդհանուր անվանումով: Գրվել են բազմաթիվ աշխատություններ՝ տարբեր բնույթի և ծավալի, սակայն մեկ նպատակով՝ դավանանքի բեկման, որ չի պսակվել հաջողությամբ: Եվ այդպես մնացել է գրավոր մի սովոր ժառանգություն, որ ժամանակի գիտության մակարդակի յուրովի արտացալում է հանդիսանում: Այդ գրականության ուսումնասիրությունն այսօր ևս կարևոր է հայոց ընդհանուր մշակույթի, առանձնապես հայոց լեզվի պատմության տեսանկյունից (տե՛ս *Խաչիկյան*, 1977. *Арешатян*, 1980. *Համբարձումյան*, 2010):

Այդպիսի մի ձեռագիր երկի հայերեն կրկնակի թարգմանության լեզվի քննությանն է նվիրած մեր այս աշխատանքը:

2. Զիլբերտուս Պոռետացու «Գիրք վեցից սկզբանց»-ը

Հայերեն ձեռագիր մատյաններում նկատելի են միևնույն երկի տարբեր թարգմանություններ, որոնք կատարված լինելով տարբեր ժամանակներում, բնականաբար, ոչ նույն անձի (հեղինակի, թարգմանչի, արտագրողի և այլն) կողմից իրականացված, ունենում են լեզվական ակնհայտ տարբերություններ: Վերջիններս ոչ միայն բնորոշ են տվյալ ժամանակի լեզվին՝ առհասարակ, այլև պայմանավորված են թարգմանությունների հեղինակների լեզվական (խոսքային) հակումներով: Նման ձեռագրերի լեզվի քննությունը կարևոր է հիշյալ շրջանի հայերենի ընդհանուր պատմության համար:

Զիլբերտուս Պոռետացու «Գիրք վեցից սկզբանց»-ը հայերեն թարգմանվել է երկու անգամ, առաջինը՝ XIV դ. (1344 թ. հետո, թարգմ.՝ Պետրոս Արագոնացի և Հակոբ Քոնեցի), իսկ երկրորդը՝ XVIII դ. (1792 թ., թարգմ.՝ Ոսկան Երևանցի), երկուսն էլ ձեռագիր են (ՄՄՁ, 1646, էջ 87ա-95ա, ՄՄՁ, 873, էջ 255ա-270բ):

Մատենադարանի հիշյալ ձեռագրերը ժողովածուներ են, որոնք ի թիվս այլ նյութերի ներառում են նաև Պոռետացու հիշյալ գործը, որի լեզվական նյութին անդրադարձել ենք լատինաբան հայերենի պատմության հարցերի ընդհանուր համատեքստում (*Համբարձումյան*, 2010, 351):

Այդ բնագրերը պարունակում են հայերենի միջին շրջանում, այսպես կոչված, սովորովի հայերենի (գրաբարի) և առհասարակ նույն շրջանում հայերենի մեջ ներմուծվող (լատինաբանության) ակնհայտ տարրեր: Ըստ այդմ էլ՝ գործ ունենք ժամանակի լեզվական մի տարբերակի հետ, որում առկա են և՛ ինքնակա, և՛ «ներարկված» ձևեր՝ լեզվի գրեթե բոլոր մակարդակներին (հնչյունական, բառային, քերականական և այլն) վերաբերող իրողություններ:

Նույն երկի տարբեր թարգմանությունների բնագրային համեմատությունը մի փորձ է ցույց տալու հայերենի գրավոր լեզվի վիճակը օտարլեզվյան արհեստական միջամտության արդյունքում (*Հովհաննիսյան*, 2022):

Այս ձեռագրի լեզուն միջին հայերենը չէ՝ տերմինի գիտական իմաստով, այլ միջին շրջանի հայերենը՝ բնորոշման առումով: Ստորև անդրադառնում ենք այդ երկի կրկնակի թարգմանությունների լեզվի բնագրի համեմատական քննությանը՝ քաղվածաբար, հիմնվելով առավել հատկանշական հատվածների նյութի վրա. նախ՝ բերում ենք բնագրի տվյալ հատվածը, այնուհետև նշում ենք նրանում առկա համեմատելի(ներ)ը¹:

Իհարկե, գիտենք, որ նման բնագրային համեմատություն մինչև օրս չունենք, մանավանդ լեզվի պատմությանը վերաբերող աշխատանքներում, եղել են ընդհանուր բնույթի, որակման մակարդակի մատնանշումներ, այնինչ իրական փաստերի քննությունը, որ բացառապես ապագային է վերաբերում, այլ է, պահանջում է համբերատար և մանրազնին քննություն (*Համբարձումյան*, 1990):

¹ Բնագրերը բերում ենք առանց գրչական որևէ էական միջամտության բացառությամբ կետադրական որոշ ուղղումների, ըստ ներկայիս նորմայի:

2. Բնագրային հատվածների գուգադրական քննություն

Ստորև անդրադառնում են շուրջ չորսուկես տասնյակ առավել հատկանշական բնագրային հատվածի լեզվին՝ մեկ առ մեկ ցույց տալու հայերենի մեջ տարբեր ժամանակներում (XIV և XVIII դդ.) շարունակաբար տեղ գտած լատինաբան կազմությունները:

Պարզ է, որ դրանք բառի, քերականական ձևերի տարբերություններ են, որոնք կա՛մ համեմատաբար ժամանակի գրական նորմայի (թեկուզ) սահմաններում են, կա՛մ որևէ չափով հեռու են այդ նորմայից՝ հակված դեպի օտարաբանությունը (տվյալ դեպքում՝ լատինաբանությունը), քանակային առումով վերջինս ավելի ընդգծված ձևով նկատելի է երկրորդ՝ ավելի ուշ կատարված թարգմանության մեջ, քան առաջինի¹:

Պոռետացու նախօրինակ բնագիրը (թերևս՝ գրված իտալերեն) չենք վերցնում իբրև համեմատության ելագիծ՝ եզր, որ բնագրագիտական-թարգմանաբանական այլ խնդիր է, քան մեր այս աշխատանքինը՝ հայերեն տարբեր թարգմանություններ ի լեզվի համեմատությունը (*Համբարձումյան*, 2010):

1. «Իսկ ի տեսակն այս ոչ գտանի, քանզի այնու, որ մարմինն է սպիտակ» (ՄՄՁ, 1646, էջ 87ա): // «Իսկ ըն տեսակս այս ոչ գտանի, քանզի նայնմ թէ մարմին սպիտակ է» (ՄՄՁ, 873, էջ 255ա)²:

Այստեղ ունենք ներգոյական հոլովի կազմության տարբերություն. հմմտ. *ի տեսակն - ըն տեսակս, այնու - նայնմ*:

2. «Այլ արդ ունի տարակոյս ի նախասացելոյն եթէ ո՛չ ինչ տեսակ լինի անփոխարինելի: Իսկ այս էր և իբր ի բազումս, քանզի նոյն բան ճշմարտութեանն և ստույթեանն էր ընդունակ և նոյն սպիտակութիւնն պայծառութեան և մթութեան որ է ի յիրն կամ ոչ է» (ՄՄՁ, 1646, էջ 87ա): // «Բայց ունի երկբայութիւն յառաջ անկելոցն,

¹ Ավելորդ ենք համարում, այնուամենայնիվ, տարբեր ժամանակների այդ գրաբար թարգմանությունները բերել նոր գրական հայերեն («աշխարհաբար») փոխադրելով:

² Չուգադրելի հատվածները նշում ենք երկու գծիկով, իսկ համեմատելի միավորները՝ մեկ:

մի՛ գուցէ ոմն տեսակ փոփոխելի լիցի, և այս թուի ներ բազմաց զի նոյն ընդունակէ ճշմարտի և ստի, և սպիտակութիւն պայծառութեան և մթութեան, և բուն ներում գոլոյն և ոչ գոլոյն» (ՄՄՁ, 873, էջ 255բ):

Ունենք առանձին նախադասութիւնների միացում՝ շարահյուսական կառուցը դարձնելով ավելի բարդ՝ համադասական շաղկապվածության մեջ, բառի, նաև բառաձևի գործածություն. հմմտ. *տարակոյս - երկբայութիւն, ի նախասացելոյն - յառաջ անկելոցն, ո՛չ ինչ լինի անսիրտարինելի - մի՛ գուցէ՛ ոմն տեսակ փոփոխելի լիցի, այս էր և իբր ի բազումս - և այս թուի ներ բազմաց, ի յիրն կամ ոչ է - (է) ներում գոլոյն և ոչ գոլոյն*¹:

3. Վասն զի ի հոգին այլայլութիւն ներհակութեան գտանի (ՄՄՁ, 1646, էջ 87ա): // Զի ներ անձին այլութիւն ներհակութեան գտանի (ՄՄՁ, 873, էջ 255բ). հմմտ. *վասն զի - զի, ի հոգին - ներ անձին, այլայլութիւն - այլութիւն*:

4. «Եւ զի այս պատահի արդեօք ի յայլս զնոյնն ասիլ յարմար կարծեմ յաւելեալ զանփոխարինելի էութեամբ կայացեալս» (ՄՄՁ, 1646, էջ 87ա): // «Եւ զի այս արդեօք պատահի մակ այլոց նոյնն փոխաբերիլ վարկանիմ, վայելչաբար առադրեալ անփոխելի էութեամբ բաղկացեալ» (ՄՄՁ, 873, էջ 255ա-բ). հմմտ. *արդեօք - արդեօք, ի յայլս - մակ այլոց, ասիլ - փոխաբերիլ, կարծեմ - վարկանիմ, անփոխարինելի - անփոխելի, կայացեալ - բաղկացեալ*:

5. «Այլ ի յայնս որ են ի բազումս ոչ է յայտնի, զի արք որ ի բազումս են լինելի է գործոյն, է անկարելի» (ՄՄՁ, 1646, էջ 87բ): // «Սակայն յայնս որք ներ բազմաց են, ոչ է յայտնի, զի որք ի բազումս են ի ներգործութեան, անկարելի է գոլ» (ՄՄՁ, 873, էջ 256ա). հմմտ. *այլ - սակայն, որ են - որք են, ի բազումս - ներ բազմաց, ոչ է յայտնի - անկարելի գոլ*:

6. «Արդ ի յայնսիկ բնութիւնն գաղտաբար ներգործէ» (ՄՄՁ, 1646, էջ 87բ): // «Արդ բնութիւն ներ սոցա գաղտնաբար ներգործէ» (ՄՄՁ, 873, էջ 256բ). հմմտ. *ի յայնսիկ - ներ սոցա* (հմմտ. *Աճառյան*, 1950, 148)¹:

7. «Այլ նրբաքննին նկատելով որպէս գտանեմք զբնութիւնն գաղտաբար ներգործեալ ի գործս, այսինքն զստեղծողն ստեղծուածոց ի բնութիւնն ի գործոյ, քանզի թուով առկայացոյց բնութիւնն, այլ այս այլոյ իմն տեսութեան է» (ՄՄՁ, 1646, էջ 87բ): // «Այլ նրբագոյն նկատելով, զբնութիւնն ներգործութիւնս առնել, ընդարձակապէս գտանեմք, այսինքն զարարիչն արարածոց ի բնութեան ի ներգործութենէ որ թուով զբնութիւն առկայացոյց: Այլ այս մինչև ցայս վայր, զի այլոց տեսութեան է» (ՄՄՁ, 873, էջ 256բ). հմմտ. *նրբաքննին - նրբագոյն, ի բնութիւնն - ի բնութեան, ի գործոյ - ի ներգործութենէ* և այլն:

8. «Արդ ի տեսակացն է, որ նենթակառում (բնագրում՝ առանց յ-ի. - Վ. Հ.) և զենթակայէ ասի, որպէս գիտութիւնն, նենթակայում է որպէս նանձին, և յենթակաէ» (բնագրում՝ առանց յ-ի. - Վ. Հ.) ասի, որպէս զքերականութենէն (ՄՄՁ, 1646, էջ 87բ): // «Իսկ ի տեսակացն ոմն նենթակայում է և զենթակայէ ասի: Հի՛բար մակացութիւն նենթակայում է նանձին, և զենթակայէ ասի, զքերականութենէն» (ՄՄՁ, 873, էջ 256բ). հմմտ. *որպէս - հիբար, գիտութիւն - մակացութիւն, յենթակաէ - զենթակայէ, զքերականութենէն - զքերականութենէն*:

9. «Եւ է որ նենթակառում է՝ և զենթակաէ (բնագրում՝ առանց յ-ի. - Վ. Հ.) ոչ գումեքէ ասի. որպէս սպիտակութիւն Սոկրատայ: Իսկ ոմն ոչ նենթակառում (բնագրում՝ առանց յ-ի. - Վ. Հ.) է՝ և ոչ զենթակաէ (բնագրում՝ առանց յ-ի. - Վ. Հ.) ասի, որպէս մարդկութիւնն Պղատոնի սապէս և յայնս, որ են յանհատ տեսակցութիւն:

¹ Հունարան կազմությունն *սս* դերանվան չեզոք սեռի հոգնակի տրականի ձև, որ վերցրել են լատին հեղինակները, այլև նրանց հետևորդները (Ոսկան Երևանցի և այլք)(հմմտ. *Աճառյան*, 1951, 148):

¹ Բերվող մյուս օրինակներում նշում ենք միայն տարբեր կազմությունները՝ առանց դրանց քերականական բնույթի մատնանշման:

Իսկ է որ ասի զենթակաէ (բնագրում՝ առանց Դ-ի. – Վ. Հ.) և ոչ ումեք ներթակայում (փխ. նենթակայում.- Վ. Հ.) է, որպէս բանականն և մահկանացուն» (ՄՄՁ, 1646, էջ 87բ-88ա): // «Եւ ոմն նենթակայում է և զենթակայէ ոչ ումեք ասի. ո՛րբակ (փխ. պ-ով.- Վ. Հ.) սպիտակութիւն Սոկրատայ: Իսկ ոմն ոչ նենթակայում է և ոչ զենթակայէ ասի, որգոն. մարդկութիւն Սոկրատայ և Պղատոնի. նմանապէս և նոցա, որք միանգամ տեսակաց են անհատք: Իսկ ոմանք նենթակայում ոչ նումեքէն, և զենթակայէ ասին: Հիբար բանական մահկանացուն» (ՄՄՁ, 873, էջ 256բ)¹. հմմտ. *որպէս - որգոն, սասպէս և յայնս - նմանապէս և նոցա, զենթակաէ - նենթակայում, ոչ ումեք - ոչ նումեքէն, ո՛րբակ - հիբար, բանականն և մահկանացուն - բանական մահկանացու* և այլն:

10. «Ուստի յայտ է ի նախադրելոցս, թէ ոմանք են ի նումեք, որպէս սևութիւնն ի յաչս» (ՄՄՁ, 1646, էջ 88ա): // «Յայսցանէ իսկ յայտ է, որք նախեղեալք են կալ ումեք. որգան սևութիւն նաչս» (ՄՄՁ, 873, էջ 256բ). հմմտ. *ուստի - յայսցանէ, ի նումեք - ումեք, որպէս - որգան, ի յաչս - նաչս*:

11. «Եւ գոմանս դժուարին է բացայայտել ուր ուրեք իցեն, որպէս գիտութիւն, հայրութիւն, որդիութիւն, մի թէ ի շարամանութիւն բաղադրողաց և ծնողացն» (ՄՄՁ, 1646, էջ 88ա): // «Բայց գոմանս դժուարին է բացայայտել. հիբար, մակացութիւն, հայրութիւն, որդիութիւն, եթէ ոչ ներշարադրեցելոց, և սերականաց շարամանութեան» (ՄՄՁ, 873, էջ 257ա). հմմտ. *եւ -բայց, որպէս - հիբար, գիտութիւն - մակացութիւն, մի թէ - եթէ ոչ, ի շարամանութիւն - ներշարադրեցելոց*:

12. «Իսկ այնք, որ արտաքուստն պատահին կա՛մ առնել, կա՛մ կրել, կա՛մ կալ, կա՛ լինել ուրեք կամ ի յամումն, կա՛մ ունիլ, ի հարկէ լինիցին: Այլ յայնցանէ որ գոյացականք են, և որք պահանջեն զենթակայն յորում կայանան ի յայնս որ գրի ի գիրս ստորոգու-

թեանցն բաականապէս տրամաբանեալ, իսկ ի մնացելոց ներընդունականացս ձեռնարկեսցուք» (ՄՄՁ, 1646, էջ 88ա): // «Իսկ արտաքուստ պատահեցելոցն կա՛մ առնել, կա՛մ կրել, կա՛մ կալ, կա՛մ գոլ ուրեք կամ ներ յամն, կա՛մ ունել, ի հարկէ եղիցին: Այս յաղագս սայց ենթակայանան, և որք ոչ միայն ներում կայանան, պահանջեն ի գիրս ստորոգութեանց բաականապէս տրամաբանեալ է. իսկ մնացելոցն փութանակի ձեռնարկեսցուք» (ՄՄՁ, 873, էջ 257ա). հմմտ. *ի յամումն - ներ յամն, յայցանէ - յաղագս սայց՝, գոյացականք են - ենթակայանան, ներընդունականաց - փութանակի*:

13. «Արարումն» (ՄՄՁ, 1646, էջ 88ա): // «Ներ գործութիւն» (ՄՄՁ, 873, էջ 257բ). հմմտ. արհեստական նախդրի ներմուծում:

14. «Ուստի սղոցող ոք, յայնմանէ որ սղոցէ, սղոցող յորջորջի» (ՄՄՁ, 1646, էջ 88ա): // «Որգան, հատանող ոք, ըստ այն, որ հատանէ, հատանող յորջորջի» (ՄՄՁ, 873, էջ 257բ). հմմտ. *ուստի - որգան, սղոցող - հատանող, յայնմանէ - ըստ այն, սղոցէ - հատանէ*:

15. «Այլ այնց, որ զսայցն են ստորոգեալք, այնքան յորոց ոչ բնաւ է ստորոգութիւն, որպէս ամենայն մարդիկ են լինելութիւն հասարակ և ընդհանրական մարդոյն» (ՄՄՁ, 1646, էջ 89ա): // «Այլ ստորոգիցելոցն այնք յորոց բնաւ սեռականաբար ոչ ինչ է ստորոգութիւն, որգան. ամենայն մարդիկք, այսորիկ մարդոյ, հասարակ է և հանրական» (ՄՄՁ, 873, էջ 259ա). հմմտ. *ոչ բնաւ է ստորոգութիւն - ոչ ինչ է ստորոգութիւն, որպէս - որգան, մարդիկ - մարդիկք, ընդհանրական - հանրական*:

16. «Ներածումն» (ՄՄՁ, 1646, էջ 89ա): // «Ներբերումն» (ՄՄՁ, 873, էջ 259ա):

17. «Փոխարկութիւն» (ՄՄՁ, 1646, էջ 89ա): // «այլայլութիւն» (ՄՄՁ, 873, էջ 259բ):

¹ Առաջին հատվածում ուղղագրական անճշտությունները ցուցիչ են թարգմանիչների գրագիտության աստիճանի

¹ Հունարան կազմություն՝ սու դերանվան չեզոք սեռի ձև՝ դրված հոգնակիով (հմմտ. *Անառյան*, 1951, 148):

18. «Իսկ այնք, որք զանց առնին՝ ճառեսցին ի գիրս որ յաղագս լինելութեանն է» (ՄՄՁ, 1646, էջ 89բ): // «Իսկ այժմ թողեալք ներ յաղագս լինելութեան ճառին» (ՄՄՁ, 873, էջ 259բ). հմմտ. *զանց առնին - թողեալք, ճառեսցին - ճառին, ներ լինելութեան - յաղագս լինելութեան:*

19. «Եւ ոչ է ի յառնողն կրումն, այլ ի յայն, յոր առնի և ընդունի զարարումն առնողին» (ՄՄՁ, 1646, էջ 89ա-բ): // «Սակայն ոչ է նառնողին կրումն, այլ ի կրող ումն, որ ընդունի զներգործութիւն առնողին ընդունականին» (ՄՄՁ, 873, էջ 259բ). հմմտ. *եւ ոչ է - սակայն ոչ է, ի յառնողն կրումն - նառնողին կրումն, զարարումն - զներգործութիւն:*

20. «Ամանակ» (ՄՄՁ, 1646, էջ 89բ): // «Ժամանակ» (ՄՄՁ, 873, էջ 259բ):

21. «Նմին իրի ի յապագայիցն ձեռնարկեմք, արդ և ըստ նոցայցն, որպէս վաղին ծագեսցէ զարեգակն, և վաղին լինիցի ի նաւամարտութիւն: Երէկ մեռաւ Սոկրատէս» (ՄՄՁ, 1646, էջ 89բ): // «Վասն որոյ յապագայիցն ձեռնարկի և ըստ նոցայցն ասի ինչ անուանակոչութեան իբր կայացելոց դիպին. որզան. ոմն ծագեսցի վաղի և վաղին եղիցի նաւամարտութիւն: Երէկ մեռաւ Սոկրատէս» (ՄՄՁ, 873, էջ 260ա-բ). հմմտ. *նմին իրի - վասն որոյ, ձեռնարկեմք - ձեռնարկի, արդ և - և, ծագեսցէ - ծագեսցի, նմին իր- / վասն որոյ, լինիցի - եղիցի:*

22. Քանզի յոր ինչ ժամանակն է, կա՛մ էր, կա՛մ լինի, ի նոյնումն և երբն է, կա՛մ էր, կա՛մ լինի, որ ըստ նոյն ժամանակին ասի, քանզի երբն որ է ի ներկաէն (բնագրում առանց յի.- Վ. Հ.) ընդ նոյն ներկային համանգամայն լինի ի նոյնումն, իսկ երբն յայնմանէ որ չոգաւ և որ ապառնի է, ոչ երբէք լինիցի միանգամայն» (ՄՄՁ, 1646, էջ 89բ): // «Քանզի տարբերի երբն յորէն, զի նորում միանգամ ժամանակ է, կա՛մ եղև, կա՛մ եղիցի, որ ըստ նոյն ժամանակին ասի, քանզի երբ ներկայն ըստ նոյն ներկային է, և համանգամայն ի նոյնում եղիցի: Իսկ երբն անցելոյն և ապառնոյն ոչ երբէք համան-

գամայն եղիցի» (ՄՄՁ, 873, էջ 260բ). հմմտ. *ի նոյնումն - նորում, համանգամայն - միանգամայն, լինի - եղիցի, միանգամայն - համանգամայն:*

23. «Ուրն և տեղին յորմէ է կամ էրն ոչ բնաւ են միանգամայն ի նոյնումն, քանզի ուրն է ներ պարուրեալն: Իսկ տեղին ի ներ պարունակողն» (ՄՄՁ, 1646, էջ 89բ): // «Իսկ ուրն և տեղին յորմէ է կամ էր, ոչ երբէք համանգամայն է նոյնում, այլ ուրն ընպարագրութեան է, իսկ տեղին ընպարունակողում» (ՄՄՁ, 873, էջ 260բ). հմմտ. *ոչ բնաւ - ոչ երբէք, ներ պարուրեալն - ընպարագրութեան, ի ներ պարունակողն - ընպարունակողում:*

24. «Նան ներհակքն ոչ լինին համանգամայն, ի նոյնումն» (ՄՄՁ, 1646, էջ 90ա): // «Եւ ևս ներհակք ոչ երբէք լինին համանգամայն ի նոյնում» (ՄՄՁ, 873, էջ 261բ). հմմտ. *նան - եւ եւս, ոչ լինին - ոչ երբէք լինին, ի նոյնումն - ի նոյնում:*

25. «Քանզի ընդունի զայլայլումն ամանակաց, վասն զի այլայլի ի մարմինն յամարայնոջ, ի գարնայնոջ, ի ձմերայնոջ, սապէս և ոգին» (ՄՄՁ, 1646, էջ 90բ): // «Քանզի ընդունի այլայլութիւնս ամանակաց, վասն զի այլայլի մարմին յամարայնոջ, ի գարնանայնոջ, յաշնանայնոջ, ի ձմերայնոջ, նմանապէս և կենդանիք» (ՄՄՁ, 873, էջ 261բ)¹. հմմտ. *զայլայլումն - այլայլութիւնս, ի մարմինն - մարմին, սապէս - նմանապէս:*

26. «Քանզի սրագոյն ոմանք ի ձմերայնոջ, ոմանք ի գարնայնոջ, և ոմանք յամարայնոջ իմանան ըստ գործիական կազմուածոյն» (ՄՄՁ, 1646, էջ 90բ): // «Նմանապէս և կենդանիք սրագոյնք՝ ոմանք ի ձմերայնոջ, ոմանք յամարայնոջ, ոմանք ի գարնանայնոջ իմանան ըստ գործիական կազմուածոյն» (ՄՄՁ, 873, էջ 261բ-262ա). հմմտ. *քանզի - նմանապէս, սրագոյն - կենդանիք սրագոյնք:*

¹ Ոսկան Երևանցին այստեղ ունի *ամանակ*, թեև այլ տեղերում *ժամանակ* է գործածում:

27. «Իսկ որոց արիւնն իշխէ ի գարնանային, նմանապէս և ի յայլս ըստ նմանութեան խառնուածոց կենդանեաց և ժամանակաց» (ՄՄՁ, 1646, էջ 90բ): // «և որոց արիւն իշխէ ի գարնանայնոջ, նմանապէս և մակ այլոց ըստ նմանութեան կազմուածոյն կենդանեաց և ժամանակաց» (ՄՄՁ, 873, էջ 262ա). հմմտ. *իսկ - և, ի յայլս - մակ այլոց*:

28. «Ուրն է ներպարառութիւն մարմնոյն յառաջացեալ ի ներպարառութենէ տեղուոջն» (ՄՄՁ, 1646, էջ 90բ): // «Ուր է՝ պարագրութիւն մարմնոյն, յառաջ եկեալ ի պարագրութենէ տեղուոյն» (ՄՄՁ, 873, էջ 262ա). հմմտ. *ներպարառութիւն - պարագրութիւն, յառաջացեալ - յառաջ եկեալ, ի ներպարառութենէ տեղուոջն - ի պարագրութենէ տեղուոյն*:

29. «Քանզի ցորենոյն, մտանելով ի գրվան (բնագրում՝ վ-ով. Վ.Հ.) ոչ մնա (բնագրում՝ առանց յ-ի. -Վ.Հ.) անդէն դադարելով օդոյն, որով լնանիւր» (ՄՄՁ, 1646, էջ 90բ): // «Քանզի ցորենոյն, մտանելով ի գրուան ոչ մնայ անդէն դադարելով օդոյն՝ որով լնանիւր» (ՄՄՁ, 873, էջ 262բ). հմմտ *ի գրվան - ի գրուան, ոչ մնա - ոչ մնայ*:

30. «Քանզի ի վերն և ի վայր գուլն են ի նոյնումն» (ՄՄՁ, 1646, էջ 91բ): // «քանզի ի վեր և ի վայր գոյն ի նոյնում են» (ՄՄՁ, 873, էջ 264ա). հմմտ. *ի վայր գոյն - ի վայր գոյն, են ի նոյնումն - ի նոյնում են*:

31. «Իսկ նստելն և ընկողմելն ոչ են դրումն, այլ...» (ՄՄՁ, 1646, էջ 91բ): // «Իսկ նստիլն կամ ընկողմնիլն ոչ են դրութիւնք, այլ... » (ՄՄՁ, 873, էջ 264բ). հմմտ. *ընկողմելն - ընկողմնիլն, դրումն - դրութիւնք*:

32. «Ձորօրիսակ նստելն և կանկնելն (բնագրում՝ կ-ով. Վ.Հ.) ոչ բնաւ համանգամայն գտանիին ի նոյնում» (ՄՄՁ, 1646, էջ 92ա): // «Այսպէս զորօրիսակ նստիլն և կանգնիլն ոչ երբէք համանգամայն գտանիին ի նոյնում» (ՄՄՁ, 873, էջ 265ա). հմմտ. *նստելն և կանկնելն - նստիլն և կանգնիլն, բնաւ - երբէք*:

33. «Հաւասարիցն և անհաւասարիցն բնաւորեալ է» (ՄՄՁ, 1646, էջ 92ա): // «Հաւասարիցն և անհաւասարիցն ներ գոյ» (ՄՄՁ, 873, էջ 266ա). հմմտ. *բնաւորեալ է - ներ գոյ*:

34. «Իսկ ունակութիւն է մարմնոց և այնոցիկ որ շուրջ գմարմնովն են յարադրութիւն. ըստ որում այսք ասին ունել, և այնք ունիլ» (ՄՄՁ, 1646, էջ 92բ): // «Ունակութիւն է մարմնոց, և այնք որք շուրջ գմարմնով յարադրութիւն, ըստ որում ոմանք ասին ունել, և ոմանք ունիլ» (ՄՄՁ, 873, էջ 266ա). հմմտ. *այնոցիկ - այնք, որ - որք, այսք - ոմանք, այնք - ոմանք*:

35. «Արդ այսոցիկ կոչեն եղեալ անուանք, որովք յորջորջեացին, այլ լիցի նոցա անուն. զինումն՝ ազուցումն, այնպէս և յայլմէցն» (ՄՄՁ, 1646, էջ 92բ): // «Եւ այսոցիկ և ոչ պարզ անուանք առադրեացն, որովք յորջորջին, այլ եղեալք նոցա, զինումն կօշկատրումն և սոցայցր մնացելոցն» (ՄՄՁ, 873, էջ 266բ). հմմտ. *արդ - եւ, եղեալ անուանք - անուանք առադրեացն, յորջորջեացին - յորջորջին, ազուցումն - կօշկատրումն, այնպէս և յայլմէցն - սոցայցր մնացելոցն*:

36. Նաև ունակութեանն ոչ ինչ է ներհակ, քանզի զինումն ազուցանմանն ոչ է ներհակ, զի նոյնն է զինեալ և կօշկատրեալ (ՄՄՁ, 1646, էջ 93ա): // Այլն ունակութեանն ոչ ինչ է ներհակ, քանզի զինումն կօշկատրումն ոչ է ներհակ, զի նոյն է զինեալ և կօշկատրեալ» (ՄՄՁ, 873, էջ 266բ)¹. հմմտ. *նաև - այլև, ազուցանմանն - կօշկատրումն*:

37. Իսկ յատուկ է ունակութեան լինել ի բազումս, զորօրիսակ ի մարմինն և ի յայնս, որ շուրջ գմարմնովն են առկայանալ (ՄՄՁ, 1646, էջ 93ա): // Իսկ յատուկ է ունակութեան բաղկանայ ի բազումս, որգոն ըն մարմնոջ և յայնս, որք շուրջ մարմնովն (ՄՄՁ, 873, էջ 266բ). հմմտ. *լինել ի բազումս - բաղկանայ ի բազումս, զորօրիսակ - որգոն, ի մարմինն - ըն մարմնոջ*:

¹ Այս հատվածի՝ Ոսկանի թարգմանության մեջ կա ավելացում, որ, իր հերթին, նշանակում է, թե այն նոր՝ երկրորդ թարգմանություն է:

38. Քանզի ունելս այս ոչ այլ ինչ նշանակէ, բայց միայն համարնակել (ՄՄՁ, 1646, էջ 93ա): // և ունելս այս ոչ այլ ինչ է, բայց միայն շարաբնակիլ (ՄՄՁ, 873, էջ 267բ). հմմտ. *ոչ այլ ինչ նշանակէ - ոչ այլ ինչ է, համարնակել - շարաբնակիլ:*

39. Իսկ մնացորդքն ի յայնս, որ վերլուծականացն է, խնդրեսցի ի գիրս (ՄՄՁ, 1646, էջ 93բ): // իսկ մնացեալքն խնդրեսցին ընգիրս, որ վասն լուծականացն է (ՄՄՁ, 873, էջ 267բ). հմմտ. *մնացորդք - մնացեալքն, վերլուծականացն - լուծականացն, խնդրեսցի ի գիրս - ընգիրս, խնդրեսցի - խնդրեսցին:*

40. Նան այլք ըստ իւրաքանչիւրոց նոցայցն ընդունին գաճումն և գնուագութիւն (ՄՄՁ, 1646, էջ 93բ): // Նան այլք ըստ երկաքանչիւրոցն նոցայցն նուագութեան և աճելութեան (ՄՄՁ, 873, էջ 267բ). հմմտ. *իրաքանչիւրոց - երկաքանչիւրոցն, գաճումն և գնուագութիւն - նուագութեան և աճելութեան:*

41. Եւ ևս մարգարիտն սպիտակագոյն ասի, քան զձին, որոյ մի ոտն ունել սպիտակ գոլ պատահի (ՄՄՁ, 1646, էջ 94բ): // Եւ ևս մարգարիտն սպիտակագոյն ասի, քան զձիոյ, որում ոտն սպիտակ ունել դէպ եղև (ՄՄՁ, 873, էջ 268ա). հմմտ. *քան զձին - քան զձիոյ, գոլ պատահի - դէպ եղև:*

42. Եւ արդ այս ներդիպի, զի ի ձևակերպութիւն գոյացութեանցն առեալ լինին, վասն զի... (ՄՄՁ, 1646, էջ 94բ): // Այլ ներդիպի, զի ի բացատրութիւն գոյացութեանց առնանի, քանզի... (ՄՄՁ, 873, էջ 269բ). հմմտ. *ի ձևակերպութիւն - ի բացատրութիւն, առեալ լինին - առնանի, վասն զի - քանզի:*

43. Արդ, է ինչ, որ է ըստ բնութեան, գործիւնակ հրոյն շարժիլն ի վեր կոյս (ՄՄՁ, 1646, էջ 95ա): // Է ևս, որում ներգոյ ըստ բնութեան շարժիլ, որզան հուր (ՄՄՁ, 873, էջ 270բ). հմմտ. *որ է ըստ բնութեան - որում ներգոյ ըստ բնութեան, գործիւնակ- որզան:*

3. Բառային- քերականական տարբերությունների գնահատություն

Այդ տարբերությունները երկու կարգի են՝ ըստ ժամանակի հայերենի գրական նորմայի և լատինաբան արհեստական միջամտության: Մի քանի տասնյակից ավելի բնագրային հատվածների համեմատությունը, ի վերջո, ցույց է տալիս, որ թե՛ առաջին և թե՛ երկրորդ թարգմանությունը լատինաբան ձևերին հետևելու տեսանկյունից այնքան էլ հեռու չեն իրարից: Ավելին, արհեստական կազմությամբ ձևերի գործածությունը լատինաբան դպրոցի ավանդույթներում ունի տևական բնույթ, որ հայերենի պատմության առումով անշրջանցելի իրողություն է (մանրամասն տե՛ս *Համբարձումյան*, 2008. 159-179. նույնի, 2010, 142-180):

Եզրակացություններ

1. Այս ձեռագիր բնագրի լեզուն միջին գրական հայերենի, այսպես կոչված, սոցիալական (իմա՝ մշակութային) մի տարբերակի վառ օրինակ է՝ արհեստական, արտալեզվական հանգամանքի բերումով պայմանավորված երևույթ:

2. Բնագրի երկրորդ թարգմանությունը, որը ուշ ժամանակի է, փաստ է այն մասին, որ լատինաբան հայերենի արհեստական նորման գործուն է նաև հետագայում:

3. Լեզվական նյութի քննությունը մնում է լատինաբան ձևերի կիրառության սահմաններում, այն հայերենի զարգացման առումով չունի էական նշանակություն:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇՐՋԱՆ

Նոր գրական հայերենի մշակութային-գործառական խնդիրը

Նոր գրական հայերենի պատմությունը, ըստ ընդունված շրջանաբաժանման, XVII դ. մինչև օրս ընկած ժամանակահատվածն է, որը բաժանվում է երեք փուլի: Փուլերից երկրորդի հարցում հայ լեզվաբանության մեջ գոյություն ունի տարակարծություն: Գ. Ջահուկյանը այդ փուլը կոչում է երկնյուղ աշխարհաբարի ենթաշրջան և, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից, մանավանդ Հ. Աճառյանից, ժամանակային սկիզբը համարում է XIX դ. կեսերը: Այնինչ Վ. Լ. Աճեմյանն իր գրական արևմտահայերենի պատմությանը նվիրված հատուկ աշխատության մեջ, կատարելով լեզվական նյութի անհամեմատ մանրակրկիտ քննություն, այլև ավելի լայն պլանով նկատի ունենալով լեզվի զարգացման արտաքին հանգամանքները, այդ ժամանակը մի քանի տասնամյակ ավելի հետ է տանում՝ դարի 10-ական թվականները, որն ավելի ընդունելի պիտի համարվի (*Ջահուկյան*, 195, նույնի, 1964, նաև 1969. *Աճեմյան*, 1971):

Դա մի ուրույն ժամանակաշրջան է, երբ հայ իրականության մեջ տեղի են ունենում բոլորովին նոր տեղաշարժեր, որոնք իրենց անմիջական արտացոլումն են ունենում լեզվի վրա:

Հայերենը բառապաշարի, քերականական կառուցվածքի, ինչպես նաև հաղորդակցական-գործառական, տարածքային-սոցիալական տարբերակվածությամբ, միաժամանակ շարունակելով

հին լեզվի ավանդները, դառնում է նոր իրականության մտավոր և մշակութային կյանքի ամենավառ արտահայտիչը:

Իսկ լեզվի գրականացման ուղին այնքան էլ հեշտ անցում չի ունենում: Արտաքին հանգամանքների բերումով ի հայտ են գալիս գրական նորմայի երկու տարբերակներ («արևելահայ» և «արևմտահայ»), տասնամյակներ շարունակ տեղի է ունենում դրանց մշակման՝ նորմավորման հակառակություն («գրապայքար»), որը նոր երևույթ է նախկինում տեղի ունեցած նմանօրինակ փորձերի համեմատությամբ:

Հակառակության մի ցուցիչ է նաև գրավոր խոսքի ուղղագրությունը, որն սկզբնապես լինելով միասնական՝ գրաբարի հիմքի վրա, և նույնական հին գրական հայերենի հետ, հետագայում նույնպես հանդիպում է երկփեղկման: Մ. Աբեղյանը, հավանաբար, նկատի չէր ունեցել, որ լեզուների արտասանության և գրության համապատասխանության սկզբունքը («ձգտումը») կիրառելի է նոր գիր ունենալու դեպքում, ոչ թե դարերի ավանդույթ ունեցողների նկատմամբ:

Այնուհետև, գրվել են գիտական-լեզվաբանական տարբեր բնույթի և ծավալի աշխատություններ՝ նվիրված նոր գրական լեզվի կառուցվածքին, պատմությանը, ինչպես նաև բարբառների գիտական (ուսումնակրթական) հետազոտմանը, որը մշակութային մեծագույն ձեռքբերում է:

Բնօրրանում և հոգևոր-կրթական այլ հաստատություններում գրական-մշակութային կենտրոնների («դպրոցների») ներկայացուցիչներ շատ հետազոտություններ նվիրում են նոր լեզվի («աշխարհաբարի»), այսպես կոչված, դատի պաշտպանությանը, նրա նախընտրությանը մշակութային, լեզվահաղորդակցական ավանդույթի պահպանության հիմունքով: Այս գործում նշանակալից է եղել Վենետիկի Մխիթարյան, ինչպես նաև ռուսահայ միջավայրի գործիչների ներդրումը:

Հայ գեղարվեստական գրականությունը, մամուլը, առհասարակ նոր գրավոր լեզուն եղել է հայերենագիտության ուշադրության կենտրոնում: Այդուհանդերձ, դեռևս կան նոր գրական լեզվի կարևոր նմուշներ, որոնց լեզվին անդրադառնալը կարևոր է հայերենի ընդհանուր պատմության ուսումնասիրության գործում:

Նախանցյալ դարի 80-90-ական, անցյալ դարի 10-20-ական թթ. Նոր լեզվի մշակման հարցերում մեծ է գեղարվեստական գրականության նշանակությունը: Նոր գրական հայերենի թե՛ մեկ և թե՛ մյուս տարբերակներն ունենում են աննախադեպ առաջընթաց մշակութային մյուս ոլորտներում, այլև գիտական տերմինաբանության հարցերում:

Նոր գրական լեզվի ընտրության հարցը («Գրապայքար»)

Ներածություն

Միջին հայերենի, ինչպես նաև նոր գրական հայերենի պատմությունը դեռևս մնում է ոչ ամբողջական ուսումնասիրության առարկա, որովհետև եղած գրավոր աղբյուրներն ըստ ամենայնի քննված չեն: Արդի հայերենագիտության խնդիրն է դրանց մանրամասն վերլուծությունը՝ ավելի իրական պատկերացում ունենալու նպատակով:

Ժամանակի բանավոր խոսքը, բնականաբար, եղել է ավելին, քան գրավոր ձևով ավանդվածը, որն արտաքին հանգամանքների բերումով ոչ ամբողջովին է մեզ հասել, ուստի քննությունը ենթադրում է տեսական ավելի մասշտաբային ընդգրկումներ:

1. Լեզվական տարբերակների և «գրապայքարի» էությունը և բնորոշումը

Լեզուները զարգանում են բնականոն եղանակով, սակայն դա տեղի է ունենում նաև արտաքին միջամտության պայմաններում:

Արտաքին միջամտությունը հաճախ կրում է հակադրական (անհամերաշխ) բնույթ՝ պայքար տեսական այս կամ այն մոտեցման իրականացման համար: Լեզուներում հին և նոր վիճակները սովորաբար գտնվում են հակադարձ համեմատության մեջ, ընդ որում ոչ միայն բանավոր, այլև գրավոր ձևերի մեջ. հինը անզիջում է լինում, իսկ նորը՝ անվերապահ: Գրավոր խոսքի առումով պայքարը ոչ այլ ինչ է, քան հակադրություն («հակադարձություն») գրական լեզվի ընտրության հարցում («գրապայքար» նոր գրական լեզվի համար):

Հայերենի դեպքում նման իրողությունը հիմնականում եղել է առաջընթացին նպաստող միջոց: Նոր շրջանի հայերենի պատմությունը (XVII դ. մինչև մեր օրերը) հետաքրքիր է նաև այն առումով, որ այդ շրջանում զուգահեռաբար գործառում են հին գրական հայերենը (գրաբարը՝ նոր վիճակով) և նոր գրական հայերենը (աշխարհաբարը՝ կատարելացման ձգտումով), ընդ որում ոչ միայն ժամանակի բարբառների հետ ունեցած առնչությունների, այլև արտաքին լեզվամշակման միջամտությունների պայմաններում:

Մեր օրերի հայերենագիտության խնդիրն է ըստ ամենայնի ուսումնասիրել այդ ժամանակների գրավոր խոսքի դրսևորումները՝ ավելի ամբողջական պատկերացում ունենալու միջնադարյան շրջանի հայերենի վերաբերյալ՝ իբրև պատմության փաստ:

Հայերենի նոր շրջանում գրաբարի կանոնավորման, գրաբարը նոր գրական լեզու դարձնելու, այլև գրաբարի և գրական աշխարհաբարի ընտրության հարցերում եղած ընդդիմությունը, որը կարելի է հավասարապես «գրապայքար» համարել, լեզվի գործառության տեսանկյունից բնութագրվում է իբրև զարգացման արտաքին միջամտություն: Ըստ այդմ, հայերենի նոր շրջանում, մեր պատկերացմամբ, գործ ունենք երեք կարգի «գրապայքարի» հետ:

Վերջինս, ինչպես ցույց է տալիս փաստական տվյալների և ժամանակի իրադրության առավել մանրամասն քննությունը, վերաբերում է մի դեպքում գրաբարի մեջ եղած լատինաբան խորթության ու արհեստականության վերացմանը, երկրորդ դեպքում՝

դասական գրաբարի («վենետիկյան» և «վիեննական» տարբերակների) առանձնացմանը, երրորդ դեպքում՝ գրական աշխարհագրարի հաղթանակի ապահովմանը: Այնինչ, մինչև այժմ «գրապայքար» որակում տրվել է լոկ երրորդ տեսակին:

Այստեղ էական, եթե ոչ վճռական դեր է ունեցել արտաքին միջամտությունը (արտալեզվական հանգամանքը): Այդ միջամտությունը լինում է ժամանակի հայ մտավորականության կողմից՝ կոնկրետ պայմաններում, այն հանդես է գալիս գրական լեզվի շրջանակներում, ըստ որում նրա երկու տարբերակներից մեկին կամ մյուսին նախապատվություն տալու ձևով:

«Գրապայքարը» տեղի է ունենում արտալեզվական այնպիսի պայմաններում, որոնցում առաջադիմական լինելը ենթադրում է հասարակական գաղափարների ներդրում, մշակույթի առաջընթաց, և ըստ այդմ՝ լեզվի հաղորդակցական կողմի ճշգրտում: Պայքարի կողմնակիցների, այսպես կոչված, առաջադիմական մասը, անկախ ներքին տարածայնություններից, սկզբից եթե դնում է գրաբարը հասկանալի գրական աշխարհագրարով փոխարինելու հարցը:

Շոշափելի ավանդույթ ունեցող գրական աշխարհագրարի հետագա մշակումն ու ընդհանրացումը կախված էին այդ հարցի ճիշտ լուծումից: Գրաբարի նկատմամբ գրական աշխարհագրարի հաղթանակը արդյունք է լեզվի զարգացման այն գործընթացի, որին որոշակի հանգամանքներում նպաստում է արտաքին միջամտությունը: «Գրապայքարի» հարցին մենք անդրադարձել ենք նախկինում, հայտնի լեզվի նոր շրջանի պատմության ընդհանուր հարցերի շրջանակում (տե՛ս *Համբարձումյան*, 1990, 106-112. նույնի, 2010, 317-326):

Գ. Ջահուկյանը դեռևս 1950-ական թթ. գտնում էր, որ «գրապայքարի» ամբողջական պատմությունը այնուամենայնիվ միակողմանի է, քանի որ «մինչև այժմ հրապարակի վրա չկա մի առանձին ուսումնասիրություն, որ նվիրված լինի այս շրջանի հին գրական հայերենի («գրաբարի»)՝ այդ շրջանի մյուս տարբերակների հետ ու-

նեցած փոխհարաբերությունների բացահայտման հարցերին» (*Ջահուկյան*, 1955, 7):

2. Հայերենի համակարգում տեղ գտած լատինաբանության հաղթահարման հարցը. առաջին «գրապայքար» (1710-1780-ական թթ.)

Այս «գրապայքարի» հիմնական նպատակն է եղել «լատինաբան գրաբարը», այսպես կոչված, «հայկաբան գրաբարով» փոխարինելը, որը առաջ է տարվում Վենետիկի Մխիթարյան դպրոցի գործիչների կողմից: Հանուն բուն լեզվի՝ «հայկաբան գրաբարի» այդ ընթացքում հակառակությունը տեղի է ունենում երեք փուլով՝ պայքարի երեք «ալիքով»՝ 1) հայկական միջավայրում տեղ գտած կաթոլիկ քարոզիչների կողմից ներմուծված լատինաբան արհեստական նորամուծությունների մեղմացում և թուլացում, 2) լատինաբան խորթությունների կրճատում և նվազագույնի հասցնելը, 3) մնացած խորթությունների և անհարիր ձևերի իսպառ վերացում:

Հռոմի պապական հոգևոր իրավաբարությունը միջնադարում մեծացնում է ձգտումը նաև Արևելքի ժողովուրդների մեջ ընդհանրական եկեղեցու օրինակարգերի հաստատման: «Ամեն մի լեզու, որ կեղծ է և անհատական քմահաճույքի արդյունք, ուշ թե շուտ պիտի վերացվի: Այսպես եղավ նաև լատինաբան հայերենը: Նա ապրեց ու գործեց ամբողջ դար («ամբողջ դար», քանի դեռ ուսումնասիրված չէր սկզբնական շրջանը.- Վ. Հ.). սկիզբ առնելով Հռոմում կոլեջի կաթոլիկների մոտ՝ 1580-ական թվերին, ապրելով իր վազույն շրջանը ԺԷ դարում, երբ բոլոր հայերի համար էլ դարձավ բարձր գիտական լեզու, իր մայրամուտն ապրեց Վենետիկում, Մխիթարյանների մոտ, ԺԸ դարին» (*Աճառյան*, 1940, 323):

Նման մոտեցումը արդյունք է միակողմանիության, որ շարունակվում է նաև հետագայում: Աճառյանի կողմից տրված գնահատությունը ոչ միայն լատինաբան, այլև հունաբան հայերենի վերաբերյալ նույն ձևով, առանց որևէ խորացման կամ վերանայման կրկնվում է հետագայում, այսինքն՝ հարցի քննությունը մնում է

նույն մակարդակի վրա: Այսպես, խոսելով Բարդուղիմեոս Մարաղացու և նրան աջակցող Հովհաննես Բոնեցու և Հակոբ Բոնեցու (XIV դ.) գործադրած ջանքերի մասին՝ հայերենի արհեստական մշակման և «կատարելագործման» մասին, Գ. Ջահուկյանը գրում է, թե «սրանց լեզուն ժամանակի գործածական գրաբարն է և առնչություն չունի XVII-XVIII դդ. տարածված լատինաբան հայերենի հետ» (*Ջահուկյան, 1974, 7*):

Այդ պայքարի երրորդ փուլի վերջում է, որ վենետիկցի մեծ հայկաբան Միք. Չամչյանը, ինչպես ճիշտ նշում է Գ. Ջահուկյանը, «քերականության մեջ մուծված արհեստական «բարեփոխումների» հակադրեց հին տեքստերի անկանխակալ ուսումնասիրության ու մատենագրական վկայությունների վրա հիմնված քերականական կանոններն ու բացատրությունները» (ս. տ., 303):

Իսկ սա նշանակում է, թե ներկայումս որքան ջանք պետք է ի գործ դնել ըստ հնարավորին լրացնելու բացթողումը, այն է՝ լուծելու մեզանում լատինաբան հայերենի և առհասարակ լատինաբանության սկզբնավորման, տարածման և հաղթահարման վերաբերյալ հարցը՝ ամենից առաջ ելնելով հայոց լեզվի պատմության ամբողջական նկարագրության անհրաժեշտությունից¹:

3. Հին հայերենի մեջ «դասական» տարբերակի ընտրության հարցը. երկրորդ «գրապայքար» (1810-1860-ական թթ.)

Հայ մշակույթի պատմության բնագավառում մեծ է Մխիթարյան միաբանության երևելի գործիչների դերը ոչ միայն ամբողջությամբ, այլև մասնավորապես նոր շրջանի գրավոր լեզվի ինքնության պարզաբանման և բնութագրման հարցերում:

Հին ավանդներ ունեցող գրաբարը նոր ժամանակներում ևս գործածվում է այդ միաբանության, ինչպես նաև հայ կրթական այլ

հաստատություններում իբրև նոր լեզու, որը ենթադրում է կանոնարկման նոր խնդիրները՝ լեզվի., ձեռնամուխ է լինում հին (V դ.) գրավոր լեզվի ներսում գրական նորմավորման սաստիճանի պարզաբանման հարցի լուծմանը: Պարզվում է, որ այդ շրջանում լեզուն, ինչպես ցույց են տալիս գրական հուշարձանները, միատարր չէ, կան ոչ միայն օտարաբանություններ, այլև ներքին տարբերություններ՝ բնիկ («հայկաբան») տարբերակի մեջ (*Ակիսեսյան, 1912. նույնի, 1932. Հովսեփյան, 1984, 379-384*): Նրանք գտնում են, որ հիշյալ դարի վերջին մի քանի տասնամյակի լեզուն տարբեր է նախորդ տասնամյակների լեզվից, այլ կերպ ասած՝ հանգում են հայերենի մեջ, իրենց հորջորջմամբ, «դասական» և ոչ դասական որակների առանձնացման գաղափարին, որին դեմ են դուրս գալիս վենետիկյան մխիթարյանները՝ գտնելով, որ գրաբարը մինչև X-XI դդ. միատարր է և չունի նման առանձնացման որևէ կարևորություն:

Եվ ստացվում է մի յուրօրինակ պայքար հին գրական հայերենի մեջ դասական և ոչ դասական տարբերակների առանձնացման համար, որպիսով խնդիր է դրվում դասական գրաբարի մեջ տեղ գտած հետագա միջամտությունները («յետսամուտ» ձևերը) մաքրելու հարցը¹: Վիեննացիները, ինչպես գիտենք, այդպես էլ վարվում են, այն է՝ ոչ միայն գրում կամ թարգմանում են իրենց իսկ հոչակած «դասական հայերենով», այլև ձեռնամուխ են լինում այդ տասնամյակների (V դ. սկզբից մինչև 70-ական թթ.) գրական հուշարձանների հրապարակման գործին. ստեղծված ավանդույթը շարունակվում է նաև բուն շարժումից հետո (հմմտ. *«Տումուս», 1920*): Դա, իրոք, եղել է լեզվի մշակման մի ուրույն միջոցառում, որ նպաստ է հայոց լեզվի պատմության ավելի իրական պատկերացման համար:

¹ Այս խնդիրը վերաբերում է ոչ միայն հունաբան և, այսպես կոչված, «հայկաբան» (իմա՝ բուն) հայերեն վիճակին՝ բառապաշարի, քերականական ձևերի, նախադասության կազմության և այլն տարբերությունների հարցերում, այլև բուն հայերենի ներսում, ժամանակի (V-XI-XII դդ.) ընթացքում տեղ գտած փոփոխություններին:

¹ Հարցի համեմատաբար ամբողջական քննությանն է նվիրված մեր «Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.)» գիրքը (Ե., 2010): Այս բնագավառում դեռևս կան շատ անելիքներ՝ հատկապես գրական հուշարձանների առավել մանրամասն և ամբողջական ուսումնասիրության առումով:

Նկատենք նաև, որ այդ պայքարի բովում անհամեմատ մեծ է եղել վիեննական դպրոցի ականավոր ներկայացուցիչ Հ. Գաթրըճյանի դերը. այդուհանդերձ, իր իսկ գյուտից՝ «դասական հայերենից» և նրա օրինակով ստեղծված նոր՝ «վիեննական գրաբարից» առաջին հրաժարվողը եղել է Գաթրըճյանը: Նա շրջադարձ է կատարում դեպի ժամանակի գրական աշխարհաբարը՝ նրանով շարադրելով տարբեր բնույթի աշխատություններ (*Համբարձումյան*, 1995, 126):

Փաստորեն այս դեպքում ևս մենք գործ ունենք գրական լեզվի մշակման և կանոնարկման համար մղվող մի յուրօրինակ միջամտության՝ «գրապայքարի» հետ, որ տեղի է ունենում դասական գրաբարի՝ իբրև ավելի կանոնավոր և «մաքուր» լեզվի ընտրության հարցում, որ ժամանակին տեղի է ունեցել հայերենագիտության բնագավառում: Իսկ այդ իրողությունը, պետք է նկատի ունենալ, հայոց լեզվի պատմության հետագա ուսումնասիրություններում չի ստացել նման որակում, ավելին՝ չի եղել հատուկ քննության առարկա, որը, մեր կարծիքով, բացթողում է: Այն, ինչ խոսք, կարևոր է հայոց լեզվի ընդհանուր պատմության ճիշտ և առարկայական (օբյեկտիվ) բնորոշման տեսանկյունից (ավելի մանրամասն տե՛ս *Համբարձումյան*, 1990, 124-127):

4. Աշխարհաբարը նոր գրական լեզու. երրորդ «գրապայքար» (1830-1900-ական թթ.)

Անցյալ դարի երկրորդ կեսին գրվում են տարբեր բնույթի և ընդգրկման աշխատություններ, որոնցում նոր հայերենի պատմության, նրա քերականական կառուցվածքի, գործառության շրջանակների խնդիրները շոշափվում են գրեթե նույնական մոտեցումով՝ աշխարհաբարը նախընտրելի է և ունի միահեծան գրական լեզու լինելու բոլոր հմարավորությունները, որն, ինչ խոսք, ճիշտ էր ոչ միայն ինքնին, այլև նոր գրական լեզվի զարգացման հեռանկարի տեսանկյունից:

Նոր գրական հայերենը երկփեղկված էր՝ բարբառային տարբեր հիմքերով, և սկզբնական շրջանում ուսումնասիրողների հիմնական ուշադրության առարկան արևելահայ աշխարհաբարն էր (*Սևակ*, 1948. *Ջահուկյան*, 1955): Իսկ արևմտահայ աշխարհաբարի պատմությանը խորհրդահայ լեզվաբանության մեջ ուշադրություն դարձվեց համեմատաբար ավելի ուշ. ավելի վաղ անդրադարձել էր Ա.Այտընյանը, որի աշխարհաբարի քերականությունը յուրատեսակ հիմք հանդիսացավ հետագա ուսումնասիրությունների համար (*Այտընյան*, 186. նույնի, 1867. տե՛ս նաև *Շահբազյան*, 1963 և այլն):

ա) Երկնյուղ աշխարհաբարի արևելյան «թևը»

Հայոց լեզվի պատմության, առհասարակ հայերենագիտության բնագավառում համեմատաբար լայն քննության առարկա է եղել աշխարհաբարը նոր գրական լեզու դարձնելու հարցը, նույնիսկ այն աստիճան, որ արդի հայագիտությունը «գրապայքար» անվանումը վերագրում են միայն այս երրորդ իրողությանը¹:

Նախ՝ նկատենք, որ նոր շրջանի հայերենի պատմությունը սովորաբար բաժանվում է երեք ենթաշրջանի, որոնք հարցերում առարկելի է՝ կապված ամենից առաջ ժամանակի ոչ հստակ առանձնացման, նյութի (գրավոր աղբյուրների) ոչ ամբողջական ներառման հարցերի հետ (*Ջահուկյան*, 1955. *Աճեմյան*, 1971):

Այնուհետև, աշխարհաբարի երկփեղկման, գրաբարի առնչությամբ նրա գրական նորմավորման հիմունքների տարբերության պայմաններում տեղի ունեցող հակառակությունը ընդունված է համարել բուն «գրապայքար», այն է՝ ընտրություն հին լեզվի և նորի միջև, որին լծվում են ժամանակի գրական-հասարակական տարբեր խավերի և հայացքների տեր ներկայացուցիչներ, իսկ հարցի քննարկումը տարածվում է մշակութային և գրական գործունեության գրեթե բոլոր ոլորտների մեջ (XIX դ. 20-90-ական թթ.): Հին

¹ Այդ թեմայով կա համեմատաբար մեծ թվով գրականություն, որ այստեղ չենք նշում:

գրական հայերենը («գրաբարար») ժամանակի փորձությունը բռնած, հիմնական եկեղեցական մշակույթի բովում կանոնարկման ենթարկված, ուներ գրական հարուստ ավանդույթ, այնինչ նոր լեզուն («աշխարհաբարը»), որ նոր էր փորձ անում բարձրանալ գրական աստիճանի տարածքային-բարբառային ընդհանրության («կոյնեի») հիման վրա, այնուամենայնիվ ուներ միահեծան դիրքի հնարավորություն՝ շնորհիվ իր ամենաէական այն հատկանիշի, որ էր կենդանի հաղորդակցման միջոց լինելը: Կենդանի լեզվի հաղթանակի գործում, ինչպես գիտենք, իր դերն է ունենում նաև արտաքին միջամտությունը՝ նոր «գրապայքարը», որն ըստ ամենայնի ուսումնասիրված է հայոց լեզվի պատմությանը նվիրված աշխատություններում:

բ) Առաջադիմությունը նոր գրական լեզվի հարցում

Երրորդ «գրապայքար»-ում հաղթանակած աշխարհաբարը, որ առավելապես գրական-մտավորական առաջադիմական շարժմանն է պարտական, դառնում է հայության արևելահայ հատվածի գրավոր-գրական լեզուն, որն ավելի ուշ, համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններում վերաճում է հաղորդակցական լայն գործառույթներ իրականացնող լեզու: Արևելահայ գրական լեզվի տեսական-իմացական ջատագովն են առաջին հերթին Խ. Աբովյանը և Միք. Նալբանդյանը: Նրանց լեզվագիտական հայացքների քննությանը, հայտնի է, նվիրվել են հատուկ աշխատություններ (*Գրիգորյան*, 1948, 141-159. *Գալստյան*, 1960, 296-314. *Մարգարյան*, 1956, նույնի, 1957 և այլն): Հայոց լեզվի պատմության, կառուցվածքի հարցերի վերաբերյալ նրանք ունեցել են իրենց մոտեցումները, գործնական ձեռնարկումները, որոնք կարևոր են նոր գրական հայերենի («աշխարհաբարի») պատմության համար (հմմտ. *Համբարձումյան*, 1986, 66-75):

Ամենից առաջ Աբովյանը և Նալբանդյանը եղան նոր գրական հայերենի («աշխարհաբարի») առաջադիմության ջատագովները:

Նալբանդյանը «Հայոց լեզվի ուսումնասիրությունը Եվրոպայում և հայ գրականության գիտական նշանակությունը» հոդվածը գրել է 1960 թ. և ներկայացրել Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետին թեկնածուական («կանդիտատական») աստիճան ստանալու համար¹: Հոդվածում երեսնամյա Նալբանդյանը հանդես է բերել լեզվաբանական հմուտ գիտելիքներ՝ ժամանակի եվրոպական չափանիշներով: Նա հայերենին անդրադառնում է ոչ միայն ընդհանուր՝ գրական, բարբառային կամ կենդանի լեզու լինելու հարաբերակցության մեջ, այլև նրա ծագման և ցեղակցության բնույթի նկատառումով, որի ապացույցն են նրա՝ ժամանակի հայտնի ուսումնասիրողների անունների մատնանշումը, նրանց գիտական դիրքորոշումների սեղմ բնութագիրը: Ընդամենը երեքուկես տասնամյակի ընթացքում հիմք առած հայերենի հնդեվրոպական բնույթի տեսությունը (սախանցյալ դարի կեսերին) Նալբանդյանի հիշյալ աշխատանքում իրական գնահատության է արժանանում:

Այս հարցում առաջավոր հայացքների կրող է Միք. Նալբանդյանը. աշխարհաբարի մշակման և կանոնականացման հարցերում մեծ նշանակություն էր տալիս գրաբարի արժեքավոր հնարավորությունների օգտագործմանը. «նոր լեզուն պիտի նայվի և մշակվի ինքնուրույնաբար առանց ամենևին հին լեզվից խպնելու, առանց գավառական բարբառների կամ օտար լեզուների ազդեցությանց ստրկանալու» (*Նալբանդյան*, 1948, էջ 167):

Նոր շրջանի հայերենի պատմությունը աչքի է ընկնում ոչ միայն ներքին միջոցների և եղանակների գործադրման բազմազանությամբ, այլ նաև արտաքին՝ լեզվական-հաղորդակցական մաքառումների ձևով դժվարությունների հաղթահարմամբ և ընդհանուր

¹ Բնագիրը ռուսերեն է, գտնվում է Պետերբուրգի (Լենինգրադի) համալսարանի գրադարանում, հետագայում լույս է տեսնում հայերեն թարգմանությամբ՝ ռուսերենին զուգադիր. հոդվածի վերաբերյալ դրական կարծիք հայտնած գրախոսն է եղել համալսարանի բարիանուն պրոֆ. Բերոյևը (եջել է «այս հոդվածը գրված է բավականին բավարար»):

բարեշրջության հեղաբեկումներով: Նոր գրական հայերենը ներկայումս գտնվում է կառուցվածքի և գործառույթի բարձրության վրա, ունի հետագա առաջադեմության հեռանկարներ:

Եզրակացություններ

1. Վերը մենք նշեցինք, որ լեզուները զարգանում են հիմնականում բնականոն եղանակով, սակայն լինում է նաև այս կամ այն կարգի միջամտություն, որ գալիս է լրացնելու այդ զարգացման ընթացքը:

2. Լեզվի պատմության նոր շրջանում նկատելի նման միջամտության դրսևորումը գիտական քննության մեջ ստացել է «գրապայքար» (հակառակություն գրական լեզվի ընտրության համար) բնորոշումը:

3. Այդ ուղղությամբ մեր առանձին դիտարկումները հիմք են հանդիսանում հստակ տարբերելու երեք կարգի «գրապայքար», որ, պատկերավոր ասած, ընդհանուր պատմության շղթայի առանձին օղակներ են՝ հիմնական գծերով տալով դրանց բնորոշումը:

4. Հայոց լեզուն մեր գրավոր ժառանգության մի արտահայտությունն է, որն ունի ակնառու մակարդակ՝ շնորհիվ ոչ միայն բնականոն զարգացման, այլև արտաքին միջամտության պայմաններում ունեցած նպաստավոր ներդրման:

Մխիթարյանների ջանքերը հայերենի կանոնարկման գործում

Ներածություն

Հայ իրականության կյանքում Մխիթարյան միաբանության գործունեության ամեն մի անդրադարձ կարևոր է ամենից առաջ հոգևոր մշակույթի պատմության հայեցակետից: Այդ գործունեության մասին խոսելը պատեհություն է նաև գրական հայերենի երկու

տարբերակների կանոնարկման արդի խնդիրներին վերստին անդրադառնալու համար (*Համբարձումյան*, 1990. նույնի, 2001, 187-200):

Այնքան էլ հեշտ չէ սեղմ շարադրանքով ուրվագծել մշակույթի կարևորագույն օջախ Մխիթարյան միաբանության լեզվամշակութային գործունեությունը, ուստի տվյալ դեպքում մենք մտածում ենք ներկայացնել նրանց հիշյալ բնագավառին վերաբերող աշխատանքներում կիրառած սկզբունքները, ինչպես նաև այն հարցը, թե այդ սկզբունքները որքանով են արդիական և անհրաժեշտ նոր գրական հայերենի կանոնարկման, հետագա մշակման և կատարելացման առումով:

Նրանց գիտական ջանքերը մեծապես նկատելի են հայերենի գրական կոնոնարկման հարցերում:

1. Գործունեության սեղմ բնութագիրը

Լեզուների պատմությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր առանձին լեզու իր զարգացման շրջադարձային փուլերում այս կամ այն չափով ունեցել է արտաքին միջամտությամբ պայմանավորված կանոնարկման կարիք և անհրաժեշտություն: Եվ ի թիվս գիտական, մշակութային և կրթական այլ կազմակերպությունների Մխիթարյան միաբանության գործիչները բոլոր ժամանակներում այս տեսակետից ևս ծավալել են անխոնջ և անկասելի գործունեություն, որ եղել և մնում է անշրջանցելի, ըստ ամենայնի ուշադրության առարկա նաև գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցերի առնչությամբ:

Մխիթարյանների երևույթը, պատկերավոր ասած, մեզանում հիշեցնում է այն առասպելական թռչունին: Հնդեվրոպական ժողովուրդների ավանդություններում պատմվում է, որ եղել է անհասանելի ու անհիմանալի, լուսեղեն ու շողշողուն մի թռչուն: Հայկական ավանդությամբ դա ոսկեփետուր թռչունն է, որը մեզանում հետագա անունն է կրում՝ «հազարան բլբուլ»:

Հովհ. Թումանյանն իր կյանքի գրեթե ողջ ընթացքում երազեց մշակել այդ թռչունի պատմությունը, այդ թեմայով հավաքեց

հազար ու մի տարբերակ, ուսումնասիրեց հարյուր ու մի պատմություն, հեքիաթ ու առասպել, գրեց տասնյակ ու մի տարբերակ՝ իբրև մշակում հնագույն ժամանակներից եկող այդ առասպելի («պատումի»)։ Ղ. Աղայանը գրեց և իր ավարտին հասցրեց իր «Հազարան բլբուլը»։ Վերջինս ավարտուն է, սակայն թույլ ու սովորական։ Վերջինս արդեն քանի-քանի տարիներ ընթերցում ենք, վերընթերցում, և մեզ միշտ պատում է այն զգացողությունը, թե ուր էր թե իր ավարտին հասներ ու ամբողջանար Հովհ. Թումանյանի «Հազարան բլբուլը»։ Թումանյանի կիսատն անպայման ձգում է, իսկ Աղայանինը՝ մշտապես ընթերցվում։

Մխիթարյանների վաստակն ու եռանդը մեզանում մշտապես մեկնաբանվում է ու գովաբանվում, արժանանում ամենայն դրվատանքի, սակայն չենք հասնում մեր մշակույթի այդ ոսկեփետուր թռչունին։ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների լեզվամշակման սկզբունքներին, արժարժած հայերենագիտական խնդիրներին անդրադարձել ենք տարիների ընթացքում գրած մեր առանձին գրքերում և գիտական հոդվածներում (*Համբարձումյան*, 1981, 63-72. նույնի, 1982, 63-72. նաև 1984, 73-82. 1986, 70-78. 1988, 11-12. 1985, 257-317)։

Այնուհետև, այդ բնագավառի որոշ հարցերի վերաբերյալ հիմնականում հանդես ենք բերել նոր մոտեցում, կատարել ենք համապատասխան փաստերի և լեզվական անհամեմատ մեծ թվով իրողությունների վրա հիմնված վերլուծություն։ Փորձել ենք ընդարձակել փաստական տվյալները և դրանք քննարկել ավելի մանրամասն, ըստ հնրավորին անկողմնակալ ձևով։

2. Մխիթարյանների լեզվագործունեության մասին նոր դիտանկյունից

Եվ այդուհանդերձ, այժմ հակված ենք մտածելու, որ հայերենագիտության այս բնագավառում դեռևս կան շատ անելիքներ։ Միաժամանակ կարծում ենք, որ Մխիթարյանների հրապարակ հանած գրական հուշարձանները մինչև այժմ հեռու են լեզվական

փաստերի վրա հիմնված մանրամասն, եթե չասենք ըստ ամենայնի ուսումնասիրված և գնահատված լինելուց։

Նկատենք նաև, որ նախկինում այդ հուշարձանները քննության են առնվել խիստ ընտրանքով, դրանցում եղած լեզվական իրողությունները վերլուծության են արժանացել ակնարկի ձևով, ընդհանուր գծերով։ Այժմ խնդիրը բոլորովին այլ է։ Նախ՝ անհրաժեշտ է մանրակրկիտ ձևով ուսումնասիրել գրական բոլոր հուշարձանները (տպագրված գրքեր, հրապարակված մամուլ և այլն), այնուհետև՝ դրանցում պարփակված լեզվական իրողությունները վերլուծել և արժևորել հայոց լեզվի պատմության ընդհանուր դրվածքի մեջ, հատկապես գրական հայերենի երկու տարբերակների առնչությունների տեսանկյունից։ Եվ կարծում ենք, որ միայն այդ դեպքում եզրակացությունները կարող են լինել առավել խոստումնալից, հայերենագիտության արդի մակարդակին բավարարող։

Այսպես, Ժ. Բ. Բոսուեի «Խօսք ընդհանուր պատմութեան վերաբերեալ» գիրքը վենետիկյան և վիեննական Մխիթարյանները ֆրանսերենից թարգմանել և լույս են ընծայել նույն 1841 թ.։ Թարգմանության երկու տարբերակների լեզվական համեմատությունը ցույց է տալիս, թե ինչպիսի մոտեցում են հանդես բերել այդ երկու դպրոցի ներկայացուցիչները գրաբարի մշակման և գրական կանոնարկման հարցերում (*Համբարձումյան*, 1990, 52-56)։

Այնուհետև, Ժ. Ռասինի «Գոթողիա» երկը թարգմանվել է Արս. Բագրատունու և Գ. Հյուրմյուզյանի ձեռքով և տպագրվել գրեթե նույն ժամանակում. տարբեր թարգմանիչների լեզվական ճաշակի և գրաբարի վերաբերյալ ունեցած մոտեցումների առումով բավականին հետաքրքիր պիտի լիներ այդ թարգմանությունների լեզվական համեմատությունը (հմմտ. *Գոթողիա*, 1864, նաև *Ռասին*, 1869)։

Նշենք նաև Հ. Փոսկոլեոսի «Տաղ գերեզմանական» երկի թարգմանությունը վենետիկցի հիշածու երկու հայրերի, ինչպես նաև Հար. Մրմրյանի ձեռքով. այս դեպքում ևս ակնհայտորեն բախվում

ենք լեզվական ուրույն մոտեցումների, բառի և լեզվական այլ ձևերի գործածության առանձնահատկությունների հետ:

Ուստի և կարծում ենք, որ Մխիթարյան հայագետների ոչ միայն ինքնուրույն երկերի, այլև կատարած թարգմանությունների լեզվի ուսումնասիրությունը մեծապես կարող է ուղեցույց հանդիսանալ նոր գրական հայերենի պատմության լայն ուսումնասիրության համար, միաժամանակ հիմքեր ստեղծել ձեռնամուխ լինելու լեզվական այդ վիճակի երկու տարբերակների հետագա նկարագրության, ինչպես նաև գրական միասնականացման գործին: Վերջին դեպքում նկատի ունենք նոր գրական հայերենի հնչյունական համակարգի, բառապաշարի և քերականության կանոնարկման հետ կապված խնդիրների լուծումը և եղած դժվարությունների հաղթահարումը:

Մեր օրերում Մխիթարյան գործիչների լեզվագիտական վաստակն ուշադրության է արժանի նաև մեկ այլ տեսանկյունից: Թե՛ հեռու և թե՛ մոտիկ անցյալում, ով այս կամ այն առիթով շփվել է նրանց գործունեությանը (օրինակ՝ Զ. Բայրոն, Յ. Գ. Լայբնից և ուրիշներ), ով այս կամ այն չափով օգտվել է նրանց լեզվամշակութային նվաճումներից (օրինակ՝ Հ. Պետերման, Հ. Հյուբշման, Ա. Մեյեն, ինչպես նաև Միք. Նալբանդյան, Մ. Աբեղյան, Հ. Աճառյան և ուրիշներ), խորին ակնածանքով, խոր ձևակերպումներով են գնահատել նրանց նվիրումն ու վաստակը՝ գիտական, կրթական և լեզվամշակութային գործունեության առումով: Մ.Աբեղյանը գրում է հետևյալը. «Նրանք հրապարակը լցնում են իրենց գրական աշխատանքներով և թարգմանություններով, ավելի շատ գրքերով, քան կարդացողներ կային և շատ շատ ավելի քան հասկացողներ» (*Արեղյան, 1970, 549*):

Այնուհետև, ժամանակին հայերենի ուսուցում ստանալով վեներտիկյան հայրերից՝ Հ. Պետերմանը գրում է մի շարք աշխատություններ, այդ թվում նաև լեզվաբանական հետազոտություններ, որոնցով որոշակի նպաստ է բերում հայոց լեզվի պատմահամեմա-

տական ուսումնասիրության գործին (*Petermann, 1837. Նույնի, 1860*): Ա. Մեյեն ոչ միայն այդ առումով, այլև «Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ» աշխատանքը գրելիս ամենից առաջ նկատի է ունեցել Վրթ. Չալքիսյանի «Քերականութիւն հայկազնեան լեզուի» (աշխատասիրությամբ Ա.Այտրնյանի) խիստ յուրօրինակ դասագիրքը (*Meillet, 1936*): Ավելին, «Նոր բառգիրք հայկազնեան լեզուի» (հհ. 1-2, Վեն., 1836-1837 թթ.) աննման աշխատությունը, ի թիվս այլ հետաքրքիր կողմերի, պարունակում է բառերի և արմատների ստուգաբանություններ («մեկնություններ» կամ համեմատություններ), որոնք հետագա ուսումնասիրողների կողմից կա՛մ ուղղակի օգտագործվել են, կա՛մ հիմք են հանդիսացել ավելի հավաստի ստուգաբանությունների համար: Ուստի նկատենք, որ այդ բառարանը հայոց լեզվի պատմահամեմատական հետազոտության պատմության համար ունի ուրույն նշանակություն և ըստ այդմ՝ արժանի առանձին ուշադրության:

3. Մխիթարյանների լեզվագործունեության սկզբունքները

Մխիթարյաններն իրենց լեզվագործունեությունը ծավալել են իրենց իսկ մշակած սկզբունքներով, որոնք տասնամյակներ շարունակ դարձել են ոչ միայն գրաբարի, այլև նոր գրական հայերենի (հատկապես գրական արևմտահայերենի) ուսումնասիրման, ինչպես նաև կանոնարկման նպատակով մշակման և կատարելացման հիմունքները:

Ինչպես վեներտիկյան, այնպես էլ վիեննական հայերենագետներն այս հարցում գնացել են իրենց ուսուցիչ՝ Մխիթար Սեբաստացու նախանշած ճանապարհով: Առաջիններն ըստ ամենայնի հաստատուն պահեցին, այլև մաքրագործեցին այդ ճանապարհը: Նկատի ունենք այն հանգամանքը, որ նրանք ամենայն փայփայումով մաքրեցին հին գրական հայերենով գրված մատենագրության մեջ հետագա դարերի ընթացքում ներթափանցած աղավաղումները և գրչագրական սխալանքները, ճիգ ու եռանդ գործադրեցին հավանական ճիշտ ձևերը և ձևակերպումները վերականգնելու համար:

Իսկ երկրորդները ոչ միայն հետամուտ եղան այդ սկզբունքին, այլև ընդարձակեցին այդ ճանապարհը: Այս դեպքում էլ նկատի ունենք այն հանգամանքը, որ նոր գրական լեզվի ընտրության, ինչպես նաև վերջինիս մշակման ու կատարելագործման առումով նախապատվությունը փորձեցին տալ հին գրական հայերենի դասական վիճակին: Դա մի խորաթափանց կռահում էր, գրաբարի ավելի «մաքուր» շերտի վերհանման տպավորիչ փորձ, որ հետագա ուսումնասիրողներից ոմանց այդպես էլ անընդունելի մնաց:

Այնուհետև, վենետիկյան Մխիթարյաններն անուրանալի դեր խաղացին լատինաբանության հաղթահարման գործում, իսկ վիեննականները շրջադարձային մոտեցում հանդես բերեցին հին գրական հայերենի դասական և ոչ դասական տարբերակման առումով: Այս հարցում նրանք առաջնորդվում էին ժամանակի ոչ միայն բանասիրական-բնագրագիտական, այլև լեզվաբանական-բառագիտական չափանիշներով: Հայոց լեզվի պատմության, հայերեն գրական հուշարձանների բնագրային վերականգնումների տեսակետից հայերենագիտական ոչ մի այլ դպրոց չի արել այն, ինչ պատվախնդրորեն գլուխ են բերել Մխիթարյանները: Նրանք մեծ տեղ էին տալիս գրաբարի մասնակցությանը՝ գտնելով, որ մատենագրական հարուստ ավանդույթ ունեցող հին գրական լեզուն մեծապես կարող է նպաստել գրական կանոնարկման ուղին բռնած նոր հայերենի ձևավորմանը և զարգացմանը:

Հիշյալ հանգուցային խնդիրների լուծման ընթացքում գործադրված սկզբունքները եղել են միանգամայն ճիշտ, մեր լեզվի զարգացման ավանդույթով հիմնավորված: Եվ ինչպես հայոց լեզվի պատմության փաստերն են ցույց տալիս, նոր գրական լեզվի զարգացումը հիմնականում ընթացավ նման ճանապարհով՝ մշտապես սնվելով ու ամրապնդվելով հին գրական լեզվի երակներից, անընդհատ հարստանալով և կատարելագործվելով այդ հին լեզվի քերականական միջոցների ու եղանակների գործադրումով բացատրվող ձևերով և կիրառություններով:

4. Լատինաբանության հաղթահարման հարցը

XIV դ. 1-ին տասնամյակի կեսերից սկսած՝ հայոց լեզվի մեջ տեղ են գտնում լատիներենի օրինակով կազմված ձևեր և իրողություններ, որոնք, իբրև օտար և արհեստական միջամտության արդյունք, հաղթահարվում են XVIII դ. սկզբներից մինչև 80-ական թթ. ընկած ժամանակամիջոցում (մանրամասն տե՛ս *Համբարձումյան*, 1990. նույնի, 1982, 68-72): Հայերենի նման մաքրագործումը Մխիթարյանների կարևորագույն նվաճումներից մեկն է: Այդ խնդիրն առաջադրել էր դեռևս Մխիթար Մեքաստացին, որն էլ պատվախնդրորեն իրագործեցին նրա բանիբուն աշակերտները:

Այսպես, հայերեն գրավոր լեզվի մեջ ներթափանցել էին միայն հոգևակի թվով հանդես եկող գոյականների համար արհեստական եզակի թվի ձև ընտրելու (հմմտ. *գիրք - գիրգ, կեանք - կեան*) գոյականի ներգոյական հոլովի համար արհեստական ձև հորինելու (հմմտ. *ի քաղց և ի ծարաւ - ըն սովում և ըն ծարաւում*), ածականի բաղդատական և գերադրական աստիճանների համար միայն և միայն *-գոյն* և *-գունեղ* մասնիկներով կազմելու (հմմտ. *լաւ - լաւագոյն - լաւագունեղ*), բայի մեջ կրավորական խոնարհման անցյալ անկատարի բռնագրոսիկ ձև առաջադրելու (հմմտ. *սոնում - սոնանիւմ, գրէի - գրեէի, գրիցէի*), ոչ անհրաժեշտ, լրացուցիչ նախդիրների գործածության, շարահյուսական հարաբերության մեջ գտնվող միավորների (հատկապես՝ որոշիչ-որոշյալ կապակցության՝ *յայսմ կենում*) պարտադիր համաձայնության միտումները:

Այս հարցն ուներ նաև իր հակառակ կողմը. ի՞նչ եղանակով մաքրագործել լեզուն այդպիսի խորթություններից: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մխիթարյան լեզվագետ մշակները նախ թուլացնում և նվազեցնում, այնուհետև իսպառ դուրս են թողնում նման երևույթները՝ դրանք փոխարինելով հայեցի, այսպես կոչված, բուն «հայկաբան» ձևերով ու միջոցներով: Անհրաժեշտ ենք համարում նշելու, որ այս գործում մեծ ավանդ ունեն Վրթ. Ասկերյանը և Միք. Չամչյանը, որոնք էլ իրենց ինքնուրույն երկերում և

թարգմանություններում իրագործեցին մեծ ուսուցչի պատվիրանը: Իսկ վերջինս մի առիթով ձևակերպված էր հետևյալ կերպ. «Բայց զի մի քամառոյք բեղմնատրաց աշխատութեանց թարգմանչաց սորին գտանիցիմք, զանցս արարաք զայնոքիւք ոմամբք, որք ոչ ըստ նորոյ քերականութեանց են եղեալք, ի վերացմունս բայից եւ կամ ի յայլս, զի այնոքիւք զօրութիւն բանից ոչ վնասին, այլ մանաւանդ քաղցրաբանութիւնք պատճառին, առ յոր վախճան նախնիք մերք եւս թոյլ ետուն, եւ փոխանակ դնելոյ *որոշեալ, գոյնատրեցեալ, շնանեցեալ* եւ այլք նմանք, եղին՝ *որոշեալ, գոյնատրեալ, լցեալ*: Եւ փոխանակ դնելոյ *սրբոց գրոց, բարեաց արանց*, եղին՝ *սուրբ գրոց, բարի արանց* և այլք նմանք: Վասն որոյ աղաչեմք զընթերցողս վարդապետսն, զի գնուաստութիւն մեր, որ քան առ յայնս անբասիրս արասցեն, զի ոչ թէ ոչ ճանաչելոյ զայնպիսիսն զանց արարաք, այլ զի մի ամբարտաւանք գտանիցիմք զվաստակս նախնեաց խախտելով, քան զոր չիք յանդգնագոյն, թոյլ թողաք մնալ եւ մանաւանդ մինչեւ գոյացութեան բանին զոչ իմն վնաս առ բերէին» (*Սեբաստացի*, 1715, 3. ընդգծումները մերն են - Վ.Հ.):

Ըստ այսմ, կարծում ենք, որ XVIII դ. լեզվամշակութային գործը, առաջին մեծ ձեռքբերումը հայերենի մեջ անհարկի տեղ գտած լատինաբան բառերի, ձևաբանական միավորների, շարահյուսական կառույցների դուրս մղելն էր: Վերջինս նաև հնարավորություն էր ստեղծում նոր ժամանակներում գործածվող գրավոր լեզուն հասցնելու նախնական վիճակին, առնվազն V-XI դդ. գրաբարի որակին: Այս հարցում հայերենագիտությունը պարտական է Մխիթարյան միաբանության երանելի վարդապետներին:

Ավելին, այդ հարցում Մխիթարյաններն ավելի առաջ գնացին, այն է՝ նրանք իրենց երկերում և թարգմանություններում գործածեցին մի այնպիսի խնամված լեզու, որն ավելի հարուստ էր գործառնապես, որն առավել կառուցիկ էր ձևաբանորեն և շարահյուսական առումով, քան հին ժամանակներում, երբ գրաբարը գործառում էր իբրև կենդանի, ընդհանուր գրական լեզու:

Այս հանգամանքը խիստ ուշագրավ է արդի հայերենի գրական երկու տարբերակների կանոնարկման տեսակետից: Հետևելով ոչ միայն Մխիթարյանների, այլև երևան եկած հայերենագիտական մյուս դպրոցների ստեղծած ավանդույթին՝ մեր օրերում ևս անհրաժեշտություն կա արտաքին բարեխնամ միջամտությամբ կանոնավորելու, առավել ևս միասնականացման ուղու վրա դնելու մեր նոր գրական լեզվի երկու տարբերակները:

Վերջիններս ներկայացնում են այնպիսի տարամիտումներ, որոնք կարելի է առանց դժվարության հաղթահարել: Նկատի ունենք հատկապես ուղղագրական-ուղղախոսական տարբերությունները (հմմտ. *գրքի - գիրքի, գրքերի - գիրքերու, ժողովրդի - ժողովորդի*), ձևաբանական մակարդակի առանձնակիությունները (հմմտ. *գիտակցումով - գիտակցումովը, բերել էի - բերեր էի, մարմնի - մարմինին*), բառակազմության և իմաստաբանության վերաբերյալ առանձնացումները (հմմտ. *առնչություն - առնչությունն, արծազանք - արծազանգ, ճիշտ - ճիշդ, ձգել «քաշել» - ձգել «զգել, թողնել»*), շարահյուսական մակարդակի զուգահեռությունները և այլն: Այս և նման կարգի տարբերությունները, ինչ խոսք, ոչ այնքան օտար ազդեցության, որքան բարբառային հիմքով ձևացումներ են, որոնց հաղթահարումն, անշուշտ, ավելի դյուրին և անխափան կանոնավորմամբ կարելի է իրականացնել:

6. Մխիթարյանների գործունեության երկփեղկումը և հայերենի վերաբերյալ տարբեր պատկերացումները

XIX դ. 10-ական թթ., երբ արտաքին աննպաստ պայմանների բերումով միմյանցից առանձնանում են Մխիթարյանները՝ կազմելով երկու ճյուղ, վիեննական թևի գործիչները լեզվի հարցերում, այսինքն՝ նոր լեզվի ընտրության, այլև մշակման և կատարելացման մեջ առաջ են քաշում բոլորովին ինքնուրույն մոտեցում:

Վերջինս նորից բախվում էր իրենց մեծ ուսուցչի նախանշած սկզբունքներին: Առաջ են քաշում այն գաղափարը, ըստ որի նոր լեզուն կամ աշխարհաբարը, եթե այն դառնալու է ընդհանուր գրա-

կան լեզու, պիտի մշակվի և կանոնավորվի ոչ թե առհասարակ գրաբարի, այսինքն՝ V-XI դդ. մեր նախնյաց լեզվի, այլ նրա ավելի «մաքուր» և բնաշխարհիկ տարբերակի՝ V դ. 1-ին տասնամյակներում գործածված լեզվի օրինակով: Այս սկզբունքի առաջին կիրառողներն իրենք էին. վիեննական դպրոցի ներկայացուցիչները գրաբար սովորում էին ընտիր բնագրերի տվյալների հիման վրա, քերականական երևույթներից նախապատվությունը տալիս էին «դասական» գրաբարին, որն իրենց իսկ հայտնաբարածն էր ու գիտականորեն հիմնավորածը:

Լեզվամշակութային այդ մեծ ձեռնարկման նախակարապետը եղել է Վրթ. Չալըխյանը¹: Չալըխյանի քերականությունները հայերեն սովորողներին հաղորդել է հմտություն հայոց լեզվի մաքրության, գրական նորմավորվածության, ինչպես նաև գրաբար ընտիր բնագրերի շուրջ (հմմտ. *Համբարձումյան*, 1987, 97-98. նույնի, 1995, 360-379): Հիշենք Հ. Գաթըրճյանի մի դիտողությունը, որն անհայտ է մնացել «դասական հայերենի» գյուտը չընդունող լեզվաբաններին. «Չէ, մեր յիշած նոր դիտողութեանց մեջ ճաշակը որոշիչ չէ: *Բառարանով* (իմա՛ բառապաշարով - Վ.Հ.) և *քերականություններ* միանգամայն է, որ հիմնովին երկուսի կը բաժնուի հայերեն գրաբար լեզուն, ... զանոնք իրարմէ բաժանող այնչափ ժամանակը չէ, որչափ դպրոցը կամ ուսումն է, որով վերջինները յունական լեզուի երկարագոյն եւ կատարելագոյն հրահանգ առած են (ընդգծումը մերն է - Վ.Հ.) (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1913, 720):

Եվ այդ գործում իրենց բացառիկ դերն են ունեցել հատկապես Հ. Գաթըրճյանը, Ա. Մ. Գարագաշյանը, Պ. Հովնանյանը և ուրիշներ: Նրանք իրագործեցին ոչ միայն Մխիթար Սեբաստացու, այլև իրենց իսկ անմիջական ուսուցչի՝ Վրթ. Չալըխյանի պատվիրանը և ուսումը:

Չի բացառվում նաև տվյալ դեպքում նրանց մշակած բառագիտական-բառարանային սկզբունքներին հետևելը: Նոր տերմինների ստեղծման հարցում անհամեմատ ակնառու են Ղևոնդ Ալիշանի գրեթե բոլոր երկերը, ինչպես նաև «Բազմավէպ» և «Հանդէս ամսօրեայ» պարբերականները:

Այս ամենը բացատրվում է այն հանգամանքով, որ Մխիթարյանների գործադրած բառակազմական և բառակերտման սկզբունքները գրեթե միշտ եղել են հայեցի, գրավոր լեզվի տևական ավանդույթի վրա ներդաշնակորեն հիմնված: Այսպես, օրինակ, Ս. Աղամալյանի և Ս. Պրոնյանի երկրաչափության և եռանկյունաչափության դասագրքերը, Ղ. Ուղուլուղյանի նավագնացությանը վերաբերող գիրքը պարունակում են այնպիսի նոր տերմիններ և տերմինային անվանումներ, որոնք այսօր ևս ունեն լայն գործածություն: Դեռ նախանցյալ դարի կեսերին այդ տերմինները և բառային անվանումները եկան փոխարինելու հունարեն և լատիներեն կազմության եվրոպական լեզուներում գործածվող համարժեքներին, և որոնց կիրառության անհրաժեշտությունը կար հայերեն համապատասխան բնագրերում և գրքերում:

Եվ նշենք, որ արդի գիտության տերմինաբանության և առհասարակ նորագույն բառապաշարի մշակման և կարգավորման գործում, եթե այդ խնդրի լուծմանը հնարավորություն ունենանք խստորեն հետևելու, կարող ենք որոշակի չափով օգտագործել նաև Մխիթարյանների կերտած և ժամանակին գործածության մեջ դրած այն տերմինները և բառային անվանումները, որոնք հետագայում երևան եկած պայմաններում մոռացության են մատնված եղել:

Արդի գրական հայերենի հետագա կանոնավորման և կատարելագործման հարցում արտալեզվական միջամտության համար բավականին նպաստավոր կարող է լինել Մխիթարյանների լեզվամշակութային գործունեության օրինակը: Ճիշտ է, վերջինս միակը չէ, սակայն դրանով նաև լիովին պահպանված կարող է լինել լեզվական ժառանգորդությունը: Լեզուների պատմությունը ցույց է

¹ Տե՛ս սույն աշխատության հավելվածը:

տալիս, որ զարգացման միտումները և նրանց դրսևորումները կենսունակ են լինում ամենից առաջ ժառանգորդության և ավանդույթի հիմքով:

Հայոց լեզվի պատմությունն այս առումով չի առանձնանում և չի կարող նաև բացառություն լինել:

Եզրակացություններ

1. Մխիթարյանները իրենց մշակութային գործունեությունը ծավալելիս են եղել երեք ուղղությամբ՝ գրականության ստեղծում՝ ինքնուրույն կամ թարգմանական, գրատպություն և կրթություն:

2. Լեզվի հարցերը գրեթե հավասարապես այդ երեքի ուղեծրում են՝ հնի պահպանում և ըստ ամենայնի իմացություն, նորի կանոնավորում և խրախուսում:

3. Նրանց գրական արտադրանքի լեզվի քննությունը կարող է մեծ նպաստ լինել հայ հասարակագիտությանը, և ամեն մի ձեռնարկում վերջնական չէ անսպառ եղածի համեմատությամբ:

4. Մխիթարյանների դերը հայերենի գրական մշակման և կանոնարկման գործում ունեցել է և շարունակում է ունենալ իր հսկայական նշանակությունը:

Նոր բառեր Հակոբ Շամախեցու «Հաց նեղելոց» երկում

Ներածություն

Հակոբ կաթողիկոս Շամախեցին XVIII դ. 2-րդ կեսի հայ եկեղեցական և մշակութային կյանքի երևելի դեմքերից է: Նա ոչ միայն կազմել է Ս. Էջմիածնի արտոնությունների և իրավասությունների վերաբերյալ վավերագրերի ցուցակը, այլև հեղինակ է տաղերի («բանաստեղծությունների»): Սակայն նրա առավել հայտնի գործը «Գիրք, որ կոչի Հաց նեղելոց» երկն է (Կ.Պոլիս, 1760):

Հեղինակի այս աշխատությունը չի եղել լեզվի քննության առարկա, թեև այն կարևոր աղբյուր է հայերենի հատկապես բանապաշարի պատմության տեսանկյունից:

1. «Հաց նեղելոց» երկի կառուցվածքի և նշանակության մասին

Այդ երկն ունի հետաքրքիր կառուցվածք. 1) Առաջին գիրք՝ ա) Ա հատոր՝ բաղկացած Ա-ԻԳ գլխից, գրված հանգավոր շարադրանքով (էջ 43-276), բ) Բ հատոր՝ կազմված ԻԳ - ԻԷ գլուխներից, ունի մեկ-երկու «մաղթանք, ստգտանք, տաղ և այլն» (էջ 277-340), 2) Երկրորդ «գիրք, որ կոչի Գոհարան», պարունակում է Լ գլուխ (էջ 341-497), 3) «Աղերս յիշատակի գծագրողաց գրքոյ» (էջ 498-499), 4) «Յիշատակարան տպեցման», որում նշվում է, որ այն գրվել և ավարտվել է 1758 թ. (էջ 500-504), 5) մի աղոթք՝ «ի սուրբ Նարեկ գրքոյն» (էջ 504-512):

Գիրքը գրված է ժամանակի գրաբարով, զերծ չէ լատինաբան հայերենին բնորոշ (արհեստական) բառային և քերականական ձևերի գործածությունից. հմմտ. *բազմագունեղ* «ամենաշատ», *բառնիլ* «վերացվել», *անարգիցեին* «անարգեին», *եթե ոչ իցեիր* «եթե չլինեիր», *թողանեցայ* «թողնվեցի», *ի ներ բանտից* «բանտերի մեջ՝ բանտերում», *լնանեցեալ* «լցված», *մեծագունեղ* «ամենամեծ», *մեծագունեղապէս* «ամենամեծ ձևով», *յայնմ կենին* «այն կյանքում», *յիմունս կենի* «իմ այս կյանքում», *ներ այնմ ախտին* «այն ախտի մեջ», *ներ այնմ* «սրանում», *նոյնոյ* «նույնի», *շարադրեցեալ* «շարադրված», *լնանեցեալ* «լցված», *ի քէն թողանեցայ* «քեզանից թողնվեցի՝ ազատ արձակվեցի», *յայնմ գրքոջ* «այս գրքում» և այլն:

Սրանք, ինչ խոսք, արհեստական կազմություններ են, որոնք ստեղծվել են լատինաբան հեղինակների կողմից՝ հայերենի բառապաշարը, մանավանդ քերականական կառուցվածքը լատիներենի օրինակով «լրացնելու» նպատակով, և որոնք էլ ինքնաբերաբար թափանցել են նաև բուն հայերենով գրված երկերի մեջ, նույնիսկ ժամանակի էջմիածնական գրական միջավայրում:

Ստորև առանձնացվող բառերը պայմանականորեն նոր են կամ նոր իմաստով կիրառված: Նկատենք, որ հայերեն ձեռագիր աղբյուրներն այսօր ևս ոչ լիովին, կարելի է ասել մասամբ են ուսումնասիրված, մանավանդ հայերենի բառապաշարի պատմության տեսակյունից: Ուստի պատահական չէ, որ հատկապես վերջին ժամանակներս կատարվում են բառագիտական տարբեր կարգի ուսումնասիրություններ, որոնք փորձում են ինչ-որ չափով համարել այդ բնագավառը:

Մեզանում սկսած XVII դ. վերջերից կազմվել են գրական հայերենի բոլոր տարբերակների բառապաշարն ամփոփող տարբեր ծավալի և տեսակի բառարաններ, որոնք լիովին կամ մասնակիորեն ներառում են իրենց ժամանակին հայտնի գրական հուշարձանների բառապաշարը: Այսպես, վերջին մեկ-մեկուկես հարյուրամյակում գիտական և կրթական տարբեր օջախներում հրատարակվել են զգալի թվով գրավոր աղբյուրների քննական բնագրեր, որոնցում երևան են գալիս բառապաշարի նոր միավորներ, այլև դրանց հարակից բերվում են նաև համապատասխան բառացանկեր, որոնք նույնպես կարևոր են հայերենի բառապաշարի ամբողջացման տեսանկյունից:

Այնուհետև, հատկապես անցյալ դարի 50-60-ական թթ. սկսած գրվել են տարբեր ծավալի և բնույթի բառագիտական ու բառարանագրական աշխատանքներ, որոնք միաժամանակ կարող են նյութեր տրամադրել հայերենի ընդհանուր բառապաշարի ամբողջացման գործին: Այսուհանդերձ, հայերեն ձեռագիր շատ աղբյուրների բառապաշարի վերհանումն ու բառարանագրումը մնում են ապագայի գործ, թեև այս բնագավառում շարունակվում են գիտական աշխատանքները (տե՛ս *Համբարձումյան*, 2006. նաև 2015. *Պողոսյան*, 2016): Մշակվում են ծրագրեր, որոնք հետապնդում են հայերենի լիակատար բառարան ստեղծելու նպատակով:

Այսպես, նախատեսվում է կազմել գրաբարի լիածավալ բառարան, որն ամենայն հավանականությամբ լինելու է համալրումը

մինչև այժմ հայտնի բառարանների: Առանձին աշխատանքներ են ծավալվելու հայերենի պատմական բառարանի ստեղծման ուղղությամբ: Նման բառարանի ստեղծման հիմնական հատկանիշն առհասարակ հայերենի բառապաշարի բառարանագրումն է պատմական ընթացքի մեջ, այլ կերպ ասած՝ տարածամանակյա կտրվածքով: Ընդ որում ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե գրական հուշարձաններում տեղ գտած բառերն ու բառային միավորները առաջին անգամ գրական ո՛ր հուշարձանում են գործածված, բովանդակության պլանում բացահայտել և ցույց տալ դրանցում տեղի ունեցած բառիմաստային զարգացումը և այլն:

2. Երկի բառապաշարի նորակազմությունները

Ստորև սեղմ անդրադառնում ենք գրական այս հուշարձանի մեջ տեղ գտած բառերին՝ ավելի մանրամասն քննությունը թողնելով հետագային: Դրանք չենք գտնում գրաբարի հայտնի, ամենածավալուն բառարաններում՝ լույս տեսած թե՛ վաղ անցյալում կթե՛ մեր ժամանակերում:

Նկատենք, որ վերջին տարիներին հնարավոր եղավ կազմելու «Նոր հայկազյան բառարան»-ի լրացում հանդիսացող բառարաններ, որոնք մեծ նշանակություն ունեն հին հայերենի ընդհանուր բառապաշարի հավաքման և բացատրության տեսանկյունից: Գրեթե նույնպիսի նպատակ են հետապնդում գրաբար աղբյուրների բառապաշարի քննությանը նվիրված մի շարք աշխատանքներ (մենագրություններ, ատենախոսություններ, հոդվածներ և այլն), ինչպես նաև գրաբար բնագրերի աշխարհաբար թարգմանություններ, որոնցում էլ այս կամ այն չափով ներկայացվում են տվյալ գրավոր աղբյուրի մեջ գործածված նոր բառերը, բառերի նոր իմաստային կիրառությունները:

1) Նոր բառեր: Սրանք, ըստ խոսքիմասային պատկանելության, մի քանի տեսակ են՝ գոյականական, ածականական, մակբայական: Ընդ որում համեմատաբար շատ են ածականական կազմությունները:

ա) *Գոյականական կազմություններ*: Դրանք սովորաբար բարդ ածանցավոր բառեր են, որոնց բաղադրության, այսպես կոչված, «վերջին քայլը» ածանցումն է (հմմտ. *բուսաբերություն*), երբեմն՝ ածանցավորի բարդում (հմմտ. *հանգստաջուր*), այլն ածանցում (հմմտ. *նախագրիչ*):

Բուսաբերություն «բույսերի աճի հնարավորություն, բուսաբեր լինելը՝ բուսնելը»։ Տու՛ր օդոց զբարեխառնություն, // նաև անձրևաց քաղցրություն, // անդոց *զբուսաբերություն* (ՀՇամ., էջ 223)¹:

Դիրամտածություն «հեշտ ըմբռնելի՝ հասկանալի»։ Զոմանս բանս ոտնաչափութեամբ շարադրեցաք վասն փութասերտութեանց և *դիրամտածութեանց* (ՀՇամ., էջ 28)²:

Խրատասպատժություն «պատժելով խրատելը. պատիժն իբրև խրատ գործադրելը»։ Եւ ի պատուիրանս իւր ածել ի ձեռն *խրատասպատժութեանց* (էջ 6): Վասն որոյ զսաստիկ սովն ետ սմա ի խրատասպատժութիւն և ի մարմնանեղութիւն (էջ 8): Բայց գիտելի է, զի որք զայսպիսի *խրատասպատժութիւնս* և մարմնանեղութիւնս սիրով ընդունին (էջ 9): Ետ ինձ *զխրատասպատժութիւն* և զմարմնանեղութիւն (էջ 11): Եւ զի վասն մեղաց նեղաւորն աղօթօղ՝ *խրատասպատժութեամբն* և մարմնանեղութեամբն (էջ 24-25): Ըստ որոց և այժմ՝ արկեր զիս զպարտաւորս յայս *խրատասպատժութիւնս* (էջ 305): Զի վասն մեղաց իմոց արկեր զիս ի յայս *խրատասպատժութիւնս* (էջ 28): Իսկ և ի *խրատասպատժութեանս*՝ յորում կայի յուսահատեալ ի հոգեկան և ի մարմնական մխիթարչաց՝ զրկեցեալ ի հասարակածագ լուսոյ արեգականն և ճրագի՝ մերկացեալ ի բնաւից ընչից (էջ 488):

Համբերողապետ, գոյ. (ած.) «Հոբ՝ մեծ համբերող»։ Յորմէ ուրեմն յայտ է, զի ճշմարիտ է բանն *համբերողապետին* Յոբայ (էջ 4)։

Հանգստաջուր «հանգստություն բերող՝ ոռոգող, հազեցնող ջուր»։ Ընդ խոտաւէտ դալար վայրին // պահել ի պատուիրանս քոյին, // և ընդ *հանգստաջուր* մարգին // սնուցանել յաւետարանին (էջ 155):

Մարմնանեղութիւն «մարմնին՝ ֆիզիկականին նեղություն պատճառելը՝ տալը, զրկանք կրելը»։ Վասն որոյ զսաստիկ սովն ետ սմա ի խրատասպատժութիւն և ի *մարմնանեղութիւն* (էջ 8): Բայց գիտելի է, զի որք զայսպիսի խրատասպատժութիւնս և *մարմնանեղութիւնս* սիրով ընդունին (էջ 9): Ետ ինձ զխրատասպատժութիւն և *զմարմնանեղութիւն* (էջ 11): Եւ զի վասն մեղաց նեղաւորն աղօթօղ՝ խրատասպատժութեամբն և *մարմնանեղութեամբն* (էջ 24-25):

Նախագրիչ «բառի սկզբնատառի գրողը՝ տառագրիչ»։ Արդ աղաչեմք յիշել վերջաբար. // զերկոսին եղբարս՝ զսօտարս անկատար. // զԵրեմիաս և զԼուսկիանոսս // *ըզնախագրիչս* տառիս փրկարար (էջ 498) :

Նեղասկրութիւն «նեղություն կրելը»։ Ընկա՛լ, տե՛ր, ի քոյս գթութիւնս. // և վասն իմ մեղաց զտրտմութիւնս. // զարտասուս և զհեղութիւնս // և զամենայն *նեղասկրութիւնս* (էջ 200):

Ոտնաչափութիւն «ոտանավոր՝ չափածո (երկ)»։ Զոմանս բանս *ոտնաչափութեամբ* շարադրեցաք վասն փութասերտութեանց և դիրամտածութեանց (էջ 28):

Վարձագրկութիւն «վարձից՝ վարձատրությունից զրկվելը՝ անմասն մնալը»։ Այլն յետ *վարձագրկութեանց*, // զսաստիկ պատիժս ևս կրեսցես (էջ 51):

Վերջաբանութիւն «վերջաբան. ավարտ»։ Յիշատակարան հեղինակին և *վերջաբանութիւն* բոլորի գրոյս (էջ 487):

Փութասերտութիւն «շուտ՝ անմիջապէս հասկանալը՝ սերտելը»։ Զոմանս բանս ոտնաչափութեամբ շարադրեցաք վասն *փութասերտութեանց* և դիրամտածութեանց (էջ 28):

բ) *Ածականական կազմություններ*: Սրանք, ինչպես ընդունված է ասել, հիմնականում ածանցականներ են՝ վերջին հաշվով

¹ ՆՀԲ-ն, ԱԲ-ն, ԳԲ-ն չունեն, թեև ունեն՝ *բուսաբեր*:
² ՆՀԲ-ն չունի, ունի՝ *դիրամտություն*: Հետագա օրինակներին կից նշում ենք միայն էջը:

արտահայտելու առարկայի, երևույթի հատկանիշ, կան նաև բարդ բառեր, որոնց բաղադրիչներից մեկնումեկը բայարմատ է կամ այլ կարգի միավոր: Ընդ որում լինում է պարզ կամ բարդ բառի ածանցում (հմմտ. *նեղաւոր, պերկմիտ, գոհատրական*), բարդում որևէ բառով կամ բայարմատով (հմմտ. *երախտատես, թոյնատիպ*), բարդ ածանցավորի ածանցում (հմմտ. *անտոնաչափական*) և այլն:

Ամենաբարեյի, «բոլոր բարիքներով լեցուն»։ Համակապեալ կազմեցի գգիրք մի և արկի յամենաբարելի գանձարանն քո յեկեղեցի սուրբ (էջ 490):

Ամենաբժշկապետ «ամենաբժիշկ. Հիսուս փրկիչ»։ Զի այս է նշան մեծագունի սիրոյ, և գործ բազմագունողի ողորմութեան ամենաբժշկապետին աստուծոյ (էջ 10):

Այլափոփ «մեկ այլ բանի մեջ ամփոփված»։ Հեռացո՛ւ ի թիւր և ի նորաթև և յայլափոփ աղանդից և դաւանութենաց (էջ 491):

Անտոնաւոր, «ոչ չափածո՝ արձակ (գրվածք)»։ Յորում բանք աղօթականք *անտոնաւորք* և անչափականք՝ յօրինեցեալք աշխատասիրութեամբ ի նոյնոյ Յակոբայ արհի եպիսկոպոսի Շամախեցոյ (էջ 277):

Անտոնաչափական (բանք) «արձակ՝ ոչ չափածո (գրվածք)»։ Երրորդ՝ թէ քանի՞ գիրք են բոլոր գիրքն, և քանի՞ հատորի՝ *նունաչափականք* են բանին և թէ անտոնաչափականք (էջ 2-3):

Ապականամերձ «աղավաղմանը՝ ապականմանը մոտ՝ մերձ»։ Ինամես անխնամ գմարմինս նոցա, նորոգես *ապականամերձ* հոգիս նոցա (էջ 303):

Ապերկմիտ «մեկ մտքի, ոչ տարակուսական, միահաղոյն»։ Բայց յուսամ ահա *ապերկմիտ*. // և հաւատամ ես ճշմարիտ (էջ 147): Զերկուդ անձամբք և բնութեամբ գմիդ, // բոլորասիրտ և *ապերկմիտ* (էջ 227):

Արարածասէր «Աստված. իր ստեղծածին սիրող»։ Քանզի դու ես հայր որդեգրած, արարիչ *արարածասէր* (էջ 330):

Արարչավայելուչ «ստեղծողին վայել»։ Ճաշակեցի՝ զի աստուածաբար գայլս ամենայն զաստուածայինս և զարարչավայելուչս ունիցիմ (էջ 320):

Արմատադառն «արմատը դառը. ոչ պիտանի»։ Սակայն ես *արմատադառնս* և ի չարիս ուսեալս և բարեմոռացս՝ կրկին նշկահեալ ի բարերար հօրէդ իմմէ (էջ 281):

Բոլորասիրտ «լիասիրտ. մեծապես նվիրված»։ Զերկուդ անձամբք և բնութեամբ գմիդ, // *բոլորասիրտ* և ապերկմիտ (էջ 227):

Գլխակոր «գլխահակ, գլխիկոր»։ Դարձո՛ւ յետս պատկառեալ և գլխակոր՝ որչափ յառնեն ի վերայ սորա (էջ 493)¹:

Գոհատրական «գոհություն տվող՝ տված»։ Գիրք երկրորդ որ կոչի Գոհարան, յորում գոն բանք *գոհատրականք* և շնորհակալականք՝... շարադրեցեալք ի նոյնոյ Յակոբայ շնորհափայլ Վարդապետ և յարհոյ եպիսկոպոսէ Շամախեցոյ (էջ 348):

Դիրախաբեյի «ենթակա հեշտ խաբվելու. դյուրահավատ»։ Քանզի մարդս բնութեամբ *դիրախաբեյի* գոլ գիտեմք իսկ յաստուածային բանից (էջ 3)²:

Դրախտասարաս «դրախտ հիշեցնող, դրախտի նմանվող. դրախտակերպ»։ Ի *դրախտասարաս* բարելեաց գթութեանց հօրդ իմով արտաքսեալ՝ գնացի յաշխարհն մոլութեանց և չարեաց (էջ 282):

¹ Բառը, ի դեպ, գտնում ենք նաև Միմեոն կաթողիկոս Երևանցու ձեռագիր «Քարոզգիրք»-ում գործածված. «Սակայն տօն համբարձմանն Քրիստոսի քան զամենայն արար գնա *գլխակոր* և ամօթայից»։ «Այնքան վերանորոգին կսկիծն, որովք յաղթահարեցեալ *գլխակոր եղև*» և այլն: ՆՎԲ-ն չունի, ԱԲ-ն ևս չունի՝ *գլխակոր*, թեև ունի *գլխակորիմ* «գլուխը՝ երեսը վար կախել ամոթով, նաև *գլխիկոր*: ԳԲ-ն ունի *գլխակորել* «գլուխը կախել՝ հակել, ամոթահար լինել»: Աճառյանն ունի *գլխիկոր* «գլուխը կախ՝ կորացած»՝ իբրև նոր բառ: Մալխասյանցը, սակայն, նշում է հենց *գլխակոր* «գլուխը կորացրած՝ քաշ արած, տխրությունից կամ ամոթից. գիսակախ», որը հետագայի է:

² ՆՎԲ-ն չունի, թեև ունի՝ *դիրախաբ*, *դիրախաբող*: ԱԲ-ն չունի, թեև ունի՝ *դիրախաբ*, *դիրախաբ լինիմ* «արագափորձություն ունենալ»:

Եռառասանատիպ «եռակի երասան՝ առասան ունեցած ձևով, երեք կողմից սանձված ձևով»։ Եւ ծանեայ, զի մատնիլոց եմ նեղութեանց, յորոց և փրկելոց եմ *եռառասանատիպ* երից անձանց սրբոյ երրորդութեանն ողորմութեամբ, և նաւապետասարաս միոյ աստուածութեան խնամօք առ իս գալստեամբն (էջ 22):

Երախտատես «երախտիք իմացող, երախտագետ»։ Եւ ամենայն բարերնկալ և *երախտատես* և հացաճաշակ պարտի գոհանալ զբարերարէն (էջ 25):

Երիքովասարաս «Երիքովի պես՝ նման, Երիքովը հիշեցնող»։ Ի յելանելն իւրում յերուսաղէմաքատակ Ադինայ անտի և ի յիջանելն *յերիքովասարաս* յաշխարս (էջ 290):

Երուսաղէմաքատակ «Երուսաղէմի պես. Երուսաղէմը հիշեցնող»։ Ի յելանելն իւրում *յերուսաղէմաքատակ* Ադինայ անտի և ի յիջանելն *յերիքովասարաս* յաշխարս (էջ 290):

Թոյնատիպ «թույնի նմանվող, թույնի դեր կատարող»։ Այսպէս խառնեաց զինքն ընդ օձին, // *Զթոյնատիպ* պատրանս ընդ բանին (էջ 60):

Լուսատրչակրօն «Ս. Գրիգոր Լուսավորչի կրօնին՝ դավանանքին պատկանող. հայ քրիստոնյա»։ Ողորմեա՛, տէր իմ, ազգիս իմոյ հայազնոյ և *լուսատրչակրօնի* (էջ 491): Բերկրեցեալ իւրածին և կաթնասուն մանկամբք *լուսատրչակրօն* հաւատացելովք (էջ 493):

Լուսատրչահիմն «Ս. Գրիգոր Լուսավորչի հիմնած. հայկական»։ Յիշեսցի՛ք և զերկոսին համապատիւ և համաջան՝ զաստուածուայց և զաստուածաբան վարդապետսն՝ զհարազատ որդիսն սրբոյ *լուսատրչահիմն* Աթոռոյն հայկականի (էջ 503):

Խորհրդածին «իմաստալից, խորհուրդ ունեցող. միտք առաջ բերող»։ Զի առաջին հատոր սորին՝ յորում են բանք ոտանաւորք՝ որք են տունք չորեքուրբք տաղիք՝ մէկ հազար և երեք. որք *խորհրդածին* յամենակալ միութիւնն աստուծոյ և յերիս անձինս նոյնոյ (էջ 23):

Խրատապատժական «պատժելով խրատ(վ)ած»։ Եւ ի *խրատապատժական* նեղութիւնս անկանիցին (էջ 16): Այս փորձութիւն և նեղութիւն *խրատապատժական* ընդ սովու սաստկագունի (էջ 283): Եւ յայն սակս՝ անկայ ի փորձութիւնս և ի նեղութիւնս *խրատապատժական* (էջ 329):

Ծառայախնամ. «իր իսկ ստեղծածին՝ իր ծառային խնամող. Աստված»։ Քանզի դու ես հայր որդեգրած, արարիչ արարածասէր, աստուած ստեղծուածաողորմ, և տէր *ծառայախնամ* և բարերար (էջ 320):

Կամայագործ «իր իսկ կամքով գործված. կամովի եղած» (իրև հականիշ *ակամայագործ*-ի). տե՛ս *ակամայագործ* (էջ 307):

Հասարակածագ (լոյս) «ընդհանուր, ամենատարած»։ Զրկեցեալ ի *հասարակածագ* լուսոյ արեգականն և ճրագի է մերկացեալ ի բնաւից ընչից (էջ 488):

Հացաճաշակ ած. (գոյ.) «հացակեր, մահկանացու (անձ)»։ Եւ զամենայն բարերնկալ և երախտատես և *հացաճաշակ* պարտի գոհանալ զբարերարէն (էջ 25):

Հրեշտակավարք ած. (գոյ.) «հրեշտակի վարք՝ պահվածք ունեցող (անձ)»։ Եւ այլք ճգնաւորք՝ *հրեշտակավարք*, որք Տեանն ձերոյ՝ եղէք կամարարք (էջ 217):

Մարմնագորկ «անմարմին»։ Նպաստութեամբ սուրբ մաղթանաց, // սիրաբորբոք մարտիրոսաց, // *մարմնագորկ* ճգնաւորաց, // արիացելոց կուսանաց (էջ 213):

Մեղասթոյ (հայր) «մեղքերին թողութիւն տվող. Աստված»։ Զի քեզ Որդուոյ ողորմածի, // Եւ սուրբ Հօր քոյ *մեղասթոյի*, // և Հոգուոյ կեցուցանողի (էջ 214):

Մեղասպետ ած. (գոյ.) «ամենամեծ մեղավոր՝ չարագործ (սատանայ)»։ Պարտի նա նախ հրաժարիլ ի *մեղասպետէ* ն սատանայէ (էջ 18):

Մաւապետասարաս «նավապետի նման՝ պէս»։ Եւ ծանեայ, զի մատնիլոց եմ նեղութեանց, յորոց և փրկելոց եմ եռառասանա-

տիպ երից անձանց սրբոյ երրորդութեանն ողորմութեամբ, և *Նաստապետասարաս* միոյ աստուածութեան խնամօք առ իս գալստեամբն (էջ 22):

Նեղաւոր (*մեղաւոր*-ի համահնչությամբ), ած. (գոյ.) «նեղութեան ենթակա, նեղված», «նեղություն կրած՝ կրող (անձ)»։ Զի այս է հնար և դեղ բժշկութեան և փրկութեան մեղաւոր և *նեղաւոր* մարդկանց ի մեղաց իրեանց և ի նեղութեանց (էջ 12): Նախ՝ զի նմին իրի անուանեցի զսա ի գործոյն Հաց *նեղաւորաց*, զի զհոգոյ զքաղցն լնու, և զմարմնոյ զբժշկութիւն և զկեցութիւն շնորհէ՝ Հավատով, Յուսով և Սիրով ճաշակողացն (էջ 13): Ուրեմն ըստ պատշաճին եղաւ անունն Հաց *նեղաւորաց*, զի նեղաւորք որպէս հիւանդք (ս.տ.): Ես ըստ հոգոյ մեղաւորս և ըստ մարմնոյ *նեղաւորս* (էջ 15): Մեղաւոր *նեղաւորն* աղօթօղ ի սկզբան աղօթիցն՝ պարտի զերեսն իւր դարձուցանել ի յարևմուտս և հրաժարիլ ի սատանայէ երիցս անգամ ասելով... (էջ 39): Այս յայս միտ գրոցս անուանք կոչեցան. // հաց *նեղաւորաց* և գոհացարան (էջ 498):

Շնորհակալական «շնորհներով լի, շնորհատու»։ Գիրք երկրորդ որ կոչի Գոհարան, յորում գոն բանք գոհատրականք և *շնորհակալականք*... շարադրեցեալք ի նոյնոյ Յակոբայ շնորհափայլ վարդապետէ և յարհոյ եպիսկոպոսէ շամախեցոյ (էջ 348):

Շնորհափայլ «շնորհաշատ՝ փայլուն»։ Շարադրեցեալք ի նոյնոյ Յակոբայ *շնորհափայլ* վարդապետէ և յարհոյ եպիսկոպոսէ Շամախեցոյ (էջ 348):

Ուննաչափականք (բանք) «չափածո՝ ոչ արձակ (գրվածք)»։ Երրորդ՝ թէ քանի՞ գիրք են բոլոր գիրքն, և քանի՞ հատորի՝ *ուննաչափականք* են բանին և թէ անտոնաչափականք (էջ 2-3):

Որդեգթած «որդեսեր, որդուն գթացող»։ Քանզի դու ես որդեգթած, արարիչ աստուածատէր (էջ 330):

Պատժամատն «պատժի մատնված»։ Իսկ այս մերս՝ ի յաղքատ և յանիմաստ մտաց, ի բանտարգել և ի պատժամատն յանձնէ՝

և ամենակուսէ անօժանդակ վայրոջ արարան բազմօք աշխատանօք (էջ 29-30):

Պատրողապետ, ած. (գոյ.) «մեծ խաբերա, ստահող (չարագործ՝ սատանա)»։ Գիտեմք նաև *զպատրողապետն* սատանայ և զսկզբնատողն մեր միշտ պատրաստ և ջանացող առ ի խաբել և ի մեղս արկանել հնարիւք (էջ 3):

Սաստկատանց «սաստիկ տանջանքով եղած. տանջալից»։ Յաղագս որոյ՝ յիրաւի արժանի արացե՞ զիս չարաչար մահուան և *սաստկատանց* սատակումն (ՇՀՆ, էջ 321):

Սկզբնատոխս ած. (գոյ.) «առաջին ոտխս՝ թշնամի (չարագործ՝ սատանա)»։ Գիտեմք նաև զպատրողապետն սատանայ և *զսկզբնատոխն* մեր միշտ պատրաստ և ջանացող առ ի խաբել և ի մեղս արկանել հնարիւք (էջ 3):

Ստեղծուածաողորմ, «իր իսկ ստեղծածին՝ իր ծառային խնամող. Աստված»։ Քանզի դու ես հայր որդեգթած, արարիչ արարածատէր, աստուած *ստեղծուածաողորմ*, և տէր ծառայախնամ և բարերար (էջ 320):

Վիրասող «վերքը առողջացնող՝ ողջ դարձնող»։ Եւ ընդ արտահեղիչ դեղոյն, զխոստովանութիւնն բանի և ընդ *վիրասող* սպեղանոյն, զապաշխարութիւնն գործով (էջ 11):

Քաղցրագութ «գթառատ, բարեգութ»։ Եւ հետևեցայ մեղսապետին, և այսու բարկացուցի *զքաղցրագութ* և զանբարկանալի հայրդ իմ (էջ 283):

Քոյածին «Տիրոջից ծնված, տիրոջ ստեղծած»։ Արդ՝ ո՛վ Հոգի Աստուծոյ Աստուած ճշմարիտ և ի *քոյածին* մանկանց եմ մին՝ ես պարտարորս (էջ 327):

Քոյատունկ, «քո՝ Աստծուդ ստեղծած. մարդ արարած»։ Քանզի որ մինչ տակաւին կայի ի տան և ի բնակութեան իմում *քոյատունկ* (դրախտ) (էջ 323):

Քոյատուր «քո տված. Աստուծո տված». Ի *քոյատուր* բարեացն ամենից կողոպտեալ մեղօք վիրաւորեցեալ և կիսամահ անկեալ (էջ 290):

գ) *Բայական կազմութիւններ*: Սրանք քիչ են գործածված՝ համեմատութեամբ նախորդների:

Խրատասպատճել «խրատել՝ պատճելով». Յորում իբրև վտանգեցաւ՝ նեղեցաւ և *խրատասպատճեցաւ*, յայնժամ խնդրեաց (էջ 7):

Կամնասայել, «կալսել. հունձքը կալում մշակել». Ջորս պէս պէս շարահիսութեամբք՝ որպէս թէ *կամնասայելալ* և աղացեալ արարի ալիւր (էջ 12-13):

Համակապել «լրիվ կազմել, ամբողջացնել». *Համակապեալ* կազմեցի զգիրք մի և արկի յամենաբարելի գանձարանն քո յեկեղեցի սուրբ (էջ 490):

դ) *Մակրայական կազմութիւններ*: Հանդիպում է մեկ-երկու գործածություն:

Կարճառօտասպէս «սեղմ՝ հակիրճ, կարճառոտ ձևով». Եւ աստէն հարկ է ինձ վերակրկնել *կարճառօտասպէս* (էջ 324):

Ներողասպէս «ներողաբար. ներելի». Նախ՝ փոքրագոյն և անցաւոր և *ներողասպէս*. այս՝ հատուցանի մեղաւորին ի տեառնէ հանդերձ ողորմութեամբ ի յանցաւոր կեանս յայսմիկ (էջ 5):

Վերջաբար «վերջապես, ի վերջո. վերջում». Արդ աղաչեմք յիշել *վերջաբար*. // զերկոսին եղբարս՝ զնօտարս անկատար. // ըզերեմիաս և զՂունկիանոսս // ըզնախագրիչս ռատիս փրկարար (էջ 498):

2. Բառի նոր իմաստային կիրառություններ: Սրանք հանդիպում են, մանավանդ նոր ժամանակի գրաբարի՝ վաղ աշխարհաբարից ունեցած որոշակի ազդեցության պայմաններում, և որոնց մանրամասն քննությունը, չի բացառվում, ավելին կարող է բացահայտել:

Անչափական. «ոչ չափածո՝ արձակ, ոչ հանգավոր». Յորում բանք աղօթականք անտանաւորք և *անչափականք*՝ յօրինեցեալք աշխատասիրութեամբ ի նոյնոյ Յակոբայ արհի եպիսկոպոսի Շամախեցոյ (էջ 277):

Գոհարան. «գիրք». «Գիրք երկրորդ, որ կոչի *գոհարան*» (վերնագիր. էջ 348):

Սրբագրել. «(տպագիրը) մաքրագրել. սրբագրել». Արա՛, տէ՛ր իմ, զի որք աշխատիցին ի սմա գրելով և *սրբագրելով* և կամ տպագրելով, և որք լինիցին պատճառք տպեցմանն ծախուցն վճարմամբ, աոցեն առատապէս ի յաննուագ գգանձարանէդ զմեծ ողորմութիւնս՝ աստ և ի հանդերձելումն (էջ 497):

Եզրակացություններ

1. Այս երկում տեղ են գտել վեց տասնյակից ավելի նոր բառեր և մեկ-երկու բառի նոր իմաստով կիրառություն, որ չենք գտնում ՆՀԲ-ում, մյուս բառարաններում, գրաբարի բառապաշարի հարստացման մի օրինակ է:

2. Դրանք, պայմանավորված երկի բովանդակությամբ, հիմնականում հոգևոր-եկեղեցական ոլորտի բառեր են, մեծ մասամբ՝ իբրև նորակազմություն, այլև բառի նոր իմաստային կիրառություն:

3. Ոչ կենդանի լեզու հանդիսացող գրաբարը հետագա ժամանակներում ևս կարող էր բառապաշարի մեջ, հեղինակային գիտակցական միջամտության պայմաններում համալրվել և հարստանալ նոր օրինակներով:

Միմեոն Երևանցու երկերի լեզվի մասին

Ներածություն

Հայ եկեղեցու անվանի գործիչ Միմեոն կաթողիկոս Երևանցին թողել է երկեր, որոնք իրենց բովանդակությունից բացի անզուգական են նաև իրենց լեզվի կողմից: Հանրագիտարանի արժեք

ունեցող «Ջամբո» (ֆրանս. chambre < լատ. camera «սենյակ. պահարան») երկը ժամանակի գրական լեզվի, իրոք, մի «հայելի» է, որում ցոլանում է ամենից առաջ բառապաշարը, ըստ այդմ՝ նաև մտածողությունը: Իսկ ձեռագիր «Քարոզգիրքը» բարձր մտքի տեր եկեղեցականի մտածումների ամփոփումն է ազգաշահ հավատքի վերաբերյալ:

Անդրադառնալ այդ երկերի լեզվին նշանակում է ձեռնամուխ լինել հայոց լեզվի նոր պատմությանը՝ հնարավորինի սահմաններում:

1. Միմենոն Երևանցու գրական ժառանգությունը

Միմենոն կաթողիկոս Երևանցու գրական, հոգևոր-գիտական ժառանգության մեջ առանձին տեղ ունեն «Ջամբո» և ձեռագիր «Քարոզգիրք» աշխատությունները, որոնց լեզուն մինչև այժմ, բացառությամբ տողերիս հեղինակի գրածների, չի եղել առանձին քննության առարկա (*Համբարձույթան*, 2006, 42-54. նույնի, 2007, 100-109. տե՛ս նաև *Միմենոն Երևանցի*, 2017, 62-71):

Նա ունի նաև այլ գործեր, կարգավորել է հայոց Տոնացույցը (տպ. 1774 թ.), կազմել է Կանոնական թղթեր, գրել «Ջբոսարան հոգևոր» (տպ. 1772 թ.), «Տաղարան փոքրիկ» (տպ. 1793 թ.) գրքերը: Ունի մեկնողական բնույթի երկեր («Լուծմունքներ»)՝ Պորփյուրի Ներածության, Արիստոտելի Ստորագրությունների, Պերիարմենիասի, Դավիթ Անհաղթի «Հնգից առածից»-ի, Միմենոն Ջուղայեցու հեղինակած Պրոկղ իմաստունի գրքի «Լուծմունք»-ի շարունակությունը և այլն: Նրա «Պարտավճար» աշխատությունը գրված է Հայ Առաքելական եկեղեցու միասնականության վերահաստատման ազնիվ մղումով:

«Ջամբո» հանրագիտարանային երկն իր ժամանակի իրադարձությունների, այլև լեզվի վկայականն է. նույնը վերաբերում է «Քարոզգրքին»: Ստորև խոսելու ենք այդ երկուսի բառապաշարի, մասամբ այլ իրողությունների մասին:

2. «Ջամբո» երկի բառապաշարի քննություն

«Ջամբո» երկն ունի ոչ միայն բովանդակային, այլև լեզվական արժանիքներ առանձին քննության առարկա լինելու: Ստորև անդրադառնում ենք այդ երկի լեզվի բառապաշարի յուրահատկություններին, որոնք վերաբերում են հատկապես բառային նորակազմությանը, բառերի նոր իմաստային կիրառությանը, օտար բառերի գործածությանը:

Մեր մոտավոր հաշվումներով այս գրքում գործածված են երեք հարյուրից ավելի նորակազմ բառեր, ընդ որում տերմիններ և տերմինային անվանումներ, որոնք չենք հանդիպում հատկապես ՆՀԲ-ում (մասամբ՝ ԱԲ-ում և ԳԲ-ում, այլև ՄՀԲ-ում)¹:

Այդ երկը գրված է համեմատաբար պարզ գրաբարով: Նրանում տեղ են գտել նաև ժամանակի խոսակցական աշխարհաբարին բնորոշ ձևեր և ոճեր, փոխառություններ, բառային պատճենումներ և այլն: Գրքում կան նաև հեղինակի խոսքի, թերևս նաև ոճի առանձնահատկություններ ներկայացնող իրողություններ, հատկապես բառային նորակազմությունների մեջ:

Այն ներառում է ժամանակի (որոշ չափով նաև վաղ անցյալի) եկեղեցական, տնտեսական և իրավական ոլորտներին բնորոշ տերմիններ և տերմինային անվանումներ, հնից եկող կամ նոր ժամանակներում ստեղծված հատկանուններ (անձնանուններ, տեղանուններ և այլն), որոնք կազմում են այս գրքի լեզվի մի ուրույն մասը, այս իմաստով թերևս առավել հետաքրքրական շերտը:

«Ջամբո» երկը կարևոր է հայոց լեզվի պատմության, մասնավորապես հայերենի գիտական տերմինաբանության, պատմական բառագիտության համար: Օրինակ՝ գրքում բազմիցս հանդիպում է *այգի* բառը, որն այստեղ ոչ միայն որոշակի տերմին է (գյու-

¹ Հիշյալ բառարաններից երկուսը Երևանցու ժամանակի գրական հուշարձանները նյութին չեն անդրադառնում: Այնուամենայնիվ, այս դեպքում ևս բառի՝ պայմանականորեն նոր լինելու հիմք ընդունում ենք ՆՀԲ-ն, ընդ սմին՝ որևէ բառի նոր համարելը ավելի քան պայմանական է, որովհետև գործ ունենք անհամեմատ նոր ժամանակի լեզվական նյութի հետ: Այդպիսով փորձ է արվում նշելու գրավոր հուշարձանում տվյալ բառի գոյությունը, քան նշանակելու նոր լինելը:

ղատնտեսության մի ոլորտի անվանում), այլև հանդես է բերում իմաստային յուրահատկություն. գործածվում է «խաղողի այգի» (այգեգործությանը վերաբերող) կոնկրետ իմաստով: Նման միավորների առանձնացումը ինչ-որ չափով կարող է նյութ տրամադրել հետագա ավելի ծավալուն բառարանների ստեղծման համար: Նկատի ունենալով այս հանգամանքները՝ «Ջամբո» գրքի մեջ հանդիպող բառային նորաբանությունները պայմանականորեն դիտում ենք որպես այդպիսին՝ ի համեմատություն հին հայերենի (գրաբարի) և միջին հայերենի ամենաընդարձակ բառարանների տվյալների:

Բառային նորաբանությունները, ինչ խոսք, կարելի է խմբավորել՝ նկատի ունենալով դրանց սովորական կամ տերմինային իմաստով գործածությունը, նախկինում հայտնի բառերի՝ իբրև բառակազմական հիմքի օգտագործմամբ՝ նոր բառեր և բառաձևեր կազմելը, օտար բառ-բաղադրիչների գործածությունը հայերենի այս կամ այն բառի կամ տերմինի բաղադրության դեպքում և այլն:

Այսպես, հեղինակը գործածում է *վճռահատություն* («վճիռ կայացնելը, սահմանելը») նոր բառը, որը չենք գտնում, օրինակ, ՆՀԲ-ում: Իսկ *անթաքուցանելի* («անթաքույց, բացահայտ ձևով ի հայտ բերելի») բառը թեև չենք գտնում հիշյալ բառարանում, սակայն վերջինս ունի *անթագուստ*, *անթաքույց*, նաև *անթաքչելի* բառերը, որոնց էլ այժմ ավելանում է *անթաքուցանելի* բառը. *վճռահատություն* տիպի կազմություններն այս երկուսն ավելի շատ են, քան *անթաքուցանելի* տիպինը, և դա բնական է:

Այնուհետև, ՆՀԲ-ում չենք հանդիպում *ճարտարալեզու* («լեզվով ճարտար, հմուտ ձևով խոսող») բառը, թեև բառարանն ունի *ճարտարալեզուություն*, *ճարտարալեզություն* տարբերակները: Բաղադրական հիմքի՝ *ճարտարալեզու* բառի բացակայությունը ՆՀԲ-ում չի նշանակում, թե այն առհասարակ նախկինում չի եղել կամ գործածվել, հակառակ դեպքում կարող ենք ենթադրել, թե գործ ունենք, այսպես կոչված, բացթողումային (էլիպտիկ) բառակազմության հետ:

Բերված օրինակները, ինչպես նաև մյուս կարգի նորաբանությունները ցույց են տալիս, որ Սիմեոն Երևանցին իր երկի շարադրանքի բերումով ստեղծել է բառեր՝ ելնելով հիմքում ընկած երևույթի հայերենի միջոցներով անվանելու, օտարլեզվյան, հայերենին այս կամ այն չափով խորթ ձևերի թարգմանության կամ պատճենման անհրաժեշտությունից, ինչպես նաև շատ դեպքերում նախկինում հայտնի հայերեն այս կամ այն բառը գործածել է բոլորովին այլ իմաստով:

Բառային նորաբանություններ հիմնականում երևան են գալիս երկու ճանապարհով՝ բառաբարդմամբ և բառածանցմամբ: Համեմատաբար մեծ թիվ են կազմում բարդ բառերը: Դրանք բաղադրական հիմքերի բնույթի տեսակետից համարվում են նոր, որոշ իմաստով ունեն աշխարհաբարի բառակազմությանը բնորոշ գծեր: Այս երկը, գրված լինելով բավականին նոր ժամանակներում, բառային նորաբանությունների մեջ հանդես է բերում գրաբարից գալիսպես հեռացած լեզվական մտածողություն:

1) Բարդ բառերը բաղադրված են շուրջ երկու տասնյակ կաղապարով, որոնք ավելի մանրամասն քննելու դեպքում կարող են ավելի մասնավոր խմբեր ներկայացնել՝ կապված հատկապես բաղադրական հիմքերի որոշ յուրահատկությունների հետ (հնչյունափոխական կամ անհնչյունափոխ հիմքեր, բաղադրական հիմքերից մեկի կամ մյուսի նորակազմություն լինելը և այլն):

Գոյական - գոյական կաղապարով բարդությունները շատ են, իրենց հերթին կարող են բաժանվել առնվազն երկու խմբի՝ ըստ բաղադրվող հիմքի հնչյունափոխված կամ անհնչյունափոխ տարբերակով հանդես գալու դեպքի:

Անհնչյունափոխ բաղադրվող հիմքով գոյական - գոյական տիպի բաղադրությամբ գոյականները, իրենց հերթին, որոշակի խմբեր կազմելուց բացի ունեն լայն գործածություն, ներկայացնում են այդ կաղապարի մեջ մտնող բառերի ընդհանուր քանակի երկու երրորդը: Օր.՝ «գտեալ եղել *արձանաբար* մի, յորում գրեալ էր վե-

րոյ գրեցեալ Գրիգոր Մագիստրոսն» (Միմ. Երև., էջ 276): «Առեալ են ի չորից կողմանց ի գեղէն մերմէ գտեղիս, գորս և արարեալ են *գոմաստեղիս, ձիաստեղիս* և զայլս *անասնաստեղիս*» (Միմ. Երև., էջ 202): «Ի *դիւանաստունն* նոցա և ցուցանէ զգեղս զայլ գոլ ի բնէ անտի սրբոյ աթոռոյս» (էջ 105)¹:

Այսպէս նաև հետևյալները. *առուաստեղ* (էջ 200), *արդինաստեղի* (էջ 101), *Արծաթահասնք* (Գլումուշխանե տեղանվան թարգմանություն, էջ 101), *բարեազրեանք* (*բարեազիր*, էջ 185), *գետակողմն* (էջ 153), *գեղաստեղ* (էջ 195), *դարմանաստուն* «հարդանոց. մարագ» (էջ 203-204), *ծոցամէջ* (էջ 106), *կոնդակածեւ* (էջ 101), *հիմնաստեղի(ք)* (էջ 199), *հրացանաստեղի* «բերդապարսպի վրա հատուկ տեղ՝ կրակակետ, կրակատեղի. հրակնատ» (էջ 203), *ձիաստուն(ք)* «ձիանոց(ներ)» (էջ 203), *ճասակերպ* «ճառի նման, ճառ հիշեցնող» (էջ 34), *ճիտանածեւ* (նաև ջ-ով) «երկնականի, երկդարականի» (էջ 108, 135), *ջորաստուն(ք)* «ջորիների տեղ՝ գոմ(եր), ջորիանոց(ներ)» (էջ 203), *ջրադացատեղ* (էջ 189), *սանաստուն* «սառցատուն՝ եղածը սառը պահելու տեղ» (էջ 181), *սինագլուխ* (էջ 23), *տենտահող* (էջ 292), *ուղտաստուն(ք)* «ուղտերի տեղ՝ գոմ(եր), ուղտանոց(ներ)» (էջ 203), *Քարաբլուր* (*Ղարա-թափայ* բառի հայ. համարժեքը) (տեղանուն) (էջ 200), *Քարափագլուխ* (տեղանուն. Չորագյուղի մի թաղի անվանումը) (էջ 206):

Հնչյունափոխված հիմքով գոյական - գոյական տիպի բաղադրությամբ գոյականներն առանձնապես աչքի չեն ընկնում հնչյունափոխության որևէ առանձնահատկությամբ, այլ պարունակում են հայերենին առհասարակ բնորոշ փոփոխություններ, որոնցից են, օրինակ, բառավերջի կամ բառի վերջնականի որևէ ձայնավորի սղումը կամ անկումը, արմատի ձայնավորի փոփոխումը և այլն: Օր.՝ « Եւ նոյն փաշայն գրեցուցանէ ի դատարանի իւրում գերկար *գրքածեւ* դէֆտէր մի» (էջ 134), «Քանզի յառաջ *լուսաւորչադաս-*

ւան հայք էին Լեհու մերայինքն եւ ի սրբոյ աթոռոյս Էջմիածնէ՛ նուիրակ գնայր անդր» (էջ 23): «Ցուցանելով եւ զաւուր ձայնն, *զանասթինն, զլուսնաթինն* և զայլս այսպիսիս» (էջ 43):

Այսպէս նաև հետևյալները. *աղանասամիտ* (էջ 85), *անասնասխարճ* (էջ 130), *անասնաստեղի* (էջ 202), *առաքելաշաւիղ* (էջ 98), *իշատուն(ք)* «իշանոց(ներ)» (էջ 203), *նախրաստուն(ք)* «նախրանոց(ներ)» (էջ 203), *վիմսքար* (էջ 26), *տնախարճ* (էջ 130):

Գործածված է նաև *կիսածիթահասնք* «կես մասով ձիթահանք, ձիթահանի կես մասը՝ մի մասը» կրկնաբարդ բառը. «Այլն ունի սոյն գեղս *զկիսածիթահասնք* մի, գոր այն գեղացի Վարաքի որդի Սիմեօնն ծախէ երկու թումանի» (էջ 274):

Հանդիպում են խոսքիմասային նույնպիսի բաղադրիչներով կազմված մի քանի բարդ բառեր, որոնք միացած չեն որևէ հոդակապով՝ ի տարբերություն վերևում բերված կազմությամբ բառերի: Օր.՝ «Որովհետեւ չունէի զկարօղութիւն և չկարացայ իսկ ինձէն յատկապէս զարդինատր գործ ինչ յառաջացուցանել, զայս գտի ինձ *բանետող*» (էջ 3): «Լիապէս երեւին բոլոր որպիսութիւնք փոփոխմանց ... *փորձառիթ* բերմանց եւ նորին հնարիցն» (էջ 1):

Գոյական - բայարմատ կաղապարով բարդությունները նույնպես բավականին շատ են, թեև ոչ այնքան, որքան նախորդ խմբի բառերը: Դրանք նույնպես կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերով կազմություններ: Ընդ որում անհնչյունափոխ հիմքերով կազմությունները քանակապես ավելին են, քան մյուսները: Անհնչյունափոխ բաղադրվող հիմքերով գոյական - բայարմատ կազմություններն, անշուշտ, նոր են և կրում են համապատասխան լեզվամտածողության կնիքը, թեև գործածվելիս են եղել գրաբարյան բնագրում: Օր.՝ «Ղապալայ մի եւս հայերէն, գոր *զգոսակակար* Աւետիքի որդիքն տան Աղէքսանդր կաթողիկոսին Ջուղայեցոյ» (էջ 254): «Զի *զթոյնացոյցն* լոթրանաց խոտիցեն եւ զիւր Տօնացոյցն ի գործ ածիցեն»

¹ Հետագա օրինակներին կից տրվում է միայն էջը:

(էջ 44): «Քանզի որ *հայկածին* է եւ հաւատացեալ Քրիստոսի, սուվաւ եւ ի ձեռն սորա ունի զհաւատն զայն» (էջ 51) և այլն:

Այսպէս նաև հետևյալները. *անազագործ* (դալայնի < արաբ. qal'ı «անագ») «պղնձյա և այլ ամանները ներսից անագապատող՝ արհեստավոր (անձ)» (էջ 209), *բամբակահան* (էջ 191), *լափլէզ(ք)* (< *ի լափլիզաց*) «լափլէզ(ներ)՝ լափ լիզող(ներ), ուտող(ներ)» (էջ 14), *խոտաւոր* (էջ 160), *կաշեգործ* (դաբաղ < dabbāg) «կաշին աղով մշակող արհեստավոր» (էջ 209), *հայաստանաբնակ* (էջ 54), *հայրապետանիստ* (էջ 33), *հաւատակորոյս* (էջ 70), *հիմնահաստատ* (էջ 54), *ճարակտուր* (լինիմ) (*ճար* < պրսկ. čar «ձև, միջոց») «ստիպված՝ հարկադրված (լինել)» (էջ 70), *նախանձակտուր* (էջ 209), *նպարափանառ* (բախալ // բախկալ < արաբ. bakka) «նպար՝ առաջին անհրաժեշտության ուտելիք վաճառող» (էջ 209), *շնորհաբուրդիս* (էջ 64), *շնորհածին* (էջ 44, նաև 6), *պրտուապատ* (էջ 159), *սիրախառն* «սիրալի, սիրով, սրտալի» (էջ 79), *վայրանիստ* (էջ 159), *վանաշէն* «վանք շինող՝ կառուցող. եկեղեցաշէն» (էջ 14), *վասաստու* (էջ 58), *տօնակատար* (էջ 29), *քրիստոսակերտ* (էջ 6):

Հնչյունափոխված հիմքով գոյական - բայարմատ տիպի կազմություններում հնչյունափոխական երևույթները (հնչյունի սղում, փոփոխում, անկում և այլն) առհասարակ նորություն չեն: Օր.՝ «Որպէս ասացաք, սակայն *էջմիածնանիստ* կաթողիկոսն յառաջ եւ յետոյ եւ մինչեւ ցարդ՝ շնորհօքն աստուծոյ է նախապատիւ» (էջ 54): «Ո՛հ, աւա՛ղ, գրչիս աստանօր, զի յիրաւի նմանիմք աւերեցեալ եւ մերկացեալ *ընչակորոյս* վաճառականի» (էջ 271):

Այսպէս նաև հետևյալները. *անասնապահ* (էջ 158), *գեղեցկափայել* (էջ 199), *դիմակալ* (էջ 3), *յունաբնակ* (էջ 54), *յունաստանաբնակ* (էջ 54), *պարսպապատ* (էջ 204), *վճռահատ* (էջ 218), *վճռատու* (էջ 33):

Հանդիպում են նմանատիպ բարդ բառեր, որոնց գոյական և բայարմատ բաղադրիչները միացած են առանց հոդակապի: Օր.՝

«Ջրադացքն ի *գետաւորումն* են» (էջ 187): «Որ էր այր չար, ազահ, *երկրաւեր*» (էջ 156):

Այսպէս նաև հետևյալները. *նախարարած* (էջ 158), *քարտաշ* (էջ 182), *օգտարար* (էջ 236):

Գործածվում են այնպիսի կազմությամբ բարդ բառեր, որոնց երկրորդ՝ բաղադրող հիմքը որևէ բայածն է, այսինքն՝ արդյունքում ունենում ենք դերբայ կամ դիմավոր բայ: Օր.՝ «Այս Միքայէլս նախապէս ճմլեաց զկզակս Աղուանից և Աղթամարու կաթողիկոսացն, որք կամէին *նունածեղ* յաթոռս սուրբ Էջմիածին» (էջ 20): «Զի մի *նունածեղ* ձեռն արկիցեն ի հողս մեր...» (էջ 198-199): «Ուստի տաճիկքն այնք եթէ *տեղակալեալ* էին անդ» (էջ 162):

Այսպէս նաև հետևյալները. *տաւկանաբացող* (էջ 58), *փորձաւոր* (էջ 2), *փոփոխեցեալ* «փոյ եկած, խարխլված» (էջ 198, 203):

Առանձին խումբ են կազմում այն բարդ բառերը, որոնք ունեն *իս* > *ե* հնչյունափոխություն, այսինքն՝ բաղադրվող հիմքը վերջանում է *ի* ձայնավորով, որն էլ *ս* հոդակապին կից վերածվում է *ե* բաղադրիչի (հմմտ. *գինի-ս-տուն* > *գինետուն*): Օր.՝ «Տեղիս այս լեալ է յառաջագոյն տուն եւ *այգեկերպ* մեծ բաղչայ ումենն ձորագեղցոյ Բայրնդուր կոչեցելոյ Համագասպեան» (էջ 204): «Վերոյիշեցեալ *այգետեղիքդ* ամենայն են մեր Մանկասարենց այգոյ և Երեւանու ճանապարհի եւ սուրբ Հռիփսիմէի միջոցքն» (էջ 171): «Վասն որոյ ունի եւ ձեռք մի տունս յատուկ պարսպով. ներքնատամբ, վերնատամբ, *գինետամբ*, ձիատամբ, դարմանատամբ, եւ այլովք հարկաւորօք» (էջ 203-204):

Այսպէս նաև՝ *այգեչափ* (էջ 36), *հոգեբաժին* (էջ 67):

Հանդիպում են բարդ բառեր, որոնք բաղադրված են գոյական-ածական բաղադրիչներով: Օր.՝ «...եւ այլս հարկաւորս նիւթս եւ ի *խորհրդալի* բնաբանս» (էջ 34): «Դարձեալ երկու հայերէն դապալայի վասն երկու տախտակ այգոյ, եւ մէկ *կարասալի* շիրախանայի» (էջ 260):

Այսպես նաև հետևյալները (երկրորդ բաղադրիչը՝ *շատ* ածականը). *աղմկաշատ* (էջ 77), *գթաշատ* (էջ 54), *խնաստնաշատ* (էջ 87), *վտանգաշատ* (էջ 2), *ուօթաշատ* (էջ 197), *ցրտաշատ* «ցրտաշունչ» (էջ 197), *փստապերճ* (էջ 26):

Առանձին խումբ են ածական բաղադրվող հիմքով և գոյական, մակբայ կամ ածական բաղադրող հիմքով կազմվածները՝ անկախ բաղադրիչների հոդակապով կամ առանց հոդակապի միացման հանգամանքից: Օր.՝ «Եւ կամ թէ այլ է Յուդայ Յակոբեան, եւ այլ սոյն Թադէոս, բնաքն սուտք են, եւ ի թիրամնոաց ներմուծեալ յանհոգութենէ եւ ի զանցառութենէ նախնեաց երանելեացն մերոց թոյլատրեցեալք» (էջ 11): «Այլ եւ էր սա բարուքն հեզ, պարզամիտ եւ համբերող, ներօղ եւ անյիշաչար, *կակղասիրտ* եւ գթաշատ» (էջ 54): «Որ է հանդէպ բերթին (փխ. *դ-ով*) Երեւանու ի հիւսիսակոյսն, ի բարձրահայեաց գագաթանն *մեծախոր* ձորոյն» (էջ 204):

Այսպես նաև հետևյալները. *զօրեղամիտ* (էջ 141), *թուլահաւատ* (էջ 70), *խղճաբարոյ* (էջ 85), *ճարտարալեզու* (էջ 28), *ճղտանաձն* (*ճղտան*. հմմտ. *ճյուղ*, *ճեղ-ք*, այլն *ժեղ*, *ծիլ*, նաև *ճիղմ*, *սաղմ* և այլն «բաժանել՝ կիսել, ճյուղ տալ, աճել») «երկճղանի, երկդարականի. գրապանակ. տետր» (էջ 108), *մշտապիտոյ* (էջ 4), *շատազգ* (էջ 277), *ստնաստուն* (էջ 181), *սեւագլուխ* (էջ 24):

Ածական - բայարմատ կաղապարով ստեղծված բառեր՝ հիմքերից առաջինի անհնչունափոխ կամ հնչունափոխված տարբերակների գործադրումով: Օր.՝ «Սա շինեաց զտաճարն Շողակաթ կոչեցելոյ ի հիմանէ *գեղեցկաշար* վիմօք ընդ զանգակատանն եւ ընդ ամենայն շինուածոյ նորին» (էջ 26): «Եւ Աբրահամ կաթողիկոսն եւս էր ահարկու եւ *շքեղատես*, մեծանձն եւ խելօք, ճարտարալեզու եւ հանճարեղ» (էջ 30): «Սա էր այր ճարտարաբան եւ *ճոռնմախօս*, յաջողակ եւ ահաւոր, յորմէ ամենեքեան երկնչէին» (էջ 25):

Այսպես նաև հետևյալները. *հաւասարաբարձ* (էջ 60), *ճախորդաբեր* (էջ 77), *մաքրակեաց* (էջ 288), *ստապաճոյճ* (էջ 237), *քաղց-*

րուսոյց (էջ 71): Միայն մեկ դեպքում բառը բայարմատի փոխարեն բաղադրված է բայաձևով՝ *սքանչելակերտեմ*, որ մտնում է տվյալ կաղապարով կազմվածների մեջ:

Կան նաև սակավաթիվ օրինակ հանդիսացող բարդ բառեր, որոնք բաղադրված են թվական - գոյական, մակբայ - գոյական կամ բայարմատ, բայարմատ կամ բայ - գոյական, այլն դերանուն - գոյական կամ ածական բաղադրիչներով: Օր.՝ «*Եռամիտ* արգայիս եւ ոաղամիս թուղթն գիտ ցուցական» (էջ 132): «Որ ելանէ ի հարաւակոյս ի ներքոյ դրանէն յորոյ վերայ շինեաց եւ ջրաղաց մի *քազմաօգոտ*, որ ոչ երբէք խափանի» (էջ 24): «Պարտէին բառնալ զանհիմն, *զհետնաբոյս* եւ *զպատահանիստ* կաթողիկոսութիւնսն իւրեանց» (էջ 54): «Եւ վասն այլոց կաթողիկոսաց եւ պատրիարզաց եւ առաջնորդաց եւ *որպիսածանոյց* հանգամանքն» (էջ 51):

Այսպես նաև հետևյալները. *բազմակնիք* (էջ 59), *երկատուն* (էջ 35), *զարհուրատես* (էջ 159), *ինքնընծայ* (էջ 80), *խրահաճոյ* (էջ 271), *յետնաշէն* (էջ 194), *վայրակոյս* «ներքնի մաս՝ կողմ» (էջ 159), *վարեղահող* (էջ 189), *սոյնահամար* (էջ 259), *սոյնամիտ* «նույն բովանդակությամբ» (էջ 143), *սոյնանան* (էջ 135):

Թեև քիչ, սակայն հանդիպում են նաև բարդ կազմությամբ բաղադրվող հիմքով, ի վերջո, այսպես կոչված, կրկնաբարդ բառեր: Օր.՝ «Այլեւ ունի ի սոյն գեօղս *զկիսածիթահանք* մի, զոր սոյն գեօղացի Վարաքի (փխ. *գ-ով* - Վ.Հ.) որդի Սիմէօնն ծախէ երկու թումանի» (էջ 274): «Եւ մինչ *զտպագրատունն* եւս հաստատեաց Աստուծով» (էջ 44) և այլն: Բերված օրինակներից առաջինում բաղադրվող հիմք է *ձիթահանք*, իսկ երկրորդում՝ *տպագիր* (< *տպագրեմ*) բարդ կազմությամբ ձևը:

2) «Ջամբո»-ում բավականին շատ են հանդիպում ածանցավոր կազմություն ունեցող (պայմանական անվանումով) նոր բառերը, որոնք բաղադրված են մեծ մասամբ հայերենի, մասամբ օտար կամ փոխառյալ բառերի՝ իբրև բաղադրվող հիմքերով. հմմտ. *հեղինակություն*, *վեքիլություն* և այլն:

Նորակազմ ածանցավոր բառերը տվյալ դեպքում ուշադրության առարկա են ոչ միայն որևէ ածանցով (նախածանց կամ վերջածանց) կազմվելու, գործածության հաճախականության, բաղադրվող հիմքի (արմատ կամ արմատական բառ) հնչյունափոխված կամ անհնչյունափոխ լինելու, այլև մեկ և մեկից ավելի ածանցների մասնակցության նկատառումով: Եվ ըստ այդմ՝ առանձին խմբերով կարելի է ներկայացնել այն ածանցավոր բառերը, որոնք (հարաբերական իմաստով) կարող են նորաբանություն համարվել:

Միածանց բառեր՝ բաղադրված *-ութին* ածանցով: Օր.՝ *հեղինակություն* (էջ 91), *ճորտություն* (էջ 209), *միտաբություն* (< միր-աբ, էջ 193), *վեքիություն* (< վեքիլ, էջ 173):

Կրկնածանց բառեր՝ բաղադրված *-ութին* ածանցով: Օր.՝ *նուիրակություն* (էջ 94), *շահաւտություն* (էջ 233), *պատշաճաւորություն* (էջ 42), *վտանգաւորություն* (էջ 167), *վերահաստատություն* (էջ 219), *վերանորոգություն* (էջ 2):

Միածանց կազմություն է նաև *-ուտ* ծանցով բաղադրված *ծառուտ* բառը. «Դարձեալ ունի Սուրբ աթոռս յայս գեղս մերձ իրեան գերկուս *ծառուտ* պարտէզս» (էջ 169):

Բառեր, որոնք բաղադրված են *-ական* ածանցով՝ կերտելով ածականներ, անհնչյունափոխ կամ հնչյունափոխված բաղադրվող հիմքով: Օր.՝ «Յորոց առնու ... գնուիրակական, *զգանձանակական, զհոգեքաճնական, զկտակական* արդիւնս» (էջ 44): «Վկայական եւ *վիճունական* գրովքն իւրեանց, եւ թէ ե՞րբ եւ որո՞յ ձեռօքն» (էջ 3):

Այսպես նաև հետևյալները. *արտաքսական* (էջ 34), *զանգատական* (էջ 81), *երբեմնական* (էջ 63), *մարմնաւորական* (էջ 100), *նեոնական* (էջ 82), *ներքսական* (էջ 34) և այլն:

Բառեր՝ բաղադրված *-ապէս* ածանցով, հիմնականում անհնչյունափոխ հիմքով կազմվելով մակբայ: Օր.՝ «Յորոց յուսամ յիշել *երբեմնապէս* միով Ողորմեայի ի յառիլն ի յայս փորձարան» (էջ 152): «Զոր գրէ ըստ խնդրոյ Միւսա կաթողիկոսին զմաղաֆութիւնն Սրբոյ աթոռոյս, վերահաստատելով *լաւապէս* ըստ ամենայնի» (էջ

226): «Յորում ցուցանին ուղամբ թագաւորաց Պարսից եւ բունն իշխողաց *շահապիսեաց* եւ այլոց» (էջ 209):

Այսպես նաև հետևյալները. *արտաքսապէս* (էջ 3), *բացապէս* (էջ 138), *երկրորդապէս* «երկրորդաբար, երկրորդ հերթին» (էջ 17), *կրկնապէս* (էջ 34), *հաստատնապէս* (էջ 54, այլև 198), *հրամայապէս* (էջ 59), *ձրիապէս* (էջ 118), *յաւիտենականապէս* (էջ 44), *ներքսապէս* (էջ 3), *շահապէս* (էջ 209), *շքեղատէս* (էջ 30), *ցանկապէս* (էջ 210) և այլն:

Բառեր՝ բաղադրված *-արար, -ային, -ապան, -արան, -ացի, -ացու, -աւոր, -աւէտ* ածանցներով, և քանի որ բերված ածանցները հայերենում առհասարակ պակաս արտադրողական են, քան մյուսները, ուստի այստեղ նույնպես ունենք համեմատաբար քիչ թվով նորակազմ բառեր: Օր.՝ «որպէս հետեւեցան *էջմիածնայիսքս* նոցա» (էջ 54): «Որ էր յայն *կուսացի* (իմա՛ կոյս «կողմ՝ տեղ» - Վ.Հ.), եւ մանաւանդ ի վիճակէն Սոյ» (էջ 235): «Որոյ կողմունքն են շէն *այգաւոր* եւ *բաղչայաւոր* տունքն» (էջ 235):

Այսպես նաև հետևյալները. *որպիսաբար* (էջ 130), *աթոռայինքն* (էջ 128), *ձիթապան* (էջ 167), *փորձարան* (էջ 152), *կաթողիկոսացու* (էջ 79), *սպորինաւոր* (էջ 81), *հնձանաւոր* (էջ 254), *մլաւոր* (միլ < հուն. մսնդ «երկանք, ջրաղացքար») «աղաց ունեցող» (էջ 189), *ջրաւէտ* (էջ 160) և այլն:

Բառեր, որոնք բաղադրված են *-եղ, -եղէն, -որակ, -որդ, -օրէն* ածանցներով. ունենք ամեն մի ածանցով մեկ-երկու բառ: Օր.՝ «Սա էր այր հեզաբարոյ եւ հոգելի, շնորհաշատ եւ գեղեցկատես, ջերմեռանդ եւ *արտասուեղ*» (էջ 27): «Այլ ի ձեռն միոյ սեւագլխոյ սակաւինչ *բաղցրեղէնօք* եւ գառամբ շնորհաւորէր» (էջ 151) և այլն:

Այսպես նաև հետևյալները. *վեճեղէն* (էջ 44), *փոտորակ* (էջ 195), *հնգորդ* «մի տեսակ հարկ՝ տուրք» (էջ 130), *յաճախօրէն* (էջ 65), *որոշակօրէն* (էջ 138) և այլն:

Առանձին խումբ են նախաձանցավոր բառերը՝ բաղադրված նախաձանց - գոյական (կամ այլ խոսքի մասի պատկանող միավոր), այլև նախաձանց - բայ (կամ բայարմատ) բաղադրիչներով:

Նախաձանց - գոյական (կամ այլ խոսքի մասի պատկանող միավոր) կաղապարով կան քիչ թվով բառեր, որոնք ունեն *ան-*, *չ-* նախաձանցներ: Օր.՝ «Գտանեցեալ ընդ իշխանութեամբ *անիշխան* տէրանց խստասրտոց եւ գազանաբարոյից յափշտակողաց, եւ ինքն անգոր եւ անսուր» (էջ 2): «Եւ տայ ձեռնադրել զպիղծն Բակուր ի *չկաթողիկոս* Ադուանից» (էջ 69) և այլն:

Այսպես նաև հետևյալները. *անկաթողիկոս* (էջ 76), *անշէն* (տնատեղ) «չկառուցված տան՝ շենքի տեղ, հողատարածք» (էջ 274), *անպակաս* (էջ 168), *չկարգաւոր* (էջ 41) և այլն:

Նախաձանց- բայ (կամ բայարմատ) կաղապարով կազմված բառերի դեպքում հիմնականում հանդես են եկել *ներ-*, *վերա-*, երբեմն՝ *հակա-*, *նախ-* ածանցները: Օր.՝ «Յետոյ ի *ներհակել* Ջուղայեցոյ ընդ Նահապետ կաթողիկոսին» (էջ 186): «Մի ոք *ներհակիցի*, զի հարկատու են մեզ» (էջ 212): «Եւ շահն եւս *վերայիշելով* յատուկ յատուկ գեղեալ խնդիրսն» (էջ 133) և այլն:

Այսպես նաև հետևյալները. *հակամարտիմ* (էջ 8), *նախաւանդ* (էջ 87), *ներհականիստ* (էջ 67), *վերակրկնել* (էջ 91), *վերայաւելել* (փխ. վերայաւելու) «նորից ավելացնել» (էջ 100), *վերատողել* (էջ 68) և այլն:

Հանդիպում են բառեր, որոնց բաղադրվող հիմքն ածանցավոր է, և որի հիման վրա էլ կազմվում են բայեր: Օր.՝ «Որ է խորացեալ ի *ծովակացեալ* տեղի մի ի մէջ գետոյս մերոյ» (էջ 163): «Ուրեմն *կարճատօնելով* զայսմանէ, եկեսցուք ի մեր յառաջադրութիւն» (էջ 10): «Աղէքսանդր կաթողիկոսն Ջուղայեցի ի *մտաւորելն* յատնուլ զայս այգիս» (էջ 166) և այլն:

Այսպես նաև հետևյալները. *կանօնատրել* (էջ 142), *տնատրել* (էջ 186) և այլն:

Գործածված են նաև այնպիսի բառեր, որոնք բաղադրված են մեկից ավելի ածանցներով, իսկ բաղադրությունը տեղի է ունենում ոչ թե միաժամանակ, այլ աստիճանաբար: Նման կազմությունները կոչում ենք *համաձանցավոր բառեր*, այսինքն՝ բառեր, որոնց արդյունքում ունենք և՛ նախաձանց, և՛ վերջաձանց (առնվազն՝ մեկական), և որոնք բաղադրությանը մասնակցել են ոչ թե միանգամից, այլ հետզհետե, հաջորդաբար: Օր.՝ «Եւ խնդրէ, զի եւ ինքն տայցէ զոաղամ մի ի *վերահաստատութեան* նորա» (էջ 133) (տե՛ս նաև *Համբարձումյան*, 1990)

Այսպես նաև հետևյալները. *անարգելորէն* (էջ 57), *անթագուցանելի* (էջ 2), *անկարգանալ* (էջ 57), *սպօրինատրութիւն* (էջ 81), *համահաւանել* (էջ 59), *համահաւանութիւն* (էջ 59), *չկարգաւոր(ք)* (փխ.՝ *չկարգաւոր(ք)* (էջ 41), *չհասութիւն* (էջ 241) և այլն:

3) Բարդ ածանցավոր բառերը նույնպես, իրենց հերթին, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն բառակազմական կաղապարների տարբերության, այլև առհասարակ բաղադրող և բաղադրվող հիմքերի ձևավորման առանձնահատկությունների տեսանկյունից: Նման կազմությամբ «նորություն» հանդիսացող բառերը, բնականաբար, բաղադրված են տարբեր կարգի վերջաձանցներով, ընդ որում ուրույն խումբ են *-ութիւն* վերջաձանցով բառերը՝ անկախ բաղադրող հիմքի հողակապով կամ առանց հողակապի լինելու հանգամանքից:

Ըստ այդմ առանձնանում են հետևյալ ենթախմբերը:

Բարդ ածանցավոր բառեր, որոնց բաղադրվող հիմքն անհողակապ կազմություն է, ենթարկվում է ածանցման *-ութիւն* ածանցի միջոցով: Օր.՝ «Ջորմէ բացասողն պարտի նախապէս *զհայկազնութենէն* եւ զքրիստոսական հաւատոյն իւրմէ բացատրել» (էջ 51): «Որոյ բարերարութիւնքն, *օգտարարութիւնքն* եւ արինախառն քրտամբք աշխատութիւնքն յովովք եւ անգրելիք» (էջ 2):

Այսպես նաև հետևյալները՝ *երկճութիւն* (էջ 80), *ժողովարարութիւն* (էջ 83), *լուսարարութիւն* (էջ 211):

Բարդ ածանցավոր բառեր, որոնց բաղադրվող հիմքը հոդակապով (միայն *ս* հոդակապով) բարդություն է, և վերջինս ենթարկվում է ածանցման դարձյալ *-ութին* ածանցի միջոցով: Օր.՝ «Որպես յիշեցաք վերդ *ի յառաջաբանութեան* սոյն գլխոյս» (էջ 246): «Եւ որպէս թէ՛ ի զանազանից գեղեցկագունից եւ *յանուշահոտութեան* ծաղկանց փնջեալ եւ եղեալ ի տուփս յայս» (էջ 4): «Բանալով զյառաջն մեծաւ աշխատութեամբ եւ *դրամածախութեամբ*» (էջ 23):

Այսպես նաև հետևյալները. *անընդդիմաճառութին* (էջ 51), *դրամատոութին* (էջ 253), *զհարդութին* (էջ 91), *թղթագրութին* (էջ 58), *թղթաշինութին* (էջ 58), *կանոնապահութին* (էջ 98), *կնքադրութին* (էջ 59), *հաշուարութին* (էջ 139), *վճռահատութին* (էջ 1), *տանջանակրութին* (էջ 64):

Այստեղ մեկ առանձին խմբով ներկայանում են այն բարդ ածանցավոր բառերը, որոնց բաղադրվող՝ բարդ կազմությամբ հիմքը հանդես է գալիս տարբեր կարգի վերջածանցներով (սակնախածանցով), ընդ որում բաղադրվող (բարդ կազմությամբ) հիմքը, իր հերթին, կարող է միացած լինել որևէ հոդակապով կամ առանց հոդակապի: Օր.՝ «Որք յիշեցեալք են ի գրքոջս ի հարկատրութեանն տեղոջ՝ աստ եւ *տունշանագրին կարճատօտարար*» (էջ 210):

Այսպես նաև հետևյալները. *անուշահոտունիք* (էջ 4), *երկփենեկտումն* (էջ 88), *կարճատօտապէս* (էջ 51), *հոգեբաժնական* (էջ 44), *քառաչեայ* (էջ 39-40) և այլն:

Ինչպես կարելի է նկատել, հիշյալ կարգի նորակազմությունները բաղադրված են հայերենի բառային (բառարմատական) և ածանցական ներքին միջոցներով, հակառակ որոնց կան նաև այնպիսիները, որոնք կազմված են որևէ բաղադրիչ ունենալով օտար լեզվից վերցված բառը:

4) Այս երկը բառապաշարի բազմաշերտության, տերմինի բազմազանության, բառի նորակազմության և գործածության անմիակերպության, տարըմբունման տեսակետից խստորեն տարբերվում է ժամանակի գրական մի շարք հուշարձաններից, և դա մեծա-

պես պայմանավորված է նրա բովանդակությամբ, ընդգրկված նյութի անմիասեռությամբ: Եկեղեցական միջավայրին վերաբերող տիրույթների, հասանելիքի, իրավունքի գերակայության և այլ ոլորտների անվանումները, որոնք մի տեսակ տերմինային արժեք են ներկայացնում, գրեթե ամբողջովին իրենց տեղն ունեն այս երկում: Ըստ այսմ տեսնում ենք ոչ միայն հեղինակի գրական խոսքի, գրաբարյան ձևերի կանոնավոր կիրառություն, այլև հիշյալ կարգի, մեծապես այլ լեզուներից փոխառված, ժամանակի խոսակցական լեզվի մեջ հանդիպող բառերի և տերմինների գործածություն: Նման դրվածքը, կարելի է ասել, ժամանակի ընդհանուր, այլև մասնավոր (մասնագիտական) խոսքի համապատկեր է:

Ուստի բառապաշարի այդ մասը ներկայացնում ենք ըստ առանձին խմբերի՝ կապված այն բանի հետ, թե դրանք որ լեզվից են փոխառված: Դրանք ոչ թե հեղինակային, այլ ժամանակի խոսակցական լեզվին անցած իրողություններ են, որոնք բնականաբար մուտք են գործել նաև այս երկի էջերում:

ա) *Բառեր, որոնք փոխառություն են թուրքերենից*. *աղայ* (< ağa) «տեր, պարոն, իշխան. աղա» (էջ 57), *աղթարմայ* (< aqarma «փոփոխող, խառնակիչ») «կաթուղի դարձած հայ» (էջ 17), *ամալէք* (< amal) «գործավար(ներ), գործող(ներ)» (էջ 136), *այվան* (< ayvan) «դահլիճ, զով տեղ՝ հովանոց» (էջ 183), *ասլ* (< asil < արաբ. asl «բուն. հիմք») «հիմք, հիմնական՝ բուն», «բնագիր, բնօրինակ. իսկականը՝ նախօրինակը» (էջ 242), *աքնճի* (*էքինճի* (< ekinçi) «մշակ, հողագործ. ցանքս անող» (էջ 115), *բաթիլնամայ* (< batilname. batil «կեղծ, դատարկ. անվավեր») «անվավեր ճանաչող թուղթ. արգելահրաման» (էջ 178), *բայիր* (< bayir «թումբ») «դարնիվեր, դարավանդ» (էջ 176), *բարաթ* (պէրաթ < berat) «(սուլթանի) թուղթ, վկայական, արտոնագիր», «հրովարատակ արքունի» (էջ 224, 225, 235), *գեօլ* (< göl) «լճակ, լիճ, ջրամբար» (էջ 153, 155), *գէզէթ* (գազ < gaz «շղարշ. քող») «նուրբ՝ մետաքսյա կտոր» (էջ 40), *դալմայ* (< dalma) «(մեծ) առու, արհեստական (փորված) ջրանցույց» (էջ 107), *դուզն* (<

մնւ «ուղիղ» «(ուղիղ) ճանապարհ, հարթ տեղ՝ հարթություն» (էջ 171, 190), *եսասուլ* (< yesaul) «հսկիչ, պահակ» (էջ 110), *եդար* (< yedek) «հայրապետարանից դուրս՝ շրջագայության գնացող կաթողիկոսի առջևից տարվող թամբած (պատրաստի) ձի» (էջ 62), *եօնճայ* (< yonja) «առվույտ» [*եօնճայուղ* (*եօնճայ* + *-ուղ* // *-լղիս* < yonjalak) «առվույտի տեղ՝ դաշտ, արոտավայր» (էջ 107, 167, 170), *զապիթ(թ)* (< zaptiye) «ոստիկան(ներ), ոստիկանություն» (էջ 214), *զաւզ* (*զաւզ* < zaptiye?) «գրություն, թուղթ. ապացույց, փաստ» (էջ 168), *զերզամբի* (< zezambi) «մեծ նկուղ, ներքնասենյակ. սաննատուն» (էջ 183, 204), *էշակճի* (*էշէկճի* < ešekči) «իշապան, էշ պահող՝ խնամող. էշերով ապրանք տեղափոխող» (էջ 167), *էշիկաղասի* (< ešek «էշ» + ağasi «զինվոր») «իշապան զինվոր», «իշապանների գլխավորը՝ մեծավորը» (էջ 163), *թալպիս* (*թէլպիս* < tēpis) «նենգ, խաբեբա, կեղծող» (էջ 94), *թամասուկ* (*թէմէսուկ* < temessük «վերսիլ, պարտավորագիր») «(պարտա)մուրհակ» (էջ 233), *թամպէհ* (*թէնպիհ* < tenbih) «պատվեր, հանձնարարություն» (էջ 131, 233), *թասլիմ* (< teslim) «շնորհ, հատկացում» (էջ 210), *թավլայ* (*թաւլայ* // *թաւիլայ* < tavla) «ախոն՝ ձիանոց, անասնագոմ» (էջ 183, 204), *թաֆտիշ* [*թէֆտիշ* (առնել) < teftiš] «ստուգում, հավատարմագրում. գրանցում» (էջ 150, 237), *թէշպազ* [*թէճ* < teğ («հացահատիկի շեղջի վրա դրվող) կնիք», «կնիք դնող» (էջ 209), *թուման* (< tumān) «բյուր. տասը հազար» (էջ 21), *թօփ* (< top) «գունդ, ծրար՝ գործվածքի, կապոց» (էջ 40), *իլահայ* (< ilhak «միացում») «առնչություն, հարաբերություն» (էջ 167), *իսպանճ* (*իսփենչ* < ispenč) «թեթև՝ ոչ հիմնական հարկ» (էջ 107, 240, 241), *իզբաշի* (< yūzbaši) «հարյուրապետ» (էջ 126), *խանլըղ* (< hanlık «խանի իշխանություն, կառավարում») «խանական, խանին պատկանող՝ վերաբերող» (էջ 155), *խէյրաթ* (*ղայրաթ* < xeyrat «հոգ, հոգածություն») «բարի գործ, բարեգործություն, ձեռնարկում՝ հանրության օգուտի համար» (էջ 156), *համամ* (< hamam) «բաղնիք, բաղանիք» (էջ 102, 145), *հաշիայ* (< hāšiyā) «ժանյակ. հյուսկեն և ծակոտկեն գործված երիզ» (էջ 40), *հասար*

(*հիսար* < hisar «ամրություն, ամրոց». հմմտ. արաբ. hisse) «պարիսպ, պատվար, պատնեշ» (էջ 163), *հաւուզ* (< havuz «ջրամբար, ավազան», արաբ. havz) «ջրավազան» (էջ 290), *ղասպալայ* (*ղարաւլայ*, *կասպալ* < qabāla, kabala) «պայմանագիր» (էջ 253- 270), *ղամշլղ* [*ղամիշլղիս* (*ղամիշ*), *գամրշլղ* < kaməš «եղեգ»] «եղեգն, եղեգնուտ, շամբուտ» (էջ 102), *ղարիբ* (< garib) «ոչ տեղացի, օտարական. տեղին անծանոթ» (էջ 150), *ղրռ* (< kuru «չոր, մերկ») «անջրդի, չոռովող հող՝ դաշտ» (էջ 102), *ղրուռ* (< gurus) «0,227 ոսկի ֆրանկի չափով փող՝ դրամ» (էջ 24, 93, 94), *ղոռուղ* (*ղոռուիս* < koramak «պահպանել, հսկել») «(արգելված) խոտհարք, արոտավայր» (էջ 102), *ճօթ* (փխ. *n*-ով) (< čit «ծայր, եզր». «կտորեղեն») «մարգագետնի մի հատվածը, մասը՝ ընդհանուրի եզրին ընկած» (էջ 287), *մասիլ* (*մասիսուլ*, *խմասիլ* < mahsul) «բերք, եկամուտ. տարեկան արդյունք» (էջ 135, 224), *միրասիտ* (< miras «ժառանգություն») «ժառանգ, ժառանգորդ» (էջ 101, 200), *միրի* (*միր-ի*. սեռ. հոլ. ձևը՝ իբրև պատկանելիք < mir) «արքունիքի՝ արքունական տուրք» (էջ 93, 190), *միրվէիզ(թ)* (< mir + վէիզ) «արքունի տուրք գրանցող(ներ)» (էջ 120, 143), *մուխարթա* (*մուգարթա* < muhata) «հարկ, վարձ. տուրք» (էջ 21), *նազիր* (< nazir) «ոստիկան, տեսուչ» (էջ 118), *շարդ նասու* (*շարթնասու* < šartname) «պայմանագիր, գրություն՝ թուղթ» (էջ 139), *չալթուր* (< čaltiq) «(պաճը դեռ չհանած) բրինձ» (էջ 160, 226), *չանասղ* (< čanak) «կավե տաշտ՝ խորը աման» (էջ 50), *չափար* (< čapar «լրաբեր») «սուրհանդակ, բանբեր. թղթատար՝ փոստատար» (էջ 221, 225), *պաճիչ* (*բաջիսճ* < bağınč «կախված՝ մեկից, ենթակա») «ստորադաս, ենթակա (անձ)» (էջ 242), *պայրամ* (*բայրամ* < bayram «տոն, հանդիսություն») «տարեմուտ» (էջ 151), *պասմանի* (*պասմայ* < basma) «պասմա թափող. գոմաղբը դրսում հարթեցնող և չորանալուց հետո բահով կտրող՝ վառելիքի նպատակով (էջ 209), *ջիջմայ* (*ճիմճիմէ* < čimen) «ճահիճ. ճահճուտ, ճահճախոտ» (էջ 102), *սասուտ(թ)* (< savat) «սևագիր օրինակ(ներ)» (էջ 103), *սարշուայ* (< sarašta) «օրենք, հարցմունք՝ վերոդիր» (էջ 33), *սուրաշի* [< subaš

«ջրի գլխավոր», «(Օսմանյան Թուրքիայում) ջրերի կառավարիչ»] «ջրբաշխ» (էջ 249), *վատայ* (< vade «վճարի ժամկետ») «պայմանի ժամ, պայմանաժամ» (էջ 160), *վոյվոտայ(ք)* (< voyvoda «խոշոր շրջանի վարիչ՝ պետ»․ հմմտ. ոռու. воєвода) «որոշակի շրջանի կառավարիչ» (էջ 238), *տասաճի* (< davaçi) «հայցատեր, հայցվոր», «դատ հարուցող՝ դատախազ» (էջ 237), *տոնլուղ* (< tonluk) «վարձք, ստացվածք» (էջ 103, 213), *փայ* (< pay «մաս, բաժին») «բաժին, մասնաբաժին» (էջ 165), *Տուգ* (տե՛ս *դուզն* < düz «ուղիղ») (տեղանուն՝ գոյականի վերածում հատուկ անվան) (էջ 171, 190), *փարայ* (< para) «դրամի միավոր» (էջ 236), *փեշքեաշ* (*փեշքեշ* < peškeş) «ընծա, նվեր» (էջ 146), *քահրիզ* (< kahrēz «կիրճ, ջրմուղ») «ստորգետնյա ջրերի դուրսբերման համար փորվածք․ անցկացված ջրանցք» (էջ 201), *քեսհեսայ* (< kayyan) «կառավարիչ, տնտես, ավագ» (էջ 244), *քեօն* (< kōr) «կույր, կուրացած՝ աչքը փճացած» (էջ 167), *քուչ* (< kuč'e) «փողոց, ճանապարհ» (էջ 171, 204), *օտա(յ)* (< oda) «(հյուրա)սենյակ, ընդունարան․ գրուցատեղի» (էջ 35, 197), *օճախ/օջախ* (< oğak «վառարան, սկոթ») «տուն․ ցեղ, (կրոնավորների) ուխտ, գերդաստան» (էջ 135), *ֆաթֆայ* (ֆեթվայ< fetva) «որոշում, վճիռ» (էջ 142) և այլն:

բ) *Բառեր, որոնք փոխառված են պարսկերենից*․ *ախունդ* (< axōnd) «մի պաշտոնյա․ իշխող» (էջ 225), *անասպատ* [պհլ. *anāpāt* «ամայի, անշեն, անբնակ (տեղ)»] «մենաստան, վանքային համալիր» (էջ 107), *աշխանայ* (< ašxana) «խոհանոց» (էջ 183, 204), *ասպա-սի* (*աքասի* պարսից Շահ Աբաս թագավորի անունից) «պարսկական արծաթի դրամ՝ չորս շահիի արժեքով» (էջ 120), *աստառ* (< āstar) «ծածկոց․ աստառ՝ կտորի, շորի հակառակ երեսը, կամ հակառակ երեսին կարվածը» (էջ 40), *բահրայ* (< bahra «մաս, բաժին, շահ, օգուտ, հասույթ») «ընդեղենի տուրք՝ տասանորդ (առհասարակ)» (էջ 105, 227), *բաղաթ* (< bay) «այգու (այգիների համար գանձվող) հարկ․ այգեհարկ» (էջ 136), *բաղճայ* (*բաղչ* < bāğči) «(փոքր) այգի, պարտեզ» (էջ 171, 204), *բանտ* // *պանտ* // (գետի) (<

band «առվի գուխ՝ սկիզբ») «գետաբերան․ ջրի սկիզբ, որտեղից ջուրը բաժանվում է երկուսի» (էջ 191, 194), *բոստան* (< bostan) «բանջարանոց», «սելսի, ձմերուկի հողամաս» (էջ 160), *գեօր* (*գեօն* < gōr) «(մահմեդականի) գերեզման», «իշավայր» (էջ 172), *գրասնամայ* (< girav-name) «գրավական (թուղթ), գրավագիր» (էջ 173), *դանկ* (*դանգ* < մպրսկ. dāng, պրսկ. dāng, dānk) «դրամի մեկ քառորդը, կամ մեկ վեցերորդը» (էջ 24), *դաստախազ* [< պհլ. dāt «օրենք», նպրսկ. dād «իրավունք»․ հմմտ. պհլ. dāt(a)- xvaz] «օրենքին հետամուտ՝ դատ հարուցող, դատ պահանջող՝ հետապնդող» (էջ 106), *դար* (< dar «գլուխ, վերև») «բարձունք, գագաթ, թումբ» (էջ 275), *դարգահ* (*դարգահ* < dargah «դուռ, ապարանք») «արքունի դուռ» (էջ 109), *դարվազայ* (< darvaza «դուռ, բակ․ դուրս») «դարբաս, դռան դեմ» (էջ 36), այլև (*այգի*) *դարվազայի* «դարբասի՝ դռան դեմի այգի» (էջ 36), *դինկ* (< dink) «ընդեղենի ծեծիչ» (էջ 3, 153), *դիպայ* (*դիպակ* < dipak) «մետաքսյա մի տեսակ գործվածք» (էջ 40), *դուքանդար* [< dok(k)andar] «խանութպան, խանութի տեր» (էջ 148), *զվար* (< zvar «հարթ») «հարթավայր» (էջ 292), *խալխալ* (*խալխալ* < xalese «պետական կավածք») «պետական՝ բուն, հարազատ, ոչ մասնավոր» (էջ 123), *խալվար* (< xalvār «իշաբեռ») «ծանրության՝ չափի միավոր․ մոտ 500 կգ» (էջ 104), *խամ* (< «հում, անփորձ») «պարզ, չտաշած․ հասարակ, անմշակ» (էջ 23), *խաֆիշար* (< xēlafīšar) «ոչ օրինական, ապօրինի․ շարիաթին դեմ՝ հակառակ» (էջ 232), *դասպայ* (< qabāla) «կավածագիր․ կապալ» (էջ 3, 204), *միրաբ* (< mirab) «ջրբաշխ» (էջ 103), *միրզա* (< mirzā) «իշխանագն, իշխան, թագավորագն» (էջ 233), *մոփպետ* (< պհլ. movpet «մոգպետ», «մոգ» (պրսկ. moγ կամ mōg «մոգ, կախարդ») «իշխող, իշխան, տեր» (էջ 93), *նալպանտ* (< nalband «անասունների կայտ խփող») «պայտար» (էջ 170), *նալ* (< nāv «նով») «փայտե կամուրջ՝ միջով ջուր անցկացնելու համար» (էջ 195), *շալ* (< šāl) «վզնոց, վզի փաթոց (գործված բրդի թելից)» (էջ 151), *շահի* (< šahi) «դրամի անուն․ պարսկական մանրադրամ, արասիի մեկ քառորդը» (էջ 113), *շեշ-*

դանկ [*< šešdang(i)*] «ամբողջ մուլքը», «բերքի մեկ տասներորդական մասը» (էջ 100), *շիրասխանայ* (*< šira* «քաղցու», *خان* «տեղ՝ տուն») «հնձան, քաղցուի տեղ» (էջ 176), *չարսու* (*< čārsu* «քառակուսի») «քաղաքի բաց՝ առևտրական հրապարակ, փողոցների միջև» (էջ 207), *չիման* (*չիմ, ճիմ* *< čim* «հողի կտոր՝ շերտ, որ ծածկված է լինում խոտով») «խոտածածկ մարգագետին, ճիմապատ տեղ» (էջ 287), *չուան* (հմմտ. հայ. *ճուպան*, քրդ. *.çoran* «պարան», այլև շումեր. *guana* «նավի պարան») «հող չափելու միավորի անվանում՝ (էջ 167), *չուխայ* (*< čuxa*) «նուրբ բրդյա գործվածք՝ խավով», «ասվյա կտորից կարված (մի տեսակ) զգեստ» (էջ 151), (*ճի*) *նախտ* (*< rāxt* «հագուստ, ուղեբեռ») «ճիագարդ. ասպազեն» (էջ 151), *նահտար(ք)* (*նահդար* *< rahdār*) «ճանապարհի հսկիչ. մաքսավոր, մաքսառու» (էջ 214, 233), սարդար (*< sardār* «գորագլուխ, գորավար») «պարսից շահի նշանակած Երևանի նահանգի պատասխանատու. կուսակալ» (էջ 219), *սանտուխանայ* (*< sandux-xana*) «նախասենյակ, սանդղասրահ՝ սանդղահարթակ» (էջ 183), *սոսկ* (*սպիտակ* *< պիլ. spētak*) «արծաթե դրամ՝ գումար» (էջ 94), *քարվանսարայ* (*քարսւ-վան* // *կարավան* *< պիլ. kārṽān*, պրսկ. *kārṽān* «բեռնակիր գրաստների խումբ» + սարայ *< պրսկ. saray* «տուն, պանդոկ») «չորեպաններ իջևան, իջևանատուն» (էջ 36, 107), *քիսայ* (*քսակ, քիսիկ* *< kisa* «տոպրակ, փոքր պարկ») «քսակ. տոպրակ» (էջ 244), *քունճիթ* (*քունջուր* *< պիլ. kungit*, պրսկ. *kungid*) «մի տեսակ ձիթատու՝ յուղատու բույս» (էջ 191), *ֆարման* (*ֆերման* *< ferman*) «հրաման» (էջ 28, 93), *ֆարշ* (*< fārš*) «սալքար, սալքարով պատած. սալահատակ» (էջ 22) և այլն:

գ) *Բառեր, որոնք փոխառված են արաբերենից. ամանաթ* (*< amānat*, հմմտ. հայ. *ամանդ*) «ավանդ, ավանդված որևէ բան» (էջ 233), *արմն*, *արմս* (տե՛ս *թուրա*), *բազազ* (*պէզզազ* *< bazzaz* «բեհեզագործ. կերպաս վաճառող») «կերպասավաճառ՝ խանութպան» (էջ 110, 209), *բախայ* (հմա՝ *բախկայ* *< bkkal*) «նպարավաճառ» (էջ 209), *դաբադ* (*< debbāg*) «խաղախորդ, կաշեգործ» (էջ 209), *դալլաք*

(*< dallak*) «բաղնիքում լողացնող սպասավոր», «վարսավիր, սավիրիչ. մաքրող» (էջ 168), *դաւ* (*դաւ յարուցանել, դաւի առնել*) *< da'va* «դատ, պահանջ, դատական վեճ՝ պահանջ») «դատի տալ, դատական հայց ներկայացնել» (էջ 94), *զաթել* (*< zabt*) «զրվել, տիրել. զբաղեցնել» (էջ 37), *թուրա* (*թուրա*, նաև *թորայ, թուրէ. արմա*) (*< turya*, հմմտ. եբր. *Tōrā* «Գիրք օրինաց Մովսեսի») «հրովարտակի սկզբում գրվող, թագավորի՝ կրոնավորի և այլնի անունը պարունակող, իրար հյուսված, բարդ՝ դժվար ընթեռնելի մոնոգրամ» (էջ 107), *իթլախ* (*< itlay*) «արձակում. արձակման թուղթ՝ հրաման, գիր» (էջ 42), *խալիֆայ* (*< xalifa* «Մուհամեդի հաջորդ. ամիրայապետ. ինքնակալ») «կաթողիկոսի տիտղոսը (մահմեդականների խոսքում)» (էջ 89, 223), *խանդակ* (հմմտ. հայ. քանդել ? *< xandaq* «խրամ, փոս») «քանդված տեղ. խրամ, փոս» (էջ 43), *խարսաճ* (*< xaraj*) «գլխավոր՝ հիմնական հարկ. գլխահարկ» (էջ 107, 241), *խարճ* (*խարջ* *< xārǧ* «ծախք») «ծախս» (էջ 24, 93, 227), *խիլայ* (*< xila*) «զգեստ, կապա. նվեր» (էջ 91), *հաճի* (*հաջի*) (*< hāǧ, hāǧi*) «մահտեսի. Մեքքա՝ Մուհամեդի գերեզմանին ուխտի գնացած (անձ)» (էջ 111), *հավալայ* (*հէվալէ* *< havale*) «հանձնարարություն պարունակող թուղթ՝ գրություն, հանձնարարագիր, կարգադրություն» (էջ 237), *հասար* // *հիսար* (*< hisar* «բերդ, պարիսպ») «ամրություն, ցանկապատ» (էջ 206), *դազի* (*< yazi*) «դատավոր, դատ անող (անձ)» (էջ 100), *մալուջհաթ* (*մալուջհատ* *< mal, jhat*) «անասնի և այլնի հարկ. ընչազին» (էջ 136, 144, 148, 227), *մախթու* (*մախթի, մախտի* *< mukata*) «արքունի հարկի վարձակալում». «պետական տուրք՝ (Պարսկաստանում) գլխահարկ» (էջ 236, 237), *մահալայ* (*< mahal* «տեղ, նաև mahalle «թաղ») «թաղ, թաղամաս» (էջ 110, 185), *մուլք* (*միլք* *< muk*) «կալվածք, երկիր. արդյունք», «հարստություն, իշխանություն» (էջ 3, 24, 104), *մուրաֆայ* (*< murafa'a*) «հարցուփորձ անել», «հարցուփորձի կազմակերպում՝ դատ» (էջ 120), *նահիէ* (*նահիայ* *< nahia*) «նահանգ, գավառ. շրջան» (էջ 47), *շառաթ* (*շառ, շառաթութին* *< šar* «խոտվութին, ընդվզում») «անհաշտ. բանասար-

կու» (էջ 244, 251), *շեխիսլամ* (*շեյխուլիսլամ*) (< ʿex-ul-islam) «Իսլամի՝ մահմեդական կրոնի գիտուն», այլև (այդ կրոնի) առաջնորդը, պաշտպանը» (էջ 37), *ջազիայ* (< jaziya) «մի տեսակ հարկ կամ ծախս» էջ 144), *ջինս* (< jins «տեսակ, ցեղ՝ այս կամ այն ձևի») «տուրք՝ նյութական ձևով» (էջ 136), *ռաղամ* (< raḡam) «հրամանագիր, (թագավորի) հրովատակ. պաշտոնական գրություն» (էջ 20), *ռեթուս* (< rutʿba) «մեկ դանկի երեք քառորդ մասը (կազմող գումար)» (էջ 115), *վահամ* (վագֆ, այլև *վահարֆ*, *վահուուս*, *վահուուսամսայ* // *վահասլամսայ* < vaqf, vakf) «կալվածք», «ստացվածք, ժառանգություն՝ իբրև բարեպաշտություն կտակված ունեցվածք հանրության օգտի համար», «սեփականություն. արտոնություն» (էջ 3, 19, 101, 103, 110, 139) և այլն:

Կան նաև բառեր, որոնք ըստ ծագման աղբյուրի ոչ թե անմիջական, այլ միջնորդավորված փոխառություն են. նման պարզաբանումը պատմական բառագիտությանն է վերաբերում, և համաժամանակյա քննության դեպքում այն շրջանցելի է: Ունենք հետևյալ կարգի փոխառությունները:

ա. *Բառեր, որոնք փոխառույալ են արաբերեն-պարսկերեն (նաև թուրքերեն) աղբյուրից. սալ* (< արաբ.-պրսկ. ʿasl) «բուն, հարազատ», «խկական (օրինակը)» (էջ 36), *դէֆուէր* (*դաֆթար*) (< արաբ., պրսկ. dāftār) «տետր, տետրակ. դավթար, մատյան» (էջ 106), *թանսապի* (< արաբ.-պրսկ., թուրք. tanabī «ընդարձակ հյուրասենյակ») «վերնասրահ, վերնասենյակ՝ կամարածն» (էջ 21, 186), *խաչալամ* (*խաչալէմ*. *խաչ* + արաբ.-պրսկ. aʿlem) «խաչվառ» (էջ 20), *հասլ* (< արաբ.-պրսկ. hasel) «բերք», «եկամուտ, արդյունք» (էջ 104), *մահսար* (*մահսէր* < արաբ.-թուրք. mahsār) «հանրագիր, համախոսական. բոլորին վերաբերող գրություն, ծանարտակ» (էջ 196), *մուտսիսիլ* (< արաբ., պրսկ., թուրք. mudākhil) «հասույթ՝ մուտք, մուտքագրում» (էջ 105), *նաղոն* (*նաղո*) (< արաբ., պրսկ. naqd, nāḡd) «առձեռն. պատրաստի» (էջ 136), *Պարսից* *Շիխ-Օճաղ* (< արաբ. šayx, պրսկ. šeyx, թուրք. ocak) «Շեյխ Սեֆիի անունով հաստատ-

ված՝ Սեֆյան հարստության (1502-1736 թթ.) անվանումը» (էջ 142), *ջամն* (*ջէմ* < արաբ. jam, պրսկ. yām) «հարկերի հաշվառման մի ձև. գումար» (էջ 145) և այլն:

բ. *Բառեր, որոնք գալիս են արաբերեն-թուրքերեն, այլև թուրքերեն-արաբերեն աղբյուրից. աթլազ* (< արաբ.-թուրք. atlas «ողորկ») «մետաքսյա կտոր՝ փայլուն՝ ողորկ երեսով» (էջ 40), *արզ* (< արաբ.-թուրք. arz) «խնդիր, աղերս. փափագ» (էջ 23), *դաւ* // *դաւի* [*դաւայ* < արաբ.-թուրք. Dava (հմմտ. տաւածի < թուրք. davaçi) «հայցատեր, հայցվոր», «դատ հարուցող՝ դատախազ») «վեճ, կոիվ» (էջ 206, 237), *գաւզ* [տե՛ս *հունարթ(ք)* // *հունէթ(ք)*], կամ *շարթնամսայ* «պայմանագիր. գրություն՝ թուղթ» (էջ 139, 149), *թամամ* (< արաբ.-թուրք. tamam) ((իբրև) մեկ ամբողջություն՝ ամբողջությամբ, ամբողջովին» (էջ 167), *իճարայ* (*իջարայ* < արաբ.- թուրք. ičʿareh) «վարձելը, վարձ. վարձակալություն» (էջ 156), *խալամ* (*դալամ*, գալէմ < թուրք. kalam, արաբ. yālem «գրիչ») «գրություն. գրածը», «հրաման. թուղթ, գրված (արտոնություն)» (էջ 144, 233), *խարասայ* (*խարարայ* «ավերակ տեղ» < արաբ. - թուրք. xarab «ավեր, փչացած») «ավերակ դարձած. ավերված» (էջ 164, 171), *հաքիմ* (< արաբ.-թուրք. hakim «տեր, իշխող. գերակա») «գավառապետ, (քաղաքացիական) դատավոր» (էջ 225), *հունարթ(ք)* // *հունէթ(ք)* < արաբ.-թուրք. hūnʿet] «գրություն(ներ), թղթ(եր)», «ապացույց(ներ), փաստ(եր)» (էջ 94, 95, 163, 259), *հուքմ* (*հոքմ* < արաբ.-թուրք. hūkm) «հրամանագիր, բարձր կարգադրություն՝ հրահանգ. դատ, վճիռ» (էջ 146), *դումսաշ* (< արաբ.-թուրք. kumaš «մետաքսյա կտոր, կերպաս») «թանկարժեք կտոր, կերպաս» (էջ 242), *դոշի* (< արաբ.-թուրք. kor) «վարձու (կամ պարտադիր) աշխատեցնող» (էջ 262), *մաղաֆ* (*մուաֆ* < արաբ.-թուրք. muaf) «հարկերից և տուրքից ազատված՝ արտոնված» (էջ 3, 107, 241), *մուսավատայ* (*միսէվէտէ* < արաբ.-թուրք. musāvat) «սևագիր, ոչ մաքրագիր (օրինակ)» (էջ 32), *մոլայ* (< արաբ. mevla, թուրք. monla) «մահմեդական (գրագետ՝ կարդացող) կրոնավոր» (էջ 102), *շար* (< արաբ.-թուրք. šari) «մահմեդական օրենսդրա-

կան խորհուրդ՝ տվյալ տարածքի բարձրաստիճան հոգևորականների մասնակցությամբ» (էջ 104, 228), *սառած* (*սարաջ* < արաբ. serraġ, թուրք. saraĉ) «համետագործ, թամբագործ» (էջ 208), *սուրաթ* (< թուրք. surat, արաբ. suret «տեսք. դեմք») «պատճեն, օրինակ, նմուշ» (էջ 42, 102), *վեզիր* (< արաբ.-թուրք. vezir) «նախարար, բարձրաստիճան (ֆինանսական) պաշտոնյա» (էջ 171), *վելի* (< *վալի*, արաբ. - թուրք. vali) «նահանգի քաղաքացիական գործերի կառավարիչ» (էջ 182), *վեքիլ* (*վեքիլուրիս* < արաբ.-թուրք. vekil) «(առաջնորդական) փոխանորդ. լիազորված անձի գործունեություն. հավատարմատար» (էջ 93, 98, 173, 100), *քսուր* (< արաբ.-թուրք. kusur) «(տան) եղած-չեղած՝ ամանեղեն, հանդերձեղեն. կտորտանք, մանրուք» (էջ 58) և այլն:

գ. *Բառեր, որոնք ծագում են պարսկերեն-թուրքերեն, այլև թուրքերեն-պարսկերեն աղբյուրից. խօճայ* (*խօջայ* < թուրք. koġa, պրսկ. xoġa «մեծ, ուսուցիչ՝ վարժապետ») «մեծավոր, իշխանավոր» (էջ 111), *դաֆէս* (< kafes, պրսկ. yāfēs, այլև արաբ. kafes «բանտ, վանդակ, արգելոց», «(թռչնի) վանդակ. պատուհանի բաց մնացած մաս», «կապանք» (էջ 30), *չարտասի* (< պրսկ. ĉardak, թուրք. ĉartak) «(տանիքի վրա շինված) փայտամած վրան» (էջ 182), *չափար* (< պրսկ. ĉapar, թուրք. ĉeper) «ցանկապատ» (էջ 176), *չրայ* (< պրսկ. ĉiray, թուրք. ĉarak, հմմտ. հայ. *ճրագ* «ճրագ. ձեթի կանթեղ», «աշակերտ» (էջ 164), *սերասքեր* (< թուրք. < պրսկ. serasker) «սպարապետ» (էջ 29), *ուստայ* (< թուրք. usta, պրսկ. ustad) «վարպետ՝ փորձիմաց, փորձառու. արհեստին տիրապետող» (էջ 110), *քանքան* (< kanden «քանդակող, հոր փորող») «ստորգետնյա առու, ջրմուղ» (էջ 24) և այլն:

դ. *Մեկ բառի դեպքում ծագումը կապվում է արաբերենի-լատիներենի, մեկի դեպքում՝ թուրքերենի-հունարենի, մեկի դեպքում էլ՝ մոնղոլերեն-պարսկերենի հետ. դիան* (*դեան, դինար* < լատ. dēnārius) «արծաթ դրամի միավոր՝ մոտ 7-9 գրամ անթ» (էջ 117), *սինոն* (< թուրք. sinor «սահման» < հուն. σύννορος «սահմանային, եզ-

րային. մոտիկ, ցեղակից») «տարածք, եզր» (էջ 28), *տարուղայ* (< մոնղոլ.-պրսկ. dāriġa) «գլխավոր ոստիկան», «հսկիչ, հարկահան» (էջ 169, 220) և այլն:

ե. *Բառեր, որոնք փոխառություն են այլ լեզուներից՝ ուղղակի կամ միջնորդավորված. քրինձ* (ֆրանս. prince) «իշխան» (էջ 17), *եսէմիկ* (< հուն. ἐμέμικον < μῆκάομαι «մոնչալ, ոռնալ. բառաչել, բղավել, ճչալ») «մի մականուն՝ տրված օտար գորավարներից մեկին (ըստ համապատասխան հատկանիշի)» (էջ 72), *թրակէզ(ք)* (*գթրակէզ*, *թերիակէ* // *թիրակէ* < հուն. θηριακή) «դեղ, դեղթափ» (էջ 210), *թուրայ* (*թուրէ* < եբր. tōrā «Գիրք օրինաց Մովսեսի») «արքունի դրոշմ՝ կնիք» (էջ 107), *խներել* «Իմերեթիայի բնակիչ, քարթվելական մի ցեղի անվանումը» (էջ 208), *լիտր* (< հուն. λίτρα) «մի տեսակ չափ՝ 12 ունկի, մոտ 326 գրամ» (էջ 104), *դալամ* (< արաբ. qalam) «ջրի մի չափ. այստեղ՝ «մաս, բաժին» (էջ 202), *ճոն* (< վրաց. ձոն) «գդակ կարող» (էջ 209), *նոնո* (< հուն. νόμος «օրենք, կարգ, կանոն») «կարգ. (թագավորական) հրովարտակ» (էջ 57), *շիլթասի* (*շիլթաք* // *շիլթաղ* < մոնղոլ. šiltay) «գրպարտություն, գրպարտելը» (էջ 133, 222), *պատրիչ(ք)* [*պատրիկ(ք)*, *փաթրիկ* // *պատրիկ* < ֆրանս. père, լատ. Pāter «հայր»] «(կաթոլիկ) հայրեր», «պատրիկ(ներ)» (էջ 210), *ջամբր* // *ջամբր* (< ֆրանս. chambre, լատ. camera «սենյակ») «դիվան. արքունի հաշվեմատյան» (էջ 1, 130, 139), *սիրայ* [< հուն. σείρά, (էպ.-հուն.) σείρή «պարան, շղթա. շարք, սերիա»] «ուսմունք, խոսք, տեսություն» (էջ 52), *փոլիցայ* (< ֆրանս. police «ոստիկան») «ոստիկանություն, քաղաքացիական հսկում, կարգի պահպանում» (էջ 246), *ֆրանկ* (*ֆրանկ* < հֆրանս. franc) «Արևելք եկած եվրոպացիների ընդհանուր անվանումը, կաթոլիկ միսիոներ՝ եվրոպացի» (էջ 16), *ֆրանկ-փաթրիչ(ք)* (< հֆրանս. franc, լատ. pāter «հայր») «կաթոլիկ հայր(եր)» (էջ 223) և այլն:

զ. *Հանդիպում են բառեր, որոնց ծագումն առայժմ մնում է անհայտ. արաջ* «(թաղման) կավե լայնափոր աման, փոքր կարաս՝ թթվի, պանրի և այլնի համար» (էջ 176), *գրգրայ* // *քրքրայ(ք)* «բամ-

բակ մաքրող մի տեսակ սարք» (հմմտ. հայ. *քրքիր, քրքրել* «պատառոտել, մասերի բաժանել», *քրքուր* «փուխր, փխրուն», *խրխիր* (բրբռ.)) (էջ 136, 145) և այլն:

5) Գիրքը պարունակում է նաև զգալի թվով այլ կարգի օտար (փոխառյալ կամ պատճենումային) բառեր, որոնք հիմնականում մի քանի խումբ են:

Դրանք մասամբ տերմիններ կամ տերմինային անվանումներ են՝ ժամանակին տեղ գտած մեր լեզվի խոսակցական տարբերակում, ուստի բնական է, որ դրանք պիտի կիրառվեն նաև «Ջամբռ»-ում¹: Մասամբ օտար տեղանուններ են, որոնք արտացոլում են ժամանակի լեզվական միջավայրը: Գրքում դրանք գործածված են այնպես, ինչպես ընդունված է եղել տվյալ լեզվական միջավայրում, մանավանդ պաշտոնական գրագրությունների մեջ, և որոնց մի մասին զուգահեռ նշվում են հայերեն համարժեքները:

Հեղինակը տեղիք է տվել օտար հատկանունների, ինչպես նաև որոշ տերմինների և տերմինային անվանումների գործածության զուգաձևությունների: Նման ձևերն, անշուշտ, այսօր ունեն սոսկ պատմական նշանակություն, թեև ինչ-որ չափով կարող են հիմք հանդիսանալ այս կամ այն բառի (հմմտ. *Գեղարքունի, Քարձաղ* տեղանունները և այլն), այլ արմատի ստուգաբանության համար:

ա. *Փոխառյալ բառի հիմքով նոր բառեր. արայեանք* (*արբայական*) «կաթոլիկական» (էջ 43), *ապրշումեայ* (պահլ. āprēšum, պրսկ. ābrēšum) «մետաքսյա» (էջ 184), *արզայապէս* (*արզ* < արաբ.-թուրք. arz «խնդիր, աղերս. փափագ») «խնդրանքի ձևով, իբրև խնդրանք» (էջ 59), *ախթարունայութիւն* (աղթարմայ < թուրք. aqtařma «փոփոխող, խառնակիչ») «ախթարմա լինելը. կաթոլիկություն, աղանդավորություն» (էջ 17), *անասնախարճ* «անասունների հա-

մար գանձվող հարկ, գլխահարկ» (էջ 130), *արզայապէս* «իբրև խնդիր, աղերս. փափագ» (էջ 59), *բազմախարճ* (*խարճ* // *խարջ* < արաբ. xārg «ծախք») «մեծ ծախս պահանջող, մեծածախք» (էջ 24), *բաղչատեղ* (բաղչայ < թուրք. bağça «այգի, պարտեզ», այլև պրսկ. bāğčē «փոքր այգի») «պարտեզատեղ» (էջ 37), *բաշխել* (*բաշխ* < պրսկ. baxš «բաժին, մաս») «տալ՝ զիջել. նվիրաբերել» (էջ 168), *դիւանագիր* (< պահլ. dēvān, պրսկ. divān «արքունիք, ատյան, դահլիճ՝ գործերի քննության»), «(արքունի) դիվանի քարտուղար, պաշտոնյա» (էջ 228), *դիւանական* «դատարանական» (էջ 19), *եղաքակիր* (թուրք. yedek) «եղաքը տանող՝ առաջնորդող, ուղեկցող» (էջ 62), *եօնջատեղ* (< եօնջայ, թուրք. yonja «առվույտ») «առվույտի տեղ՝ հող, դաշտ» (էջ 170), *զայթել* (< արաբ. zabt) «գրավել, տիրել, զբաղեցնել» (էջ 37), *լութրանք* (*լութերականք*) «լութերականներ, Լութերի վարդապետությանը հետևող(ներ)» (էջ 43, 44), *հուճաթապէս* (*հուճաթ, հուճէթ* < արաբ.-թուրք. hučcet) «փաստաթուղթ՝ վկայագիր հիշեցնող, վկայագրի նման» (էջ 94, 234), *դարբայական* «կապով առած, կապալառու» (էջ 3), *դապայականան* «կապալ հիշեցնող, նմանվող» (էջ 127), *դապայակապէս* «կալվածագրի նման, կալվածագիր հիշեցնող, իբրև կալվածագիր» (հմմտ. *դապայականան*) (էջ 269), *մաղաֆութիւն* (*մաղաֆ* // *մուաֆ* < արաբ.-թուրք. muaf) «հարկերից և տուրքից ազատված՝ արտոնված լինելը. արտոնյալ (վիճակ)» (էջ 3), *միտոր* (*միլ* < հուն. μύλη // μύλος «երկանք, ջրաղացքար») «միլ ունեցող, երկանքարով հանդերձ» (էջ 189), *միրապութիւն* (*միրաք* < պրսկ. mirab «ջրբաշխ») «ջրբաշխություն, ջրբաժանություն, ջրի բաժանման գործով զբաղվելը» (էջ 193), *միքախարճ* [*մուք, միլք* (< արաբ. mīlk, milk) «հարստություն, իշխանություն. ունեցվածք»] «մուքի դիմաց՝ համար գանձվող հարկ» (էջ 3, 130), *միքատու* «մուք տվող» (էջ 3), *միքատութիւն* «մուք տալը՝ վճարելը» (էջ 128), *շահապիսեաց* (*շահապէսք* < պրսկ. šah «թագավոր») «շահերին նմանվող» (էջ 209), *շառաթութիւն* (*շառաթ, շառ* < արաբ. šarr «չարիք. խոտվություն») «անհաշտություն, բան-

¹ Գրքի նոր գրական հայերեն թարգմանության ծանոթագրություններում դրանք մեր կողմից բացատրված են՝ փոխառության աղբյուրի մատնանշումով (*Միլենոն Երևանցի*, 2003. 409-449):

սարկություն» (էջ 244), *չափաջուր* (*չափա* < թուրք. Շ'apa «մի տեսակ գյուղատնտեսական գործիք՝ առու մաքրելու, քաղհան անելու») «չափա գործիքի բերանի չափով ջուր» (էջ 196), *չորհաստուն* // *չորհաստուն* (*չորհես* // *չորհես* «բամբակ») «բամբակը մաքրելու սենյակ. բամբակահան» (էջ 191, 198), *պատրիկ* (*պատրիկ*? հմմտ. *պատրիկ* < ֆրանս. pater, լատ. pater «հայր») «կաթոլիկ հայեր», «պատրիկներ» (էջ 210, 223), *պրտուպատ* (*պրտու* < պրսկ. burdi «սեգ, կնյուն») «սիգապատ, եղեգնով պատված» (էջ 159), *սեղափառ* (սեղափ < պրսկ. seilab, silab) «ջրհոսքի, վարարած ջրի՝ հեղեղի տեղը. վարար ջրի հունը» (էջ 278), *վախմուսկան* (*վախմ*, *վախուս* < արաբ. vaqf, vakf) «եկեղեցուն իբրև նվեր կտակված հող՝ կալված՝ «վախմի ձևով», *վախմուսուրին* «վախմ տալը» (էջ 3, 19, 253), *վեճեղէն* (< իրան. *veg, ավեստ. vaēya «վեճ, վեգ». «վիճակ») «հանգուցյալի հիշատակի (համար) նվիրատվություն՝ եկեղեցուն» (էջ 44), *վեքիություն* (*վեքի* < արաբ.-թուրք. vekil) «(առաջնորդական) փոխանորդություն. լիազորված անձի գործունեություն» (էջ 100), *վենեթաբնակ* (*վենեթ* < լատ.-իտալ. Venecia) «վենետիկցի. վենետիկաբնակ» (էջ 43), *տաճկաբնակ* «տաճիկներով՝ մահմեդականներով բնակեցված», *տաճկանալ* «մահմեդական դառնալ. հավատքը փոխել», *տաճկացունել* «մահմեդական դարձնել» (*տաճիկ* < պահլ. tačik, պրսկ. tačik) (էջ 168, 278), *տարուղայություն* (*տարուղայ* < մոնղոլ.-պրսկ. dāriga «գլխավոր ոստիկան», «հսկիչ, հարկահան») «հսկողություն» (էջ 169, 220), *տնախարձ* (*խարձ* < արաբ. xarğ) «տնահարկ, տան համար գանձվող հարկ» (էջ 130), *ֆրանկալ* (< հֆրանս. franc «Արևելք եկած եվրոպացի») «կաթոլիկանալ» (էջ 41), *ֆրանկություն* «ֆրանկ լինելը՝ կաթոլիկանալը» (էջ 23) և այլն:

բ. *Կան նաև օտար բաղադրիչներով կապակցություններ, ոճեր*. դրանք մի տեսակ խոսակցական լեզվին անցած պատրաստի միավորներ են, որոնց բացառումը տվյալ միաջավայրում գրեթե անհնարին է. *բազազ դարկեսահ* (< արաբ. bazzaz «կերպասավա-

ճառ», պրսկ. dargah «դուռ, ապարանք») «արքունի դռան կերպասավաճառ՝ խանութպան» (էջ 109), *բազրկեսան յոլի* (< թուրք. bezirgən yollu) «(Թեղուտներ կոչված հողատարածքի այլալեզու անվանումը» (էջ 102), *բեկլար-բեկ* (*պեյլեր պեյ* < թուրք. bey) «(բառացի) բեկերի բեկ. նախարարապետ, շահապետ. Սեֆյան Իրանի սահմանային նահանգներում իշխող խան կա ամիրա» (էջ 131), *դանկ մուլք* (այլև՝ *դանգ* < մպրսկ. dāng, պրսկ. dāng, dānk) «դրամի մեկ քառորդի կամ մեկ վեցերորդի չափով մուլք» (էջ 24), *դային-խանայ* «քունջութի՝ կտավատի ձիթհան» (էջ 191), *եմտի քիլիսայ* (< թուրք. eddikilise) «յոթ եկեղեցի» (Վարազա վանքի օտար անվանումը) (էջ 94), *զարպաֆ բալախուշ* (պրսկ. zār-baf «ոսկեթել») «մետաքսյա պարեգոտ՝ փարաջա» (էջ 151), *զարբաֆ կապայ* (պրսկ. zār-baf, պրսկ. qaba) «մետաքսյա կապա՝ մինչև ոտնաթաթերը հասնող զգեստ, հոգևորականի հագուստ» (էջ 151), *թումանմուխաթայ* (< թուրք. tumān muhata) «տասը հազարի չափով հարկ» (էջ 21), *խանլի իլի-ճի* [< պրսկ. xan, թուրք. qan, մոնղոլ. γan «պետ, իշխան (տիտղոս)»] «խանի՝ նահանգապետի գրաստապան» (էջ 28), *հատի շերիֆ* (< թուրք. hattı şerif) «թագավորական հրաման՝ հրովարտակ» (էջ 25), *հիպալամայի (մի) հոխայ դահֆե* (< թուրք. okka «չափ՝ 400 գրամ», kahve «սուրճ») «տվյալ չափի՝ քանակի սուրճ» (էջ 98), *դասպայ միքից* «կալվածագիր» (էջ 19), *դոլթուլ ֆերմանի* (< թուրք. koltuk, պրսկ. farman) «ծածուկ, գաղտնի (թևի տակ) կազմված թուղթ՝ հրաման, իրավունք» (էջ 95), *շեխ-խալամ-մուլայ* (մուլայ < արաբ. mevla, թուրք. moulā «մահմեդական (գրագետ՝ կարդացող) կրոնավոր») «մահմեդական գերագույն կրոնավոր» (էջ 102), *սուրեթ ֆարմանի* (< արաբ. suret < թուրք. Surat «պատկեր, տեսք», պահլ. framān «հրաման») «հրամանի նմուշ՝ օրինակ» (էջ 242), *ուչքիլիսե էղնաթի* (< թուրք. uçkilise eğnaği) «երեք եկեղեցու մարդիկ (ամբոխ)» (էջ 151), *վախուսանայ դասպայ* (< veyfname qabale) «կալվածագիր, ստացվածքագիր» (էջ 103), *ֆրանգ պատրիկ* (*պատրիկ* < ֆրանս. franc, լատ. pater «հայր) «կաթոլիկ հայեր» (էջ 223) և այլն:

գ. *Բնիկ*, նաև օտարլեզվյան բառային բաղադրիչներով կազմություններ, *ոճեր*. *թիւ(ւ) տաճկաց* «մահմեդական թվականություն(ը)» (էջ 13), *խանն ողջ լինի* «խանի ողջ լինելը ցանկանալ (փոխըմբռնման արտահայտություն)» (էջ 60), *մատաղը լինիմ* «հպատակ լինել (աղերսական արտահայտություն)» (էջ 60), *ծառայ եմ քեզ* «ծառայ լինել (ենթակայական արտահայտություն)» (էջ 60), *մէկ ձեռք շէն տուն* «մեկ ամբողջական բարեկարգ տուն» (էջ 274), *նուրբ եւ արտասքին գիրք* «աստվածաբանական և Ս. Գրքից դուրս եղող, աշխարհիկ՝ այլ գիտությունների վերաբերող, հարակից գրականություն» (էջ 33), *չիք Գեորդ* «Գևորգ չեղած (անարգական արտահայտություն)» (էջ 247), *նուսց ճանապարհ* «դրսի գուգարան. արտաքնոց» (էջ 204), *սերմաննայի տեղիք* «ցանելու դաշտ՝ ցանքս, ցանքատարածություն» (էջ 3), *Սողոմն ի Պողոս փոխեցեալ* (ոճական հնար՝ բառախաղով ասված. եթե հատկանունները համարենք վաղուց փոխառված) «ոչինչ չփոխելով, ոչինչ չարած. գուր գործ (անել)» (էջ 239), *վկայական գիր* «վկայագիր» (էջ 199), *տանն էլ ի շար* «դատարան տանել, դատի կանչել» (էջ 174), *տեղի ի զբոսանս* «զբոսատեղի, զբոսավայր», «ամառանոց» (էջ 199), *տունն Կիլիկեացւոց* «կիլիկեցիների տուն՝ Կիլիկիայի Հայոց թագավորություն» (էջ 8) և այլն:

Բնիկ (բառ կամ ածանց) և օտար բաղադրիչով բարդ կազմություններ, կապակցություններ. *անասնախարճ* «անասնահարկ» (էջ 140), *արզ տունն էլ* (*արզ* < արաբ.-թուրք. arz «խնդիրք, խնդրանք») «խնդրանքով դիմել, տեղեկացնել, հայց ներկայացնել» (էջ 23), *արզ գրեմ* «գրավոր խնդրել՝ դիմել, խնդրագիր ուղարկել» (էջ 79), *բաղջայաուր տունք* «պարտեզներով՝ պարտեզներ ունեցող տներ» (էջ 274), *դաւաճի երանն էլ* (*դաւաճի* < թուրք. davaçi «վիճող, բողոքող») «բողոքի՝ վեճի բռնվել» (էջ 252), *դիւանագիր* (< պահլ. dēvān, պրսկ. dēvān) «(արքունի) ատյան, դատարան» (էջ 19), *թասլիմ անն էլ* (*թասլիմ* < թուրք. teslim) «փոխանցել, շնորհ՝ հատկացում անել» (էջ 210), *թաֆտիշ լինիմ* (< թուրք. teftiş) «ստուգում, հավատարմագ-

րում. գրանցում» (էջ 150), *ի հաճ գնալ* (*հաճի* < արաբ. hāğ, hāğī) «Մեքքա՝ Մուհամեդի գերեզմանին ուխտի գնալ» (էջ 111), (*մի*) *հոխայ դահի՛է* (*օխայ* < թուրք. okka) «400 գրամի չափով սուրճ» (էջ 98), *մաղաֆ սոնն էլ* (*մաղաֆ* // *մուաֆ* < արաբ.-թուրք. muaf) «մաղաֆ անել՝ դարձնել» (էջ 3, 135), *մին թամամ* (*թամամ* < արաբ., պրսկ. թուրք. tamām) «մեկ ամբողջություն, ամբողջությամբ, ամբողջովին» (էջ 167), *մի խալամ* (*խալամ* < արաբ. yālem, թուրք. kalam) «մեկ գրությամբ՝ գրչությամբ, միանվագ» (էջ 144), *մուղայթ լինն էլ* (*մուղայթ* < թուրք. mukayyet) «վերահասու լինել, աչքը վրան պահել, փույթ ունենալ» (էջ 220), *սոխամայի գիր* (*սուխամայ* < թուրք. sulhname) «հաշտագիր, պայմանագիր՝ դաշնագիր (թուրք)» (էջ 172), *վախմ անն էլ* (*վախմ* < արաբ. vaqf) «եկեղեցուն (իբրև նվեր) կտակել՝ թողնել հող, կալված և այլն» (էջ 102) և այլն:

6) Հայտնի է, որ Սիմեոն Երևանցին ժամանակին կրթությունը շարունակել է Կոստանդնուպոլսում գտնվելու տարիներին: Լեզվական այդ միջավայրում ևս, ինչպես գիտենք, այդտեղ տպագրված գրքերի լեզվի ուսումնասիրությունից, որոշակի չափով կար լատինաբան հայերենի ազդեցությունը: Եվ ահա, կրթվելով գիտական, «լեզվամշակութային նման կենտրոնում», բնական է, որ նրա լեզուն ևս պիտի կրեր այդ արհեստական ազդեցությունը: Լատինաբան կազմություններն այս երկում բավականին շատ են, այլև բազմազան. նշենք դրանցից առավել աչքի ընկնողները:

Սոյն, նոյն դերանունների *սորին, նորին* ճիշտ ձևերի փոխարեն *սոյնոյ, նոյնոյ* և այլն արհեստական կազմություններ. *սոյնոյ* (փիս. *սորին*) «սույնի, սրա» (էջ 10), *նոյնոյ* (փիս. *նորին*) «նույնի, նրա» (էջ 1, 139, 169, 247), *նոյնով* (փիս. *նովխն*) «նույնով, նրանով» (էջ 85):

Ներգոյական հոլովի համար առանձին ձևերի կիրառություն. (գրեն) *ենթ զանուն* իրեանց «իրենց անունը (գրում են) ներքևում» (էջ 61), *ի ներ ինքեան* «իր ներսում, իրենում, իր մեջ» (էջ 68), *ի սուսում* (փիս. *ի սուսա*) «սրանցում» (էջ 141), *նարդեանս* «ներկայիս.

ներկայումս» (էջ 33), *նէր պարսպի* (փխ. *ի պարսպի*) «պարսպի ներսում՝ մեջ» (էջ 35) և այլն. նախդրի արժեքով արհեստական բառ-մասնիկների գործածություն. *ենթ* «տակ», *նէր* «մեջ» (տե՛ս վերը):

Ապառնի (անցյալի) ժամանակաձևի արհեստական կազմություն. *իցէին* «լինեին, կլինեին, պիտի լինեին» (այստեղ՝ «պիտի լինեին». էջ 28), *լինիցէր* «լինելու էր» (այստեղ՝ «լիներ». (էջ 11), *լնա-նիցի* «լցվելու է. լցվի» (էջ 198) և այլն:

Բայական հիմքի արհեստական (ավելորդ ցոյական կամ այլ կարգի) հիմքի կազմություն. *բանադրեցեալ* (փխ. *բանադրեալ*) «բանադրված. մատնված» (էջ 247), *գտանեցաւ* (փխ. *գտաւ*) «գտավ, (որ)», այստեղ՝ «հանդես եկավ». էջ 85), *գտանեցեալ* (փխ. *գտեալ*) «գտնված» (էջ 2, 111), *գրեցեալ* (փխ. *գեալ*) «գրված» (էջ 254), *ենթադրեցեալ* (փխ. *ենթադրեալ* «ենթարկված» (էջ 1), *ենթարկեցեալ* (փխ. *ենթարկեալ*) «ենթակա. ենթարկված» (էջ 1), *լնանեցման* (փխ. *լցումն, լցման*) «ցվելու. կատարման, ավարտելու» (էջ 29), *խնորեցեալ* (փխ. *խնորեալ*) «խմորված (այստեղ՝ վարակված)» (էջ 248), *կքեցեալ* (ուղղելի՝ *կնքեցեալ*. փխ. *կնքեալ* «կնքված» (էջ 40), *վերոյիջեցեալ* «վերը նշված, վերոհիշյալ»(էջ 113), *տրեցեալ* (փխ. *տունեալ*) «տրված, հատկացված» (էջ 107):

Բայի կրավորական ձևի արհեստական կազմություն. *բառնիլ* (փխ. *բառնալ*) «վերանալ, վեր բարձրանալ» (էջ 123), *լնանին* (փխ. *լնուն*) «լցվում են» (էջ 153), *լնանիցի* (փխ. *լնուցու*) «լցվելու է. լցվի. կլցվի» (էջ 199), *տրին* (փխ. *տունն*) «տրվեցին» (էջ 236), *տրիր* (փխ. *տն*) «տրվում էր. տրվեց» (էջ 57):

7) *Նոր իմաստային կիրառություններ*: Այսպիսի պայմանական բնորոշում ենք տալիս բնագրում տեղ գտած այն կիրառություններին, որոնք ունեն իմաստային ինչ-ինչ տարբերություն: Դրանք այդպիսին են, որովհետև լեզվի խոսակցական տարբերակում ձեռք են բերել նոր երանգներ: Օր.՝ *աթոռայինքս* բառը գործածված է «(մեր) այս Աթոռի (միաբանները)» իմաստով. «Եւ այս այնքան անհետացեալ և հնացեալ՝ մինչ զի թէ *Աթոռայինքս* և թէ բոլոր երկրա-

կանքս իբր հաւաստապէս և անկարծիք կարէին երդնուլ» (էջ 128): (*Թողոց*) *երթեւեկութիւն(ք)* բառը գործածված է «(թղթերի՝ գրությունների) փոխանակում(ներ)» իմաստով. «Ապա ի սոյն ՌՄԺԲ թուղջս, մինչ այսպէս թղթոց *երթեւեկութիւնք* լինէր ի մէջ մեր և Կէն-ճէցոց, ի Գանձասարու կուսէն մէլիքք ոմանք և այլ մարդիկք աշխարհականք և վարդապետք մինչև Ծ հոգիք, հանդերձ բազմակնիք թղթով և գրեամբք բազմօք առ մեզ» (էջ 87):

Այսպէս նաև հետևյալները. *ածն* (իմա՝ *ած-ու*) «բանջարանոց. ածու» (էջ 292), *այգի* «(խաղողի) այգի» (իմաստ. բրբռ. *իքի* «այգի» (էջ 3), *անպակաս* «միանվագ, միանգամից» (էջ 159), *բանել* «աշխատել, գործ անել. անխափան լինել» (էջ 198), *գաւազան* «տերություն, իշխանություն, հարստություն (դինաստիա)» (էջ 210), *դաւանան* «վեճ՝ դատական հայց ներկայացնող» (էջ 259), *խկ(ն)* «խկականը՝ բնօրինակը. նախօրինակը» (էջ 242), *իրք* «գույք, ինչք, ունեցվածք» (էջ 241), *լիր* «լիցք. թումք» (էջ 153), *խոչ* «խաչ. եկեղեցի» (էջ 13), *ծառուտ* «ծառապատ (տեղ)» (էջ 169), *ծովակ* «ջրամբար» (էջ 152, 153), *կաթողիկե* «զմբեթ» (էջ 26), *կալ* «կալսելու տեղ. կալուկուտ». «բերք» (էջ 224), *կարդացող(ք)* «վարդապետ(ներ), գրագետ՝ բանիմաց մարդ(իկ)» (էջ 212), *դալամ* (< արաբ. qalam) «ջրի՝ ջրբաժանման մի չափ. ջրի մի մաս» (էջ 202), *ճղտանսածեա* [իմաստ. բրբռ. *ճղ(տ)եղ* «ճյուղատել, կխել. բաժանել». «մտցնել, խցկել»] «երկն-դանի, երկդարականի» (էջ 108), *միջնակ* «այգեմիջյան, դաշտամիջյան ազատ (թողնված) տարածք՝ աշխատանքի ընթացքում անցուդարձ անելու համար» (էջ 166), *մշակ* »բանվոր. աշխատող (ձեռք). հողագործ, երկրագործ. այգի մշակող» (էջ 167), *չուան* «հող չափելու միավոր. չափի միավոր» (էջ 167), *տախտակ* «շերտ, գոտի, քառակուսի տեսքով, խաղողի այգու մի չափ, որ ունենում է 25-40 որթատունկ» (էջ 164), *փորձարան* «գիրք, աշխատություն. (գրական) փորձ» (էջ 152), *քաջ* «(տերմինի արժեքով) այգու փոքր մաս՝ տախտակ, որ միացնում են բուն տախտակներին՝ մասերին» (էջ 167),

(աղջիկ) *քաշել* «(աղջիկ) առևանգել՝ փախցնել. գերեվարել» (էջ 225) և այլն:

8) *Հնչյունական՝ գրության և արտասանության տարբերություններ*, որոնք թերևս կարելի է համարել այս բնագրին բնորոշ, ընդ որում ժամանակի խոսակցական լեզվից եկող, եթե ոչ բարբառային հիմք ունեցող երևույթներ:

Այսպես ունենք հետևյալները. *բարաթ // պերէթ* «(պարտա)մուրիակ, (պարտավորա)գիր» (էջ 236), *գեօր* (փխ. *գեօռ* < պրսկ. *gōr*) «(մահմեդական) գերեզման» (էջ 172), *գործ* (փխ. *ծ-ով*) (էջ 294), *գավզի* (գիր) (փխ. *գաւզի*) «պայմանագիր՝ պարտավորագիր (թուղթ)» (էջ 169), *խուղ* (փխ. *հիւղ, հիւղակ*) «խրճիթ, փոքր՝ աննշան տուն» (էջ 158), *Հրաստան* (հմմտ. *Նորաստու*) «գետանուն» (էջ 205), *Շուշավեր* (թերևս՝ *Շուլավեր*) «գյուղանուն» (էջ 184), *չկարգաուր(ք)* (փխ. *n-ով*) «հոգևոր կարգ չունեցող(ներ)» (էջ 41), *պանս/բանս* (< պրսկ. *band* «առվի գլուխ՝ սկիզբ») «գետաբերան. այն սկիզբը, որտեղից ջուրը բաժանվում է (երկուսի)» (էջ 192), *Տուկիծ* [փխ. *Դուկիծ (Դուկաս)*] «հույների Դուկաս՝ Կոստանդին 11-րդ տիրակալը» (էջ 15), *Տուգ(ն)* (փխ. *դ-ով*) (< թուրք. *düz* «հարթ, ողորկ. հարթություն») «հարթություն, հարթ տեղ (այստեղ՝ տեղանուն)» (էջ 174), *տուն* // *տիւն* «կարասի կիսով չափ գինու աման՝ (կես)կարաս» (էջ 176), *Քարձաղ* (այլն՝ *Քարասի*) «Քասաղ // Քասախ (գետանուն)» (էջ 172, 191):

Հունարան հայերենի ոճ՝ վերացականը թանձրացականի փոխարեն (*abstractum pro concreto*), հայցականը անորոշի հետ (*accusativus cum infinitivo*) և այլն: Օր.՝ *կանոն ճշմարտութեան* «ճշմարիտ կանոն» (էջ 44), *մանուկն յորորոցի հոչակեսաց գոլ շահ* «տարածեց, թե օրորոցի (տարիքի) մանուկը շահ (թագավոր) է» (էջ 30):

9) *Ձևաբանական կառուցվածքի (խոսակցական ձևերի) տարբերություններ*. *բլուրիս* (եզ. սեռ. հոլ.՝ ստաց. հոդով) (էջ 105, 195), *բլուրներ(ն)* (հոգն. ուղղ. հոլ.՝ որոշյալ առումով, փխ. *բլուրք*) (էջ

152), *բլուրներից* (հոգն. բացառական հոլ., փխ. *ի բլրոց, ի բլերց*) (էջ 152), *բլրին* (եզ. սեռական հոլ.՝ որոշյալ առումով, փխ. *բլրոյն, բլերն*) (էջ 195), *գացողաց* (գացողք, փխ. *գնացողք, գացողաց*) «գնացողների» (էջ 227), *գեղացի* (փխ. *գիւղացի*) «գյուղի բնակիչ, գյուղաբնակ» (էջ 169), *դաս* (*դաս-ս. դաս* ցուց. դեր.՝ ստաց. հոդով) «դեպի դա՝ այդ. դեպի այն» (էջ 247), *խաներն* (փխ. *խանք*) «խաները» (էջ 104), *կուելանէ* «ելնում է. այստեղ՝ *կելնի, կբարձրանա*» (էջ 144), *կու ինդրեւ* «խնդրում եմ» (էջ 251), *կու տան* «տալիս են. այստեղ՝ *պիտի տան*» (էջ 231), *ջրաղացներ* (փխ. *ջրաղացք*) (էջ 122, 190), *ի ռաղամում* «ռաղամի՝ հրամանագրի, հրովատակի, պաշտոնական գրության մեջ» (էջ 20, 125), *յայնկուսացի* «այն տեղացի» (էջ 235), *յայքան միջոցում* «այս ընթացքում» (էջ 49), *յկպարան նահիում* «Ապարանի նահանգում» (էջ 125), *զջոր խաղող* (փխ. *չ-ով*, եթե տպագրական վրիպակ չէ) (էջ 51), *չ'ինի* «չի լինի» (էջ 224), *չ'մօտի* «չի մոտենա, մոտ չի գա» (էջ 195), *ի վանքէն* (փխ. *ի վանաց, ի վանից, ի վանուց*) «(իրբն անեզական) վանքից» (էջ 247), *տասն եւ մէկն* (փխ. *մետասան*) «տասնմեկ» (էջ 141), *տասն եւ երկու* (փխ. *երկոտասան*) «տասներկու» (էջ 167), *տասն և վեց* (փխ. *վեչտասան*) «տասնվեց» (էջ 120), *տներ* (փխ. *տունք*) «տներ» (էջ 205):

2. «Քարոզգրքի» բառապաշարի և այլ երևույթների քննություն

«Քարոզգրքը» մեզ է հասել ձեռագիր վիճակով, գրված է ժամանակի գրաբար հայերենով, ուրույն աղբյուր է վերջինիս բառապաշարի, քերականական որոշ առաձևահատկությունների, առհասարակ մեր գրական լեզվի հին և նոր տարբերակների համեմատության և տիպաբանական բնութագրի տեսանկյունից:

Այստեղ առանձին քննության ենք առնում այդ երկի լեզվի բառապաշարի առավել ցայտուն երևույթները¹: Ձեռագիրը բաղկա-

¹ Եթե հնարավոր լինի լույս ընծայելու «Քարոզգրքը» բնագրով, ապա համոզված ենք, որ այն լավագույն գրքերից մեկը կարող է լինել հոգևոր ծառա-

ցած է երկու մասից, առաջինում ընդգրկված են հեղինակի ճառերը և ներբողյանները, իսկ երկրորդում՝ տարեկան քարոզները:

Տարեկան քարոզների բառապաշարի մեջ կան նոր բառեր, որոշ բառեր գործածվում են այլ իմաստով: Հանդիպում են բառերի հնչյունական և ձևային (ձևաբանական) տարբերություններ, որոնք թերևս ժամանակի խոսակցական լեզվի ազդեցության արդյունք են. տեղ են գտել լատինաբան ձևեր՝ ինքնաբերական կամ տարերային գործածության բերումով¹:

Այնուհետև, փաստերը քաղել ենք ընտրողաբար, ուստի դրանք չեն հավակնում սպառիչ լինելու, այլ հիմք են դառնում ավելի ծավալուն աշխատանքի, որ ապագայի գործ է: Ձեռագրում բավականին մեծ թվով բառեր ունեն ժամանակի ընդհանուր գրական նորմայից շեղումներ, հնչյունական՝ հատկապես պայթական և շփական բաղաձայնների, որոշ երկհնչյունների, մասամբ նաև ձայնավորների դեպքում: Դրանք վստահելի օրինակներ են, քանի որ ավանդվել են ինքնագիր-ձեռագիր վիճակով:

Առանձնացնում ենք հինգ տասնյակից փոքր-ինչ ավելի բառեր, որոնք պայմանականորեն համարում ենք հեղինակային (համեմատությամբ ՆՀԲ-ի): Նույնը թերևս կարելի է ասել բառի նոր իմաստով գործածության վերաբերյալ:

1) Հնչյունական տարբերությունների մասին: Ժամանակի խոսակցական լեզվի ազդեցությամբ կան ձայնավորների, ձայնորդների և բաղաձայնների գրության տարբերություններ, որոնք և կարելի է ներկայացնել հետևյալ խմբերով:

Բավականին շատ են հանդիպում բառակազմում *սկ-*, *սո-* և *շո-* հնչակապակցություններից առաջ *ը* ձայնավորի գրության դեպքեր, այսինքն՝ արտասանության մեջ եղածն արտահայտվում է նաև

յության կոչված սպասավորների, առհասարակ մեր հավաստալից ժողովրդի քրիստոնեական իմացության գործում:

¹ Լեզվական նյութը քաղված է Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 2314 ձեռագրից և անհրաժեշտության դեպքում օրինակին կից նշում ենք այդ ձեռագրի էջերը:

գրությամբ: Օր.՝ «Զի *ըսկիզբն* լինիցի»: «*Ըստասցուք* զհաւատ նորա և որդի կոչեսցուք»: «Ահա *ըստոյգ* երեւեցաւ» (Միմ. Երև. Քար., էջ 57): Այսպես նաև *ըշտեանարան* (փխ. *ի շտեանարան*, ն.տ.):

Մեկ-երկու դեպքում *ը* ձայնավորը գործածվում է *յ*-ի փոխարեն, այլև իբրև *յ*-ի լսվող *ը*, որ գրությամբ է արտահայտված. «Դու յայն կեանս *ըղիսացեալ* էիր բարեօք»: «Քանզի որպէս արեգակն ի գարշ տեղիս ծագելով և լուսաւորելով ինքն ոչ աղտոտի, այլ մնայ պարզ և *ըստակ*, զնոսա լուսաւորելով ոչ յաղթի ի նոցանէ»: «Ոչ պարտիս յաղթիլ ի նոցանէ և չարանալ, այլ դու *ըստակ* մնալ և զնոսա ի քեզ դարձուցանել» (Միմ. Երև. Քար., էջ 80): Այսպես նաև *ոչընչացնել* (փխ. առանց *ը*-ի՝ *ոչնչացնել*, ն. տ.) և այլն:

Կան դեպքեր, երբ այս կամ այն ձայնավորի փոխարեն գործածված է մեկ այլ ձայնավոր՝ արտասանությամբ համեմատաբար մոտ տվյալ ձայնավորին: Օր.՝ *ամւոյով* (փխ. *ամւոյով*, էջ 80), *իւղով* (փխ. *իւղով*, էջ 77), *ծով* (փխ. *ծով*. «Անօրէնք իբրև *ծով* ծփեցին», ն. տ.), *Մեսրօփայ* (փխ. *Մեսրոպայ*. գործածված մի քանի անգամ, ն.տ.) և այլն:

Պատահում է, որ գրության մեջ բաց է թողնվում ձայնավոր հնչյուն, կամ էլ հետին շարքի միջին բարձրացման ձայնավորը փոխարինում է առաջին շարքի նույն բարձրացման ձայնավորին: Օր.՝ *րախացուցիչ* (փխ. *ուրախացուցիչ*, էջ 56): «Ի *ցորեկն* (փխ. *ցերեկն*) ներգործէ և լուսաւորէ, և ի գիշերն լոէ» (ն.տ.):

Հանդիպում է *յ*-ի բացթողման կամ հավելման, *ոյ > ու* հնչյունափոխության, *ս* ձայնավորի քմայնացման հետևանքով *հ*-ի դրսևորման, *ւ*-ի փոխարեն *վ* շփական շրթնայինի գործածություն: Օր.՝ «Արդ *իրաւի* (փխ. *յիրաւի*) մնայր երկինն անկատար» (էջ 29), *զգուշ մնալ* (փխ. *զգոշ մնալ*), «Զարդարեաց *զյօղն* (փխ. *զօղն*) *թոչնօք* (փխ. *թոչնուլք*. էջ 26). «Անուամբ աճեալ. *հաւաքինութեամբ* (փխ. առանց *հ*-ի) բարեպաշտեալ, *դաւիաճանեցաւ* (փխ. *դաւաճանեցաւ*, էջ 204. մի քանի անգամ):

Պայթական և հպաշփական բաղաձայնների դեպքում նկատվող փոփոխություններն ավելի բազմազան են. շրթնային *բ, պ*, փ բաղաձայնների փոխարինման, *դ*-ի դիմաց *տ*, կամ հակառակը, հետնալեզվային *գ, կ, ք* բաղաձայնների, այլև *ծ, ց*, նաև *ջ, չ* հպաշփականների մեկը մյուսի փոխարեն գործածություն (վերջինը՝ բազմիցս): Օր.՝ *արստամբեաց, արստամբութին* (փխ. *պ*-ով, էջ 297), *Ագադանգեղոս* (փխ. *թ*-ով, էջ 72), *տառնադի* (փխ. *դ*-ով՝ *դառնադի*, էջ 56), *գոք* (փխ. *գոգ* «գիրկ»): «Եւ եղեւ մեռանիլ աղքատին և տանիլ հրեշտակաց ի *գոքն* Աբրահամու»), *այսոքիկ* (փխ. *այսոքիք*, էջ 81), *ծաղեցան* (փխ. *կ*-ով. «Սոքա ժամանակս գարնան, յորչափ Քրիստոս մերձաւոր գոլով արձակէր զճառագայթս՝ *ծաղեցան* և փայլեցան»): էջ 54), *Մեսրոփայ* (նաև *օ*-ով. «Երկրորդի լուսաւորչին մերոյ սրբոյն *Մեսրոփայ*», ն. տ.), *ցացնու*, փխ. *ծ*-ով. «Եւ վերջապէս ի *ցացնուլ* բարկութեան Աստուծոյ», էջ 37), *յառաջածան* (փխ. *ց*-ով. «խսկոյն գոյացան եւ *յառաջածան*», էջ 27), *վէջ* (փխ. *վէճ*, էջ 76), *յառաջել* (փխ. *հառաջել*. «*Յառաջելով* աղաչէր եւ ողբայր», ն.տ.) և այլն: Ավելացնենք, որ *վսթսուն* բառը բնագրում բազմիցս *թ*-ի փոխարեն ունի *ց*-ի գործածություն (*վսցսուն*, էջ 78):

2) Բառային տարբերությունների մասին: Լեզուներում առհասարակ, այս դեպքում ևս նորակազմությունները քննության առարկա են դառնում մի կողմից արտահայտության և բովանդակության պլանների (ձևի և իմաստի), իսկ մյուս կողմից գործառական բաշխվածության (ֆունկցիայի) նկատառումով:

«Քարոզգրքում» հեղինակային գործածությունը բառին հաղորդում է իմաստային այնպիսի հատկանիշներ, որոնք խոսքի մեջ գործառապես բաշխված են, այսինքն՝ ի հայտ են գալիս որպես որոշակի նշանակության կրող: Միմեոն Երևանցու քարոզներն, իբրև հեղինակային, ինչ-որ իմաստով նաև ճարտասանական խոսքի մի յուրահատուկ դրսևորում, հագեցած են ոչ միայն ուրույն բովանդակությամբ, այլև ճարտասանական արվեստին բնորոշ բազմազան դրսևորումներով, ուստի բնական է, որ այդպիսի խոսքում

պիտի հանդես գային թե՛ ընդհանուր գործածության և թե՛ հեղինակային-անհատական բնույթ ունեցող բառեր և բառակապակցություններ:

Հայերենին ըստ ամենայնի տիրապետող հայոց հայրապետի անհատական խոսքն իմաստավորված է նաև նոր բառերի հաշվին, որոնք իրենց հիմքում ունեն իրադրական բնույթ, իսկ հայերենի բառապաշարի տեսակետից՝ ճանաչելի, հասկանալի և գործածելի:

Նորակազմ բառերն իրենց բաղադրության բնույթով խորթ չեն հայերենի բառապաշարին, ստեղծված են վերջինիս բառակազմական ընդհանուր սկզբունքներով: Դրանց կաղապարային դրսևորումը համեմատաբար նոր է, բնորոշ նոր գրական հայերենի բառակազմությանը, չկան թեք (հոլովված) հիմքերով բաղադրություններ, որ հին գրական հայերենին է հատուկ: Դրանք հիմնականում բարդ, ածանցավոր և բարդ ածանցավոր բառեր են:

Բարդ բառերը բաղադրված են համարյա միօրինակ կաղապարներով, որոնք լայն տարածում ունեն նոր գրական հայերենի բառապաշարի մեջ՝ կապված բաղադրական հիմքերի ոչ այնքան ընդգծված առանձնահատկությունների հետ: Նկատի ունենք հնչյունափոխված կամ անհնչյունափոխ հիմքերով հանդես գալը, դրանցից մեկի կամ մյուսի նորակազմություն լինելը և այլն:

Գոյական - գոյական կաղապարով կազմությունների բաղադրվող հիմքը անհնչյունափոխ կամ հնչյունափոխված ձևով է, ընդ որում դրանք հիմնականում միացած են լինում *ա* հոդակապով: Օր.՝ «Սա է *տիեզերածագ* և *աշխարհաճառալ* արեգան, որ եղեւ հաստատեալ ի սէր Աստուծոյ» (էջ 55): «Եւ երկոտասան աստեղօք *երանգափայլ* պայծառացեալ ըստ երկոտասան չարչարանաց» (էջ 669): «Կալցեն *զերկնադիտակ* ոստս սորին ցանկացօքն երկնից» (էջ 57):

Այսպես նաև հետևյալները. *դիմայլակ* (էջ 25), *ծոցամէջ* (ն. տ.), *ծովասարաս* (ն. տ.), *ջրհող* (էջ 30) և այլն:

Առանձին են գոյական բաղադրվող հիմքով և այլ խոսքի մասերի պատկանող բաղադրող հիմքերով կազմությունները: Օր.՝ «Որ զհնգետասան ամս բոլոր տևեաց ի յանտանելի չարչարանաց և ի մէջ *գազանայի* (իմա՛ գազաններով լի՛ լեցուն – Վ.Հ.) գբին, չունելով բնաին զմխիթարութիւն ի մարդկանէ» (էջ 48): «Այս երանելիս, որ ոչ եթէ զաղեղն ընկալաւ ի հաշտութիւն, այլ զնոյն *աղեղնատուրն* Աստուած ետես յայտնապէս աչօք մարմնաւոր...» (էջ 490): Վասն որոյ *աստուածապատկանն* Յիսուս զգալի նշանօք հաստատեաց» (էջ 297):

Այսպէս նաև հետևյալները. *գլխակոր* (էջ 23), *ձեռնաստեղծն* (էջ 34), *մարմնաբոյծ* (էջ 52), *սանձարկ* (ն.տ.), *տզրկաբարու* (ն. տ.), *քրիստոսաշէն* (ն. տ.):

Թվարկված բառերից մեկ-երկուսի վերաբերյալ կարելի է նշել հետևյալը: ՆՀԲ-ում չկա *գլխակոր*, թեև նշվում է *գլխակորիմ* բայը, միակ վկայությամբ նշվում է *ձեռնաստեղծական* բառը, թեև չկա *ձեռնաստեղծն* բառն առանձին, բառարանագրված է *սանձարկու* ձևը, բայց ոչ՝ *սանձարկ*: Եվ եթե իրոք գոյություն չունեն երկրորդաբար կազմված բառերի նախավոր կամ բաղադրվող հիմքերը, ապա գործ ունենք, այսպէս կոչված, բացթողումային (էլիպտիկ) բառակազմության հետ, մի երևույթ, որ խորթ չէ հայերենի բառակազմությանն առհասարակ:

Մեկ այլ խումբ են այն բարդ բառերը, որոնք բաղադրված են ածական բաղադրվող և այլ խոսքի մասի պատկանող՝ ածական կամ բայարմատ բաղադրող հիմքերով: Օր.՝ «Գրկեսցեն *զամլաչարչար* գլուխս սորին, որ կորացեալք են ի դժոխս» (էջ 57): «Սա է *զեղեցկաբողբոջ* ուռն, որ ընծայեցաւ ի յամենաճշմարիտ յորբոյն Քրիստոսէ» (էջ 54): «Թոչունքն ... թևատարած *փետրազարդեալք*, երփնաւորեալք և *նորաստաց* եղանելօք *երգակցեալք* սկսան պարիլ, թոչիլ և խաղալ» (էջ 25):

Այսպէս նաև հետևյալները. *բազմամիջոց*, *բարեգուրկ*, *թշուառայի*, *խոնարհակերպ*, *հարստակերպ*, *յարմարածայն* (էջ 56), *տառնադի* (փխ. դ-ով, ն. տ.):

Մակբայ - գոյական բաղադրությամբ ընդամենը մեկ նոր բառ ենք գտնում՝ քաղված և ՆՀԲ-ում չարձանագրված բառերի մեջ, այն է՝ «Մեծագունտ երկիրս այս *ընդհանրածաւալ*» (էջ 29):

«Քարոզգրքում» մեկ-երկու նախածանցավոր կազմությունների կողքին հանդիպում են համեմատաբար մեծ թվով վերջածանցավոր բառեր, որոնք կազմությամբ բաժանվում են մի քանի խմբի:

Կան *համ-*, *պար-* նախածանցներով կազմված բառեր. «Ամեննին համաձայն և *համեղանակ* ձայնի հանգուցանէ զկամս Աստուծոյ» (էջ 56): «Քանզի բոլորակն, յորմէ սկսանի և ի նոյն հանզի, անեզրաբար *պարսունելով*» (էջ 23) և այլն:

Բառեր, որոնք բաղադրված են *-աբար*, *-ական*, *-ապէս*, *-արան*, *-ատր*, *-ութիւն*, *-որդ* և *-ուտ* վերջածանցներով: Օր.՝ «Ունեցաւ և զՅօսէփ զեղեցիկ *զգեղեցական* Հոփսիմէ, որ իւրով իմաստութեամբ և պատուականաւ արեամբ սիրեցաւ յերկնաւոր թագաւորէն» (էջ 50): «Ապա որքանի՞ցս ցնծայ և ուրախանայ *անվերջապէս* Գրիգորիոս, որ աստէն ընկալեալ ունի զանմահութիւն» (էջ 47): «Աշխարհս ամենայն իբրև զամենաբարի *ընթրիսարան* և իբրև զամենագուարճ յսրախճարան կերտեաց Աստուած» (էջ 28): «Ոչ ամենայն ոսկի, որ արտաքուստ ունի զպատկեր թագաւորին, մտցէ ի զանձարանս նորա, այլ որ ընդ արտաքուստ պատկերին ունի և ի ներքս զուտ *ոսկիութիւն*» (տե՛ս Քարոզ ԼԲ):

Այսպէս նաև հետևյալները. *անեզրաբար* (էջ 23), *երփնաւորեալք* (էջ 941), *նախապատրաստական* (ն. տ.), *այլիմնապէս* (էջ 24), *խոտորնակապէս* (էջ 22), *զարթնապէս* (ն. տ.), *հողմնապէս* (ն. տ.), *ներկայապէս* (ն. տ.), *զրութիւն* (էջ 220), *ուղեորդ* (տե՛ս Քարոզ Ի), *մատախյուտ* (էջ 33) և այլն:

Համեմատաբար քիչ են հանդիպում բարդ ածանցավոր բառերը, որոնք բաղադրության վերջին փուլում մեծ մասամբ գոյա-

նում են իբրև բայեր, մասամբ՝ ուրիշ խոսքի մասերի պատկանող բառեր: Օր.՝ «Եւ ի մէջ այսորիկ մեծի հիմնարկութեան և *առաստա-
ղաձգութեան* էր վիհն այն անդունդն առաջնաստեղծ ջրոյն» (էջ 49): (Քանզի եթէ հասարակ գրկողութիւնս յերկինս բողոքէ և զԱստու-
ած ի վրէժխնդրութիւն յարուցանէ, որքա՞ն ևս *ծնողագրկութիւնս*)» (Ա.տ.): «Եւ *կարգադրաբար* ազդմունք երկնայնոցն, եթէ չիցէր մարդն» (էջ 29-30):

Այսպես ունենք նաև հետևյալները. *հանդիսափառութիւն* (էջ 56), *չքնադարանել* (էջ 28), *փետրագարդեայք* (էջ 941), *փորձառեայք* (Ա. տ.):

3) Լատինաբան հայերենին բնորոշ ձևերի մասին: «Քարոզգրքի» էջերում ևս հանդիպում են նման միավորներ, որոնք ժամանակին հաղթահարված երևույթների հեռավոր արձագանքն են, բնականաբար, լեզվական՝ բառային «անգործության» (ինտերցիայի) ուժով. դրանք հեղինակային չեն, այլ հեղինակի լեզվում ներթափանցումներ՝ իբրև գրավոր ավանդույթի հետևանք:

Լատինաբան հայերենում անեզական բառերի համար ստեղծվել էր եզակի թվի ձև: Հանդիպում է *կեանք* բառի եզակի թիվ նշանակող *կեան* ձևը: Օր.՝ «Զի նա ունի ի յինքն զշունչ և *զկեան* ամենայն կենդանեաց» (էջ 25): «Նոյնպէս և ի գնալն մեր աստի յայն *կեանն*, սուրբ Գրիգոր ընծայէ Աստուծոյ» (էջ 206):

Հանդիպում է ներգոյականի ձևը՝ կազմված *նի, ըն* (կամ *ն*) մասնիկով: Օր.՝ «Ասացուք, զոր ինչ *նարդենիս* պիտոյ է մեզ բանիս» (Քարոզ Շաբաթու մեծի պահոց): «Այսպէս իմա և *նարդենիս* եղեալն և մի տարակուսեր» (Քարոզ ԾԵ) և այլն:

Որոշ դեպքերում գրաբարաձև *ի* նախդրով և եզակի տրական հոլովով կազմվելիք ներգոյական հոլովի դեպքում տրական հոլովի ձևը առնվում է *-ոջ* մասնիկով. «Քանզի ի յերրորդումսս *դարոջ*» (էջ 79): «Ի խաւարատարած *գիշերոջն*» (Ա. տ.) և այլն:

Լատիններենի օրինակով ստեղծված էին ածականի համեմատության աստիճանների ձևեր՝ *-ոյն* մասնիկով ածականի բաղդա-

տական, իսկ *-ոյնեղ* մասնիկով գերադրական աստիճան նշելու համար: Օր.՝ «Արդեօք որքա՞ն իցէ *մեծագոյնեղ, պայծառագոյնեղ* և գերազանց *գեղեցկագոյնեղ*» (էջ 22): «Որ է ևս *մեծագոյնեղ* հրաշ» (էջ 62): «Ի ներհակն փոփոխումս *մեծագոյնեղի* զօրութեան կարօտանայ» (Ա. տ.): «Որպէս ի միոյ *յատկագոյնի*» (էջ 80) և այլն:

Այսպես նաև հետևյալ ձևերը. *հաւաստագոյնեղ* (էջ 55), *նեղագոյնեղ* (Ա. տ.), *նուաստագոյնեղ* (էջ 61), *պայծառագոյնեղ* (էջ 75) և այլն:

Գրաբարի *սոյն, դոյն, նոյն* դերանունների եզակի թվի սեռական հոլովի ձևերի դիմաց ներմուծված են խորթ ձևեր՝ *սոյնոյ, դոյնոյ, նոյնոյ*, և նման ձևեր հանդիպում են նաև «Քարոզգրքում»: Օր.՝ «Նոյնպէս և այս կիրակէս գդարձն նոյնոյ բաժանեցեալսն և զգիտն *նոյնոյ* կորուսանելոյ յիշէ» (էջ 72): «Բաց ի *նոյնոյ* անբաւազօրեն Աստուծոյ» (էջ 62): «Որք սպասատրէին ի վիրապին *նոյնոյ* նահատակին Գրիգորի» (էջ 72) և այլն:

Բայական ձևերի փոփոխություններից նշելի են հատկապես խոնարհման տիպերի նկատմամբ հանդես բերված խորթությունը: Այսպես, նկատում ենք *ու* խոնարհման որոշ բայերի մեջ ներմուծված արհեստական կազմություն. օր.՝ «Որպէս և խորհրաբար *ընթեռնանի* (փխ. *ընթեռնու*) նոյն ատարանն ի տօնի Սրբոյ Լուսաւորչին մերոյ» (էջ 205): «Նոյնպէս և *ի շսանիլ* (փխ. *շսուլ*) ժամանակին տեսանելով ետես զխեղճութիւն բոլոր մարդկային ազգի» (Ա. տ.): «Այս ամենայն հրաշալի պարգեւք և խորհրդական տուրք ի յերկինս հայոց *հեղանի* (փխ. *հեղու*) և ի սմա *տրի* (փխ. *տուեալ յիցի*) որպէս ցուցանի» (Ա. տ.) և այլն:

Բավականին շատ է բայի, այսպես կոչված, ապառնի անցյալ անկատարի ձևերի գործածությունը *-իցէի, -իցէիր, -իցէր* և այլն տիպի մասնիկների օգնությամբ: Օր.՝ «Եթէ *չիցէր* մարդն, յորմէ՞ առնուցոյր որդին Աստուծոյ զմարմին և *կատարիցէր*» (էջ 30): «Բարիսն յաւելուցոյր և զչարս *մերժիցէր*» (Ա. տ.): «Քանզի ոչինչ էր ի մարմին և յանդամս նորա, որ ոչ ընդդէմ կամացն Աստուծոյ *շարժի-*

ցէր, և ոչ իցէր Բաբելոնի և Կաթոնի Աստուծոյ» (էջ 56): «Որք վայելիցէին զբոյսս» (էջ 26): «Եւ կարգադրաբար ազոմունք երկնայնոցն, եթէ չիցէր մարդն» (էջ 29-30):

Այդպէս նաև հետևյալները. *իցէր* (էջ 32, 68, 75, 81), *ասիցէր*, *դիմիցէր*, *ելանիցէր*, *զետեղիցէր* (էջ 23), *լինիցէր* (էջ 30), *կարիցէր* (էջ 30), *հնազանդեցուցանիցէր*, *հրամայիցէր* (Քարոզ ԼԳ), *շարժիցէր* (էջ 30), *նկատիցէր*, *լինիցէին*, *հնազանդիցէին* (էջ 31), *ոչ իցէին* (էջ 25) և այլն:

Գործածվում են նաև այնպիսի հոլովական, եղանակային և ժամանակային ձևեր, որոնք շեղումներ են հին գրական հայերենի նորմայից: Դա ակնհայտ է հատկապես հոլովման տիպերի դեպքում:

Այսպէս, *արաղաղ* բառը գրաբարում պատկանում էր *ի-ս* կամ *n* հոլովման, այնինչ այս երկում այն գործածված է *ու* հոլովմամբ. «*Յարաղաղո* (իմա՛ ա՛ն -Վ. Հ.) զըստ ժամանակին պաշտօնատարութիւնն» (էջ 26): *Թոշուն* բառը, որը հին գրական հայերենում, հայտնի է, ենթարկվում էր *n* հոլովման, այստեղ այն հանդիպում է հոգնակի գործիական հոլովում *-ոք* (փխ. *-ովք*) վերջավորությամբ (եթէ զանց առնենք բնագրի *n*-ի փոխարեն *o* գրչությունը). «*Զարդարեաց զյօդն թոշնօք*» (էջ 26): Իսկ *ունիմ* բայը գործածված է սահմանական ներկա ժամանակի հոգնակի առաջին դեմքում *-ինք* վերջավորությամբ (փխ. *-իմք*). «*Ունինք* և կոպաշտից, որք առանց գրոց ի բնութենէ ունին՝ ըստ Պօղոսի» (ս. տ.) և այլն:

Եզրակացություններ

1. Միմեռն Երևանցին թողել է հոգևոր, գրական-եկեղեցական հարուստ ժառանգություն, որի լեզուն՝ հիմնված հին լեզվի (գրաբարի) ավանդույթի վրա, նոր շրջանի խոսքի յուրօրինակ նմուշ է հանդիսանում:

2. Այդ երկերի բառապաշարը՝ նորաբանություններով, տերմինաբանությամբ, օտար բառերի հնարավոր գործածությամբ մի ամբողջական շերտ է հայերենի մեջ:

3. Պատմական-ազգագրական, դիվանական գրագրության և հաշվենշման մի տպավորիչ համահավաք է հեղինակի «Ջամբո» աշխատությունը, որի լեզուն կարող է ավելի մանրամասն քննության նյութ տրամադրել: Իսկ «Քարոզգիրքը» խոհական-աստվածաբանական խոսք է՝ լեզվի հարստությամբ, շարահյուսական կառուցվածքի ինքնատիպությամբ, լեզվաոճի մտերմությամբ:

4. Նրա երկերի լեզվի ուսումնասիրությունը ապագայի գործ է, իսկ մեր այս արածը՝ մի փորձ, որ նախկինում չի արվել:

Սայաթ-Նովայի հայերեն խաղերի մի քանի բառի մասին

Ներածություն

1845 թ. բժիշկ Գ. Ախվերդյանը կազմում է Սայաթ-Նովայի ձեռագիր խաղերի ժողովածուն՝ անվանելով «Դավթար». սկիզբ է դրվում միջնադարյան երգասացության մի երևելի մուտքի հայ գրավոր մշակույթ:

Սայաթ-Նովան (1712-1795 թթ.) XVIII դ. ակնառու դեմք է հայ գրականության պատմության մեջ՝ միջնադարի հայ բանաստեղծների (նաև «աշուղ-երգիչների») անվանի հետևորդ: Նրա կյանքի և ստեղծագործության ուսումնասիրմանը նվիրվել են լավագույն աշխատություններ՝ գիտական մանրամասնություններով, ժամանակի ընթացքում առաջ եկած հանգուցային խնդիրների ճշգրտումներով և լրացումներով: Հրապարակի վրա են մեծ երգիչ-բանաստեղծի «խաղերի» տարբեր ժողովածուների հրատարակությունները:

Սայաթ-Նովայի խաղերի լեզուն ևս գրավել է ուսումնասիրողների ուշադրությունը, եղել է բարբառագիտական-լեզվաբանական քննության առարկա, կազմվել է նրա հայերեն խաղերի բացատրական բառարանը:

Այդ խաղերի լեզուն յուրօրինակ նմուշ է տարբեր խոսվածք-

ների միատեղման: Չի կարելի ասել, թե Սայաթ-Նովան իր խաղերը գրել է բարբառով, այլ դրանց լեզուն ժամանակի արևելյան աշխարհաբարն է՝ Թբիլիսիի վերբարբառային հիմքով: Այդ խաղերի լեզվին նվիրված տարբեր աշխատանքներից, կազմված ամփոփ բացատրական բառարանից պարզվում է, որ դեռևս կան բառեր և բառաձևեր, որոնք չունեն հավաստի բացատրություն կազմության, ծագման, բառիմաստի վերաբերյալ, որոնց քննությունը կարևոր է հայոց լեզվի, մանավանդ հայ բարբառների բառապաշարի պատմության համար:

1. Խաղերի բառաքննության ընդհանուր մոտեցման հարցը

Սայաթ-Նովայի խաղերի լեզուն ուսումնասիրողներին հետաքրքրել է ամենից առաջ իր բարբառային շեշտվածության, տարբեր բարբառների հատկանիշներով բացատրվող իրողությունների բերումով (*Petermann*, 1866. տե՛ս *Աղայան*, 1958, էջ 174. *Томсон*, 1896. *Ղարիբյան*, 1963, 52-77): Գրվել է խաղերի լեզվի հնչյունական համակարգի առանձնահատկությունների վերաբերյալ առանձին աշխատանք (*Հովհաննիսյան*, 1990, 48-56):

Հայտնի է, որ Թբիլիսիի բարբառը հնչյունական, բառային մակարդակներում միատարր չէ¹: Առավել անհասկանալի բառերի մի մասը, իբրև բառացանկ-հավելված, սովորաբար բերվում է կազմված ժողովածուներին կից (*Ախվերդեան*, 1852. *Սայաթ-Նովայ*, 1914. *Լևոնյան*, 1963. *Հասրաթյան*, 1959. *Սայաթ-Նովա*, 1984, այլև 1987): Հայերեն խաղերի բառարանը, անկախ որոշ բացթողումներից, վրիպումներից և անճշտություններից, դրվատանքի արժանի աշխատանք է (*Քոչոյան*, 1963. տե՛ս նաև *Համբարձումյան*, 2012, 36-42):

Համեմատաբար անհասկանալի, նաև օտարլեզվյան բառերի բնագրային կամ բանասիրական աշխատանքի ձևով քննելը, ինչ

¹ Ա. Ղարիբյանը լեզվական այդ որակն անվանում է «միջբարբառ», որն, անշուշտ, վերանայելի է (տե՛ս Ղարիբյան, 1953):

խոսք, ժողովածուից ժողովածու եղել է ավելի բարվոք: Այդուհանդերձ, խաղերում կան բառեր, որոնք դեռևս մնում են ոչ այնքան ճիշտ բացատրված՝ ըստ ծագման, այլև ըստ բառաքերականական իմաստի: Այսպես, *գուգէ* բառաձևը «Խաղեր»-ի բառարանում բացատրվում է «թող, թեկուզ» (*Քոչ.*, էջ 56). «Քանի *գուգէ* քամին տանէ՝ ծովէմէն աւագ չի պակսի» (*ՀԽաղ.*, էջ 44): Բացատրությունը սխալ է երկու պատճառով՝ 1) *քանի գուգէ* կապակցությունը չի թարգմանվի՝ «քանի թող կամ քանի թեկուզ», 2) բնագրի հաջորդ տողում կա այդ *թեկուզ*-ը. «Թեկուզ ըլիմ, թեկուզ չըլիմ, մէջլիսնեբում սագ չի պակսի». ի՞նչ է ստացվում՝ անհասկանալի է: Այնինչ, ճիշտ է *գուգէ* «ուզում է» (< *կուգի*) բայական ձևի ընկալումը. այստեղ գործածվել է *ուգենալ* բայի բարբառային սահմ. ներկայի ձևը՝ կազմված *կը* եղանակիչի *գը* (*ը*-ի գեղչում. տե՛ս *գ՛ուգիս* – *կ՛ուգիս*, Ախվ., էջ 105):

Խաղերում առկա նման բառերն առհասարակ իրենց տարբերակներն ունեն ոչ միայն գրական հայերենում, այլև վերջինիս մյուս բարբառներում, բնականաբար՝ Թբիլիսիի բարբառում՝:

Ամենից առաջ նկատի ունենք օտարլեզվյան բառերի բարբառային և գրական տարբերակները [հմմտ. *բիրյան* և *բուրյան (անել)* «այրել. խորովել», այլև այն, որ որոշ բառերի փոխառյալ լինելը կասկած է հարուցում, որովհետև ավելի հավանական է թվում դրանց բնիկ, ինչպես նաև մեկնաբանելի լինելը բառի կամ արմատի տարբերակային քննության առումով (հմմտ. փոխառյալ՝ *բաս* «ասել, խոսել» (< արաբ. ?), և բնիկ՝ *բամ* «ասում եմ», *բաս* «այո՛, ապա, հապա», «խոսել», *բա՛* «ասա՛, խոսի՛ր», *բբը* «այո՛, որ ասու՛մ եմ», *բո՛* «ի՛նչ ես ասում» և այլն, փոխառյալ՝ *բար* «(ծառի) պտուղ» (?), և բնիկ՝ *բար(իք)* // *բեր(ք)* «բարիք, արդյունք. ստացվածք») և

¹ Այդ բարբառին նվիրված են տարբեր աշխատություններ, ընդ որում անցյալ և նախանցյալ հարյուրամյակների ընթացքում, տարբեր լեզուներով, սակայն ոչ ավարտուն և ամբողջական ձևով, հատկապես հայ բարբառների ներքին տիպաբանության առումով, որ տեսական առանցքային հարց է ընդհանրապես բարբառների և գրական լեզվի փոխհարաբերության պատմության համար:

այլն¹:

Իսկ սա նշանակում է, որ հայերենի ներսում պատմականորեն տեղի են ունեցել օտար և բնիկ միավորների իմաստների բաղարկումային (կոնտամինացիոն) փոփոխություններ՝ իմաստի տեղափոխություն, փոխարինում, շրջում, մթագնում, կուտակում և այլն: Դրանք հանգեցնում են բառապաշարի համաժամանակյա կտրվածքում բովանդակության պլանի (իմաստի) դժվարությունների: Սա ոչ միայն հայերենին, այլև առհասարակ կենդանի լեզուներին բնորոշ երևույթ է:

2. Խաղերի բառային տարբերակվածության բնույթը

Սայթ-Նովայի ապրած ժամանակաշրջանում թիֆլիսյան միջավայրը լեզվական շփումների տեսանկյունից բավականին բազմազան էր: Քիչ չէր, որ գոյություն ուներ վրացերենի և կովկասյան մյուս լեզուների ու բարբառների խայտաբղետություն, կար նաև այլ ծագման՝ հնդեվրոպական (պարսկերեն, քրդերեն, օսերեն և այլն), թյուրքական (ադրբեջաներեն կամ թաթարերեն՝ «այրումլուի» բարբառ, թուրքերեն և այլն), սեմական (արաբերեն և այլն) լեզուների խառնիճադանճ կացություն: Նման միջավայրում, ընդ որում արտաքին աննպաստ պայմանների բերումով հայտնված հայերենի կրողների հաղորդակցումը, բնական է, պիտի հայտնվեր անմիջական շփումների մեջ հիշյալ տիպի լեզուների կամ բարբառների հետ:

Խաղերի բառապաշարը, եթե ոչ լիովին, ապա ըստ երևույթին իր մեջ ցուցանում է նման շփումների պատկերը: Հայերենի տարածաշրջանային ուսումնասիրությունը, ըստ այդմ, մանավանդ համաժամանակյա կտրվածքում ունի իր դժվարությունները, որոնց հաղթահարումը ենթադրում է հետևողական մեթոդիկայի կիրառություն, ինչպիսին են, օրինակ, արտաքին համեմատությունը,

¹ Հմմտ. Ե. Չարենցի՝ «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ *բարն* եմ սիրում» բնիկ *բար* («բարիք, բերք») բառարմատի բաղարկումը (կոնտամինացիան) օտարլեզվյան ձևի հետ:

ներքին համադրումը և մեկնաբանությունը, ծագումնային բացահայտությունը (ստուգաբանություն): Սայթ-Նովայի խաղերի լեզվի քննությունը, մանավանդ ոչ գրական, այլ բարբառային (խոսվածքային) մակարդակում ունի կարևորություն ոչ միայն հայոց լեզվի պատմության, այլև հայ բարբառների տեսության համար:

Այդ խաղերում տեղ են գտել վրացերեն ընդհանուր անվանումով բառեր, ինչպես նաև օտարլեզվյան բառեր, որոնց ինչպիսին լինելը եթե անմիջականորեն չեն առնչվում խաղերի բառապաշարի պատմականությանը, ապա անկասկած կարող են նպատակային լինել հայերենի տվյալ տարածքային տարբերակի բառապաշարի բնույթի տեսանկյունից: Ուստի հնարավորություն է ստեղծվում խաղերում գործածված բառերի ծագման և բնույթի վերլուծության ճանապարհով փորձել հասնելու դրանց իմաստաբանությանը:

3. Բառաքննական-ստուգաբանական դիտարկումներ

Քննության առնվող բառերը երկու խումբ են՝ բնիկ (հնդեվրոպական ծագման) և օտարլեզվյան (փոխառյալ)¹: Ստորև կատարվող վերլուծությունը փորձել ենք հիմնավորել արդի լեզվաբանության տեսանկյունից, հայերենի բառաքննական-ստուգաբանական ճշգրտումների և լրացումների հիմունքով

ա) *Բնիկ (հնդեվրոպական ծագման) բառեր*

Անգալ. «անկյալ. անբան, անգործ». բառի արմատն է *անկ*-«ընկնել» (< *անկեսալ*), հմմտ. գրաբարյան *անկանիս* «ընկնել», որից ունենք՝ *անանկ* «աղքատ», *տնանկ* «անտուն», *անկված* «գործվածք» և այլն (հետևալեզվային խուլ *կ* > ձայնեղ *գ*, երկբարբառի պարզեցում՝ *ես* > *ա*). հմմտ., օրինակ, *անեկ* «չեկած. անթթխմոր. չխմորված». օր.՝ *անեկ հաց*. «Միրտըս փուրումըս թուլացաւ / *անգալներու* զախ անելէն» (Ախվ., էջ 81). *Անգալի* խօսկին մի ավտա» (Ա. տ., էջ

¹ Քննության առարկա բառերի իմաստների բացատրությունը տալիս ենք ըստ բնագրի իմաստային նախնականության. անհրաժեշտության դեպքում նշում ենք Քոչոյանի կազմած բառարանի բացատրություն(ներ)ը: Բնագրի օրինակների էջերը նշում ենք ըստ Հ. Բախչինյանի կազմած «Խաղեր» ժողովածուի. բարբառային ուղղագրությունը փոխված է գրականի, որ տեղին չէ, թեև չենք առարկում:

171). «Անգալիս Աստված սպանե, Փահրադ-Շիրնի դարի բաբաթ» (Բաղ., էջ 61)¹:

Բաս «խոսք, գրույց», *բասեմէն* (< բաս). «խոսքից, խոսքերից» (բացառ. հոլ. ձև. հմմտ. *թասեմէն* (< *թաս* «աման»)). «Խըմեցուր ձեռիտ *թասեմէն* (Քոչ., էջ 77): «Քիզիդ *բաս* օ՞վ կարայ բըռնի՝ հազար բաբաթ բառ իս էլի» (Ախվ., էջ 76). «Բաս ինչի՞ ձենըն չէ՛ գալիս, սալբ ու չինար, էտ ի՞նչ արիր» (ն. տ., 84). «Համաշա էշխիդ *բասեմէն* // Երվում իմ, ճար իմ ասում» (ն. տ., 141). «Արի նըստի, Սաեաթ-Նօվա, խօսկըդ ասա լամզ ու *բասով*» (Բաղ., էջ 52). «Քիզ ինձնից ո՞վ կանա խըլի, աշուդի *բասն* իս, քամանչա» (ն. տ., էջ 54)

Քոչոյանի բառարանում *բաս*-ը համարվում է՝ 1. բրբռ.՝ «ապա, հապա» իմաստով, 2. փոխառ. (արար.)՝ «գրույց, խոսակցություն», որն առարկելի է: Բախչինյանի կազմած բնագրերի ցանկերում մի դեպքում՝ նշվում է երկու *բաս*, մեկը՝ «բա, հապա, իսկ», մյուսը (բուն իմաստով)՝ «գրույց, վեճ, խոսակցություն» և (փխբ.՝ ոչ անկախ Ախվերդյանից և Պարոյր Սևակից)՝ «աշուդի մրցավեճի գործիք» (տե՛ս Բաղ., էջ 502, ՀԲաղ., էջ 138, 225):

Հայ. *բաս* բայը, որից՝ *բամ* «ասում եմ», *բաս* «ասում ես», *բայ* «ասում է», *բա՛* «ասա՛» (բրբռ.՝ *բբբ*, *բա*, *պու* և այլն) պակասավոր է, *բաս*-ը բարբառներում նաև գոյականի (բայանվան) արժեք է ստացել՝ *բաս* «խոսք, գրույց. ասել-խոսել». կա հարադրություն՝ (մեկի) *բասն անել*՝ 1. «մեկի մասին խոսել», 2. «մեկի մասին խոսում եմ» (երկրորդ իմաստի համար ասվում է, երբ մեկի ականջը խշշում է («ձայն է տալիս»), ասում է՝ «մեկն իմ *բասն* անում է». «տեսնես ո՞վ է իմ *բասն* անում» և այլն), այլև մեկի մասին խոսում է, և հանկարծ այդ մեկը գալիս է, զարմանում են, թե՛ «*բասո՞վ էր*»

և այլն: Նման արտահայտություններում *բաս*-ը գոյական (բայանուն) է:

Հայերենում նման լայն գործածության բառը հազիվ թե կարելի լինի փոխառություն համարել. այլ կերպ ասած՝ *բաս*-ը (< *բամ* «ասում՝ խոսում եմ», *բաս* «ասում՝ խոսում ես» և այլն, գրաբարում պակասավոր՝ **բայ* «ասել, խոսել» (< հե. *bha- «խոսել» արմատից) բնիկ է (հմմտ. *Ջահուկյան*, 1987, 53, 56, 115):

Բար «բերք, բարիք», Ախվերդյանի, նաև Բախչինյանի կազմած ցանկերում չկա *բար*-ը. «Արի բլբուլ խոսի *բարն* // Օրհնվի քու եկած սարն» (Ախվ., էջ 108):

Այս բառի բանասիրական-տեքստաբանական մեկնաբանությունը գտնում ենք Բախչինյանի կազմած «Հայերեն խաղեր»-ում (էջ 154-155). հայտնված տարբեր կարծիքները այնքան էլ հավանական չեն, հարցի լուծումը մնում է ոչ վերջնական:

Կարելի է մտածել, որ Սայաթ-Նովան գործածել է *բար*՝ «բերք, բարիք» (ավելի նախնական՝ «արդյունք, ստացվածք») իմաստով. հմմտ. *բար-իք*, *բեր-ք*, *բեր-ել* «առաջ բերել. ծնել». օր.՝ (բրբռ.) Հարսը երեխա է *բերել* և այլն). *բար* արմատը (*ե / ա* ձայնդարձ) բնիկ է, ծագում է հե.*bher- «(առաջ) բերել». հմմտ. հինդ. bhārāmi «բերում եմ», հուն. φέρω «բերում եմ», լատ. ferō «բերում եմ» և այլն (հմմտ. *Ջահուկյան*, 1987, 116. Դ.-Մ. 1984, 43, 164):

Ուստի հիշյալ հատվածում պիտի լինի *բար*, հատկապես որ հաջորդ տողում *օրհնվի* է ասվում. «Օրհնվի քու եկած սարն». սրա փոխարեն *բառն* ասելը անիմաստ է դարձնում միտքը՝ կրկնաբանություն (տավտոլոգիա)՝ *խոսիր բառն*, այսինքն՝ ասա ասելի՛ք-ը, խոսել խո՛սքը, քանի որ *բառ*-ը ինքնին խոսք է նշանակում. հմմտ *բարբառել*, ռուսերեն՝ *слово* «բառ, խոսք»:

Այս *բար*-ի ճիշտ գործածությունը, ի դեպ, որ ունի նաև Ե. Չարենցը («արևահամ *բարն* եմ սիրում»), բնավ ճիշտ չէ փոխարինել *բառ*, որքան էլ համարվի «բանաստեղծական» (որ նշում են երբեմն հողվածագիրները), քանի որ թե՛ Սայաթ-Նովան, թե՛ Չարենցը

¹ Քոչոյանը նշում է բառի գործածությունը երկու խումբ իմաստով 1. «անագնիվ, ստոր (անձ), անգործ, ծույլ, ձրիակեր», 2. «ախոյան», որոնք հեռու են բուն իմաստից, մանավանդ երկրորդը: Ըստ Բախչինյանի՝ «անագնիվ, ստոր, բանսարկու»:

նկատի են ունեցել բառի բուն՝ նախնական իմաստը, ոչ այլ՝ նույնիսկ հետագայում այլ լեզուներում թերևս հայերենից անցած ձևը՝ նույն «պտուղ»։ այսինքն՝ «բերք, բարիք»։ (< «արդյունք»)։

Բըլքա // բըլքամ // բայքամ «գուցե, թերևս»։ «Խաղեր»-ի բառարանում բառի իմաստը ճիշտ է նշվում, որ վերջին հաշվով վերաբերում է խոսքի տիրույթին, իսկ ծագման նշանակումն առարկելի է։ Հայերենի բարբառներում ունենք *բայի, բայք(իս)* ձևեր՝ *-ի, -քի(ս)* ածանցներով (ՀԼԲԲ, 2001, 149)¹։ «Խաղեր»-ում *-քի(ս)* ածանցը գործածված է *-քա // -քամ* տարբերակներով։ Օր.՝ «*Բըլքամ* մե մարթոաստ գայ, վուր ինձ խրատե» (Ախվ., էջ 64, 105)։ «*Բըլքա* մեկ էլ դեղեն բերե՛ նըման բարեբարիդ էրնեկ» (ն. տ., 147)։ «Վի կենայ Լողմայ հեքիմըն՝ *բայքամ* դարդիս անե շարա» (ն. տ., 105)։ հմմտ. «*Չուն* աշխարս է անցողական (ն. տ.)։ «*Չունքի* ուշկ ու միտկըս իրար շաղեցիր» (ՀԽաղ., էջ 42)։

Ենթադրվում է կապ հայ. *բայ* «խոսք. ասելիք» բայարմատի հետ. հմմտ. *բամ, բան, բայ* և այլն (< *bha- «խոսել») (հմմտ. *Ջահուկյան*, 1987)։ Իսկ *-քի* մասնիկը (հմմտ. բրբռ.՝ *քա*. «*Քա՛, ի՛նչ ես ասում», քի(մի)*»։ «Գալու *քիմի* դուռը փակեց» և այլն) ունի առանձին քննության կարիք։

Գեթ (< *գայթ*), հմմտ. *գայթել, գայթակղել* և այլն։ Ախվերդյանը բացատրում է՝ «վնաս»։ *գեթ անիլ* – «վնաս տալ, դիպիլ» «վնաս չը տուղ մարդուն ասում են *անգեթ*» (էջ 59), ըստ Քոչոյանի բառարանի՝ «վնաս, հանցանք, մեղք, վատություն»։ «Եա՛ր, ես քիզ ի՛նչ *գեթ* իմ արի, նըստած իս միզնից բեդամաղ» (Ախվ., էջ 119)։ «Աջա՛ք քիզ ինչ *գեթ* իմ արի, կենում իս խըռով, աչկի լուս» (ն. տ., էջ 58)։

Հայ. *գայթ* (բրբռ.՝ *գեթ*) արմատի տարբերակն է *սայթ* (*սայթաքել* «ոտքով գայթել՝ շեղվել», (լեզվի) *սայթաքում* «(խոսքում)

վրիպել, սխալվել»)։ *սայթաքել* բառում *աք*-ը («ոտք») ևս արմատ է (հմմտ. *աքացի*, բրբռ.՝ *քացի* «(ոտքով) հարված՝ հարվածելը», հականիշ՝ *քնցի* «(ձեռքով) հարված՝ հարվածելը»)։

Գայթ (բրբռ.՝ *գեթ*) արմատի նախնական իմաստն է «թեք(վ)ել, շեղ(վ)ել, ծռ(վ)ել», որ հետագայում ձեռք է բերել նոր իմաստ (օր.՝ Սայթ-Նովայի խաղերում «շեղում. վրիպում»։ «վնաս. վնասում»)։

Հայ. *գայթ / սայթ* լծորդական արմատի ծագման հարցը մնում է ոչ վերջնական լուծում ստացած։ Ըստ Աճառյանի՝ *գայթ*-ը և *սայթաք*-ը (առանձին չունի *սայթ*-) «անստույգ բառեր են», Ջահուկյանը նախ գուգադրում է՝ «*գայթիմ (գթեմ) - սայթաքիմ*», այնուհետև *գայթ*-ը համարում է՝ «թերևս բնիկ հնդեվրոպական *yoi-t(h)- «պտտել», կամ *yok-t (*yoi-) «պտտել, ծռել» արմատից», իսկ *սայթաք*-ի դեպքում նշում է՝ «Ծագումն անհայտ է։ Արդյո՞ք *-աք*-ը առանձնացնելի է որպես «ոտք» (*Աճառեան*, 1971, 510, այլև 1979, 169. *Ջահուկյան*, 1987. նույնի, 2010, 148, 666)։ Ենթադրում ենք լծորդական արմատի բնիկ՝ հնդեվրոպական ծագման լինելը՝ անկախ նախաձևի վերականգնման հնարավորություն չունենալուց։

Խար «այրուք»։ այս բառը «Խաղեր»-ում հաճախակի է գործածվում՝ բանաստեղծի (միջնադարյան) վարդի և տխակի (բլբուլի) գեղարվեստական թեմատիկային հետևելու բերումով։ «Կարմիր վարթըն *խարին* մնաց» (Ախվ., էջ 84)։ «Վարթի նըման բաց իս էլի. / *Խարերով, / Խարերով*» (Ախվ., էջ 86)։ «Ես բլբուլ իմ, վարթըս մընաց *խարումըն*» (Ախվ., էջ 99)։ «Շատ սիրուն իս, Շախաթայի, ասողին՝ *խար* չի անի» (Ախվ., էջ 108)։ «Բլբուլ իմ՝ սիրով վարթ կանչիմ,- / Հիդ քաշվի՛ *խար*, իմ ասում» (Ախվ., էջ 141)։ «Բլբուլի պես էնդուր կու լամ՝ վարթիս *խարըն* շատացիլ է» (Ախվ., էջ 137)։ Ախվերդյանը ծանոթագրում է. «*Խար* - պրս. թշուառ, անարգ. *խար անիլ* – անարգել (?)» (ն. տ., էջ 109)։

«Խաղեր»-ի բառարանում *խաղ*-ը համարված է փոխառված (պարսկերենից), առանձնացված է տարբեր իմաստներով՝ իբրև

¹ Ավ. Իսահակյանն ունի *բայի* բառի գործածություն. «Գիշեր-ցերեկ գրկված քընից՝ / Ծով է կըտրում աչքս ճամփին, / *Բայի* դարիք մի ճամփորդից / Կարոտ յարիս խաբարն առնիմ», նաև՝ «*Բայի* Մըշու Մուլթան գորթով / Իմ մուրագս տար ինձի, յար» (հմմտ. *Իսահակյան*, 1987, 8)։

առանձին բառեր, առանձին իմաստով՝ 1. «փուշ, փշիկ (վարդի)», 2. «վարդենու որդ, միջատ», 3. «ստոր, անարգ» (Քոչ., էջ 90), վերջին տարիների ժողովածուներում՝ «փուշ» (ՀԽՏՊ., էջ 229), նաև՝ 1. «վարդի փուշ»։ 2. «վարդի վնասատու միջատ», այլև *խար անիլ* «անարգել, նվաստացնել» (ԽՏՊ., էջ 506)։ Նման առանձնացումը, մեր տպավորությամբ, ավելի շատ պայմանավորված է խոսքի համատեքստով (կոնտեքստով), քան բառի բուն իմաստով. համատեքստն, ինչ խոսք, ունի իր նշանակությունը, սակայն բուն իմաստն, առհասարակ, կարևոր է լեզվի պատմության տեսանյունից։

Այստեղ մերժելի է նախ՝ «փուշ, փշիկ (վարդի)», «վարդի փուշ» իմաստի նշանակումը, այնուհետև՝ «վարդենու որդ, միջատ», «վարդի վնասատու միջատ» նշանակումը փոխանունություն է՝ «որդի (միջատի)» պատճառած վնասի (կերածի) հետևանքով վարդի թերթերի այրվել՝ սևանալ-փշանալը» (գործողությունը) փոխարինել «որդով (միջատով)» (գործողով)»։

Խար-ը բույսի կանաչ զանգվածի ներքին այրման կամ բուսակերների վնասի հետևանքով առաջ եկող այրուքն է (այրվել-սևանալը՝ ամբողջովին կամ մասամբ)։ Այնպես որ Մայթ-նովայի «Խաղեր»-ում վարդի և սոխակի (բլբուլի) թեմայի մեջ (սիրո) *ջերմություն*-ը փոխաբերացումն է *խար*-ով, *խար լինիլ*-ով։ Ինչ վերաբերում է մյուս՝ «ստոր, անարգ» կամ «անարգել, նվաստացնել» իմաստային տարբերությանը, ապա այն ավելի քան փոխաբերություն է (անցում՝ բուսական աշխարհ > կենդանական աշխարհ)։ «Խաղեր»-ում բառի նման փոխաբերացումն ու անցումը գեղարվեստի յուրահատկություն են։

Հայ. *խար*- արմատը, ըստ Գ. Ջահուկյանի վերականգնումների (որոշ հարցականով), ծագում է հե. *kħere-? [*ker(ə)] արմատից, որից են՝ *խարել* «այրել, դաղել», (բրբռ.) *խարկել* (< *խարակել* «բովով այրել՝ բովել»), *խարոյկ* «կրակ» (հմմտ. *պարոյկ* «ոլորակ»), *խարշել* (< *kħrs-) «այրել, վառել». արմատի տարբերակ է *խոր*-

որից՝ *խորովել* (< *khor-) «կրակի վրա այրել, խորովել» (Ջահուկյան, 1987, 132)¹։ Իսկ հեղինակի բառարանում նշվում է հետևյալը. «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ *khr- (*kħer-, *kħor-) *ker- «այրել, վառել, ջեռուցել» արմատից. հմմտ. հիսլ. *hyrr* «կրակ», հվգերմ. *herd* «օջախ», լիտվ. *kūrti* «ջեռուցել, տաքացնել», *kārštas* «տաք, ջերմ, կիզիչ», լատ. *cremō* «այրել»։ - ԱՃ, ՀԱԲ, 2, 338։ Տե՛ս նաև *խարշել, խորով*» (Ջահուկյան, 2010, 320)։

Այնինչ, Աճառյանը ավելի վաղ հայ. *խար*- արմատը համարել էր «բնիկ հայ բառ՝ հնիս. *qer-, qor-, qr- «այրել» արմատից»՝ նրանից կազմված *խարակել, խարան* «երկաթով դաղած. վերք», *խարշել* («ջրով կրակի վրա եփել», արմատի *խոր*- տարբերակ՝ *խորովել*)՝ նկատի ունենալով ոչ միայն բալթիկ-սլավոնական, այլև մի շարք այլ լեզուներով գուգահեռներ (Աճառյան, 1973, 338-339, 411)։

Հենչաք // *հենչանք* բառի համար ենթադրում ենք «մահ. վախճան», փոխաբերաբար՝ «վերջ. ի վերջո» իմաստային անցում. բառը գործածվել է բազմիցս. «*Հենչաք* ըլի՝ կենսա բափով, նազանի» (էջ 117). «*Հենչաք* ըլի, եա՛ր, գաս իմ գերեզմանին, / Ածիս խուղըն վըրէս ափով նազանի՛» (Ախվ., էջ 118). «*Հենչաք* ըլի՝ ուրախ կենաս. Մայեթ-Նօվէն առնէ դաղէն» (ս. տ., էջ 128). «*Հենչաք* ըլի, դու վրես լաս, մազըղ շաղ տալով, աչքի լուս» (ԽՏՊ., էջ 39)։

Ախվերդյանը չունի *հենչաք* բառի բացատրությունը, չունի նաև Բախչիկյանը՝ իր ծանոթագրություններում, իսկ բառացանկերում, ոչ անկախ Քոչոյանի բառարանից, նշում է՝ «*Հենչաք* – միայն, այնքան։ *Հենչաք ըլի* – միայն թե, այնքան որ» (ՀԽՏՊ., էջ 230,

¹ Այստեղ արմատը տրվում է հարցականով, քանի որ հաջորդ՝ էջ 175-ում նշվում է, որ «բալթիկ-սլավոնական համապատասխան բառերի հետ *խարել*-ը միանում է ձայնդարձի ստորին աստիճանով... *խարշել*-ը *-s- անականով... Այս բոլոր դեպքերում գուգահեռներ չունի հայ. *խ*-ն, ուստի մենք հակված ենք *խարել*, *խարշել* և *խորովել* բառերի համար ենթադրելու իրանական ծագում՝ հավանաբար *sxel- «ծխալ, այրել» արմատից, թեև իրանական համապատասխան ձևերը չեն պահպանվել»։ Մեջբերված դիտարկումը վիճելի է (որ առանձին թեմա է)։

Իսաղ., էջ 508). երկրորդ դեպքում բառը բերվում է տարբերակային փակագրությամբ՝ *հենչա(ս)ք*, այն է՝ *հենչաք // հենչանք* (տե՛ս էջ 508):

Բառի ծագման մասին բնագրային առումով որևէ կարծիք չի հայտնվում, այն գտնում ենք նաև հայերենի տարբեր բառարաններում. սակայն կարելի է մտածել, որ բառի արմատն է *հենչ-*, ածանցը՝ *-ա(ս)ք*:

Նախ՝ ածանցի մասին. հմմտ. *թան-աք* «թանաք, մեղան», *սլլ-աք* «նետ, աշտե», *ցամ-աք* «չոր, չորություն», *փան-աք* «տկար, խեղճ», նաև *արմատաքի* «արմատով հանդերձ» և այլն: Ըստ Աճառյանի *թանաք* բառի ծագումն անհայտ է, *ցամաք*-ը՝ փոխառյալ է. մյուս երկուսը բնիկ են՝ *սլաք* (< հե. *k'ul- «սուր, սրածայր»), *փա-նաք* (< հե. *sphn «կարոտ, պակասավոր լինել»), *արմատաքի*-ն նույնպես (< *արմ.* հե. *r- հմմտ. հուն. ὀρμενος «ցողուն, ընձյուղ, ծիլ») (*Աճառեան*, 1971, 326-327, այլև 1973, 151. 1979, 224, 448, 479): Ըստ Ջահուկյանի՝ *թանաք*-ը «հավանաբար կազմված է *թանալ* բա-յից, որ հնդեվրոպական ծագում ունի», *ցամաք*-ը՝ «թերևս բնիկ հնդեվրոպական՝ *ksāma (*ksā) «այրել» արմատից», *սլաք*-ը՝ «բնիկ հնդեվրոպական՝ *k'u-l- (*k'u-) «սուր, սրածայր» արմատից», *փա-նաք(ի)*-ն (Աճառյանի հետևությամբ) «բնիկ հնդեվրոպական՝ *sphen- (*sphen-) «կարոտ, պակասավոր լինել», իսկ *արմատաքի*-ն՝ ինչպես Աճառյանի մոտ է (*Ջահուկյան*, 1987, 133, 232. նույնի, 2010, 93, 257, 682, 741, 758):

Հայ. *հենչ-* արմատը, հավանաբար, ծագում է հնդեվրոպական տարբերակային *Henk^[h]- / Hnek^[h]- «մահ», «մահտարածամ», «հարկադրանք», «ճակատագիր» արմատից, որ ժառանգել են մի շարք ցեղակից լեզուներ. հմմտ. իտեթ. henkan, (սեռ. հոլ.) hinganaš «ժանտախտ», «մահտարածամ», «մահացում», թոխ. Ա nāk- «կորչել». «մեռնել». թոխ. Բ nāk-, nek- «ոչնչանալ, մեռնել», հինդկ. nāsyaṭi «մեռնում է, անհետանում է», ավեստ. nasyeiti, (սեռ. հոլ.) nas- «անհետանում է, մեռնում է», հուն. νέκω, (սեռ. հոլ.) νεκρός

«դիակ», լատ. nex (necis) «մահ», «սպանություն», բրետոն. negein «սպանում է» [Դ.-Մե., էջ 476, 822]: Արմատը գրավոր աղբյուրներում չի հանդիպում, ուստի ստուգաբանական բառարանները չունեն, սակայն ունեն բարբառները, որ տեղ է գտել նաև Սայաթ-Նովայի խաղերում:

Այստեղ՝ հե. *k^{lh} > հայ. *ք* անցումը հնարավոր է, իսկ հայ. (բրբո.) *ք / չ* տարբերակումը սովորական է. հմմտ. պայթականի վերածում կիսաշփականի՝ *քույր / չիրա. քաչալ // չաճալ. մոքիր / մոչիր, գինի > ջինի, գել > ջել* և այլն (Աշտ., Նորատուս և այլն), պայթաշփական սովականի վերածում շականի՝ *ծիրան > ճիրան, ծնող > ճնող* (Ալշ. և այլն):

Սուք. «Խաղեր»-ի բառարանում նշվում է երկու՝ 1. Իբրև գոյական՝ «Լաց ու կոծ, տխրություն մեկի մահվան կամ աղետի պատճառով» և 2. Իբրև ածական «Սգո նշան արտահայտող, սգո նշան կրող» իմաստներով (Բոչ., էջ 168): Առաջինի դեպքում բերվում է «Վուր տիղ հարսնիք, վուր տիղըն սուք, վուր տիղ սոյբաթ խաղ է ըլում», որում *սուք*-ի նման իմաստով բացատրությունը կասկած է հարուցում. թյուրիմացության ամենացայտուն պատճառը *հարսնիք / սուք* թվարկումն է, որը ենթադրվել է իբրև (բառաբերականական տերմինով) հականշություն, սակայն դա այդպես չէ. ունենք ոչ թե հականշություն, այլ հոմանշություն:

Այդ օրինակը բերենք ավելի մեծ հատվածով. «Վուր տիղ *հարսնիք*, վուր տիղըն *սուք*, վուր տիղ սոյբաթ *խաղ* է ըլում. // Վուր տիղ *ժամ*, վուր տիղ *պատարագ*, վուր տիղ սիրով *տաղ* է ըլում» (Ախ., էջ 132. ունի՝ *հասնիք*, առանց *ր*-ի, թերևս տպ. վրիպակ է. ընդգծումները մերն են – Վ.Հ.): Հատվածի առաջին տողում թվարկվում են՝ *հարսնիք, սուք* և (սոյբաթ) *խաղ*, երկրորդում՝ *ժամ, պատարագ* և *տաղ*: Առաջին տողի՝ *հարսնիք* «հարսանիք» և (սոյբաթ) *խաղ* «քաղցր գրույց. խոսակցություն», «զվարճանք. ուրախ երգ» երևույթների կողքին ասվում է *սուք* (ըստ ընդունված բացատրության), որն անհամատեղելի է, մանավանդ որ երկրորդ տողում

հոգևոր երևույթների մասին է ասվում՝ *ժամ* «եկեղեցի, սրբատեղի», *պատարագ* «սրբասացություն» և (սիրով) *տաղ* «(եկեղեցական) երգ, երգեցողություն»: Այլ կերպ ասած՝ առկա է մեկում աշխարհիկ, իսկ մյուսում՝ հակառակ, հոգևոր երևույթ: *Տաղ*-ը հոգևոր միջավայրի երգեցողություն է, գոնե ըստ Մայաթ-Նովայի. հմմտ. «Մեջլիսներու *խաղըն* դուն իս, / Վանքերումըն *տաղըն* դուն իս» (Խաղ., էջ 36): Այստեղ *տաղ* բառը գործածվել է «շքեղություն. հանդիսավորություն. ուրախություն» իմաստով, որը բարբառներում հնչույթային-արտասանական տարբերակ է *շուք* «ստվեր» («լուսավոր, պայծառ») բառի (բնորոշ նաև Թբիլիսիի բարբառի բաղաձայնական համակարգին), այն առանձին է մյուս՝ *տուգ* (բրբռ.՝ *տուք*) «վիշտ, տխրություն» բառից, և ըստ այսմ իբրև համանուններ:

Առհասարակ հայտնի է, որ իրականության երկյակ («դուալ») հակադրությունը փոխաբերացման (վիպական խոսքի՝ առասպել, լեգենդ, բանաստեղծություն և այլն) միջոցներից մեկն է, փոխանունության և փոխըմբռնման հետ միասին ոճական առումով ծառայում են ասելիքի («ասույթի») այլաբերական ձևակերպմանը: Եվ ըստ այսմ, դիպաշարի նման հակադրությից (անտիթեզից) ելնելով՝ կարելի է մտածել, որ այդ համատեքստում (կոնտեքստում) (բրբռ. *տուք* բառը բոլորովին տեղին չէ, եթե այն հասկանալու ենք «վիշտ, տխրություն» իմաստով (հմմտ. *տուգ ու շիվան* «սգալի՝ անելանելի վիճակում հայտնված»): Եվ այս նկատառումով էլ կարծում ենք, որ բնագրում (բրբռ.) *տուք* բառը առանձին է, բոլորովին այլ՝ «շքեղություն, պայծառություն» իմաստի կրող է՝ իբրև համանուն գրական հայերենի *տուգ* «վիշտ, տխրություն» (բրբռ. *տուք*, Թբիլիսիի բարբառում նույնպես), այլև *շուք* «շքեղություն. պայծառ, փայլ» բառի (ՀԼԲԲ, 2008, 402):

Ըստ Հ. Աճառյանի՝ հայ. *տուգ* «տուգ» բառը ծագում է «պիլ. [= պահլավերեն] *sīg հոմանիշ ձևից, որ ավանդված չէ, կա միայն պր. sōg, sōk (արդի հնչումով՝ sīg «տուգ, տխրություն», սանս. cōka «խարույկ, բոց, չարչարանք, ցավ, վիշտ, տուգ», այլև ոչ անկախ

Հյուբշմանից, «այս ձևը պիտի տար հայ. **տոյկ* կամ **տուկ*» (Աճառյան, 1979, 248): Աճառյանը միաժամանակ նշում է, որ «Հիշյալ բառերը ծագում են հնիս. k'ueq- «լուսավորել, պայծառ, սպիտակ լինել, կրակով շիկացնել» արմատից, այլև ոչ անկախ Բերնեկերից (հմմտ. ռուս. гореть «այրել» և оре «վիշտ, տառապանք, ափսոս»)՝ գրում է, որ «Բնիկ հայերեն նույն արմատից պիտի ունենայինք **տուք* կամ **տոյք*», այնուհետև, բառի ստուգաբանության պատմության շարադրանքում բերում է Հյուբշմանի կարծիքը՝ «համարում է բնիկ հայ. բառ՝ հնիս. k'ukō.- ձևից»՝ գտնելով, որ արմատի «բուն նախնական իմաստը, որ է «այրել», չկա հայերենի մեջ» (Ա. տ.): Նկատենք, որ Աճառյանն ինքը «արիական» ձևերի իմաստների մեջ «այրել» իմաստը չի դնում, սակայն նշում է նախաձևի իմաստների մեջ: Մայաթ-Նովայի հիշյալ խաղերում *տուք*-ն ունի այդ իմաստը՝ իբրև «լույս, պայծառություն» (նախնականը՝ «կրակ»). բարբառում գոյություն ունեցող փաստը կարևոր է գրականի մեկնաբանման դեպքում:

Տվյալ դեպքում գործ ունենք հայ. *տուք* / *շուք* համանուն բառերի հետ, որն անհավանական չէ, մանավանդ եթե հաշվի ենք առնում նման համանունությունը ոչ միայն գրական հայերենում, այլև վերջինիս բարբառներում. հմմտ. *սեամ* > *սեմ* «շեմք» / շեմ (սույնը). օրինակ՝ Գ. Մահարու վեպը՝ («Երիտասարդության սեմին»), շունչ // (բրբռ.) սունչ «շունչ». Ղրբ., Հմշ., Մուշ և այլն] (ՀԼԲԲ, 2010, 407):

Հայերենում, ինչպես նաև այլ լեզուներում առհասարակ գոյություն ունի *շ/ս* տարբերակայնություն: «Խաղեր»-ում կա *ս* / *շ* հնչյունական տարբերակման օրինակ. «Դաստամազիտ թիլի մեջըն մե *շաղս* մարջան է քաշած» (Խաղ., էջ 41). հմմտ. հայ. բրբռ. *սաղս* «լրիվ. ամբողջը». իսկ *շաղս*-ն բառարանում համարված է փոխառյալ՝ «շար, շարան» (հմմտ. Խաղ., էջ 511), որ թերևս տարակուսելի լինի, եթե ոչ՝ հայ. (բրբռ.) *սաղս*-ն էլ է նշանակում՝ «շար, շարան»¹:

¹ Նկատենք նաև, որ ժամանակին, Զ. Պատկանյանը Մուշի բարբառում բերում է *տուկել* (*գուգել* ?) «строить» (իմա՝ «կառուցել, կերտել»), որը ոչ այլ ինչ է,

Այսպես նաև՝ *շուք* «ստվեր, ծածկոց, հովանի», (բրբռ. *շվաք*), այլև «պատիվ փառք, վեհություն» (հմմտ. *շքալ* «պանծալ», *շքեղ* «պայծառ, լուսավոր. լույս», *սուքար* «հովանոց» և այլն) (ԲՀ, 1975, 292. *Ջահուկյան*, 2010, 690-691): Հմմտ. *շուվաք* «ստվեր». «Աշխարհիս *շուվաք* իս անում՝ սալբ ու չինար իս, գովելի» (Ախվ., էջ 31):

Ըստ Աճառյանի՝ *շուք* «ստուեր, հովանի» անհայտ ծագման բառ է, իսկ ըստ Ջահուկյանի՝ ծագում է հե. *k'ūōko- [*k'eu-] «լուսավորել, լուսավոր» արմատից. հմմտ. հինդկ. scati «լուսավորում է, փայլ է տալիս, վառվում է» čukra-, այլև čukla- «լուսավոր, սպիտակ. մաքուր» (հմմտ. հայ. *սուքար* «հովանոց». Եր. Մեղրեցի, էջ 292) (*Աճառեան*, 1975, 541. *Ջահուկյան*, 1987, 57, 132. նույնի, 2010, 595)¹: Այս համատեքստում ուշադրություն է գրավում *u / 2* տարբերակումը. հմմտ. *սուսաի-* (*սուսաիել* «սոսաի հանել՝ առաջացնել, շնկշնկալ, սվսվալ», *սուսաիյուն* «սոսավելու ձայն. խոսափյուն» և այլն) և *շոշաի-* (*շոշաիել* «ձեռքը քսելով՝ դիպցնելով իմանալ՝ կռահել. ձեռք տալ, դիպչել»)։ Աճառյանը կարծում է, որ ընդհանուր արմատն է *սաի / շաի* (հմմտ. *խարխաի*, *թարթաի*, *գարգաի* և այլն) (*Աճառեան*, 1977, 547, այլև 1979, 290-291): Գ. Ջահուկյանը չի անդրադառնում *սուսաի-* // *շոշաի-*, այլև *սուսաիին*, *սուսաիին*, *շոշաիել* // *շոշաիել* բառերին, որն առանձին հետաքրքրության հարց է (*Ջահուկյան*, 1987, 687, 699. այլև 2010, 592, 597):

բ) *Օտարլեզվյան (փոխառյալ) բառեր*

Այս կարգի բառերի գործածությունը «Խաղեր»-ում մեծ թիվ է կազմում: Դրանք լավագույնս քննված են և մեկնաբանված: Սակայն մի քանիսի վերաբերյալ ունենք նկատառումներ:

Ասլ (< արաբ. 'asl, asl) «կիրթ, բարեկիրթ, ազնիվ». այս իմաստն է նշում Բռչոյանը. հականիշը՝ *բեղասլ*. ըստ Բախչինյանի՝

Եթե ոչ *շուք* «շքեղ, կառուցիկ» գրականի բարբառային տարբերակը (տե՛ս *Патка-нов*, 1875, էջ 69):

¹ Նշվում է նաև բառի «ստվեր» իմաստը (հարցականով), որն այլ բան է, քան իմաստային բաղադրյալ (կոնտամինացիայի) արդյունք՝ «լույս» - «ստվեր» հարաբերակցմամբ:

ասրլ «ազնիվ, ազնվացեղ, բարեկիրթ» (ՀԽաղ., էջ 224), նաև *ասրլ* «ծագում, հիմք. բարեկիրթ, ազնիվ» (Խաղ., էջ 501). «*Բեղասրլն՝ ասրլ* չի դառնա, թուօվ չի սիպտակի սիվըն» (Ախվ., էջ 131) «*Բեղասրլն* վուր խօսեցնիս. լալ անիլըն ինչի՞ն է շահ» (ն. տ., էջ 143):

Այս բառի հետ կապված ունենք երկու նկատառում:

Նախ՝ նույն ժամանակաշրջանի հեղինակ Սիմեոն կաթողիկոս Երևանցու «Ջամբո» գրքում հանդիպում ենք *ասլ* (արաբ., պրս. asl, թուրք. asil) բառի գործածությունների (Վաղարշապատ, 1873, էջ 125, 242 և այլն)՝ «բուն, հիմնական, հարազատ, իսկական (օրինակ՝ ինքնօրինակ)» իմաստներով, որ Սայաթ-Նովայի հիշյալ խաղի իմաստի նշանակումներից տարբեր են:

Այնուհետև, այստեղ ուշադրության է գրավում այն, որ *ասլ*-ը հիշեցնում է հայերենի որոշ բարբառներում (Մուշ., Ալշ.) *հասլ* «մշակելը, կոկելը», որից ունենք՝ *հասլել* «մշակել. կոկել», օրինակ՝ *կաշին հասլել* «մշակել. ձեռքով տրորելով, ծալծելով փափկեցնել՝ նրբացնել», հատկապես տրեխ կարելու համար: Այս համատեքստում կարելի է մտածել, որ վերը նշված «կիրթ, բարեկիրթ, ազնիվ» իմաստը նույնն է, ինչ «մշակել. կոկել» իմաստը, կամ մոտ է այդ իմաստին: Եվ եթե այս ենթադրությունը ընդունելի է, ապա գործ ունենք հիշյալ բարբառների հետ Թբիլիսի բարբառի բառային-իմաստային առնչության օրինակի հետ:

Բաղամ. Ախվերդյանը բառը տալիս է *բ*-ով, իբրև պրսկ. «հրամանագիր արքայի». «Թեգուգ *բաղամ* գալ Շահեմէն» (Ախվ., էջ 51), հետագայում բերվում է իբրև արաբ. (ragm)՝ *բաղամ* «հրամանագիր» հրովարտակ», (Բռչ., էջ 180). *բաղամ* «հրամանագիր» (ՀԽաղ, էջ 236), այլև «հրաման, հրամանագիր» (Խաղ., էջ 513):

Այս բառն ունի Սիմ. Երևանցին՝ *բաղամ*, «Ջամբո» գրքում, նույնն է, ինչ հայ. *բաղամ*, որ ըստ Աճառյանի նշանակում է «ընթացք», ունի միայն Երեմիա Մեղրեցու բառարանը (ԲՀ, 1975, էջ 280): Սակայն Մեղրեցու բառարանի քննական բնագրի ծանոթագրության մեջ նշվում է, որ «Բառք երբայականում» *բաղամ* է (ն. տ.,

էջ 427): Աճառյանը չի մեկնաբանում կամ ստուգաբանում բառը, Գ. Ջահուկյանը գրում է. «Ռ-սքան» «ընթացք» (ԲՀ): Ծագումն անհայտ է» (ՀՍԲ, 2010, էջ 657) (Աճառեան, 1979, 143. Ջահուկյան, 2010, 637): Բառը հայերենում փոխառություն է՝ արաբ. raṣam (< եբր. raqam) «ընթացք», «հրամանագիր, (թագավորական) հրովարտակ, (պաշտոնական) գրություն», որի ամենանախնական իմաստն է «ընթացք» (հմմտ. Միս. Երևանցի, «Ջամբո», 1873, էջ 20, ծան. 2, այլև 2003, էջ 29, 413):

Եզրակացություններ

1. Սայթ-Նովայի խաղերում նկատում ենք բառեր, որոնք բացահայտ խոսակցական-բարբառային են, որոնք մեկնաբանվել են կա՛մ ստույգ, կա՛մ իմաստի մոտավոր մատնանշումով:

2. Նման բառերին վերստին անդրադառնալն ունի այն կարեվորությունը, որ կատարվում է լրացում կամ ճշգրտում իմաստաբանորեն և ստուգաբանորեն:

3. Խոսակցական-բարբառային բնույթի այդ բառերի մի զգալի մասը բնիկ է, ունի հնդեվրոպական ծագում, մի քանիսը՝ փոխառյալ:

Նոր բառեր «Յայսմաուրք» ժողովածուի էջերում

Ներածություն

«Յայսմաուրք» ժողովածուն համեմատաբար ուշ ժամանակների գիրք է, որի նյութերը բովանդակության բերումով հին են, իսկ լեզվի առումով ներկայանում են նոր ժամանակներին բնորոշ գծերով: Նրանում, այնուամենայնիվ, կան բառային նորակազմություններ, մասամբ՝ բառի նոր իմաստով գործածություններ: Նման միավորներին անդրադառնալը վերաբերում է նոր շրջանի հայերենի պատմությանը:

1. Ակնարկ ժողովածուի բնագրի և լեզվի մասին

Հայ Առաքելական եկեղեցու ծիսական հինգ կարևոր ժողովածուներից է «Յայսմաուրք»-ը: Նրանում տեղ են գտել տարբեր դարերում գրված վարքեր ու հիշատակություններ, ինչպես նաև թարգմանություններ, որոնք ավելի հին են համարվում: Ժողովածուն կազմող հեղինակները նույնպես հայտնի են տարբեր ժամանակներից (Տեր Իսրայել, Կիրակոս վրդ. Արևելցի, Գրիգոր Ծերենց Խլաթեցի և ուրիշներ):

Ըստ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (հ. 1, էջ 16) աշխատության հեղինակների՝ ժողովածուի «շարադրության ոճը (իմա՛ լեզուն - Վ.Հ.) ամբողջովին պարզ է և հետագա (դարերի լեզվին բնորոշ)», այլև ժողովածուի նյութերը «բառացի ընդօրինակված (են) միմյանցից՝ ինչ-ինչ փոփոխմամբ, կրճատումով և հավելումով»:

«Յայսմաուրք»-ի Սրբոց թարգմանչաց վերաբերյալ հատվածներում կան բառեր, որոնք չեն հանդիպում «Նոր հայկազյան բառարանի» (ՆՀԲ-ի), ինչպես նաև նրա հիման վրա կազմված և նրան հավելյալ բառահոդվածներ պարունակող «Առձեռն բառարան»-ի (ԱԲ-ի) էջերում (տե՛ս նաև *Համբարձումյան*, 1998, 66-72):

Այսպես, «Յայսմաուրք»-ում Սրբոց թարգմանչաց նվիրված գործերը ընդամենը հինգն են՝ ա) «Յիշատակ վարուց մահուան Սրբոյն Հայապետին Սահակայ Պարթևին մերոյ» (Նաուսարդ Լ, սեպտեմբեր Թ, էջ 73-76), բ) «Յիշատակ Սրբոց թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ և աշակերտաց նոցա» (Հոռի Ը, սեպտեմբեր ԺԷ, էջ 93-95), գ) «Գիտ գրոյն հայոց, որ ի Բալու» (Տրէ ԺԷ, նոյեմբեր ԻԵ, էջ 269-271), դ) «Յիշատակ Սուրբ Հօրն մերոյ վարդապետին Մեսրոպայ» (Մեհեկի ԺԳ, փետրվար, ԺԹ, էջ 499-501) և ե) «Վարք և յիշատակ Սրբոյն Սահակայ» (Մարերի ԻԲ, մայիսի ԻԹ, էջ 778-779):

Նկատենք նաև, որ Հ. Աճառյանը ժամանակին «Հայոց գրերը» աշխատության մեջ սրանցից նշում է միայն չորսը, երբ խոսում է հայոց գրերին առնչվող հին աղբյուրների շուրջ, իբրև 25-րդ աղբ-

յուր հիշատակում է «Յայսմաուրք» ժողովածուն, որում իր նշած չորս գործերին ավելացնում է նաև «Վարք և յիշատակ Սուրբ Հայրապետին մերոյ Մաշտոց վարդապետին» (Սահմի Դ, հոկտեմբեր ԺԳ), այն է՝ Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսին վերաբերող հատվածը:

«Յայսմաուրք»-ի հիշյալ հինգ հատվածներից մեր քաղած բառերը մեկ տասնյակ են: Եվ իբրև ընդհանուր դիտողություն, հարկ ենք համարում նշելու հետևյալը: Նախ՝ այդ բառերի մի մասը, ինչպես վերը նշեցինք, չենք գտնում ՆՀԲ-ում և ԱԲ-ում, որն ինքնին ուշագրավ է: Երկրորդ՝ կան այնպիսի բառեր, որոնք բացակայում են հիշյալ բառարաններից առաջինում, սակայն հասկանալի պատճառներով առկա են երկրորդում, այսինքն՝ վերջինիս մեջ դրանք հավելում կամ լրացում են: Երրորդ՝ այդ բառերից մեկ-երկուսը ՆՀԲ-ում վկայակոչվում են կա՛մ հետին հեղինակների, կա՛մ միայն «Յայսմաուրք»-ի տվյալների հիման վրա: Եվ չորրորդ՝ որոշ բառերի դեպքում գործ ունենք բառիմաստային նոր կիրառությունների հետ, որպիսին չեն մատնանշվում ՆՀԲ-ում:

Այդ և նման կարգի բառերը նորություն են ոչ թե առհասարակ, այլ այն նկատառումով, որ ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել գրաբարի ամենաընդարձակ բառարաններից (թեև դրանց մի մասը գտնում ենք, օրինակ, ԱԲ-ում): Ուստի որոշակի պայմանականությամբ է, որ դրանք համարում ենք նոր կամ նորակազմ, հայոց լեզվի բառապաշարի ընդհանուր պատմության տեսանկյունից ուշադրության արժանի:

Իսկ հանգամանքն այն է, որ դրանք ժամանակին գործածական են եղել կամ կազմվել են որևէ առիթով, ընդ որում՝ տարբեր (այս դեպքում՝ «Յայսմաուրք»-ի հիշյալ հատվածների) հեղինակների ձեռքով: Եվ այդ ժամանակից էլ սկսած դրանք հայտնի են, սակայն թե՛ ՆՀԲ-ի (մասամբ՝ ԱԲ-ի) հեղինակների և թե՛ հետագա հայերենագետների կողմից չեն արժանացել որևէ ուշադրության՝ հատկապես հայոց լեզվի բառապաշարի պատմության տեսակե-

տից: Եվ ըստ այդմ՝ նման իրողությունները հավաստիորեն պիտի կոչվեն չբառարանագրված, իսկ պայմանականորեն՝ նորահայտ բառեր: Ի դեպ՝ եթե նույնիսկ հետազոտողներն այդ բառերին ուզենային անդրադառնալ նաև նախկինում, ապա այդ պարագայում ևս դրանք պիտի կոչվեին նորահայտ (նեղ իմաստով՝ նոր) բառեր, իսկ ավելի հետագա ուսումնասիրությունների համար դրանք արդեն կլինեին ոչ թե նորահայտ, այլ բառագիտորեն ուսումնասիրված:

Այնուհետև, հայ եկեղեցական գրականության բառապաշարի տեսակետից այդ կարգի բառերի բնագրային վերհանումն այսօր բավականին կարևոր է, և առաջիկայում ևս կարելի է քննության առնել «Յայսմաուրք»-ի ողջ բառամթերքը: Իսկ սա արժեքավոր կլինի նրանով, որ որոշակի գաղափար կունենանք այն մասին, թե ինչ բառեր են կազմվելիս եղել ժամանակի հոգևոր և մտավոր պատկերացումների ստույգ անվանման նպատակով: Եվ առհասարակ գրաբար հայերենով մեզ հասած հոգևոր գրականության յուրաքանչյուր բառ, ամեն մի նախադասություն պիտի հասկանալի լինի ամբողջովին, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանվի ըստ էության և ոչ թե ըստ երևույթին, այսինքն՝ մոտավորապես:

2. Նկատված բառերի վերլուծություն

ա) *Անսապատաուր* («անսապատական, անսապատի բնակիչ»): Ածանցավոր այս բառը (*անսապատ-աուր*) գտնում ենք թե՛ ՆՀԲ-ում (հ. 1, էջ 110) և թե՛ ԱԲ-ում (էջ 42), սակայն միայն մեկ՝ Յհ. կթ., այն է՝ Մաշտոց Եղիվարդեցու աշակերտ Հովհաննես կաթողիկոսի (Թդդ.) «Պատմագրութիւն» երկի վկայակոչումով. «Յաշխարհի գոլով՝ և իբրև *զանսապատաուրս* ընդ կարգ աշխարհի անցանէր»: Բառը կիրառված ենք գտնում նաև «Յայսմաուրք»-ի մեջ. «Եւ նոքօք հանապազորդ պաշտօնն իւր կատարէր առաւել, քան *զանսապատաուրսն*» (Յայսմաու., էջ 74, նաև 298 և այլն): Սա լրացնում է ՆՀԲ-ի բնագրային վկայության թիվը, և առայժմ չենք կարող ասել, թե այս երկու վկայությունից որն է ժամանակով ավելի նախնական: Ի դեպ՝ այս հատվածը բավականին մոտ է Մովսես Խորենացու

հետևյալ նախադասությանը. «Որովք մշտենջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնն, որպէս զայնս, որք յանապատսն էին» (Խոր., էջ 320):

Անապատաւոր բառի կազմությունը միանգամայն պարզ է. այն մակբայ է, որ հոմանիշ է *անապատական* ածականին, որոնք և կարող էին գործածվել իբրև գոյական՝ նշելու «անապատի բնակիչ, ճգնավոր. անապատում ապրող ճգնակյաց անձ, նվիրյալ» իմաստները:

բ) *Աստուածանկար* («աստծու պատկերն ունեցող»): Այս բառը չենք գտնում ՆՀԲ-ում (հ. 1, էջ 327), սակայն բերվում է ԱԲ-ում (էջ 125), որտեղ նշվում է, որ բառն ունի «աստծով նկարված» իմաստը: Եվ քանի որ ԱԲ-ն առհասարակ չի տալիս որևէ բառի, ինչպես և *աստուածանկար*-ի համար բնագրային վկայություն, ուստի այն, կարծում ենք, այսուհետև պիտի վկայակոչվի «Յայսմաւորք»-ի հիշյալ հատվածի հիման վրա: Իսկ այստեղ բառը գործածված է իբրև Էջմիածնի կաթողիկեի բնութագրիչ բառ. երբ հարց է ծագում, թե Սուրբ Մեսրոպին որտեղ պիտի հուղարկավորեն, վեճ է լինում. «Եւ կէսքն ասէին՝ թաղել զնա ի նմին քաղաքի ընդ հովանեաւ հոյակապ և *աստուածանկար* սուրբ Գրիգորաշէն կաթողիկէ Էջմիածնին» (Յայսմաւ., էջ 237):

Բառը կազմությամբ բարդ է՝ բաղադրված *աստուած* և *նկար* («տեսիլ. պատկեր, կերպ և այլն») բառերով: Բառակազմությունը սովորական է, իսկ իմաստը՝ լրիվ ընկալելի (հմմտ. *աստուածապատկեր, աստուածակերպ, աստուածատեսիլ* և այլն): Ուստի «Յայսմաւորք»-ից բերված հատվածի հեղինակն իրավամբ ազատ է եղել նոր բառաձև կերտելու գործում՝ հիշյալ բառափունջը իմաստաբանորեն համալրելով ևս մեկ բառով:

գ) *Արիւնամերձ* («արենակից, ազգական»): Կազմությամբ բարդ այս բառը (*արիւն-ա-մերձ*) չունեն ՆՀԲ-ն և ԱԲ-ն, իսկ իմաստով միանգամայն հասկանալի է. «Եւ ասաց զմտերմութիւնն իւր, զոր ունէր առ սուրբն վասն ազգականութեանն և *արիւնամերձ* գո-

լոյն» (Յայսմաւ., էջ 74): Բառակազմորեն այդ բառին մոտ է *արիւնակից* («ազգակից») բառը, և դրանք լայն առումով էլ նույն իմաստն ունեն: Ուստի «Յայսմաւորք»-ի հիշյալ հեղինակին գրեթե ոչինչ չի խանգարել նոր բառ կազմելու համար:

դ) *Գրիգորաշէն* («Ս.Գրիգորի շինած՝ կառուցած, հիմնած»): Այս բառը գործածված ենք գտնում նույն հատվածում, ինչ *աստուածանկար* բառը՝ հանդես գալով իբրև *Ս. Էջմիածին* բառի լրացում. «Եւ կէսքն ասէին՝ թաղել զնա ի նմին քաղաքի ընդ հովանեաւ հոյակապ և աստուածապատկեր սուրբ Գրիգորաշէն կաթողիկէ Էջմիածնին» (Յայսմաւ., էջ 237):

Բառը չենք գտնում ՆՀԲ-ում և ԱԲ-ում: Այն բաղադրված է գոյականական և բայական բաղադրիչներով՝ արտահայտելու որոշչային քերականական իմաստ՝ իբրև լրացում *Ս. Էջմիածին* հատուկ անվան:

ե) *Եկեղեցի* (< *յեկեղեցին*). այս գրչությամբ բառը «Յայսմաւորք» ժողովածուի հետևյալ հատվածում ունի մի տեսակ անհասկանալի կիրառություն. «Եւ նախ յեկեղեցին զՀոռոմ գիրն ի հայերէն այբուբենն, և ապա զթերին լցին աստուածատուր շնորհօքն» (Յայսմաւ., էջ 207): Նախադասության բովանդակությունը միանգամայն պարզ է, եթե բացառենք *յեկեղեցին* բառաձևը, որը դժվարություն է հարուցում միտքը ճիշտ հասկանալու, մանավանդ որ նախադասության առաջին մասում բացակայում է ստորոգյալը:

Հարցի լուծման նպատակով թերևս կարելի է առաջ քաշել երկու վարկած. ա) *յեկեղեցին* բառի գրչությունը ճիշտ է, և այն պետք է հասկանալ ինչ-որ (մի արտասովոր, նոր) իմաստով, բ) առկա է գրչագրական կամ տպագրական սխալ, որը պետք է կա՛մ ճշգրտել համապատասխանող այլ տվյալներով, կա՛մ կռահել ճիշտ ձևն ըստ բնագրային հատվածի:

Նախ՝ առաջին վարկածի մասին:

Հայտնի է (ըստ ՆՀԲ-ի) *եկեղեցի* [< հուն. *ἐκκλησία* (էկկլիսիա) «արտակոչություն, հրավեր հավաքման»] բառի առնվազն

երեք իմաստ. 1) «կոչ, կոչարան. ժողով, ժողովուրդ, ժողովատեղի», 2) «եկեղեցի Քրիստոսի, աստծու հավատացյալ կամ դեպի սուրբ հավատ կանչված ժողովուրդ՝ Քրիստոսի հոտ», 3) «կառույց. տաճար, ժամ»: Ավելին, այն *հին եկեղեցի* առակապակցությամբ նշանակում էր «Տուն Իսրայելի, հրեա ժողովուրդ՝ Աբրահամից մինչև Քրիստոս», իսկ *եկեղեցի հեղինացւոց* բառակապակցությամբ՝ «հույների ժողով և ատյան Աթենքում»: «Յայսմաւորք»-ի մեջ, եթե ճիշտ է ձևը՝ գրությունը, բառն ունի հիմքում «ժողով, միասին», մանավանդ «ի մի գալ, ժողովվել, ի մի բերել» իմաստները՝ շատ ընդհանուր ձևով: Իսկ առանձին վերցված՝ այդ ենթադրելի իմաստներն այնքան էլ վստահություն չեն ներշնչում, թեև խոսքը վերաբերում է հունական գրերին, որոնք իբրև մեկ ամբողջություն («ժողովված մեկտեղ, ի մի բերված մեկ խմբով»), եթե ընդունենք այն տեսակետը, որ հայոց գրերի մի մասն առնված է հունականից կամ ստեղծված է հունարենի (սախ)օրինակով, իսկ մնացածը՝ Մեսրոպի ձեռքով՝ աստվածային ներշնչմամբ, ինչ-որ չափով հիմք են հանդիսանում հայոց գրերի հորինմանը: Եվ նկատի ունենալով այս, ինչպես նաև այն հանգամանքը, որ մեզանում (եթե դա, իրոք, այդպես է եղել) հունական գրերի մի մասի ընդօրինակումով (իբրև մեկ ամբողջություն, ի մի բերված խումբ՝ «եկեղեցի»), ըստ «Յայսմաւորք»-ի տվյալների, վերցվել է և հետո դրան ավելացվել Մեսրոպի ստեղծածը, այդպիսով կազմվել հայկական այբուբենի համակարգը («հայոց այբուբենը»): Միայն այս պարագայում է հնարավոր «Յայսմաւորք»-ի մեջ գործածված *յեկեղեցին* ձևը բացատրել որպես «ի մի բերեցին, իբրև մեկ ամբողջություն, մաս՝ օգտագործեցին» իմաստի նշանակիչ:

Այժմ՝ երկրորդ վարկածի մասին:

Կարելի է կարծել, որ *յեկեղեցին* ձևը գրչագրական կամ տպագրական սխալ է, մանավանդ որ եթե այդ ձևը չենք դիտում իբրև բայ-ստորոգյալ հանդիսացող բառ, որը շատ անհավանական է, ապա պիտի այդ ձևում տեսնենք մի այնպիսի վրիպում, որով

աղավաղված լինի ինչ-որ բառ, որ եղել է տվյալ հատվածի առաջին նախադասության ստորոգյալը: Այսպես ենք կարծում, որովհետև երկրորդ նախադասության ստորոգյալն է *յիցին*, իսկ առաջինը չունի որևէ ստորոգյալ, այնինչ պարզ ասվում է, որ հունարեն գրերի հետ ինչ-որ կերպ վարվեցին, այնուհետև թերին լրացրին աստվածատուր շնորհներով: Ուստի եթե մտածենք, որ հունական գրերի նկատմամբ ինչ-որ վերաբերմունք ցուցաբերվեց («յեկեղեցին», այն է՝ «յեկեղեցին ի հայերէն այբուբենսն», ապա նոր «թերին լրացրին», նշանակում է, որ *յեկեղեցին*-ը պիտի սրբագրվի, ասենք՝ *յեղեցին* (< *յեղեմ*, *յեղում* կամ *յեղանիմ* «փոխել, փոփոխել. շրջել, դարձնել»), կամ ավելի հավանական է՝ *յեղ-յեղեցին* (< *յեղյեղեմ*, *յեղյեղում*, «շուտուճուտ տալ. այլայլել», *յեղյեղեալ* և այլն), որ սովորական իմաստներից բացի գրաբարում նշանակում էր «հեղանակել, երկրորդել, շրջշրջել, դարձնել, հետազոտել» (ՆՀԲ, հ. 2, էջ 354-355): Այսպես կարծելն ավելի հավանական է, քան նախորդ վարկածի ձևով մտածելը:

Ըստ այդմ՝ «Յայսմաւորք»-ի տպագիրը (Կ.Պոլիս, 1706) *յեղեղեցին* բայը, որ եղել է նախադասության ստորոգյալը, վրիպակով կամ թերևս ձեռագրից եկող թյուրընթերցմամբ դարձել է *յեկեղեցին*, այն է՝ *յ* տառի փոխարեն գրվել է («շարվել է» *յ* տառը (եթե *յ*-ն կրկնավորի դեպքում բաց թողնվի), որն էլ բնագրի տվյալ հատվածի մեջ հարուցում է որոշակի դժվարություն:

գ) *Երկարաշունչ* («տնական շունչ, երկարահունչ», այլև՝ «երկար շունչ ունեցող»): Այս բառը չենք գտնում ո՛չ ՆՀԲ-ում և ո՛չ էլ ԱԲ-ում. «Եւ Սուրբն Իսահակ ժողովեաց յամենայն աշխարհէս հայոց մանկունս ուշեղս և քաղցրաձայնս *յերկարաշունչս* և քաջ ուսմունս. և կարգեալ դպրոց՝ ուսուցին զբնաւ աշխարհս հայոց» (Յայսմաւ., էջ 74): Բառի կազմությունը շատ սովորական է, իսկ իմաստը՝ ըմբռնելի: Այդ հատվածը մեզ հիշել է տալիս Մովսես Խորենացու հետևյալ բնագիրը, որում խոսվում է Ս.Սահակ հայրապետի արածի մասին. «և հրաման Վռամշապիոյ և մեծին Սահակայ ժողովեալ

մանկունս ընտրեալս, ուշեդս և քաջասունս, փափկաճայնս և երկարոգիս, և դպրոցս կարգեաց յամենայն գաւառս» (Խոր., էջ 328): Խորենացու *երկարոգի* բառի *ոգի* («հոգի, շունչ, հագագ». հմմտ. *ոգեմ* «ասել, բարբառել, երգել, նվագել և այլն») բաղադրիչը «Յայսմաւորք»-ում դարձել է *շունչ*՝ նույն նշանակությամբ, որ միանգամայն իրական է և հնարավոր, որովհետև դրանք առհասարակ հոմանիշ են միմյանց նկատմամբ: Երկու դեպքում էլ՝ *երկարոգի* և *երկարաշունչ*, գործ ունենք ածականի գոյականական կիրառության հետ (հմմտ. *երկարոգի* կամ *երկարաշունչ մանկունս* > *երկարոգիս* կամ *երկարաշունչս*), ուստի նորակազմ *երկարաշունչ* բառի երևան գալը ամբողջովին տեղին է, որով և հարստանում է հայերենի ընդհանուր բառապաշարը:

է) *Խարանազգեսց*: Այս բառը չենք գտնում թե՛ ՆՀԲ-ում և թե՛ ԱԲ-ում. «Եւ առեալ ընդ իւր արս վաթսուն *խարանազգեսց* կուսանս և ճգնաւորս, մերկս և բոբիկս» (Յայսմաւ., էջ 74): Այս հատվածը նույնպես նման է Խորենացու հետևյալ բնագրին. «Քանզի ստացաւ աշակերտս վաթսուն ... արք կրօնաւորք, խարազնագգեստք, երկաթապատք, բոկագնացք» (Խոր., էջ 320):

Նկատելի է, որ Խորենացու *խարազնազգեստ* («մազեղեն հագած») բառի դիմաց «Յայսմաւորք»-ում ունենք *խարանազգեսց* (< *խարան* «շիկացած կրակով այրվելը, դաջվելը») և *զգեսց* (< *զգեստում* «հագնել, վրան կրել՝ առնել») արտասովոր կազմությունը՝ իմաստի տեսակետից, որը թերևս նշանակում է «խարան կրած, խարան՝ իբրև կրելիք, հագնելիք»:

Եթե բացառենք այլ կարգի հանգամանքները, ասենք՝ *զ*-ի բացթողումը Խորենացու բառի համեմատությամբ, կամ հեղինակի կողմից *խարազան* և *խարան* բառերի շփոթելը և այլն, ապա թերևս կարելի է ասել, որ «Յայսմաւորք»-ի այդ հատվածի հեղինակն այնպես է ըմբռնել բառը, ըստ որի Սուրբ Սահակի հետ շրջողները խարան էին կրում՝ իբրև հագուստ (փոխաբերական իմաստով, որպես արդյունք երևակայության):

Սակայն իրականում, կարծում ենք, այստեղ գործ ունենք տպագրական կամ ձեռագրից եկող սխալի հետ, այն է՝ *խարազն* [(«քուրձ», այլն «քուրջ» (հմմտ. *ձ/ջ* տարբերակ) և այլն] բառի *զ*-ն բաց է թողնված, կամ բառը շփոթված է *խարան*-ի հետ, եթե ոչ գիտակցաբար արված՝ երևույթը խտացնելու նպատակով, *խարազն*-ը դարձնելով *խարան*:

Արդյունքը լինում է այն, որ առաջ է գալիս մի բառ, որն անշուշտ նորահայտ է: Եվ եթե ընդունում ենք, որ այդպիսի բառով կարելի էր նկարագրել այդ հատվածի ինչ-որ երևույթ, ուրեմն բառի նորակազմություն լինելը պիտի համարենք տեղին: Իսկ եթե դա բացառում ենք, ապա ճիշտ պիտի դիտենք այն, որ գործ ունենք տպագրի կամ ձեռագրից եկող թյուրըմբռնման հետևանքով առաջ եկած «նոր» (կեղծ) բառի հետ: Ուստի մի դեպքում պիտի ընդունենք այդ բառը՝ իբրև նորահայտ կազմություն (*խարանազգեսց*), որին լրացուցիչ հիմք է հանդիսանում *զգեսց* բաղադրիչը, իսկ մյուս դեպքում պիտի ուղղենք տպագիրը կամ ձեռագրից եկող թյուրըմբռնումը և վերականգնենք *խարազնազգեսց* (եթե ոչ՝ *խարազնազգեստ*, ինչպիսին որ է Խորենացունը) ձևը:

ը). *Նախարարգանեսալ* («ավելի շուտ՝ վաղ թարգմանված»): Այս բառը, իբրև անցյալ դերբայի ձև, կա և՛ ՆՀԲ-ում (հ. 2, էջ 387), և՛ ԱԲ-ում (էջ 604): ՆՀԲ-ն տալիս է «ավելի առաջ թարգմանված» իմաստը և վկայակոչում է միայն «Յայսմաւորք»-ին. «Եւ եկեալ քերթողական ճարտարութեամբ՝ և վերստին ուղղեցին *զնախարարանեսալ* գիրսն» (Յայսմաւ., էջ 270):

Միայն այս հատվածի հիման վրա ՆՀԲ-ում, նաև ԱԲ-ում ինքնուրույն բառահողված առանձնացնելը մեզ թույլ է տալիս *նախարարգանեսալ* բառը դիտելու «Յայսմաւորք»-ի յուրահատուկ բառերից: Իսկ քանի որ ըստ այդմ բառն արդեն հայտնի է եղել հայոց լեզվի բառապաշարն ուսումնասիրողներին, մնում է միայն ընդգծել, որ *նախարարգանեսալ*-ը ՆՀԲ-ում միակ վկայությամբ, այն է՝ «Յայսմաւորք»-ի հիման վրա հաստատագրվելու պատճառով է,

որ այն դառնում է մեր ուշադրության առարկան, և դրա մասին խոսում ենք «նորահայտ բառ» հորջորջմամբ՝ որոշակի և հասկանալի պայմանականությամբ:

թ) *Շաղիաղիաբան* («դատարկախոս, այլաձև խոսող») բառը հանդիպում է ՆՀԲ-ում (հ. 2, էջ 462), նաև ԱԲ-ում (էջ 629): ՆՀԲ-ն տալիս է «շաղ փաղփ՝ այլաձև խոսքի մեջ» իմաստը՝ վկայակոչելով լոկ «Յայսմաուրք»-ի մեկ համառոտ նախադասություն, թեև նշում է բնագրերի տարբեր հատվածներ. «ընդէ՛ր իջեր ի *շաղիաղիաբան* (կամ *ի շաղիաղիանա*) Ասորիս». խոսքն այստեղ ուղղված է Մեսրոպին, որ գնացել էր արտասահման՝ գիտական որոնումների: Այս մասին ունենք երկու վկայություն, որոնցում և գործածված ենք գտնում *շաղիաղիաբան* բառը. «Զայն որ իջեր *ի շաղիաղիաբան* Ասորիս և աշխատեցեր, ընդէ՛ր ոչ եկիր առ մեծն Յոհան Ոսկերեբան՝ որ աղբիւր էր գիտութեան, զի փութով հասանէիր փափագանաց քո» (Յայսմա., էջ 94), այլն՝ «Եւ սակաւ ինչ մեղադրեցին նմա սիրով, թէ ի շարժելն ձեր ի խնդիր գրոյն ընդէ՛ր իջեր *ի շաղիաղիաբան* Ասորիս և ոչ եկիր առ աղբիւրն իմացութեան՝ յԱստուածագեացն ի հայրապետն Յոհաննէս ոսկի Բերանն: Եւ ի նմանէ այլ դիւրաւ գտանէր զմխիթարութիւն սրտի քո» (Յայսմա., էջ 498):

Բառը կազմված է *շաղիաղի* («շաղակրատ, դատարկախոս, վայրիվերո և այլն») և *բան* («խոսք, գիտելիք և այլն») բաղադրիչներով, որ առհասարակ շատ բնորոշ եղանակ է հայերենի բառակազմության համար: Առաջին բաղադրիչն, իբրև ինքնուրույն բառ, կրկնավոր կազմություն է *շաղի* արմատից, որ թեև չենք գտնում ՆՀԲ-ում, սակայն կա Հ. Աճառյանի բառարանում (*Աճառեան*, 1977, էջ 490): Այդ արմատը հայերենում դեռևս ստուգաբանված չէ, թեև եղել են այս կամ այն կարգի ենթադրություններ: Գ. Ջահուկյանը չի տալիս *շաղիաղի* բառի ստուգաբանությունը, թեև նշում է պարզ կամ կրկնական բառահիմքից սերված զգալի թվով ձևեր: Ըստ այսմ՝ արմատի ծագման հարցը մնում է չլուծված, հետագայի է:

ժ) *Սուպռ* («բիրտ, կոպիտ»), բառը ևս չենք գտնում ՆՀԲ-ում և ԱԲ-ում, սակայն կա «Յայսմաուրք»-ի մեզ հանդիպած հետևյալ երկու նախադասության մեջ. «Եւ նստան լռութեամբ անընդունակ եղեալ *ի սուպռ* և ի բիրտ ազգէս հայոց՝ մինչև յօր վախճանի իրեանց» (Յայսմա., էջ 94). «Եւ նստան լռութեամբ անընդունակ եղեալ ի խստապարանոց՝ ի բիրտ և *ի սուպռ* ազգէս հայոց» (սույն տեղում, էջ 501):

Հ. Աճառյանի հիշյալ բառարանում (*Աճառեան*, 1979, 243) հանդիպում է *սուպռ* բառը՝ «բիրտ, կոպիտ» իմաստով, որի համար բերվում են ոչ միայն «Յայսմաուրք»-ը, այլև ուրիշ հեղինակներ՝ իբրև վկայություն: Նշվում է նաև, որ այդ բառից ունենք ածանցավոր *սուպռութիւն* («կոպտություն») կազմությունը, և երկու բառն էլ համարվում են «նորագոյուտ»:

Այս պարագայում կարևոր է ուշադրության առնել հետևյալը: Հ. Աճառյանը չի տալիս *սուպռ* բառի ստուգաբանությունը, ոչ էլ համեմատում է հայերեն այլ բառերի հետ: Ըստ Գ. Ջահուկյանի՝ բառի «ծագումն անհայտ է»: Այնինչ կարծում ենք, որ *սուպռ*-ը արմատով առնչվում է *շուպռել* («հափշտակել, կորզել, խլել») և *սուպել* («համարձակվել, հանդգնել, մի բանի վրա քշել») բառերին (հմմտ. ՆՀԲ, հ. 2, էջ 728, *Աճառեան*, 1977, 531, նաև 1979, 243): Այնուհետև, *շուպել* բայի արմատը (նաև վերջինիս *շորայ* տարբերակը), ըստ ՆՀԲ-ի և ՀԱԲ-ի, ունի նաև *շուպել* ձև, իսկ *n* սաստկական ածանցով՝ նաև *շուպռել* (ըստ «Հին հայկազյան բառարան»-ի և Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ի, էջ 247) ձևը (հմմտ. հայ. *ճկել - ճկռել, ճանկել - ճանկռել* և այլն): Նկատելի է, որ *շուպ* արմատը *սուպ*-ի արտասանական մի տարբերակն է, և դրանք ունեն իմաստային որոշակի ընդհանրություն (հմմտ. «հափշտակել» և «համարձակվել»): Ավելին, *սուպ* պարզ արմատից առաջացած *սուպել* («համարձակվել, իշխել, հաճել, ընտրել») բայը (տե՛ս ՆՀԲ, հ. 2, էջ 728) դիտվել է իբրև «անհայտ և անստույգ» բառ, և ըստ այդմ էլ Ոսկերեբանի «Մեկնութիւն Եսայեայ»-ի բնագրի մեջ *այսպիսեաց սուպեն*

բառակապակցությունը սրբագրված է «այսպիսեացս ոսկեն» ձևով: Կարծում ենք, որ այստեղ բնագրային խախտում, աղավաղում չկա, և իզուր են Ոսկեբերանի բնագիրը կազմողները «սրբագրել» *սոսել* բառը (*ս*-ն անջատել և միացրել *այսպիսեաց*-ին): Ուստի և անտեղի է ԱԲ-ն (էջ 728) դուրս թողնում *սոսել* բայն իր ցանկից, իսկ Աճառյանը, հետևելով ՆՀԲ-ին և ԱԲ-ին, իզուր է այն դիտել իբրև կեղծ բառ՝ առանց խորանալու վերջինիս բնագրագիտական-աղբյուրագիտական հանգամանքների մեջ (ՀԱԲ, հ. 4, էջ 243):

Ամբողջ հարցն այն է, որ *շոս* արմատի *շորս* տարբերակը, որ տալիս է ՆՀԲ-ն (հ.2, էջ 489), այլ բան չէ, քան դրափոխված ձևը *շոսր*-ի, որն էլ ամբողջովին համընկնում է *սոսր*-ի հետ (իմա՛ *ս* / *շ*, այլև *ռ* / *ր* հնչումներ): Սա ապացուցվում է ոչ միայն նրանով, որ հայերենի մի շարք բարբառներում առկա է *շորիել* (Ալշ., Բուլանուխ, Խնուս, Մուշ, Նոր Բայազետ և այլն) բայը, որը հնչում է *շոնփել*, *շոսպել* (Ալաշկերտ, Մուշ), այլև գրականում ունենք *շորթել* («հափշտակել, խլել, փախցնել»), *շորթումս* («փախցնելը, խլելը և այլն») ձևերը, որոնք ևս ծագումով ընդհանուր են նախորդ ձևերի հետ: Այս հարցում ավելի հեռու գնալը (իմա՛ արմատի ծագմանն անդրադառնալը) դուրս է մեր այստեղ հետապնդվող նպատակից:

Եզրակացություններ

1. «Յայսմատուրք»-ի առանձին հատվածներում տեղ գտած ճիշտ մեկ տասնյակ բառերը, անկախ իրենց բառարանային արտացոլման աստիճանի տարբերություններից, ունեն որոշակի արժեք ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու կարևորագույն գրքերից մեկի, այլև առհասարակ հայոց լեզվի բառապաշարի պատմության համար:

2. Պարզվում է, թե ինչ նշանակություն կարող է ունենալ այդ ժողովածուի լեզվի առանձին և ըստ ամենայնի քննությունը հայերենի ամբողջական բառարանի ստեղծման դեպքում:

3. Այդ բառերից մեկ-երկուսի վերը կատարված վերլուծությունը հետաքրքիր է բառի կազմության, ծագման և իմաստի դրսևորման առումով:

Ղևոնդ Ալիշանը լեզվագետ. դիցաբան, բառագետ

Ներածություն

Հայ մտավոր իրականությունը թե՛ անցյալում և թե՛ համեմատաբար նոր ժամանակներում ունի մեծություններ, որոնք գրավոր աշխատանքում ծավալել են համապարփակ գործունեություն՝ անխոնջ առօրյայով, առանձնյա նվիրումով առ ինքնություն իր հայրենիքի ու իր հանրության: Նրանք, իրոք, մեծ գավակներ են, հանրագիտարանային մտքի տեր, ամբողջական և կուռ ներկայություն: Այդպիսին է հայր Ղևոնդ Ալիշանը՝ ամենագետ և ամենատես, իր և մեր ժամանակին թև տվող: Այստեղ սեղմ անդրադառնում ենք նրա վաստակի մի մասին՝ իբրև լեզվագետի, իբրև դիցաբանի և իբրև բառագետի:

1. Ալիշանի երկերի լեզվագիտական կողմը

Այս թեմային մասամբ անդրադարձել ենք տարիներ առաջ նոր շրջանի գրաբարի պատմությանը նվիրված մեր մի աշխատության մեջ (*Համբարձումյան*, 1990, 123-124): Նկատել ենք, որ նոր շրջանի գրաբարի զարգացման գործին որոշակի նպաստ են բերում հայ մշակույթի տարբեր դպրոցների ներկայացուցիչներ, որոնց թվում առավել մեծ է անմահ Մխիթարյանների գործունեությունը:

Ղ. Ալիշանը այս բնագավառում նույնպես ունի նկատելի ավանդ՝ մեծ մասամբ աշխարհաբար, որոշ դեպքերում գրաբար երկասիրություններով: Նրա երկերից այս դեպքում առավել ուշագրավ են գեղարվեստական, տեղագրական, պատմական աշխատությունները, չափածո թարգմանությունները, որոնք հրապարակ

են եկել նրա գործունեության գրեթե բոլոր շրջաններում՝ վաղ և հետագա:

Այս հարցում Ալիշանը ոչ թե տեսարան է, այլ գործնական կիրառող. նա իր այդ կարգի երկերը գրում է մի այնպիսի լեզվով, որ հեղինակային անհատական ոճի բովով անցնելով՝ դառնում է նոր գրական հայերենի յուրօրինակ նմուշ, օրինակ՝ հետագա գրական միջավայրի համար:

«Նուագք» (հհ.1-2, Վենետիկ, 1857-1858) ժողովածուի մեջ, օրինակ, գետեղված ընդհանուր դրվածքով գրաբար բանաստեղծությունները, անկախ կրոնական, ավելի լայն՝ աստվածախոսական թեմատիկայից և աշխարհընկալումից, ուշագրավ են նաև այն առումով, որ արտացոլում են ժամանակի լեզվական կացությունը, որ պարունակում են ոչ միայն աշխարհիկ մտածողության երանգներ, այլև վերջիններն արտահայտող բառեր և բառաձևեր, ոճեր և արտահայտություններ: Այդ երկերը, կարելի է ասել, նոր ժամանակաշրջանի գրաբար հայերենի լավագույն նմուշ են, որ յուրովի հիմք հանդիսացան հայ նոր չափածո խոսքի հետագա արմատավորման և առաջընթացի համար:

Նոր ժամանակներին յուրահատուկ լեզվամտածողությունը առկա է Ալիշանի «Ընդ եղենեալ» (Վենետիկ 1874 թ.) գրաբար երկում: Գրաբար հայերենով են շարադրված նաև ներհուն գիտնականի տեղագրական երկերը՝ «Շիրակ» (Վենետիկ, 1881 թ.), «Այրաբատ» (Վենետիկ, 1890 թ.) և «Սիսական» (Վենետիկ, 1893 թ.) ստվար հատորները: Դրանց լեզուն, իհարկե, ժամանակի գրաբարն է, որը ներառում է ոչ միայն գիտաճյուղային այս կամ այն կարգի և հայերենի տարբեր շրջաններում կիրառված տերմիններ և տերմինային անվանումներ, այլև ժամանակի հայերենի խոսակցական տարբերակներում գործածվող տեղանուններ ու շրջակա միջավայրի զանազան անվանումներ, որոնք երբեմն բերվում են երկու և ավելի ձևերով: Լեզվի խոսակցական տարբերակում այս կամ

այն տեղավայրի օտար անվանումը հաճախ ներկայացվում է հայերեն նորակազմ բառով, տերմինով, բառակապակցությամբ:

Շատ հաճախ, ի դեպ, իրականության բերումով ստեղծվում են տերմիններ և տերմինային անվանումներ, և դրանք բնագրերում տրվում են շեղատառ, ընդ որում կից փակագծերում նշվում է նաև դրանց եվրոպական համարժեքները (անվանումները): Այս դեպքում, կարելի է ասել, Ալիշանը հանդես է բերում լեզվագետի, ավելի կոնկրետ՝ բառագետ-տերմինաբանի մեծ փորձառություն: Արդի գիտությանն են անցել տարբեր ճյուղերի բազմաթիվ տերմիններ, որոնց ակունքները Մխիթարյան հայրերի, ընդ ամեն՝ Ալիշանի երկերում են: Բավականին արդիական է ներկայումս այդ տերմինաբանության գիտական ուսումնասիրության հարցը:

Ալիշանը հեղինակ է նաև գրաբար տարբեր թարգմանությունների՝ Բայրոնի «Իտալիա» (Վենետիկ, 1860 թ.), Ռուդոլֆ Հավերերունու «Վիպասանութին ի Յ. Լատիալայ Բիրքեր» (Վենետիկ, 1858 թ.), Ֆ. Շիլլերի «Երգ ի զանգակն» (Վենետիկ, 1871 թ.), «Քնար ամերիկեան» (Վենետիկ, 1874 թ.):

Դրանցում տեղ են գտել բազմաթիվ բառային նորամուծություններ՝ գրաբարի բառապաշարի առումով, սովորական բառեր, նոր տեղանուններ և անձնանուններ՝ իբրև բառային-անվանումային նորակազմություն: Այդ թարգմանություններում Ալիշանը գրաբարի բառապաշարի, քերականական ձևերի հմուտ կիրառող է, և գործնականում մի տեսակ չունի մտահոգություն բնագրին համապատասխան բառի և քերականական ձևի ընտրության, դրանց վայելույց, տարբերակված կիրառության հարցերում, այսինքն՝ հանդես է բերում ազատ մոտեցում գրաբարին բնորոշ ձևերի կիրառության մեջ:

Եվ այս ամենը նշանակում է, որ գրական լեզվի վերաբերյալ, այսպես կոչված, խմորումների պարագայում Ալիշանը միասնական և կենդանի լեզվի կողմնակից է, նոր շրջանի գրաբարը և գրական

աշխարհաբարը նա գործածում է միասնաբար և հմտորեն, անխտիր և իմացական առումով խնամողաբար:

2. Ալիշանը հայոց դիցարանի մեկնաբան. Վահագնի դիցական կերպարը

Հայոց հին հավատքին նվիրված աշխատության մեջ ավելի մանրամասն վերլուծությամբ, քան իր նախորդները, Ալիշանն անդրադառնում է «Երկներ երկին, երկներ երկիր...» հատվածին:

Նախ՝ զուգահեռներ է անցկացնում հայ. *արև* // *արեգ* տարբերակների և սանսկրիտի *րաւի* (ravī-s) ձևերի միջև, այնուհետև նկատում է, որ Վահագնի կերպարի մեջ (ոմանք) տեսել են կոնկրետ անձնավորության. վիպական կերպարանք են ստանում բնության բաղադրիչները՝ *երկինք* և *երկիր*, *ծով* և այլն, որոնք ոչ միայն հավատալիքի տարերք (բաղադրիչներ) են, այլև իրական անձերի մարմնացում՝ սիրելի թագավորի և դյուցազնի, Տիգրանի, նրա ժամանակակցի՝ Կյուրոսի (*Ալիշան*, 1895, 86):

Այնուհետև՝ Ալիշանը չի բացառում երևույթի, այսպես կոչված, համաբանական (անալոգիական) լինելը՝ համեմատությամբ հնդկականի, նույնիսկ փոխառություն հնդկական պանթեոնից. հմմտ. հնդկ. *Ալիսի*, հայ. *Վահակն* (լատ. Ignis «հուր, կրակ», հուն. ἄγνος և այլն) (ն. տ., 86-87):

Ի դեպ՝ հետագայում Գ. Հովսեփյանցն իր աշխատանքներից մեկում ունի այս թեմային առնչվող մի ուշագրավ դիտարկում՝ «Պառաի աղօթք»-ից. «լուսացաւ լուսն ի բարին, / Հաւատով տէր կենդանին, / Երկինքն ծով ծիրանի, / Սըփ կուս Մայրամ նստաւ սըփ սեղանին...»: Իսկ տողատակում նշվում է, որ դա «Ժողովրդական բանաստեղծութեան հին նշմարներից մեկն է, «երկներ երկին և ծիրանի ծով», երգում էին Խորենացու ժամանակ և ո՞վ գիտէ՝ ո՞րքան էլ նրանից առաջ» (*Յովսէփեանց*, 1892, 77):

Հայտնի է, որ Ալիշանից առաջ այդ խնդրին անդրադարձել էր Մ. Էմինը: Նա մերժում է հայ. *Վահագն* և իրան. *Վերեթրագնաս* անունների զուգադրումը, որ տալիս է Վինդիշմանը, և որին հե-

տևում է, ըստ Էմինի, Ք. Պատկանյանը՝ ելնելով հատկապես այն հատկանիշներից, որ ունի *Վերեթրագնաս*, և որոնք բացակայում են *Վահագնի* կերպարում (*Ձմին*, 1873, 9-10. տե՛ս նաև 1874, 93-129): Սրան ժամանակին անդրադարձել է Պատկանյանը և մերժել Էմինի նման վերագրումը (*Փառկանով*, 1874, 130-147): Այս համեմատության մեջ ուշագրավ է այն, որ ինչպես ցույց են տալիս նոր ուսումնասիրությունները, առասպելականի զուգահեռությունն ունի ընդհանուր հնդեվրոպական հիմքեր: Աշխատանքում կա նաև անդրադարձ Ան. Շիրակացուց եկող հայտնի «պատումին», որ տիպաբանորեն համեմատելի է այլ ժողովուրդների նույնպիսի սյուժետների հետ, իսկ դա ոչ այլ ինչ է, քան բուն առասպելականի կողմնակի գիծ, որովհետև ոչ կողմնակին՝ առանցքայինը, լեզվական գիծն է:

Այս համատեքստում նկատենք, որ Վահագնի կերպարի ձևափոխումները (հիպոստասները) տեղի են ունենում ոչ միայն ժամանակային, այլև մշակութային փոփոխության (հերթագայության) հիմունքով, այն է՝ մինչքրիստոնեականի (հեթանոսականի) և քրիստոնեականի լծորդություն, սովորական իրականի և գերիրականի (դիցականի) հերթագայություն և այլն, որոնք հետագայում, այն է՝ վաղ միջնադարի մշակույթի մեջ ունենում են պատմական-փիլիսոփական նշանակություն: Այս իրողությունը տեսնում ենք ոչ միայն հայ, այլև հնդեվրոպական այլ ժողովուրդների (հունական, գերմանական և այլն) մշակույթներում (հմմտ. ն. տ., 172-173):

Ալիշանի աշխատության մեջ առավել տեղին է այն, որ քննվում է առասպելականի առնչությունը պատմականին, այսինքն՝ այն փորձերին, որոնք եղել են պատմական կոնկրետ դեմք հանդիսացող Երվանդի կերպարի մեջ տեսնել Վահագնի առասպելական-դիցաբանականը՝ ժամանակի հերթագայության անտեսումով (ն. տ., 292): Նա ֆունկցիոնալ կապ է տեսնում հայկականի՝ ոչ միայն հնդկական, այլև առավելապես իրանական նույնպիսի բովանդակության պատումների հետ: Վահագնի պաշտամունքը համարում է բերված հնդկական միջավայրից՝ կապելով հայտնի էթ-

նիկական տեղաշարժի հետ, և նրա պաշտամունքային վայրերը («տեղիները») հետագայում քրիստոնեության մուտքով փոխարինվեցին այլ կերպարներով, մի բան, որ վկայություն է մինչքրիստոնեականի և քրիստոնեականի հերթագայության (ալտերնացիայի) (ն. տ., 296-298): Նման հերթագայություն (եթե ոչ մի քանի) կարելի է ենթադրել նախագրային շրջանի հայերենի պատմական-մշակութային ընթացքի (վաղբրոնզեդարյան և հետագա շրջանների) մեջ:

Դասական հայագիտության կողմից կատարված բնագրային քննությունների համատեքստում Ալիշանի անդրադարձն ունի որոշակի կարևորություն *երկին(ք) /երկիր* հարաբերակցության դիցական-առասպելական նոր, ավելի հավանական տվյալներով ուսումնասիրության ձեռնամուխ լինելու համար:

3. Ալիշանի դիտարկումները Ռոշքայի ձեռագիր բառարանի մասին

Այս դեպքում նկատի ունենք ներհուն գիտնականի բառարանագիտական մի դիտարկումը, որը ժամանակին եղել է բանախոսություն, այլև լույս է տեսել «Բազմավէպ»-ի էջերում, որին անդրադարձել ենք մեր աշխատանքներից մեկում, այն է՝ բառագիտական քննություն Ստ. Ռոշքայի ձեռագիր բառարանի (*Ալիշան*, 1852, 86-95. տե՛ս *Համբարձումյան*, 2015, 69):

Նախ՝ սկզբում թուրքիկ անդրադառնալով նախկինում եղած բառարանային փորձերին («Բառք» ընդհանուր վերնագրով ժողովածուներին՝ երևան եկած «անդստին յԺԳ և յառաջնոց իսկ դարուց») գրում է. «Իսկ ի ծանօթիցն մեզ ազգային Բառարանաց՝ ճոխութեամբ բառից և պատշաճ դասաորութամբ, և լատին թարգմանութեամբ, քաջ ի բաց գերազանցէ գայլովքն՝ Հայկազնեան Բառարանն Ստեփանոսի Ստեփանեան վարդապետի Ռոշքեանց Կամենիցացոյ, որոյ համբաւ վաղ ուրեմն հասեալ առ մեզ հանդերձ մասամբ ինչ փոքու գործոյն՝ աճեցուցանէր գիսփազ բոլորին ևս ծա-

նօթութեան, որում և հասաք անագան յետ գլխատրելոյ տպագրութեան մեծիս մերոյ Հայկազեան Բառագրոց» (ն. տ., 86):

Նա առաջինն է, որ մանրամասն կարդացել և ի վիճակի է եղել պարզելու բառարանի ոչ միայն լեզվական ամբողջ նյութը՝ սովորական, հայտնի բառամթերքի և սրա հետ միաժամանակ նորի հաշվով, այլև այն գրավոր աղբյուրների գոյության փաստով, որոնք վենետիկյան միջավայրի համար եղել են անհայտ, ինչպես նաև բառերի բացատրության, լատիներեն և հունարեն աղբյուրների օգտագործման առումով և այլն (ն. տ., 87): Նա առարկում է իր պաշտոնակիցներին, որոնք այդ բառարանին տևականորեն ծանոթանալուց, նույնիսկ իրենց մեջ մասերի բաժանելով արտագրելուց հետո, հավանաբար, այնքան էլ բարեհաճ չեն գտնվել, թերևս անտեսելու աստիճանի ձեռնպահությամբ են արտահայտվել:

Այդուհանդերձ, Ալիշանի հանճարը չէր կարող կողմնակալ լինել այդ դեպքում ևս, ուստի իր ճառը կառուցել է հիմնական դրույթների վրա, որոնք 6-ն են՝ «Նախ, թէ ընդէ՛ր յոմանց ի մէնջ կեղակարծելի դատեցաւ մատեանն, կամ թէ ո՛րչափ հաւատարմութեան արժանի իցէ հեղինակն. Բ. Թէ ո՞ր իցէ հեղինակն և ուստի կամ ո՛ր հաւաքեաց գրառսն. Գ. Ո՛ր այնոքիկ իցեն թարգմանութիւնք յունականք և լատինականք. Դ. Զի՛նչ պատմական գրեանք յիշատակք ի նմա. Ե. Եւ զի՛նչ այլ նշանաւոր բանք կամ աւանդութիւնք կամ ականաւոր մատենագրաց վաստակք յիշատակեալք ...» (ն. տ.):

Հետագա շարադրանքում Ալիշանը մեկ առ մեկ քննարկում է այդ հարցերը, երբեմն հանդիմանական երանգով գնահատում եղած վերաբերմունքը «Բառգրքի» շուրջ: Նկատելի է, որ գործընկերներն այս հարցում եղել են մի տեսակ կողմնակալ, այնինչ Ալիշանը միանգամայն անաչառ է, այն է՝ վերլուծությունների և գնահատությունների միջոցով փորձում է վերաբժնորել այդ աշխատանքը, որ տասնամյակների ընթացքում (շուրջ երեսուն տարի) արել և ավարտին է հասցրել այդ «հայոց լեզվի գանձը», ընդ որում «երկու

անգամ սրբագրեալ է, և յերրորդ սրբագրութեան հանգեալ ի Տէր» (Ալիշան, 1896, 201. *Ոսկեան*, 1965, էջ 145, 147)¹:

Շեշտովում է, որ Ռոշքայի բառարանը ինչ-որ տեղ ունի առավելություններ վենետիկյան բառարաններից: Դրանք նկատելի են Ալիշանի առաջ քաշած դրույթներում, մի մասում՝ բազմակի փաստերով, մյուս մասում՝ համեմատաբար սակավ, սակայն առկա է առարկայորեն (օրյեկտիվ) վերլուծողի մոտեցումը, այն է՝ իզուր են իր միաբանակիցներն անտարբեր այդ բառարանի գիտական արժեքի նկատմամբ:

Ստորև նշենք Ալիշանի առարկություններից մի քանիսը, որոնք բանասիրական և լեզվագիտական կարևորություն են ներկայացնում, բնականաբար հիմնված «Բառգրքի» դրականի վրա:

ա) Ալիշանը դեմ է այն առարկություններին, թե բառարանում երբեմն ստուգաբանական մասը անհավաստի է, կամ էլ նշվում են հեղինակներ, որոնք հայտնի չեն (ընդ որում ոչ միայն հայ, այլև լատին մատենագիրներ): Այս կետի առաջին մասի վերաբերյալ նա գրում է, որ «յայսմ թերութենէ և ոչ զոք ազատ համարիմ ի ստուգաբանից, զոմն առաւել և զոմն նուազ, և բազում ուրեք զիմաստունս անգամ հակակարծիս յայդոսիկ», իսկ երկրորդի վերաբերյալ հիշեցնում է, որ նախ՝ Ռոշքայի հեղինակներից մի քանիսը հետագայում հայտնի դարձան (օրինակ՝ «ցուցակաւ մատենից դիւանացն Էջմիածնի»), «իսկ օտարագգի մատենագրաց վկայութիւնք՝ ոչ այնքան ցանկագոյն են, որչափ կարծինն, այլ բաց ի միոյ

կամ յերկուց՝ յոլովիցն երկու կամ երեք վկայութիւնք հազիւ գտանին» և այլն (Ալիշան, 1852, 87):

բ) Հստակ քննությամբ պարզելով բանասիրության մեջ առկա շփոթը երկու՝ Ստեփանոս Լեհացու և Ստեփանոս Կամենիցացու անձերի վերաբերյալ՝ երկրորդի համար ասում է. «իսկ կրսերն Ստեփանոս մականուանի Ստեփանեան Ռոշքայ կամ Ռոշքեան և սա ի Լեհաց, բայց ոչ ի Լովայ, այլ ի Կամենիցայ, որպէս նշանակեալ է ի գլուխ Բառարանին...», այնուհետև խոսում է վերջինիս վկայաբերած գրավոր աղբյուրների մասին, այն է՝ դրանք Անիից և Սսից գաղթած ունևոր հայերի բերած գրականությունն է եղել Լեհաստանի տարբեր քաղաքներում, «յորոց ի Լով միայն աւելի քան հազար ձեռագիր մատենաք գտանէին յաւուրս Նիկոլայ, զորս ցրուեաց և վաճառեաց նա, բայց և յետ նորա գտանէին մնացորդք ոչ սակաւք, յորոց և յիսնիւ չափ յետ հարիւր և աւելի ևս ամաց մահուան Ստեփանոսի փոխադրեցան այսր ի մերս թանգարան» (Ալիշան, 1852, 88)¹:

գ) Նշվում են օտար հեղինակների (մատենագիրների) անուններ (Պլինիոս, Կիկերոն, Սենեկա, Տերենտիոս, Կիպրիանոս, Պրոսպերոս և այլք), որոնց երկերի թարգմանությամբ, փաստորեն, հայերենում ստեղծվում են նորանոր բառեր: Ալիշանը գրում է, որ «գլխաւորք ի թարգմանութեանցդ են լատինականք. երկու կամ երեք մատենաք, յորս զառաջին տեղին ունի Աշխարհագրութիւն ընդարձակ, յորմէ բառս յոլովս քաղեալ է, և բազում ինչ յայնցանէ պիտանիք են ի թարգմանութիւն նորագիտ իրաց և գործեաց, որոց վասն առ մեօք նորանոր հնարին բառք. այսպիսիք են, օրինակ իմն, *հրետ* փոխանակ *թնդանօթի* կամ *հրանօթի*, *աղելից* կամ *խճուղ*՝ փոխանակ *խճողակի*, *ախաւեղ*, զորոյ ցարդ զբարդեալն գիտեաք *ախաւեղագէս*, *ակնաւորիլ որթոյ* և այլն, և այլն» (ն. տ., 89):

¹ Ի դեպ՝ Ոսկյանը բերում է մի հիշատակագրություն բառարանի վերաբերյալ, որում կա բառի՝ ժամանակի խոսակցական լեզվից եկող այլ գրություն, որը կա նաև Ալիշանի մոտ (ն. տ.)՝ ուղղագրությունը շտկված. «Եթե ոք կամիցի գկատարելագոյն Բառգիրք հայկական լեզուով ունիլ, նմա պարտ է որոնել զՍտեփանոս վարդապետին շարադրեալն, որ յորջորջի Գանձարան լեզուին Հայոց շարադրեալ ... մեծաւ աշխատութեամբ, այս(ինքն) երեսուն և երրորդ ամս մինչեւ ավարտեալ է, զնա երկու անգամ սրբագրեալ է եւ ի յերրորդ սրբագրութեանն հանգեալ ի տէր...» (ն. տ., էջ 144):

¹ Ալիշանն, իր հերթին, հղում է այդ մասին եղած աղբյուրները (ն. տ.):

դ) Ալիշանը գտնում է, որ այս բառարանի վկայությունների շնորհիվ է, որ մեզանում հայտնի են դառնում «գլխաուրք ի պատմ-
չացս ըստ պատուականութեան հնութեան և ճոխաբանութեան թո-
ւին ինձ հինգ կամ վեց, և այլ տասնի չափ յետ նոցա»՝ նշելով
անունները և բնորոշելով կարևորությունը հայ պատմագրության
համար (Մովսես Խորենացին՝ իր Դ գրքով, Հովհաննես պատմիչ,
Մեսրոպ պատմիչ, Մատթեոս պատմիչ, Մխիթար պատմիչ՝ «որ և
Անեցի թոյի ինձ», Ստեփաննոս պատմիչ՝ «ոչ Ասողիկն և ոչ Ուռպե-
լեանն, այլ հնագոյն և հնագունից ճառող», Հակոբ պատմիչ և
ուրիշներ) (ն. տ., 90-93. *Ոսկեան*, 1965, 146. *Ճանաչեան*, 1956, 125-
128):

ե) Ռոշքայի բառարանի մեջ եղած մատենագրական վկայու-
թյունների բանասիրական բաղդատությամբ հնարավոր է պարզել
բնագրագիտությանը մութ մնացած շատ հարցեր: Այդպիսին են,
օրինակ, Պիտոյից գրքի, Խորենացու Պատմության Բ մասի (կամ
հավելվածի) վերաբերյալ տեղեկությունները, այլև՝ Մամբրեի առն-
չությամբ, որ «զսորա բաց ի միոյ կամ երկուց ճառից՝ չունիմք մեք
այլ ինչ գրուած, բայց գիտեմք զի է նորա գրեալ և Պատմութիւն, և
կարծիք են, թէ և մեկնութիւն Յովհաննու աւետարանին» (ն. տ.,
93): Ուստի կարելի է մտածել, որ ավելի է մեծանում բառարանի
արժեքը հայ հին գրականության պատմության ամբողջացման
առումով:

զ) Ոչ պակաս կարևոր է համարվում այն, որ բառարանում
վկայություններ են բերվում ոչ միայն հին, այլև հետագա քերական-
ներից, որոնց մի քանիսի անունն իսկ հայտնի չէ (Հովհաննես
Երզնկացու հիշատակած ցանկում չկան): Օր.՝ «քերական յիշի
կրճատ անուամբ Գագ կամ թոյի Գագիկ, թէպէտ և այլուր չիք իմ
լուեալ քերական Գագիկ անուն, բայց չիք տեղի անհաւանութեան
ընդունել և զդա ի թիւս քերականաց կամ մեկնչաց նորին» (ն. տ.,
94):

է) Առավել ուշագրավ է Ալիշանի հետևյալ վերջնահաշիվ դի-
տարկումը. «Իսկ ի կնիք բանիցս ի պարծանս հեղինակի Բառարա-
նին արժան համարիմ յիշել և զճոխութիւն բառիցն, զոր թէպէտ ոչ
արկի ի թիւ, այլ ոչ շատ պակաս քան զմերոյս մեծի բառարանի
կարծեմ, իցեն իբրև 4500 կամ 5000 բառք նորագիտք ի նմա, զի իմ
4200 բառս նշանակեալ է անտի յիմում Առձեռն օրինակիս» (ն. տ.,
95):

Այսպիսով, ստացվում է, որ բառարանին նվիրված առաջին
իսկ հողվածը (մինչ այդ ասված՝ ճառը) բանասիրական առումով
բավականին մանրամասն է, բառագիտական արժևորման մեջ՝
բարձր գնահատության արժանի, երախտիք է հեղինակի տասնամ-
յակների աշխատանքի, և դա հետագա ուսումնասիրողների կողմից
միշտ հաշվի է առնվում (հմմտ. *Ալիշան*, 1895. տե՛ս նաև *Ոսկեան*,
1965, 144)¹:

Եզրակացություններ

1. Ալիշանը բանասեր է բառի ամենաընդգրկուն իմաստով,
ներառում է նաև հայերենագիտությունը. նրա գործի այդ կողմը,
թերևս, պակաս ուշադրության է արժանացել:

2. Ալիշանի տեղագրական աշխատությունները հայերենի
տերմինաբանության մշակման և կարգաբերման տեսանկյունից օ-
րինակելի են, թեև մինչև օրս չունենք այս խնդրին վերաբերող որևէ
ուսումնասիրություն:

3. Հայոց դիցաբանության լավագույն ուսումնասիրողի հա-
յացքների շատ կետեր մնում են գիտության այդ բնագավառի ու-
շադրության կենտրոնում:

4. Ստ. Ռոշքայի ձեռագիր բառարանի առաջին ուսումնասի-
ողը Ալիշանն է, նրա գնահատությունը առարկայական (օբյեկտիվ) է

¹ Ուշադրության է արժանի նաև այն, որ հետագայում Ալիշանը հայերեն
բուսանուններին անդրադառնալիս նկատի է ունեցել նաև Ռոշքայի բառարանի
կյուրերը (հմմտ. *Ալիշան*, 1895. տե՛ս նաև *Ոսկեան*, 1965, 144):

և ճիշտ: Այդ գնահատությունից ևս պարզ է դառնում, որ բառարանի շատերին անհայտ մնալը հարուցում է ակոսասք:

Արևմտահայերենի նմուշներ Հովհ. Թումանյանի արձակում

Ներածություն

Հովհաննես Թումանյանն ունի արձակ գործեր (կարճ պատմվածքներ), որոնք, թերևս ինքնաբերաբար, համատեղում են նոր հայերենի գրական երկու («արևելահայ» և «արևմտահայ») տարբերակները: Դրանք Թումանյանի լեզվաոճով թեև առած նոր լեզվի գրական համադրություն են, միասնական հայերենի օրինակելի փորձ, հաջողված միաձուլություն:

1. Հարցի լեզվագիտական կարևորությունը

Նախ ասենք, որ մենք բնավ այն մտքին չենք, թե նոր հայերենը ներկայանում է իբրև երկու գրական լեզու՝ սկսած 1810-ական թվականներից (ըստ Աճառյանի, Ջահուկյանի և այլոց՝ 19-րդ դ. կեսերից): Այլ առավելապես արտաքին պայմանների բերումով է, որ այսօր ևս այն ներկայացվում է իբրև միևնույն գրական լեզվի երկու՝ «արևելահայ» և «արևմտահայ» տարբերակ, ընդ որում կանոնարկված լինելու տարբեր աստիճանով¹:

Ճիշտ է, դրանց բանավոր-խոսակցական հիմքերը, ըստ բարբառագիտական ավանդական ուսումնասիրությունների տվյալների, ինչ-ինչ հատկանիշներով տարբեր են, սակայն ընդհանուր տեսական առումով նոր աշխարհայեցողության, ուստի մտածողության մեկ միասնություն են. տարբերությունները, կարելի է ասել, ավելին չեն ընդհանրության կամ առավելագույնի համեմատությամբ:

Սա մեզ համար տեսական կանխադրույթ է առհասարակ հայերենի, տվյալ դեպքում նոր գրականի իրական պատմության, նրա

կառուցվածքի ամեն կարգի քննության համար: Այդպես նաև անդրադառնալու ենք մեր բուն թեմային՝ Հովհ. Թումանյանի լեզվի մեկ այլ ինքնօրինակության, որ մտածողության առումով հուշում է, թե մեր լեզուն միանգամայն միասնական է և նույնքան ամբողջական:

Այս հարցը, ինչքան մեզ հայտնի է, ուշադրության առարկա չի եղել ազգային հանճարի լեզվի և պոետիկայի քննությանը նվիրված ուսումնասիրություններում: Այստեղ նյութը սակավ է, այնքան էլ մեծ չէ, սակայն լիովին կարևոր է Հովհ. Թումանյանի արձակում նոր գրական հայերենի հիշած տարբերակների համատեղ գործածության, ըստ այդմ միասնական լինելու չափ մոտիկության առումով:

Հայ գրականության մեջ կան նոր գրական լեզվի երկու տարբերակների մերձակա (միասնական) գործածության լավագույն օրինակներ (Վ. Փափագյան, Վ. Թոթովենց, Ա. Կոթիկյան և ուրիշներ):

Թումանյանը 1890-1910-ական թթ. արհավիրքների տարիներին գրել է նաև երեք պատմվածք, որոնք բովանդակությամբ կարճ պատումի գոհարներ են: Նկատի ունենք «Լեռների հովիվը» (1894 թ.), «Երկու հայր» (1907 թ.) և «Խրիմյան Հայրիկի օրերից մինը» (ն. թ.) անհամեմատ խորունկ ստեղծագործություններ, երեքը միասին հազիվ սովորական ծավալով տասը էջ, և այդքանով անմոռանալի, այդքան իրական (ռեալ) արտացոլում պատուհասված գրկանքի:

Ամամա Լոռեցին այդ նույն ազնվահոգի թեմայով ունի նաև մի շարք բանաստեղծություններ, որոնք նոր գրական լեզվի բարձր մշակվածության օրինակ են՝ «Հայրենիքիս հետ»-ը (1915 թ.), չհաշված նրանում ընդամենը երկու անգամ *էն*, մեկ անգամ *պիտ* բառերի գործածությունը, ինչպես նաև «Հոգեհանգիստ»-ը (ն. թ.), նորից չհաշված մեկական անգամ *էն* և *էսպես* բառերի կիրառությունը. այդ բանաստեղծություններում երևում է պատմական անցյալ ունե-

¹ Երբեմն նաև՝ արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, որ տեղին չէ:

ցող մի ժողովրդի ցավի մեջ անգամ հառնող ազնվական վեհությունը՝ նա՛ն իր լեզվով:

Իսկ հիշյալ պատմվածքներում այդ վեհությունը ինքն իրեն վերագտնելու մղում ունի. դա նկատում ենք հիշածս պատմվածքների հովվի խոսքում, տեր հոր աղերսում, Հայրիկի հորդորներում:

Ավելին՝ կա ուսման նվիրումի, գավակներին հոգացողի, հավատքին ծառայածի առժամանակյա ելք գտնելու հույսը: Իսկ հայոց Հայրիկը իր մեծությունը դարձնում է սովորական, նա իրեն հավասար է դնում ամեն մի պահի մեջ, «կատակում է», գոտեպնդում է իրեն ապավեն դիտողներին, իր գավակներին:

Պատմվածքների ուղղագրությունը տալիս ենք ըստ Թումանյանի երկերի վերջին տարիների երևանյան տպագրության, կետադրության մեջ ունենք անհրաժեշտ որոշ շտկումներ (*Թումանյան*, 1994, 35)¹:

Առաջին պատմվածքից հիշենք.

«...մեկը հարցրեց. – Ո՞րտեղից ես, տղա՛:

- Սասունիցն, աղա՛:

Հապա ո՞ր ես եկել;

- Ես չոբան էի, աղա՛, թուրքեր մեր գեղ քանդեցին ... իմ ոչ-խար լե թալնեցին...»:

Երկրորդ պատմվածքում նկատում ենք.

«- Հայրիկի աջը կուզեմ համբուրել,- խնդրեց նա Վեհարանում, ու ներս թողին:

- Բարո՛վ, տե՛ր հայր,- աջը մեկնեց հայրիկը»:

«-Ո՞րտեղից կու գաս;

- Սասունի կողմերեն: Ես Ա-ի տեր Սարգիսն եմ...

- Ա-ի տեր Սարգի՛սը...

- Այո՛, Հայրիկ:

¹ Այս հրատարակության մեջ շեշտակի բառերի շեշտի փոխարեն տպագրության մեջ այլ տեսակ (երկարացման-բացականչական) նշան է դրված, որն ուղղում ենք:

- Է՞...»:

«...տունս թալնեցին, վառեցին. մնացի այսպես...

- Է՛, հիմի...» (Հովհ. Թում., էջ 69):

Երրորդ պատմվածքում հանդիպում ենք.

«Գիշերները քունս չի տաներ,- ասում էր,- սենյակում (փխ. սենյակին մեջ – Վ. Հ.) կըրջեմ, կծխեմ ու կգրեմ»:

«Ո՛վ գիտի, հիմա մեռեր են ամենքը...» (Հովհ. Թում., էջ 71):

« - Օ՛հ, բարով եկար,- ասավ,- ի՞նչ կուզես...»:

« - Քեզի, ուսումնարանեն դուրս կանե՞ն:

- Ինչպե՛ս կարելի է, որ քեզի դուրս անեն...»;

- Է՛հ, դու ալ չունի՛ս...:

- Մոտ եկ, տեսնեմ: ...

- Է՛հ, հետո լավ կսովրի՛ս դասերդ» (Հովհ. Թում., էջ 72):

« - Լա՛վ, լա՛վ, դու ալ Հայրիկի պես շատախոս եղեր ես: Հապա չըսի՛ր, որ կերթամ Հայրիկին կըսեմ»:

«Լավ ըրեր ես: Ինչքա՞ն կուզեն»:

« - Ծո՛, տարեք նշանակեցեք, որ ասոր ուսման վճարը Հայրիկը պիտի տա, որ դիրեկտոր ալ չարձակի ուսումնարանեն...» (ն. տ.):

Այնուհետև՝ մեկ այլ դիպուկում.

«...-Հինգ երեխայով մնացեր եմ դռները...

« - Հա՛, խեղճ կին, անպես ժամանակներ են, որ տղամարդիկ ալ հազիվ իրենց տունը կպահեն, դու մի խեղճ կնիկ, ինչպե՛ս պիտի պահես ատքան երեխաները» (Հովհ. Թում., էջ 73):

«- Անխելք մարդ,- ընդհատեց Հայրիկը,- քեզի ո՛վ ըսավ 40 տ<արի> աստծուն ծառայես, որ ասոր քաղցած մնաս, 40 տ<արի> եթե մի վաճ<առականի> ծառայեիր, ասոր կուշտ պիտի ըլլայիր...- ու սկսեց ծիծաղել: - Է՛հ, աղեկ, կհոգանք»:

« - Ծո՛, տարեք, ըսեք ասոր թոշակ կապեն» (ն. տ.):

Այս հատվածներում (օրինակներում) գործածված ենք գտնում գրական հայերենի արևմտահայ տարբերակի բառային, քերական

նական, ոճական ձևեր և արտահայտություններ (բառակապակցություն, նախադասություն և այլն), որոնցով երկխոսության մասնակիցների ասելիքը, կարելի է շեշտել, լիովին դրսևորված է՝ իբրև տվյալ լեզվական տարբերակի կրող անձերի հաղորդակցման նմուշների:

Այդ օրինակները, լեզվական միավորների տարբերակվածության առումով, մի քանի տեսակ են:

1) Առանձին բառերի, հարադիր կազմությունների գործածություն. դրանք գրեթե գերազանցապես արևմտահայերեն ձևեր են. *այ* (էլ «այլ», նաև», երկիցս գործածված), *ադա* (երկիցս գործածված), *ադեկ*, *անսպես*, *ասօր* («այսօր», երկիցս գործածված), *ատրան*, *գեդ*, է (զարմացական. երկիցս գործածված), էհ (արհամարհանքի բացականչություն նշանակող. երկիցս գործածված), *թոշակ կապել* (հարադրություն), *լե* (էլ «այլ», նաև», բարբառային), *ծո* (կոչական՝ դիմում նշանակող. երկիցս գործածված), *կնիկ*, *հասպա* (շեշտում, հորդորական-քաջալերական՝ բացականչություն ցույց տվող), *հիմի*, *օհ* (բացականչություն նշանակող):

2) Քերականական (հոլովման, խոնարհման և այլն) յուրօրինակ ձևերի գործածություն. *ասոր* («սրա», երկիցս գործածված), *դուրս կանեն*, *եղեր ես*, *ըսավ*, *ըսեք*, *ըրեր ես*, *թախեցին* («թախանեցին»), *կգրեմ*, *կերթամ*, *կըսեմ*, *կծխեմ*, *կհոգանք*, *կըրջեմ*, *կողմերեն*, *կպահեն*, *կսովորիս*, *կու գաս*, *կուզեմ*, *կուզեն*, *կուզես*, *մեներ են*, *մնացեք եմ*, *չի տաներ*, *չըսիր*, *չունիս*, *պիտի ըլլայիր*, *Սասունիցն* (տարբերակ՝ *Սասունեն*), *ուսումնասրանեն* (երկիցս գործածված), *քեզի* (երկիցս գործածված):

3) Շարահյուսական-ոճական ձևերի (արտահայտություններ, դարձվածքներ, կոչ, հորդոր, նախատինք և այլն) գործածություն: Դրանք բավականին շատ են, նման ձևերը իմացական նշանակումներից բացի մեծ մասամբ ունեն ոճական նրբություններ (նյութանսներ), որոնք գրավորում ինչ-որ չափով այն չեն, ինչ բանա-

վորի դեպքում է լինում, որովհետև վերջին դեպքում դեր ունեն խոսքային շեշտադրումը, առոգանությունը, ելևէջավորումը և այլն:

Ստորև ներկայացնում ենք խոսքային մակարդակի արևմտահայ դրսևորումների հետևյալ տիպական տեսակները.

ա) հաստատում-հավելադրություն՝ *այ* (լե). (ոչխար) *լե թախեցին, դու այ չունի՛ս: Տղամարդիկ այ: Է՛հ: Հա՛: ... դիրեկտոր այ չարձակի ուսումնասրանեն:*

բ) Հարցում, հարցում-տարակուսանք. *Ա-ի տեր Սարգի՛սը: Ինչպե՛ս կարելի է: Է՛: Ի՞նչ կուզես: Ինչպե՛ս կարելի է, որ քեզի դուրս անեն:*

գ) Զարմացում-տարակուսանք. *Է՛, հիմի: Օ՛հ, բարով եկար:*

դ) Հորդոր, հարցում-հորդոր. *Դե, ե՛կ, տեր Սարգիս, մոտ ե՛կ: Դու այ չունի՛ս: Հետո լավ կսովորի՛ս դասերդ: Հասպա չըսի՛ր, որ կերթամ Հայրիկին կըսեմ»:*

ե) Ավարտ-եզրափակում. *Մտեր են ամենքը: Մոտ եկ, տեսնեմ: Լավ՛, լավ՛: Դու այ Հայրիկի պես շատախոս եղեր ես: Լավ ըրեր ես: Ինչքա՛ն կուզեն: Տարեք նշանակեցեք: Ասոր ուսման վճարը Հայրիկը պիտի տա: Ադեկ, կհոգանք: Տարե՛ք, ըսե՛ք: Խեղճ կին: Կուշտ պիտի ըլլայիր:*

զ) Հեզնանք-հանդիմանություն. *Անխելք մարդ: Քեզի ո՛վ ըսավ: Ինչպե՛ս կարելի է, որ քեզի դուրս անեն:*

է) Բացականչություն. բացականչություն-հեզնանք- «Ո՛վ գիտի: Բարո՛վ, տե՛ր հայր: Քեզի, ուսումնասրանեն դուրս կանե՛ն: Ծո՛, տարեք նշանակեցեք: Ծո՛, տարեք, ըսեք ասոր թոշակ կապեն:

ը) Հաստատում-եզրահանգում. *Անպես ժամանակներ են: Դու մի խեղճ կնիկ: Է՛հ, ադեկ, կհոգանք:*

թ) Խոսքային հավելական միավորների (բառ, կապակցություն, նախադասություն և այլն) գործածություն. *Սասունի կողմերեն. Ես Ա-ի տեր Սարգիսն եմ: Այո՛, Հայրիկ:*

Բերված օրինակներով և նման վերլուծությամբ չի ավարտվում սույն թեմայի արծարծումը: Սակայն ակնհայտ մանրամաս-

նությունը հիմք է նկատելու արդի հայերենի գրական տարբերակների միջև այնպիսի տարբերության գոյություն, որ փաստ է ոչ թե մասնավորի, այլ ընդհանրության մեջ յուրահատուկ դրսևորման: Իսկ դա, անշուշտ, ամեն մի լեզվի տարբերակային (խոսքային-ճանկան) հարստություն է՝ պայմանավորված մտածողության լիա-ծավալությամբ:

Եզրակացություններ

1. Նոր գրական հայերենի տարբերակների միասնացման օրինակներ կան հայ գեղարվեստական, նաև հուշագրական գրականության մեջ, Թումանյանինը տարբերվում է եղածներից:

2. Մանրամասն քննությունից պարզ է դառնում նման լեզվական ձգտումի կարևորությունը:

3. Թումանյանի այդ գործերն, անկասկած, գրավիչ և նպատակային են լեզվի միասնացման տեսանկյունի նույնպես:

Բառը Ավ. Իսահակյանի վաղ շրջանի չափածոյում

Ներածություն

Իսահակյանի չափածոն յուրօրինակ երևույթ է հայ նոր գրականության մեջ: Նրա լեզվի հիմնական հատկանիշներից մեկը բառի պատկերայնությունն է: Վերջինս ցայտուն կերպով երևան է գալիս վաղ շրջանում (1890-1900-ական թթ.) գրված բանաստեղծություններում: Բառի պատկերայնությունը թաթախված է ամեն կարգի քնարականությամբ (լիրիզմով): Բնության և մարդու գովերգ՝ իրականի և երագանքի, ապրածի և սպասելիքի մեջ:

Այդ տարիներին է նա գրել իր ամենից ճանաչված, ամենից շատ տարածված, ըստ ամենայնի սիրված երգերը՝ «Ծաղիկ էի նորաբողբոջ», «Հայրենիքես հեռացել եմ», «Մաճկալ ես, բեզարած ես», «Գիշերն եկավ, գով-հովն ընկավ», «Կռունկները շարան-շա-

րան...», «Սև աչերեն շա՛տ վախեցի՛ր», «Ա՛յս, մեր սիրտը լիքը դարդ, ցավ...», «Է՛յ, ջան-հայրենիք, ինչքան սիրուն ես...»:

1. Բառաստեղծությունը բառի քնարականության մեջ

Ամեն մի գրող իրականության երգիչ է յուրովի, ինքնին և իր հայրենի եզերքի խոսք-արտահայտիչը, իր ժողովրդի գալիքի երգասացը (*ռասպոդ*). հայի նոր երգիչ՝ Թումանյան, Տերյան, Բակունց ... Իսահակյան: Նրանք վիպում են, քնար են զարկում («զարնում») անցյալի մեջ և գալիքի լսելիքին, և ավելի քան հարուստ է հայոց բառ-երգասացությունը:

Ավ. Իսահակյանը անձնային քնարերգու է, մանավանդ վաղ շրջանի իր չափածոյի մեջ: Նա եղավ իր ծնդավայր-եզերքի և իր ծնող ժողովրդի երկրի մեծ երգիչը: Իր գեղարվեստական խոսքի ամենափայլուն մասունքներով նա դարձավ մարդկության հոգևոր բանարվեստի հայ ներկայացուցիչ. նաև Իսահակյանը աշխարհին ծանուցեց հայոց հոգու մեծության և մաքրության, տվեց ստեղծարար կյանքով ապրելու վառ օրինակ. քնարականություն կա նրա կազմած նոր բառերում, հին բառերի նրբություններում. «...փուչ աշխարհը *անկամորդ է*» (Ավ. Իս., էջ 61), *անդուտ* «վայրի փոքրիկ բադ». «Եվ եղեգներդ՝ տրտում ու տխուր, / *Անդուտներիդ* հետ ինձ ողջունում են» (Ավ. Իս., էջ 60), *աստղոտ* «աստղալից». «Վայր է ընկնում *աստղոտ* երկնից» (էջ 18) և այլն¹:

Սովորաբար գրողների ստեղծագործությունները ներկայացվում են ըստ շրջանների, ամենից առաջ բովանդակային կողմի հիման վրա: Այս դեպքում նկատենք, որ Իսահակյանի չափածոն տարբեր փուլերի է ոչ միայն այդ, այլև լեզվի, բառապաշարի և գեղարվեստական մտածողության տարբերության հատկանիշով: Նրա վաղ շրջանի չափածոն լեզվի շատ ու շատ գծերով առանձնանում է, ունի տարածուն երակներ հետագայի համար:

¹ Հետագայում կից նշում ենք միայն էջը:

Այդ շրջանում նա առավելապես քնարական-անձնային բանաստեղծ է, իր ծննդավայրի երգիչ, որ ըստ էության լիովին ենթադրում է հայրենի եզերքի, հայրենիքի երգիչ: Վաղ տարիների բանաստեղծությունները, որոնք ամբողջական միայն վերջին տարիներին են լույս տեսել, համակված են հայության վիճակի ամոքիչ հույսով, դրանցում ևս երիտասարդ բանաստեղծի քնարականն է, որը մնաց ընդմիշտ, եղավ հոգեխոսով և անվարան:

Բախտավորություն է լինել նման բանաստեղծ, իսկ Շիրակի դաշտերի ու Մանթաշի հովերի երգիչ Իսահակյանը եղել է. բանաստեղծի քնարականությունը դուրս է տարիքից ու հասակից, սովորական կյանքի ձևացումներից. նա ապրեց երազով, հույսով, կարոտով:

2. Վաղ շրջանի բանաստեղծության գեղարվեստական կողմը

Այն ամենից առաջ պոետիկայի հարց է, և այն ծրարված է լեզվի մեջ: Դրանք կտորներ են իբրև մեկ ամբողջություն, իսկ վերջինս բնության գեղեցկության, մարդու գեղեցիկ ապրումների՝ մաքուր առնչության, հովվերգական զգացողությունների, սիրո հանդիսություն է:

Այստեղ ևս բառի գործածությունը առանձին կամ շարահարության (սինտակտիկայի) մեջ շղարշված է գարնան («գարթոնքի») և «պերճ հյուսվածքի» (մարդու, ավելի ճիշտ՝ կյանք առնողի) սերտաճումով:

Այսպես, 1998 թ. Իսահակյանը լինում է Օդեսայում. բանաստեղծություններ ունի, որոնք ծովի (բնության) և մարդու (հոգեկան) ակնկոծումների բացառիկ կտորներ են՝ ներշնչանք, բառի պատկերայնություն, ոճի արտահայտիչ ձևերի շոյալություն,- ամենը ժողովրդական լեզվի և մայրենի բարբառի կապակցումով: Առնչությունը ծովի հետ է. ծովն անհատակ ու խորն է, ինչպես բանաստեղծի զգացումն ու ներաշխարհը, մեկը պարփակում է արիք ու ծփանք, մյուսը՝ հոգս, սեր ու տառապանք, մարդ արարածի դժվարություն՝

աստծու ստեղծած երկնքի տակ: Այստեղ է գրվել մեկուկես տասնյակ բանաստեղծություն. հաղորդակից են ինքն ու ծովը (մարդն ու բնությունը՝ խոռվյալ ու հարաշարժ):

Անհատի խոսքը կառուցվում է անհատի ոճի՝ առանձին կիրառության մեջ. այսպիսին է լեզվի առնչությունը ոճին: Այնինչ լեզուների ոճերի ուսումնասիրությունը մինչև օրս, կարելի է ասել, պարփակված է եղել հին աշխարհի ճարտասանական արվեստից եկող սխեմայի մեջ, թեև եղել է փորձ վերանայել այդ սխեման, լեզվի ոճը քննել ինքնին ամենից առաջ ֆրանսիական ոճագիտության մեջ (Շ. Բալլի և ուրիշներ) (*Բալլի*, 1961):

Մեզանում ևս այդ սխեմայով գրվեցին տեսական աշխատություններ, նույնիսկ կազմվեցին ձեռնարկներ, ամենավերջինը դրա համեմատաբար նոր մշակմամբ գործածվող դասագիրքն է (*Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան*, 1976): Այնինչ հարցի քննության ճանապարհը այլ պիտի լիներ, այսինքն՝ լեզվի ոճերի քննություն ոչ թե ճարտասանության, այլ լեզվաբանության ոլորտում, առանձին՝ լեզվի առնչությամբ, ավելի կոնկրետ՝ լեզվի և խոսքի փոխհարաբերության մեջ (*Համբարձումյան*, 1981, 182-191):

Հայ բնագրագիտության, բառի խորքային քննության գիտության անելիքն է Իսահակյանի հայտնի և նոր-նոր լույս տեսնող, երևան եկող ողջ ստեղծագործության (բանաստեղծություն, արձակ, նամակներ, հուշեր, մտքեր և այլն) մանրամասն ուսումնասիրություն: Դա կլինի լրացում մինչև այժմ կատարվածի: Եվ այս մտքով էլ ձեռնամուխ ենք եղել մեր այս աշխատանքին:

Բնագրի թեմատիկական բազմաշերտ է, այսինքն՝ զավակ-մայր հարաբերություն, քաղաքացի - հայրենիք սերտություն, մարդ - բնություն առնչություն, սիրելի էակ-սիրահար էություն ձգտում,- և այդ ամենը՝ կորուստ և ափսոսանք («դարդ ու ցավ») բառային-պատկերային կտորներ (դեկորներ) են գեղարվեստի փիլիսոփայական համատեքստում, և այդ ամենը ժողովրդական մտածողության

ձևով, ինչպես ասում են՝ բառ ու բանի («խոսք ու գրույցի») հորինվածքներում:

Ստորև բառային մակարդակում անդրադառնում ենք բանաստեղծի լեզվի իրացում հանդիսացող խոսքի տարբերության՝ ոճի տեսանկյունից:

3. Հեղինակային բառի գործածության ժամանակային հանգամանքներ: Նկատի ունենք բառարանային միավորի լեզվական-բնագրային նշանակումները, որոնք տարբեր կերպ են առնչվում գրավոր խոսքի համաժամանակությանը՝ համեմատությամբ ներկայիս բառարանագրական տվյալների (հմմտ. ԺՀԼԲԲ, 1969-1980):

ա) Բառեր, որոնք չունի հայոց լեզվի բացատրական բառարանը. *աղբրագով* «աղբյուրի (ջրի) գովություն՝ սառնություն ունեցող»։ «Իսկ Շուշանը *աղբրագովին* ... / Վարդ երեսն է վվանում» (էջ 11), *մթնշող* «մթնշաղ. օրվա բացվելու կամ մթնելու պահը»։ «Զով հովերն էլ *մրթընշողես* / Աստղերի հետ են զըրցում» (էջ 4)¹, *շաղաղ* «շողշողուն. պայծառ»։ «Իմ արցունքով *շաղաղ* վարդը / Շվաք տվեց իմ վրա» (էջ 3)², *նարին* (< *նար*)։ «Ա՛խ, նագիկ ջան, եղնիկաղջիկ, / *Նարին* կուրծքդ թող պագեմ» (էջ 38)³:

բ) Բառարանն ունի միայն Իսահակյանի վկայությամբ. *անկամորդ* «չկամ. անբարյացակամ»։ «...փուչ աշխարհը *անկամորդ*

է» (էջ 61), *անդուտ* «վայրի փոքրիկ բաղ»։ «Եվ եղեգներդ՝ տրտում ու տխուր, / *Անդուտներիդ* հետ ինձ ողջունում են» (էջ 60), *աստղոտ* «աստղալից»։ «Վայր է ընկնում *աստղոտ* երկնից» (էջ 18), «...*աստղոտ* վսեմ ապագան» (էջ 26), *արունքներ* «արյան ծարավ»։ «Էս աշխարհը *արունքներ* է, ո՛չ գութ ունի, ո՛չ խիղճ ունի» (էջ 70), *դժմիտ* «մտքով դժնի և վատ»։ «Քանզի մարդիկ, որ *դժմիտ* են և դաժան» (էջ 58), *հանկարծորեն*. «հանկարծակի. անսպասելի ձևով»։ «Եվ *հանկարծորեն*՝ պարզ ու անսսեմ» (էջ 62), *հեզաչյա* «հեզ՝ խոնարհ աչքեր ունեցող»։ «Մոայլ բանտիս նեղ լուսանցքից / Աստղեր տեսա *հեզաչյա*» (էջ 30):

գ) Բառարանն ունի միայն այլ՝ բանաստեղծին ժամանակակից հեղինակների վկայությամբ. *արվալա* «ալ. կարմիր»։ «Ալագյազը ծաղկունքներով, / Զառ ու զըմբուխտ, *արվալա*» (էջ 32. հմմտ. Շ. Կուրդիկյան), *մեղամաղձոտ* «մեղամաղձով լի»։ «Հոգնած նայում են քեզ, *մեղամաղձոտ*» (էջ 60. հմմտ. Նար-Դոս, Ա. Բակունց), *նորաբողբոջ* «նոր բողբոջած. նորածիլ»։ «Ծաղիկ էի *նորաբողբոջ*, / Սարի լանջում, երկնի տակ...» (էջ 6. հմմտ. Ա. Ծատուրյան), *վշտատոչոր* «վշտից տոչորված»։ «Լավկան ուռին, հեզ ուռին / *Վշտատոչոր* լաց է լինում...» (էջ 4. հմմտ. Ա. Ծատուրյան), *սանձակոտոր* «սանձը կտրող. անզուսպ»։ «մաքառող» «Ծովն ալեկոծ, *սանձակոտոր*, / Իր քար շրթերն է կրծում» (էջ 49. հմմտ. Վրթ. Փափագյան, Դ. Դեմիրճյան), *քրցրցել* «մաս-մաս պոկոտել»։ «Ա՛խ, իմ վիշտը՝ մի չար ուրուր, / Սիրտս է անդուլ *քրցրցում*» (էջ 49)¹:

դ) Բառարանն ունի Իսահակյանի և նրան ժամանակակից այլ հեղինակի վկայությամբ. *կենսավառ* «կենսուրախ»։ «Մի՛թե պիտի փոշի դառնան / Այդ աչքերըդ *կենսավառ*» (էջ 10. հմմտ. Վ. Տերյան), *շափաղ* «փայլ. պսպղոց»։ «Ամպի մովը ընկավ ծովը՝ / *Շափաղ* դիպավ քարափին» (էջ 31. հմմտ. Ա. Բակունց, Վ. Նորենց):

¹ Լեզվի ինստիտուտի բառարանը տալիս է ըստ Մալխասյանցի բառարանի:

¹ Բառը կա Ստ. Մալխասյանցի բառարանում (ՄՀԲԲ, 1944, 319):

² Լեզվի ինստիտուտի բառարանն ունի միայն *շաղաղ-շարնաղ* կազմության մեջ՝ կիրառված Հ. Թումանյանի կողմից. բառը կա Մալխասյանցի բառարանում (ՄՀԲԲ, 1944, 495):

³ Բառն ունի միայն Մալխասյանցի բառարանը (ՄՀԲԲ, 1944, 413)՝ վերցված Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ից (*Աճառյան*, 1977, 431). այդ բառը Աճառյանը գտնում է Գր. Մագիստրոսի մի երկում, դրան նախկինում անդրադարձել է իր բառաքննական դիտարկումներին վերաբերող մի աշխատանքում և կարծում է, թե բառը փոխառություն է, գործածվել է «կրակ» իմաստով դրված սեռական հոլովի ձևով (*նար-ի-ն*), որն առարկելի է. Իսահակյանի՝ բերված համատեքստում գործածությունը հուշում է, որ բառը ածական է՝ կազմված *-ին* մասնիկով (հմմտ. *դյուր-ին*, *մեկ-ին*, *նրք-ին* և այլն), ուստի այն առանձին, լայն քննության առարկա է:

ե) Բառարանն ունի միայն հետագա հեղինակի վկայությամբ. *բարձրաթիչ* «բարձրից թռչող. դեպի բարձրը սլացող». «*Բարձրաթիչ*, ինչպես արծիվ վեհափառ» (էջ 58. հմմտ. Գ. Մահարի). *գոտեպնդվիմ* «քաջալերվել. սրտապնդվել». «Եվ ես ուժ կառնիմ, կգոտեպնդվիմ» (էջ 69. հմմտ. Ս. Էսանգադյան), *սափառնաթև* «թևերը տարածած. սավառնելով». «*Սափառնաթև*, ինչպես արծիվ սևաթույր» (էջ 58. հմմտ. Ն. Ջարյան):

զ) Բառարանն ունի կա՛մ միայն նշելով՝ մամուլ, կա՛մ առանց վկայության. *մտորմունք* «մտորում». «Ծովն էր հևում մեղմ ու թալուկ՝ / *Մտորմունքի* մեջ անծայր» (էջ 48. հմմտ. մամուլ), *շողափոր* «փայլուն. շողշողուն». «Թե՛ դեպի կյանքը, թե՛ դեպի մարդիկ / *Շողափոր*, պայծառ հավատով զինված» (էջ 5. առանց վկայության):

է) Բառարանն ունի տարբեր կարգի, հիմնականում այլ վկայություններով, մեկ դեպքում՝ Իսահակյանին վկայաբերելով. *աստղափառ* «աստղալից. աստղերի պես ձայլուն». «Ժպիտն *աստղափառ*, կրնճիռը մռայլ» (էջ 29). հմմտ. Սարմեն, Թումանյան), *արևերես* «արևի կողմը. արևահայաց» (հմմտ. բրբռ.՝ Աղավնի), որից՝ *արևերես ելնել* «բուսնել. կանաչել». «Գարունն եկավ,- *արևերես* / Ելան ծիլ ու ծաղիկներ» (էջ 35), *ինքնամոռացում* «իր անձը մոռանալը. մի բանով շատ տարվելը». «Կախարդեն ուշքըս *ինքնամոռացման...*» (էջ 10. հմմտ. Դ. Դեմիրճյան, նաև թարգմանություն), *տիեզերատարած* «տիեզերքում՝ անծայրության մեջ տարածված». «Եվ տենչանքներով *տիեզերատարած*» (էջ 62. մամուլ, նաև Իսահակյան):

Նկատենք նաև, որ Իսահակյանն ունի *լուսանցք* բառի «լույսի թափանցելու անցք՝ բացվածք» իմաստով գործածություն, որի համար բառարանը տալիս է վկայություն Դեմիրճյանից և Ասահիտ Սահինյանից, այսինքն՝ ժամանակակից կամ հետագա հեղինակից. «Մռայլ բանտիս նեղ *լուսանցքից* / Աստղեր տեսա հեզաչյա / Որ սրգավոր ու թախծալից / Նայում էին ինձ վրա» (էջ 30):

4. Գծիկով գրվող բառերի գործածությունը: Դրանք մեծ մասամբ հեղինակային կազմություններ են, մասամբ գալիս են լեզվի՝ իր ժամանակի խոսակցական տարբերակից: Նման բառերն ավելի հատկանշական են հայերենի բանավոր-խոսակցական ոճին (հմմտ. *երկինք-գետինք*, *ծաղիկ-ծաղկունք*, *ծով- ծարավ* և այլն): Դրանց գործածությունը հեղինակային լեզվի պատկերային կողմի հատկանիշ է: Ստորև ներկայացնում ենք մի քանի խումբ՝ ըստ տարբեր խոսքի մասերի:

ա) Գոյականական կազմությամբ բառեր. սրանք քանակով շատ են, իմաստով՝ միանգամայն տարբեր, հատկանշական է դրանց ոճական-արտահայտչական կողմը՝ իբրև բառային պատկերավորման միջոց: Եվ ըստ այդմ կարելի է առանձնացնել մի քանի ենթախումբ:

1) Բնության որևէ երևույթի անվանում. օր.՝ *ակն-աղբյուր*. «Անդորր լռեն թռչունների / Վառ մեղեդին. / *Ակն-աղբյուր*» (էջ 9), *երկինք-գետինք*. «*Երկինք-գետինք* գլխուս մթնան, / *Աստեր-ալտոն* կուլամ ես» (էջ 21), *շղարշ-ամպ*. «*Շղարշ-ամպերն* երկինքն առան. / Լուսնակն անդորր կշողա» (էջ 28):

Այդպես նաև հետևյալները. *աստղ-զվարթ* (էջ 33), *աստղիկ-ալ-վարդ* (էջ 33), *գոհար-ցող* (էջ 12), *դուռն-երթիկ* (էջ 43), *երկինք - երկիր* (էջ 60), *զօր-գիշեր* (էջ 57), *ժեռ-լեռ* (էջ 31), *մշուշ-ծով* (էջ 34), *շորոր-հովեր* (էջ 15), *վարդ-արշալույս* (էջ 26), *փերուզ-երկինք* (էջ 18), *փողոց-փողոց* (էջ 65), *քար-հող* (էջ 18), *օրոր-ծովեր* (էջ 15):

2) Բնության որևէ երևույթի հատկանշում. օր.՝ *թուփ-տերև*. «Ես *թուփ-տերև*, մընամ չորնամ» (էջ 56), *խաս-բաղ*. «Մատաղ սիրտըս *խաս-բաղի* պես / Ծառով, ծաղկով կանանչ էր» (էջ 51), *ծաղիկ-ծաղկունք*. «Ջերմ համբույրի, ծով-կարոտի / *Ծաղիկ-ծաղկունք* հետըդ բե՛ր» (էջ 15):

Այդպես նաև հետևյալները. *զմբուխտ-երկինք* (էջ 18), *ծով-ա-նապատ* (էջ 16), *Հորուտ-Մորուտ* «մի ծաղկի անուն» (էջ 57), *հուր-*

վարդ (էջ 57), ձայն-ձուն (էջ 45), Շուխիկ-Հուրի «մի ծաղկի անուն» (էջ 57), շուշան-փոշի (էջ 29), սուսան-հով (էջ 31):

3) Անձի արտաքին և ներքին կողմերի (հոգեկան վիճակի) նշանակում. օր.՝ *ծով – կարոտ*. «Ծով-աչերիդ *ծով – կարոտով / Ծվաքդ եղա, ման եկա»* (էջ 11), «Ջերմ համբույրի, *ծով-կարոտի / Ծաղիկ-ծաղկունք հետըդ բե՛ր»* (էջ 15), *արև-աչեր*. «Նոր էր ծլել, արև սիրեց, / *Արև-աչեր է՛լ չկան»* (էջ 17), տխուր-տրտում. «Ազիզ մորես բաժանվել եմ / *Տրխուր-տրտում, քուն չունիմ»* (էջ 22), *փա-փաք-սիրտ*. «Պապակ-սըտիս, *փափազ- սըրտիս / Անխոս դիպան ու անցա՛ն»* (էջ 22):

Այդպես նաև հետևյալները. *դարդար // դար-դար* (էջ 7), *եղ-նիկ-աղջիկ* (էջ 38), *ծով-ծամեր* (էջ 37), *ծով-ծարավ* (էջ 58), *ծով-սիրտ* (էջ 47), *ծով-ցավեր* (էջ 15), *նազան-ծածան* (էջ 29), *շուշան-կուրծք* (էջ 12), *սար-դարդեր* (էջ 15), *վարդ-նազելի* (էջ 12), *տխուր-մրմունջ* (էջ 13):

4) Իրականության գնահատողական հատկանշում. օր.՝ *ջան-հայրենիք*. «Է՛յ, *ջան-հայրենիք*, ինչքա՛ն սիրուն ես» (էջ 66), *սև-աշ-խարհ*. «Մի բուռ հողով բերանս ծեփես, / Ցավի, մահի *սև-աշ-խարհ»* (էջ 66), *քար-աշխարհ*. «Էլ ինչո՛ւ ես քարը թողնում քարի վրա *քար-աշխարհ»* (էջ 47):

Այդպես նաև հետևյալները. *արուն-ծով* (էջ 41) // *արյուն-ծով* (էջ 66), *հնդու-մաթա* (էջ 7), *փիրուզ-աթոռք* (էջ 50), *փուշ-աշխարհ* (էջ 66), *քար-հող* (էջ 46):

բ) Ածականական կազմությամբ բառեր. օր.՝ *արվան-արվան*. «Դա՛րդըս լացեք, սարի սմբուլ, *արվան-արվան* ծաղիկներ» (էջ 21), *անտուն-անտեր*. «Երկինք-գետինք գլխուս մթնան, / *Անտուն-անտեր* կուլամ ես» (էջ 21), *մուրիկ-մուրիկ*. «Ու ման կուգա միալար / *Մուրիկ-մուրիկ* եղնիկին» (էջ 57):

Այդպես նաև հետևյալները. *անքուն-անտուն* (էջ 33), *երկինք-լազվարթ* (էջ 33) // *երկիր - լաջվարդ* (էջ 33), *գառ-վառ* (էջ 32, 52, 68), *թափ-ծափ* (էջ 32), *լուռ-սևավոր* (էջ 60), *լռիկ-մնջիկ* (էջ 40, 41),

ծարավ-պապակ (էջ 61) // *պապաք-ծարավ* (էջ 11), *կանանչ-կարմիր* (էջ 61), *հարհանդ-մարմանդ* (էջ 15, 28), *հոնգուր-հոնգուր* (էջ 21), *ծաղիկ-մաղիկ* (էջ 19), *մութ-մուրդուն* (էջ 22), *նազան-ծածան* (էջ 29), *պիծիկ-միծիկ* (էջ 7), *վարդ-նազելի* (էջ 12):

գ) Բայական կազմությամբ բառեր. օր.՝ *եղնել-բազմել*. «Աստ-դունք մեկ-մեկ *եղան-բազման / Երկնի փիրուզ-աթոռքում»* (էջ 50), *ճարում-ճաքճում*. «Երկիրը սատած *ճարում-ճաքճում...»* (էջ 14), *ուտել-խմել*. «Հարուստ մարդիկ *կուտեն-խմեն / Աշխարհի ճոխ սեղանից»* (էջ 46) և այլն:

5. Իսահակյանը ժողովրդական իմաստուն լեզվի մշակ

Մեծ բանաստեղծի վաղ շրջանի բանաստեղծության յուրօրինակ կողմերից մեկը, թերևս, լեզվի ժողովրդայնությունն է: Եվ պատահական չէ, որ այդ շրջանի շատ գրվածքներ դարձել են («անհայտ հեղինակի»՝ ժողովրդի սիրելի երգեր. «Դա՛րդըս լացեք...», «Սիրեցի, յարըս տարան...», «Սև-մութ ամպեր ճակտիդ դիզվան...» և այլն): Այդ երգերը գրված են ոչ թե բարբառային, այլ ժողովրդական լեզվով. բառի գործածության ակունքներն իր ժամանակի, իր հայրենի եզերքի տոհմիկ հայության լեզվի (բառի, խոսքի) մեջ է՝ հարուստ, իմաստալից, պատկերավոր, անմիջական:

Ունի նաև բանաստեղծություններ, որոնք գրված են, այսպես կոչված, «մաքուր» գրականով, ոչ մի բառ՝ խոսակցական կամ այլ կարգի, չի հանդիպում. «Ա՛խ, անհուն սեր ես ունեի...», «Կուգեի լինել գարնան արեգակ», «Տիեզերական զանգ» (1899 թ.) և այլն:

Կարելի է նշել հեղինակային բառի (խոսքի) գործածության մի քանի խումբ:

ա) Ընդհանուր խոսակցական բառեր՝ ըստ առանձին խոսքի մասերի. դրանք կազմությամբ ոչ միայն պարզ, այլև գծիկով գրվող, հարադրությամբ հանդես եկող բառեր են:

1) Գոյական. օր.՝ *մերիկ* «մայրիկ». «-Անգին *մերի՛կ*, հերիք հուսաս, / Բռ շողշողուն աստղն ընկավ» (էջ 18), *մտորմունք*. «Ծովն էր հեռում մեղմ ու թալուկ՝ / *Մտորմունքի* մեջ անծայր» (էջ 48), *փա-*

իաք-սիրտ. «Պապակ-սըրտիս, փափագ-սըրտիս, / Անձեն դիպան ու անցան» (էջ 22), փուշ-աշխարհ. «Վերջն էլ պիտի, փուշ-աշխարհ, / Մի բուռ հողով բերանս ծեփես» (էջ 66) և այլն.

Այդպես նաև հետևյալները. աղբուր (էջ 32), աղունիկ (էջ 30), ամպ ու զամպ (էջ 4), սպաստ և անասպաստ (էջ 62), արյուն-ծով (էջ 66) // արուն-ծով (էջ 41), արևերես (էջ 35), դուն-երթիկ (էջ 43), երկինք-երկիր (էջ 60), զառ ու զարբար (էջ 32) // զառ ու զըմբուխտ (էջ 32), զմրուխտ-երկինք (էջ 18), զօր-գիշեր (էջ 57), թուփ-տերև (էջ 56), ժեռ-լեռ (էջ 31), լազվարթ (էջ 30) // լաջվարդ (էջ 33), ծաղիկ-ծաղկունք (էջ 15), ծով-ծամեր (էջ 37), ծով-սիրտ (էջ 47), ծով-ցավեր (էջ 15), ձայն-ձուն (էջ 45), ձենիկ (էջ 35), ձուն «ձյուն» (էջ 41), ճուղք «ճյուղեր» (էջ 29), մըթընշող (էջ 4), մշուշ-ծով (էջ 34), շափաղ (էջ 31), շղարշ-ամպ (էջ 28), շվաք «ստվեր» (էջ 8), պասպաք-ծարավ (էջ 11), պասպակ-սիրտ (էջ 22), սառուց «սառույց» (էջ 42), սար-դարդեր (էջ 15), սև-աշխարհ (էջ 66), սուսան-հով (էջ 31), վարդ-արշալույս (էջ 26), վարդ-նազելի (էջ 12), տխուր-մրմունջ (էջ 13), ցորեկ «ցերեկ. կեսօր» (էջ 37), ունք «հոնք» (էջ 7), փողոց-փողոց (էջ 65), քար-հող (էջ 46), քար-աշխարհ (էջ 47), քարիի տակ (էջ 43), օրոր-ծովեր (էջ 15):

2) Ածական. օր.՝ կանանչ-կարմիր «նոր. դեռահաս». «Երագներըս կանանչ-կարմիր», / Արեգակներս ու՛ր գնացին (էջ 61), մորիկ-մորիկ «մոլորված. մտամոլոր». «Ու ման կուգա մարալին // Մորիկ-մորիկ զօր-գիշեր» (էջ 57), պուպուշ «զեղեցիկ. սիրուն». «Պուպո՛ւշ դարդար, նըխշուն բալա...» (էջ 7):

Այսպես նաև հետևյալները. անտուն-անտեր (էջ 21), աստղոտ «աստղալից» (էջ 18, 26), քանձր (էջ 32), զառ-վառ (էջ 32, 52, 68), թևաթափ (էջ 55), լուռ-սևավոր (էջ 60), լռիկ-մնջիկ (էջ 40, 41), խողոր (էջ 45), ծարավ-պասպակ (էջ 61), ծով-ծարավ (էջ 58), կարմրուն (էջ 72), հարհանդ-մարմանդ (էջ 15, 28), մաղիկ-մաղիկ (էջ 19), մենիկ «միայնակ» (էջ 10), մենձ «մեծ» (էջ 67), մութ-մոլորուն (էջ 22), նազան-ծածան (էջ 29), նըխշուն // նիշուն (էջ 47, 68), պիծիկ-միծիկ (էջ 7):

3) Բայ. օր.՝ արծավ «արածեց». «Վազեց մարալն դուման-սարեն, / Ծովում լողցավ ու արծավ» (էջ 31), թոնիս «թոչեմ». «Երեն՛կ, երեն՛կ երագ լինիմ, / Թըռնիս մոտըդ, մայրի՛կ ջան» (էջ 22), կենես «անում ես». «Պաճիկ կենես... օրոր, լա, լա» (էջ 7), կյանք կուտա «կյանք է տալիս». «Սեր կուտա կույսին, / Կյանք կուտա անկյանք / Չոր անապատին...» (էջ 16):

Այդպես նաև հետևյալները. արձկի «արձակի. ազատի» (էջ 23), բույր կուտա «բուրում է» (էջ 15), զրցում «զրուցում» (էջ 4), դարդարիս «դարդար առնես» (էջ 9), դիզվին «կուտակվեն» (էջ 10), զարնեմ «զարկեմ. խփեմ» (էջ 32), էրվում եմ «այրվում եմ» (էջ 8), ընկնիս (էջ 30), թոռնան «թառամեցին» (էջ 40), լավցու «լավացրու. առողջացրու» (էջ 45), լինիս «լինեմ» (էջ 22), ծեծկել «մի քանի անգամ խփել» (էջ 14, 29, 35), ծով կտրել «կուտակվել» (էջ 35), կալ ու կասկված «շրջափակված» (էջ 11), կարոցել եմ // կարոցեր եմ «կարոտել եմ» (էջ 22, 30), կզարկե «խփում է» (էջ 17), ճոճք եմ արեր // ճոճք եմ կասեր «ճոճք եմ արել՝ կասել» (էջ 36), մարին «հանգչեն» (էջ 10), մոռացվիս «մոռացվես» (էջ 10), չիտեմ «չգիտեմ» (էջ 38), սեր կուտա «սիրում է» (էջ 16), սևցուցի // սևցուց «սևացրեց» (էջ 8, 53), փաթ տալ «պտտել» (էջ 32), քըցըցել «պոկոտել» (էջ 49), քցել «զցել» (էջ 11):

4) Մյուս խոսքի մասերի պատկանող. օր.՝ բալի «ուր է, թե. թերևս». «Բալի դարիբ մի ճամփորդից / Կարոտ յարիս խաբարն առնիմ» (էջ 8), «Բալի Մըշու Սուլթան զորքով՝ / Իմ մուրագս տար ինձի, յար» (ս. տ.), ուրտեղ «որտեղ». «Ո՛ւրտից կուգամ, ո՛ւրտեղ կերթամ, / Միտքըս՝ շրվար, ու չիտեմ» (էջ 38):

Այդպես նաև հետևյալները. դարդար // դար-դար (էջ 7), էնոր «նրա. նրան» (էջ 31). հանկարծորեն (էջ 62), հիմի (էջ 37), հուպաս (էջ 7), շողավոր (էջ 5), վերաս «ինձ վրա» (էջ 6), քանց «քան որ» (էջ 52), քով «մոտ» (էջ 42), քու «քո» (էջ 11):

բ) Խոսակցական (բարբառային) քերականական ձևեր. դրանք ևս իրենց տեղն ունեն բանաստեղծի խոսքում, հատկապես

այն բառերը, որոնք հատուկ են ոչ միայն բանաստեղծի մայրենի բարբառին, այլև մյուս բարբառներին: Ստորև բերում ենք ըստ խոսքի մասերի՝ կից գրական համարժեք ձևի նշումով:

1) Անվանական ձևեր. օր.՝ *աստղունք* «աստղեր». «Գիշերն եկավ, գով-հովն ընկավ, / *Աստղունք* լուսնին ճայն տվին» (էջ 23), *հայրենիքես* «հայրենիքիցս». «*Հայրենիքես* հեռացել եմ, / Էտեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ» (էջ 22):

Այդպես նաև հետևյալները. *ստալոտու* «առավոտվա. առավոտյան» (էջ 4), *գլխուն* «գլխին» (էջ 4), *ծառերեն* «ծառերից» (էջ 33, 34), *ճակտին* «ճակատին» (էջ 30), *ճանկերեն* «ճանկերից» (էջ 66), *մտորմունք* «մտորումներ» (էջ 48), *սիրու* «իմ սիրո. սերի» (էջ 15), *սրտէն* «սրտից» (էջ 21), *տերններեն* «տերններից» (էջ 34), *քնածնեքուն* «քնածներին» (էջ 68), *քորիկես* «իմ քրոջից, քրոջիցս» (էջ 19):

2) Բայական ձևեր. օր.՝ *թույլ կգարկե* «թույլ խփում է» (էջ 17), *կուգեմ* «ուզում եմ» (էջ 33), *կուտա* «տալիս է» (էջ 33):

Այդպես նաև հետևյալները. *անց կացան* «անցան» (էջ 53), *սայրա* «սպրեցի» (էջ 61), *բացվավ* «բացվեց» (էջ 4), *բույր կուտա* «բույր է տալիս, բուրում է» (էջ 15), *բողորավ* «բողորեց» (էջ 35), *գոտեպնդվիմ* «գոտեպնդվեմ» (էջ 69), *դադարիս* «դադարես» (էջ 9), *զարնեմ* «զարկեմ. խփեմ» (էջ 32), *ընկնիմ* «ընկնեմ» (էջ 30), *թառամամ* «թառամեց» (էջ 67), *թռնիմ* «թռչեմ» (էջ 22), *(սխտի) թոռմին* «թառամեն» (էջ 9), *լինիմ* «լինեմ» (էջ 22), *լողցավ* «լողացավ» (էջ 31), *խարվա* «խարվեցի» (էջ 51), *խնդրվա* «խնդրեցի» (էջ 43), *ծորե* «ծորի» (էջ 20), *կառնիմ* «առնում եմ» (էջ 69), *կասեին* «ասում էին» (էջ 7), *կրդյութիս* «դյութվում ես» (էջ 20), *կիջնեին* «իջնում էին» (էջ 7), *կենես* «անում ես» (էջ 7), *կրսեն* «ասում են» (էջ 33), *կշաղե* «շաղում է» (էջ 33), *կրպնիմ* «կպչեմ» (էջ 23), *կուգաք* «գալիս եք» (էջ 22), *կորիմ* «կորչեմ» (էջ 41), *կուլան* «լալիս են» // *կուլանք* «լալիս ենք» (էջ 31, 33), *կուտամ* «տալիս եմ» (էջ 69), *հալածե* «հալածի» (էջ 9), *մեկնամ* «մեկնեց» (էջ 32), *մոռացվիս* «մոռացվես» (էջ 10),

նրասեր եմ «նստել եմ» (էջ 31), *շոյե* «շոյի» (էջ 20), *վառվամ* «վառվեց» (էջ 11), *վառվոիմ* «շողշողամ» (էջ 12) և այլն:

3) Այլ ձևեր. օր.՝ *հնոր* «նրա. նրան». «Նեղն է՝ ընկեր, հասնիմ *հնոր*, / Մեջքըս դեմ տամ, քանց ժեռ-լեռ» (էջ 31), *վերասս* «վրաս, իմ վրաս». «Սփռիր *վերասս* դողդոջ սավեր / Անհույս սրտիս սփռիանք» (էջ 6):

Այդպես նաև հետևյալները. *ուրտից* «որտեղից» (էջ 48), *քեզի* «քեզ» (էջ 56), *քեզնից* «քեզանից» (էջ 8), *քու* «քո» (էջ 11):

գ) Ժողովրդական խոսքի տարրերը հանդես են գալիս բառակապակցական կամ շարահյուսական մակարդակում: Իսահակյանի չափածոն այստեղ ևս յուրօրինակ է, և պատահական չէ, որ նա մեզանում իր ժողովրդի հոգս ու ցավի երգիչ է եղել՝ իր հուսահատ ու ցավոտ օրերին:

1) Բառակապացություններ. օր.՝ *գլուխ ծռել*. «Գլուխըս չըլներ ուսերիս վրա, / Քան թե՛ տմարդին *գլուխ ծռեի*» (էջ 59), *դարդը լալ*. «*Դարդըս լացեք* սարի սըմբուլ, / Ալվան-ալվան ծաղիկներ» (էջ 21), *ձեռը ծոցին*. «Ա՛խ, մեկ էլ ես *ձեռըս ծոցիս*, / Աչքըս ձեր դրոան մնաց» (էջ 36),

Այդպես նաև հետևյալները. *աշխարհ մոնեղ* (էջ 39), *սրուն լալ* (էջ 39), *գարուն կյանք* (էջ 39), *գարուն օրով* (էջ 60), *ծով-ցամ* (էջ 15), *կուշտ լալ* (էջ 62), *կարմիր-կանաչ* օր (էջ 39), *չոր ծառի պես* (էջ 54), *սար-դարդ* (էջ 15), *փուչ աշխարհ* (էջ 61), *օխտը սարով հեռու* (էջ 8), *օխտը տարով բաժան* (էջ 8), *օխտը տարի ծով ու պաս* (էջ 8) և այլն:

2) Նախադասություն-ոճեր. օր.՝ *գլուխս առնիմ, երթամ, կորիմ*. «Հեռո՛ւ, հեռո՛ւ, հազար ծովեր, / Գլուխս *առնիմ, երթամ, կորիմ*» (էջ 46). *Մեր կյանքը սևով անցավ*. «Վա՛խ, *մեր կյանքը սևով անցավ*, Աշխարհից բան չիմացանք» (էջ 46). *Օձի պես գալար կերթա*. «Ա՛խ - ճամփեն մահի բերան, / *Օձի պես գալար կերթա*» (էջ 21):

Այդպես նաև հետևյալները. *Աստուն-անտեր կուլամ* (էջ 21). *Անուշ լեզվին շո՛ւտ խարվա* (էջ 51). *Աշխարհից բան չիմացանք* (էջ

48, 49). Արուն կապեց սար ու ձոր (էջ 37). Բեռով հացը հարբատին տա (էջ 46). Դատարկ նրատի ... է՛յ աշխարհ (էջ 47). Երկինք-գետինք գլխուս մրթնան (էջ 21). Էս չարքերը զարկեցին (էջ 41). Ընկնիմ չոլերն անայի (էջ 41). Իմ սերըս կանանչ-կարմիր (էջ 41). Լավի դարձի հոյս չըկա (էջ 43). Լինիմ երկինք ու երկիր (էջ 13). Ծովի պես քրտնած ես (էջ 23). Կալ ու կապված անշրթա (էջ 11). Կուգես լավցու, թե ինեղրե (էջ 45). Հնագո՛ր-հնագո՛ր կուլամ (էջ 21). Ման կուգա մարալին մուրիկ-մուրիկ (էջ 57). Մատաղ սիրտըս քրքրեցին ու կերան (էջ 39). Մեզ փայ չըկա աշխարհից (էջ 46). Չոր գլուխըս ո՛րտեղ պիտի քուն մտնի (էջ 35). Չոր գլուխս չոլում թողնեմ (էջ 46). Սիրտըս խոց է (էջ 38). Սիրտն ի՞նչ պետք է (էջ 61). Քարից-հողից հաց քամե (էջ 46). Օր ու արև չըտեսանք (էջ 46). Օրուց-մանկուց հալավ-մաշավ (էջ 39) և այլն:

3) Ասույթ-արտահայտություններ. օր.՝ Իմ դարդըս որ ձերն եղներ. «- Է՛յ Մանթաշի մարմադ հովե՛ր, / Իմ դարդըս որ ձերն եղներ» (էջ 52). Կտորան իմ թևերս. «- Հե՛յ վախ... կտորան իմ թևերս, / Ընկա գիրկըդ Ալագյա՛զ» (էջ 52):

Այդպես նաև հետևյալները. Աստակ ծովին դեմ առա (էջ 39). Աչքըս ձերդրան մնաց (էջ 36). Էս ի՞նչ զուլում աշխարհ է (էջ 50). Կյանքն է երազ (էջ 55). Կյանքն ի՞նչ պետք է (էջ 61). Չայն-ձուն չըկա (էջ 45). Ճամիես մոլոր գրնաց (էջ 39). Սև օրի հասա (էջ 59) և այլն:

6. Օտար (փոխառյալ) բառերի գործածություն

Հայտնի է, որ լեզուների տարբեր կարգի շփումների հետևանքով տեղի են ունենում բառային և այլ կարգի ներթափանցումներ: Մեր լեզվի մի յուրահատկությունն էլ այն է, որ դրանք բանավոր խոսքում ավելի շատ են, քան գրականում, դրանք միայն բառի մակարդակի միավորներ են՝ բնիկ բառապաշարի համեմատությամբ:

ա) Գոյականներ. սրանք մեծ մասամբ փոխառված են արևելյան լեզուներից, մասամբ՝ եվրոպականից. օր.՝ դուման «մշուշ».

«Սև-մութ ամպեր ճակտիդ դիզվան, / Դուման հագար, Ալագյա՛զ» (էջ 51), յար «սիրելի», յարս «վերք». «Սիրեցի յարըս տարան, / Յարս տըվին ու տարան» (էջ 50), վաթան «բնօրրան». «Կարմիր-կարմիր արցունք թափեց / Մեր վաթանի սար ու ձոր» (էջ 37, 67):

Այդպես նաև հետևյալները. Ալագյազ «Արագած» (էջ 32, 51, 52 և այլն), ասոյաս (էջ 7), Արագ «Արաքս» (էջ 2), բայա // բայիկ (էջ 7, 19, 25, 35 և այլն), բալզամ «դեղամիջոց» (էջ 31), բաղ «այգի» (էջ 21, 51), բայաթի «մի տեսակ երգ» (էջ 67), Բինգոյ «Բուրակն» (էջ 17, 18), բլբուլ «տխակ» (էջ 18, 21, 40, 51, 61, 71 և այլն), դարդ «վիշտ» (էջ 8, 15, 21 և այլն), դարման «դեղ. բուժում» (էջ 8, 40 և այլն), դիվան «դատ. դատաստան» (էջ 66), դրախտ (էջ 18), դուշման «թշնամի» (էջ 37), զարբար «դիպակ» (էջ 32), զմրուխտ «կանաչ գույնի թանկարժեք քար» (էջ 18, 32 և այլն), զուլում «պատուհաս» (էջ 50, 66), թաս «բաժակ» (էջ 14, 15), իդեալ «գաղափար» (էջ 20), լալ «մեղեհիկ» (էջ 31), լալա «կակաչ» (էջ 36, 37), լալագար «կակաչ՝ կարմիր ծաղիկ» (էջ 61), լազուր «բաց կապույտ» (էջ 31, 45), խարար «լուր» (էջ 8, 35, 45, 71 և այլն), խազալ «իրար վրա թափված տերևներ» (էջ 67), հայդուկ «մարտիկ» (էջ 72), ճար «ձև, հևար» (էջ 46), մահլամ «բուժում» (էջ 8), Մանթաշ «Արագածի լանջերից մեկը» (էջ 52)¹, մարալ «եղնիկ» (էջ 31, 44, 57, 71), մարմար «մի տեսակ քար» (էջ 37), միզար «գոգևոց» (էջ 36), մուժ «մշուշ» (էջ 38, 45), մուրագ «նպատակ» (էջ 8), շվաք «ստվեր» (էջ 11,23, 62), շուշան «մի տեսակ ծաղիկ» // Շուշան (էջ 17, 29, 58, 64), չինար «սոսի» (էջ), չոլ «դաշտ» (էջ 21, 41, 46), պանդուխտ «օտարական» (էջ 22), ջան «սիրտ ու հոգի» (էջ 21, 23, 31, 35), սագ «նվագարան» (էջ 64), սավդա «եղանակ» (էջ 21), սմբուլ «մի տեսակ բույս» (էջ 21), փայ «բա-

¹ Իսահակյանի բանաստեղծություններից մեկում գրված է Ման-Տաշ. «Եվ Ման-Տաշի երանավետ / Եղեմ ձորում ծաղկալի...» («Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Ե., 2011, էջ 42), որ ծագման առումով մտածելու տեղիք է տալիս:

ժին» (էջ 46), *փերի* «հրեշտակ» (էջ 12), *փիրուզ* «գունավոր քար» (էջ 50), *քամբախտ* «տարաբախտ» (էջ 36):

բ) Ածական, օր.՝ *ազիզ* «սիրելի. մտերիմ». «*Ազիզ* մորես բաժանվել եմ, / Տխուր-տրտում, քուն չունիմ» (էջ 22), *թառլան* «հրաշալի». «Այ գոզնոցս կապել եմ, / Արի *թառլան*, թը՛ռռ, արի» (էջ 23), *խաս* «թանկ. մաքուր». «Դումանն էկավ, ծովը ծածկեց, / Էն *խաս* հավքերն ի՛նչ էղան» (էջ 40, 61):

Այդպես նաև հետևյալները *ալվալա* «ալ կարմիր» (էջ 32), *ալվան-ալվան* «գույնզգույն» (էջ 21), *անգյուման* «անհույս» (էջ 19), *դարբեդար* «դատարկուն» (էջ 62), *գառ-վառ* «շողշողուն» (էջ 32, 41, 52, 68), *զմրուխտե* «լուսեղ» (էջ 64), *զուլալ* «մաքուր, ջինջ» (էջ 11, 25), *կուշտ* «կողմ» (էջ 22), *հարհանդ-մարաննդ* «հանդարտ. մեղմ» (էջ 15, 28), *նամարդ* «տմարդի» (էջ 70), *շվար* «մոլորված» (էջ 38), *սուրսուր* «վառվռուն, կարմիր» (էջ 33), *ջիվան* «երիտասարդ» (էջ 67):

գ) Բայ. օր.՝ *քեզարեղ* «հոգնել». «Մաճկալ ես, *քեզարած* ես» (էջ 23), *շվարեղ* «մոլորվել». «...և հոսանքին / Ես եմ նայում *շվարած*» (էջ 12), *չոքեղ* «ծնկել. ծունկ խփել». «Ես ծունկ *չոքեցի* ալեկոծ կյանքի / Սեղանի առաջ...» (էջ 5), *վոսազ* «արագ. փութկոտ». «Մի՛ *վրոսազիր*, է՛յ մաշված սիրտ» (էջ 54):

Եզրակացություններ

1. Իսահակյանի վաղ շրջանի չափածոյի լեզվի, հատկապես բառային մակարդակի միավորների քննությունը ցույց է տալիս գեղարվեստական խոսքի այն յուրահատկությունները, որոնք ընկած են իրականության հեղինակային վերհանման հիմքում:

2. Այդ շրջանի բանաստեղծության բառապաշարը խոսքի քնարականության արտահայտիչ է՝ հատկանշական Իսահակյանի չափածոյին առհասարակ, վաղ շրջանի բանաստեղծության դեպքում՝ մասնավորապես:

3. Գործածված են հայերենի բառապաշարի տարաշերտ միավորներ, երիտասարդ բանաստեղծի ոճով:

4. Վաղ շրջանի բանաստեղծությունը մեծապես բանավոր-խոսակցական է, երիտասարդ բանաստեղծի խոհական-փիլիսոփայական երանգներով:

5. Գործածվել են բանավոր-խոսակցական լեզվի, մասնավորապես հայրենի եզերքի բառուբանի, խոսքի տարբեր բաղադրիչներ՝ բառապաշարի, քերականական կառուցվածքի մակարդակներում:

6. Վաղ շրջանի բանաստեղծության քննությունը ակնարկի ձևով անգամ ցույց է տալիս այն, թե ինչքան կարևոր է մեծ բանաստեղծի լեզվի ավելի ընդդրկուն ուսումնասիրությունը ժամանակակից հայերենի պատմության համար:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Վրթանես Չալըխյանը և Վիեննայի Մխիթարյան դպրոցի հայերենագիտությունը

Հայ մշակույթի օջախների, գիտական զանազան հաստատությունների հրապարակ բերած գրականությունը ոչ միայն քիչ է ուսումնասիրված, այլև երբեմն բնավ չի եղել քննության առարկա:

Հարցերի նման շրջանակում միանգամայն արժանի տեղ ունի հայագիտության անցյալի երախտավորների ժառանգությանն անդրադառնալը, մանավանդ որ այդ երախտավորներն ուղենշում են մշակութային շարժման մի այնպիսի ուղղություն, որն իր խորը հետքն է թողել գիտության անդաստանում, հայ մտավոր կյանքում:

Վրթանես Չալըխյանի անունը, մանավանդ հայերենագիտական վաստակը շատ քչերին է հայտնի: Գրեթե անծանոթ անուն, սակայն նրա գիտական և կրթական գործունեությունը ցույց է տալիս, որ այդ անունով գործիչը, ներհուն գիտնականը հայ բանասիրության, հատկապես հայ լեզվագիտության վիթխարի դեմքերից է: Չալըխյանը, կարելի է ասել, նախանցյալ դարի հայերենագիտության մերագնայ տոկուն սյուներից է, նշանավոր իր քերականությամբ, բանասիրությանը բերած իր նպաստով: Նա ամուր կապ է անցյալի և մեր ժամանակների հայագիտության համար:

Այնուհետև, մեծ է Վրթանես Չալըխյանի դերը հայ, հատկապես պոլսահայ մտավորականների նախնական կրթության և իմացական պատրաստման գործում նախանցյալ դարի 20-30-ական թվականներին: Նա հսկայական վաստակ ունի հայոց լեզվի կանոնարկված նկարագրության, նրա գիտական ուսումնասիրությանը հիմնովին նպաստելու գործում: Դրանից բացի, նրա ձեռքի տակ կրթվել և մասնագիտացել է հայերենագետների մի խումբ, ակնառու մի սերունդ, որն ընդամենը մեկ տասնամյակ անց մեծ ավանդ է

ունենում հայ մշակույթի առաջընթացի մեջ՝ կապված «դասական հայերենի» գյուտի, նրա տարածման և հիմնավորման հետ:

Վրթանես Չալըխյանը կանգնած է նախանցյալ դարի հայ բանասիրության կարևորագույն մայրուղիներից մեկի՝ վիեննական դպրոցի շեմին և իր ինքնօրինակ վաստակով ուղենշում է հայերենագիտության անընդմեջ զարգացման մի ուրույն, որոշակիորեն ինքնատիպ ընթացք, որ հասնում է մինչև մեր օրերը: Չալըխյանի անունը կապված է Կ.Պոլսի կրթական միջավայրի և Վիեննայի Մխիթարյան դպրոցի գիտական լայն, բեղուն գործունեության հետ: Նրա կազմած գրաբարի դասագրքերը (տեսական քերականությունը և գործնականը) ժամանակին եղել են խիստ ուշագրավ, գրեթե մի անգերագանելի երևույթ: Դրանք այսօր ևս չեն կորցրել իրենց արժեքը, որովհետև մեթոդապես շատ ուսանելի են: Իբրև գրաբարի և XIX դ. գրավոր հայերենի (գրաբարի և գրական արևմտահայերենի) առանձին, այլև տիպաբանական ուսումնասիրության առարկա՝ այդ երկու գիրքը հայոց լեզվի նոր շրջանի պատմության կարևորագույն աղբյուր են:

Ներհուն հայկաբանի գիտական ժառանգությանն այսօր հարկ է անդրադառնալ որպես ինքնին հետաքրքիր, մնայուն երևույթ հայագիտության բնագավառում: Ուստի ամենից առաջ հարկ կա պարզելու նրա կյանքի անհայտ, կցկտուր տեղեկություններ պարունակող էջերը: Կարևոր խնդիր է նաև Չալըխյանի տեսական քերականության արժեքավորումը հայերենագիտության զարգացման նոր պայմաններում: Ասենք, որ նախկինում եղել են նման փորձեր, սակայն հարցերի ընդհանուր շրջանակում, այնպես որ դրանք շատ հեռու են ամբողջական, առավել ևս սպառիչ և վերջնական լինելուց: Ասվածը մեծապես վերաբերում է գործնական քերականությանը, որը հայ քերականական մտքի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում ամեննին չի եղել որևէ քննության առարկա:

Չալըխյանի դասագրքերը, կարծում ենք, իբրև հիմնավոր նախադրյալ, նպաստել են «դասական հայերենի» գյուտի երևան գալուն: Նրա տեսական քերականությունը հրատարակվել է բազմիցս, ընդ որում տևական ժամանակում, որի ընթացքում բնականորեն զարգացում է ապրում գրական արևմտահայերենը: Վերջինս ինչ-որ չափով իր արտացոլումն է գտել Չալըխյանի քերականությունների լեզվում՝ կապված ամեն անգամ վերահրատարակության հետ: Ուստի այդ գրքերն այսօր կարևոր աղբյուր են գրական արևմտահայերենի պատմության լիարժեք ուսումնասիրության համար:

Վիեննայի մխիթարյանների նախանցյալ դարի 30-40-ական թթ. սերնդի հիմնական մասի ուսուցիչ Չալըխյանի կենսագրությունից առայժմ շատ քիչ բան է հայտնի. ունենք միայն կցկտուր տեղեկություններ:

Գիտենք, որ հայկաբանը ծնվել է 1803 թ հոկտեմբերի 18-ին, Կ.Պոլսում: Պատանի հասակում, ինչպես ընդունված էր, նա անցնում է Վիեննա, անդամագրվում տեղի Մխիթարյան միաբանությանը: Այնուհետև, իբրև բանասեր և ուսուցիչ վերադառնում է կամ ուղարկվում Կ. Պոլիս, որպեսզի տեղի Մխիթարյան դպրոցում կրթի և ուսուցանի աշակերտների: Վերջիններս հայագիտական լավագույն կրթություն են ստանում, և ինչպես պարզվում է եղած փաստերի մանրագնին համադրումից, ավելի ուշ նրանք դառնում են նույն միաբանության գիտական սյուները: Նրանք դառնում են պարծանք «դասական» հայագիտության համար, պանծացնում են Մխիթարեան իրենց միաբանության փառքը, որը մնում է առ այսօր, որ մնալու է հետ այսու: Չալըխյանը վախճանվել է 1834 թ., Կ.Պոլսում, ընդամենը 31 տարեկան հասակում:

Եվ ընդամենը 24 տարեկան էր Վրթ. Չալըխյանը, երբ լույս տեսավ նրան հետագայում համբավ, փառք ու մեծություն բերած առաջին դասագիրքը՝ «Քերականութիւն հայկազնեան լեզուի» (- Վիեննա, 1827, 328 էջ): Դա ըստ էության ամբողջովին նոր («նորոգ») քերականություն էր: Երկրորդը «Կրթութիւն գործնական

գրոց բարբառոյ» (Վիեննա, 1829, 100 էջ) դասագիրքն էր, որ առաջինի հետ կազմում էր հայերենի հակիրճ և ստույգ, մեթոդական առումով պարզ ու մատչելի նկարագրությունը:

Նախ՝ անդրադառնանք տեսական քերականությանը:

Նշված դասագրքից առաջինը տեսական քերականություն է, որի արժեքը մեծ է հայ բանասիրության, առանձնապես հայ քերականագիտության, գրաբարի ուսումնասիրման և ուսուցման բնագավառներում: Մանրագնին և երկարատև դիտարկումները ցույց են տալիս, որ Չալըխյանի տեսական քերականությունը, իբրև դասագիրք, 1827-1886 թթ. ընթացքում լույս է տեսել 12 անգամ: Բանասիրական և քերականագիտական աշխատություններում, ինչպես գիտենք, այդ թիվը հասցվում է մինչև 9-ը կամ 10-ը (տե՛ս, օրինակ, *Ջահուկյան*, 1974. *Համբարձումյան*, 1995, 360-379) :

Նախ, նկատենք, որ բոլոր տպագրությունները եղել են Վիեննայում: Այնուհետև, դրանք տեղի են ունեցել հետևյալ պարբերականությամբ. Ա տպ.՝ 1827 թ., Բ տպ.՝ 1837 թ., Գ տպ.՝ 1844 թ., Դ տպ.՝ 1848 թ., Ե տպ.՝ 1852 թ., Զ տպ.՝ 1856 թ., Է տպ.՝ 1862 թ., Ը տպ. և Թ տպ.՝ 1883թ., Ժ տպ.՝ 1885 թ., ԺԱ տպ.՝ 1886 թ.: Ըստ այսմ Ա տպ. (1827թ.) և ԺԱ տպ. (1886 թ.) միջև ընկած է շուրջ 60 (ստույգ՝ 59) տարվա մի ժամանակահատված:

Ավելացնենք, որ փաստ կա առ այն, որ դասագիրքը 1837 թ. տպագրվել է երկու՝ գրաբար և աշխարհաբար հայերենով, այսինքն՝ երկու տարբերակով, առ ի բավարարումն, ինչպես կարելի է տեսնել ստորև, հատուկ պահանջների:

Այստեղ շարունակենք այն միտքը, որ հայագիտական աշխատություններում մինչև այժմ նշվում է Չալըխյանի տեսական գրականության 9 հրատարակություն: Ընդ որում այդ 9-րդ (1885 թ., իսկ մեր հաշվումով՝ 10-ր հրատ.՝ ն. թ.) հրատարակությունը հենց Արս. Այտընյանի համալրած և ընդլայնած տպագրությունն է: Միաժամանակ նկատենք, որ Այտընյանը գրքի 1885 թ. տպագրության առիթով նշում է, որ «փոքր ի շատե՛ նշանաւոր կարգաւորութիւնք ու յա-

ելմունք» ունեն նույնի 5-րդ և 7-րդ տպագրությունները, և ավելացնում է, որ դրանք արվում են գրքի «յօրինուածի և դիւրիմաց ընտելական ոճոյ պատճառաւ»:

Դասագրքի հրատարակությունների բնագրային վերլուծությունը ցույց է տալիս, որ Արս. Այտընյանն իր ուսուցչի քերականությունը տպագրության է պատրաստել 4-րդ (1848 թ.) նախօրինակի հիման վրա: Այդ տպագրությունն է ընտրում Այտընյանը, որովհետև այն, ինչպես նշում է Ն. Ալիկյանը, վերանայված էր ըստ «դասական հայերենի» նորմայի, որն էլ գծված էր իրենց իսկ վիեննացիների, այլ կերպ ասած՝ Չալրիսյանի անմիջական աշակերտների ձեռքով: Այնուհետև, գիտենք, որ դասագրքի Ժ տպագրությունը ևս երևան է գալիս Արս. Այտընյանի բարեփոխությամբ: Իսկ ԺԱ տպագրությունը, որ նույնպես մնում է անծանոթ և շատ կողմերով չմեկնաբանված, ոչ այլ ինչ է, քան Այտընյանի հրատարակածի համառոտ տարբերակի տպագրություն: Այդ մասին կա հրատարակչի մի ծանուցումը. «Ասկէ տարի մը յառաջ բազմաթիւ պիտանի նորանոր յաւելուածներով ընդարձակ հրատարակելէն ետեւ՝ պէտքը տեսուեցաւ նոյն գործը *նորոսներու* կամ *ստորին դասուց* (ընդգծումը հրատարակչի. – Վ. Հ.) պիտոյիցն յարմարելոյ աւելի պարզագոյն ոճով համառօտել» (ն. տ.):

Բանասիրական, առանձնապես բնագրագիտական նման ճշգրտումներն ու անչությունների բացահայտումը, մեր կարծիքով, շատ կարևոր են ոչ միայն ուշադրության առարկա խնդրի լայն քննարկման և լուծման տեսանկյունից, այլև առհասարակ, այսպես կոչված, գիտական ավանդույթի (տրադիցիայի) մեջ առնված հարցադրումների առավել հետևողական անցկացման առումով:

Այնուհետև, դասագրքի այդքան հաճախակի հանդես գալը միմիայն բացատրելի է նրա այն մեծ արժեքով և հսկայական նշանակությամբ, որ ունեցել է այն ժամանակի գիտության, մասնավորապես հին (մայրենի) լեզվի ուսուցման, կանոնավոր յուրացման համար: Այս իրողությունը հաստատվում է նաև բանասիրական և

մատենագիտական այն սևեռուն փաստով, որ այդ շրջանում վիեննական դպրոցի շրջանակներում գոյություն չունեին նման մեկ այլ ձեռնարկ, որ գոնե զուգահեռաբար գործածվեր հին (մայրենի) լեզվի ուսուցման նպատակով: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ ամեն անգամ գիրքը լույս էր տեսնում իր ժամանակի համար մի պատկառելի տպաքանակով: Այսպես, հայտնի է, որ մինչև ԺԹ դերկրորդ կեսի սկիզբները տպագրված գրքերի տպաքանակն ամեն անգամ «հազարից, հազար հինգ հարյուրից պակաս չի եղել»: Ուստի այդ դասագիրքը բավականին տարածված է եղել հայ կրթական միջավայրում, եթե ոչ նաև մտավորականության շրջանում:

Չալրիսյանի դասագրքերն աչքի են ընկնում լեզվական նյութի օրինակելիությամբ, կառուցվածքի ամբողջականությամբ և շարադրանքի մատչելիությամբ, նաև մեթոդական նպատակալացությամբ: Նկատենք, որ այդ քերականությունները եղել են Վիեննական դպրոցի (և ոչ միայն այդ գիտական օջախի) գրեթե բոլոր հայագետների ուսումնասության ձեռնարկը: Մինչև նախանցյալ դարի վերջերը դրանք մեզանում հանդիսացել են ամենահայեցի և, կարելի է ասել, ամենաընտիր ուսումնական ձեռնարկները: Դրանց արժեքը, թերևս, չի պակասել նաև մեր օրերում, թեև գրվել են նույնատիպ մեծ թվով ձեռնարկներ՝ տեսականի և գործնականի շաղկապումով:

Այսպես, հետաքրքիր է եվրոպացի հայագետների մոտեցումը այս հարցում: Տարբեր ժամանակներում Չալրիսյանի դասագրքերը գրավել են օտարազգի հայերենագետների ուշադրությունը՝ հանդիսանալով լավագույն ուղեցույց և օժանդակ ձեռնարկ հայերենին իրագել դառնալու, նրա կառուցվածքին գործնականում ծանոթանալու և առհասարակ՝ հին հայերեն սովորելու, ըստ այդմ հին հայկական բնագրեր ընթերցելու և ըստ հարմարին դրանք օգտագործելու համար: Այդ գրքերից հատկապես առաջինի հիման վրա և նրա օժանդակությամբ շատ համեմատաբան լեզվաբաններ քննել են ոչ միայն լոկ հայերենին, այլև հնդեվրոպական մյուս լեզուներին

վերաբերող զանազան ստուգաբանական-բանասիրական հարցեր, գրել բազմաթի ուշագրավ հոդվածներ, արել բնագրային ճշգրտումներ: Օրինակ՝ Ա. Մելեն իր աշխատություններից մեկում այդ առթիվ հատուկ նշում ունի. նա գրում է, որ իր տվյալ աշխատությանը ձեռնարկելիս ի թիվս այլ ուղեցույցների ու գրքերի առաջնակարգ դեր է խաղացել Չալըխյանի սույն դասագիրքը. «Հին հայերենի լավագույն քերականական ձեռնարկները հայերենով գրված դպրոցական դասագրքերն են. Վ. Չալըխյան, Քերականություն հայկազեան լեզուի, աշխատասիրեալ ի Հ. Ա. Այտընեան (-Վիեննա, 1885), Ստ. Մալխասեանց. Գրաբարի հոլովումը (Թիֆլիս, 1891) և Գրաբարի համաձայնութիւնը (Թիֆլիս, 1892)» (*Meillet*, 1936, 18):

Չալըխյանի «Քերականություն հայկազեան լեզվի» աշխատանքը գրվել է բոլորովին այլ մոտեցմամբ: Այն էապես տարբերվում է իրենից առաջ երևան եկած քերականություններից ոչ միայն տեսական դրույթների նորությամբ և կառուցվածքի ինքնօրինակությամբ, այլև փաստական նյութի հանդեպ հեղինակի երևան բերած յուրօրինակ մոտեցումով: Այդ քերականությունը դառնում է, մի տեսակ, անկյունաքար, որով գծվում է մի ողջ ուղղություն հայերենագիտության մեջ:

Ավելորդ չենք համարում նախ ուրվագծել Չալըխյանի տեսական քերականության կառուցվածքը: Դասագիրքը (տպ. 1827 թ., 328 էջ) ունի 8 բաժին՝ ա) նախնական գիտելիքներ (էջ 1), բ) մասն առաջին («Թէ ինչպէս պէտք է բանին մասունքը գործածեն», էջ 2-160), որը բաղկացած է Է գլխից, որոնցից Ա և Գ գլուխներն ունեն ենթագլուխներ («յօդուածներ». Ա-ն՝ 4, իսկ Գ-ն՝ 7), գ) «Յաւելուած առաջին մասին» (էջ 136-160), դ) մասն երկրորդ («Համաձայնութեան վրայ հասարակաբար», էջ 161-252), որը պարունակում է ԺԹ գլուխ, որոնցից միայն Ժ-ն ունի ենթագլուխներ («յօդուածներ», թվով՝ 3), ե) «Յաւելուած երկրորդ մասին» (էջ 252-276), զ) «Համառօտ բառագիրք գործածական բառից» (էջ 277-324), է) «Համառօ-

տագրութիւնք» գործածված քերականական տերմինների (էջ 324) և ը) «Յանկ հարկաւոր գիտելեաց», այսինքն՝ քերականական հասկացությունների անվանումների (325-328, թվով՝ 119): Այս կառուցվածքը գրեթե լիովին պահպանվում է հետագա հրատարակություններում, եթե փոքր-ինչ զանց առնենք վերջին բաժիններից մեկերկուսի երբեմնակի անտեսումը կամ իրար միացումը:

Այնուհետև, նշված բաժիններից, ինչպես կարելի է նկատել, հիմնական են Բ-ն և Գ-ն՝ իրենց հավելվածներով, որովհետև դրանք են, որ կազմում են դասագրքի էությունը: Իսկ մյուսները, կարելի է ասել, երկրորդական են, ածանցյալ, սակայն ամենևին ոչ ավելորդ: Դասագրքի առաջին բաժնում հեղինակը խոսում է հին հայերենի ձևաբանական, իսկ երկրորդում՝ շարահյուսական գիտելիքների շուրջ: Դրանք բացահայտվում են մաս առ մաս, ուսուցման մատչելիությամբ աչքի ընկնող գլխակարգությամբ և բաժանումով: Եվ ըստ այդմ էլ ամբողջացվում է բաժիններից յուրաքանչյուրը: Իսկ դրանց հաջորդող «հավելվածներում» խոսվում է այն գիտելիքների շուրջ, որոնք «գուցէ նոր սորվողներուն ծանրութիւն կ'ըլլան» (1827 թ. տպ., էջ 136):

Այսպիսով, կարծում ենք, որ դասագրքի նման կառուցվածքը միանգամայն պարզ է, իսկ նյութի ընդգրկումը և մեկնաբանությունը՝ մեկընդմիջտ մատչելի և տպավորիչ: Հայերենագիտության խիզախում էր նման դասագրքի երևան հանելը, մանավանդ եթե նկատի ենք ունենում այն, որ ինքնուրույն քերականությունները նոր-նոր էին երևան գալիս: Ամենից ինքնուրույնը, ի տարբերություն (Գ. Ջահուկյանի առանձնացումով) «հունատիպ» կամ «լատինատիպ» քերականությունների, կարծում ենք, դառնում է Չալըխյանի սույն դասագիրքը: Սա է նրա ամենամեծ արժանիքը, որից բխում են և որով պայմանավորված են մյուս արժանիքները՝ իբրև առավելություններ հայերենի ուսուցման բնագավառում:

Իսկ Չալըխյանի գործնական քերականությունը պարունակում է հայ հին գրականության ընտրելագույն նմուշների իմացութե-

յամբ կազմված վստահելի օրինակներ, ինչ-ինչ հատվածներ ու դրվագներ: Դրանք ի սպաս են դրվում տեսական քերականության յուրացումով ձեռք բերված գիտելիքների ամրակայմանը: Նմուշները կազմված են մեծ մասամբ Ե դ. օրինակելի բնագրերի հիման վրա: Այստեղ ընդգծենք, որ դրանք և դրանց նման շատ երկերի բնագրային մանրախույզ քննությունն է, որ հիմք է դառնում «դասական հայերենի» հետագա գյուտի համար:

Մեր ժամանակներում Չալրիսյանի տեսական քերականությունը շատ քիչ է եղել ուշադրության առարկա, իսկ գործնական քերականությունը, ինչպես վերը նշեցինք, բնավ չի արժանացել քերականագիտական ուսումնասիրության: Վերջին մեկ-երկու տասնամյակում եղել են այս կամ այն չափով վերլուծություններ, որոնցում խոսվում է միայն Չալրիսյանի տեսական քերականության մասին. ամենալայն ուշադրության արժանացել է Գ. Ջահուկյանի՝ գրաբարի քերականությանը նվիրված գրքում: Այստեղ Չալրիսյանի ժառանգությունը դիտվում է իբրև նմուշ մեզանում երևան եկած «ընտրողական քերականությունների»: Դա նշանակում է, որ Չալրիսյանը գծում է քերականագիտական ուղղություն: Դրա հիմքը տեսական քերականությունն է, ավելի լայն՝ նաև գործնական քերականությունը: Նման առանձնացումը պայմանավորված է այդ քերականությունների ինքնատիպությամբ, ինչպես վերը նշեցինք, լեզվական նյութի տեսական քննության առանձնահատկությամբ, գործնական ուսուցման ընտրողությամբ:

Ավելացնենք, որ Գ. Ջահուկյանն իր գրքում ավելի մեծ ուշադրություն է դարձնում Չալրիսյանի գրքի այն հրատարակությանը, որը «փոփոխություններով» լույս է ընծայել Արս. Այտընյանը: Ընդ որում այդ «փոփոխություններին» հատկացվում է ավելի լայն շարադրանք. Չալրիսյանի բուն քերականությանը նա հատկացնում է ընդամենը 17 էջ, իսկ Այտընյանի «փոփոխություններին» ավելի քան 38 էջ, կրկնակիից ավելին: Նկատենք, որ Ջահուկյանն այս քերականությանն անդրադարձել է դեռևս անցյալ դ. 50-ական թթ.

կեսերին, թեև իր աշխատությունը լույս է ընծայել ճիշտ երկու տասնամյակ ուշ, որի դեպքում էլ հարկ չի եղել ինչ-ինչ մոտեցումների վերանայման՝ կապված քերականագիտական մտքի զարգացման, վիեննական դպրոցի քերականների և առհասարակ բանասիրական ժառանգության նորովի գնահատման հետ: Դրանից բացի, նկատելի է ոչ հավասարաչափ մոտեցում քննության առնվող հարցերի վերլուծության գործում: Այսպես, քերականության որոշ բաժիններ և ենթաբաժիններ վերլուծվում են ավելի մանրամասն, քան մյուսները: Քիչ չեն դեպքերը, երբ ակնհայտ է գլուխներին վերաբերող վերլուծության բացթողում (կամ շրջանցում): Օրինակ՝ շարահյուսության մասում ամենևին խոսք չկա 12-17-րդ գլուխներում եղած նյութի վերաբերյալ, իսկ 10-11-րդն արժանանում է բավականին մանրամասն նկարագրման: Տեղ են գտել մեջբերումների սխալներ, օրինակների ոչ ճիշտ մատնանշումներ: Ջահուկյանը իր վերլուծությունը կատարում է քերականության 1852 թ. տպագրության օրինակի հիման վրա, որից էլ քաղված մեջբերումները շատ հաճախ վրիպակներով են և սխալներով, թեև դրանց մի մասը բացատրելի է քերականության լեզվի (ժամանակի գրական արևմտահայերենի) խմբագրական փոխակերպումով, որը ոչ միշտ է հաջողվել:

Այդուհանդերձ, Գ. Ջահուկյանի գիտական վերլուծությունը, իրավամբ, մնում է անգերազանցելի: Սա է առայժմ եղածն այդ քերականության գնահատության վերաբերյալ, այնինչ կարծում ենք, որ այն արժանի է ավելի լայն, ավելի մանրամասն, եթե ոչ առանձին քննության ու գնահատության՝ վերցված թե՛ վիեննական դպրոցի և թե՛ առհասարակ այդ պատմաշրջանի մեջ:

Որո՞նք են Չալրիսյանի տեսական քերականության այն առավելությունները, որոնք հիմք են հանդիսացել ոչ միայն այն հիմնական դասագիրք համարելու, այլև շուրջ վեց տասնամյակ անց «բարեփոխելու»:

Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

ա) Նախանցյալ դարի 1-ին քառորդին Չալըխյանը կազմում է գրաբարի դասագիրք, որն ինքնուրույն է, այսինքն՝ ամբողջովին զերծ հունաբան կամ լատինաբան քերականությունների՝ նախկինում կրած ազդեցությունից: Ճիշտ է, այդ ազդեցությունը փոքրիշատե հաղթահարված էր վենետիկյան քերականների կազմած դասագրքերում, սակայն Չալըխյանն այդ ազդեցությունը ըստ ամսայնի անտեսում է իր քերականությամբ: Ըստ այդմ երևան է հանվում բուն հայերենի նյութի վրա ստեղծված ինքնուրույն քերականություն:

բ) Չալըխյանն իր դասագրքում ի գործ է դնում այն հստակ մոտեցումը, թե լեզվական օրենքներն ու կանոնները պիտի սահմանվեն հայերենի ամենաընտիր (օտար լեզուների՝ հունարենի և ասորերենի ազդեցությունից զերծ) նյութի հիման վրա, այլ ոչ թե ողջ հայերենի նկատառումով: Այս վերջին կարգի մոտեցումը հանդես էին բերել վենետիկյան դասագրքերի հեղինակները: Չալըխյանը իր դասագիրքը կազմում է գրաբարի բնիկ օրենքների և առանձնահատկությունների նկատառումով, որպիսով մեկ քայլ առաջ է անցնում նախորդներից և ժամանակակիցներից:

գ) Դասագրքում օգտագործվում է առավելապես V դ. գրաբարի ընտիր նմուշներից քաղված փաստական նյութը, մասամբ հետագա դարերի այն հեղինակներից, որոնք խստագույնս հետևում են V դ. գրավոր լեզվին, մանավանդ Աստվածաշնչին: Սա բանասիրական մեծագույն մոտեցում է, որ երևան է գալիս նոր պայմաններում, բնագրերի գիտական ինքնուրույն ուսունասիրությունների ճանապարհով: Այդ մոտեցումը հետագայում տալիս է իր առավել նշանակալից պտուղները (օր.՝ Այտընյանի դեպքում)

դ) Քերականական երևույթները քննվում են ինքնատիպ կառուցվածքի մեջ, դա ցայտուն ձևով նկատելի է ձևաբանական և շարահյուսական տարբեր կարգի իրողությունների նորմատիվ նկարագրության ընթացքում: Այսպես, գոյականների հոլովումը և հոլովումների դասակարգումը բավականին մատչելի են և ինքնօրինակ,

շարահյուսական երևույթները՝ համաձայնություն, խնդրառություն և շարադասություն, քննարկված են այն հիմունքով, որ դրանք այս կամ այն չափով յուրահատուկ են հայկական մտածողությանը:

ե) Չալըխյանի տեսական քերականությանը բնորոշ են մեթոդական այնպիսի հնարներ, ինչպիսին են պարզությունը և մատչելիությունը, երևույթների ուսուցման հաջորդումը և տրամաբանված կապը: Դասակարգումները և բաշխումները արվում են դիպուկ և հիշելի (մտքում ամրագրելի) օրինակների հիման վրա, բնագրերից քաղված փաստերի մատնանշումով:

զ) Դասագիրքը զերծ է անհարկի կրկնություններից, երկարաշունչ և մանվածապատ բնութագրումներից, օտար ազդեցության արդյունք հանդիսացող երևույթներից, որոնք փոքրիշատե նկատելի են այլ դասագրքերում:

է) Հաճախ է զգացվում, որ դասագրքի հեղինակը քաջատեղյակ է գրաբարի դասավանդման նրբություններին, տիրապետում է ինքնօրինակ մեթոդիկայի, որոնք կարևոր հանգամանք են նման մի դասագիրք կազմելու համար:

Թերևս նման կողմերն ու առանձնահատկություններն են, որ գրավել են ժամանակի հայագետների ուշադրությունը, հիմք հանդիսացել Չալըխյանի դասագիրքը «բարեփոխելու» և ընդարձակելու, առհասարակ՝ գրաբարի մեջ հմտանալու:

Ավելացնենք, որ առանձնապես ուշագրավ է տեսական քերականության ԺԸ («Լուծման ու Շարադրութեան վրայ») գլուխը, որում հեղինակը խոսում է քերականական նյութի ուսուցմանը զուգահեռ բնագրեր ընթերցելու և դրանց ոճը յուրացնելու մասին: Բնագրերի անընդհատ ընթերցումն է, որ բերում է լեզվական ճաշակ և հմտություն: Նա նախկինների («նախնյաց») շարադրանքները բաժանում է երեք խմբի՝ պարզ, միջակ և ճոխ (կամ բարձր)¹, և ըստ այդմ էլ բաշխում է հայ մատենագրության հայտնի նմուշները: Այս-

¹ Ըստ ընդունված հին և միջնադարյան, այսպես կոչված, «տեքստաբանության» մեջ եղած պատկերացումների:

տեղ ակնհայտ է դառնում բանասերի փորձը, երևան է գալիս բնագրի ընտրության ճաշակը: Թվում է, թե այդ ԺԸ գլխով նախապատրաստվում է անցում գրաբարի գործնական ուսուցմանը, որն էլ արվում է առանձին՝ ուսումնական ձեռնարկի երկրորդ մասում:

Այժմ մի քանի դիտարկում այդ մասի՝ գործնական քերականության վերաբերյալ:

Գործնական քերականությունը ևս ժամանակին խաղացել է իր դերը: Վերը նշել ենք, որ այն համեմատաբար քիչ անգամ է լույս տեսել, քան տեսականը: Դա չի խանգարում հաստատելու, որ այդ գործը ևս նրա գիտական ժառանգության անկապտելի մասն է: Այս դասագիրքը կազմված է մանկավարժի հմտությամբ, գիտական ուրույն մակարդակով: Այն մեզանում քիչ ուշադրության է արժանացել, քան տեսական քերականությունը. պատճառը հայտնի է, այն է՝ տեսականը հայագիտությանը զբաղեցնում է քերականագիտական հարցերի շրջանակում, իսկ երկրորդն ավելի շուտ վերաբերում է գրաբարի ուսուցման մեթոդիկային:

Գործնական քերականությունը բաղկացած է երկու բաժնից, առաջինը վերաբերում է քերականական նյութի դասակարգմանը և գլուխ առ գլուխ բաշխմանը (թվով՝ 17), իսկ երկրորդ բաժնում բերվում են աշխարհաբար նախադասություններ՝ իբրև օրինակ և հաստատումն ասվածի (որոնց էլ հաջորդում է, ժամանակի թելադրանքով պայմանավորված, «տաճկերեն» թարգմանությունը): Այս բաժնի վերջում բերվում են յուրաքանչյուր նախադասությունների փնջին վերաբերող դժվար թարգմանելի բառերի գրաբար համարժեքները: Եվ այդ ձևով հեղինակը կազմել է ճիշտ 83 բնագիր, այլ կերպ ասած՝ 83 խումբ նախադասություններ, որոնք ուսանողը պիտի աշխարհաբարից վերածի («թարգմանի») գրաբարի: Այստեղ դասագրքի բուն նպատակը քերականական կանոնների ճիշտ և տեղին ուսուցումն է, ընդ սմին կարևոր է համարվում նաև այդ կանոնների պահպանումը գրաբար բնագրեր թարգմանելիս կամ դրանք մեկնաբանելիս:

Դասագրքի սույն բաժինը միանգամայն ինքնօրինակ է, կազմված է խիստ մանրամասն ձևով, նկատի ունենալով գրաբարի ուսուցման խորությունը:

Այսպիսով, Չալըխյանի երկու դասագրքերը բավարարել են ոչ միայն իր ժամանակի պահանջները, այլև եղել են միջոց ավելի առաջ գնալու, նոր գիտելիքներ ձեռք բերելու համար:

Չալըխյանի դասագրքերով է, որ ժամանակին նրա սաները ձեռնամուխ են լինում «դասական հայերենի» գյուտինը, որն անշուշտ մեծագույն ձեռքբերում է արդի հայագիտության մեջ: Այն եղել է նախանցյալ դ. 40-ական թթ., Հ. Գաթրըճյանի, Ա. Մ. Գարագաշյանի, Ղ. Հովնանյանի, Արս. Այտընյանի, Ե. Չազրճյանի, Ք. Սպենյանի, Ս. Էմինյանի և այլ երևելիների ձեռքով: Ձեռնարկման մտահղացման ոգին, անկասկած, Հ. Գաթրըճյանն է՝ Չալըխյանի աշակերտը: Մեծավաստակ Ն. Ակինյանն այդ գործին բանասիրական հայեցակետով հետևյալ ձևակերպումն է տալիս. «Մանրադետ զննութեամբ ու համեմատական քննութեամբ չափեց (իմա՝ Հ. Գաթրըճյանը – Վ. Հ.) հայ լեզուի խորութիւնը, ցուցուց այն զանազանութիւնը, որ Մաշտոցեան հայերէնի եւ յունախառն ու լատինախառն հայերէններու մէջ կար, տեսակ վիճ մը Եզնիկի եւ Եղիշէի, Խորենացոյ լեզուներուն մէջ, եւ այսպէս երեւան հանեց դարևաւոր աղաւաղութեանց ետեւը թագնուած ոսկեդարեան հայերէն լեզու մը, որ միայն Ե դարու մատենագրութեանց յատուկ էր, նկատեց նաեւ այս դարու մատենագրութեանց մէջ ստիճանաւորութիւն, եւ պարզեց հայերէն դասական՝ ոսկեդարեան լեզուի նկարագիրը: Ապա այս լեզուն իւր գրչի լեզուն ըրաւ եւ ԺԹ դարուն Մաշտոցի խօսիլ տուաւ: Թէեւ ունեցաւ իրեն բուռն հակառակորդներ եւ իրեն հետեւողներ քիչ եղան, վասն զի ժամանակը ժողովրդախօս լեզուի կը միտէր, բայց նոյն տեսական՝ բանասիրական ճշմարտութիւնը միշտ պատիւ ընող գիտ մը կը մնայ գտնողներուն, որուն հիման վրայ միայն կրնայ բարձրանալ բանասիրութեան եւ լեզուագիտութեան անխախտ շէնքը» (*Ակինեան*, 1912, 29-30):

Ըստ վիեննացիների, հին գրական հայերենը V դ. սկզբներից մինչև դարի 60-ական թթ. վերջերը ներկայացնում է գրական մշակման և կանոնավորման մի ուրույն, համեմատաբար բնական վիճակ, որն առանձնանում է հայերենի հետագա շրջանների բոլոր կարգի տարբերակներից:

Հայերեն գրավոր խոսքի ուսումնասիրության բնագավառում, սա, ինչ խոսք, մեծագույն նվաճում է, խոշոր ձեռքբերում: Այն ենթադրում է հեղաշրջող դեր, թեև տարբեր ժամանակներում հանդիպում է զանազան ընդդիմությունների, արժանանում անտեղի թերահավատության, որ նկատելի է նաև մեր օրերում: Նման մոտեցումը բնավ ընդունելի չէ, որովհետև խորը կոահուումը և հիմնավոր փաստարկումը գիտության առաջնորդիչ են:

Ավելին, այդ գյուտը նշանակալից երևույթ է, որ պահանջում է ըստ ամենայնի քննություն: Հին գրական հայերենի տարբերակման հարցում նման կոահուումը, ինչ խոսք, արդյունք էր հին լեզվի ըստ էության իմացության, լայն ուսումնասիրման առած լինելու. հենց այդտեղ է, որ վիեննացիները, ի տարբերություն այլ հայերենագետների հանդես են բերում լեզվագիտական մեծ պատրաստվածություն (երուդիսիա):

Վիեննական մխիթարյան դպրոցի մշակները հրապարակ են հանում տարբերակման ներքին, այսինքն՝ լեզվական և ոճական հիմնավոր չափանիշներ, առանձնացնում գրաբարի ներսում որոշակի տարբերակիչ հատկանիշներ Այն հիմնովին գործադրված է եղել Չալքիյանի քերականական դասագրքերում:

Վերը նշվեց, որ ժամանակին եղել են առարկություններ. Գաթրոնյանը հիշեցնում է, առանձնապես շեշտում հետևյալը. «Չէ՛, մեր յիշած նոր դիտողութեանց մէջ ճաշակը որոշիչ չէ: *Բառարանով* եւ *քերականութեամբ* միանգամայն է, որ *հիմնովին* երկուքի կը բաժնուի հայերէն գրաբար լեզուն» (*Գաթրոնեան*, 1913, 720. ընդգծումները՝ հեղինակի.- Վ. Հ.): Այնուհետև, «զանոնք իրարմէ բաժնողը այնչափ ժամանակը չէ, որչափ դպրոցը կամ ուսումն է, ո-

րով վերջինները յունական լեզուի երկարագոյն եւ կարեւորագոյն հրահանգ առած են» (ս. տ.):

Նման մոտեցումով և դրվածքով հին գրական հայերենի լեզվական և բանասիրական ուսումնասիրությունը որոշակի արդյունքի է հասնում առաջին հերթին վիեննացիների կողմից: Նրանք ձեռնարկում են «դասական հայերենի» ընդարձակ բառարանը կազմելու գործը, որը, ցավոք, առ այսօր մնում է անտիպ, պահվում է Վիեննայի և Մխիթարյանների գրադարանում (Ձեռ. հմր. 6):

Հին գրական հայերենի պատմության համար «դասական հայերենի» առանձնացումը հայերենագիտական մեծ ձեռքբերում է, և այդ գործում մեծ է Վիեննական դպրոցի ներհուն բանասեր և քերական հ. Վրթ. Չալքիյանի վաստակը: Նա կանգնած է հայ դասական բանասիրության մի ուրույն ուղղության նախաշեմին, և նրա վաստակը անկապտելի շնորհ է նախանցյալ դարի գիտության մեջ, մնում է գնահատելի նաև մեր օրերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Համառոտագրություններ

ԱԱբբ. - Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976:

ԱԲ - «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» (2-րդ հրատ.), Վենետիկ, 1865:

Ագաթ. - Ագաթանգեղեյ Պատմություն Հայոց, աշխատասիրութեամբ

Գ. Տէր- Մկրտչեանի և Ստ. Կանայեանցի, Էջմիածին-Տիֆլիս, 1909:

ալան. - ալաներեն

Ալշ. - Ալաշկերտի խոսվածք

Ախվ. - Սայեաթ-Նովայ, Մոսկվայ, 1852:

ակկադ. - ակկադերեն

Աղայան, 1976 - Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե.:

Աղբաթ. դատ. - «Յաղագս դատաստանաց ամուսնութեան եւ քանիոնութեան ազգականաց» // «Մատենագիրք հայոց», հ. Դ (Է դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 38-41:

Աղբաթ. թուղթ առաջին - «Թուղթ առաջին տեան Աբրահամու հայոց կաթողիկոսի, առ Կիրոն վրաց կաթողիկոս» // ն.տ, էջ 6-7 (բնագրում՝ փխ.-Կիրոն) (հմմտ. «Գիրք թղթոց» (2-րդ հրատ.), Երուսաղէմ, 1994, էջ 316-318):

Աղբաթ. թուղթ երկրորդ - «Թուղթ երկրորդ տեան Աբրահամու հայոց կաթողիկոսի, առ Կիրոն վրաց կաթողիկոս» // ն. տ., էջ 8-9 (հմմտ. «Գիրք թղթոց», էջ 339-345):

Աղբաթ. թուղթ երրորդ - «Թուղթ երրորդ տեան Աբրահամու հայոց կաթողիկոսի, առ Կիրոն վրաց կաթողիկոս» // ն. տ., էջ 10-14. հմմտ. «Գիրք թղթոց», էջ 333-335):

Աղբաթ. թուղթ չորս. - «Թուղթ չորսգայական տեան Աբրահամու հայոց կաթողիկոսի» // ն. տ, էջ 15-20 (հմմտ. «Գիրք թղթոց», էջ 356-364):

Աղբաթ. խոստով. - «Տեան Աբրահամու հայոց կաթողիկոսի Խոստովանութիւն» // ն. տ., էջ 42:

Աղբաթ. պատասխ. - «Պատասխանի թղթոյն Մովսիսի» // ն. տ, հ. Դ (Է դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 5 (հմմտ. «Գիրք թղթոց», 994, էջ 314-315):

Աղբաթ. պատասխ. - Պատասխանի ի հայոց՝ թղթոյն Մխիթարայ Ամարասա եպիսկոպոսի» // ն. տ., էջ 21-37 (բնագրում՝ փխ. *Ամարասայ*) (հմմտ.

«Պատասխանի ի հայոց՝ թղթոյն Աղուանից (Վրթանիսի Քերթողի)» // հմմտ.

«Գիրք թղթոց», էջ 365-396):

անատ.- անատոլիական

Աշտ. - Աշտարակի խոսվածք

ասոր. - ասորերեն

ասուր.- ասուրերեն

ավ(եստ). - ավեստերեն

Ավ. Իս. - Ավետիք Իսահակյան, Երկեր, Ե., 1987:

արաբ. - արաբերեն

արամ. - արամերեն

ԲՀ - «Բառգիրք հայոց», քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Ե., 1975:

բրբռ. - բարբառ

բցռ. - բացառական (հոլով)

Բուգ. - Փաստոսի Բուգանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883 (վերահրատ., Ե., 1987):

ԳԲ - Ռ. Ս. Ղազարեան, Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004:

գրադ. - գրադաշտական

ԶԶագ. - Զաքարիա Չագեցի, Շառք // «Մատենագիրք հայոց», հ. Թ (Թ դար). Յաւելուած, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 15-357 (հմմտ. Զաքարիա կաթողիկոս Չագեցի, Շառք, աշխատասիր. Պ. վրդ. Անանեան // «Մատենագրութիւնք նախնեաց», հ. ԾԷ., Վենետիկ, 1995, էջ 855 - 877 (պարունակում է «Մատենագիրք հայոց»-ի 17 ճառերից առաջին 14-ը):

Թէոդ. գով. - «Գովեստ ի սուրբ Աստուածածինն եւ ի միշտ կոյսն Մարիամ» // ն. տ., հ. Ե (Է դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1258-1269 (հմմտ. «Յովհաննու իմաստասիրի Աձնեցոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, (2-րդ տպ. 1953), ալիգատ՝ էջ 172-182. (վերջինիս մեջ՝ «Երանելոյն Թէոդորոսի Ընդդէմ Մայրագոմացոյն» վերնագրով):

Թէոդ. ընդ. - «Երանելոյն Թէոդորոսի Ճառ ընդդէմ Մայրագոմացոյն» // ն. տ., էջ 1243-1249 (հմմտ. «Յովհաննու իմաստասիրի Աձնեցոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, ալիգատ՝ էջ 145-158 (2-րդ տպ., Վենետիկ, 1953, էջ 171-183):

Թէոդ. խաչ. - «Նորին երանելոյն Թէոդորոսի ճգնատր միայնակեցի եւ վարդապետի Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ եւ ի տնօրինութիւն տեան մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի» // ն. տ., էջ 1250-1257 (հմմտ.

«Յովհաննու իմաստասիրի Աձնեցոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1833 (2-րդ տպ. 1953), ալիգատ` էջ 159-171):

թոխ. – թոխարերեն

թուրք. – թուրքական լեզուներ

ԺՀԼԲԲ - «Ժամանակակից հասց լեզվի բացատրական բառարան», հհ.

1-4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969-1980:

լատ. –լատիներեն

լիտվ. – լիտվերեն

Խաղ. – Սայաթ-Նովա, Խաղեր, աշխատասիրությամբ Հ. Բախչինյանի, Ե., 1987:

Խաչ. – Խաչատրյան Օ. Մ., Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի քննություն, Ե., 2011:

խեթ.-լուվ. – խեթալուվական (լեզուներ)

խոտ.-սակ. – խոտանասակերեն

Խոր. - Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, քննական բնագիր և ներածութիւն Մ. Արեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տիֆլիս, 1943 (ֆաքսիմիլե հրատարակություն, Ա. Բ. Սարգսյանի լրացումներով, Ե., 1991):

կրետամիլն.- կրետամիլնոյական

ՀԱԲ - Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան (2-րդ հրատ.), հհ. 1-4, Ե., 1971-1979:

հայ. - հայերեն

ՀԱՆԾԲ – Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հհ. 1- 5, Ե., 1942-1962:

հրգերմ. - հին բարձր գերմաներեն

հե. (հ.-ե.) - հնդեվրոպական

հիեր.-լուվ – հիերոգլիֆյան լուվերեն

հիռլ. –հին իռլանդերեն

ՀԼԲԲ - «Հայոց լեզվի բարբառային բառարան», հհ. Ա-Է, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 2001-2012:

ՀԽաղ. – Սայաթ-Նովա, Հայերեն խաղեր, աշխատասիրությամբ Հ. Բախչինյանի, Ե., 1984:

Հմշ. – Համշենի բարբառ

Հյուբշ. - Հ. Հյուբշման, Հայերենի քերականություն, թարգմ. Հ. Ա . Ղուկասյանի, Ե., 2004:

հնդկ. – հին հնդկերեն

հմմտ. – համեմատել (համեմատիր)

ՀՇամ. - Գիրք աղօթից որ կոչի Հաց նեղելոց, շարադրեցեալ ի Յակոբայ Շամախեցոյ, Կ. Պոլիս, 1760:

հոգն. – հոգնակի (թիվ)

Հովհ. Թում. – Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Ե., 2022:

ՀՍՀ - «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 9, Ե., 1983:

հուն. – հունարեն

Ղրբ. – Ղարաբաղի բարբառ

Մագ. – Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, բնագիրն առաջաբանով եւ ծանօթագրութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապօլ, 1910:

մանդ. - մանդիերեն

միկ. հուն. - միկենյան հունարեն

ՄՀԲ - Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ., Միջին հայերենի բառարան, հհ. 1-2, Ե., 1987-1992 (2-րդ բարեփոխված հրատ., Ե., 2009):

ՄՀԲԲ – Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., Հայպետհրատ, 1944-1945:

ՄՄՁ, 873- Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռագիր 873 (1792 թ.).

«Գիրք յաղագս վեցից սկզբանց, արարեալ Ճիլբերտուսի Պոռետացոյ ճեմականի» (թարգմ. Ոսկանի [Երեւանցոյ]), էջ 255ա-257ա:

ՄՄՁ, 1646 - Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռագիր 1646 (Ժդ. դար). [Զիլբերտուս Պոռետացոյ] «Գիրք Զ սկզբանցն», էջ 87ա-95ա:

ՄՄՁ, 1722 - Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռագիր 1722 (ԺԵ դ.). «Քարոզ Յովհաննու Օձնեցոյ ասացեալ», էջ 167բ-169ա:

ՄՄՁ, 2329 – Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռագիր 2329 (1291 թ.). «Կիրակէի հսկմանն աղաթք» (սախտրդի համառոտ տարբերակը` «Կիրակէի հսկմանն աղօթք», էջ 295ա-296ա):

մպրս. – միջին պարսկերեն

Յայսմաւ. - Յայսմաուրբ, Կ. Պոլիս, տպ. Գր. Մարգվանեցու, 1730:

Յհ. իմ. առ այն. - «Առ այնուսիկ որ տարակուսին ի վերայ փրկչականն կրից մարդկայնոց, թէ բնականն պարտ է ասել, թէ՛ անբնականն» //«Թուղթ առ պատրիարքն Ասորոց Աթանաս Անտիոքացի» վերնագրով [հմմտ.Գ. վ. Յովսէփեան, Խոսրովիկ թարգմանիչ (Ը դար), պատմական-մատենագրական ուսումնասիրութիւն, Վաղարշապատ, 1899, էջ 97-100 [արտատպ.` «Արարատ» (ամսագիր), 1898]:

Յի. իմ. ատ. - «Ատենաբանութիւն» // ն. տ., էջ 21-36 (հմմտ. Յովհաննու իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 1-33):

Յի. իմ. Գայ. - «Յաղագս սրբոյն Գայիանեայ...» // ն. տ., էջ 143-147:

Յի. իմ. գիշ. ժամ. - «Սակս գիշերային ժամու» // Յովհաննու իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք, էջ 109-114:

Յի. իմ. եկեղ. - «Հատուածք բանից Յովհաննու իմաստասիրի Յաղագս կարգաց եկեղեցոյ եւ Յիշատակարան» // ն. տ., էջ 84-104. տե՛ս «Յաղագս կարգաց եկեղեցոյ Քրիստոսի» (հմմտ. Յովհաննու իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք, էջ 81-100):

Յի. իմ. երկրայ. - «Ճառք կրկին եկեղեցի. երկրայականք» // ն. տ., էջ 88-104. (հմմտ. Յովհաննու իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք, էջ 117-144).

Յի. իմ. երև. - «Ընդդէմ երեութեանաց» // ն. տ., էջ 45-60 (հմմտ. Յովհաննու իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք, էջ 48-80):

Յի. իմ. ընդդէմ - «Նորին Տեան Յովհաննու Հայոց կաթողիկոսի Ընդդէմ այնոցիկ որ ապականեն զՍուրբ խորհուրդն ի ձեռն խմորոյ եւ ջրոյ» // ն. տ., էջ 119-12 [հմմտ. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 234-238 (2-րդ հրատ., Երուսաղէմ, 1994, էջ 467-472):

Յի. իմ. ընթերց. - «Ընթերցուածոց մեկնութենէ ի խորհուրդ նոր կիրաւ կէին» // ն. տ., էջ 111-118:

Յի. իմ. խոստ. - «Յովհաննու իմաստասիրի Հայոց կաթողիկոսի «Բոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնալոյ Բանին Քրիստոսի եւ ընդդէմ դասնողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս», հրատ. Կարապետ վարդապետ, Վաղարշապատ, 1896 [արտատպ.՝ «Արարատ» (ամսագիր), 1896 (ապրիլ), էջ 192-199]:

Յի. իմ. խօսք. - «Խօսք Յովհաննու Հայոց կաթողիկոսի՝ ի գիտութիւն պատուիրանացն Տեան, զոր սուրբ հարքն եղին» // ն. տ., էջ 148-155:

Յի. իմ. Հռիփս. - «Յաղագս սրբոյն Հռիփսիմեայ...» // ն. տ., էջ 134-142:

Յի. իմ. միաշարք. - «Վասն մեծի ատուր միաշարքային» // Յովհաննու իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 101-106:

Յի. իմ. յիշատ. - «Յիշատակարան» // Յովհաննու իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 115-116:

Յի. իմ. նախ. - «Նախահաւաքումն Պատմութեան այսմ բանից տեան Հովհաննու վերծանողի» // ն. տ., էջ 156-172:

Յի. իմ. պատճ. - «Պատճառ ատուրցն արարչութեան» // ն. տ., էջ 105-109 [ՄՄ, Ձեռ.1007 (ԺԱ-ԺԲ դդ.), էջ 424ա - 430ա (տե՛ս Մ. Պապյան, էջ 125-129):

Յի. իմ. պատմ. - «Ընդդէմ պատիկեանց» // Յովհաննու իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 34-47:

Յի. իմ. սակս - «Յովհաննու իմաստասիրի Հայոց կաթողիկոսի Սակս ժողովոց, որ եղեն ի Հայք» // ն., էջ 122-132] [հմմտ. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 220-233 (2-րդ հրատ., Երուսաղէմ, 1994, էջ 473-493):

Յի. իմ. քարոզ - «Քարոզ Յովհաննու Աձնեցոյ ասացեալ» // ն. տ., էջ 110 [հմմտ. ՄՄՁ, 1722 (ԺԵ դ.), էջ 168ա-169ա]. նշվում նաև «Աղօթք Յովհաննու Օձնեցոյ» վերնագրով՝ ըստ ՄՄՁ 2329 (1291 թ.) (տե՛ս Մ. Պապյան, էջ 129-130):

Յճխ. - Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում Ճառք եւ Աղօթք, Վենետիկ, 1838:

Նար. - Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխատասիրութեամբ Ա. Քոչկերյանի, Ե., 1981:

Նխդր.- նախդիր (նախադրություն)

ՆՀԲ - Գ. Աւետիքեան, Խ. Սիրամէլեան, Մ. Ազգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

ՆԲԳ - Ռ. Ս. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան, Նորայայտ բառեր գրաբարում, Ե., ԵՊՀ հրատ., 2007:

Նպրս. - նոր պարսկերեն

Շնորհ.- Ներսէս Շնորհալի, Հանելուկներ // «Մատենագիրք հայոց», հ. ԻԱ (ԺԲ դար). Ներսէս Շնորհալի, Գիրք Ա, Ե., 2013, էջ 1219-1323:

շումեր .- շումերերեն

Չամչ. - Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեան, հ. Ա, Վենետիկ, 1784:

Պատմ. քեր. - «Հայոց լեզվի պատմական քերականություն», II, Ե., 1975:

պարթ. - պարթերեն

ՊԲԵդ. - Պ. Բեդիրյան, Լեզու նախնայաց. գրաբարի դասագիրք (ինքնուսույցի սկզբունքով). Ս. Էջմիածին, 1997:

պելասգ. - պելասգերեն

ՊՇար. - Պ. Շարաբխանյան, Գրաբարի դասընթաց, Ե., 1974:

պրս. - պարսկերեն

Ջահուկյան, 1987 - Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Ե.:

Ջահուկյան (Ջահ.), 2010 - Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե.:

ռուս. – ռուսերեն
սարմատ. – սարմատերեն
ՄԳԲ – Ս. Գաբամանեան, Նոր բառգիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս,
1909:

սեմ. – սեմական
սեռ. - սեռական (հոլով)
Սիմ. Երև. – Ջամբո, Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հա-
յելի և պարունակող բնաւից որայիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոց շրջագա-
յից վանորէիցն, ի Սիմէօնէ կաթողիկոսէ Երեւանցոյ, Վաղարշապատ, 1873:

Սիմ. Երև. Քար.- Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Քարոզ Քրիստոսի
համբարձման, թարգմանություն՝ գուգաղիթ, գրաբար ձեռագրից Վ. Գ. Համ-
բարձումյանի // «Էջմիածին» (ամսագիր), 2017, Ե (մայիս), էջ 62-71:

Սիկ. կթ. արմա. - «Սահակայ հայոց կաթողիկոսի ասացեալ յԱրմաւե-
նեացն ար, որ է Ղոզոմեան» // «Մատենագիրք հայոց», հ. Ե (Է դար), Անթի-
լիաս-Լիբանան, 2005, էջ 1286-4292 (հմմտ. «Յովհաննու իմաստասիրի Ան-
նեցոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 185-193, ալիգատ՝ Վենետիկ,
1953, էջ 213-222):

Սիկ. կթ. կան. - «Կանոնք վերջնոյ Սահակայ կաթողիկոսի. Գլուխ ԺԵ»
// «Մատենագիրք հայոց», հ. Ե (Է դար), էջ 1293-1300 (հմմտ. «Կանոնագիրք
հայոց», հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ե., 1964, էջ 506-513):

Սիկ. կթ. պատ. - «Պատասխանի թղթոյն Հոնաց» (տե՛ս «Անանուի
պատմութիւն», մաս ԽԵ) // «Մատենագիրք հայոց», հ. Ե (Է դար), էջ 893-895):

սողդ. - սողդերեն
ՎԱռաք. - Վ. Դ. Առաքելյան, Գրաբարի հատընտիր, քաղված դասա-
կան մատենագիրներից (մանրամասն ծանոթագրություններով և կարևոր բա-
ցատրություններով), Ե., 1946:

ումբր. – ումբրերեն
«Ուտում» - Ուտում դասական հայերէն լեզուի (Հայկաբանութիւն), յօ-
րինեաց հ. Քերովբէ Սպենեան (հրատարակեալ հանդերձ Յաւելուածով). Ան-
գիր ժամանակք, գրեաց հ. Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1920:

փխ. - փոխ(անակ/արեն)
փխբ. – փոխաբերական իմաստ
Քոչ. – Ա. Կ. Քոչոյան, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարան, Ե.,
1963:

Г.-Ив. - Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и
индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и
протокультуры, т. 1, Тбилиси, 1984.

Hübsch. - H. Hübschmann, Armenische Grammatik, I-II, Leipzig, 1895-1897:
IEW – J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, 1 Band.,
Bern-München, 1959.

2. Սկզբաղբյուրներ և ուսումնասիրություններ

Արեղյան Մ., Հայ վիպական բանահյուսություն // Նույնի, Երկեր, հ. Ա,
Ե., 1966:

Արեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին
(սկզբից մինչև X դար), Ե., 1944 // Նույնի, Երկեր, հ. Գ., Ե., 1968:

Արեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ
(XI-XIX դ. ՝ 30-ական թթ.), Ե., 1946 // Նույնի, Երկեր, հ. Դ., Ե., 1970:

Արեղյան Մ., Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հա-
յոց պատմության մեջ // Նույնի, Երկեր, հ. Ը, Ե., 1985, էջ 66-272:

Արրահամյան Ա. Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976:
Ադոնց Ն., Հայաստանի պատմություն (Ակունքները. X-VI մ. թ. ա.), Ե.,
1972:

Ալիշան հ. Ղ., Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենե-
տիկ, 1895:

Ալիշան հ. Ղ., Ճառ ընթերցեալ ի Հայկական ճեմարանիս: Տեսութիւն ի
Գանձ լեզուիս հայոց կամ Ստեփանեան բառարան // «Բազմալէս» (ամսա-
գիր), 1852, թ. 6, էջ 86-95:

Ալիշան հ Ղ., Կամենից: Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումնիոյ.
հաւաստչեալ յաւելուածովք, Վենետիկ, 1896:

Ալիշան հ. Ղ., Հայբուսակ կամ հայկական բուսաբանութիւն, Վենետիկ,
1895:

Ալվերդեան Գ., Սայեթ-Նովայ, Մոսկվա, 1852:
Ալիխեան հ. Ն., Ակնարկ մը Վիեննական մխիթարեան միաբանութեան
գրական գործունեութեան վրայ, Վիեննա, 1912:

Ալիխեան հ. Ն., Դասական հայերէնը եւ Վիեննական մխիթարեան
դպրոցը, Վիեննա, 1932:

«Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա-Բ, Ե., 1972-1975:

Աղայան Է. Բ., Հայ լեզվաբանության պատմություն (Սկզբից մինչև մեր օրերը), հ. 1, Ե., 1958:

Աղայան Է. Բ., Հայոց լեզվի պատմության հարցերը նորագույն ուսումնասիրություններում // «Պատմա-բանասիրական հանդես», 1962, 1, էջ 247-268:

Աղայան Է. Բ., Գրաբարի պատմության շրջանաբաժանումը // «Բանբեր Երևանի համալսարանի», 1974, 2, էջ 58-81:

Աղայան Է. Բ., Մեսրոպ Մաշտոց, Ե., ԵՊՀ հրատ., 1986:

Աճառյան Հ., Վիպասանական հայերեն // «Գրական-բանասիրական հետախույզումներ», Ե., 1946, էջ 163-173:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. VI, Ե., 1971:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I- II մաս, Ե., 1940-1951:

Աճեմյան Վ. Լ., Արևմտահայ աշխարհաբարը 19-րդ դարի 40-ամյակում և գրապայքարի նախապատրաստումը // «Լեզվի և ոճի հարցեր» (հոդվածների ժողովածու), I, Ե., 1960, էջ 197-213:

Աճեմյան Վ. Լ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Ե., 1971:

Այտընեան հ. Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866 (ալիգատ՝ Աշխարհաբարի քերականություն, էջ 1-428):

Այտընեան հ. Ա., Քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1867 (2-րդ տպագր.՝ Վիեննա, 1883):

Անանեան հ. Պ., Զաքարիա հայոց կաթողիկոսի թղթակցությունը Փոս պատրիարքին հետ // «Բազմալիզ» (ամսագիր), Վենետիկ, 1992:

Անասյան Հ. Ս., Հայկական մատենագիտություն (Ե-ԺԸ դդ.), հ. Ա (Ա – Առաքել Սալաճորեցի), Ե, 1959, էջ 76-81:

«Անանունի «Պատմություն սրբոց հարցն մերոց» աշխատությունը» // Լ. Հ. Տեր-Պետրոսյան, Իսաչակիները եւ հայերը, հ. Բ (Պատմա-քաղաքագիտական հետազոտություն), Ե., 2007, էջ 495- 526:

«Անանուն ժամանակագրական գրառումներ (XIVդդ.)» // Լ. Հ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 554-558:

Առաքելյան Բ. Ն., Դիտողություններ վիշապաքաղ Վահագնի մասին // «Տեղեկագիր» (ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտություններ), 1951, 2, էջ 75-81:

Առաքելյան Վ. Դ., Փավստոս Բուզանդի աշխարհաբար թարգմանությունը // «Աշխատությունների ժողովածու» (Հայկ. ՍՍՌ Լեզվի ինստիտուտի), հ. 3, Ե., 1948, էջ 311-339:

Առաքելյան Վ. Դ., Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Ե., 1971:

Առաքելյան Վ. Դ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Ե., 1981:

Առաքելյան Վ. Դ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Ե., 1983:

Ավագյան Ս. Ա., Վիմագիր արձանագրությունների հնչյունաբանություն (X-XIV դդ.), Ե., 1973:

Ավագյան Ս.Ա., Վիմագրական պրպտումներ, Ե., 1986:

Ավետյան Վ. Վ., Լճաշենի հնագույն մշակույթը // «Գիտական հոդվածների ժողովածու», «Իրավունք» հրատ., Ե, 2011:

Ավետիք Իսահակյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Ե., 2011:

Բագրատունի հ. Ա., Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

Բախչինյան Հ. Գ., Հայերեն ձեռագիր հիշատակարաններ, Ե., 1980:

Բախչինյան Հ. Գ., Սայաթ-Նովա. կյանքը և գործը, Ե., 1988:

Բոզոյեան Ա., Յովհաննէս Օձնեցի եւ «Սակս ժողովոց» երկի բնագիրը // «Սուրբ Յովհաննէս Օձնեցի հայապետը եւ իր ժամանակը» (հոդվածների ժողովածու), Ս. Էջմիածին, 2004, էջ 77-91:

Գաթրոճեան հ. Յ., Մաշտոցեան լեզուն // «Հանդէս ամսօրեայ» (ամսագիր), 1913, էջ 719-723:

Գալստյան Ս. Ա., Բարբառային իրողություններ Մ. Նալբանդյանի լեզվում // «Լեզվի և ոճի հարցեր» (հոդվածների ժողովածու), I, Ե., 1960, էջ 296-314:

Գալստյան Ս. Ա., Ակնարկներ աշխարհաբարի պատմության, Ե., 1963:

Գիրք որ կոչի Յաճախապատում, ասացեալ սուրբ Հօրն մերոյ երանելոյն Գրիգոր Լուսատրչի, Կ.Պոլիս, 1737:

Գյուլբուղայան Ս. Վ., Հայերենի ուղղագրության պատմություն, Ե., ԵՊՀ հրատ., 1973:

Գոթողիա, ողբերգություն Յ. Ռասինի, թարգմ. Գ. Հիրմիզեան, Վենետիկ, 1864:

Գրիգորյան Ահ., Արովյանի հայացքները լեզվի մասին // «Աշխատությունների ժողովածու», հ. III, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1948, էջ 141-159:

Գերիկյան Գ., Մեծ սուրբը (Գրիգոր Լուսավորիչ) // Նույնի, Հայոց մեծերը, Ե., 2012, էջ 32-35:

Զաքարյան Ս. Ա., Սուրբ Հովհան Օձնեցի. Իմաստասեր կաթողիկոսը, Ե., ԵՊՀ հրատ., 2019:

Թոսունյան Գ. Բ., Գրաբարի բառարանագրությունը, Ե., 2016:

Թորոսեան Հ. Ն., Արեւտահայ աշխարհաբարի ծագումը եւ զարգացումը (ինչպէս ճոխացնել արդի հայերէնը), տպագր. «Պայքար»-ի, 1961:

Լևոնյան Գ., Սայաթ-Նովա (քննական ուսումնասիրություն), Ե., 1931:

Խանզադյան Է. Վ., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Ե., 1967:

Խաչատրյան Ա. Ե., Ձայնդարձի հին երևույթներ հայերենի բարբառներում // «Միջազգային հայերենագիտական գիտաժողով. 21-25 սեպտեմբերի 1982 թ., Ջեկուցումներ», Ե., 1984, էջ 318-326:

Խաչատուրովա Ե. Գ., Լեզվաբանական տվյալներ Առաջավոր Ասիայում մ. թ. ա. 2-րդ հազարամյակում նախահայերի և հնդարիացիների շփումների վերաբերյալ // «Միջազգային հայերենագիտական գիտաժողով. 21-25 սեպտեմբերի 1982 թ. (Ջեկուցումների թեզիսներ)», Ե., 1982, էջ 57-58

Խաչիկյան Լ. Ս., Գրիգոր Մագիստրոսի մոտ Արտաշես Ա-ի վերաբերյալ պահպանված վիպական հատվածի մասին // «Գիտական-բանասիրական հետախուզումներ», 1946, գիրք 1, էջ 405-424 (նույնի, Աշխատություններ, հ, Ա., Ե., 2012, էջ 147-164):

Խաչիկյան Լ. Ս., Քոնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական գործունեությունը // *Յովհաննէս Քոնեցի*, Յաղագս քերականին, Ե., 1977:

Խաչիկյան Լ. Ս., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե., 1950:

Խաչիկյան Լ. Ս., ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հհ. Ա-Գ, Ե., 1955-1967:

Խնկիկյան Օ. Ս., Հայերի ծագման բալկանյան տեսությունը և հնագիտական տվյալները մ. թ. ա. VI-IV հազ. // «Պատմաբանասիրական հանդես», 2007, 2, էջ 37-54:

Խնկիկյան Օ. Ս., Հայաստանի հնագիտություն (Հին քարի դարից մինչև Վանի թագավորության անկումը), Ե., 2009:

«Կանոնք վերջնայ Սահակայ կաթողիկոսի. Գլուխ ԺԵ» // «Մատենագիրք հայոց», հ. Ե (Է դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1293-1300 (հմմտ. «-

Կանոնագիրք հայոց», հ. Ա, աշխատասիր. Վ. Հակոբյանի, Ե., 1964, էջ 506-513):

Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002:

Հակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ, աշխատասիրությամբ Զ. Ա. Էյնաթյանի, Ե., 1987:

Հակոբյան Գ. Ա., Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.), Ե., 1980:

Համառոտութիւն աստուածաբանութեան երանելոյն Մեծին Ալպերտի, ի լոյս ածեալ Մխիթարայ Սեբաստացոյ, Վենետիկ, 1715:

Համբարձումյան Վ. Գ., Լեզու, ոճ, խոսք // «Բանբեր Երևանի համալսարանի», 1981, 3, էջ 182-191:

Համբարձումյան Վ. Գ., ԺԸ դարի առաջին կեսին տպագրված երկու գրքի մասին // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, 3, էջ 63-72:

Համբարձումյան Վ. Գ., Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, 8, էջ 63-72:

Համբարձումյան Վ. Գ., XVIII-XIX դարերի գրաբար պատմագրության լեզվական բնութագիրը // «Պատմա-բանասիրական հանդես», 1982, 1, էջ 73-82:

Համբարձումյան Վ. Գ., ԺԸ-ԺԹ դդ. գրաբար ճարտասանական երկերի տերմինաբանությունը // «Հայոց լեզվի պատմության հարցեր», պրակ 2, Ե., 1985, էջ 257-317:

Համբարձումյան Վ. Գ., Համադրական բաղադրությունները Խաչատուր Աբովյանի «Նոր տեսական և գործնական քերականության» մեջ // «Պատմա-բանասիրական հանդես», 1986, 2, էջ 66-75:

Համբարձումյան Վ. Գ., ԺԸ դարի գրաբարի մաթեմատիկական տերմինաբանությունը // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, 3, էջ 70-78:

Համբարձումյան Վ. Գ., Վրթանես Չալքիսյանը և «դասական հայերենը» // «Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողով, 21-23 սեպտեմբերի, 1987 թ. (Ջեկուցումների դրույթներ)», Ե., 1987, էջ 97-98:

Համբարձումյան Վ. Գ., XVIII-XIX դարերի գրաբարի ձևաբանական առանձնահատկությունները // «Պատմա-բանասիրական հանդես», 1988, 1, էջ 11-22:

Համբարձումյան Վ. Գ., Գրաբարի գործառնությունը, որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Ե., 1990:

Համբարձումյան Վ. Գ., Խորենացու «Տենչայ Սաթենիկ տիկին» հատվածը // «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակը. Միջազգային գիտաժողովի դրույթներ», Ե., ՀՀ ԳԱ հրատ., 1991, էջ 25-27:

Համբարձումեան Վ. Գ., Հ. Վրթանէս Չալըխեանը եւ Վիեննական հայերէնագիտութիւնը // «Հանդէս ամսօրեայ» (ամսագիր), 1995, Յունուար-Փետրուար, էջ 360-379:

Համբարձումյան Վ. Գ., Մովսես Խորենացու Պատմության «Տենչայ Սաթենիկ տիկին» հատվածը // «Պատմա-բանասիրական հանդէս», 1995, 2, էջ 227-236:

Համբարձումյան Վ. Գ., Հովհաննես Իմաստասեր Օձնեցի // «Էջմիածին» (ամսագիր), 1997, Դ-Ե (ապրիլ-մայիս), էջ 96-105:

Համբարձումյան Վ. Գ., Նորահայտ բառեր «Յայսմաուրք»-ի մեջ // «Էջմիածին» (ամսագիր), 1998, Ե (մայիս), էջ 66-72:

Համբարձումեան Վ. Գ., Մխիթարեանների լեզուամշակման սկզբունքները եւ գրական հայերէնի կանոնարկման արդի խնդիրները // «Բազմալէզ» (ամսագիր), 2001, 1-4, էջ 187-200:

Համբարձումյան Վ. Գ., Աստվածաշնչի թարգմանությունները և նոր թարգմանության խնդիրները // «Աստվածաշնչյան Հայաստան» (ժողովածու), Ե., 2005, էջ 518-523:

Համբարձումյան Վ. Գ., Սիմեոն կաթողիկոս Երևանցու «Զամբո» երկի բառապաշարը // «Էջմիածին» (ամսագիր), 2006, 5 (մայիս), էջ 42-54:

Համբարձումյան Վ. Գ., Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. վերջ- XIX դ.), հ. 1, Ե., 2006:

Համբարձումյան Վ. Գ., Նկատառումներ Սիմեոն կաթողիկոս Երևանցու «Քարոզգրքի» լեզվի վերաբերյալ // «Էջմիածին» (ամսագիր), 2007, 9 (սեպտեմբեր), էջ 100-109:

Համբարձումյան Վ. Գ., Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշները // «Պատմա-բանասիրական հանդէս», 2008, 1, էջ 159-179:

Համբարձումյան Վ. Գ., Նկատառումներ լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշների վերաբերյալ // «Զահուկյանական ընթերցումներ», Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երևան, մայիսի 7-8, 208 թ.), Ե., 2008, էջ 98-106:

Համբարձումյան Վ. Գ., Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցի» մի քանի բառի մեկնություն // «Զահուկյանական ընթերցումներ», ակադեմիկոս Գ-

ևորգ Զահուկյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երևան, 2010 թ., մայիսի 6-7), Ե., 2010, էջ 152-168:

Համբարձումյան Վ. Գ., Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Ե., 2010:

Համբարձումյան Վ. Գ., Նկատառումներ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի մի քանի բառի վերաբերյալ // «Սայաթ-Նովա – 30. Հորեղյանական գիտական նստաշրջանի նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին (21 հունիսի 2012). Զեկուցումների ժողովածու», Ե., ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 36-42:

Համբարձումյան Վ. Գ., Նոր դիտարկումներ Ե. Մեղրեցու «Բառգիրք հայոցի» մի քանի բառի վերաբերյալ // «Զահուկյանական ընթերցումներ», Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երևան, 2012 թ., մայիսի հունիսի 7-11), Ե., 2012, էջ 130-140:

Համբարձումյան Վ. Գ., Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Ե., 2012:

Համբարձումյան Վ. Գ., Լատինաբան ձևերի գործածությունը Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ում // «Լեզու և լեզվաբանություն», 1-2 (12), 2014, էջ 16-17:

Համբարձումյան Վ. Գ., Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X- XVIII դդ.), հ. 2, Ե., 2015:

Համբարձումյան Վ. Գ., Բառարան և համաբարբառ // «Ազգ» (շաբաթաթերթ), «Մշակույթ» (հավելված), 22. 05. 2015:

Համբարձումյան Վ. Գ., Գրաբարի ձեռնարկ, Ե., 2018:

Համբարձումյան Վ. Գ., Հայերեն մարգարիտ բառի ծագման մասին // «Զահուկյանական ընթերցումներ», գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2019, էջ 106-113:

Համբարձումյան Վ. Գ., Գրիգոր Նարեկացու բառապաշարի մի քանի բառի մեկնություն և ստուգաբանություն // «Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Պ. Մ. Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին», Վանաձոր, 2020, էջ 69-78:

Համբարձումյան Վ. Գ., Հայերենի բառաքննություն և ստուգաբանություն, 1, Ե., 2022, էջ 169-171:

Համբարձումյան Վ. Գ., «Կիլիկյան հայերենը» միջին գրական հայերենի նորմավորման տարբերակ (խնդիրներ և լուծումներ) // Հանրապետական գիտաժողով՝ «Կիլիկիո հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներ»

րում. *Միսից մինչև Անթրիպաս*» (2022 թ., սեպտեմբեր 8-9), գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2023, էջ 156-174:

Համբարձումյան Վ. Գ., Հնդեվրոպական ծագման հայերեն բանաստեղծական խոսքի երկատումային առանձնացումը (ցեղակից լեզուների հետ առնչությունների համատեքստում) // «Վէմ» համահայկական հանդես, 2023, հուլիս-սեպտեմբեր, թիվ 3 (83), էջ 140-155:

Համբարձումյան Վ. Գ., Հայ նոր գրական լեզվի ընտրության հարցեր («գրապայքար») // «Հայ հասարակական-քաղաքական միտքը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին կեսին. պատմություն և արդիականություն» (գիտաժողովի կյուբերի ժողովածու, 2 մարտի, 2023 թ.), Ե., «Լուսակն» հրատ., 2023, էջ 137-148:

«Հայոց լեզվի բարբառային բառարան», հհ. Ա-Զ, Ե., 2001- 2008:

Հասրաթյան Ս., Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Ե., 1959:

Հարությունյան Ա. Հ., Զաքարիա Ա Չագեցի // «Հայ եկեղեցու հանրագիտարան», պրակ Ա, «Ամենայն հայոց կաթողիկոսներ», Ս. Էջմիածին, 2008: :

Հարությունյան Ս. Բ., Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը (Ընդհանուր ակնարկ), Ե., 2001:

Հեթում Նղիբցու Պատմությունը // Լ. Հ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ (Պատմա-քաղաքագիտական հետազոտություն), Ե., 2007, էջ 527-883:

Հեմպ Է., Մի քանի կիսաշփականների մասին հայերենի պատմության մեջ // «Պատմա-բանասիրական հանդես», 1983, 1, էջ 38- :

Հովհաննես Օձնեցի, Երկեր, գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները Վազգեն Համբարձումյանի, Ե., 1999:

Հովհաննիսյան Ն. Գ., Սայաթ – Նովայի հայերեն խաղերի հնչյունական համակարգի առանձնահատկությունները // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, 9, էջ 48-56:

Հովհաննիսյան Ն. Գ., Նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարանների քննություն, Ե., 2022:

Հովսեփյան Լ. Ս., Հին հայերենի պատմության շրջանաբաժանման մասին // «Միջազգային հայերենագիտական գիտաժողով (Երևան, 21-23 սեպտեմբերի, 1982թ.), Զեկուցումներ», Ե., 1984, էջ 379-384:

Ղազարյան Ս. Ղ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1954 (2-րդ հրատ., Ե., 1981):

Ղազարյան Ս. Ղ., Միջին հայերեն, գիրք 1, Ե., 1960:

Ղազարյան Ս. Ղ., Հայոց գրական լեզվի պատմություն, հ. Ա, Ե., 1961:

Ղարագոյլյան Թ. Ա., Հին հայերենի բայերի ներկա ժամանակի վերջավորությունների ստուգաբանական քննություն // «Լեզվի և ոճի հարցեր», 1, Ե., 1960, էջ 14-234:

Ղարիբյան Ա. Ս., Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Ե., 1937:

Ղարիբյան Ա. Ս., Հայ բարբառագիտություն (հնչյունաբանություն և ձևաբանություն), Ե., 1953:

Ղարիբյան Ա. Ս., Թբիլիսիի բարբառը Սայաթ-Նովայի երգերում // «Սայաթ-Նովա» (գիտական աշխատությունների ժողովածու), Ե., 1963, էջ 52-77:

Շանաշեան հ. Մ., Ստեփանոս Ռօշքայի բառարանը (քննականտեսություն մը) // «Բազմալեզու», 1956, էջ 125-138:

Մաթևոսյան Ա. Ս., Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դդ.), Ե., 1988:

Մալխասեանց Ստ., Ինքնախօս ձայնագիր // «Արարատ» (ամսագիր), 1878, 4, էջ 146-148:

Մարգարյան Ա. Ս., Խաչատուր Աբովյանի լեզվագիտական հայացքները., Ե., 1956:

Մարգարյան Ա. Ս., Միքայել Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը (արևելահայ գրական լեզվի պատմությունից), Ե., 1957:

Մարտիրոսյան Հ. Ա., Իսրայելյան Հ. Ռ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Ե., 1971:

Մելե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978:

Միքայելյան Ժ. Ա., Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակա քննություն), Ե., 2009:

Մկրտչյան Է. Լ., Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Ե., 1980:

Մնացականյան Ա.Շ., Հայ միջնադարեան հանելուկների դասական շրջանը. Ներսէս Շնորհալի // «Մատենագիրք հայոց», հ. ԻԱ (ԺԲ դար). Ներսէս Շնորհալի, Գիրք Ա, Ե., 2013, էջ 1219- 1252:

Մնացականյան Ա., Մաֆարյան Վ. Հ., Շնորհալու խրատամանկավարժական ոտանավորները և հանելուկները // «Բանբեր Երևանի համալսարանի», 1984, 1, էջ 166-174:

Մովսիսյան Ա. Ե., Հայկական մեհենագրություն, Ե., 2003:

Մովսիսյան Ա. Ե., Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, Ե., 2005:

Մուրադյան Գ. Ս., Հունարանությունները դասական հայերենում, Ե., 2010:

Մուրադյան Հ. Դ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Ե., 1982:

Մուրադյան Մ. Հ., Գրական միջին հայերենի տերիտորիալ տարբերակների հարցի շուրջը (XII-XIV դարեր) // «*Լեզվի և ոճի հարցեր*», III, Ե., 1975:

Մուրադյան Մ. Հ., Բարբառային տարբերակվածությունը հայերենի զարգացման միջին շրջանում // «*Միջազգային հայերենագիտական գիտաժողով. 21-25 սեպտեմբերի 1982 թ. (Զեկուցումների թեզիսներ)*», Ե., 1982, էջ 85-86:

Մուրադյան Պ. Մ., «Տուհաց գառափ» տեղորոշման հարցի շուրջ // «*Պատմա-բանասիրական հանդես*», 1979, 1, էջ 245-250:

Մուրադյան Պ. Մ., Հակոբյան Ա., Աբրահամ Աղբաթանեցիի և իր թերթը // «*Մատենագիրք հայոց*», հ. Դ (Է դար), Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 3-4:

Յակոբյան Ա., Յովհան Օձնեցու նորայայտ տոնացուցային երկը՝ «Նախահաաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննէս վերծանողի» // «*Հանդէս ամսօրեայ*» (ամսագիր), 2006, էջ 91-136:

Յովհաննէս իմաստասիրի հայոց կաթողիկոսի Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ բանի Քրիստոսի եւ ընդդէմ դասանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս, Վաղարշապատ, 1896:

Յովհաննէս իմաստասիրի եւ կաթողիկոսի հայոց Օձնեցոյ Ճառ ընդդէմ երևութականաց, Վենետիկ, 1807:

Յովհաննէս իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833:

Յովհան Օձնեցի, Ճառ ընդդէմ պաղիկեանց, աշխարհաբար թարգմանություն Ա. Ղազիկյանի // «*Էջմիածին*» (ամսագիր), 1980, Բ-Գ, էջ 51-57:

Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականին, բնագիրը հրատարակության պատրաստեց Լ.Ս. Խաչիկյանը, ներածությունը Լ. Ս. Խաչիկյանի և Ս. Ա. Ավագյանի, Ե., 1977:

Յովնանեան հ. Ղ., Հետազոտութիւնք նախնեաց ոամկօրէնի վրայ, մասն 1, տետր Ա-Բ, Վիեննա, 1897:

Յովնանեան հ. Պ., Մարդկային լեզուին սկզբան, հանգամանաց, միութեան ու բաժանման եւ ազգային լեզուաց վրայ քննական տեսութիւն մը, Վիեննա, 1857:

Յովսէփեանց Գ., Փշրանքներ ժողովրդական բանահիսութիւնից, Թիֆլիս, 1892:

Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Ե., 1947:

Ներսես Շնորհալի, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Ա.Քյոշկերյանի, Ե., 1987:

Ներսիսյան Վ. Ա., Հովհաննէս Օձնեցու երկերում գործածված և «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության մեջ չվկայված բառեր // «*Պատմա-բանասիրական հանդես*», 2003, 3, էջ 111-123:

Ներսիսյան Վ. Ա., Հովհան Օձնեցու երկերի լեզուն, Ե., 2012:

Շահբազյան Տ., Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը, Ե., 1963:

Ոսկեան հ. Հ., Ստեփանոս Ռոշքա // «*Հանդէս ամսօրեայ*» (ամսագիր), 1965, էջ 145, 147 և հջ.:

Պապյան Մ., Հովհան Իմաստասեր Օձնեցի, Ե., 1998:

«Պատասխանի թղթին Հոնաց» (տե՛ս «Անանուկի պատմութիւն», մաս ԽԵ) // «*Մատենագիրք հայոց*», հ. Ե (Է դար), 2005, էջ 893-895:

Պատմական քերականութիւն աշխարհաբար լեզուի, աշխատասիր. Գր. Վանցեան, Թիֆլիս, 1906:

Պեղերսեն Հ., Նպաստ մը հայ. լեզուի պատմութեան, թարգմ. Հ. Գ. Գարանֆիլեան, Վիեննա, 1904:

Պողոսյան Ն. Բ., Հայ բառարանագրության պատմության դրվագներ, պրակ Ա (ԺԷ-ԺԹ դարեր), Ե., 2016: :

Ջահուկյան Գ. Բ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954:

Ջահուկյան Գ. Բ., Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը 18-19-րդ դարերում (դոկտոր. ստենախոս., ձեռագիր), Ե., 1955:

Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը // «*Գիտական աշխատություններ*» (Երևանի պետական համալսարանի), 1956, հ. 57, ֆիլիոլոգիական գիտությունների սերիա, պր. 4, մաս 1, էջ 49-102:

Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմության փուլերը, Ե., 1964:

Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:

Ջահուկյան Գ. Բ., Հայերենը և հին հնդեվրոպական լեզուները, Ե., 1970:

Ջահուկյան Գ.Բ., Գրաբարի քերականության պատմություն (XVI-XIX դդ.), Ե., 1974:

Ջահուկյան Գ. Բ., Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին // «Պատմա-բանասիրական հանդես», 1,1992, էջ 14-27:

Ջահուկյան Գ. Բ., Բարբառային երկություններ ձեռագիր հիշատակարաններում, Ե., 1997:

Ջահուկյան Գ. Բ., Խղթայի Ֆ. Հ., Հայոց լեզու. ընդհանուր գիտելիքներ, ոճաբանություն, Ե., 1976:

Ռասին, Գոթոդիա // «Ճաշակք հին եւ նոր ոբերգութեանց», թարգմ. Ա. Բագրատունյ), Վենետիկ, 1869:

Սայեաթ-Նովայ, հրատ. հայ գրողների կովկասեան ընկերութեան, Թիֆլիս, 1914:

Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մ. Հասարայան, Ե., 1963:

Սայաթ-Նովա, Խաղեր (լիակատար ժողովածու), աշխատասիրությամբ Հ. Բախչինյանի, Ե., 2003:

Սարդարյան Ա. Հ., Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Ե., 1967:

Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբո, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները Գ. Մ. Բադալյանի, Ե., «Մուղնի» հրատ., Ե., 2003:

Սիմեոն Երևանցի, Ջամբո, աշխատասիրությամբ Հ. Օհանյանի, Ե., 2022:

Սիմոնյան Ն. Մ., Հնդեվրոպական ձայնդարձի արտացոլումը հին հայերենի բայարմատներում // «Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով: Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, 17-19 հոկտեմբերի, 2013 թ., զեկուցումների ժողովածու», Ե., 2014:

Սիրունյան Տ. Ղ., «Հանդէս ամսօրեայի» լեզվաբանական տերմինները (1887-1920 թթ.), Ե., 2010:

Սուրբ Հօրն մերոյ երանելոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք, Վաղարշապատ, 1894:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատում ճառեր, թարգմանությունը, առաջաբանը, ծանոթագրությունը Վազգէն . Համբարձումեանի, Թեհրան, 2003:

Սևակ Գ. Գ., Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Ե., 1948:

Սևակ Պ., Սայաթ-Նովա, Ե., 1969:

Վարդանեան հ. Ա., Դասական մանր բնագիրներ և ձեռագրական հմտություններ, հ. Ա., Վիեննա, 1913:

Վարդանեան հ. Ա., Նիթեր հայ բառագրութեան, Վիեննա, 1920:

Վարդանեան հ. Ա., Բառաքնական դիտողություններ. դասական շրջան, Ա.Գ., Վիեննա, 1921:

Վարդանեան հ. Ա., Դասական հայերէնի հատկություններէն // «Հանդէս ամսօրեայ» (ամսագիր), 1923, էջ 36-46, 144-154, 421-434, այլև 1924, էջ 350-359:

Վարդանեան հ. Ա., Հայ գրչագիրները ինչ պայմաններու տակ կընդօրինակէին հայ ձեռագիրները, Վիեննա, 1924:

Տեառն Յովհաննու իմաստասիրի Աձնեցոյ Մատենագրութիւնք, թարգմանեալ ի լատին բարբառ, երկասիրութեամբ հ. Մ. վրդ. Աւգերեան (գուգադիր՝ հայ.-լատ.), Վենետիկ, 1834:

Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Ե., 1967:

Քէոսէան Հ., Խորհրդանշանը Յովհան Օձնեցու մատենագրութեան մէջ // «Դրուագներ հայ միջնադարեան արուեստի աստուածաբանութեան», Էջմիածին, 1995, էջ 133-144:

Քէոսէան Հ., Սահակ Չորոփորեցիի եի իր երկերը // «Մատենագիրք հայոց», հ. Ե (Է դար). Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1285-1286:

Քէոսէան Հ., Թէոդորոս Քոթենաւորը և իր ճառերը // «Մատենագիրք հայոց», հ. Ե (Է դար). Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1241:

Քէոսէան Հ., Յովհան Օձնեցիի և նրա ժառանգությունը // «Մատենագիրք հայոց» (Ը դար). Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 11-20:

Քէոսէան Հ., Ջաքարիա Չագեցի // «Մատենագիրք հայոց», հ. Թ (Թ դար). (Յաւելուած), Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 17-25:

Քոչոյան Ա. Կ., Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարան, Ե., 1963:

Քոչոյան Ա. Վ., Խեթական պետությունը և հայկական լեռնաշխարհի երկրները մ. թ. ա. XV դարում // «Պատմա-բանասիրական հանդես», 2000, 3, էջ 161-174:

Օրմանեան Մաղ. արք., Ազապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001:

Абегян М. Х., История древнеармянской литературы, Ереван, 1975.

Аревшатян С. С., К истории философских школ Средневековой Армении (XIV в.), Ереван, 1980.

Балли Ш., Французская стилистика., М., 1961:

Барроу Т., Санскрит, М., 1976.

Бенвенист Э., Проблемы армянского консонантизма // "Вопросы языкознания", 1961, 3, с. 37-39.

Гарибян А. С., К периодизации истории армянского литературного языка // «Աշխարհագրություն», հ. III, Ե. ՀՄՄՌ ԳՄ հրատ., 1948, էջ 41-64:

Гарибян А. С., К вопросу о месте и значении армянского языка в системе индоевропейских языков // "XXV Международный конгресс востоковедов: Доклады делегации СССР", Н., 1960.

Гиндин Л. А., Язык древнейшего населения юга Балканского полуострова, М., 1967:

Григорий Просветитель (Григор Лусаворич), Многовещательные речи, перевод с древнеармянского, предисловие и примечания С. С. Аревшатяна, Ереван, 2011:

Джаукян Г. Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967:

Иванов Вяч. Вс., Первоначальная глубинная структура текста гимна Вахагну и проблемы древнеармянской этимологии // "Международный симпозиум по армянскому языкознанию, Ереван, 21-25 сентября 1982. Доклады", Ереван, 1984, с. 61-86:

Капанцян Г. А., К происхождению армянского языка, Ереван, 1946.

Массон М. Е., Новые данные по истории Парфии // "Вестник древней истории", 1950, 3, с. 41-55.

Мурадян П. М., К критике текста III Послания католикоса Авраама // "Вестник общественных наук", 1968, 10, с. 41-64.

Мурадян М. А., Территориальные разновидности и диалекты среднеармянского языка на первом этапе его развития (XII-XIV вв.) // "Совещание по общим вопросам диалектологии и истории языка: Тезисы докладов и сообщений (Ереван, 2-5 октября 1973 г.)", М., 1973, с. 196-197.

Мурадян М. А., Территориальные письменные разновидности и диалекты на первом этапе развития среднеармянского языка (XII-XIV вв.) // "Лингвистическая география, диалектология и история языка", Ереван, 1976, с. 362-368:

Овсепян Л. С., О взаимоотношениях древнеармянского литературного языка и диалекта в V веке // "Совещание по общим вопросам диалектологии и истории языка: Тезисы докладов и сообщений (Ереван, 2-5 октября 1973 г.)", М., 1973, с. 197-198.

Овсепян Л. С., К вопросу взаимоотношении древнеармянского литературного языка и диалектов в V веке // "Лингвистическая география, диалектология и история языка", Ереван, 1976, с. 369-376:

Патканов К. П., Исследование о составе армянского языка, СПб., 1864.

Патканов К. П., Замечания на статью г. Эмина // "Труды Восточного отделения Русского Археологического Общества", ч. 17, СПб., 1874, с. 130-147:

Патканов К., Материалы для изучения армянских наречий: Вып. II. Мушский диалект, СПб., 1875.

Симонян Н. М., О лексико-фонетических архаизмах армянских диалектов // "Совещание по общим вопросам диалектологии и истории языка: Тезисы докладов и сообщений (Ереван, 2-5 октября 1973 г.)", М., 1973, с. 236-238.

Симонян Н. М., О некоторых лексико-фонетических архаизмах армянских диалектов // "Лингвистическая география, диалектология и история языка", Ереван, 1976, с. 425-431.

«Словарь античности», сост. Й. Ирмшер с сотр. с Р. Йоне, М., "Прогресс", 1989,

Томсон А., Историческая грамматика современного армянского языка города Тифлиса, СПб., 1896.

Топоров В. Н., Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции // "Историко-филологический журнал", 1977, 3, с. 88-106.

Фейди Ф., Заметки по армянскому консонантизму // "Вопросы языкознания", 1961, 5, с. 46-49.

Фогт Г., Заметки по армянскому консонантизму // "Вопросы языкознания", 1961, 3, с. 40-43:

Хачатурова Е. Г., Лингвистические данные в контактах протоарийцами в Передней Азии во II тыс. до н. э. // "Международный симпозиум по армянскому языкознанию, 21-23 сентября 1982 г. Тезисы докладов", Ереван, 1982, с. 112-113.

Хомский Н., Аспекты теории синтаксиса, М., 1972.

Хомский Н., Язык и мышление, М., 1972.

Эмин Н. О., Вахагн Вищапаках армянской мифологии есть Индра-Vritrahan Риг-Веды (Несколько страниц сравнительной мифологии), СПб., 1873, с 9-10 (Տե՛ւ լու՛ւ «Труды Восточного отделения Русского Археологического Общества», часть 17, СПб., 1874, с. 93-129):

Якобсон Р. О., Древнеармянский Вахагн в свете сравнительной мифологии // «Международный симпозиум по армянскому языкознанию (Доклады)», Ереван, 1984, с. 118-122 (= «Պատմու-բանասիրական հանդես», 1985, էջ 80-85):

Badalyan R. S., Avetisyan P. S., Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I: Mt. Aragats and its Surrounding Region, BAR Inter. Ser. 16970 2007:

Benveniste E., Sur la phonétique et la syntaxe de l'arménien classique // «Bulletin de la Société de linguistique de Paris», t. 54, fasc. 1, 1959, p. էջ 46-68:

Boisacq E, Dictionnaire étymologique de la langue grecque, 2-ème ed., Heidelberg-Paris, 1923:

Chadwick J., Baumbach L., The Mycenaean Greek vocabulary // «Glota», 1963, v. 41, 3-4.

Chomsky N., Syntactic Structures, 1957 (= Н. Хомский, Аспекты теории синтаксиса, М., 1972).

Hambardzumyan V. G., Hovhannes Odznetsi and his philosophical-theological Works' translation into Modern Armenian // «Armenian Mind. Հայ միտք», 2000, Vol. IV, No 2, p. 232-240.

Karst J., Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901 (= Յ. Կարստ, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002).

Meillet A., Observations sur la graphie de quelques anciens manuscrits de l'Evangil earménien // «Journal asiatique», t. 11, 1903, 487 (= «Հանդէս ամսօրեայ» (ամսագիր), 1904, էջ 193).

Meillet A., Esquisse d'une grammaire comparee de l'arménien classique (seconde edition entièrement remaniée), Vienne, 1936.

Pedersen H., Armenisch und die nachbarsprachen // «Zeitschrift für Vergleichende Sprachforschung auf den Gebiete der Indogermanischen Sprachen», Band 39, Heft 2, 1904, S. 306-337.

Petermann H., Grammatica linguae armeniacae, Berolini, 1837.

Petermann H., Beitrage zur der Geschichite Keuzzuge aus Armenischen Quellen, Berlin, 1860.

Petermann H., գրախոսություն // «Abhandlungen der Akademie Wissenschaft», Berlin, 1866.

Saint-Martin J.-A., Mémoires historique et géographique sur l'Arménie, t. 1, Paris, 1818.

Vogt H., Les occlusives de l'arménien // «Norsk Tidsskrift for Sprogvidenskap», XVIII, Oslo, 1958, p. 143-161.

Vogt H., Arménien et caucasique du Sud // «Norsk Tidsskrift for Sprogvidenskap», Band 9, 1938, p.321-337.

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Աբեղյան Մ. 22, 23, 116, 223, 293, 309, 463
Աբրահամ Աղբաթանեցի 121, 122, 123, 125, 127, 128, 130
Աբրահամյան Ա. Ա. 52, 57, 118, 119, 463
Աբովյան Խ. 302
Ագաթանգեղոս 132, 175, 207
Ադոնց Ն. 12, 463
Աթաաս Ալեքսանդրացի 155
Ալիշան հ. Ղ. 315, 405-408, 410-416, 463,
Ախվերդյան Գ. 375, 377, 381, 383, 384, 386, 392, 463
Ակինյան հ. Ն. 299, 444, 453, 454, 463,
Աղամալյան Ս. 315
Աղայան Է. Բ. 8, 15, 44, 238, 239, 249, 376, 464
Աղավնի 429
Աճառյան Հ. 5, 10, 16, 22-25, 29, 31, 33, 40, 46, 50, 51, 73, 91, 98, 102, 117, 119, 175, 206, 207, 230, 234, 282, 285, 292, 297, 309, 323, 383, 385-387, 389, 391, 392, 394, 403, 404, 417, 427, 464
Աճեմյան Վ. Լ. 12, 239, 292, 301, 464,
Ամիրդովլաթ Ամասիացի 234, 244
Այտընյան հ. Ա. 234, 301, 309, 443, 444, 446, 448, 453, 464,
Անանիա Նարեկացի 175
Անանիա Շիրակացի 409

Անանուն 263
Անանեան հ. Պ. 207, 464
Անասյան Հ. 122, 464,
Անդրոնիկաշվիլի 42
Առաքելյան Բ. Ն. 115, 116, 464,
Առաքելյան Վ. Դ. 117, 119, 223, 465,
Ասար Սեբաստացի 257
Ասկերյան Վրթ. 312
Աստվածատրյան Թադ. վրդ. 93
Ավագյան Ս. Ա. 249, 465,
Ավգերյան հ. Մ. 184
Ավետիսյան Հ. Ա. 252,
Ավետիքյան հ. Գ. 223,
Ավետյան Վ. Վ. 7, 465,
Արիստակես Լաստիբերտցի 253
Արիստոտել 330
Արսեն հ. Բագրատունի 238, 308, 465
Արևշատյան Ս. Ս.
Բալլի Շ. 345, 425
Բախչինյան Հ. Գ. 249, 380, 382, 386, 465
Բակունց Ա. 423, 428
Բաղդասար Դալիր
Բայրոն Ջ. Ն. 308, 407
Բարդուղիմեոս Մարաղացի 298
Բենվենիստ Է. 9
Բերնեկեր 389
Բերոյն 303
Բոզոյան Ա. 465
Բոսուե Ժ. Բ. 307
Գագ (կամ Գագիկ քերական) 415

Գաթրընյան հ. Հ. 300, 314, 315, 453, 454, 465,
Գալստյան Ս. Ա. 302, 465
Գարագաշյան Ա. Մ. 315, 453
Գեորգիս Վ. 75
Գինդին Լ. 74
Գյուլբուդաղյան Ս. Վ. 465
Գրիգորիս Աղթամարցի 244, 250
Գիրգոր Դարանաղցի 25
Գրիգորիս 254
Գրիգոր Ծերենց Խլաթեցի 393
Գրիգոր Մագիստրոս 1201, 62, 195, 218, 220, 427
Գրիգոր Նարեկացի 148, 180, 192, 213, 216, 220, 221, 222, 224, 225, 226, 228, 229, 231, 253
Գրիգոր Նյուսացի 126,
Գրիգոր Վկայասեր 228
Դավիթ Անհաղթ 331
Դեմիրճյան Դ. 428, 429
Դիոնիսիոս Թրակացի 179
Դևրիկյան Գ. 101, 466
Եզնիկ Կողբացի 453
Եզր կաթողիկոս 131
Եղիշե 256, 453
Երեմիա Մեղրեցի 175, 230, 390, 392, 404, 410
Եփրեմ Ասորի 120
Զարյան Ն. 428
Զաքարիա Չագեցի 205, 210, 212, 214, 216, 217, 221
Զաքարյան 195, 466

Էմին Մկ. 409
Էմինյան Ս. 453
Էյնաթյան Ջ. Ա.
Թեոդորոս Մայրագունեցի 139, 182
Թեոդորոս վարդապետ 133
Թեոդորոս Քոթենավոր 131, 132, 133, 137, 146, 147, 148
Թոթովենց Վ. 418
Թոսունյան Գ. Բ. 87, 466
Թովմա Արծրունի 128, 134
Թովմա Մեծոփեցի 250, 254
Թումանյան Հովհ. 416, 417, 419, 422, 423, 427, 429
Իգնատիոս վարդապետ 193
Իլիչ-Սվիտիչ Վ. Մ. 34, 40
Իշող 254
Իսահակյան Ավ. 382, 423, 425, 428, 429, 431, 435, 438, 439, 465
Իսրայելյան Հ. Ռ. 7
Իվանով Վլադ. Վս. 24
Լայրնից Յ. Գ. 308
Լատիսլավ Բիրքեր Յ.
Լևոնյան Գ. 377, 466
Խանգաղյան Է. Վ. 6, 466
Խանգաղյան Ս. Ն. 428
Խաչատրյան Պ. Մ. 256
Խաչատրյան Ա. Ե. 466
Խաչատրյան Օ. Մ. 372
Խաչատուրովա Ե. Գ. 12, 466
Խաչատուր Ջուղայեցի

Իսաչիկյան Լ.Ս. 43, 244, 249, 179, 466
Իսլոպյան Ֆ. Հ. 426
Իսնկիկյան Օ. Ս. 7, 466
Իսոմսկի Ն. 80
Իսոսրովիկ թարգմանիչ 126, 194

Ծատուրյան Ալ. 428

Կարստ Յ. 243, 251, 467
Կիկերոն 414
Կիպրիանոս 414
Կիրակոս Գանձակեցի 177, 259
Կիրակոս վչղ. Արևելցի 393
Կյուրեղ Երուսաղեմացի 207
Կոմիտաս կաթողիկոս 131
Կոստանդին Երզնկացի 168
Կորկոտյան Բ. Ա.
Կուսիկյան Կ. 234
Կուրդիկյան Շ. 427

Հակոբ կթղ. Շամախեցի 317
Հակոբ կթղ. Ջուղայեցի
Հակոբ Ղրիմեցի 246, 467
Հակոբ պատմիչ 414
Հակոբ Քոնեցի 279, 298
Հակոբյան Ա. 122, 472
Հակոբյան Գ. Ա. 467
Համբարձումյան Վ.Գ. 5, 20, 21, 32, 40, 44, 47, 52, 59, 79, 162, 170, 189, 222, 230, 238, 252, 255, 279, 280, 281, 290, 296, 300, 303, 305, 306, 308, 311, 314, 319, 330, 343, 377, 394, 406, 411, 426, 443, 467, 468, 469, 470

Հասրաթյան Մ. 377, 470
Հարությունյան Ա. 206
Հարությունյան Ս. Բ. 470
Հեթում Նղիբցի 270, 470
Հեմպ Է. 10, 470,
Հյուբջման Հ. 46, 119, 308, 389,
Հյուրմյուզյան հ. Գ. 308, 465
Հովհան Մամիկոնյան 165
Հովհան Ոսկերբերան 220, 403, 404
Հովհաննես Գառնեցի 126
Հովհաննես կաթողիկոս 396
Հովհաննես Դ. Ովայեցի 205
Հովհաննես պատմիչ 414
Հովհաննես Երզնկացի 120, 126, 228, 244, 415
Հովհաննես Երզնկացի (Ծործորեցի) 126
Հովհաննես իմաստաբեր Օձնեցի 101, 123, 127, 130, 132, 143, 161-163, 167, 170, 171, 175, 181-183, 185, 188, 189, 191-195, 197-202, 217, 470, 472
Հովհաննես Քոնեցի 298
Հովհաննիսյան Ն. Գ. 280, 376, 470
Հովսանյան հ. Ղ. 234, 251, 252, 345, 473
Հովսանյան հ. Պ. 315, 453
Հովսեփյան Գար. 12
Հովսեփյան Լ. Ս. 234, 470
Հովսեփյանց Գար. 409, 473

Ղազարյան Ս. Ղ. 122, 234, 243, 253, 471
Ղազարյան Ռ. Ս. 252, 470
Ղազար Փարպեցի 128

Ղազինյան Ա. 132,
Ղարագյուլյան Թ. Ա. 10, 471
Ղարիբյան Ա. Ս., 372, 376, 377, 471
Ղափանցյան Գ. Ա. 10 .

Ճանաչյան հ. Մ. 414, 471

Մաթևոսյան Ա. 244, 471
Մալխասյանց Ստ. 9, 22, 52, 117, 118, 323, 427, 428, 446, 471,
Մահարի Գ. 390, 428
Մամբրե (վերծանող) 415
Մաշտոց կթղ. Եղիվարդեցի 394, 396
Մառ Ն. Յակ. 234
Մատթեոս պատմիչ 414
Մարգարյան Ա. Ս. 302, 471
Մարտիրոսյան Հ. Ա. 7, 471
Մելե Ա. 33, 40, 234, 243, 255, 30 446, 471, 9,
Մեսրոպ պատմիչ 414
Միքայելյան Ժ. Ա. 225.
Մխիթար Գոշ 126, 226, 229, 244, 254
Մխիթար Հերացի 244, 254
Մխիթար պատմիչ Անեցի 414
Մխիթար Սեբաստացի 310, 311, 312, 315, 470
Մկրյան Մ. Մ. 223
Մկրտչյան Է. Լ. 249, 471
Մնացականյան Ա. 260, 471,
Մնացականյան Ա. 259, 472
Մովսես Խորենացի 256, 396, 400, 401, 409, 414, 453
Մովսես Կաղանկատվացի 194

Մովսիսյան Ա. Ե. 8, 472,
Մրմրյան Հար. 308
Մուրադյան Գ. Ս. 101, 472,
Մուրադյան Հ. Դ. 234, 472,
Մուրադյան Մ. Հ. 224, 234, 243, 472
Մուրադյան Պ. Մ. 122, 472

Նալբանդյան Միք. 302, 303, 309, 473
Նահապետ Քուչակ 250
Նար- Դոս 428
Ներսես Լամբրոնացի 168, 192
Ներսես Շնորհալի (Կլայեցի) 193, 216, 222, 244, 251, 253, 254, 255, 256, 259, 263, 473
Ներսիսյան Վ. Ա. 162, 473
Նորենց Վ. 428

Շահբազյան Տ. 301, 473
Շիլլեր Ֆ. 408
Շրյոդեր Յ. 234

Ոսկան Երևանցի 279, 282, 287, 289
Ոսկյան հ. Հ. 412, 414, 416, 473,

Չազըճյան Ե. 453
Չալըխյան հ. Վրթ. 309, 314, 315, 440, 411, 442, 443, 445, 446, 447, 448, 450, 451, 453, 454, 455,
Չամչյան հ. Միք. 298, 312
Չարենց Ե. 378, 342

Պապյան Մ. 473

Պատկանյան Բ. Պ. 16, 390, 409
Պարոյր Սևակ 381
Պեղերսեն Հ. 9, 473
Պետերման Հ. 308, 309
Պետրոս Արագոնացի 279
Պլինիոս 414
Պողոսյան Ն. Բ. 319, 473
Պոտոսյան 222
Պորֆյոր 330
Պրոնյան հ. Ս. 315
Պրոսպերոս 414

Ջահուկյան Գ. Բ. 7, 8, 12, 15, 23, 24, 29, 31, 33, 36, 40, 42, 44, 46, 47, 52, 75, 91, 175, 230, 231, 234, 238, 239, 241, 242, 246, 249, 292, 296, 297, 301, 381-383, 385, 386, 390, 392, 403, 404, 417, 426, 443, 447-449, 473, 474
Ջիլբերտոս Պոռետավի 278, 279, 281

Ռասին Ժ. 308, 465, 474
Ռիգա 16
Ռուդոլֆ Հավերբունի 408

Սահակ Չորոփորեցի 132, 143, 152, 155, 156, 158,
Սահակ Պարթև 150, 400, 401, 466
Սահիկյան Ա. 429
Սայաթ-Նովա 375, 376, 378, 379, 381, 383, 385, 387, 388, 389, 391, 474
Սարկավազ վարդապետ 126
Սարգիս վարդապետ 193
Սարգսյան Ա. Բ. 458

Սարդարյան Ս. Հ. 6, 474
Սարմեն 429
Սաֆարյան Վ. Հ. 259, 472
Սեբերիանոս 163
Սենեկա 414
Սիմեոն կթղ. Երևանցի 323, 330, 331, 356, 361, 369, 375, 391, 392, 474
Սիմեոն Ջուղայեցի 331
Սիմոնյան Ն. Մ. 230, 474
Սիրունյան Տ. Ղ. 474
Սմբատ Բագրատունի 206
Սմբատ սպարապետ 244, 257
Ստեփանոս Լեհացի (Կամենիցացի Ռոշքա) 410-414, 416
Սպենյան Բ. 453
Ստեփանոս Սյունեցի 126, 155
Ստեփանոս Օրբելյան 414
Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 100, 101, 192, 465, 475,
Սուրբ Մեսրոպ Մաշտոց 379, 402
Սուքիասյան Ա. Մ. 91
Սևակ Գ. Գ. 175, 475

Վանցյան Գր. 473
Վաղարշակ Նորենց 428
Վարդան Այգեկցի 244
Վարդան Արևելցի 253
Վարդան վարդապետ 155
Վարդանյան վրդ. Արիստ. 129, 475
Վինդիշման 119, 409

Տաշյան հ. Հակ. 462
Տերենտիոս 414
Տեր Իսրայել 393
Տեր-Միքելյան Ա. 100

Տերյան Վ. 423
Տեր-Պետրոսյան Լ. Հ. 129, 264, 270, 275, 464, 470

Ուղուլուղյան Ղ. 315

Փափազյան Վահր. 418
Փափազյան Վրթ. 428
Փավստոս Բուզանդ 113, 117, 120, 121, 475
Փիլոն Եբրայեցի 168, 208
Փոսկոլեոս Հ. 308
Փոոս պատրիարք 206

Քյոչկերյան Ա. 222, 229
Քյոսեյան Հ. 475
Քոչոյան Ա. Կ. 377, 383, 386, 475
Քոսյան Ա. Վ. 8, 476

Օրմանյան արք. Մ. 150, 206, 223, 476

Ֆելդի Ֆ. 17
Ֆոզտ Հ. 9
Ֆրիսկ 28

Աբեգյան Մ. 43, 476
Արեշատյան Ս. Ս. 101, 279, 476,
Արտյոնյան Բ. Ն.

Բալլի Ս. 425, 476
Բարոս 44, 476
Բենվենիստ Ծ. 9, 476

Գարիբյան Ա. Ս. 12, 15, 476
Գամկրելիզե Կ. Վ.
Գինդին Լ. Ա. 74, 476.
Գրիգորի Բրոսվետիվել 476

Դձաուկյան Գ. Բ. 230, 476

Իվանով Վյաչ. Վ. 8, 11, 23, 44, 476

Կապանյան Գ. Ա. 10, 476

Մասոն 116, 476
Մուրադյան Գ. Ս. 235
Մուրադյան Մ. Ա. 239, 246, 346, 476.
477
Մուրադյան Օ. Դ. 476
Մուրադյան Ս. Մ. 122, 476

Օվսեպյան Լ. Ս. 17, 239, 477

Փաթկանով Կ. Ս. 16, 409, 477,

Տիմոնյան Ն. Մ. 477
Տոբոլսկի Ս. Ի.

Տեր-Սետրոսյան Լ. Ա.
Տոմսոմ 376, 477
Տոբոլով Վ. Ն. 2, 477

Ֆեյդի Փ. 17, 477
Փոգտ 9, 478

Պալիֆման Ծ. Ս.
Պաչատուրով Ե 478
Պոմսկի Ն. 80, 478

Эмин Н. 409, 478	Hübschmann H.
Якобсон Р. О. 11, 23, 478	Karst J. 243, 252, 478
	Meillet A. 309, 446, 478
Avetisyan P. S. 7, 478	Mercier Ch.
	Muradyan G. S.
Badalyan 7, 478	
Baumbach L. 74	Pedersen H. 9, 479
Benveniste E. 9	Petermann H. 309, 376, 479
Boisacq 5, 478	Pokorny J.
	Risch 119
Chadwick J. 74, 478	
Georgiev V.	Saint-Martin 229, 479
Djahukyan G. B.	Vogt 9, 479
Hambardzumyan V. G. 162, 478	Watkins C.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
---------------------------	---

Առաջին մաս ՀԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇՐՋԱՆ

Հին գրական հայերենը ազգային-եկեղեցական մշակույթի դրսևորում	13
«Վիպասանական հայերեն»-ի լեզվական առանձնահատկությունները	20
«Աստվածաշունչ» գրքի թարգմանության բառապաշարը	67
Երկագրությունը «Աստվածաշունչ» գրքի թարգմանության բնագրում	93
Հունաբանություններ «Յաճախապատում ճառք»-ում	99
Բուզանդի «Այծից հայոց արքայ» արտահայտությունը	113
Աբրահամ Աղբաթանեցու «Թղթեր»-ի լեզվի քննություն	120
Թեոդորոս Քոթենավորի երկերի բառապաշարը	130
Սահակ Ձորովորեցու երկերի բառապաշարը	148
Հովհան Օձնեցու երկերի լեզվի մասին	160
Նոր բառեր Զաքարիա Ձազեցու «Ճառք»-ում	203
Գրիգոր Նարեկացու բառապաշարի մի քանի բառի մասին .	220

Երկրորդ մաս ՄԻՋԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇՐՋԱՆ

Միջին գրական հայերենը ուշ միջնադարի մշակույթի դրսևորում	231
«Կիլիկյան հայերենը» միջին գրական նորմավորման տարբերակ	236
Ներսէս Շնորհալին և միջին գրական հայերենը	249
Անանունի «Պատմութիւն» երկի լեզուն	262
Հեթում Նղիբցու «Պատմութիւն» երկի լեզուն	268

«Անանուն ժամանակագրական գրառումներ»-ի լեզվի մասին	272
Ջիլբերտուս Պոռետացու «Գիրք վեցից սկզբանց»-ի լեզվի մասին	275

Երրորդ մաս

ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇՐՋԱՆ

Նոր գրական հայերենի մշակութային-գործառական խնդիրը	289
Նոր գրական լեզվի ընտրության հարցը («գրապայքար») ..	291
Մխիթարյանների դերը հայերենի գրական կանոնարկման գործում	301
Նոր բառեր Հակոբ Շամախեցու «Հաց նեղելոց» երկում	313
Սիմեոն Երևանցու երկերի լեզվի մասին	326
Սայաթ-Նովայի հայերեն խաղերի մի քանի բառի մասին ..	372
Նոր բառեր «Յայսմատուրք» ժողովածուի էջերում	389
Ղևոնդ Ալիշանը լեզվագետ. դիցաբան, բառագետ	402
Արևմտահայերենի նմուշներ Հովհ. Թումանյանի արձակում	413
Բառը Ավ. Իսահակյանի վաղ շրջանի չափածոյում	419
Հավելված. Վրթանես Չալըխյանը և Վիեննայի Մխիթարյան դպրոցի հայերենագիտությունը	437
Համառոտագրություններ	453
Գրականություն	453
Անվանացանկ	477

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Պատասխանատու խմբագիր՝ Տ.Ղ. Սիրունյան
Համակարգչային ձևավորումը՝ Նինետա Ս. Աղամյանի

Հրատ. պատվեր N 1426
Ստորագրված է տպագրության՝ 10.02.2026 թ.:
Չափսը՝ 60x84¹/₁₆: 30.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 120 օրինակ:

ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան,
Մարշալ Բաղրամյան պ., 24